Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Михаил Шолохов

ТИХИЙ ДОН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ ЧЕТВЕРТЫЙ

Перевод
А. Мазманяна

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ»
ЕРЕВАН 1978

Միխայիլ Շոլոխով

ԽԱՂԱՂ ԴՈՆԸ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

թարգմանությունը
Հ. Մազմանյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1978

Р 2
Շ 77

Շ 70302 (340) 111 / 705 (01) 78 111.78 «S»

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1978

ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Վերին Դոնի ապստամբությունը, որ Հարավային ռազմաճակատից զգալի քանակությամբ կարմիր զորքեր էր քաշել, Դոնի բանակի հրամանատարությանը հնարավորություն տվեց ոչ միայն ազատորեն իր զորքերի վերախմբավորում կատարել Նովոչերկասկը պաշտպանող ռազմաճակատում, այլև Կամենսկայա և Ուստ-Բելոկալիտվենսկայա ստանիցաների շրջանում առավել կայուն ու փորձված, գլխավորապես Դոնի ստորին ավազանի ու կալմիկական գնդերից կենտրոնացնել հարվածային հզոր մի խումբ, որի խնդիրն էր համապատասխան ժամին գեներալ Ֆիցխելաուրովի զորամասերի հետ համատեղ ետ մղել 8-րդ կարմիր բանակի մի մասը կազմող 12-րդ դիվիզիան, ու հարվածելով 13-րդ և Ուրալյան դիվիզիաների թև ու թիկունքին, կռվով անցնել հյուսիս՝ Վերին Դոնի ապստամբներին միանալու համար։

Հարվածային խմբի կենտրոնացման պլանը, որ իր ժամանակին մշակել էին Դոնի բանակի հրամանատար գեներալ Դենիսովը և շտաբի պետ գեներալ Պոլյակովը, մայիսի վերջին գրեթե ամբողջովին իրագործվեց։ Կամենսկու ուղղությամբ նետեցին մոտ 16000 սվին և սուր, 36 հրանոթ ու 140 գնդացիր. վրա էին հասնում վերջին հեծյալ զորամասերը և ընտիր գնդերը այսպես կոչված երիտասարդ բանակի, որ կազմվել էր 1918 թվականի ամառը, զորակոչի հասակ ունեցող երիտասարդ կազակներից։

Իսկ այդ ժամանակ ապստամբները, չորս կողմից շրջապատված, շարունակում էին ետ մղել պատժիչ կարմիր զորքերի գրոհները։ Հարավում, Դոնի ձախ ափին ապստամբական երկու դիվիզիա համառորեն նստել էին խրամատներում ու չէին թողնում, որ հակառակորդն անցնի Դոնը, չնայած, որ կարմիրբանակային բազմաթիվ մարտկոցները ամբողջ ռազմաճակատով մեկ նրանց վրա գրեթե անընդհատ, հուժկու կրակ էին թափում. մնացած երեք դիվիզիան արևմուտքից, հարավից ու արևելքից պաշտպանում էին ապստամբական տերիտորիան, հսկայական կորուստներ էին կրում մանավանդ հյուսիս-արևելյան ճակատամասում, բայց և այնպես չէին նահանջում և շարունակ մնում էին Խոպերի օկրուգի սահմաններում։

Տատարցիների հարյուրյակը, որ դիրքավորվել էր իր խուտորի դիմաց և ձանձրանում էր ակամա անգործությունից, մի անգամ կարմիրբանակայինների մեջ տագնապ առաջացրեց. մութ գիշերին կազակներից ոմանք կամավոր կերպով նավակներով անաղմուկ անցան Դոնի աջ կողմը, հանկարծակի հարձակվեցին կարմիրբանակային ուղեկալի վրա, սպանեցին չորս կարմիրբանակային ու գրավեցին մի գնդացիր։ Մյուս օրը կարմիրները Վեշենսկու մերձակայքից մի մարտկոց բերին, և սա շեշտակի կրակ բացեց կազակական խրամատների վրա։ Հենց որ անտառով մեկ սկսեց շառաչել շրապնելը, հարյուրյակները շտապ թողին խրամատները, հեռացան Դոնից, մտան անտառի խորքը։ Մի օր հետո մարտկոցը ետ կանչվեց, և տատարցիները նորից գրավեցին լքած դիրքերը։ Թնդանոթային հրակոծությունից հարյուրյակը կորուստներ կրեց. արկի բեկորներից սպանվեցին երկու փոքրահասակ կազակ վերջին օրերում վրա հասած համալրումից, ու վիրավորվեց հարյուրյակի հրամանատարի բանբերը, որ դրանից առաջ հենց նոր էր եկել Վեշենսկայայից։

Հետո որոշ հանդարտություն տիրեց, ու խրամատներում կյանքը ընթացավ նախկին ձևով։ Հաճախակի գալիս էին կնանիքը, գիշերներին հաց ու օղի էին բերում, կազակները ուտելիքի պակասություն չէին զգում. նրանք երկու հատ կորած երինջ մորթեցին. բացի այդ, լճերում ամեն օր

ձուկ էին որսում։ Խրիստոնյան ձկան գործում գլխավորն էր։ Նրա իրավասության տակ էր գտնվում տասը սաժենանոց մի ուռկան, որ նահանջողներից մեկը թողել էր գետափին, ուռկանը ընկել էր հարյուրյակի ձեռքը, ու Խրիստոնյան որսի ժամանակ միշտ էլ անցնում էր «խորունկ տեղերով», պարծենալով, թե մարգագետնում չկա այնպիսի մի լիճ, որ նա չկարողանար անցնել։ Մի շաբաթվա անդադար ձկնորսության ընթացքում նրա շապիկն ու շալվարը այնքան ձկնային չանցնող հոտ էին ներծծել, որ Անիկուշկան ի վերջո կտրականապես հրաժարվեց նրա հետ միևնույն գետնատանը գիշերելուց, հայտարարեց.

— Քեզանից հոտ է փչում, ոնց որ սատկած լոքոյից։ Եթե մի օր էլ այստեղ քեզ հետ ապրեմ, հետո ամբողջ կյանքումս մի կտոր ձուկ էլ չեմ կարողանա բերանս դնել...

Այնուհետև Անիկուշկան, չնայելով մոծակներին, քնում էր գետնատան կողքին։ Քնելուց առաջ, զզվանքից կնճռոտելով դեմքը, ավլում էր ավազի վրա թափթփված ձկան թեփուկը ու ձկան գարշահոտ փորոտիքը, իսկ առավոտը Խրիստոնյան, վերադառնալով որսից, հանգիստ, ծանրումեծ նստում էր գետնատան մուտքի առաջ ու էլի մաքրում իր բերած ծածան ձկները, թափում դրանց փորոտիքը։ Նրա մոտ հավաքվում էին կանաչ, որդակեր ճանճերը, սողեսող վրա էին տալիս անթիվ ու անհամար, կատաղի, դեղին մրջյունները։ Հետո հևալով մոտ էր վազում Անիկուշկան, դեռ հեռվից բղավում.

— Էլ ուրիշ տեղ չգտար։ Երանի թե խեղդվեիր ձկան ոսկորից, գրողի տարած։ Դեհ, ի սեր Քրիստոսի, դեն քաշվիր։ Ես այստեղ քնում եմ, իսկ դու ձկան աղիքներ ես թափել, հավաքել ամբողջ օկրուգի մժեղները ու զզվելի հոտ տարածել, ոնց որ Աստրախանում։

Խրիստոնյան, որ սրբում էր իր շինած դանակը, քսում շալվարին, մտախոհ ու երկար նայում Անիկուշկայի տնբեղ, վրդովված դեմքին, հանգիստ ասաց.

— Ուրեմս դու, Անիկեյ, փորումդ ճիճու ունես, որ ձկան հոտ չես տանում։ Անոթի փորով սխտոր կեր, հը՞։

Թքելով ու հայհոյելով Անիկուշկան հեռացավ։

Օրեցօր շարունակվում էին նրանց ընդհարումները։

Բայց ընդհանրապես հարյուրյակը խաղաղ էր ապրում։ Լիառատ ուտելիքի շնորհիվ բոլոր կազակներն էլ ուրախ էին, բացի Ստեպան Աստախովից։

Արդյո՞ք իրենց խուտորի կազակներից էր իմացել Ստեպանը, թե՞ սիրտն էր վկայում, որ Ակսինյան Վեշենսկում հանդիպում է Գրիգորիի հետ, բայց նա հանկարծ տխրեց, առանց պատճառի կռվեց դասակապետի հետ ու կտրականապես հրաժարվեց պահակային ծառայություն կատարելուց։

Նա շարունակ պառկում էր գետնատանը, սև, նշաններ արված կարպետի վրա, հոգոց էր հանում և ագահությամբ ծխում տնային մշակության ծխախոտը։ Հետո էլ լսեց, որ հարյուրյակի հրամանատարը Անիկուշկային ուղարկում է Վեշենսկայա, փամփուշտներ բերելու, և երկու օրվա ընթացքում առաջին անգամ դուրս ելավ գետնատնից։ Կկոցելով արտասվող, անքնությունից ուռած աչքերը, անվստահ դիտեց տատանվող ծառերի փրչոտ, կուրացուցիչ-վառ սաղարթը, հողմավար, սպիտակաբաշ ամպերը, լսեց անտառի քրթմնջող աղմուկը ու քայլեց գետնատների կողքից՝ Անիկուշկային փնտրելու։

Կազակների ներկայությամբ չխոսեց նրա հետ, այլ տարավ մի կողմ, խնդրեց հետևյալը.

— Վեշկիում գտիր Ակսինյային ու իմ կողմից ասա, որ գա ինձ տեսնելու։ Ասա, որ ես ոչլոտել եմ, շապիկներս ու վարտիքներս անլվա են, ու հետո էլ ասա...— Ստեպանը մի ակնթարթ լռեց, բեղի տակին թաքցրեց շփոթմունքի քմծիծաղը, վերջացրեց խոսքը.— Ասա, որ ես շատ եմ կարոտել, թող շուտ գա։

Անիկուշկան գիշերով հասավ Վեշենսկայա, գտավ Ակսինյայի բնակարանը։ Գրիգորիից բաժանվելուց հետո Ակսինյան դարձյալ ապրում էր մորաքրոջ մոտ։ Անիկուշկան բարեխղճությամբ հաղորդեց Ստեպանի ասածները, բայց խորապես ազդելու համար իր կողմից ավելացրեց, որ Ստեպանը սպառնում էր անձամբ գնալ Վեշենսկայա, եթե Ակսինյան չգա հարյուրյակ։

Ակսինյան լսեց պատվերը ու պատրաստվեց գնալու։ Մորաքույրը հապճեպորեն խմոր հունցեց, կաթնահունց թրխնց, իսկ երկու ժամից հետո Ակսինյան, որպես հլու կին, արդեն Անիկուշկայի հետ սայլակով գնում էր Տատարսկի հարյուրյակի գրաված վայրը։

Ստեպանը կնոջը դիմավորեց թաքցրած հուզմունքով։ Նա զննում էր Ակսինյայի նիհարած դեմքը, զգուշությամբ հարցեր էր տալիս, բայց ոչ մի խոսք չասաց, թե Ակսինյան Գրիգորիին տեսե՞լ է թե ոչ։ Խոսակցության ժամանակ միայն մի անգամ, նայելով գետնին, մի քիչ դեմքը շուռ տալով, հարցրեց.

— Բա դու ինչո՞ւ Վեշկի գնացիր այն կողմից, ինչո՞ւ խուտորի դիմաց չանցար Դոնը։

Ակսինյան չոր պատասխանեց, որ ուրիշների հետ անցնել հնարավոր չէր, իսկ Մելեխովներին խնդրել չէր ուզում։ Եվ արդեն պատասխանելուց հետո գլխի ընկավ, որ դուրս է գալիս, թե Մելեխովները ոչ թե ուրիշներ, այլ յուրայիններ են։ Ու շփոթվեց այն պատճառով, որ Ստեպանն էլ կարող էր բանն այդպես հասկանալ։ Իսկ վերջինս հավանորեն այդպես էլ հասկացավ։ Նրա հոնքերի տակին ինչ-որ դող նկատվեց ու դեմքով ասես մի ստվեր անցավ։

Նա հարցականորեն աչքերը բարձրացրեց Ակսինյայի վրա, ու վերջինս, հասկանալով այդ լուռ հարցը, հանկարծ շիկնեց շփոթությունից, ինքն իր վրա ջղայնանալուց։

Խնայելով նրան, Ստեպանը այնպես ցույց տվեց, թե ոչինչ չնկատեց, խոսակցությունը շուռ տվեց տուն ու տեղի վրա, սկսեց հարցեր տալ, թե Ակսինյան նախքան տանից հեռանալը ինչ իրեր է թաքցրել և արդյո՞ք հուսալի կերպով է թաքցրել։

Ակսինյան ինքն իր մեջ նշելով ամուսնու մեծահոգությունը, պատասխանում էր նրան, բայց շարունակ ինչ-որ ներքին ճնշող անհարմարություն էր զգում, և որպեսզի ամուսնուն համոզեր, որ իզուր է եղել այն ամենը, ինչ որ եղել է իրենց մեջ, որպեսզի թաքցներ հենց իր հուզմունքը, դիտմամբ դանդաղեցնում էր իր խոսքը, գործնական զսպվածությամբ ու չորությամբ էր խոսում։

Նրանք խոսում էին գետնատանը նստած։ Նրանց շարունակ խանգարում էին կազակները։ Ներս էր մտնում մերթ մեկը, մերթ մյուսը։ Եկավ Խրիստոնյան ու հենց այնտեղ պառկեց քնելու։ Տեսնելով, որ չի հաջողվի խոսել առանց

կողմնակիցների ներկայության, Ստեպանը ակամա դադարեցրեց խոսակցությունը։

Ակսինյան ուրախացած վեր կացավ, արագ-արագ բացեց կապոցը, ամուսնուն հյուրասիրեց ստանիցայից բերած կաթնահունցով, ու Ստեպանի երթական պարկից վերցնելով կեղտոտ սպիտակեղենը, դուրս ելավ, որ լվա մոտակա լճակում։

Անտառի վրա չոքել էին վաղորդյան անդորրությունը և բաց կապույտ մուժը։ Ցողով ծանրացած խոտաբույսերը թեքվել էին գետնին։ Լճակներում աննկարագրելի կոկոում էին գորտերը ու գետնատանը բոլորովին մոտիկ տեղում, թխկիի փարթամ աճած թփի ետևում ճռճռալի ձայնով ճռվողում էր ջրահավը։

Ակսինյան անցավ թփի կողքից։ Թուփը ամբողջովին, կատարից մինչև խիտ խոտաբույսերով պատած բունը ցանցվել էր սարդի ոստայնով։ Ոստայնի թելերը, ցողի մանրագույն կաթիլներով պատած, շողում էին մարգարտի նման։ Ջրահավը մի րոպե լռեց, հետո էլ,— դեռ չէր շտկվել Ակսինյայի բորիկ ոտքերի տակ ճմլված խոտաբույսերը,— նորից ձայն տվեց ու, պատասխանելով նրան, ցավագին արձագանքեց լճակից բարձրացած կիվիվը։

Ակսինյան հանեց կոֆտան ու իր շարժումները ճնշող կրծկալը, մինչև ծնկները մտավ լճակի թարմ, տաք ջրի մեջ, սկսեց լվացքը։ Նրա շուրջ թռչկոտում էին մլակները, բզզում էին մոծակները։ Արմունկից ծալված, հաստլիկ ու թուխ թևով նա դեմքից քշում էր մոծակները։ Անընդհատ մտածում էր Գրիգորիի մասին, իրենց վերջին գժտության մասին, որ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Գրիգորին մեկնեց հարյուրյակ։

«Կարելի է հիմի նա փնտրո՞ս է ինձ. հենց այս գիշեր կվերադառնամ ստանիցա»,— հաստատապես որոշեց Ակսինյան ու ժպտաց, մտածելով, թե ինչպես կհանդիպի Գրիգորիին և ինչպես իրենք կհաշտվեն շուտով։

Տարօրինա՛կ բան. վերջին ժամանակներում մտածելով Գրիգորիի մասին, Ակսինյան չգիտես ինչու նրա արտաքին կերպարանքը չէր պատկերացնում այնպես, ինչպես նա կար իրականում։ Ակսինյայի աչքերի առաջ պատկերանում էր ոչ

թե այժմյան Գրիգորին, մեծ, քաջակորով, ընկած-ելած և շատ բան տեսած այդ կազակը հոգնածությամբ կկոցվող աչքերով, սև բեղերի շեկլիկացած ծայրերով, քունքերի անժամանակ սպիտակությամբ ու ճակատի կոշտ կնճիռներով,— պատերազմի տարիներին կրած զրկանքների անջնջելի հետքերով,— այլ առաջվա այն Գրիշկա Մելեխովը, որ պատանու պես կոպիտ ու անշնորհք էր փայփայանքների մեջ, կլոր ու բարակ վզով և մշտապես ժպտացող շուրթերի անփույթ կերտվածքով։

Ու դրա համար էլ Ակսինյան դեպի Գրիգորին է՛լ ավելի մեծ սեր ու համարյա մայրական քնքշություն էր տածում։

Եվ ահա այժմ էլ, հիշողության մեջ առավելագույն պայծառությամբ վերականգնելով անսահմանորեն սիրելի դիմագծերը, Ակսինյան ծանր հոգոց հանեց, ժպտաց, շրջվեց, և ամուսնու կիսալվա շապիկը գցելով ոտքերի տակ ու կոկորդում զգալով հանկարծակի վրա հասած քաղցր հեկեկանքների ճնշումը, շշնջաց.

— Ողջ կյանքումս դու իմ սրտում բույն ես դրել, անիծված։

Արցունքները թեթևացրին նրան, բայց դրանից հետո իր շուրջը ասես դալկացավ առավոտյան կպտաշող աշխարհը։ Նա ձեռքի երեսով սրբեց այտերը, թաց ճակատից ետ գցեց մազերը և խամրած աչքերով երկար ու անխոհ հետևում էր, թե ջրի երեսին ինչպես է սահում փոքրիկ, գորշ մի բադիկ, չքանում հողմավար մշուշի վարդավուն ժանյակում։

Լվալով սպիտակեղենը, Ակսինյան այն փռեց թփերին, եկավ գետնատուն։

Արթնացած Խրիստոնյան նստել էր գետնատան ելքի մոտ, շարժում էր ոտքերի հանգուցավոր, ծուռումուռ մատները, համառորեն խոսակցություն էր բաց անում Ստեպանի հետ, իսկ վերջինս կարպետի վրա պառկած, լուռ ծխում էր, համառորեն չպատասխանելով Խրիստոնյայի հարցերին։

— Ուրեմս, դու կարծում ես, որ կարմիրները չե՞ն անցնելու Դոնի այս կողմը։ Լռո՞ւմ ես։ Էհ, սսկի։ Իսկ ես կարծում եմ, որ անպատճառ կանցնեն ծանծաղ տեղերով... Անպատճառ ծանծաղ տեղերով։ Ուրիշ հարմար տեղեր չկան նրանց համար։ Կամ թե կարծում ես, որ հեծելազորը լող տալո՞վ

կանցկացնեն։ Էլ ի՞նչ ես լռում, Ստեպան։ Այստեղ, ուրեմն, գործը վերջանալու մոտ է, իսկ դու սուսուփուս պառկել ես ոնց որ քոթուկ։

Ստեպանը նույնիսկ վեր թռավ տեղից, բարկացկոտ պատասխանեց.

— Ի՞նչ ես կպել, է՞։ Զարմանալի մարդ ես։ Կինս այցելության է եկել, իսկ ձեզնից պրծնել չկա... Վրա են տալի հիմար խոսակցություններով, չեն թողնում, որ մարդ իրեն կընկան մի խոսք ասի։

— Խոսակից ես գտել էլի՛...— Դժգոհ Խրիստոնյան վեր կացավ, կարկատած քոշերը հագավ բոբիկ ոտքերին, դուրս եկավ՝ գլուխը ցավագին զարկելով դռան վերևի դրնդիին։

— Չեն թողնի, որ մենք այստեղ խոսենք, եկ գնանք անտառ,— առաջարկեց Ստեպանը։

Ու առանց համաձայնության սպասելու, դուրս եկավ։ Ակսինյան հնազանդությամբ հետևեց նրան։

Կեսօրին նրանք վերադարձան գետնատուն։ Երկրորդ դասակի կազակները, որոնք պառկոտել էին լաստենուտում, ստվերում, տեսնելով նրանց, մի կողմ դրին խաղաթղթերը, լռեցին, խոսուն հայացքով միմյանց աչքով արեցին, քմծիծաղ տվեցին ու կեղծ հոգոցներ հանեցին։

Ակսինյան անցավ նրանց կողքից՝ արհամարհաբար ծոմռելով շուրթերը, քայլելիս շտկելով ճմռթված, սպիտակ ու ժանյակավոր լաչակը։ Նրան լռությամբ ճամփեցին, բայց հենց որ ետևից եկող Ստեպանը հասավ կազակներին Անիկուշկան վեր կացավ ու անջատվեց պառկածների խմբից։ Նա կեղծ հարգանքով մինչև գոտին գլուխ տվեց Ստեպանին, բարձրաձայն ասաց.

— Շնհավոր լինի տոնդ... պասդ կոտրելը։

Ստեպանը հաճույքով ժպտաց։ Նրա համար դուրեկան էր, որ կազակները իրեն տեսել էին կնոջ հետ անտառից վերադառնալիս։ Չէ՞ որ դա որոշ չափով նպաստում էր այն բոլոր լուրերի հերքման, թե ինքը կնոջ հետ վատ է ապրում... Նա մինչև իսկ կտրիճաբար թափահարեց ուսերը՝ ինքնագոհ ցույց տալով շապիկը, որի վրա դեռ չէր չորացել քրտինքը։

Եվ միայն դրանից հետո խրախուսված կազակները աշխուժացան, խոսեցին քրքջալով.

— Տղերք, հո կնիկ չի, կրակ է, հա՛-ա։ Ստյոպկայի շապիկը քամես, ինչքա՛ն քրտինք կթափվի... Ո՛նց է սեղմրոտել մեջքը։

— Հոգին հանել է, էլի, լողացրել քափ ու քրտնքի մեջ...

Մի ջահել տղա, որ զմայլված, մշուշված հայացքով ուղեկցում էր Ակսինյային հենց մինչև գետնատունը, հուսալքված ասավ.

— Արար-աշխարհում այդպիսի գեղեցկուհի չես գտնի, աստված վկա։

Անիկուշկան խելամիտ կերպով հարց տվեց նրան.

— Իսկ դու փորձե՞լ ես փնտրել։

Ակսինյան, որ լսում էր անվայել խոսակցությունը, մի ցնոքր գունատվեց, մտավ գետնատուն, զզվանքից կնճռոտեց դեմքը՝ հիշելով քիչ առաջվա մերձավորությունը ամուսնու հետ և վերջինիս ընկերների անպարկեշտ դիտողությունները։ Ստեպանը առաջին հայացքից հասկացավ նրա տրամադրությունը, հաշտվողաբար ասաց.

— Դու այդ հովատակների վրա մի բարկանա, Կսյուշա։ Զանձրույթից են այդպես խոսում։

— Ո՞ւմ վրա պիտի բարկանամ,— խուլ պատասխանեց Ակսինյան՝ խառնելով իր քաթանե տոպրակը, դրանից հապճեպորեն հանելով այն ամենը, ինչ որ բերել էր ամուսնուն։ Ու ցածրացնելով ձայնը, ավելացրեց.— Պետք է որ ինքս ինձ վրա բարկանայի, համա սիրտ չկա...

Նրանց խոսակցությունը ինչ-որ գլուխ չէր գալիս։ Տաբրոպեից հետո Ակսինյան վեր կացավ։ «Հիմա սրան կասեմ, որ գնում եմ Վեշկի»,— մտածեց նա և իսկույն հիշեց, որ դեռ չէր հավաքել Ստեպանի չորացած սպիտակեղենը։

Երկար նորոգում էր ամուսնու շապիկներն ու վարտիքները, որոնք քրտնախաշ էին եղել. նստել էր գետնատան մուտքի մոտ, հաճախակի նայում էր կեսօրից հետո դեպի արևմուտք թեքված արևին։

...Այդ օրը նա այնպես էլ չգնաց։ Սիրտ չարեց։ Իսկ առավոտյան, հենց որ ծագեց արևը, նա պատրաստվեց գնալու։ Ստեպանը փորձեց պահել նրան, խնդրեց մի օր էլ մնալ, բայց Ակսինյան այնքան համառորեն մերժեց նրա խնդրանքը, որ նա էլ չհամոզեց, անջատվելիս միայն հարցրեց.

— Ուղում ես Վեշկիո՞ում ապրել։

— Առայժմ Վեշկիում։

— Գուցե մնա՞յիր ինձ մոտ։

— Ինձ վայել չէ լինել այստեղ... կազակների հետ։

— Ասենք, ճիշտ է...— համաձայնվեց Ստեպանը, բայց սառը հրաժեշտ տվեց։

Փչում էր հարավ-արևելյան ուժեղ քամին։ Թռչում էր հեռվից, գիշերվա ընթացքում քիչ հանդարտվել էր, բայց առավոտյան այնուամենայնիվ բերեց անդրկասպյան անապատների բորբ ջերմությունը, ու նետվելով ձախափնյա մարգագետինները, չորացրեց ցողը, ցրեց մշուշը, վարդավուն, խեղդուկ մուժով պարուրեց Դոնի մերձակա լեռների կավճոտ ճյուղավորությունները։

Ակսինյան հանեց քոշերը ու, ձախ ձեռքով վերցնելով շրջազգեստի փեշը (անտառի խոտաբույսերի վրա դեռ ցող կար), թեթևաքայլ գնում էր անտառային լքած ճանապարհով։ Խոնավ գետինը հաճելիորեն զովացնում էր նրա բոբիկ ոտները, իսկ չոր քամին տենչալի, տաք շրթունքներով համբուրում էր մերկ, շաղլիկ սրունքները և պարանոցը։

Մի բացատում, մասրենու ծաղկող թփի մոտ նա նստեց հանգստանալու։ Ինչ-որ մոտիկ տեղում, չչորացած լճակում, եղեգների մեջ կչկչում էին վայրի բադերը, մի արու բադ խռպոտ կանչում էր ընկերուհուն։ Դոնի մյուս կողմում ոչ այնքան արագ, բայց համարյա անդադար ճարճատում էին գնդացիրները, երբեմնակի որոտում էին թնդանոթների կրակոցները։ Արկերի պայթյունները Դոնի այս կողմում դմբդմբալով էին հնչում ինչպես արձագանք։

Հետո հրաձգությունը ընդհատվեց, ու Ակսինյայի առաջ աշխարհը բացվեց իր խորախորհուրդ հնչեղությամբ. քամուց դողդողում, շրշում էին հացենիների կանաչ և սպիտակ երանգավորված տերևները ու կաղնիների ձուլածո, նախշերով քանդակված տերևները, բարդու մատղաշ անտառի մացառուտներից լողում էր համաձույլ դժժոցը. հեռո՛ւ-հեռվում կկուն անորոշ ու տրտմագին հաշվում էր մեկնումեկի չապրած տարիները. լճակի վերևից թռչող փուփուլ կիվիվը համառորեն հարցնում էր՝ «ինչի՞, է՞, ինչի՞, է՞». ինչ-որ մի փոքրիկ, մոխրագույն թռչնակ Ակսինյայից երկու

քայլ հեռավորությամբ ջուր էր խմում ճանապարհի անվահետքից՝ բարձրացնելով գլխիկը ու քաղցր կկոցելով աչիկը. բզզում էին թավշյա, փոշոտ իշամեղուները. մարգարտածաղիկների պսակների վրա հոճվում էին թուխ, վայրի մեղուները։ Դրանք պոկվում էին ու անուշաբույր ծաղկափոշին տանում ստվերոտ, ղով փչակները։ Կաղամախիների ոստերից հյութ էր կաթում։ Իսկ մլենու թփի տակից ծորում էր նախորդ տարվա փտող սաղարթի տոհմ ու բարկ նեխահոտը։

Անշարժ նստած Ակսինյան անհագ ներշնչում էր անտառի բազմազան բույրերը։ Հրաշալի ու բազմապիսի հընչյուններով լեցուն անտառը հզորազոր, նախնական կյանքով էր ապրում։ Մարգագետնի հողը, որ գարնանը ծածկվել էր գետի ջրով ու լիուլի հագեցված էր խոնավությամբ, այնպիսի ճոխ ու բազմատեսակ խոտաբույսեր էր սնել ու աճեցրել, որ Ակսինյայի աչքերը կորչում էին ծաղիկների ու խոտաբույսերի այդ հիասքանչ ծովում։

Ժպտալով ու լուռ շարժելով շրթունքները, Ակսինյան զգույշ տնտղում էր անանուն, կապույտ անրիծ ծաղիկների ցողունիկները, հետո թեքեց գեր իրանը, որպեսզի հոտ քաշեր, ու հանկարծ զգաց հովտաշուշանի տաղտիկ ու քաղցրավուն բուրմունքը։ Խառնխտելով ծաղիկները, նա գտավ հովտաշուշանը։ Դա աճել էր այդտեղ, խիստ ստվերախիտ թփի տակ։ Լայն, մի ժամանակ դալար տերևները դեռևս արևից խնամքով պաշտպանում էին ցածրիկ, կորացած ցողունիկը, որ պսակված էր ձյան պես սպիտակ, գլխակոր ծաղկաբաժակներով։ Բայց ցողով ու դեղին ժանգով պատած տերևները մեռնում էին, ծաղիկն ինքն էլ արդեն մահամերձ վիճակում էր. երկու ստորին բաժակները կծկվել ու սևացել էին, միայն կատարը, որ պատած էր ցողի կայծկլտող շիթերով, հանկարծ արևի տակ բռնկվեց կուրացուցիչ, հմայուն սպիտակությամբ։

Ու չգիտես ինչու այդ ակնթարթում, երբ նրա արցունքի միջով զննում էր ծաղիկը ու ներշնչում դրա տարտամ բույրը, վերհիշեց իր ջահելությունը և իր երկար, բերկրանքներով աղքատ կյանքը։ Դե, ինչ արած, երևում էր, որ պառավել էր Ակսինյան... Մի՞թե ջահել կինը լաց կլինի այն պատճառով, որ պատահական մի հուշ կնվաճի իր սիրտը։

Հենց այդպես արտասվելով էլ քուն մտավ երեսնիվայր, լացակումած դեմքը ձեռների մեջ թաղած, ուռած ու խոնավ այտը սեղմելով ճմռթված լաչակին։

Քամին ավելի ուժեղ էր փչում, բարդիների ու ուռենիների գագաթները թեքում դեպի արևմուտք։ Ճոճվում էր հացենու դալուկ բունը, որ պարուրված էր օրորվող սաղարթի սպիտակ, վառ ծածկոցով։ Քամին ցածրանում էր, ընկնում մասրենու լիովին փթթած թփի վրա, որի տակ քնած էր Ակսինյան, ու այդ ժամանակ, ինչպես հեքիաթային կանաչ թռչունների վախեցած երամ, տագնապալից շրշյունով վեր էին թռչում տերևները՝ թափելով վարդագեղ փետուրները,— ծաղկաթերթերը։ Մասրենու թորշոմ ծաղկաթերթերով ծածկված, քնել էր Ակսինյան ու չէր լսում ոչ անտառի խուլ աղմուկը, ոչ էլ Դոնի մյուս կողմում վերսկսված հրաձգությունը, չէր զգում, թե զենիթին հասած արևը ինչպես է վառում իր չծածկված գլուխը։ Լսելով մարդկային ձայներ ու ձիերի փնչոց, իսկույն արթնացավ, նստեց։

Նրա կողքին կանգնել էր երիտասարդ, շիկաբեղ ու սպիտակ ատամներով մի կազակ, բռնել թամբած, սպիտակառունգ ձիու սանձը։ Նա թունդ ժպտում էր, թափահարում ուսերը, պարում, խոպոտ, սակայն հաճելի ու բարակ ձայնով արտասանում մի ուրախ երգի խոսքերը.

Ես ընկա ու պառկեցի
Չորս բոլորս նայեցի։
Դես եմ նայում,
Դեն եմ նայում,
Ոչ մեկն ինձ չի ոտքի հանում։
Ետ նայեցի ու տեսա
Կողքիս կանգնած մի կազակ...

— Ես ինքս էլ վեր կկենամ,— ժպտաց Ակսինյան ու արագ վեր թռավ՝ շտկելով ճմռթված շրջազգեստը։

— Էհ, բարև, ջանիկս։ Տոտիկներդ թուլացե՞լ են, թե՞ ծուլացել ես,— ողջունեց նրան ուրախ կազակը։

— Քունս էր տարել,— շփոթված պատասխանեց Ակսինյան։

— Վեշկի՞ ես գնում։

— Վեշկի։

— Ուզո՞ւմ ես տանեմ։

— Ինչո՞վ։

— Դու նստիր իմ ձին, իսկ ես ոտքով կգնամ։ Մաղարիչի բան է, էլի՛...— ու կազակը զվարճալի, բազմանշանակ աչքով արավ։

— Չէ՛ աղբեր, գնա քո ճամփեն, իսկ ես ոտքով էլ տեղ կհասնեմ։

Բայց կազակը ցուցաբերեց սիրային գործերում իր ունեցած փորձառությունը և համառությունը։ Օգտվելով նրանից, որ Ակսինյան ծածկվում էր շալով, նա իր կարճ, բայց ուժեղ ձեռքով գրկեց նրան, թափով քաշեց դեպի իրեն և ուզում էր համբուրել։

— Հիմարություն մի՛ անիր,— գոչեց Ակսինյան ու արմունկով ուժեղ խփեց նրա քթարմատին։

— Սիրունիկս, մի՛ խփի։ Մտիկ տուր, թե ինչքան լավ է մեր չորս բոլորը... Ամեն մի շունչ-կենդանի զուգավորվում է... Արի մենք էլ մեզք գործենք...— կկոցելով ծիծաղկոտ աչքերը, բեղերը քսմսելով Ակսինյայի պարանոցին, շշնջում էր կազակը։

Թևերը տարածած, ձեռները անզայրույթ, բայց ուժեղ դեմ անելով կազակի թուխ, քրտնաջ դեմքին, Ակսինյան փորձեց պոկվել, բայց կազակը ամուր բռնել էր նրան։

— Հիմա՛ր, ես հիվանդ եմ վատ հիվանդությամբ... Թո՛ղ,— խնդրում էր նա շնչասպառ, մտածելով, թե այդ նախի խորամանկությամբ կազատվի կազակից։

— Հը՛մ... բա իմ վիճակը ավելի վատ չէ՞...— արդեն ատամների միջից մոթմոթաց կազակը ու հանկարծ Ակսինյային հեշտությամբ բարձրացրեց գետնից։

Մի ակնթարթ գիտակցելով, որ կատակը վերջացել է և գործը վատ է գնում, Ակսինյան ամբողջ ուժով մեկ բռունցքով խփեց կազակի քթին, որ արևից դարչնագույն էր դարձել, ու դուրս պրծավ իրեն պինդ բռնած ձեռքերից։

— Ես Գրիգորի Մելեխովի կինն եմ։ Փորձիր մոտենալ, շուն շան որդի... կպատմեմ նրան, նա քեզ...

Դեռ չհավատալով իր խոսքերի ներգործության, Ակսինյան վերցրեց հաստ, չոր մի ձող։ Բայց կազակը միանգամից սառեց։ Պաշտպանական գույնի վերնաշապկի թեքով

բեղերից սրբելով արյունը, որ առատորեն ծորում էր երկու քթածակերից, նա դառնությամբ բացականչեց.

— Հիմար, ա՜խ, հիմար կնիկ, բա ինչու առաջուց չասացիր։ Թյո՛ւ, ո՞նց է թափվում արյունը... Թշնամու հետ քիչ ենք արյուն թափում, հա՞-ա, հիմի էլ մեր հարազատ կնանիքն են սկսում արյուն առնել...

Նրա դեմքը հանկարծ դարձավ տխուր ու անսիրալիր։ Մինչդեռ նա ճանապարհի կողքին լճացած ջուրը բռով վերցնում էր ու լվացվում, Ակսինյան հապճեպորեն շուռ եկավ ճանապարհից, արագ անցավ բացատը։ Հինգ րոպեից հետո կազակն անցավ նրանից։ Նա լուռ ժպտալով, շեղակի նայեց Ակսինյային, կրծքի վրա սառնասրտությամբ շտկեց հրացանի փոկը ու սլացավ արագ վարգով։

II

Այդ գիշեր Մալի Գրոմչենոկ խուտորի մոտ կարմիրբանակայինների մի գունդ տախտակներից ու գերաններից կառուցած լաստերով անցավ Դոնը։

Գրոմոկի հարյուրյակը հանկարծակիի բերվեց, որովհետև կազակների մեծամասնությունը այդ գիշեր քեֆ էր անում։ Երեկոյից հարյուրյակի գրաված դիրքը եկան կազակների կանայք, նրանց տեսնելու։ Նրանք իրենց հետ բերեցին ուտելեղեն, սափորներով ու դույլերով օղի։ Կեսգիշերին բոլորն էլ հարբած էին։ Գետնատներում հնչում էին երգեր, հարբած կանանց ճղճղոց, տղամարդկանց հոհոոց և սուլոց... Ուղեկալում եղած քսան կազակները նույնպես մասնակցեցին խմելուն՝ գնդացրի մոտ թողնելով երկու գնդացրորդ և մի մեծ դույլ օղի։

Լիակատար անդորրության մեջ Դոնի աջ ափից հեռացան կարմիրբանակայիններով բեռնված լաստերը։ Անցնելով գետը, կարմիրբանակայինները շղթա կազմեցին, լուռ գնացին դեպի գետնատները, որոնք հիսուն սաժեն հեռու էին Դոնից։

Սակրավորները, որոնք կառուցել էին լաստերը, արագ թիավարում էին՝ վերադառնալով բեռնման սպասող կարմիրբանակայինների նոր խումբը փոխադրելու։

Գետի ձախ կողմում հինգ րոպե ոչինչ չէր լսվում, բացի կազակական անկապ երգերից. հետո թնդաձայն պայթել սկսեցին ձեռքի նռնակները, որոտաց գնդացիրը, միանգամից հրացանային անկարգ հրաձգություն բռնկվեց, ու կցկտուր թնդաց աղաղակը՝ «Ուռա-ա՜-ա՜, ուռա-ա՜-ա, ուռա-ա՜-ա՜»։

Գրոմոկի հարյուրյակը ետ շպրտվեց ու վերջնական ոչընչացման չենթարկվեց միայն այն պատճառով, որ հետապնդումը անհնարին էր գիշերային անթափանց խավարում։

Աննշան կորուստ ունեցած գրոմոկցիները կանանց հետ խուճապահար փախան մարգագետնով, Վեշենսկու ուղղությամբ։ Իսկ այդ ժամանակ գետի աջ կողմից լաստերը կարմիրբանակայինների նոր խմբեր էին տեղափոխում, ու 111-րդ գնդի առաջին գոմարտակի մի կիսավաշտ երկու ձեռնագնդացրով արդեն գործում էր Բազկիի ապստամբական հարյուրյակի թևում։

Տեղ հասած օժանդակ ուժերը նետվեցին դեպի ճեղքվածքը։ Նրանց առաջշարժումը չափազանց դժվար էր, որովհետև կարմիրբանակայիններից ոչ ոք չգիտեր տեղանքը, զորամասերը ուղեցույցներ չունեին, ու կուրորեն առաջ շարժվելով, գիշերային մթության մեջ շարունակ դեմ էին առնում լճերի ու վարարած ջրով լեցուն, խորունկ վտակներին,— դրանք ոտով անցնելն անհնարին էր։

Բրիգադի հրամանատարը, որ ղեկավարում էր հարձակումը, որոշում ընդունեց դադարեցնել հետապնդումը մինչև լուսաբաց, այն հաշվով, որ մինչև առավոտ մոտեցներ ռեզերվները, ուժերը կենտրոնացներ Վեշենսկու մատույցներում և հրետանային նախապատրաստությունից հետո ղեկավարեր հետագա հարձակումը։

Բայց Վեշենսկում արդեն շտապ միջոցներ էին ձեռնարկվում ճեղքվածքը լիկվիդացնելու համար։ Հենց որ վրա հասավ կապավորը և լուր բերեց կարմիրների գետանցման մասին, շտաբի հերթապահը անմիջապես մարդ ուղարկեց Կուդինովին ու Մելեխովին կանչելու։ Զոռնի, Գորոխովկա և Դուբրովկա խուտորներից կանչեցին Կարգինսկայայի գնդի հեծյալ հարյուրյակները։ Գրիգորի Մելեխովը իր վրա վերցրեց գործողության ընդհանուր ղեկավարությու-

նը։ Նա երեք հարյուր հեծելակ ուղարկեց Երինսկի խուտորը, այն հաշվով, որ նրանք ամրացնեն ձախ թևը և օգնեն Տատարսկի և Լեբյաժենսկու հարյուրյակներին՝ դիմադրելու հակառակորդի ճնշման, այն դեպքում, եթե վերջինս արևելքից շրջանցեր Վեշենսկայան, Բազկիի հարյուրյակին օգնելու համար արևմուտքից, Դոնի հոսանքով դեպի ներքև ուղարկեց Վեշենսկու ոչ կազակական գուգազը և Ջիրի հետևակ հարյուրյակներից մեկը. սպառնալի տեղամասերում ութ գնդացիր դրեց, իսկ ինքը երկու հեծյալ հարյուրյակով գիշերվա ժամը մոտ երկուսին տեղավորվեց Գորելի կոչված անտառի եզրին, սպասելով լուսաբացին ու մտադրվելով հեծյալ շարքով գրոհ տալ կարմիրբանակայինների վրա։

Դեռ չէին մարել համաստեղությունները, երբ Վեշենսկու ոչ կազակական գուգազը, անտառի միջից անցնելով Բազկիի գետածնկի ուղղությամբ, հանդիպեց նահանջող բազկեցիներին ու սրանց հակառակորդի տեղ ընդունելով, կարճառև հրաձգությունից հետո փախավ։ Գուգազավորները լողալով անցան Վեշենսկայան գետածնկից բաժանող լայն լիճը՝ շտապելուց կոշկեղենը և հագուստը թողնելով լճի ափին։ Ախալը շուտով հայտնաբերվեց, բայց և ապշեցուցիչ արագությամբ տարածվեց այն լուրը. թե կարմիրները մոտենում են Վեշենսկուն։ Գետնահարկերում ապաստանած փախստականները Վեշենսկուց փախան դեպի հյուսիս՝ ամենուրեք լուր տարածելով, թե կարմիրներն անցել են Դոնը, ճեղքել ռազմաճակատը և հարձակվում են Վեշենսկու ուղղությամբ...

Հազիվ էր լույսը բացվել, երբ Գրիգորին, լուր ստանալով ոչ կազակական գուգազի փախչելու մասին, ձիով սլացավ դեպի Դոն։ Գուգազավորները պարզել էին տեղի ունեցած թյուրիմացությունը ու, բարձր խոսակցելով, արդեն վերադառնում էին խրամատները։ Գրիգորին մոտեցավ մի խմբի, ծաղրանքով հարցրեց.

— Շա՞տ մարդ խեղդվեց, երբ լող էիք տալի լճի միջով։

Թրջված, քայլելիս շապիկը մզող մի հրաձիգ շփոթված պատասխանեց.

— Ձկների պես էինք լողում, էլ ո՞նց կարող էինք խեղդվել...

— Ո՛վ ասես, որ չի շշկլվի,— խոհեմաբար ասաց երկրորդը, որ միայն վարտիքով էր քայլում,— հա՛, մեր դասակապետը դրուստ որ քիչ մնաց խեղդվեր։ Չէր ուզում բոբիկանալ, երկար հանել փաթաթանները, ու լող տվեց, համա արի ու տես, որ մի փաթաթանը արձակվեց ջրի մեջ։ Խճճեց նրա ոտները... Ո՞նց էր բղավում։ Երևի Ելանում էլ էր լսվում։

Գտնելով գուգազի հրամանատար Կրամսկովին, Գրիգորին նրան հրամայեց հրաձիգներին տանել անտառի ծայրը, նրանց այնպես տեղավորել, որ հարկավոր դեպքում կարելի լիներ թևից հրակոծել կարմիրբանակային շղթաները, իսկ ինքը ճանապարհվեց դեպի իր հարյուրյակները։

Կեսճանապարհին նրան հանդիպեց շտաբի սուրհանդակը։ Սա կանգնեցրեց դժվարությամբ ետ-ետ գնացող ձին, թեթևացած շունչ առավ.

— Հազիվ գտա ձեզ։

— Ի՞նչ կա որ։

— Շտաբից հրամայել են հաղորդել, որ Տատարսկի հարյուրյակը թողել է խրամատները։ Վախենում են, որ կշրջապատվեն, նահանջում են դեպի ավազուտները... Կուդինովը հրամայեց, որ դուք հենց հիմա շտապ գնաք այնտեղ։

Գրիգորին ամենակայտառ ձիեր ունեցող կազակների կես դասակով, անտառի միջով դուրս եկավ ճանապարհը։ Քսան րոպե գնալուց հետո նրանք արդեն Գոլի Իլմեն լճի մոտ էին։ Նրանց ձախ կողմում մարգագետնով ցրիվ փախչում էին խուճապով բռնված տատարցիները։ Ճակատայինները և փորձված կազակները անցնում էին առանց շտապելու, լճի կողքից, թաքնվելով առափնյա եղեգնուտում. իսկ մեծամասնությունը, որ ըստ երևույթին լոկ մի ցանկություն ուներ,— շուտ հասնել անտառ,— ուշադրություն չդարձնելով գնդացրային նոսր կրակի վրա, փախչում էր ուղիղ ճամփով։

— Հասնել դրանց, ձաղկել մտրակներով...— գոռաց Գրիգորին՝ կատաղությունից աչքերը շլելով ու առաջինը սլացավ տատարցիների ետևից։

Բոլորի ետևից, կաղալով, օտարոտի կերպով կոստկոտալով, գնում էր Խրիստոնյան։ Նախորդ օրը ձուկ որսալիս

նա եղեգնով խորունկ կտրել էր կրունկը, այս պատճառով էլ չէր կարողանում վազել իր երկար ոտներին հատուկ ամբողջ արագությամբ։ Գրիգորին մտրակը գլխից վեր բարձրացրած, արդեն հասնում էր նրան։ Ձիու ոտնաձայն լսելով, Խրիստոնյան ետ նայեց ու զգալի չափով արագացրեց իր ընթացքը։

— Ո՞ւր... Կա՛նգ առ... Կանգ առ, ասում եմ քեզ...— ապարդյուն գոռում էր Գրիգորին։

Բայց Խրիստոնյան չէր էլ մտածում կանգ առնել։ Նա է՛լ ավելի արագացրեց վազքը՝ անցնելով ուղտին հատուկ ինչ-որ սանձարձակ քառատրոփի։

Այդ ժամանակ կատաղած Գրիգորին խռպոտ ձայնով, սարսափելի մայր հայհոյեց, հուշտ արեց ձիուն, վրա հասավ, մտրակով մեծ բավականությամբ զարկեց Խրիստոնյայի քրտնակալած մեջքին։ Խրիստոնյան հարվածից վեր թռավ, հրեշավոր մի թռիչք, նապաստակի «խաբս տալու» պես ինչ-որ մի ցատկում կատարեց դեպի մի կողմ, նստեց գետնին, սկսեց անշտապ, մանրակրկիտորեն տնտղել մեջքը։

Գրիգորիին ուղեկցող կազակները կտրում էին փախչողների ճանապարհը, կանգնեցնում էին նրանց, բայց մտրակները գործի չէին դնում։

— Ձաղկե՛լ դրանց... Ձաղկե՛լ...— խռպոտ գոռում էր Գրիգորին՝ թափահարելով իր շքեղ մտրակը։ Նրա ձին թրոչկոտում էր, ծառս լինում, ոչ մի կերպ չէր ուզում առաջ գնալ։ Դժվարությամբ քշելով նրան, Գրիգորին սլացավ առջևում փախչողների ետևից։ Սլանալիս նա մի ակնթարթ տեսավ մի թփի մոտ կանգ առած, լուռ ժպտացող Ստեփան Աստախովին. տեսավ, թե ինչպես Անիկուշկան ծիծաղից պպզելով ու ձեռները խոսափողի ձևով միացրած, սուր, կանացի ձայնով ճղճղում էր.

— Տղերք, ճղեք, ով կարող է, կարմիրնե՞րը... Թյո՛ւ նրանց... Շո՛ւտ...

Գրիգորին հասավ էլի մի տատարցու, որը բամբակաբաճկոն էր հագել, վազում էր անխոնջ ու կայտառ։ Նրա կորացած կերպարանքը ծանոթ էր թվում, բայց լավ նայելու ժամանակ չկար, ու Գրիգորին դեռ հեռվից գոռաց.

— Կանգնի՛ր, շան որդի... Կանգնի՛ր, կթրատե՛մ...

Ու հանկարծ բամբկուն կուրտկայով մարդը դանդաղեցրեց վազքը, կանգ առավ, ու երբ շուռ էր գալիս,— բնորոշ, մանկությունից ծանոթ շարժմամբ ցույց տալով առավելագույն աստիճանի հասած հուզմունքը,— ապշած Գրիգորին դեռ նրա դեմքը չտեսած, ճանաչեց հորը։

Պանտելեյ Պրակոֆևիչի այտերը ցնցվում էին ջղաձգությունից։

— Հարազատ հո՞րդ ես շան որդի ասում, հա՞։ Սպառնում ես թրատե՞լ հորդ,— բարձր, կերկերուն ձայնով գոռաց նա։

Նրա աչքերն այնպիսի ծանոթ, խելագար կատաղությամբ էին մշուշվում, որ Գրիգորիի վրդովմունքը միանգամից սառեց, և նա դժվարությամբ պահելով ձին, գոչեց.

— Ետևիցդ չճանաչեցի, էլ ի՞նչ ես բղավում, հայրիկ։

— Ո՞նց թե չճանաչեցիր. հորդ չճանաչեցիր, հա՞-ա...

Այնքան անհեթեթ ու անտեղի էր ծերունական այդ խռովկանության արտահայտությունը, որ Գրիգորին, արդեն ծիծաղելով, մոտեցավ հորը, հաշտվողաբար ասաց.

— Հերս, մի բարկանա։ Քո սերթուկը ես առաջ չէի տեսել, ու հետո, դու թռչում էիր ոնց որ մրցանակ տանող ձի, և ո՞ւր էր մնացել քո կաղությունը։ Էլ ո՞նց ճանաչեի քեզ։

Ու դարձյալ, ինչպես այդ լինում էր առաջ տնային կենցաղում, Պանտելեյ Պրակոֆևիչը հանդարտվեց, ու դեռևս արագ, բայց հանգիստ շնչելով, համաձայնվեց.

— Ճիշտ ես ասում, սերթուկս նոր է, փոխանակել եմ մուշտակովս,— մուշտակս ծանր էր, իսկ կաղալ... Ախր ո՞նց կաղաս։ Այստեղ, ախպեր, ի՞նչ կաղալու ժամանակ է... Մահը աչքներիս առաջ է, իսկ դու ոտքի մասին ես խոսում...

— Էհ, մահը դեռ հեռու է։ Ետ դարձ, հերս։ Փամփուշտներդ հո դեն չե՞ս գցել։

— Ո՞ւր դառնամ,— վրդովվեց ծերունին։

Բայց հենց այստեղ Գրիգորին բարձրացրեց ձայնը. շեշտելով յուրաքանչյուր բառը, հրաման տվեց.

— Հրամայում եմ վերադառնալ։ Մարտական պարագայում հրամանատարին չհնազանդվելու համար գիտե՞ս ինչ պատիժ է տրվում կանոնագրքի համաձայն։

Այս խոսքերը ազդեցություն թողին. Պանտելեյ Պրակո-

ֆեիչը մեջքի վրա շտկեց հրացանը, դժկամորեն ետ դարձավ։ Հասնելով ծերունիներից մեկին, որ դեռ դանդաղ էր քայլում դեպի ետ, հոգոց հանելով, ասաց.

— Ա՛յ թե ինչ տեսակ զավակներ են։ Մարդը չի ուզում հարգել հորը, կամ թե, զորօրինակ, աղատել կովից, ուզում է հորը... հենց այնտեղ ղրկել... է-է-հե՛... Չէ, ողորմած հոգի Պետրոն, երկնային արքայություն նրան, շատ ավելի լավ էր։ Բարի հոգի ուներ, իսկ այս սարսաղը, այսինքս Գրիշկան, թեկուզև դիվիզիայի հրամանատար է, մեծավոր է, համա նրա պես չի։ Իսկի կարա՞ս մի խոսք ասես, թե աչքիդ վերև հոնք կա։ Իմ ծեր հալովը սա բիզը կողքիս խրելով կնստեցնի վառարանի վրա, է՛-է՛հե՛։

Տատարցիներին առանց դժվարության խելքի բերին։

Մի քիչ հետո Գրիգորին հավաքեց ամբողջ հարյուրյակը, տարավ թաքստոց. առանց ձիուց իջնելու կարճ բացատրեց նրա անելիքը։

— Կարմիրները անցել են Դոնը և ուզում են գրավել Վեշկին։ Դոնի մոտ հիմի կռիվ է սկսվել։ Հանաք բան չի, հա՛-ա, ու խորհուրդ չեմ տալի զուր տեղը փախչել։ Եթե մեկ էլ փախչեք, կհրամայեմ հեծելազորին, որ Երինսկումն է, թրատել ձեզ ինչպես դավաճանների.— Գրիգորին դիտեց իրենց խուտորցիների այլևայլ ձևով հագնված ամբոխը, չթաքցրած արհամարհանքով վերջացրեց խոսքը.— Ձեր հարյուրյակում ամեն տեսակ խուժան է հավաքվել, հենց նա էլ ահ ու երկյուղ է տարածում։ Կովողների՛ս մտիկ,— փախան, ուպականեցին փոխանները։ Հլա դեռ կազակ եք կոչվում։ Մանավանդ դուք, բիձեք, զգույշ, հա՛-ա։ Հանձն եք առել կռիվ անել, ուրեմն էլ կարիք չկա ծակուծուկ մտնելու։ Հենց հիմի դասակներով վազ տվեք հրե՛ն դեպի այն թփերը, այնտեղից էլ՝ դեպի Դոն։ Դոնի կողքով հասեք Սեմյոնովսկի հարյուրյակին։ Նրա հետ միասին խփեք կարմիրների թևին։ Մա՛րշ։ Դե շո՛ւտ։

Տատարցիները լուռ լսեցին ու նույնպես լուռ շարժվեցին դեպի թփերը։ Ծերուկները ընկճված տնքտնքում էին, նայում արագ սլացող Գրիգորիին ու նրան ուղեկցող կազակներին։ Ծերունի Օբնիզովը, որ համաքայլ գնում էր Պանտելեյ Պրոկոֆեիչի հետ, հիացմունքով ասաց.

— Ա՛մա թե աստված քեզ հերոս տղա է տվել, հա՛-ա։ Իսկական արծիվ է։ Ո՞նց դաղեց Խրիստոնյայի մեջքը, է՛։ Միանգամից ամեն բան կարգի բերեց։

Ու իր հայրական զգացումները շոյված Պանտելեյ Պրոկոֆեիչը սիրով համաձայնվեց.

— Հա՛, աղբեր։ Այդ տեսակ զավակ արար-աշխարհում չի գտնվի։ Բոլոր խաչերը ստացել է, բա այդ հանա՞ք բան է։ Այ, հանգուցյալ Պետրոն, ողորմի՛ նրա հոգուն, թեկուզև հարազատ որդիս էր ու առջնեկ էր, ամա սրա պես չէր։ Շատ սուսիկ-փուսիկ էր, ի՞նչ իմանաս, ոնց որ թե օրապակաս լիներ։ Ծածուկ, կնկա հոգի ուներ։ Իսկ սա բոլորովին ինձ է քաշել։ Ինձնից էլ շատ ավելի ղոչաղ դուրս եկավ։

Գրիգորին իր կիսադասակով մոտենում էր Կալմիցկի ծանծաղուտին։ Հասնելով անտառ, նրանք կարծում էին, որ այլևս վտանգ չկա, բայց նրանց տեսան դիտակետից, Դոնի մյուս կողմից։ Թնդանոթային մի դասակ կրակ բացեց։ Առաջին արկը թռավ ուռենիների գագաթների վրայով, ընկավ հեռվում, ճահճոտ թավուտում, չպայթեց։ Երկրորդը խփեց մի հին, սև կաղամախու մերկ արմատին, որ ճանապարհից հեռու չէր, կրակ թափեց, ու որոտմունքով, պարարտ հողի կտորներով և փտած ծառի փշուրներով ետ շպրտեց կազակներին։

Խլացած Գրիգորին բնազդաբար ձեռքը տարավ աչքերին, թեքվեց թամքի դաշին՝ զգալով խուլ ու թաց մի զարկ, որ ասես ձիու գավակին էր տրվել։

Կազակների ձիերը գետինքը ցնցող պայթյունից, ասես հրամանով, պպզեցին ու առաջ նետվեցին. Գրիգորիի ձին ծանր շարժմամբ ծառս եղավ, ետ-ետ գնաց, սկսեց դանդաղ ընկնել կողքի վրա։ Գրիգորին հապճեպ թռավ ձիուց, բռնեց դրա սանձը։ Էլի երկու արկ թռան, հետո էլ անտառի ծայրում մեղմ լռություն տիրեց։ Վառոդի ծուխը նստում էր խոտաբույսերին. նոր շուռ տված հողի, տաշեղների, կիսով չափ փտած ծառերի հոտ էր գալիս։ Հեռվում, թավուտում անհանգիստ ճռվողում էին կաչաղակները։

Գրիգորիի ձին խռխռացնում էր ու ծալում ցնցվող ե-

տին ոտները։ Նրա դեղին ատամնաշարը տանջալից կերպով բացված էր, պարանոցը ձգված։ Թավշյա, գորշ ռունգների վրա ճպճպում էր կարմրավուն փրփուրը։ Մարմինը ցնցվում էր ուժեղ դողից։ Շիկակարմրավուն ենթաբրդի տակին ալիքալիք գլորվում էին ջղաձգությունները։

— Շունչը փչե՞ց ձիուկը,— բարձրաձայն հարցրեց վրա հասած մի կազակ։

Գրիգորին առանց պատասխանելու նայում էր ձիու մարող աչքերին։ Նա նույնիսկ չդիտեց վերքը ու միայն մի քիչ ետ քաշվեց, երբ ձին անվստահ մի շարժում կատարեց, վերկացավ ու հանկարծ չոքեց, գլուխը քարշ արեց, ասես տիրոջից ինչ-որ ներումն էր խնդրում։ Խուլ տնքոցով ընկավ կողքի, փորձեց բարձրացնել գլուխը, բայց, ըստ երևույթին, սպառվում էին նրա վերջին ուժերը. դողը հետզհետե դադարում էր, աչքերը մարում էին, պարանոցի վրա գուրս էր տալիս քրտինքը։

Միայն կոճիկներում, հենց սմբակների բաժակների մոտ դեռ թփրտում էին վերջին սաղմնաթելիկները։ Հազիվ երևվում էր թամքի մաշված թևը։

Գրիգորին շեղակի նայեց ձիու ձախ աճուկին, տեսավ բացված, խորունկ վերքը, սև, տաք արյունը, որ աղբյուրի պես բխում էր վերքից, ու կակազելով, չսրբելով արցունքները, ասավ ձիուց իջած կազակին.

— Սպանիր մի գնդակով,— ու իր մաուզերը տվեց նրան։

Նստելով կազակի ձին, սլացավ դեպի այնտեղ, ուր թողել էր իր հարյուրյակները։ Այնտեղ արդեն բռնկվում էր մարտը։

Լուսաբացին կարմիրբանակայինները հարձակման անցան։ Շերտ-շերտ մշուշում ոտքի ելան նրանց շղթաները, լուռ գնացին Վեշենսկու ուղղությամբ։ Աջ թևում, ջրով լցված հովտի մոտ մի բոպե կանգ առան, հետո անցան մինչև կրծքերը ջրի մեջ թաղված, բարձրացնելով փամփշտանոցներն ու հրացանները։ Մի քիչ հետո առափնյա սարից համերաշխ ու վեհերոտ որոտացին չորս մարտկոցները։ Հենց որ արկերը սկսեցին հովհարաձև ընկնել անտառի վրա, ապրստամբները կրակ բացեցին։ Կարմիրբանակայինները արդեն ոչ թե քայլում, այլ վազում էին հրացանները հորիզոնադիր

պահած։ Նրանց առջևում, կես վերստ հեռավորությամբ, անտառով մեկ չոր ճայթում էին շրապնելները. ընկնում արկերից ճեղքված ծառերը, սպիտակ քուլաներով ծուխ էր բարձրանում։ Կազակական երկու գնդացիր կարճ հերթերով կրակ բացեցին։ Առաջին շղթայում սկսեցին ընկնել կարմիրբանակայինները։ Շղթայում այստեղ ու այնտեղ գնդակները ավելի ու ավելի հաճախ էին պոկում կոլոլած շինելներով մարդկանց, գցում երեսի կամ մեջքի վրա, բայց մնացածները չէին պառկում, ու հետզհետե կարճանում էր նրանց անտառից բաժանող տարածությունը։

Երկրորդ շղթայի առջևում, մի փոքր դեպի առաջ կռացած, շինելի փեշերը քշտած, թեթև ու լայն-լայն քայլերով վազում էր բարձրահասակ, գլխաբաց հրամանատարը։ Շղթան մի վայրկյան դանդաղեցրեց ընթացքը, բայց հրամանատարը վազելիս շուռ գալով, ինչ-որ բղավեց, ու մարդիկ վերստին անցան վազքի, վերստին է՛լ ավելի զայրացկոտ որոտաց խուպոտ ու սարսափելի «ուռռան»։

Այդ ժամանակ ճարճատեցին կազակական բոլոր գնդացիրները. անտառի եզրերից սաստիկ, անդադար ճայթում էին հրացանային կրակոցները... Որտեղից-որտեղ, Գրիգորիի ետևից, որ իր հարյուրյակներով գտնվում էր անտառի ծայրում, երկար հերթերով կրակել սկսեց Բազկիի հարյուրյակի հաստոցավոր գնդացիրը։ Շղթաները ընկրկեցին, պառկեցին, սկսեցին պաշտպանվել կրակելով։ Մարտը շարունակվում էր մեկ ու կես ժամ, բայց հրաձգությունը ճշտած ապստամբների կրակը այնպես էր գետնով մեկ լայն փրոված, որ երկրորդ շղթան չդիմացավ, ոտքի ելավ, խառնվեց վազեվազքով մոտեցող երրորդ շղթային... Շուտով մարգագետինը ծածկվեց խառնիճաղանջ ետ փախչող կարմիրբանակայիններով։ Ու այդ ժամանակ Գրիգորին իր հարյուրյակները վարգելով դուրս բերեց անտառից, շարեց նրանց ու նետեց հետապնդելու։ Դեպի լաստերը նահանջողների ճանապարհը փակել էր Ջիրի սրարշավող հարյուրյակը։ Դոնի մերձակա անտառի մոտ, հենց գետափին սկսվեց ձեռնամարտը։ Կարմիրբանակայինների միայն մի մասը հասավ լաստերին։ Նրանք որքան հնարավոր էր տեղավորվեցին լաստերի վրա, հեռացան ափից։ Մնացածները կռվում էին Դոնին հուպ սեղմված։

Գրիգորին ձիերից իջեցրեց իր հարյուրյակները, ձիապահներին հրամայեց դուրս չգալ անտառից, կազակներին տարավ դեպի ափը։ Վազ տալով մի ծառից մյուսը, կազակները հետզհետե մոտենում էին Դոնին։ Հարյուր հիսուն հոգի կարմիրբանակայիններ ձեռնանոնակներով գնդացրային կրակով ետ շպրտեցին վրա տվող ապստամբական հետևազորը։ Լաստերը նորից գնացին դեպի ձախ ափը, սակայն բազկեցիները հրացանային կրակով կոտորեցին համարյա բոլոր թիավարողներին։ Ձախ ափում մնացածների բախտը կանխորոշված էր։ Ոգով թույլ մարդիկ, դեն գցելով հրացանները, փորձում էին լողալով անցնել գետը։ Նրանց գընդակահարում էին գետի խոր տեղի մոտ պառկած ապստամբները։ Շատ կարմիրբանակայիններ չկարողանալով կտրել Դոնի բուռն հոսանքը, խեղդվեցին։ Միայն երկուսը հաջողությամբ անցան. մեկը, որ նավաստիական զոլավոր բաճկոնով էր և ըստ երևույթին ճարտար լողորդ էր, դիք ափից գլխիվայր նետվեց գետը, ջրասույզ եղավ ու ջրից գլուխը հանեց Դոնի համարյա մեջտեղում։

Սաղարթախիտ մի ուռենու տակ թաքնված Գրիգորին տեսնում էր, թե ինչպես նավաստին ճարտար լողալով հասնում էր մյուս ափը։ Գետը հաջողությամբ անցավ նաև մեկ ուրիշը։ Մինչև կուրծքը ջրի մեջ կանգնած, նա կրակեց բոլոր փամփուշտները. ինչ-որ գոռաց, բռունցքը թափ տվեց կազակների կողմը, ու շեղակի լող տվեց։ Նրա շուրջը չըմփում էին գնդակները, բայց դրանցից ոչ մեկը չկպավ այդ երջանիկին։ Այնտեղ, ուր մի ժամանակ անասունների արխաջ էր, նա դուրս եկավ ջրից, թափահարվեց, առանց շտապելու ձորակով բարձրացավ դեպի տները։

Դոնի ափին մնացածները պառկեցին մի ավազաթմբի ետևում։ Նրանց գնդացիրը անդադար թակալում էր այնքան ժամանակ, մինչև որ պատյանի ջուրը եռաց։

— Իմ ետևից,— բարձրաձայն հրամայեց Գրիգորին գընդացրի լռելուց անմիջապես հետո, ու թուրը հանելով պատյանից, աճապարեց դեպի թումբը։

Ծանր շնչով. կազակները գնացին նրա ետևից։

Մինչև կարմիրբանակայինները մնում էր մի հիսուն սաժենից ոչ ավելի։ Ավազաթմբի ետևից տրված երեք համազարկից հետո ամբողջ հասակով մեկ կանգնեց բարձրահասակ թիապետ ու սևաթեղ հրամանատարը։ Նրան թևանցուկ էր արել կաշվե կուրտկա հագած մի կին։ Հրամանատարը վիրավորված էր։ Քարշ տալով ջարդված ոտը, նա իջավ թմբից, ձեռքում շտկեց ծայրին սվին անցկացրած հրացանը, խռպոտ հրամայեց.

— Ընկերներ, դեպի առա՛ջ, ջարդե՛լ սպիտակներին։

Մի բուռ քաջեր «Ինտերնացիոնալ» երգելով՝ նետվեցին հակագրոհի։ Դեպի մահ։

Դոնի ափին վերջինը ընկած հարյուր տասնվեցը բոլորն էլ Ինտերնացիոնալ վաշտի կոմունիստներ էին։

III

Գրիգորին ուշ գիշերով շտաբից եկավ իր բնակարանը։ Բակի դռան մոտ Պրոխորը սպասում էր նրան։

— Ակսինյայի մասին բան չե՞ս լսել,— հարցրեց Գրիգորին՝ ձայնը հնչեցնելով շինծու անտարբերությամբ։

— Չէ՛։ Չգիտես ուր է կորել,— հորանջելով պատասխանեց Պրոխորը ու իսկույն երկյուղով մտածեց՝ «Աստված չանի, սա նորից կստիպի փնտրել նրան... Գրողի տարածները իրենք թետքվում են, իմ գլխին են փորձանք դարձել»։

— Լվացվելու ջուր բեր։ Քրտնքի մեջ կորել եմ։ Դեհ, շո՛ւտ,— արդեն ջղայնացած ասավ Գրիգորին։

Պրոխորը տանից ջուր բերեց, մորշոբայից երկար լցրեց Գրիգորիի շերեփաձև միացրած ձեռների մեջ։ Գրիգորին լվացվում էր մեծ հաճույքով։ Հանեց քրտնքի հոտ արձակող վերնաշապիկը, խնդրեց.

— Լցրու մեջքիս։

Գրիգորին քրտնակալած մեջքը կսկծեցնող պաղ ջրից «օխա՛յ» էր ասում, ֆսֆսում, երկար ու պինդ տրորում փոկերից ճմլված ուսերը և մազոտ կուրծքը։ Սրբվեց մաքուր տապճակով, արդեն զվարթացած ձայնով հրամայեց Պրոխորին.

— Առավոտը ինձ ձի կբերեն, ընդունիր, մաքրիր, գարի գտիր։ Ինձ մի զարթեցնի, մինչև որ ինքս վեր կենամ։ Միայն եթե շտաբից մարդ գա, կզարթեցնես։ Հասկանալի՞ է։

Գնաց մարագի չարդախի տակ պառկելու։ Պառկեց սայլի վրա և իսկույն խոր քուն մտավ։ Արշալույսին մրսում էր, կծկում ոտքերը, ցողով թրջված շինելը քաշում գլխին, իսկ երբ արևը ծագեց, նա կրկին քնեց և ժամը մոտ յոթին արթնացավ թնդանոթային որոտընդոստ կրակոցից։ Ստանիցայի վերևում, ջինջ ու կապույտ երկնքում պտույտ էր գալիս աղոտ փայլ արձակող մի սավառնակ։ Դոնի մյուս կողմից, թնդանոթներից ու գնդացիրներից կրակում էին սավառնակի վրա։

— Կարող են դրան ցած գցել,— ասաց Պրոխորը, որ խոզանակով եռանդալից մաքրում էր ձիակապարանին կապած բարձրամարմին, շեկլիկ մի հովատակ։— Մտիկ արա, Պանտելևիչ, հիանալի ձի են ուղարկել քեզ։

Գրիգորին հարևանցիորեն դիտեց հովատակը, գոհունակությամբ հարցրեց.

— Ջեմ նայել, թե քանի տարեկան է։ Վեց կլինի, չէ՞։

— Է, հը՛մ։

— Էֆ, լավն է։ Ոտները կոկլիկ են ու պինդ։ Սիրունիկ ձի է... Դեհ, թամբիր, գնամ տեսնեմ ով է եկել սավառնակով։

— Լավն է, խոսք չկա։ Տեսնենք ոնց կվազի։ Նշաններից երևում է, որ պետք է շատ կայտառ լինի,— ձգելով փորքաշը, մռթմռթում էր Պրոխորը։

Սավառնակի կողքին շրապնելի պայթյունի դարձյալ մի ծխանման-սպիտակ ամպիկ երևաց։

Վայրէջքի տեղ ընտրելով, օդաչուն սկսեց արագությամբ ցածրանալ։ Գրիգորին դուրս եկավ բակի դռնից, սլացավ ստանիցայի ախոռի կողմը, որի ետևում իջավ սավառնակը։

Ստանիցայի հովատակների ախոռը, երկար, քարաշեն այդ շենքը, որ գտնվում էր ստանիցայի ծայրում, լեփ-լեցուն էր ավելի քան ութ հարյուր գերի կարմիրբանակայիններով։ Պահակները նրանց դուրս չէին թողնում բնական կարիքը հոգալու, շենքում շարժական արտաքնոցներ չկային։ Մարդկային արտաթորությունների ծանր, թունդ գարշահոտությունը պարսպի պես կանգնած էր ախոռի շուրջը։ Դռների տակից հոսում էին մեզի գարշահոտ առվակները. դրանց վրա թռչկոտում էին անթիվ ու անհամար ճանճերը...

Դատապարտվածների այդ բանտից գիշեր-ցերեկ խուլ հառաչանքներ էին լսվում։ Հարյուրավոր գերիներ մեռնում էին հյուծվածությունից ու նրանց մեջ տարածված տիֆից և դեզինտերիայից։ Մեռածներին երբեմն ամբողջ օրերով չէին վերցնում շենքից։

Շրջանցելով ախոռը, Գրիգորին հենց նոր էր ուզում իջնել ձիուց, երբ Դոնի մյուս կողմից խուլ որոտաց թնդանոթը։ Մոտեցող արկի կրճկրճոցը սաստկացավ ու միախառնվեց պայթյունի ծանր դղրդոցին։

Օդաչուն և նրա հետ ժամանած սպան խցիկից դուրս ելան թե չէ, կազակները շրջապատեցին նրանց։ Անմիջապես սարից կրակել սկսեցին մարտկոցի բոլոր թնդանոթները։ Արկերը կանոնավոր կերպով ընկնում էին ախոռի շուրջը։

Օդաչուն արագ մտավ խցիկը, բայց մոտորը չաշխատեց։

— Գլորեցեք ձեռքերով,— հնչեղաձայն հրամայեց կազակներին Դոնի մյուս կողմից ժամանած սպան ու առաջինը հրեց սավառնակի թևից։

Ճոճվելով, սավառնակը հեշտությամբ շարժվեց դեպի սոճիները։ Մարտկոցը արագ կրակով ուղեկցում էր նրան։ Արկերից մեկը ընկավ գերիներով լցված ախոռը։ Թանձր ծխի մեջ, կրաքարի բարձրացած փոշու քուլաներում փլվեց ախոռի մի անկյունը։ Ախոռը դողաց սարսափահար կարմիրբանակայինների կենդանական մռնչոցից։ Առաջացած անցքերից դուրս թռան երեք գերի, վրա հասած կազակները դեմառդեմ գնդակահարեցին նրանց։

Գրիգորին մի կողմ թռավ։

— Կսպանեն, գնացեք սոճու ծմակը,— բղավեց կողքից վազող, սարսափահար դեմքով ու պլշած, սպիտակափայլ աչքերով մի կազակ։

«Իսկապես որ կարող են խփել։ Սատանի բան է, էլի՛,— մտածեց Գրիգորին ու առանց շտապելու գնաց տուն։

Այդ օրը Կուդինովը, առանց Մելեխովին կանչելու, շտաբում խստորեն գաղտնի խորհրդակցություն հրավիրեց։ Դոնի բանակից ժամանած սպան կարճ հաղորդեց, որ Կամենսկայա ստանիցայի մոտ կենտրոնացած հարվածային խմբի զորամասերը մոտիկ օրերից մեկում կճեղքեն կարմիրների ռազմաճակատը, ու Դոնի բանակի հեծյալ դիվիզիան գե-

ներալ Սեկրետևի հրամանատարությամբ կշարժվի ապըստամբներին միանալու։ Սպան առաջարկեց անհապաղ պատրաստել գետանցման միջոցներ, որպեսզի Սեկրետևի դիվիզիային միանալուց հետո ապստամբական հեծյալ գընդերը անմիջապես փոխադրվեն Դոնի աջ կողմը. խորհուրդ տվեց ռեզերվային զորամասերը ավելի մոտեցնել Դոնին, ու խորհրդակցության վերջում, երբ արդեն մշակված էր գետանցման և հետապնդող զորամասերի շարժման պլանը, հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ ձեզ մոտ գերիները գտնվում են Վեշենսկում։

— Ուրիշ տեղ չկա նրանց պահելու, խուտորներում շենքեր չկան,— պատասխանեց շտաբայիններից մեկը։

Սպան թաշկինակով մի լավ սրբեց կոկիկ սափրած, քրտնած գլուխը, արձակեց պաշտպանական գույնի կիտելի օձիքը, շունչ առնելով ասաց.

— Նրանց ուղարկեցեք Կազանսկայա։

Կուդինովը զարմանքից բարձրացրեց հոնքերը։

— Իսկ հետո՞։

— Այնտեղից էլ Վեշենսկայա...— ներողամտությամբ բացատրեց սպան՝ կկոցելով սառն, կապույտ աչքերը։ Ու ավելի պինդ սեղմելով շրթունքները, կոշտ տոնով վերջացրեց խոսքը.— Ես չգիտեմ, պարոններ, թե դուք ինչու եք նրանց հետ մեղմ վարվում։ Հիմա կարծես թե այդպիսի ժամանակ չէ։ Այդ խուժանը, որ թե ֆիզիկական և թե սոցիալական ամեն տեսակ հիվանդությունների բույն է հանդիսանում, պետք է ոչնչացնել։ Կարիք չկա նրանց պահելու։ Եթե ես ձեր տեղը լինեի, հենց այդպես կվարվեի։

Մյուս օրը գերիների առաջին խումբը, որ բաղկացած էր երկու հարյուր հոգուց, տարան ավազուտները։ Բոլորովին հյուծված, կապուտկած ու դալուկ, ոտները հազիվ քարշ տվող կարմիրբանակայինները քայլում էին ինչպես ուրվականներ։ Հեծյալ ուղեկցուրդը խիտ շրջապատել էր անհամաչափ քայլող նրանց բազմությունը... Վեշենսկուց մինչև Դուբրովկա, տասը վերստ ճանապարհին թրատվեց այդ երկու հարյուրը։ Իրիկնադեմին դուրս բերին երկրորդ խումբը։ Ուղեկցուրդին խստորեն հրամայված էր՝ ետ մնացողներին

միայն թրատել, միայն ծայրահեղ դեպքում կրակել։ Հարյուր հիսուն հոգուց տասնութը հասան Կազանսկայա... Նրանցից մեկը, ջահել, գնչուի նման մի կարմիրբանակային, ճանապարհին խելագարվեց։ Ամբողջ ճանապարհին նա երգում էր, պարում ու լաց էր լինում՝ պոկած անուշաբույր ծոթորի փունջը սեղմելով կրծքին։ Նա հաճախ երեսնիվայր ընկնում էր շիկացած ավազի վրա, քամին փոփոացնում էր բյաղե շապկի կեղտոտ ցնցոտիները, ու այդ ժամանակ ուղեկցուրդները տեսնում էին նրա ոսկրոտ, մաշկով պրկված մեջքը, ու տարածված ոտների սև, մաշված ներբանները։ Նրան բարձրացնում էին, ջրամաններից ջուր սրսկում վրան, ու նա բաց էր անում սև, խելագարությունից փայլող աչքերը, կամացուկ ծիծաղում էր և շորորալով քայլում էր կրկին։

Մի խուտորում գթասիրտ կանայք շրջապատեցին ուղեկցուրդներին, ու մի պատկառելի, չաղ պառավ խստորեն ասաց ուղեկցուրդի պետին.

— Ազատ թող այս թուխ տղային։ Նա խելոռել է, մոտեցել է աստծուն, և դուք մեծ մեղք կգործեք, եթե սրան սպանեք։

Ուղեկցուրդի պետը,— կորովի, շիկաբեղ, մի փոխ-խորունժի,— քմծիծաղ տվեց.

— Մենք, տատի, չենք վախենում մի ավելորդ մեղքից։ Մեկ է, մեզանից արդարներ չեն դուրս գա։

— Իսկ դու ազատ թող, մի հակառակի,— համառորեն խնդրում էր պառավը.— Մահը հո ձեզնից ամեն մեկի վրա թևերն է թափ տալի...

Կանայք միահամուռ պաշտպանեցին, ու փոխ-խորունժին համաձայնեց։

— Ես հո չեմ ափսոսում, տարեք դրան։ Հիմի նա վնասակար չէ։ Իսկ մեր բարության համար պետք է ամեն մեկիս մի կճուճ անարատ կաթ բերեք։

Պառավը խելագարին տարավ իր խրճիթը, կերակրեց, օթախում նրա համար անկողին գցեց։ Խելագարը քնեց մի ամբողջ օր ու գիշեր, հետո արթնացավ, կանգնեց մեջքը դեպի պատուհանը, սկսեց մեղմ երգել։ Պառավը մտավ օթախ, նստեց սնդուկի վրա, թուշը դրեց դեպի վեր ծալված ձեռքին, երկար և ուշադիր նայեց տղայի նիհար դեմքին, հետո թավ ձայնով ասաց.

— Լուր կա, որ ձերոնք հեռու չեն...

Խելագարը ինչ-որ մի վայրկյանի չափ լռեց ու Իսկույն էլի երգեց, բայց արդեն ավելի կամաց։

Պառավը խիստ տոնով ասաց.

— Դու, զավակս, երգելուց ձեռ քաշի, սուտ խելառ մի ձևանա ու աչքիս թոզ մի փչի։ Ես երկար եմ ապրել, հիմար չեմ, ինձ չես խաբի։ Խելքդ տեղն է, գիտեմ... Լսում էի, թե քնիդ մեջ ոնց էիր խելոք խոսում։

Կարմիրբանակայինը երգում էր, բայց հետզհետե ավելի կամաց։ Պառավը շարունակեց.

— Դու ինձնից մի վախի, ես քո վատը չեմ ուզում։ Իմ երկու տղաներին սպանեցին գերմանական պատերազմում, փոքր տղես էլ այս պատերազմում մեռավ Չերկասկում։ Ախր նրանց բոլորին էլ ես եմ բերել... Պահել եմ, մեծացրել, ջահել օրերումս գիշերները քուն չեմ ունեցել... Հենց դրա համար էլ խղճում եմ բոլոր ջահել տղաներին, որ ծառայում են զորքերում, կռվում են...— Պառավը մի փոքր լռեց։

Լռեց նաև կարմիրբանակայինը։ Նա փակեց աչքերը, ու հազիվ նկատելի կարմրությունը դուրս տվեց նրա թուխ այտերի վրա, բարակ նիհար պարանոցի վրա լարված խփում էր կապույտ երակը։

Մի րոպեի չափ կանգնած էր նա սպասողական լռություն պահպանելով, ապա բացեց սև աչքերը։ Դրանց նայվածքը իմաստավորված էր ու այնպիսի անհամբեր սպասում էր արտահայտում, որ պառավը հազիվ նկատելի ժպտաց։

— Շումիլինսկու ճամփեն գիտե՞ս։

— Ոչ, տատի,— հազիվ շարժելով շրթունքները, պատասխանեց կարմիրբանակայինը։

— Բա ո՞նց կգնաս։

— Չգիտեմ...

— Հենց այդ է, է՛։ Հիմի ես ի՞նչ անեմ քեզ հետ։— Պառավը երկար սպասում էր պատասխանի, հետո հարցրեց.

— Կարո՞ղ ես ոտով գնալ։

— Մի կերպ կգնամ։

— Հիմի մի կերպ գնալով բան չի դուրս գա։ Պետք է գնալ գիշերով ու քայլել արագ, շա՛տ արագ։ Մի օր էլ մնա, հետո էլ ես քեզ ճամփապաշար կտամ ու թոռնիկիս կղրկեմ

քեզ հետ, որ նա ճամփա ցույց տա, ու— հաջողություն քեզ։ Ձերոնք՝ կարմիրները, Շումիլինսկու մոտ են, հաստատ գիտեմ։ Հենց նրանց մոտ էլ կգնաս։ Պետք է անցնել ոչ թե ճանապարհով, այլ տափաստանով, ձորերով ու անտառներով, ճամփա չեղած տեղերով, թե չէ կազակները կհանդիպեն, ու գլխներիդ փորձանք կգա։ Իմացա՞ր, մատաղ քեզ։

Մյուս օրը, հենց որ մթնեց, պառավը խաչակնքեց ճանապարհվելու պատրաստ իր տասներկու տարեկան թոռնիկին և կազակական կապա հագած կարմիրբանակայինին, խստորեն ասաց.

— Գնացեք, աստված ձեզ հետ։ Տեսեք, հա՛-ա, չհանդիպեք մեր կազակներին... Ոչինչ, աղունիկս, ոչինչ։ Ոչ թե ինձնից շնորհակալ եղիր, այլ ողորմած աստծուց։ Մենակ եմ չեմ, որ այսպես եմ, մենք բոլորս, մայրերս, բարի ենք... Շատ ենք խղճում ձեզ, անիրավներ։ Դե գնացեք, տերը ձեզ պահապան։— Ու շրխկացնելով ծածկեց խրճիթի ծռված, դեղին կավով ներկված դուռը։

IV

Ամեն օր լույսը մի քիչ բացվելուն պես Իլյինիչնան վեր էր կենում, կթում կովը ու սկսում եփել-թափելը։ Տան վառարանը չէր վառում, այլ կրակ էր անում ամառային խոհանոցում, ճաշ էր պատրաստում ու էլի մտնում տուն, երեխաների մոտ։

Նատալյան դանդաղ կազդուրվում էր տիֆից հետո։ Հոգեգալստի երկրորդ օրը նա առաջին անգամ վեր կացավ անկողնից, անցավ սենյակներով՝ դժվարությամբ շարժելով նիհարությունից ոսկրացած ոտները, երկար քթիվ արեց երեխաների գլուխները ու տաբուրետին նստելով, նույնիսկ փորձեց լվալ երեխաների հագուստը։

Ու ամբողջ ժամանակ նրա նիհարած դեմքից չէր հեռանում ժպիտը, փոս ընկած թշերը կարմրին էին տալիս, իսկ հիվանդությունից խիստ խոշորացած աչքերը այնպիսի շողուն, հուզական ջերմություն էին ճառագայթում, որ կարծես թե նա հենց նոր էր երեխա բերել։

— Պոլյուշկա, սիրունիկս, երբ ես հիվանդ էի, Միշատկան հո չէ՞ր լացացնում քեզ,— հարցնում էր նա թույլ ձայնով, ծորուն ու անվստահ արտասանելով յուրաքանչյուր բառը, շոյելով դստեր սևահեր գլուխը։

— Չէ, մամա ջան։ Միշկան մենակ մի անգամ ծեծեց ինձ, թե չէ ես ու նա լավ էինք խաղում,— փսփսալով պատասխանեց աղջիկը ու դեմքը պինդ սեղմեց մոր ծնկներին։

— Իսկ տատիկը խղճո՞ւմ էր ձեզ,— ժպտալով հարցուփորձ էր անում Նատալյան։

— Շատ էր խղճում։

— Իսկ օտար մարդիկ, կարմիր զինվորները ձեզ ձեռ չէի՞ն տալի։

— Նրանք, անիծվածները մորթեցին մեր երինջը,— խուլ պատասխանեց ապշեցուցիչ կերպով հորը նմանվող Միշատկան։

— Հայհոյել չի կարելի, Միշենկա։ Ի-ի՜հ, տանտիրոջս մտիկ։ Մեծերի մասին փիս խոսք չի կարելի ասել,— թաքցնելով ժպիտը՝ խրատեց Նատալյան։

— Տատիկն էր նրանց այդպես կանչում, ուզում ես Պոլյկային հարցրու,— մռայլ արդարանում էր փոքրիկ Մելեխովը։

— Ճիշտ է, մամա՛ ջան, նրանք մեր բոլոր հավերն էլ մորթեցին։

Պոլյուշկան աշխուժացավ. փայլեցնելով սև աչիկները, սկսեց պատմել, թե կարմիրբանակայինները ինչպես էին գալիս Մելեխովների տունը, ինչպես էին բռնում հավերն ու բադերը, ինչպես էր Իլյինիչնա տատիկը խնդրում բուծման համար թողնել մրսած կատարով, դեղին աքլորը և ինչպես մի ուրախ կարմիրբանակային, ձեռքի մեջ թափահարելով աքլորը, պատասխանեց.— «Այս աքլորը, տատի, ծուղրուղու է կանչել սովետական իշխանության դեմ, և մենք դրա համար սրան մահվան պատժի ենք դատապարտել։ Ձուր մի խնդրի, մենք սրանից լապշա կեփենք, իսկ փոխարենը քեզ համար հին թաղյակներ կթողնենք»։

Ու Պոլյուշկան ձեռները տարածելով ցույց տվեց թաղյակների մեծությունը.

— Ա՛յ, այսքան թաղյակներ թողեց։ Մեծ-մեծ, քրքրված։

Նատալյան ծիծաղելով ու լալով փայփայում էր երեխաներին ու զմայլված աչքերը չկտրելով աղջկանից, ուրախ շշնջում էր.

— Ա՛խ դու իմ Գրիգորևնա, իսկական Գրիգորևնա։ Իսկ-ևիսկ, մինչև մազիդ ծերը հորդ ես նման։

— Իսկ ես նմա՞ն եմ,— խանդոտ հարցրեց Միշատկան ու անհամարձակ փարվեց մորը։

— Դու է՛լ ես նման։ Ամա տես, երբ որ մեծանաս, հորդ պես անպիտան չլինես, հա՛-ա...

— Իսկ նա անպիտա՞ն է։ Ինչո՞վ է անպիտան,— հետաքրքրքրվեց Պոլյուշկան։

Տխրությունը ստվերեց Նատալյայի դեմքը։ Նա լռեց ու դժվարությամբ վեր կացավ նստարանից։

Խոսակցությանը ներկա գտնվող Իլյինիչնան դժգոհությամբ շուռ տվեց դեմքը։ Իսկ Նատալյան, արդեն ականջ չդնելով մանկական խոսակցության, պատուհանի մոտ կանգնած, երկար նայում էր Աստախովի տան փակ փեղկերին, հոգոց էր հանում և հուզված տնտղում իր հին, խունացած կոֆտայի բոլորքը...

Մյուս օրը նա արթնացավ լուս ու մութին, կամացուկ վեր կացավ, որ չզարթեցնի երեխաներին, լվացվեց, սնդուկից հանեց մաքուր շրջազգեստ, կոֆտա ու սպիտակ, լայն գլխաշոր։ Նա նկատելի կերպով հուզվում էր ու, դատելով նրանից, թե ինչպես էր հագնվում, ինչպես էր տխուր ու խիստ լռություն պահպանում,— Իլյինիչնան գլխի ընկավ, որ հարսը կգնա այցելելու Գրիշակա պապի գերեզմանը։

— Ո՞ւր ես գնալու,— դիտմամբ հարցրեց Իլյինիչնան, որ համոզվի իր ենթադրությունների ճշտության մեջ։

— Գնամ այցելեմ պապիս գերեզմանը,— առանց գլուխը բարձրացնելու, վախենալով լաց լինելուց, ասաց Նատալյան։

Նա արդեն գիտեր Գրիշակա պապի մահվան մասին, գիտեր, որ Կոշևոյը վառել էր իրենց տուն ու տեղը։

— Թույլ ես, տեղ չես հասնի։

— Հանգիստ առնելով կհասնեմ։ Երեխաներին կերակրեցեք, մայրիկ, թե չէ ես այնտեղ գուցե երկար մնամ։

— Ախր ինչի՞ պիտի երկար մնաս, է՛։ Մեկ էլ տեսար հանդիպեցիր այն սատանաներին, մեղա քեզ աստված։ Մի՛ գնա, էլի՛, Նատալյուշկա։

— Չէ, կգնամ.— Նատալյան կիտեց հոնքերը, ձեռքը տարավ դռան բռնակին։

— Կաց, է, բա սոված ո՞նց պիտի գնաս։ Արի մածուն լցնեմ, տար հետդ։

— Չէ, մայրիկ, շնորհակալ եմ, չեմ ուզում... ետ կգամ, կուտեմ։

Տեսնելով, որ հարսը հաստատ որոշել է գնալ, Իլյինիշնան այսպիսի խորհուրդ տվեց.

— Ավելի լավ է գնաս Դոնից վերև, բոստանների միջով։ Այնտեղ այնքան էլ աչքի չես ընկնի։

Դոնի վրա քողի պես շոքել էր մշուշը։ Արևը դեռ չէր ծագել, բայց արևելքում ծիրանավառ ցոլքով շողշողում էր բարդիներով ծածկված երկնքի մի մասը, ամպի տակից արդեն վաղորդյան պաղ քամի էր փչում։

Անցնելով տապալված, դաղձով խճճված ցախե ցանկապատի վրայից, Նատալյան մտավ իրենց այգին։ Ձեռները կրծքին սեղմելով, կանգ առավ մի թարմ հողաթմբի կողքին։

Այգում խիտ աճել էին եղինջը և քոլախոտը։ Տարածված էր ցողից խոնավացած կոատուկների, խոնավ հողի, մշուշի հոտը։ Հրդեհից հետո չարացած, հին խնձորենու վրա մենակ նստած էր փետուրները ցցած մի սարյակ։ Գերեզմանաթումբը նստել էր։ Տեղ-տեղ, չթարացած կավի կտորների արանքից արդեն դուրս էին եկել խոտաբույսերի ծիլերը։

Վրա հասած հուշերից ցնցվելով, Նատալյան լուռ ծունկ չոքեց, երեսը հպեց անսիրալիր, հավերժորեն մահվան նեխածություն բուրող հողին...

Մի ժամից հետո նա գաղտագողի դուրս եկավ այգուց, ցավից կծկված սրտով վերջին անգամ նայեց այն վայրին, ուր մի ժամանակ ծաղկել էր իր ջահելությունը,— ամայի բակը մռայլ կերպով սևին էր տալիս մարագների ածխացած գերաններով, վառարանների ու տան հիմքի վառված փլատակներով,— ու կամացուկ գնաց փողոցով։

Նատալյան օրեցօր ավելի ու ավելի էր կաղդուրվում։ Ամրապնդվում էին ոտքերը, կլորանում ուսերը, մարմինը լցվում էր առողջ պարարտությամբ։ Շուտով սկսեց կեսուրին օգնել եփել-թափելու գործում։ Վառարանի մոտ զբաղվելով, նրանք երկար խոսակցում էին։

Մի առավոտ Նատալյան ջղայնությամբ ասաց.

— Ախր սա ե՞րբ պիտի վերջանա։ Էլ սիրտ չմնաց։

— Ա՛յ, կտեսնես, մերոնք շուտով Դոնից դեսը կանցնեն,— վստահորեն արձագանքեց Իլյինիշնան։

— Իսկ դուք ո՞րտեղից գիտեք, մայրիկ։

— Սիրտս է ասում։

— Մենակ թե մեր կազակները սաղ մնան։ Աստված չանի սպանեն կամ վիրավորեն մեկնումեկին։ Ախր Գրիշան գլխից անցածի մեկն է,— հառաչեց Նատալյան։

— Բան չի պատահի նրանց, աստված ողորմած է։ Մեր ալևորը խոսք էր տվել էլի անցնել դեսը, տեսնել մեզ, ամա երևի վախում է։ Թե որ գար, դու էլ նրա հետ կգնայիր, փորձանքից հեռու կլինեիր։ Մեր խուտորցիները խուտորի դիմաց են դիրք բռնել, պաշտպանվում են։ Այն օրը, երբ դու դեռ պառկած էիր ուշաթափ, առավոտ ծեգին ես գնացի Դոն, ջուր վերցրի ու լսում եմ՝ Դոնի մյուս կողմից Անիկուշկան բղավում է՝ «Բարև, տատի, ալևորդ բարև է անում»։

— Բա Գրիշան ո՞րտեղ է,— զգուշությամբ հարցրեց Նատալյան։

— Նա բոլորի վրա հրամանատարություն է անում հեռվից,— միամիտ պատասխանեց Իլյինիշնան։

— Ո՞րտեղից է հրաման տալի։

— Երևի Վեշկիից։ Էլ ո՞րտեղից։

Նատալյան երկար լռեց։ Իլյինիշնան նայեց նրա կողմը, վախեցած հարցրեց.

— Ի՞նչ եղավ քեզ։ Ինչի՞ ես լալիս։

Նատալյան առանց պատասխանելու կեղտոտ գոգնոցը սեղմում էր դեմքին, կամացուկ հեկեկում էր։

— Մի լար, Նատալյուշկա։ Արտասուքից բան չի դուրս գա։ Աստված կտա, նրանց ողջ-առողջ կտեսնենք։ Դու քեզ զգույշ պահի, զուր տեղը տնից դուրս մի գնա, թե չէ կտեսնեն այդ նեռերը, աչք կդնեն...

Խոհանոցը մի քիչ մթնեց։ Դրսից մեկի կերպարանքը ծածկեց պատուհանը։ Իլյինիչնան շուռ եկավ դեպի պատուհանը և հառաչեց.

— Նրա՛նք են, կարմիրները։ Նատալյուշկա, շուտ պառկիր մահճակալի վրա, ցույց տուր, որ միթամ հիվանդ ես... Չլինի՛ թե փորձանք պատահի... Հրես, կարպետը քաշի վրեդ։

Նատալյան հենց նոր էր վախից դողալով ընկել մահճակալին, երբ դուռը ճռնչալով բացվեց, ու կռանալով, խոհանոց մտավ բարձրահասակ մի կարմիրբանակային։ Երեխաները կպան սփրթնած Իլյինիչնայի փեշին։ Վերջինս ինչպես որ կանգնած էր վառարանի կողքին, այնպես էլ ընկավ նստարանին՝ շուռ տալով եփած կաթով լիքը կճուճը։

Կարմիրբանակայինը արագ դիտեց խոհանոցը, բարձր ասաց.

— Մի՛ վախենաք։ Հո չե՛մ ուտի։ Բարև ձեզ։

Նատալյան կեղծ տնքալով, կարպետը քաշեց գլխին, իսկ Միշատկան աչքի տակով նայեց հյուրին և ուրախացած հայտնեց.

— Տատի, այ, հենց սա էր, որ մորթեց մեր աքլորը։ Հիշո՞ւմ ես։

Կարմիրբանակայինը հանեց պաշտպանական գույնի գլխարկը, շրթացրեց լեզուն, ժպտաց.

— Ճանաչեցիր, էլի, գոնչո՛։ Ոնց էլ միտդ ես պահել այդ աքլորը։ Սակայն, տանտիրուհի, ահա թե ինչ. չե՞ս կարող մեզ համար հաց թխել։ Մենք ալյուր ունենք։

— Կարելի է... Ի՞նչ կա որ... Կթխեմ...— արագ վրա բերեց Իլյինիչնան առանց հյուրին նայելու, նստարանից սրբելով թափված կաթը։

Կարմիրբանակայինը նստեց դռան մոտ, գրպանից հանեց ծխախոտի տոպրակը և պապիրոս փաթաթելով, խոսակցություն սկսեց.

— Մինչև իրիկուն կթխե՞ս։

— Կարելի է և մինչև իրիկուն, եթե դուք շտապում եք։

— Պատերազմի ժամանակ միշտ էլ շտապում են, տատի։ Իսկ աքլորի համար դուք մի՛ վիրավորվեք։

— Չէ, չէ՛,— վախեցավ Իլյինիչնան,— երեխի հիմարությանը մի նայի... Միտն է բերում ինչ որ հարկավոր չի։

— Ա՛մա թե ժլատ ես, այ տղա...— բարեսրտությամբ ժպտաց զրուցասեր հյուրը՝ դիմելով Միշատկային.— Հը՛, ի՞նչ ես գիլի ձագի պես նայում։ Եկ այստեղ, անուշ-անուշ խոսենք քո աքլորի մասին։

— Գնա մոտեցիր, մանչուկս,— շշնջալով խնդրեց Իլյինիչնան՝ ծնկով բոթելով թոռնիկին։

Բայց վերջինս կտրվեց տատիկի փեշից և փորձեց դուրս ծլկել խոհանոցից՝ կողքի քայլելով դեպի դուռը։ Կարմիրբանակայինը իր երկար ձեռքով նրան քաշեց իր մոտ, հարցրեց.

— Բարկանո՞ւմ ես, հա՞։

— Չէ՛,— շշնջալով պատասխանեց Միշատկան։

— Էհ, լավ է։ Աքլորը հո բախտավորություն չի։ Հայրդ ո՞րտեղ է։ Դոնի մյուս կողմո՞ւմ։

— Դոնից դենն է։

— Ուրեմն կռվո՞ւմ է մեր դեմ։

Փաղաքուշ վերաբերմունքից խրախուսված Միշատկան սիրով հաղորդեց.

— Նա բոլոր կազակների հրամանատարն է։

— Է-է՛, սուտ ես ասում, փոքրիկ։

— Ուզում ես տատիկիս հարցրու։

Տատիկը միայն իրար զարկեց ձեռները և ախ ու վախ արեց՝ վերջնականապես հուսալքվելով թոռնիկի շատախոսությունից։

— Բոլորի հրամանատա՞րն է,— հարցրեց շվարած կարմիրբանակայինը։

— Կարելի է բոլորինը չէ...— արդեն անվստահ պատասխանեց Միշատկան՝ մոլորվելով տատի հուսահատական հայացքներից։

Կարմիրբանակայինը մի փոքր լռեց, հետո շեղակի նայելով Նատալյային, հարցրեց.

— Հարսդ հիվա՞նդ է, հա՞։

— Տիֆով,— դժկամ պատասխանեց Իլյինիչնան։

Երկու կարմիրբանակային ներս բերին մի պարկ ալյուր, դրեցին շեմքի մոտ։

— Վառիր վառարանը, տանտիրուհի,— ասաց նրանցից մեկը։— Իրիկունը կգանք հացը տանելու։ Տե՛ս, լավ կթխես, հա, թե չէ քո բան վատ կլինի։

— Ոնց որ գիտեմ, այնպես էլ կթխեմ,— պատասխանեց Իլյինիչնան, անսահման ուրախանալով, որ նոր եկածները խանգարեցին վտանգավոր խոսակցությունը և Միշատկան էլ խոհանոցից դուրս փախավ։

Մեկը գլխի շարժմամբ ցույց տալով Նատալյային, հարցրեց.

— Տիֆո՞վ է հիվանդ։

— Այո։

Կարմիրբանակայինները խոսեցին ցածր ձայնով, դուրս գնացին խոհանոցից։ Նրանցից վերջինը դեռ չէր անցել տան անկյունից, երբ Դոնի մյուս կողմից ճայթեցին հրացանային կրակոցները։

Կարմիրբանակայինները կուզեկուզ, վազելով մոտեցան կիսավեր, քարաշեն մի ցանկապատի, պառկեցին դրա տակին ու, միահամուռ կերպով շրխկացնելով փակաղակները, նույնպես կրակել սկսեցին։

Սարսափահար Իլյինիչնան նետվեց բակը՝ Միշատկային փնտրելու։ Ցանկապատի ետևից նրան ձայն տվին։

— Է՛յ, տատի, գնա տուն, կսպանեն։

— Մեր տղան բակումն է։ Մի՛շենկա, բալիկս,— լացակումած կանչում էր պառավը։

Նա հասավ բակի մեջտեղը, և իսկույն դադարեցին Դոնի մյուս կողմից լսվող կրակոցները։ Ակներև էր, որ մյուս ափում գտնվող կազակները տեսել էին նրան։ Հենց որ նա գրկեց վազեվազ մոտեցած Միշատկային ու նրա հետ մտավ խոհանոց, հրաձգությունը վերսկսեց ու այնքան շարունակվեց, մինչև որ կարմիրբանակայինները հեռացան Մելեխովների տանից։

Իլյինիչնան ցածրաձայն խոսելով Նատալյայի հետ, խմոր հունցեց, բայց հաց թխելը նույնպես գլուխ չեկավ։

Խուտորում գտնվող գնդացրային ուղեկալների կարմիրբանակայինները հանկարծ շտապ հեռացան տներից, խորխորատներով բարձրացան սարը՝ քարշ տալով գնդացիրները։

Մի վաշտ, որ գրավել էր սարի վրա եղած խրամատները, շարք կանգնեց, արագաքայլ գնաց դեպի Հետմանական ճանապարհը։

Վեհապանծ լռությունը միանգամից փռվեց Դոնի ամբողջ շրջակայքի վրա։ Լռեցին հրանոթներն ու գնդացիրները։ Ճանապարհներով, ամառային բուսակալած շավիղներով, խուտորներից դեպի Հետմանական ճանապարհը ձգվեցին բազմաքանակ գումակները, մարտկոցները, շարասյուներով գնաց հետևազորն ու հեծելազորը։

Իլյինիչնան պատուհանից տեսնելով, թե ինչպես կարմիրբանակայինները կավճոտ հրվանդաններով մագլցում են սարնիվեր, ձեռները սրբեց գոգնոցով, զգացված խաչակնքեց.

— Աստված հաջողեց, Նատալյուշկա, կարմիրները հեռանում են։

— Ախ, մայրիկ, նրանք խուտորից գնում են սարը, խրամատները, իսկ իրիկունը էլի կգան։

— Բա ինչի՞ են վազեվազ գնում։ Մերոնք վախեցրել են դրանց։ Նահանջում են անիծվածները, փախչում են նեռը...— հրճվում էր Իլյինիչնան, բայց էլի սկսեց խառնել խմորը։

Նատալյան հաշտից դուրս ելավ, կանգնեց շեմքի մոտ ու ձեռքը դնելով աչքերից վերև, երկար նայում էր արևի լույսով ողողված կավճասարին, արևից խանձված, թուխ լեռնաճյուղերին։

Նախափոթորկային վեհասքանչ անդորրում լեռան ետևից բարձրանում էին սպիտակ, քուլա-քուլա ամպերի կատարները։ Կեսօրվա արևը թունդ կիզում էր գետինքը։ Արոտավայրում ճստճստում էին գետնասկյուռները և նրանց կամացուկ, տխրաբեկ ճստճստոցը միախառնվում էր արտույտների կենսուրախ երգեցողության հետ։ Նատալյայի սրտին այնքան հաճելի էր թնդանոթային որոտմունքից հետո տիրող անդորրությունը, որ նա առանց շարժվելու, ագահությամբ ունկնդրում էր և՛ արտույտների անպաճույճ երգին, և՛ ջրհորի կռունկի ճռճռոցին և օշինդրային դառը բույրով հագեցած քամու շրշյունին։

Դառն ու բուրալի էր դա, այդ թևավոր, տափաստանային, արևելյան քամին։ Նա տարածում էր թեժացած սահո-

գի ջերմությունը, արևի տակ թեքված բոլոր խոտաբույսերի արբեցուցիչ բույրը, բայց արդեն զգացվում էր մոտալուտ անձրևը. Դոնից փչում էր անալի խոնավությունը, ծիծեռնակները ճեղքում էին օդը՝ թևերի երկակի սայրերը համարյա դիպցնելով գետնին, ու հեռո՜ւ-հեռվում, կապույտ երկնակամարի տակ, փախչելով վրա հասնող փոթորկից, ճախրում էր տափաստանային ուրուրը։

Նատալյան անցավ բակով։ Քարե ցանկապատի մոտ, ճմռթված խոտաբույսերի վրա թափված էին հրացանային պարկուճների ոսկեվուն կույտերը։ Տան ապակիների ու սպիտակացրած պատերի մեջ գնդակների բացած ծակեր էին երևում։ Անվնաս մնացած հավերից մեկը, տեսնելով Նատալյային, կչկչալով թռավ ամբարի կտուրի վրա։

Խուտորում երկար չտևեց փաղաքուշ լռությունը։ Փչեց քամին, սկսեցին շրխկալ լքած տների բաց փեղկերը և դռները։ Ջյան պես սպիտակ, կարկտաբեր ամպը տիրաբար ծածկեց արևը ու սահեց դեպի արևմուտք։

Նատալյան քամուց ցատկոտող մազերը բռնած, մոտեցավ ամառային խոհանոցին, այնտեղից դարձյալ նայեց սարին։ Հորիզոնում, փոշու յասամանագույն մշուշով պարուրված, արագ գնում էին երկանիվ փամփշտասայլակները, սլանում էին միայնակ ձիավորները։ «Ուրեմն ճիշտ է, հեռանում են»,— թեթևացած եզրակացրեց Նատալյան։

Նա դեռ չէր մտել հաշտը, երբ հեռո՜ւ-հեռվում, սարի ետևում որոտընդոստ ու խուլ թնդացին հրանոթային կրակոցները, ու կարծես դրանց արձագանքելով, Դոնի վրայով սահեց Վեշենսկու երկու եկեղեցիների զանգերի ուրախ զողանջը։

Դոնի մյուս կողմում կազակները հոծ խմբերով դուրս թափվեցին անտառից։ Նրանք քարշ էին տալիս կամ ձեռների վրա դեպի Դոն նավակներ էին բերում, իջեցնում ջրի վրա։ Թիավարները նավակների ետին կողմում կանգնած, բանեցնում էին թիակները։ Երեք տասնյակ նավակներ, իրար առաջ կտրելով, շտապում էին դեպի խուտոր։

— Նատա՜լյուշկա, հարազատս, մերոնք գալիս են...— հոնգուր-հոնգուր լալով, ասավ խոհանոցից դուրս թռած Իլյինիչնան։

Նատալյան գրկեց Միշատկային, բարձրացրեց իրենից էլ վեր։ Նրա աչքերը վառ փայլեցին, իսկ ձայնը կերկերաց, երբ նա շնչասպառ ասաց.

— Մտիկ արա, բալիկս, մտիկ արա, աչքերդ սուր են... Կարելի է հերդ էլ կազակների հետ է... Չե՞ս ճանաչում։ Այդ հո նա չի՞ գալիս առջևի նավակով, հը՞։ Ախ, դու ուրիշ կողմ ես մտիկ տալի...

Նավամատույցում հանդիպեցին միայն լղարած Պանտելեյ Պրակոֆևիչին։ Ներոնին ամենից առաջ տեղեկացավ, թե արդյոք անվնա՞ս են եղները, գույքը, հացը ու, գրկելով թոռներին, լաց եղավ։ Իսկ երբ շտապ-շտապ, կաղալով մտավ հայրենի բակը, գունաթափ եղավ, ծունկ չոքեց, լայն խաչակնքեց ու, երկրպագելով դեպի արևելք, երկար ժամանակ իր ալեզարդ գլուխը չէր բարձրացնում տաք, արևակեզ գետնից։

V

Գեներալ Սեկրետևի հրամանատարությամբ Դոնի բանակի երեք հազարանոց հեծյալ մի զորախումբ վեց հեծելազորային հրանոթով և տասնութ բեռնովի գնդացրով հունիսի 10-ին ջախջախիչ հարվածով ճեղքեց ռազմաճակատը Ուստ-Բելոկալիտվենսկայա ստանիցայի մերձակայքում, երկաթուղագծի երկայնքով շարժվեց Կազանսկայա ստանիցայի ուղղությամբ։

Երրորդ օրվա վաղ առավոտյան Դոնի 9-րդ գնդի սպայական հեծյալ պարեկը Դոնի մոտ հանդիպեց ապստամբների դաշտային պահակախմբին։ Տեսնելով հեծյալ ջոկատը, կազակները նետվեցին դեպի ձորակները, բայց պարեկի հրամանատար կազակական յասավուլը հագուստից ճանաչեց ապստամբներին, թափահարեց թրին կապած թաշկինակը և հնչեց ձայնով աղաղակեց.

— Մերոնցից ենք... Մի՛ փախչեք, կազակներ...

Պարեկը անհերկյուղ մոտեցավ ձորակի մի ճյուղին։ Ապստամբական պահակախմբի պետը,— ծերունի, ալեհեր մի վախմիստր,— քայլելիս կոճկելով ցողոտված շինելը, դուրս եկավ ընդառաջ։ Ութ սպաները իջան ձիերից, ու յասա-

վուլը մոտենալով վախմիստրին, հանեց պաշտպանական գույնի գլխարկը. որի բոլորքի վրա վառ սպիտակին էր տալիս սպայական գլխարկանիշը, ու ժպտալով ասաց.

— Էհ, բարև ձեզ, կազակներ։ Հապա, համբուրվենք կազակական հին սովորությամբ։— Խաչաձև համբուրեց վախմիստրին, թաշկինակով սրբեց շրթունքներն ու բեղերը և, իր վրա զգալով իր ուղեկիցների սպասողական հայացքները, բազմանշանակալից քմծիծաղով բառերը շեշտելով, հարցրեց.

— Հը, ո՞նց է, ուշքի՞ եկաք։ Ձերոնք բոլշևիկներից լա՞վ են, չէ՞։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծննդություն։ Մեղքերս քավեցինք... Երեք ամիս կռվում էինք, չէինք սպասում, որ դուք կգաք։

— Լավ է, որ թեկուզ ուշ, բայց խելքի եկաք։ Անցած բան է, իսկ ով հինը հիշի, նրա աչքը պետք է հանել։ Ո՞ր ստանիցայից եք։

— Կազանսկուց, ձերդ բարեծննդություն։

— Ձեր զորամասը Դոնի մյուս կո՞ղմն է։

— Ճիշտ այդպես։

— Կարմիրները Դոնից ո՞ւր գնացին։

— Դոնով դեպի վեր, երևի Դոնեցի ավանի կողմը։

— Ձեր հեծելազորը դեռ չի՞ անցել Դոնը։

— Ամենևին ոչ։

— Ինչո՞ւ։

— Չեմ կարող գիտենալ, ձերդ բարեծննդություն։ Մեզ առաջինը ուղարկեցին այս կողմը։

— Կարմիրները այստեղ հրետանի ունե՞ին։

— Երկու մարտկոց կար։

— Ե՞րբ հեռացան։

— Երեկ իրիկունը։

— Պետք էր հետապնդե՛լ։ Է--է--է՜, բացքերաններ,— կշտամբանքով ասաց յասավուլը ու, մոտենալով ձիուն, դաշտային պայուսակից հանեց բլոկնոտը և քարտեզը։

Վախմիստրը կանգնել էր ձիգ, ձեռները իջեցրած։ Նրա ետևում երկու քայլ հեռավորությամբ խմբվել էին կազակները, ուրախության ու անգիտակցական անհանգստության

խառն զգացումով դիտում էին սպաներին, ցեղային, բայց երթերից հյուծված ձիերի թամքերը։

Սպաները, որոնք քիպ նստած, անգլիական ուսադիրներով ֆրենչներ և հեծելազորային լայն շալվարներ էին հագել, ճմլկոտում էին ոտները, քայլում ձիերի կողքին, աչքերի տակով նայում կազակներին։ Նրանցից ոչ մեկի վրա արդեն չկային այնպիսի ինքնագործ ուսադիրներ, ինչպես 1918 թվականի աշնանը,— քիմիական մատիտով նկարված ուսադիրներ։ Ոտնամանները, թամքերը, փամփուշտանոցները, հեռադիտակները, թամքերին կապված կարճ հրացանները,— այս ամենը նոր էր և ռուսական չէր։ Տեսքով ամենատարեց սպան միայն կապույտ, բարակ մահուդե չերքեզկայով էր, բուխարական ոսկեփայլ կարակուլի փափախով և լեռնական, անկրունկ սապոգներով։ Փափուկ քայլելով, նա առաջինը մոտեցավ կազակներին, գծագրոցից բելգիական Ալբերտ թագավորի դիմանկարով, շքեղ տուփով ծխախոտ հանեց, առաջարկեց.

— Ծխեցեք, եղբայրներ։

Կազակներն ագահությամբ ձեռները տարան ծխախոտներին։ Մոտեցան նաև մյուս սպաները։

— Ինչպես էիք ապրում բոլշևիկների հետ,— հարցրեց մեծագլուխ և լայնաթիկունք մի խորունժի։

— Շատ վատ...— զուսպ պատասխանեց հին կապա հագած մի կազակ՝ ագահությամբ ներս քաշելով ծխախոտի ծուխը, աչքը չկտրելով խորունժիի բարձր, մինչև ծնկները քաշած գետրիներից, որոնք քիպ նստել էին նրա հաստ սրունքներին։

Կազակի ոտների վրա հազիվ էին պահվում քրքրված, կարկատված քոշերը։ Պատռված էին սպիտակ, մի քանի անգամ կարկատված բրդե գուլպաները, որոնց մեջ դրված էին շալվարի ծայրերը. հենց դրա համար էլ կազակը զմայլված հայացքը չէր կտրում անգլիական կոշիկներից, որոնք նրան շլացնում էին չմաշվող ներբանների հաստությամբ, պայծառ փայլող պղնձե կափուրիկներով։ Նա չհամբերեց ու միամտաբար արտահայտեց իր հիացմունքը.

— Ի՜նչ լավն են ձեր ոտնամանները։

Բայց խորունժին բոլորովին էլ հակամետ չէր հաշտ խոսակցության։ Նենգ ու զայրացուցիչ տոնով նա ասաց։

— Դուք ուզեցիք արտասահմանյան հանդերձանքը փոխարինել մոսկովյան տրեխներով, ուրեմն հիմա կարիք չկա աչք տնկել ուրիշի ունեցածի վրա։

— Սխալություն եղավ։ Մեղավորցանք...— շփոթված պատասխանեց կազակը՝ նայելով յուրայիններին, փնտրելով պաշտպանություն նրանց կողմից։

Խորունժին շարունակեց իր կոպիտ կոթոցը.

— Ձեր խելքը եզան խելք դուրս եկավ։ Եզը հո միշտ էլ այդպես է. սկզբում քայլում է, հետո կանգնում, մտածում։ Սխալությո՞ւն եղավ։ Իսկ աշնանը, երբ ռազմաճակատը բաց արիք, ինչի՞ մասին էիք մտածում։ Ուզում էիք կոմիսարնե՞ր լինել։ Հայրենիքի պաշտպանների՞ս մտիկ...

Մի երիտասարդ հարյուրապետ փսփսաց չափն անցկացրած խորունժու ականջին. «Թո՛ղ, էլի, բավական է»,— ու վերջինը ոտներով տրորեց ծխախոտը, թքեց, շորորալով քայլեց դեպի ձիերը։

Ցասավուլը նրան մի երկտող հանձնեց, ցածրաձայն ինչ-որ բան ասաց։

Ծանրաշարժ խորունժին անսպասելի թեթևությամբ թռավ ձիու վրա, կտրուկ դարձրեց նրան ու սլացավ դեպի արևմուտք։

Կազակները շփոթված լռում էին։ Վրա հասած յասավուլը իր հնչեղ բարիտոնի ցածր նոտաներ վերցնելով, ուրախ հարցրեց.

— Այստեղից մինչև Վարվարինսկի խուտորը քանի՞ վեստ է։

— Երեսունհինգ,— միաժամանակ պատասխանեցին մի քանի կազակներ։

— Լա՛վ։ Ա՛յ թե ինչ, հայրենակիցներ, գնացեք և հաղորդեցեք ձեր պետերին, որ հեծյալ զորամասերը առանց մի բոպե հապաղելու անցնեն Դոնի այս կողմը։ Ձեզ հետ մինչև անցման վայրը կգա մեր սպան, նա կառաջնորդի հեծելազորը։ Իսկ հետևազորը թող երթակարգով գնա Կազանսկայա։ Հասկանալի՞ է։ Դեհ, ինչպես ասում են, ձախ-ե՛տ դարձ ու ատոծով, քայլով մա՛րշ։

Կազակները խոնված իջան բլուրից։ Մի հարյուր սաժեն քայլում էին ու լռում ասես պայմանավորված, հետո էլ անբարետես, կապա հագած կազակը, հենց նա, որին կոթում էր եռանդուն խորունժին, օրորեց գլուխը ու դառը հոգոց հանեց։

— Ահա և միացանք, տղերք...

Մեկ ուրիշը իսկույն վրա բերեց.

— Բողկը շաղգամից հո համով չի՛։— Ու յուղալի հայհոյանք թափեց։

VI

Հենց որ Վեշենսկայայում լուր ստացվեց կարմիր զորամասերի շտապ նահանջի մասին, Գրիգորի Մելեխովը երկու հեծյալ գնդով իսկույնևեթ անցավ Դոնը, ուժեղ պարեկներ ուղարկեց դեպի առաջ ու շարժվեց հարավային ուղղությամբ։

Դոնի մերձակա մի բլուրի ետևում կռիվ էր տեղի ունենում։ Խուլ, ասես գետնի տակից որոտում էին միախառնված հրանոթային կրակոցները։

— Երևում է, որ կադետները արկեր չեն խնայում, արագ կրակ են թափում,— ձիով մոտենալով Գրիգորիին, հիացմունքով ասաց հրամանատարներից մեկը։

Գրիգորին լուռ էր։ Նա ձիով գնում էր զորասյան առջևից՝ ուշադրությամբ նայելով բոլոր կողմերը։ Դոնից մինչև Բազկի խուտորը երեք վերստ տարածությամբ ընկած էին ապստամբների թողած հազարավոր բրիչկաներն ու արաբաները։ Անտառով մեկ ամենուրեք թափված էր այլևայլ գույք, — ջարդված սնդուկներ, աթոռներ, հագուստ, լծասարք, ամանեղեն, կարի մեքենաներ, հացահատիկով լեցուն պարկեր, այն ամենը, ինչ-որ տնտեսական մեծ ագահության հետևանքով վերցված ու բերված էր դեպի Դոն նահանջելու ժամանակ։ Տեղ-տեղ ճանապարհի վրա ծնկաչափ խորությամբ ոսկեվուն ցորեն էր թափված։ Ու հենց այդտեղ ընկած էին եզների ու ձիերի ուռած, նեխածությունից այլանդակված, գարշահոտ դիակները։

— Ա՛յ քեզ տնարարություն,— բացականչեց հուզված Գրիգորին ու, հանելով գլխարկը, աշխատելով չշնչել, զգու-

շությամբ շրջանցեց երկար մնացած հացահատիկի կույտը, որի վրա փռվել էր մեռած մի ծերունի՝ կազակական գլխարկով ու արյունոտ կապայով։

— Քավթառը պահպանել է իր բարիքը։ Սատանաներն են նրան ստիպել այստեղ մնալ,— ափսոսանքով ասաց կազակներից մեկը։

— Մարդը չի ուզեցել ցորենը թողնել...

— Հապա, սլանա՛լ վարգով. թյո՛ւ, դրանից գեշ հոտ է գալիս։ է՛յ, թռեք...— վրդովված գոռացին ետին շարքերից։

Հարյուրյակը անցավ վարգի։ Խոսակցությունները դադարեցին։ Անտառով մեկ ներդաշնակ հնչում էին բազմաթիվ ձիերի սմբակների դոփյունը և կազակական հարմար նստած հանդերձանքի զրնգոցը։

...Մարտը տեղի էր ունենում Լիստնիցկու կալվածքի մերձակայքում։ Յագոդնոյից մի կողմ, չոր հովտով հոծ խմբերով փախչում էին կարմիրբանակայինները։ Նրանց գլխավերևում պայթում էր շրապնելը, ետևից խփում էին գնդացիրները, իսկ բլուրի վրայով, կտրելով նահանջի ճանապարհը, հոսում էին կալմիկական գնդի ցրիվ շարքերը։

Գրիգորին մոտեցավ իր գնդերով, երբ մարտն արդեն վերջացել էր։ 3-րդ կալմիկական գունդը ջարդեց և ամբողջովին ոչնչացրեց կարմիրբանակային երկու վաշտ, որոնք պաշտպանում էին 14-րդ Միրոնովյան դիվիզիայի ցրիվ եկած զորամասերի և գումակների նահանջը Վեշենսկու լեռնանցքով։ Դեռ բլուրի վրա Գրիգորին հրամանատարությունը հանձնեց Երմակովին, ասաց.

— Այստեղ առանց մեզ վերջացրին գործը։ Գնա միացիր նրանց, իսկ ես մի րոպե վաղ կտամ կալվածատուն։

— Ինչի՞ համար,— զարմացավ Երմակովը։

— Դե, ոնց ասեմ քեզ, ջահել ժամանակս այստեղ մշակ էի, հիմի ուզում եմ տեսնել հին վայրերը...

Կանչելով Պրոխորին, Գրիգորին շուռ եկավ Յագոդնոյի կողմը, ու երբ կես վերստ հեռացավ, տեսավ, թե ինչպես առջևի հարյուրյակի վրա բարձրացավ ու քամուց ծածանվեց սպիտակ մի պաստառ, որ նախազգուշաբար իր հետ վերցրել էր կազակներից մեկը։

«Կարծես թե գերի են հանձնվում»,— անհանգստությամբ

ու անգիտակցական թախիծով մտածեց Գրիգորին, նայելով, թե ինչպես զորասյունը դանդաղ, ասես դժկամ իջնում է չոր հովիտը, իսկ կանաչ դաշտի միջով, վարգով նրան ընդառաջ են գալիս Սեկրետևի մի խումբ հեծյալները։

Գրիգորին տապալված դարպասի վրայով մտավ կալվածքի բակը, որ ծածկված էր թայլով և որտեղ տխրություն և ամայություն էր տիրում։ Յագոդնոյեն անճանաչելի էր դարձել։ Ամենուրեք երևում էին անտնտեսվարության և ավերածության սարսափելի հետքերը։ Մի ժամանակ շքեղ տունը խունացել էր և կարծես ցածրացել։ Վաղուց ի վեր չներկված կտուրը դեղնին էր տալիս բծաշատ ժանգով, մուտքի սանդուղքի մոտ ընկած էին կոտրված ջրորդանները, ծուռ կախվել էին օղակներից հանված խեղկերը, քամին սուլելով ներխուժում էր ջարդված լուսամուտներից, իսկ ներսից գալիս էր ամայի, անբնակ տան դառն, բորբոսային նեխահոտը։

Տան արևելյան անկյունը և մուտքի սանդուղքը քանդված էին երեք դյույմանոց հրանոթի արկով։ Արկի տապալած թխկիի կատարը ներս էր ընկել միջանցքի վենետիկյան ջարդված լուսամուտից։ Թխկին այդպես էլ ընկել ու մնացել էր, բունը խրվել պատի հիմքից դուրս թափված աղյուսակույտի մեջ։ Նրա թառամած ոստերի վրայով արդեն բարձրացել, փրչոտվել էր արագ աճող վայրի գայլուկը, քմահաճորեն ցանցել պատուհանի անվնաս մնացած ապակիները, երկարել դեպի քիվը։

Ժամանակն ու վատ եղանակն իրենց գործն էին անում։ Բակի շենքերը խարխլվել էին ու այնպիսի տեսք ունեին, որ կարծես երկար տարիներ մարդկային հոգատար ձեռքերը նրանց չէին կպել։ Գարնանային անձրևներից դուրս էր ընկել ախոռի քարե պատը, փոթորիկը քանդել էր կառեթանոցի կտուրը, և հազիվ սպիտակին տվող ծպեղների ու մարդակների վրա միայն տեղ-տեղ մնում էին կիսափտած ծղոտի ծվենները։

Ծառայանոցի մուտքում պառկել էին անտեր մնացած երեք շուն։ Տեսնելով մարդկանց, նրանք վեր թռան ու խուլ գոռոալով նետվեցին հաշտը։ Գրիգորին մոտեցավ ֆլիգելի բաց պատուհանին, ձիու վրայից թեքվելով, բարձրաձայն հարցրեց.

— Կենդանի մարդ կա՞ այստեղ։

Ֆլիգելում երկար ժամանակ լռություն էր տիրում, հետո էլ կանացի կերկերուն մի ձայն պատասխանեց.

— Սպասեցեք, ի սեր Քրիստոսի, հիմա դուրս կգամ։

Պառաված Լուկերյան քստքստացնելով բոբիկ ոտները, դուրս եկավ. արևի տակ աչքերը կկոցելով՝ երկար նայում էր Գրիգորիին։

— Չե՞ս ճանաչում, մորաքույր Լուկերյա,— ձիուց իջնելիս հարցրեց Գրիգորին։

Ու միայն այդ ժամանակ Լուկերյայի չեչոտ դեմքի վրա ինչ-որ բան դողաց ու բութ անտարբերությունը փոխարինվեց ուժեղ հուզումով։ Նա լացեց ու երկար ժամանակ չէր կարողանում որևէ բառ արտասանել։

Գրիգորին կապեց ձին, համբերությամբ սպասում էր։

— Ի՜նչ օրեր եմ տեսել։ Աստված չանի...— սկսեց հեծկլտալ Լուկերյան՝ քաթանե կեղտոտ գոգնոցով սրբելով այտերը։— Կարծում էի, թե էլի նրանք են եկել... Ախ, Գրիշենկա, ինչե՞ր եղան այստեղ... Դե արի ու պատմի... Ախր մենակ ես եմ մնացել...

— Բա ո՞ւր է Սաշկա պապին։ Պաների հե՞տ է գնացել։

— Թե որ գնար, գուցե կենդանի մնար...

— Մի՞թե մեռել է։

— Սպանեցին նրան... Երրորդ օրն է, որ ընկած է մառանում... Թաղել է պետք, իսկ ես հիվանդացա... Ջոռով վեր կացա... Վախենում եմ գնալ այնտեղ, մեռելի մոտ...

— Ինչի՞ համար սպանեցին,— շարունակելով նայել գետնին, խուլ հարցրեց Գրիգորին։

— Զամբիկի համար.. Մեր պաները վռազ-վռազ փախան։ Միայն կապիտալը վերցրին, իսկ գույքը համարյա ամբողջովին ինձ վրա թողին.— Լուկերյան ցածրացրեց ձայնը.— ամեն բան, մինչև վերջին թելը պահել եմ։ Թաղված է գետնի մեջ ու մինչև հիմի էլ մնում է։ Ձիերից վերցրին միայն Օրյոլի երեք հովատակ, մնացածները թողին Սաշկա պապի խնամքին։ Հենց որ ապստամբությունը սկսվեց, դրանց կազակներն էլ էին վերցնում, կարմիրներն էլ։ Գարնան գրլխին կարմիրները վերցրին սև հովատակը, Վիխորը,— գուցե հիշո՞ւմ ես։ Ջոռով թամքեցին։ Ախր նա իսկի հեծած չէր։

Նրանց չհաջողվեց նստել այդ հովատակը, ուրախանալ։ Մի շաբաթից հետո գալիս էին Կարգինի կազակները, այ թե ինչ էին պատմում։ Նրանք մի բլուրի վրա հանդիպեցին կարմիրներին, սկսեցին կրակել իրար վրա։ Կազակների մոտ այդ ժամին խրխնջաց ինչ-որ մի ախմախ զամբիկ։ Վիխորն էլ ի՞նչ արեց. կարմիրին քարշ տվեց կազակների մոտ։ Ինչքան ուժ ուներ, վազ տվեց զամբիկի կողմը, ու ձիավորը չկարացավ պահել նրան։ Տեսնում է նա, որ չի զսպելու հովատակին, ուզում է ցած թռչել ամբողջ թափով սլանալիս։ Ցած է թռչում, ամա չի կարենում ոտքը ասպանդակից հանել։ Ու Վիխորը նրան բերեց, տվեց հենց կազակների ձեռքը։

— Հիանալի՛ է,— բացականչեց հիացած Պրոխորը։

— Հիմի այդ հովատակը կարգինցի մի փոխխորունժի է նստում,— կարգով պատմում էր Լուկերյան։— Խոսք է տվել՝ հենց որ պանը վերադառնա, իսկույն Վիխորին կբերի մեր ախոռը։ Այսպես վերցրին բոլոր ձիերը, մնաց միայն սնգսընգան Ստրելկան, որ Պրիմերից ու Սուժոնայից է ծնվել։ Նա ծանրած էր, դրա համար էլ ոչ ոք նրան ձեռ չէր տալի։ Վաղուց չէ, որ նա քուռակ էր բերել, ու Սաշկա պապին այնպե՛ս էր խղճում այդ քուռակին, այնպե՛ս էր խղճում, որ չեմ կարող ասել։ Գրկած ման էր ածում, կոտոշով կաթ ու էլի ինչ որ խոտաջուր էր խմացնում, որ ոտքերը պինդ լինեն։ Եվ ահա փորձանք պատահեց... Երեկ չէ մեկել օրը իրիկնադեմին երեք ձիավոր եկան։ Պապին պարտեզում խոտ էր հրնձում։ Եկածները բղավում են նրա վրա՝ «Եկ այստեղ, ա՛յ բիձա»։ Նա թողեց գերանդին, մոտեցավ, բարև տվեց, իսկ նրանք իսկի չեն էլ նայում, կաթ են խմում ու հարցնում՝ «Ձի կա՞»։ Նա էլ ասում է՝ «Մեկը կա, ամա ձեր գինվորական գործի համար անպետք է. զամբիկ է, այն էլ ծնած, քուռակով է»։ Նրանցից ամենաչարը գոռում է՝ «Այդ քո խելքի բանը չի, բեր զամբիկը, քավթառ սատանա։ Իմ ձիու մեջքը ջարդված է, պետք է փոխեմ նրան»։ Պապին պետք է որ հնազանդվեր ու չպաշտպաներ այդ զամբիկը, դե, նա էլ, դու հո գիտես, կամակոր ծերունի էր... Պատահում էր, որ պանին էլ էր հակառակ խոսում։ Միտդ է, չէ՞։

— Հետո՞, չտվե՞ց,— պատմությանը միջամտեց Պրոխորը։

— Դե, ախր ո՞նց չտաս։ Նա միայն ասավ. «Ձեզանից առաջ շատ ձիավորներ են եկել, բոլոր ձիերը տարել են, իսկ սրան խղճացել են, բա դուք...» Այստեղ նրանք վեր կացան. «Հը՛մ,— ասում են,— պանի նոքար, դու ձին պանի համար ես պահում, հա՞-ա»։ Ու նրան քարշ տվեցին... Մեկը դուրս բերեց զամբիկը, սկսեց թամքել, իսկ քուռակը դունչը խոթում է նրա կուրծի տակ։ Պապին խնդրում է. «Խիղճ արեք, մի՛ տանեք, բա քուռակը ի՞նչ անենք»։— «Ա՛յ թե ինչ»,— ասում է մի ուրիշը, քուռակին մորից դեն է քշում, ուսից հանում հրացանը ու խփում նրան։ Ես բուռ-բուռ արտասուք թափեցի... Մոտ վազեցի, աղաչանք արեցի նրանց, քաշեցի պապի թևից, ուզում էի ազատել փորձանքից, իսկ նա, հենց որ մտիկ տվեց քուռակին, մորուքը դողացրեց, երեսը ճերմակեց պատի պես, ու ասում է. «Թե որ այդպես է, ինձ էլ խփիր, շան որդի»։ Նետվեց նրանց վրա, կպավ, չի թողնում, որ թամքեն։ Դե, նրանք բարկացան ու խփեցին։ Խելքս թռցրի, երբ կրակեցին նրա վրա... Հիմի չգիտեմ ինչ անեմ նրան։ Հարկավոր է դագաղ սարքել, բայց մի՞թե դա կնկա խելքի բան է։

— Տուր երկու բահ ու կարպետ,— խնդրեց Գրիգորին։

— Ուզում ես թաղե՞լ նրան,— հարցրեց Պրոխորը։

— Այո։

— Ինչի՞ ես նեղություն քաշում, Գրիգորի Պանտելևիչ։ Հիմի ես կգնամ կկանչեմ կազակներին։ Նրանք դագաղ էլ կշինեն, հարմար գերեզման էլ կփորեն...

Պրոխորը ըստ երևույթին չէր ուզում գլուխ ցավեցնել ինչ-որ մի ծերունու թաղման վրա, բայց Գրիգորին վճռականապես մերժեց նրա առաջարկը։

— Ինքներս գերեզման էլ կփորենք ու կթաղենք։ Այս ծերունին լավ մարդ էր։ Գնա այգի, լճակի մոտ կսպասես, իսկ ես կերթամ կտեսնեմ ննջեցյալին։

Հենց այն հին, լայնատերև կաղամախու տակին, ջրային ոսպ հագած լճակի մոտ, որտեղ մի ժամանակ Սաշկա պապին թաղեց Գրիգորիի ու Ակսինյայի դստրիկին, ինքն էլ գտավ իր վերջին հանգրվանը։ Գայլուկի ճյուղերի հոտ արձակող, խմորի մաքուր ծածկոցով փաթաթված նրա վտիտ մարմինը դրին գերեզման, ծածկեցին հողով։ Փոքրիկ գերեզ-

մանթմբի կողքին բարձրացավ էլի մի թումբ, որ խնամքով տրորված էր սապոգներով ու որի թարմ ու խոնավ կավահողը տոնական փայլ էր արձակում։

Հուշերից ընկճված Գրիգորին պառկեց կանաչի վրա, այդ փոքրիկ, իր սրտին սիրելի գերեզմանից քիչ հեռու, և երկար նայում էր վեհորեն տարածված կապույտ երկնքին։ Հեռո՛ւ բարձունքներում, անծայրածիր տարածություններում արշավում էին հողմերը, սահում արևով լուսավառված, պաղ ամպերը, իսկ երկրի վրա, որ հենց նոր էր ընդունել ուրախ ձիապահ և հարբեցող Սաշկա պապին, էլի բուռն թափով եռում էր կյանքը. տափաստանում, որի կանաչ ծովը հենց մինչև այգին էր հասնում, վայրի կանեփի մացառուտներում, հին կալի գործած ցանկապատների կողքին անլռելի հնչում էր լորերի թնդալից ճովողյունը, ճստճստում էին գետնասկյուռները, բզզում իշամեղուները, շրշում քամու փայփայած խոտաբույսերը, հոսանուտ մուժում երգում էին արտույտները ու, բնության մեջ հաստատելով մարդկային վեհությունը, հեռո՛ւ-հեռվում, անջրդի հովիտով մեկ համառորեն, ցասկոտ ու խուլ տկտկում էր մի գնդացիր։

VII

Գեներալ Սեկրետևին, որ Վեշենսկայա ժամանեց շտաբի սպաներով և անձնական պահպանության մի հարյուրյակ կազակներով, դիմավորեցին աղ ու հացով, զանգերի զողանջով։ Երկու եկեղեցիների զանգերը ամբողջ օրը զողանջում էին ինչպես զատկին։ Փողոցներում, երթերից հյուծված, վտիտ նժույգներով երթևեկում էին Դոնի ստորին ավազանի կազակները։ Նրանց ուսերին սպառնալից կերպով կապույտին էին տալիս ուսադիրները։ Հրապարակում, վաճառականական մի տան մոտ, ուր բնակարան էին հատկացրել գեներալ Սեկրետևին, խմբվել էին սուրհանդակները։ Արևածաղկի սերմ չրթելով, նրանք ինչ-որ խոսքեր էին ասում ստանիցայի զուգված, այնտեղից անցնող աղջիկներին։

Կեսօրին երեք հեծյալ կալմիկ մի տասնհինգ մարդ գերի կարմիրբանակայիններ բերին գեներալի բնակարանը։ Ետևից

գալիս էր երկնի մի սայլ, երաժշտական փողային գործիքներով բեռնված։ Կարմիրբանակայինները հագնված էին արտասովոր ձևով,— գորշ, մահուդե շալվարներ և նույնպիսի կուրտկաներ՝ թևածալերի կարմիր երիզով։ Տարեց մի կալմիկ ձին քշեց, մոտեցավ դարպասի մոտ պարապ կանգնած սուրհանդակներին, իջավ ձիուց, կավե ծխամորճը խոթեց գրպանը։

— Մերոնք կարմիր փողհարներ են բերել։ Հասկանո՞ւմ ես։

— Այստեղ ի՞նչ կա հասկանալու,— ծուլորեն պատասխանեց հաստամռութ մի սուրհանդակ՝ արևածաղկի սերմի էֆեպը բերանից գցելով կալմիկի փոշոտված սապոգների վրա։

— Ո՛նց թե ինչ, ընդունիր գերիներին։ Կերել-խմել, մուութդ ես հաստացրել, զուր տեղը դուրս ես տալի։

— Դե, դե, լեզուդ ներս քաշի, հայվան,— վիրավորվեց սուրհանդակը։ Սակայն գնաց գերիների մասին զեկուցելու։

Դարպասից դուրս եկավ մի հաստ յասավուլ կինամոնադույն գոտիով պրկած բեշմետով։ Հաստ ոտները լայն դրած և գոռոզաբար ձեռները կողքերին կանթած, նայեց խոնված կարմիրբանակայիններին, քրթմնջաց.

— Կոմիսարներին երաժշտությամբ էիք զվարճացնում, հա՞-ա, քոսոտ տամբովցիներ։ Ո՞րտեղից են այդ մոխրադույն համազգեստները։ Գերմանացիների՞ց եք հանել, թե ինչ։

— Ամենևին ոչ,— աչքերն արագ թարթելով պատասխանեց բոլորից առաջ կանգնած կարմիրբանակայինը։ Ու շուտասելուկով բացատրեց.— Դեռ Կերենսկու ժամանակ հունիսյան հարձակումից առաջ այս հագուստը կարել էին մեր երաժշտախմբի համար... Այն ժամանակից էլ հագնում ենք...

— Կհագնես, ո՞նց չէ, կհագնես։ Տեսնեմ ոնց կհագնեք։ — Յասավուլը կուբանյան ցածլիկ փափախը քշեց ծոծրակին՝ բանալով սափրված գլխի դեռ չլավացած սպին, ու բարձր, ծռված կրունկների վրա դարձավ դեպի կալմիկը.— Ինչո՞ւ ես բերել սրանց, պիղծ հրեշ, ո՞ր սատանայի համար։ Չէի՞ր կարող ճանապարհին ոչնչացնել...

Կալմիկն ամբողջովին, աննկատելիորեն ձգվեց, ճարպկությամբ միացրեց ծուռ ոտքերը ու, ձեռքը չիջեցնելով պաշտպանական գույնի գլխարկի հովարից, պատասխանեց.

— Հարյուրյակի հրամանատարը հրամայեց՝ քշի տար այստեղ։

— «Քշի տար այստե՞ղ»,— տնազ արեց պճնամոլ յասավուլը, քամահրանքով ծռմռեց բարակ շրթունքները, ու ծանր փոխելով ուռած ոտքերը, շարժելով հաստ հետույքը, շրջանցեց կարմիրբանակայիններին. երկար և ուշադիր զննեց նրանց, ինչպես ձիու գնորդը՝ ձիերը։

Սուրհանդակները կամացուկ ծիծաղում էին։ Ուղեկցուրդ կալմիկների դեմքերը, ինչպես միշտ, անտարբերություն էին պահպանում։

— Բա՛ց անել դարպասը, դրանց քշել բակը,— հրամայեց յասավուլը։

Կարմիրբանակայինները և սայլը, որի վրա խառնիխուռն ընկած էին գործիքները, կանգ առան մուտքի սանդուղքի առաջ։

— Ո՞վ է խմբավարը,— ծխախոտը վառելով հարցրեց յասավուլը։

— Նա չկա,— միաժամանակ պատասխանեցին մի քանիսը։

— Ո՞րտեղ է նա, փախե՞լ է։

— Ոչ, սպանված է։

— Տեղն է նրան։ Առանց նրանց էլ կանեք ինչ որ պետք է։ Հապա, վերցնե՛լ գործիքները։

Կարմիրբանակայինները մոտեցան սայլին։ Միախառնվելով զանգերի միապաղաղ ղողանջին, բակում երկչոտ ու աններդաշնակ հնչեցին փողերի պղնձե ձայները։

— Պատրաստվե՛լ։ Նվագեցեք «Աստված, պահպանիր ցարին»։

Երաժիշտները լուռ նայեցին միմյանց։ Ոչ ոք չէր սկսում։ Ծանր լռությունը տևեց մի րոպե, իսկ հետո նրանցից մեկը, որ ոտաբոբիկ էր, բայց խնամքով կապած փաթաթաններով, նայելով գետնին, ասաց.

— Մեզանից ոչ ոք չգիտե հին հիմնը...

— Ոչ ո՞ք։ Հետաքրքիր է... է՛յ, սուրհանդակների կիսադասակ, շարվե՛լ հրացաններով։

Յասավուլը սապոգի քթով անլսելի տակտ էր խփում։ Միջանցքում շրխկացնելով հրացանները, շարք էին կանգնում սուրհանդակները։ Ցցապատնեշի ետևում, խիտ առած ակացիաներում ծլվլում էին ծտերը։ Բակում տարածված էր մարգերի շիկացած երկաթե կտուրների ու մարդկային տաք քրտնքի թունդ հոտը։ Յասավուլը արևի տակից անցավ ստվերի մեջ, ու այդ ժամանակ բոբիկ երաժիշտը տխուր նայեց ընկերներին, ցածր ձայնով ասաց.

— Ձերդ բարձր բարեծննդություն, այստեղ բոլորն էլ ջահել երաժիշտներ են։ Հին բաներ չեն նվագել... Ավելի շատ ռևոլյուցիոն քայլերգեր են նվագել... Ձերդ բարձր բարեծննդություն։

Յասավուլը մտացրիվ տնտղում էր վահանակներով զարդարված իր գոտու ծայրը, լռում էր։

Սուրհանդակները շարվեցին մուտքի սանդուղքի մոտ, հրամանի էին սպասում։ Կարմիրբանակայիններին դես-դեն հրելով, ետին շարքերից հապճեպ դուրս եկավ տարիքավոր աչքը հատ ընկած մի երաժիշտ. թեթև հազալով, հարցրեց.

— Թույլ կտա՞ք։ Ես կարող եմ նվագել։— Ու առանց համաձայնության սպասելու, արևից տաքացած ֆագոտը տարավ դողդոջուն շրթունքներին։

Անհաճելի, թախծոտ հնչյունները միալար տարածվելով վաճառականի ընդարձակ բակում, յասավուլին ստիպեցին ցասկոտ կնճռոտել դեմքը։ Ձեռքը թափահարելով, նա բղավեց.

— Դադարեցնե՛լ։ Կարծես աղքատի... ես քաշում։ Դա ի՞նչ երաժշտություն է։

Պատուհաններում երևացին շտաբային սպաների ու համհարզների ժպտացող դեմքերը։

— Դուք դրանց թաղման քայլերգ պատվիրեցեք,— պատանեկան բարակ ձայնով բղավեց պատուհանից կիսով չափ դուրս ընկած, երիտասարդ մի հարյուրապետ։

Ձանգերի լարված զողանջը մի րոպե լռեց, ու յասավուլը շարժելով հոնքերը, կեղծավորությամբ հարցրեց.

— «Ինտերնացիոնալը» իհարկե կկատարեք, չէ՞։ Հապա։ Մի՛ վախենաք։ Դե որ հրամայում եմ, ուրեմն սկսեցեք։

Ու վերահաս լռության մեջ, կեսօրվա տապում, որպես մարտակոչ, հանկարծ ներդաշնակ ու վեհորեն թնդացին «Ինտերնացիոնալի» շեփորող, զայրացկոտ հնչյունները։

Յասավուլը կանգնել էր ինչպես եզը խոշընդոտի առաջ, գլուխը թեքած, ոտները տարածած։ Կանգնել ու լսում էր։ Նրա մկանոտ պարանոցը ու կկոցված աչքերի կապտավուն սպիտակուցները արյունով էին լցվում։

— Դա-դա-բեց-նե՛լ...— Այլևս չհամբերելով, կատաղած բղավեց նա։

Նվագախումբը միանգամից լռեց, միայն վալդհորնը ուշացավ, ու շիկացած օդում դեռ երկար հնչեց նրա բուռն, անավարտ մարտակոչը։

Երաժիշտները լիզում էին չորացած շրթունքները, դրանք սրբում թևքերով, կեղտոտ ձեռքերով։ Նրանց դեմքերը հոգնած ու անտարբեր էին։ Միայն մեկի մատնող արցունքը գլորվեց փոշոտված այտի վրայով, խոնավ հետք թողեց...

Այդ ժամանակ գեներալ Սեկրետևը ճաշեց դեռ ռուս-ճապոնական պատերազմում իր հետ ծառայած մի ծանոթի ազգականների մոտ ու հարբած համհարզի ուղեկցությամբ դուրս եկավ հրապարակ։ Շոգը և օդին շշմեցրել էին նրան։ Փողոցի անկյունում, գիմնազիայի աղյուսե շենքի մոտ թուլացած գեներալը սայթաքեց, երեսի վրա ընկավ ավազոտ գետնին։ Գլուխը կորցրած համհարզը իզուր էր փորձում ոտքի հանել նրան։ Մոտիկում կանգնած ամբոխից մարդիկ շտապեցին օգնության։ Երկու զառամած կաղակ թևերից բռնած, խիստ քաղաքավարի բարձրացրին գեներալին, որ հենց այդտեղ, ժողովրդի առաջ թափեց սիրտը։ Բայց սրտախառնուքի մոլուցքի ընդմիջումներին նա դեռ փորձում էր ինչ-որ բղավել՝ սպառնալից թափահարելով բռունցքները։ Նրան մի կերպ հանդարտեցրին, տարան իր բնակարանը։

Հեռվում կանգնած կազակները հայացքներով երկար ուղեկցում էին նրան, ցածր ձայնով իրար մեջ խոսում.

— Տե՛ս, է՛, խեղճի բանը վատ եղավ։ Իրեն կարգին չի պահում, գեներալի՛ս մտիկ։

— Արաղը աստիճան ու շքանշան չի հարցնում։

— Հարկավոր չէր կուլ տալ բոլորը, ինչ որ հրամմեցեք էին անում...

— Է-Է՛, խնամի, հո ամեն մեկը չափով չի՞ շարժվի։ Ա նպիսի մարդ է լինում, որ հարբած ժամանակ ուխտ է անում իսկի չխմել... Հա, ո՞նց են ասում. խոզը ուխտ արեց մի քիչ բան ուտել, մի քիչը դառավ տասը քիչ...

— Դրուստ է, էլի՛։ Ձեն ածա տղերանց, որ հեռանան։ Այդ սատանաները գնում են հենց նրա կողքից, երկու աչքը չորս են արել, ասես իսկի հարբած մարդ չեն տեսել։

...Ստանիցայում ղողանջում էին զանգերը, մարդիկ արագ էին խմում մինչև մթնելը։ Երեկոյան էլ մի տան մեջ, որ սպայական ժողովարան էր լինելու, ապստամբական հրամանատարությունը եկվորների համար բանկետ կազմակերպեց։

Բարձրահասակ, վայելչակազմ Սեկրետևը— հին կազակ, Կրասնոկուտսկայա ստանիցայի մի խուտորի բնիկ,— բուռն կերպով սիրում էր հեծկան ձիերը, հիանալի ձիավար էր, հեծելազորային խիզախ գեներալ։ Բայց նա հռետոր չէր։ Բանկետում արտասանած նրա ճառը համակված էր հարբած մարդու սնապարծությամբ և վերջում աներկիմաստ կշտամբանքներ ու սպառնալիքներ էր պարունակում Վերին Դոնի կազակների հասցեին։

Բանկետին ներկա Գրիգորին լարված և զայրացկոտ ուշադրությամբ էր լսում Սեկրետևի խոսքերը։ Դեռ չզգաստացած գեներալը կանգնել էր մատներով սեղանին հենված, բաժակից թափթփելով հոտավետ տնական օղին. ավելորդ հաստատակամությամբ արտասանելով յուրաքանչյուր նախադասությունը, ասում էր.

— ...Ոչ, ոչ թե մենք պետք է ձեզ շնորհակալություն հայտնենք օգնության համար, այլ դուք— մեզ։ Այո, դուք, սա պետք է պարզ ասել։ Առանց մեզ կարմիրները ձեզ կոչընչացնեին։ Դուք այդ շատ լավ գիտեք։ Իսկ մենք առանց ձեզ էլ կճզմեինք այդ խուժանին. ճզմել ենք նրան ու պիտի ճզմենք այնքան ժամանակ,— նկատի ունեցեք,— մինչև որ բոլորովին մաքրենք ամբողջ Ռուսաստանը։ Դուք աշնանը լքեցիք ռազմաճակատը, բոլշևիկներին թողեցիք կազակական հողը.... Դուք ուզում էիք նրանց հետ հաշտ ապրել, բայց չհաջողվեց։ Եվ դուք ապստամբեցիք՝ փրկելով ձեր գույքը, ձեր կյանքը։ Պարզ ասած՝ փրկելով ձեր կաշին, եզների կաշին։ Ես անցյալը հիշում եմ ոչ թե նրա համար, որ ձեզ կշտամբեմ ձեր մեղքերի պատճառով... Սա ձեզ վիրավորելու համար չի ասվում։ Բայց ճշմարտությունը պարզելը երբեք վնասակար չէ։ Մենք ներեցինք ձեր դավաճանությունը։ Ինչպես եղբայրներ, մենք ձեզ մոտ եկանք ձեզ համար ամենադժվար րոպեին, եկանք օգնության։ Բայց ձեր խայտառակ անցյալը դուք պետք է քավեք ապագայում։ Հասկանալի՞ է, պարոնայք սպաներ։ Դուք պետք է դա քավեք ձեր քաջագործություններով և խաղաղ Դոնին անբասիր ծառայելով, հասկանալի՞ է։

— Դեհ, խմենք քավության համար,— առանց որևէ մեկին դիմելու, հազիվ նկատելի ժպտալով, ասաց Գրիգորիի դեմուդեմ նստած, տարեց մի զորական ավագ ու, առանց մյուսներին սպասելու, առաջինը խմեց։ Նա ուներ առնական, ծաղիկ հիվանդությունից մի քիչ չեչոտված դեմք ու ծիծաղկոտ, շագանակագույն աչքեր։ Սեկրետևի ճառի ժամանակ նրա շրթունքները հաճախ սեղմվում էին ու անորոշ, անհաստատ քմծիծաղ էին տալիս, ու այդ պահին աչքերը մթնում էին և բոլորովին սև էին թվում։ Հետամուտ լինելով զորական ավագին, Գրիգորին ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ նա Սեկրետևի հետ «դու»-ով էր խոսում և նրա նկատմամբ իրեն բոլորովին ազատ էր պահում, իսկ մյուս սպաներին միանգամայն զուսպ ու սառն էր վերաբերվում։ Բանկետին ներկա գտնվողներից միայն նա էր, որ ուսին կարած խակի գույնի ուսադիրներով ու նույնպիսի կիտելով էր, թևի վրա կոռնիլովյան շևրոն էր կրում։ «Ինչ-որ գաղափարական է, երևի կամավորներից է»,— մտածեց Գրիգորին։ Զորական ավագը խմում էր ինչպես ձին։ Չէր ուտում ու չէր հարբում, միայն երբեմնակի թուլացնում էր անգլիական լայն գոտին։

— Ո՞վ է դա, իմ դեմ նստած այդ չեչոտը,— շշնջալով հարցրեց Գրիգորին իր կողքին նստած Բոգատիրյովին։

— Սատանան գիտե,— ուսերը թոթվեց գինովցած Բոգատիրյովը։

Կուդինովը հյուրերի համար օղի չէր խնայում։ Որտեղից-որտեղ սպիրտ երևաց սեղանի վրա, ու Սեկրետևը դժվարությամբ վերջացնելով ճառը, արձակեց պաշտպանական գույ-

նի սերթուկի կոճակները, ծանր նստեց աթոռի վրա։ Մոնղոլական ցայտուն տիպի դեմքով, երիտասարդ մի հարյուրապետ կռացավ ու ինչ-որ փսփսաց նրա ականջին։

— Չհանա՛մը,— կարմրատակելով պատասխանեց Սեկրետևը ու միանգամից կոնծեց մի գավաթ սպիրտ, որ քծնաբար լցրել էր Կուդինովը։

— Իսկ այն շիլ աչքերո՞վը ով է, համհա՞րզ է,— հարցրեց Գրիգորին Բոգատիրյովին։

Ձեռքով բերանը ծածկելով՝ Բոգատիրյովը պատասխանեց.

— Ոչ, նա Սեկրետևի սանն է։ Ճապոնական պատերազմի ժամանակ Սեկրետևը նրան, փոքր տղային բերել էր Մանջուրիայից։ Դաստիարակել ու տվել էր յունկերների դպրոց։ Այդ չինացին խելոք մարդ դարձավ։ Քաջն է, հա՛-ա։ Երեկ Մակեևկայի մոտ գրավեց կարմիրների դրամարկղը։ Երկու միլիոն ռուբլի ճանկեց։ Տե՛ս, բոլոր գրպաններից ցցվել են այդ փողի կապոցները։ Անիծվածի բախտը բանեց, էլի՛։ Ջուտ գանձ է։ Խմի՛, է՛, ի՞նչ ես դրանց նայում։

Կուդինովը պատասխան-ճառ ասաց, բայց նրան համարյա արդեն ոչ ոք չէր լսում։ Խրախճանքը գնալով ավելի լայն ծավալ էր ստանում։ Սեկրետևը սերթուկը հանած, նստել էր միայն շապկով։ Մաքուր սափրված նրա գլուխը պլպլում էր քրտնքից, ու բոլորովին մաքուր կտավե շապիկը է՛լ ավելի էր երանգավորում նրա կարմրատակած դեմքը և արևայրուկից ձիթապտղի գույն առած պարանոցը։ Կուդինովը ցածր ձայնով նրան ինչ-որ բան էր ասում, բայց Սեկրետևը, առանց նրան նայելու, համառորեն կրկնում էր.

— Ո-ո-ո՛չ, կներես։ Կներե՛ս, ասում եմ։ Մենք ձեզ վրստահում ենք, բայց այնքան-որքան... Ձեր դավաճանությունը շուտ չի մոռացվի։ Թող այս բանը լավ հիշեն բոլոր նրանք, ովքեր աշնանը անցել էին կարմիրների կողմը...

«Հը՛մ, մենք էլ ձեզ կծառայենք այնքան-որքան»,— սառը կատաղությամբ մտածեց հարբած Գրիգորին ու վեր կացավ։

Գլխարկը ձեռքին դուրս ելավ տնից, թեթևությամբ, ամբողջ կրծքով ներշնչեց գիշերային թարմ օդը։

Դոնի մոտ, ինչպես անձրևից առաջ, կոկռում էին գորտերը, խուլ ճռճռում էին ջրաբզեզները։ Ավազոտ ցամաքալեզվի վրա թախծոտ ճռվողում էին կտցարները։ Հեռո՛ւ-հեռվում, գետառում ծոր տվող ու բարակ ձայնով վրնջում էր մորը կորցրած մի մտրուկ։ «Դառը կարիքը մեզ միացրեց ձեզ, թե չէ դուք մեզ հոտ քաշելու համար էլ հարկավոր չէիք լինի։ Անիծվա՛ծ սրիկա։ Կոտրատվում է ոնց որ կոպեկանոց բլիթը, նախատում է, մի շաբաթից հետո էլ ուղղակի կսկսի չոքել մեր բկին... Ա՛մա թե գործ եղավ, հա՛-ա... Որ կողմը դառնաս, մեկ է։ Ախր ես այդպես էլ մտածում էի... Հենց այսպես էլ պիտի լիներ։ Հիմի ո՞նց են քաշելու կազակների քթից։ Կազակները մոռացել են պատիվ տալ ու ձգվել նորին բարեծննդությունների առաջ»,— մտածում էր Գրիգորին մուտքի սանդուղքից իջնելիս, խարխափելով փնտրում բակի դուռը։

Սպիրտը նրա վրա էլ էր ազդել. գլուխը պտտվում էր, շարժումները անվստահ ու ծանր էին։ Դուրս գալով բակի դռնից, նա ճոճվեց, գլխարկը դրեց ու քաշեց աչքերին ու, ոտները քարշ տալով, գնաց փողոցի երկարությամբ։

Ակսինյայի մորաքրոջ տնակի մոտ մտազբաղ կանգ առավ, հետո էլ վճռականորեն քայլեց դեպի մուտքը։ Դրսի դուռը փակված չէր։ Գրիգորին առանց դուռը ծեծելու մտավ օթախ ու հենց իր առաջ տեսավ սեղանի մոտ նստած Ստեպան Աստախովին։ Ակսինյայի մորաքույրը զբաղված էր վառարանի մոտ։ Մաքուր սփռոցով ծածկված սեղանի վրա դրված էր մի կիսատ շիշ օղի, ափսեի մեջ կարմրին էր տալիս չորացրած, կտրատված ձուկը։

Ստեպանը հենց նոր էր դատարկել բաժակը և ըստ երևույթին ուզում էր ուտել, բայց տեսնելով Գրիգորիին, ափսեն դեն հրեց, մեջքը դեմ արեց պատին։

Որքան էլ հարբած էր Գրիգորին, այնուամենայնիվ նկատեց Ստեպանի մեռելային գունատությամբ պատած դեմքը և գայլի աչքերի պես բռնկած նրա աչքերը։ Հանդիպումից շեշմած Գրիգորին իր մեջ ուժ գտավ խռպոտ ձայնով ասելու։

— Բարի աջողում, ո՞նց եք։

— Փառք աստծու,— վախեցած պատասխանեց տանտիրուհին, որ անշուշտ տեղյակ էր Գրիգորիի և իր ազգականուհու հարաբերություններին, ու ամուսնու և սիրեկանի այդ անակնկալ հանդիպումից ոչ մի լավ բան չէր սպասում։

Ստեպանը ձախ ձեռքով լուռ շփում էր բեղերը, վառված աչքերը չէր կտրում Գրիգորիից։

Վերջինս ոտները լայն դրած, կանգնել էր շեմքի մոտ, ծուռ ժպտում էր, ասում.

— Եկա այցելության... Ներեցեք։

Ստեպանը լուռ էր։ Անհարմար լռությունը այնքան տևեց, մինչև որ տանտիրուհին համարձակվեց ներս հրավիրել Գրիգորիին.

— Անցեք, նստեք։

Հիմա Գրիգորին արդեն ոչինչ չէր կարող թաքցնել։ Ակսինյայի բնակարանում նրա հայտնվելը ամեն ինչ բացատրում էր Ստեպանին։ Ու Գրիգորին շիտակ վարվեցողության դիմեց.

— Բա ո՞ւր է կինդ։

— Իսկ դու... եկել ես նրան այցելելո՞ւ,— մեղմ, բայց պարզ հարցրեց Ստեպանը ու աչքերը սքողեց դողդոջ արտևանունքներով։

— Այո,— հոգոց հանելով խոստովանեց Գրիգորին։

Այդ ակնթարթում նա ամեն ինչ սպասում էր Ստեպանից, ու զգաստանալով, պաշտպանության էր պատրաստվում։ Բայց Ստեպանը բացեց աչքերը (դրանց մեջ արդեն մարել էր քիչ առաջվա կրակը), ասաց.

— Ես նրան ուղարկել եմ օղու, հիմի կգա։ Նստիր, սպասիր։

Նա, բարձրահասակ ու բարեկազմ Ստեպանը, մինչև անգամ վեր կացավ, աթոռ հրամցրեց Գրիգորիին. առանց տանտիրուհուն նայելու, ասաց.

— Մորաքույր, մաքուր բաժակ տվեք,— ու դիմեց Գրիգորիին.— Կխմե՞ս։

— Մի քիչ կարելի է։

— Դեհ, նստիր։

Գրիգորին նստեց սեղանի մոտ... Ստեպանը 22ի մեջ մնացած օղին հավասար չափով լցրեց բաժակների մեջ, ինչոր մուժով սքողված աչքերը բարձրացրեց Գրիգորիի վրա։

— Բոլոր լ։ վ մարդկանց կենա՛ցը։

— Սաղ լինենք։

Բաժակներն իրար զարկեցին։ Խմեցին։ Լուռ էին։ Տանտիրուհին, որ մկան պես արագաշարժ էր, հյուրին մատուցեց ափսե և քրքրված կոթով մի պատառաքաղ։

— Ձուկ կերեք։ Շատ աղի չէ։

— Շնորհակալ եմ։

— Վերցրեք ափսեի մեջ, անուշ արեք,— հրամցնում էր ուրախացած տանտիրուհին։ Նա գոհ էր, որ ամեն ինչ լավ գնաց, առանց տուրուդմբոցի, առանց ամանները ջարդելու, առանց աղմուկի։ Վատ բան խոստացող խոսակցությունը վերջացել էր։ Ամուսինը իր կնոջ սիրեկանի հետ հանգիստ նստած էր ընդհանուր սեղանի մոտ։ Այժմ նրանք լուռ ուտում էին ու միմյանց չէին նայում։ Քաղաքավարի տանտիրուհին սնդուկից հանեց մի մաքուր երեսսրբիչ ու կարծես միացրեց Գրիգորիին ու Ստեպանին՝ դրա ծայրերը դնելով երկուսի ծնկներին։

— Ինչո՞ւ դու հարյուրյակում չես,— կրծոտելով գետային բրամ ձուկը, հարցրեց Գրիգորին։

— Նույնպես այցելության եմ եկել,— մի փոքր լռելուց հետո պատասխանեց Ստեպանը, ու նրա տոնից ոչ մի կերպ չէր կարելի որոշել՝ լո՞ւրջ է ասում, թե՞ հեգնում է։

— Հարյուրյակը երևի գնացել է տները, հա՞։

— Բոլորն էլ խուտորում են։ Էհ, խմե՞նք մնացածը։

— Խմե՛նք։

— Սաղ լինենք։

— Բոլոր լավ մարդկանց կենացը։

Ճռնչաց հաշտի դռան փակը։ Վերջնականապես զգաստացած Գրիգորին աչքի տակով նայեց Ստեպանին, նկատեց, որ գունատությունը վերստին ալիքի նման ողողել է նրա դեմքը։

Ակսինյան գորգանման շալով փաթաթված, չճանաչելով Գրիգորիին, մոտեցավ սեղանին, շեղակի նայեց, ու նրա սև, լայնացած աչքերում դողաց սարսափը։ Շնչասպառ լինելով, նա հազիվ կարողացավ ասել.

— Բարև ձեզ, Գրիգորի Պանտելևիչ։

Ստեպանի մեծ, ջլուտ ձեռքերը, որ դրված էին սեղանին, հանկարծ մի փոքր դողացին, ու Գրիգորին՝ այդ տեսնելով լուռ գլուխ տվեց Ակսինյային, ոչ մի բառ չասաց։

Սեղանի վրա երկու շիշ տնական արաղ դնելով, Ակսին-

յան տագնապով և թաքուն ուրախությամբ լեցուն հայացքով երկին նայեց Գրիգորիին, շուռ եկավ ու անցավ օթախի մութ անկյունը, նստեց սնդուկի վրա, դողդոջ ձեռներով շակեց մազերը։ Հաղթահարելով հուզմունքը, Ստեպանը արձակեց իրեն նեղող շապկի օձիքը, լիք լցրեց բաժակները, երեսը դարձրեց դեպի կինը.

— Բաժակ վերցրու և սեղան նստիր։

— Ես չեմ ուզում։

— Նստի՛ր։

— Ես հո օղի չեմ խմում, Ստյոպա։

— Քանի՞ անգամ պիտի ասեմ,— Ստեպանի ձայնը դողաց։

— Նստիր, հարևանուհի,— Գրիգորին քաջալերանքով ժպտաց։

Ակսինյան աղերսագին նայեց նրան, արագ մոտեցավ պահարանին։ Դարակից մի փոքրիկ ափսե ընկավ, զրնգալով կոտրվեց։

— Ա՛խ, փորձանք է, էլի,— տանտիրուհին վշտացած իրար զարկեց ձեռները։

Ակսինյան լուռ հավաքում էր ափսեի կտորտանքները։

Ստեպանը նրա համար էլ լիք լցրեց բաժակը, ու նրա աչքերը նորից բռնկվեցին վշտով և ատելությամբ։

— Դեհ, խմենք...— սկսեց նա ու լռեց։

Լռության մեջ պարզ լսվում էր, թե ինչպես բուռն կերպով ու անհանգիստ է շնչում Ակսինյան։

— ...Խմենք, կնիկ, երկար անջատման համար։ Հը՛, չե՞ս ուզում, չե՞ս խմում։

— Դու հո գիտես...

— Ես հիմի ամեն բան գիտեմ... Լա՛վ, ոչ թե անջատման համար, այլ թանկագին հյուր Գրիգորի Պանտելևիչի կենացը։

— Նրա կենացը կխմեմ,— զրնգուն ձայնով ասաց Ակսինյան ու միանգամից դատարկեց բաժակը։

— Վա՛յ, գլուխդ չմեռնի,— շշնջաց տանտիրուհին ու վազ տվեց խոհանոց։

Նա կուչ եկավ մի անկյունում, ձեռները սեղմեց կրծքին, սպասում էր, որ ահա գոռգոռալով կընկնի շուռ տված սեղանը,

խլացուցիչ կճայթի կրակոցը... բայց օթախում մեռելային լռություն էր տիրում։ Լսվում էր միայն, թե առաստաղի վրա ինչպես են տզզում լույսից անհանգստացած ճանճերը ու ստանիցայով մեկ, ողջունելով կեսգիշերը, կանչում են աքաղաղները։

VIII

Դոնի շրջանում մթին են հունիսի գիշերները։ Քարե-տախտակի պես սև երկնքում, տաղտկալի անդորրում բռնկում են ոսկե փայլակները, ընկնում աստղերը՝ անդրադառնալով Դոնի արագահոս ջրերում։ Ջոր և տաք քամին տափաստանից դեպի բնակավայրերն է բերում ծաղկուն ծոթորի մեղրաբույրը, իսկ գետառում անալի բուրում են խոնավ խոտաբույսերը, տիղմը, թացությունը, անլռելի աղմկում են ջրահավերը, ու առափնյա անտառը, որպես հեքիաթում, ամբողջովին ծածկված է լինում մշուշի արծաթավուն դիպակով։

Պրոխորը կեսգիշերին արթնացավ։ Բնակարանատիրոջը հարցրեց.

— Մեր հրամանատարը չեկա՞վ։

— Ոչ։ Քեֆ է անում գեներալների հետ։

— Ա՛մա թե արաղ կխմեն այնտեղ, հա՛-ա,— նախանձելով հոգոց հանեց Պրոխորը ու հորանջելով, սկսեց հագնվել։

— Հը՛, ո՞ւր ես գնում։

— Գնամ ձիերին ջուր ու գարի տամ։ Պանտելևիչն ասում էր, թե լուսաբացին կգնանք Տատարսկի։ Մի օր կմնանք այնտեղ, հետո էլ պետք է հասնել մեր զորամասերին։

— Լույսը հլա շուտ չի բացվի։ Քնեիր, էլի՛։

Պրոխորը անբավականությամբ պատասխանեց.

— Իսկույն երևում է, պապի, որ ջահել ժամանակվանից շարային չես եղել։ Մեր ծառայությունը այնպես է, որ եթե ձիերը չկերակրենք ու նրանց չխնամենք, կարելի է թե սաղ էլ չմնանք։ Վատ ձիերով ի՞նչ կարող ես անել։ Ձիդ ինչքան լավ լինի, այնքան շուտ կփախչես թշնամուց։ Ես այսպես եմ. ինձ հարկավոր չի նրանց հասնել, իսկ եթե բանը դժվարանա, դանակը ոսկորին հասնի, ես առաջինը կճղեմ։ Առանց այն էլ քանի՞-քանի տարի է, որ ճակատս գնդակներին եմ դեմ

անում, հոգիս դուրս է եկել։ Պապի, լույս վառի, թե չէ ոտիս փաթաթանը չեմ գտնում։ Ա՛յ, շնորհակալություն։ Հա՛, մեր Գրիգորի Պանտելևիչը խաչեր ու աստիճաններ էր ստանում, սրի-հրի դեմ գնում, իսկ ես այդպես հիմար չեմ, այդ ինձ հարկավոր չի։ Ը՛հը, կարծեմ սատանեն բերում է նրան, ուր երևի թունդ հարբած է։

Դուռը կամացուկ ծեծեցին։

— Նե՛րս մտեք,— բղավեց Պրոխորը։

Ներս մտավ անծանոթ մի կազակ՝ պաշտպանական գույնի բլուզի վրա կրտսեր ուրյադնիկի ուսադիրներով և գլխարկանիշ կպցրած հովարավոր գլխարկով։

— Ես գեներալ Սեկրետևի զորախմբի շտաբում սուրհանդակ եմ։ Կարո՞ղ եմ տեսնել նորին բարձննդություն պարոն Մելեխովին,— հարցրեց նա պատիվ տալով՝ շեմքի մոտ ձիգ կանգնած։

— Նա չկա,— պատասխանեց մարզած սուրհանդակի կեցվածքից ու վարվելաձևից ապշած Պրոխորը.— Դու մի՛ ձգվիր, հա՛, ես էլ ջահել ժամանակս այդպես հիմար էի, ինչպես դու։ Ես նրա բանբերն եմ։ Ի՞նչ գործով ես եկել։

— Գեներալ Սեկրետևի հրամանով եկել եմ պարոն Մելեխովին կանչելու։ Նրան խնդրում են իսկույն ներկայանալ սպայական ժողովարանի տունը։

— Նա դեռ իրիկվանից գնացել էր այնտեղ։

— Եկել էր, հետո էլ գնացել տուն։

Պրոխորը սուլեց ու աչքով արավ մահճակալի վրա նըստած տանտիրոջը.

— Հասկացա՞ր, պապի։ Ուրեմն ծլկել է իր ճնկոյի մոտ... Դու գնա, զինվոր աղբեր, իսկ ես նրան կգտնեմ ու անմիջապես կբերեմ այնտեղ։

Ծերունուն հանձնարարելով ջրել ձիերը ու գարի տալ նրանց, Պրոխորը գնաց Ակսինյայի մորաքրոջ մոտ։

Ստանիցան քնած էր անթափանց խավարում։ Դոնի մյուս կողմում, անտառում ձայն ձայնի տալով գեղգեղում էին սոխակները։ Պրոխորը առանց շտապելու մոտեցավ ծանոթ խրճիթին, մտավ հաշտը ու հենց որ ձեռքը տարավ դռան բռնակին, լսեց Ստեպանի թավ ձայնը։ «Ա՛յ քեզ խաթա-ա՛,— մտածեց Պրոխորը.— Կհարցնի՝ ինչի՞ ես եկել։ Բա ի՞նչ

ասեմ։ Էհ, գլուխը քարը, ինչ ուզում է լինի։ Կասեմ՝ եկել եմ օղի գնելու, միթամ հարևանները ուղարկեցին այս տունը»։

Ու արդեն սիրտ առնելով, մտավ սենյակը, զարմանքից շշմելով բացեց բերանը. Աստախովի հետ սեղան էր նստել Գրիգորին ու բաժակով կոնծում էր մուգ կանաչավուն տնական օղին, կարծես նրանց միջև ոչինչ էլ չէր պատահել։

Ստեպանը նայեց Պրոխորին, բռնազբոսիկ ժպիտով ասաց.

— Ի՞նչ ես բերանդ բացել ու բարև չես տալի։ Թե՞ զարմանք բան տեսար։

— Դե, ո՛նց ասեմ...— կոթնելով մեկ կամ մյուս ոտին, պատասխանեց զարմանքից դեռ չզգաստացած Պրոխորը։

— Լա՛վ, մի վախի, եկ նստիր,— հրավիրեց Ստեպանը։

— Նստելու ժամանակ չկա... Ես քեզ կանչելու եմ եկել, Գրիգորի Պանտելևիչ։ Հրամայված է հենց հիմի ներկայանալ գեներալ Սեկրետևին։

Գրիգորին Պրոխորի գալուց առաջ էլ մի քանի անգամ փորձել էր գնալ։ Գավաթը դեն տանելով, վեր էր կենում ու էլի նստում, վախենալով, որ եթե հեռանա, Ստեպանը դա վախկոտության արտահայտություն կհամարի։ Հպարտությունը նրան թույլ չէր տալիս հեռանալ Ակսինյայից, տեղը զիջել Ստեպանին։ Գրիգորին խմում էր, բայց օղին այլևս չէր ազդում նրա վրա։ Ու զգաստ արժեքավորելով իր դրության ամբողջ երկիմաստությունը, նա գործի վերջավորությանն էր սպասում։ Երբ Ակսինյան խմեց իր՝ Գրիգորիի կենացը, վերջինիս մի վայրկյան թվաց, թե Ստեպանը կխփի իր կնոջը։ Բայց նա սխալվեց,. Ստեպանը բարձրացրեց ձեռքը, խորդուբորդ ափով շփեց արևից սևացած ճակատը, ու կարճատև լռությունից հետո, հիացած նայելով Ակսինյային, ասաց.— «Կեցցե՛ս, կնիկ, սիրում եմ քեզ՝ համարձակությանդ համար»։

Դրանից հետո ներս մտավ Պրոխորը։

Մի փոքր մտածելով, Գրիգորին որոշեց չգնալ, սպասել, որ Ստեպանը բացվի։

— Գնա այնտեղ և ասա, որ ինձ չգտար։ Հասկացա՞ր,— դիմեց նա Պրոխորին։

— Հասկանալը հասկացա։ Միայն թե ավելի լավ կլիներ, Պանտելեիչ, գնայիր այնտեղ։

— Քո գործը չի։ Հա՛յդա։

Պրոխորը քայլեց դեպի դուռը։ Բայց այստեղ անսպասելիորեն միջամտեց Ակսինյան։ Առանց Գրիգորիին նայելու նա չոր տոնով ասաց.

— Չէ, ի՞նչ կարիք կա, գնացեք միասին, Գրիգորի Պանտելեիչ։ Շնորհակալություն, որ եկաք, հյուր եղաք, մեզ հետ ժամանակ անցկացրիք... Միայն թե ուշ է արդեն, աքլորները երկրորդ անգամ կանչեցին։ Շուտով կլուսանա, իսկ ես ու Ստյոպան առավոտ ծեգին պետք է տուն գնանք... Դե, դուք էլ բավական խմել եք։ Հերիք է։

Ստեպանը չպնդեց մնալ, ու Գրիգորին վեր կացավ։ Հրաժեշտ տալով, Ստեպանը Գրիգորիի ձեռքը պահեց իր սառն ու կոշտ ձեռքի մեջ, կարծես ուզում էր վերջին անգամ մի բան ասել, բայց այնպես էլ չասաց, լուռ, աչքերով ուղեկցեց Գրիգորիին մինչև դուռը, ձեռքը դանդաղ մեկնեց կիսատ մնացած շշին...

Գրիգորին հենց որ դուրս ելավ փողոց, սարսափելի հոգնածություն զգաց։ Դժվարությամբ շարժելով ոտները, հասավ մինչև առաջին խաչ-փողոցը, խնդրեց իր ետևից կրընկակոխ եկող Պրոխորին.

— Գնա թոմքիր ձիերը ու բեր այստեղ։ Ոտով տեղ չեմ հասնի...

— Զզեկուցե՞մ, որ դու գալիս ես։

— Ոչ։

— Լավ, սպասիր, ես շուտով կվերադառնամ։

Ու միշտ դանդաղաշարժ Պրոխորը այս անգամ արագ վազ տվեց դեպի բնակարանը։

Գրիգորին նստեց ցանկապատի տակ, վառեց ծխախոտը։ Մտքերի մեջ վերականգնելով Ստեպանին հանդիպելը, անտարբերությամբ մտածեց՝ «էհ, ի՞նչ արած, հիմի նա գիտե։ Միայն թե չծեծի Ակսինյային»։ Հետո հոգնածությունը և իր ապրած հուզմունքը նրան ստիպեցին պառկել։ Նա ննջեց։

Շուտով Պրոխորը բերեց ձիերը։

Լռությամբ անցան Դոնի մյուս կողմը, ձիերը քշեցին արագ վարգով։

Լուսաբացին մտան Տատարսկի։ Գրիգորին իրենց բակի դարպասի մոտ իջավ ձիուց, սանձը գցեց Պրոխորին, շտապելով և հուզվելով գնաց տուն։

Կիսամերկ Նատալյան ինչ-որ բանի համար դուրս եկավ հաշտը։ Տեսնելով Գրիգորիին, նրա քնաթաթախ աչքերը ուրախության այնպիսի պայծառ, ճառագող լույսով բռնկվեցին, որ Գրիգորիի սիրտը դողաց ու մի ակնթարթ անսպասելիորեն թրջվեցին աչքերը։ Իսկ Նատալյան լուռ գրկում էր իր միլուճարին, ամբողջ մարմնով սեղմվում նրան, ու Նատալյայի ուսերի ցնցումներից Գրիգորին հասկացավ, որ նա լալիս է։

Գրիգորին մտավ տուն, համբուրեց հորն ու մորը և օթախում քնած երեխաներին, կանգնեց խոհանոցի մեջտեղում։

— Էհ, ո՞նց անցկացրիք, ամեն ինչ բարեհաջո՞ղ է,— հարցրեց հուզմունքից շնչասպառ։

— Փառք աստծու, զավակս, վախենալու բան էր, ամա շատ նեղություն չտվեցին,— արագ պատասխանեց Իլյինիչնան ու, շեղակի նայելով լացակումած Նատալյային, բարկացկոտ բղավեց նրա վրա.— Ուրախանալ է պետք, իսկ դու լաց ես լինում, դմբո։ Դեհ, պարապ մի կանգնի, փայտ բեր վառարանը վառելու...

Մինչդեռ Իլյինիչնան և Նատալյան շտապ-շտապ նախաճաշ էին պատրաստում, Պանտելեյ Պրակոֆևիչը որդու համար մի մաքուր երեսսրբիչ բերեց, առաջարկեց՝

— Լվացվիր, ես ջուր կլցնեմ ձեռքերիդ։ Գլուխդ կհովանա... Օղու հոտ է փչում քեզնից։ Երևի երեկ խմել ես ուրախությունից, հա՞։

— Այդպես է եղել։ Միայն թե առայժմ հայտնի չէ՝ ուրախությունից թե դարդից...

— Ո՞նց թե,— անասելի զարմացավ ծերունին։

— Սեկրետևը շատ է չարանում մեզ վրա։

— Դե, այդ փորձանք չի։ Մի՞թե նա էլ էր քեզ հետ խմում։

— Հա՛, էլի։

— Օ-հո-հո-ո՛, ա՛մա թե պատվի ես արժանացել, Գրիշկա։ Իսկական գեներալի հետ սեղան ես նստել։ Տեսնք, է՛.— ու Պանտելեյ Պրակոֆևիչը խանդաղատանոք նայելով որդուն, հիացած ծնթացրեց լեզուն։

Գրիգորին ժպտաց։ Նա չէր, որ պիտի բաժաներ ծերունու միամիտ հրճվանքը։

Զուսպ հարցուփորձ անելով, թե արդյոք պահպանվե՞լ են անասունները և գույքը և ինչքան հացահատիկ է փչացել, Գրիգորին նկատում էր, որ տնտեսության վերաբերյալ խոսակցությունը այնպես չի հետաքրքրում հորը, ինչպես առաջ։ Ծերունու մտքում ինչ-որ ավելի կարևոր մի բան կար, ինչ-որ մտահոգված էր նա։

Եվ նա բացվեց, առանց հապաղելու.

— Բա հիմի ո՞նց կլինի, Գրիշենկա։ Մի՞թե էլի պետք է ծառայել։

— Այդ ո՞ւմ մասին ես ասում։

— Ծերերի մասին։ Զորօրինակ, վերցնենք ինձ։

— Առայժմ հայտնի չէ։

— Ուրեմն պետք է կովի՞ դուրս գալ։

— Դու կարող ես մնալ։

— Ի՞նչ ես ասու-ո՞ւմ,— ուրախացած բացականչեց ծերունին ու սկսեց հուզված, կաղ-կաղ քայլել խոհանոցում։

— Նստիր, էլի, կաղ սատանա։ Աղբը ոտներովդ դես-դեն մի տանի։ Ուրախացա՛վ, վա՛ղ տվեց ոնց որ լղար թուլա,— խստությամբ բղավեց Իլյինիչնան։

Բայց ծերունին ուշադրություն էլ չդարձրեց բղավոցի վրա։ Ժպտալով ու ձեռները շփելով, մի քանի անգամ ետ ու առաջ քայլեց սեղանից մինչև վառարանը։ Այնտեղ նրա մեջ կասկած առաջացավ.

— Դու կարո՞ղ ես ինձ ազատել։

— Իհարկե, կարող եմ։

— Թուղթ կգրե՞ս։

— Բա ո՞նց։

Ծերունին շշկլվեց տատանմունքից, բայց այնուամենայնիվ հարցրեց.

— Բա թուղթը, ո՛նց կլինի... Առանց կնիքի։ Թե՞ քեզ մոտ կնիք էլ կա։

— Առանց կնիքի էլ կանցնի,— ժպտաց Գրիգորին։

— Դե, ուրեմն էլ ի՞նչ խոսք,— նորից ուրախացավ ծերունին.— Աստված քեզ առողջություն տա։ Բա դու ինքդ ե՞րբ ես գնալու։

— Վաղը։

— Քո զորամասերը առա՞ջ են գնացել։ Ուստ-Մեդվեդիցայի կո՞ղմը։

— Այո։ Իսկ քեզ համար, ապի, մի՛ անհանգստանա։ Միևնույն է, շուտով այնպիսի ծերունիներին, ինչպես դու, պետք է տուն թողնեն։ Դուք արդեն վերջացրել եք ձեր ծառայությունը։

— Տա՛ աստված,— Պանտելեյ Պրակոֆևիչը խաչակնքեց և ըստ երևույթին վերջնականապես հանգստացավ։

Երեխաները արթնացան։ Գրիգորին գրկեց նրանց, նստեցրեց ծնկներին ու հերթով նրանց համբուրելով, ժպտալով, երկար լսում էր նրանց ուրախ ծլվլոցը։

Ինչ լա՛վ են բուրում այդ երեխաների մազերը։ Արևի, խոտաբույսերի, տաք բարձի ու անսահմանորեն հարազատ էլի ինչ-որ բանի բույրն է դա։ Ու նրանք,— իր միս ու արյունը,— կարծես տափաստանային փոքրիկ թռչնակներ լինեն։ Որքա՞ն անվարժ էին թվում հոր մեծ, սև ձեռքերը, որ գրկել էին նրանց։ Եվ որքան օտար տեսք ուներ նա այդ խաղաղ շրջապատում,— նա, ձիավոր մարդը, որ մի օրով թողել էր ձին, նա, որ ամբողջովին ներթափանցված էր զինվորական և ձիու քրտնքի բարկ հոտով, երթերի և փոկե հանդերձանքի դառը հոտով...

Արցունքների մշուշային շղարշը սքողում էր Գրիգորիի աչքերը, բեղերի տակին դողում էին շրթունքները... Նա մի երեք անգամ չպատասխանեց հոր հարցերին ու միայն այն ժամանակ մոտեցավ սեղանին, երբ Նատալյան քաշեց նրա վերնաշապկի թևքից։

Ո՛չ, ոչ, Գրիգորին հիմա բոլորովին այն չէր, ինչ որ առաջ։ Չէ՞ որ նա երբեք էլ առանձնապես զգայուն չէր եղել և նույնիսկ մանկության օրերում էլ հազվադեպ էր լալիս։ Եվ ահա այս արցունքները, սրտի խուլ և արագ զարկերը և այնպիսի մի զգացում, որ կարծես կոկորդում անձայն մի զանգակ է խփում... Սակայն այդ ամենը կարող էր լինել նաև այն պատճառով, որ գիշերը նա շատ էր խմել և անքուն էր մնացել...

Եկավ Դարյան, որ կովերը տարել էր արոտավայր։ Նա ժպտացող շուրթերը մոտեցրեց Գրիգորիին, ու երբ վերջինս

հեգնաբար բեղերը հարթելով, դեմքը մոտեցրեց նրան, Դարյան փակեց աչքերը։ Գրիգորին տեսավ, թե ինչպես, ասես քամուց, դողացին նրա արտևանունքները, ու մի ակընթարթ զգաց օծանելիքի սուր հոտը, որ գալիս էր Դարյայի չխամրող այտերից։

Եվ ահա Դարյան էլի նույնն էր։ Թվում էր, որ ոչ մի վիշտ չէր կարող նրան չէ՛ թե ընկճել, այլ թեկուզ թեքել գետնին։ Աշխարհում նա ապրում էր ինչպես կարմիր ուռի ճյուղը. ճկուն էր, գեղեցիկ ու մատչելի։

— Ծաղկո՞ւմ ես,— հարցրեց Գրիգորին։

— Ոնց որ խելառ խոտը ճամփի կողքին,— կկոցելով ճառագայթող աչքերը, կուրացուցիչ կերպով ժպտաց Դարյան։ Ու իսկույն մոտեցավ հայելուն՝ լաչակի տակից դուրս թափված մազերը շտկելու, կոկվելու։

Այդպես էր նա, Դարյան։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Պետրոյի մահը կարծես արթնացրեց նրան, ու մի փոքր ուշքի գալով իր ապրած վշտից, նա սկսեց է՛լ ավելի ագահորեն ապրել, է՛լ ավելի ուշադիր լինել դեպի իր արտաքինը...

Արթնացրին ամբարում քնած Դունյաշկային։ Աղոթեցին ամբողջ ընտանիքով սեղան նստեցին։

— Օ-օ՛, ո՛նց ես ծերացել, աղբերս,— ափսոսանքով ասաց Դունյաշկան.— դարձել ես մի տեսակ նոթոտ, ոնց որ գելը։

Գրիգորին սեղանի վրայով լուռ ու անժպիտ նայեց նրան, հետո ասաց.

— Ես այսպես էլ պետք է լինեմ։ Ես պետք է ծերանամ, իսկ դու պետք է կյանք մտնես, փեսացու փնտրես... Միայն ա՛յ թե ինչ կասեմ քեզ. այսօրվանից Միշկա Կոշևոյի մասին մտածելն էլ մոռացիր։ Եթե լսեմ, որ դու սրանից հետո էլ նրա համար հալումաշ ես լինում, ոտս կդնեմ մի ոտիդ վրա, մյուս ոտդ կքաշեմ ու քեզ երկու կտոր կանեմ ինչպես գորտին։ Հասկացա՞ր։

Դունյաշկան կարմրեց կակաչի նման, արցունքների միջից նայեց Գրիգորիին։

Վերջինս նրանից չէր կտրում զայրացկոտ հայացքն ու իր ամբողջ դաժանացած դեմքը,— բեղերի տակին սպառնալից կերպով բացվող ատամները, կկոցված աչքերը է՛լ ավելի պարզ էին արտահայտում այն, ինչ որ բնածին էր Մելեխովների մեջ, գազանաբարո էր։

Բայց Դունյաշկան էլ նույն ցեղից էր. շփոթմունքից և վիրավորանքից ուշքի գալով, նա կամացուկ, բայց վճռակտորեն ասաց.

— Գիտե՞ս ինչ, աղբերս, սրտին հրամայել չես կարող։

— Պետք է պոկել այդ տեսակ սիրտը, որը քեզ չի լսի,— սառը տոնով խորհուրդ տվեց Գրիգորին։

«Դրա մասին դու չպետք է խոսես, զավակս...»— Մտածեց Իլյինիշնան։ Բայց այստեղ խոսակցության մեջ մտավ Պանտելեյ Պրակոֆևիչը։ Բռունցքը խփելով սեղանին, բղավեց.

— Ջենդ կտրի՛, շան աղջիկ։ Ես քեզ սիրտ ցույց կտամ, մազերդ կպոկեմ գլխիցդ։ Հլա մունտռիկի՛ն մտիկ։ Հիմի կգնամ, կվերցնեմ երասանները...

— Հայրիկ, մեզ մոտ ոչ մի երասան չի մնացել։ Ինչ որ կար, տարել են,— խոնարհ տեսքով ընդհատեց Դարյան ծերունուն։

Պանտելեյ Պրակոֆևիչը աչքերը կատաղաբար չռեց նրա վրա ու առանց ձայնը ցածրացնելու շարունակեց թափել բարկությունը.

— Կվերցնեմ ձիու փորքաշը ու այնպե՞ս կքոթակեմ...

— Փորքաշը նույնպես տարել են կարմիրները,— արդեն ավելի բարձր ձայնով վրա բերեց Դարյան՝ շարունակելով անմեղ աչքերով նայել կեսարին։

Պանտելեյ Պրակոֆևիչն այդ արդեն չէր կարող տանել։ Նա մի վայրկյան նայեց հարսին՝ կարմրատակելով համր զայրույթից, հորանջելուց լայն բանալով բերանը (այդ ակընթարթում նա նման էր ջրից հանած ձկան), հետո էլ խռպոտ բղավեց.

— Լռիր, անիծված, շան ծիծ կերած։ Ջեն թողնում, որ մարդ մի խոսք ասի։ Սա ի՞նչ բան է։ Դույնկա, լա՛վ իմացիր, հա՛-ա. այդ երբեք չի լինի։ Հոր խոսք եմ ասում քեզ։ Գրիգորին դրուստ ասավ. թե որ այդ տեսակ սրիկայի մասին մտածես, քեզ սպանելն էլ քիչ է։ Միթամ մա՞րդ ես գտել։ Կախելու արժանի սրիկան դաղել է սիրտդ, հա՞-ա։ Բա նա մա՞րդ է։ Այդ տեսակ ները իմ փեսան լինի, հա՞-ա։ Թող հի-

մի պատահեր ինձ, հենց իմ ձեռքովը կսպանեի։ Մեկ էլ որ բերանս ես բաց արել, կվերցնեմ բիրը ու քեզ...

— Է-է՛-հե՛, ցերեկը ճրագով էլ որ ման գաս, տանը բիր չես գտնի,— հոգոց հանելով ասաց Իլյինիչնան.— տուն ու տեղներս ամայացել է, կպչանի համար էլ ցախի կտոր չես գտնի։ Ա՛յ թե ինչ օրի հասանք։

Պանտելեյ Պրակոֆևիչը այդ պարզ դիտողության մեջ էլ շարամտություն տեսավ։ Քարացած աչքերով նայեց պառավին, խելագարի պես վեր թռավ, դուրս վազեց։

Գրիգորին վար դրեց գդալը, դեմքը ծածկեց երեսսրբիչով ու սկսել ցնցվել անձայն քրքիջից։ Նրա բարկությունը անցել էր, ու նա այնպես էր ծիծաղում, ինչպես վաղուց ի վեր չէր ծիծաղել։ Բոլորն էլ ծիծաղում էին, բացի Դունյաշկայից։ Սեղանի շուրջ ուրախ աշխուժություն էր տիրում։ Բայց հենց որ մուտքի սանդուղքը դմբդմբաց Պանտելեյ Պրակոֆևիչի քայլերից, բոլորի դեմքերն էլ լրջացան։ Ներունին ներխուժեց մրրիկի նման, ետևից քարշ տալով լաստենու մի երկար ձող։

— Հրե՛ս, ա՛յ։ Անիծվածներ, որ շատ խոսեք, բոլորիդ վրա էլ կջարդեմ սա։ Երկարապո՛ղ ջադուներ... բիր չկա, հա՞-ա։ Բա սա ի՞նչ է։ Քեզ էլ բաժին կհասնի, քավթառ սատանա։ Դուք կտեսնեք սրա համը...

Ձողը չէր տեղավորվում խոհանոցում, ու ծերունին զրխկոցով դա գցեց հաշտը՝ շուռ տալով չուգունե կճուճը ու, ծանր շնչելով, նստեց սեղանի մոտ։

Նրա տրամադրությունը պարզապես փչացած էր։ Նա ֆսսում էր ու լուռ ուտում։ Լռում էին նաև մյուսները։ Դարյան սեղանից չէր բարձրացնում աչքերը, վախենալով, որ կծիծաղի։ Իլյինիչնան հոգոց էր հանում և հազիվ լսելի շշնջում՝ «Օֆ, տե՛ր աստված, տեր աստվա՛ծ, թո՛ղ մեր ծանր մեղքերը»։ Միայն Դունյաշկան բոլորովին տրամադիր չէր ծիծաղելու, ու Նատալյան էլ, որ ծերունու բացակայությամբ ժըպտում էր ինչ-որ բռնաղբոսիկ ժպիտով, նորից տխրեց ու կիտեց հոնքերը։

— Ա՛ղ տուր, հա՛ց,— մի-երկու անգամ ահարկու մռնչաց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ կայծկլտող հայացքներ նետելով բոլորի վրա։

Ընտանեկան զժտությունը բավական անսպասելի վախճան ունեցավ։ Ընդհանուր լռության մեջ Միշատկան պապին շանթեց նոր վիրավորանքով։ Նա հաճախ լսել էր, թե ինչպես տատիկը վեճի ժամանակ հայհոյանքի ամեն տեսակ խոսքեր էր ասում պապին ու, մանկականորեն խոր հուզվելով, որ պապը պատրաստվում էր ծեծել բոլորին ու գոռում էր ամբողջ տնով մեկ, դողացնելով պնչերը, հանկարծ զրնգաձայն ասավ.

— Կոիվդ պրծա՞վ, կաղ սատանա։ Պետք է դագանակով զարկել գլխիդ, որ չվախեցնես մեզ ու տատիկին...

— Այդ ի՞նձ ես ասում... այսինքս պապի՞դ... հա՞։

— Քե՛զ,— քաջաբար հաստատեց Միշատկան։

— Բա ո՞նց կարելի է հարազատ պապին... այդ տեսակ խոսքեր ասել, հը՞։

— Բա ինչո՞ւ ես դալմաղալ անում։

— Ա՛յ քեզ սատանի ճո՛ւտ,— հարթելով մորուքը, Պանտելեյ Պրակոֆևիչը զարմացած նայեց բոլորին։— Այդ խոսքերը, քավթառ ագռավ, քեզանից է լսել, հա՛-ա։ Դո՛ւ ես սովորեցնում։

— Ո՞վ է սովորեցնում որ։ Հենց քեզ ու հորն է քաշել խելառը,— բարկությամբ արտասանեց Իլյինիչնան։

Նատալյան վեր կացավ ու շրմփացրեց Միշատկային, ասելով՝

— Մի՛ սովորի այդպես խոսել պապի հետ, մի՛ սովորի։

Միշատկան տզզաց, երեսը դրեց Գրիգորիի ծնկներին։ Իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը, որ հոգի էր տալիս թոռների համար, վեր թռավ սեղանից ու արտասվելով, չսրբելով մորուքի վրա ծորող արցունքները, ուրախ գոչեց.

— Գրի՛շկա, որդիս, ապրի՛ մերդ։ Դրուստ խոսք ասավ պառավը։ Մե՛զ է քաշել, Մելեխովների արյունն է... Ա՛յ թե ոնց երևաց այդ բանը... Սա ոչ մեկի դեմ չի լռի... Թոռնի՛կս, ջանիս կտոր... Դեհ, զա՛րկ անխելք ծերունուն ինչով կուզես... Քաշի՛ մորուքից...— Ու ծերունին Գրիգորիի ձեռքից վերցնելով Միշատկային, բարձրացրեց նրան իր գլխից վեր։

Վերջացնելով նախաճաշը, վեր կացան սեղանից։ Կանայք սկսեցին լվալ ամանեղենը, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը վառեց ծխախոտը, ու դիմելով Գրիգորիին, ասաց.

— Անհարմար է քեզ խնդրել այս բանը, դու մեզ մոտ հյուր ես՝ ամա ի՞նչ արած... Օգնիր ցանկապատերը սարքենք, կալը ցանկապատենք, թե չէ բոլորը փուլ է եկել, ուրիշներին խնդրես, բան չի դուրս գա։ Բոլորի տուն ու տեղն էլ բրիշակ է եղել։

Գրիգորին սիրով համաձայնվեց, ու նրանք մինչև ճաշ աշխատում էին բակում՝ կարգի բերելով ցանկապատերը։

Բանջարանոցում ցցեր թաղելով, ծերունին հարցրեց.

— Խոտի հունձը շատ շուտով կսկսվի, ու չգիտեմ, մեր ունեցածից ջոկ էլի խոտ առնեմ թե չէ։ Դու ի՞նչ կասես տնտեսության մասին։ Արժե՞ գործը առաջ տանել։ Կարելի է մի ամսից հետո էլի կարմիրները գան, ու էլի ամեն բան գրողի ծոցը գնա, հը՞։

— Չգիտեմ, հայր,— անկեղծորեն խոստովանեց Գրիգորին։— Չգիտեմ ինչ կլինի և ով ում կգլորի։ Այնպես ապրի, որ ավելորդ բան չլինի ոչ ամբարում, ոչ էլ բակում։ Հիմի ժամանակն այնպես է, որ այդ բոլորն էլ ավելորդ է։ Հրե՛ն, վերցրու աներոջս. ամբողջ կյանքումը մեջք էր ծռում, հա՛ ետ գցում, ինքն իրեն և ուրիշներին հալումաշ անում, իսկ ի՞նչ մնաց. միայն հող ու մոխիր։

— Ա՛յ տղա, ես էլ եմ այդպես մտածում,— խեղդելով հառաչանքը, համաձայնվեց ծերունին։

Ու տնտեսության մասին էլ խոսք չբացեց։ Միայն կեսօրից հետո, նկատելով, որ Գրիգորին մի առանձին խնամքով է ամրացնում կալի դարպասը, ջղայնորեն ու չթաքցրած դառնությամբ ասավ.

— Մի կերպ սարքիր, էլի՛։ Ի՞նչ ես այդքան չարչարվում։ Դարպասը հո չպիտի հարյուր տարի մնա իր տեղը։

Ինչպես երևում էր, ծերունին միայն այժմ գիտակցեց կյանքը հին ձևով կարգավորելու իր ջանքերի ամբողջ ունայնությունը...

Արևը մայր մտնելուց առաջ Գրիգորին թողեց աշխատանքը, գնաց տուն։ Սենյակում Նատալյան մենակ էր։ Նա զուգվել էր ինչպես տոն օրը։ Նրա վրա հարմար նստել էին կապույտ բրդե շրջազգեստը ու պապլինե բաց կապույտ կոֆտան՝ կրծքի ժանյակավոր եզրերով ու ժանյակե մանժետներով։ Նրա դեմքը վարդակարմիր երանգ ուներ և մի քիչ

պլպլում էր, որովհետև նա քիչ առաջ լվացվել էր սապոնով։ Նա սնդուկի մեջ մի բան էր փնտրում, բայց տեսնելով Գրիգորին, ծածկեց կափարիչը, կանգնեց ժպտալով։

Գրիգորին նստեց սնդուկի վրա, ասաց.

— Նստիր մի բոպե, թե չէ վաղը կգնամ ու չենք խոսի։

Նատալյան հնազանդությամբ նստեց նրա կողքին, մի քիչ վախեցած աչքերով շեղակի նայեց նրան։ Բայց Գրիգորին Նատալյայի համար անսպասելի վերցրեց նրա ձեռքը, սիրալիր ասաց.

— Դու կոկլիկ ես, ոնց որ թե չես հիվանդացել։

— Լավացել եմ... Մենք, կնանիքս, կատուների պես ենք,— անհամարձակ ժպտալով ու գլուխը թեքելով ասաց Նատալյան։

Գրիգորին տեսավ քնքշորեն վարդագունած, խավով պատած նրա ականջաբլթակը ու մազափնջերի արանքում ծոծրակի դեղնավուն մաշկը, ու հարցրեց.

— Մազերդ թափվո՞ւմ են։

— Թափվել են համարյա բոլորը։ Մազ չմնաց, շուտով քաչալ կլինեմ։

— Եկ հիմի գլուխդ թրաշեմ, հը՞,— հանկարծ առաջարկեց Գրիգորին։

— Ի՞նչ ես ասում,— վախեցած բացականչեց Նատալյան։— Հետո ես ինչի՞ նման կլինեմ։

— Պետք է թրաշվել, թե չէ էլ մազ չի բուսնի։

— Մայրիկը խոսք տվեց մկրատով խուզել մազերս,— շփոթված ժպտալով ասաց Նատալյան և արագորեն գլխին գցեց ձյան պես սպիտակ, թունդ լեղակած լաչակը։

Գրիգորիի կողքին էր նա,— նրա կինը և Միշատկայի ու Պոլյուշկայի մայրը։ Գրիգորիի համար էր նա զուգվել ու մաքուր լվացել դեմքը։ Լաչակը հապճեպ գցելով գլխին, որ չերևար, թե հիվանդությունից հետո ինչպես էր այլանդակվել իր գլուխը, և այն մի քիչ կողքի թեքած, նստել էր նա այնքա՛ն ողորմելի, տգեղ և այնուամենայնիվ սիրուն, ինչ-որ ներքին մաքուր գեղեցկությամբ փայլող։ Նա միշտ բարձր օձիքներ էր կրում, որպեսզի Գրիգորիից թաքցներ մի ժամանակ իր պարանոցը այլանդակած սպին։ Այդ բո-

լորն անում էր Գրիգորիի համար... Քնքշության հզոր ալիքը ողողեց Գրիգորիի սիրտը։ Նա ուզում էր որևէ ջերմ, սիրալիր բան ասել Նատալյային, բայց խոսքեր չգտավ ու լուռ գրկեց նրան, համբուրեց սպիտակ, թեք ճակատը և տխուր աչքերը։

Ոչ, առաջ նա Նատալյային երբեք չէր ուրախացնում փայփայանքով։ Ակսինյան միշտ ծածկում էր Նատալյային։ Ամուսնու կողմից զգացմունքի այդ արտահայտությամբ հուզված և այդ հուզմունքից շիկնելով, Նատալյան վերցրեց նրա ձեռքը ու տարավ շրթունքներին։

Մի բոպե նրանք լուռ նստած էին։ Մայր մտնող արևը ոսկեպայծառ ճառագայթներ էր նետել օթախի մեջ։ Մուտքի սանդուղքի վրա աղմկում էին երեխաները։ Լսվում էր, թե Դարյան վառարանից ինչպես էր հանում թրծված կավե կճուճները, դժգոհությամբ ասում կեսուրին. «Դուք երևի ամեն օր չէիք կթում կովերը։ Մեծ կովը քիչ է կաթ տալիս»...

Արոտավայրից վերադառնում էր նախիրը։ Բառաչում էին կովերը, երեխաները շրխկացնում էին մազե ծայրերով մտրակները։ Խոպոտ ու ընդմիջումներով մռնչում էր խուտորի բուղան։ Բոռերը արյունոտելու չափ կծոտել էին նրա փափլիկ բուխախը և հուժկու, թեք մեջքը։ Բուղան շարացած թափահարում էր գլուխը. քայլելիս լայնադիր պողերը խոթելով Աստախովի հյուսած ցանկապատի մեջ, շուռ տվեց այն ու շարունակեց իր ճանապարհը։ Նատալյան նայեց պատուհանից, ասաց.

— Բուղան էլ էր անցել Դոնը։ Մայրիկը պատմում էր՝ հենց որ խուտորում սկսեցին կրակել, նա ուղղակի գոմից գնաց, լողալով անցավ Դոնը ու ամբողջ ժամանակ թաքնված էր գետապտույտի մյուս կողմում։

Գրիգորին լռում էր, մտածմունքի մեջ էր։ Ինչո՞ւ Նատալյայի աչքերը այդքան տխուր էին։ Ու դրանց մեջ էլի մի ինչ-որ զաղտուկ, անընմբռնելի բան էր մերթ երևում, մերթ չքանում։ Նա ուրախության ժամերին էլ տխուր էլ ու մի տեսակ անհասկանալի... Գուցե նա լսե՞լ էր, որ Գրիգորին Վեշենսկում հանդիպում էր Ակսինյային։ Վերջապես, Գրիգորին հարցրեց.

— Ինչո՞ւ այսօր դու այդպես թթված ես։ Ի՞նչ կա սրտումդ, Նատաշա։ Ասեիր, էլի՛։

Ու սպասում էր արցունքներ, կշտամբանքներ... Բայց Նատալյան վախեցած պատասխանեց.

— Չէ, չէ, քեզ այդպես թվաց, ոչինչ... Դրուստ է, ես հլա լավ չեմ առողջացել։ Գլուխս պտույտ է գալի, ու երբ կռանում եմ կամ մի բան բարձրացնում, աչքերս մթնում են։

Գրիգորին զննողաբար նայեց նրան ու նորից հարցրեց.

— Այստեղ առանց ինձ բան-ման չպատահե՞ց քեզ... Ձեռք չտվի՞ն։

— Չէ, ի՞նչ ես ասում։ Ես հո ամբողջ ժամանակ հիվանդ պառկած էի։— Ու նայեց Գրիգորիի հենց աչքերին, նույնիսկ մի քիչ ժպտաց։ Փոքր-ինչ լռելուց հետո հարցրեց.— Էգուց շո՞ւտ ես գնալու։

— Լույսը բացվելուն պես։

— Իսկ չի՞ կարելի մի օր էլ մնալ։— Նատալյայի ձայնը անվստահ, երկչոտ հույս արտահայտեց։

Բայց Գրիգորին գլխով բացասական նշան արեց, ու Նատալյան, հոգոց հանելով, ասաց.

— Հիմի ո՞նց է... Դու պետք է ուսադիրներո՞վ լինես։

— Հա՛, էլի՛։

— Դե, հանիր վերնաշապիկդ, կպցնեմ, քանի լույս է։

Գրիգորին տնքալով հանեց վերնաշապիկը։ Այն դեռ չէր չորացել քրտնքից։ Մեջքի և ուսերի վրա, այնտեղ, ուր մարտական ուսափոկերից պլպլալու չափ տրորված շերտեր էին մնացել, սևին էին տալիս թաց բծերը։ Նատալյան սնդուկից հանեց արևից խունացած, պաշտպանական գույնի ուսադիրները, հարցրեց.

— Սրա՞նք։

— Հենց դրանք։ Պահել ես, հա՞-ա։

— Մենք սնդուկը թաղել էինք գետնի մեջ,— թելն անցկացնելով ասեղի ծակից, կամացուկ ասաց Նատալյան, փոշոտ վերնաշապիկը գաղտուկ մոտեցրեց գեմքին և ագահությամբ ներշնչեց քրտնքի այնքա՛ն հարազատ, աղի հոտը...

— Այդ ի՞նչ ես անում,— զարմացած հարցրեց Գրիգորին։

— Քո հոտն է գալի...— աչքերը փայլեցնելով ասաց Նատալյան ու թեքեց գլուխը, որպեսզի թաքցներ թշերի վրա հանկարծակի դուրս տված կարմրությունը, ու սկսեց ճարպկությամբ բանեցնել ասեղը։

Գրիգորին հագավ վերնաշապիկը, կիտեց հոնքերը, թոթվեց ուսերը։

— Դրանցով ավելի լավ տեսք ունես դու,— ասաց Նատալյան՝ բացահայտորեն հիացած նայելով ամուսնուն։

Բայց վերջինս շեղակի նայեց իր ձախ ուսին, հոգոց հանեց.

— Երանի սրանք կյանքումս չտեսնեի։ Դու ոչինչ չես հասկանում։

Նրանք դեռ երկար նստած էին օթախում, սնդուկի վրա, ձեռք ձեռքի տված, իրենց մտքերով տարված։

Հետո, երբ իջավ մթնշաղը ու շենքերի մթին, խիտ ստվերները ընկան պաղած գետնին,— նրանք գնացին խոհանոցում ընթրելու։

Եվ ահա անցավ գիշերը։ Մինչև լուսաբաց երկնքում շողշողում էին ցոլքերը, մինչև առավոտ բալենիների այգում երգում էին սոխակները։ Գրիգորին արթնացավ, երկար պառկեց գոց աչքերով՝ ունկնդրելով սոխակների ներդաշնակ ու քաղցրահնչուն գեղգեղանքին, հետո էլ կամացուկ, աշխատելով չարթնացնել Նատալյային, վեր կացավ հագնվեց, դուրս եկավ բակը։

Պանտելեյ Պրակոֆևիչը կեր էր տալիս շարային ձիուն, ծառայակամորեն առաջարկեց.

— Սրան տանեմ լողացնեմ ճանապարհ գնալուց առաջ։

— Կարիք չկա՛,— ասաց Գրիգորին՝ կծկվելով վաղորդյան խոնավությունից։

— Լավ քնեցի՞ր,— հարցրեց ծերունին։

— Շատ քնեցի. միայն թե սոխակները արթնացրին։ Փորձանք էր, էլի, ո՞նց էին մղմղացնում ամբողջ գիշերը։

Պանտելեյ Պրակոֆևիչը հանեց ձիու կերի տոպրակը, ժպտաց։

— Նրանց գործն էլ այդ է, տղաս։ Մեկ էլ տեսար նախանձեցիր աստծու այդ թռչնիկներին... Նրանց համար ոչ կռիվ կա, ոչ էլ տնաքանդություն...

Պրոխորը ձիով մոտեցավ դարպասին։ Նա մաքուր սափրված էր ու ինչպես միշտ, ուրախ ու զրուցասեր։ Սանձը կապելով սյանը, մոտեցավ Գրիգորիին։ Նրա պարուսինե վերնաշապիկը կոկիկ արդուկված էր։ Ուսադիրները բոլորովին նոր էին։

— Դու է՞լ ես ուսադիրներ կպցրել, Գրիգորի Պանտելևիչ,— մոտենալով հարցրեց նա։— Անտերները երկար են մնացել տանը։ Հիմի դրանց մաշվել չկա։ Կհերիքեն մինչև մեր մեռնելը։ Ես կնկանս ասում եմ՝ «Շատ պինդ մի կարի, դմբո։ Մի քիչ կպցրու, որ քամին չտանի, պրծավ-գնաց»։ Թե չէ մեր բանը ո՞նց է։ Գերի կընկնես, ու թելերիցդ կճանաչեն, կիմանան, որ թեկուզ սպայի աստիճան չունես, բայց ինչքան չլինի ավագ ուրյադնիկ ես։ «Հը՛մ,— կասեն,— շուն-շանորդենի, թելեր ես ստացել, հա՞-ա, դե հիմի էլ գնդակ ստացիր»։ Փորձանքի մեջ կգցեն սրանք։ Խաթա է, էլի։

Պրոխորի ուսադիրները իսկապես որ թույլ էին կպցրած ու հազիվ էին պահվում ուսերի վրա։

Պանտելեյ Պրակոֆևիչը փա՛ռ-փառ ծիծաղեց։ Նրա ալեխառն մորուքի միջին փայլեցին ժամանակից չփչացած, սպիտակ ատամները։

— Ա՛յ քեզ զինվո՛ր մարդ։ Ուրեմն մի բան պատահեց թե չէ, ուսադիրները դեն է գցելու։

— Բա դու ի՞նչ էիր կարծում,— քմծիծաղ տվեց Պրոխորը։

Գրիգորին ժպտալով ասաց հորը.

— Տեսա՞ր, հերս, թե ինչպիսի բանբեր եմ ճարել։ Սրա հետ փորձանքի մեջ էլ որ ընկնես, իսկի չես կորչի։

— Բա ո՞նց, Գրիգորի Պանտելևիչ. ասում են՝ դու մեռիր այսօր, իսկ ես էգուց,— արդարանալով՝ վրա բերեց Պրոխորը ու հեշտությամբ պոկեց ուսադիրները, անփույթ դրեց գրպանը։— Երբ ռազմաճակատին մոտենանք, էլի կկպցնեմ։

Գրիգորին արագ նախաճաշեց. հրաժեշտ տվեց հարազատներին։

— Թող քեզ պահպանի մայր-աստվածածինը,— մոլեգնաբար շշնջաց Իլյինիչնան՝ համբուրելով որդուն։— Հիմի դու հո մեր միակուճար որդին ես...

— Էհ, երկար ճանապարհ դնելը ավելորդ արցունքներ է բերում։ Մնաք բարով,— կերկերուն ձայնով ասաց Գրիգորին ու մոտեցավ ձիուն։

Նատալյան, կեսուրի սև լաչակը գցելով գլխին, դարպասից դուրս ելավ։ Երեխաները բռնել էին նրա շրջազգեստի եզերքից։ Պոլյուշկան անմխիթար հեկեկում էր, բուռ-բուռ արցունք թափում, խնդրում մորը։

— Մի՛ թող, որ գնա, մի՛ թող, մայրիկ։ Կռվի մեջ մարդ են սպանում։ Հայրիկ, մի՛ գնա այնտեղ։

Միշատկայի շուրթերը դողում էին, բայց ո՛չ, նա չէր լալիս։ Նա արիաբար զսպում էր իրեն, բարկացկոտ ասում քույրիկին։

— Սուտ մի խաբի, դմբո։ Այնտեղ հո բոլորին չե՞ն սպանում։

Նա լավ էր հիշում պապի այն խոսքերը, թե կազակները երբեք լաց չեն լինում, թե լաց լինելը կազակների համար մեծ ամոթ է։ Բայց երբ հայրը, արդեն ձի նստած, նրան բարձրացրեց թամբի վրա ու համբուրեց, նա զարմանքով նկատեց, որ հոր թարթիչները թրջված են։ Այստեղ Միշատկան էլ չկարողացավ իրեն պահել. նրա աչքերից կարկտի պես գլորվե՞ցին արցունքները։ Նա դեմքը թաքցրեց հոր կրծքի վրա, որ գոտևորված էր փոկերով, ու ճվաց.

— Թող պապը գնա կռվելու, նա մեզ ինչի՞ է պետք որ... Ձեմ ուզու-ո՛ւմ, դու մի՛ գնա-ա՛-ա...

Գրիգորին որդուն զգուշությամբ իջեցրեց գետին, ձեռքի արտաքին կողմով սրբեց աչքերը և լուռ քշեց ձին։

Քանի՞-քանի անգամ մարտական ձին, կտրուկ շուռ գալով, սմբակներով հայրենի տան առաջ գետինը փորփրելով, նրան ճանապարհներով ու ճանապարհազուրկ տափաստանով տարել էր ռազմաճակատ, այնտեղ, ուր սև մահը հետապնդում է կազակներին, ուր, ինչպես ասված է կազակական մի երգի մեջ, «ահ ու վիշտ կա ամեն օր, ամեն ժամ»,— և ահա Գրիգորին երբեք այնպիսի ծանր սրտով չէր հեռացել խուտորից, ինչպես այդ թովիչ առավոտը։

Անորոշ նախազգացումներով, ճնշող անհանգստությամբ ու թախիծով համակված, սանձը թամբի դաշին գցած, առանց ետ նայելու նա գնում էր մինչև բլուրը։ Ճամփաբաժանում, ուր փոշոտ ճանապարհը շուռ էր գալիս դեպի հողմաղացը, ետ նայեց։ Դարպասի մոտ կանգնած էր միայն Նատալյան, ու վաղորդյան զով քամին նրա ձեռքերից քաշքշում էր սգավորի սև լաչակը։

Սահում, սահում էին կապույտ անհունում հողմից փրփրակալած ամպերը։ Հոսում էր մուժը հորիզոնի ալեձև եզերքներում։ Ձիերը գնում էին քայլքով։ Պրոխորը ննջում, ճոճվում էր թամբի վրա։ Գրիգորին ատամներն իրար սեղմելով, հաճախ ետ էր նայում։ Սկզբում նա տեսնում էր ուռենիների դալար խմբերը, Դոնի արծաթե, քմահաճորեն ծռմռված ժապավենը, հողմաղացի դանդաղ պտտվող թեվերը։ Հետո ճանապարհը դարձավ դեպի հարավ։ Ճմռթված արտերի ետևում չքացան գետառը, Դոնը, հողմացաղը... Գրիգորին ինչ-որ սուլում էր, համառորեն նայում ձիու ոսկեհուր-շիկակարմիր պարանոցին, որ ծածկված էր քրտինքի մանր ուլունքներով, ու այլևս շուռ չէր գալիս թամբի վրայից... Ջհաննա՛մը գնա պատերազմը։ Մարտեր են եղել Ձիրի, Դոնի ափերին, հետո էլ կորոտան խոպերի, Մեդվեդիցայի, Բուզուլուկի կողմերում։ Ու վերջիվերջո, արդյո՞ք միևնույն չէ, թե թշնամու գնդակը նրան որտեղ կգցի գետնին,— մտածում էր նա։

IX

Մարտը տեղի էր ունենում Ուստ-Մեդվեդիցկայա ստանիցայի մատույցներում։ Ամառային ճանապարհից դուրս գալով Հետմանական ճանապարհը, Գրիգորին լսեց թնդանոթային խուլ որոտմունքը։

Ճանապարհին ամենուրեք երևում էին կարմիր զորամասերի շտապ նահանջի հետքերը։ Հանդիպում էին մեծ քանակությամբ թողած երկանիվ սայլակներ ու բրիչկաներ։ Մատվեևսկի խուտորի մերձակայքում, հովիտում թողնված էր մի թնդանոթ՝ արկից ջարդված մարտական սոնիով ու ծռմռված օրորանով։ Առաջքի գլանիկների վրա քաշանները

շեզակի կտրատված էին։ Հովտից կես վերստ հեռավորությամբ, աղուտներում, ցածր աճած, արևից չորացած խոտաբույսերի վրա խիտ ընկած էին մարտիկների դիակները՝ պաշտպանական գույնի վերնաշապիկներով ու շալվարներով, սրունքի փաթաթաններով ու ծանր, կրունկները երկաթած կոշիկներով։ Դրանք կարմիրբանակայիններ էին, որոնց ետևից հասել և որոնց թրատել էր կազակական հեծելազորը։

Անցնելով նրանց կողքից, Գրիգորին առանց դժվարության այդ որոշեց ճմրթված վերնաշապիկների վրա չորացած արյան առատությունից, դիակների դիրքից։ Դրանք ընկել էին ինչպես հնձած խոտը։ Կազակները ժամանակ չէին ունեցել նրանց հագուստը հանելու, ակներևաբար, լոկ այն պատճառով, որ չէին դադարեցրել հետապնդումը։

Մլենու մի թփի կողքին փռվել էր մի սպանված կազակ։ Լայն տարածված նրա ոտքերի վրա կարմրին էին տալիս լամպասները։ Մոտիկում ընկած էր սպանված մի ձի, որը բաց կինամոնագույն էր, թամբած էր հին թամքով, որի հիմքը ներկված էր օքրայով։

Գրիգորիի և Պրոխորի ձիերը հոգնեցին։ Հարկավոր էր կերակրել նրանց, բայց Գրիգորին չուզեց կանգ առնել այնտեղ, ուր կարճ ժամանակ առաջ կռիվ էր տեղի ունեցել։ Նա անցավ էլի մի վերստ, իջավ մի ձորակ, կանգնեցրեց ձին։ Մոտիկ տեղում երևում էր մի լճակ՝ մինչև ցամաքը ջրից քանդված ամբարտակով։ Պրոխորը մոտեցավ ափին, որի ծայրերին գետինը պնդացել ու ճաքճքվել էր, բայց իսկույն ետ դարձավ։

— Ինչո՞ւ ետ եկար,— հարցրեց Գրիգորին։

— Գնա, տես։

Գրիգորին ձին քշեց դեպի ամբարտակը։ Ողողատում ընկած էր մի սպանված կին։ Դեմքը ծածկված էր կապույտ շրջազգեստի փեշով։ Անամոթաբար ու սարսափելիորեն տարածված էին հաստ, սպիտակ ոտները՝ արևակեզ սրունքներով ու ծնկների փոսիկներով։ Զախ ձեռքը դրված էր մեջքի տակ։

Գրիգորին հապճեպ իջավ ձիուց, հանեց գլխարկը, կռացավ և սպանվածի շրջազգեստը քաշեց նրա ծնկներին։ Կնոջ

թուխ, ջահել դեմքը մահից հետո էլ գեղեցիկ էր։ Տանջանքից ծռմռված, սև հոնքերի տակին աղոտ շողում էին կիսափակ աչքերը։ Նրբակերտ, բաց բերանում սագափի նման փայլում էին իրար սեղմված, պինդ ատամները։ Մազերի բարակ մի փունջ ծածկել էր գետնի խոտին սեղմված թուշը։ Եվ այդ թշի վրայով, որը մահվան շաֆրանե-դեղին, դալուկ ստվերով էր սքողված, սողում էին անհանգիստ մրջյունները։

— Ինչպիսի՜ սիրունիկին են սպանել շան որդիները,— ցածրաձայն ասաց Պրոխորը։

Նա մի բոպե լռեց, հետո չարացած թքեց։

— Ես այդպիսի... այդպիսի տխմարների կգնդակահարեի։ Գնանք այստեղից, ի սեր աստծու։ Ես չեմ կարող նայել սրան։ Սիրտս տակնուվրա է լինում։

— Գուցե թաղե՞նք,— հարցրեց Գրիգորին։

— Ո՞նց թե, մենք հո չե՞նք կարող բոլոր մեռելներին թաղել,— վրդովվեց Պրոխորը։— Յագոդնոյում ինչ-որ բիձայի թաղեցինք, այստեղ էլ այս կնկանը... Եթե մենք դրանց բոլորին թաղենք, ձեռներիս վրա կաշի չի մնա։ Բա ինչո՞վ պիտի գերեզման փորենք։ Թրով չես փորի, աղբերս, գետինը մի արշինի չափ պնդացել է շոգից։

Պրոխորը այնքան էր շտապում, որ հազիվ կարողացավ սապոգի քիթը խոթել ասպանդակի մեջ։

Նորից բարձրացան բլուրը, և այստեղ Պրոխորը, որ լարված մտածում էր մի ինչ-որ բան՝ մասին, հարցրեց.

— Է՛, Պանտելևիչ, մենք այնքան արյուն թափելու ուժ չենք ունենա, չէ՞։

— Համարյա թե։

— Բա քո խելքը ի՞նչ է կտրում, սա շո՞ւտ կվերջանա։

— Հենց որ մեր քիթ-մռութը չարդեն, կվերջանա։

— Հա՜մա թե կյանք է, հա՜-ա, սատանեն էլ կզզվի այս տեսակ կյանքից։ Գոնե շուտ չարդեին մռութներս, էլի՜։ Գերմանու կովումը մեկ էլ տեսար մեկն ու մեկն ինքն իրեն խփեց, կտրեց մատը, ու նրան բելորովին ազատեցին, տուն ճամփեցին, իսկ հիմի թեկուզ ամբողջ ձեռքդ կտրիր, մեկ է, կստիպեն ծառայել։ Կռնատներին շարք են տանում, թոփալներին տանում են, քոռերին, գրիժա ունեցողներին տանում են, ամեն մի անպետքին տանում, մենակ թե կարենա

տմպտմպալ երկու ոտի վրա։ Բա այսպես կվերջանա՞ կռիվը։ Սատանեն էլ չի կոտորի դրանց բոլորին,— հուսալքված ասավ Պրոխորը ու շեղվեց ճանապարհից, իջավ ձիուց, ու ցածրաձայն ինչ-որ բան մոթմոթալով, սկսեց թուլացնել ձիու փորքաշը։

Գրիգորին գիշերով ժամանեց Խովանսկի խուտորը, որ գտնվում է Ուստ-Մեդվեդիցկայայի մերձակայքում։ Խուտորի ծայրում տեղավորված ուղեկալը, որ 3-րդ գնդից էր, բռնեց նրան, բայց ձայնից ճանաչելով իրենց դիվիզիայի հրամանատարին, կազակները բաց թողին նրան և, ի պատասխան նրա հարցին, հաղորդեցին, որ դիվիզիայի շտաբը գտնվում է այդ նույն խուտորում և որ շտաբի պետը, հարյուրապետ Կոպիլովը ժամառժամ սպասում է նրան։ Ուղեկալի շտաբի պետը մի կազակի հանձնարարեց Գրիգորիին ուղեկցել մինչև շտաբ, վերջում ասաց.

— Նրանք շատ են ամրացել, Գրիգորի Պանտելեիչ, ու մենք երևի շուտ չենք վերցնի Ուստ-Մեդվեդիցան։ Ասենք, գե, ո՞վ գիտի... Մեր ուժերն էլ քիչ չեն։ Ասում են, թե Մոբոզովսկուց անգլիական զորքեր են գալի։ Դուք չե՞ք լսել։

— Ոչ,— ձին քշելով, պատասխանեց Գրիգորին։

Շտաբի գրված տան պատուհանների փեղկերը պինդ փակված էին։ Գրիգորին կարծեց, թե սենյակներում ոչ ոք չկա, բայց մտնելով միջանցք, խուլ, աշխույժ խոսակցություն լսեց։ Գիշերային մթությունից հետո նրա աչքերը խիստ խտղտեց օթախի առաստաղից կախված մեծ լամպի լույսը, մախորկայի ծխի թունդ և դառն հոտը խփեց նրա քթին։

— Վերջապես, դու էլ եկար,— ուրախացած ասավ Կոպիլովը՝ երևալով սեղանի վրա շոքած՝ ծխախոտի կապտավուն ամպի միջից։— Ա՛յ մարդ, ախր մեռանք քեզ սպասելով։

Գրիգորին բարևեց ներկաներին, հանեց շինելն ու գլխարկը, մոտեցավ սեղանին։

— Փիա՜, ինչքա՜ն եք ծխել։ Շունչ քաշել չի լինի։ Բաց արեք գոնե մի պատուհանը, ի՜նչ եք թաքնվել,— դեմքը կընճռոտելով ասաց նա։

Կոպիլովի կողքին նստած Խառլամպի Երմակովը ժպտաց.

— Մենք հոտ ենք քաշել ու չենք զգում։— Ու արմունկը խփելով պատուհանի աչքին, տեղահան արեց ապակին, ուժով բացեց փեղկը։

Գիշերային թարմ օդը ներխուժեց սենյակ։ Լամպի բոցը պայծառացավ ու մարեց։

— Ա՛յ քեզ տնարարություն։ Ինչո՞ւ հանեցիր ապակին,— դժգոհությամբ ասաց Կոպիլովը՝ սեղանի վրա ինչ-որ բան փնտրելով։— Լուցկի ո՞վ ունի. զգույշ, քարտեզի մոտ թանաքն է։

Լամպը վառեցին, պատուհանի փեղկը կիսով չափ ծածկեցին, ու Կոպիլովը հապճեպ սկսեց խոսել։

— Ռազմաճակատի դրությունը, ընկեր Մելեխով, հիմա այսպես է. կարմիրները իրենց ձեռքումն են պահում Ուստ-Մեդվեդիցկայան, որը երեք կողմից պաշտպանում են մոտավորապես չորս հազար սվինով։ Ունեն բավականաչափ քանակությամբ հրետանի և գնդացիրներ։ Վանքի մոտ ու էլի մի շարք տեղերում խրամատներ են փորել։ Նրանք գրավում են Դոնի շրջակա բարձունքները։ Չի կարելի ասել, որ նրանց դիրքերը անմատչելի են, բայց, համենայն դեպս, դրանք գրավելը բավական դժվար է։ Մեր կողմից, բացի գեներալ Ֆիցխելաուրովի դիվիզիայից ու սպայական երկու գրոհական ջոկատներից, ամբողջովին վրա է հասել Բոգատիրյովի վեցերորդ բրիգադան և մեր առաջին դիվիզիան։ Բայց սա լրիվ կազմով չէ, հետևակ գունդը չկա, դեռ Ուստ-Խոպերսկու մոտ է, իսկ ձիավորները բոլորն էլ եկել են, բայց հարյուրյակների կազմը ամենևին էլ լրիվ չէ։

— Օրինակի համար, իմ գնդի երրորդ հարյուրյակում կա միայն երեսունութ կազակ,— ասաց 4-րդ գնդի հրամանատար փոխխորունժի Դուդարևը։

— Իսկ առաջ ինչքա՞ն էր,— հարցրեց Երմակովը։

— Իննսունմեկ։

— Բա դու ի՞նչպես թույլ տվիր արձակել հարյուրյակը։ Էլ ի՞նչ հրամանատար ես,— նոթերը կիտած ու մատները սեղանին տպտպացնելով, հարցրեց Գրիգորին։

— Սատանան էլ չի պահի նրանց։ Ցրվել են խուտորներում, գնացել իրենց տները։ Բայց հիմի ետ են գալիս։ Այսօր երեք հոգի են եկել։

Կոպիլովը քարտեզը մոտեցրեց Գրիգորիին, ու ճկույթով ցույց տալով զորամասերի տեղերը, շարունակեց։

— Մենք դեռ չենք մասնակցում հարձակման։ Միայն երկրորդ գունդը երեկ հետևակ շարքով հարձակվեց ահա այս ճակատամասում, բայց անհաջող։

— Կորուստները մե՞ծ են։

— Գնդի հրամանատարի զեկուցագրով երեկ նրա գնդից սպանվել ու վիրավորվել է քսանվեց մարդ։ Ասեմ ուժերի հարաբերակցության մասին. թվական գերակշռությունը մեր կողմն է, բայց հետևազորի հարձակմանը օժանդակելու համար պակասում են գնդացիրները, արկերի հարցում վատ է դրությունը։ Նրանց մարտական մատակարարման պետը խոստացել է մեզ տալ չորս հարյուր արկ և հարյուր հիսուն հազար փամփուշտ, հենց որ դրանք ստացվեն։ Բայց ախր ե՞րբ կստացվեն դրանք, իսկ հարձակվել հարկավոր է հենց վաղը, այդպես է գեներալ Ֆիցխելաուրովի հրամանը։ Նա մեզ առաջարկում է մի գունդ առանձնացնել գրոհականներին օժանդակելու համար։ Երեկ նրանք չորս անգամ գրոհի գնացին և հսկայական կորուստներ ունեցան։ Շատ համառ կերպով էին կռվում։ Ֆիցխելաուրովը առաջարկում է ուժեղացնել աջ թևը և հարվածի կենտրոնը փոխադրել այստեղ, հասկանո՞ւմ ես։ Այստեղ տեղանքը թույլ է տալիս այնքան մոտենալ հակառակորդին, որ մինչև նրա խրամատները մնա հարյուր—հարյուր հիսուն սաժեն։ Հա՛, նրա հանձնակատարը հենց նոր գնաց։ Նա ինձ ու քեզ բանավոր կարգադրություն էր բերել, որ վաղը առավոտյան ժամը վեցին գնանք խորհրդակցության, գործողությունները համակարգելու համար։ Գեներալ Ֆիցխելաուրովը և նրա շտաբը այժմ գտնվում են Մեծ Սենին խուտորում։ Ընդհանրապես խնդիրն այն է, որ հակառակորդին անհապաղ ետ քշենք, քանի դեռ Սեբրյակովո կայարանից չեն ժամանել նրա օժանդակ ուժերը։ Դոնի մյուս կողմում մերոնք այնքան էլ ակտիվ չեն... Չորրորդ դիվիզիան անցել է Խոպերը, բայց կարմիրները ուժեղ առաջակալներ են կարգել ու համառորեն իրենց ձեռքումն են պահում գեպի երկաթուղին տանող ճանապարհները։ Իսկ հիմա նրանք Դոնի վրա նավակամուրջ են գցել ու Ուստ-Մեդվեդիցկուց շտապ կարգով հանգերձանք ու ռազմամթերք են տանում։

— Կազակները գուրս են տալի, թե դաշնակիցները գալիս են, ճի՞շտ է դա։

— Լուր կա, թե Չերնիշևսկուց անգլիական մի քանի մարտկոց և տանկեր են գալիս։ Բայց ահա հարց է ծագում, նրանք այդ տանկերը ի՞նչպես պիտի անցկացնեն Դոնից։ Իմ կարծիքով տանկերի վերաբերմամբ դա սուտ է։ Դրանց մասին վաղուց են խոսում։

Սենյակում երկար լռություն տիրեց։

Կոպիլովը արձակեց սպայական դարշնագույն ֆրենչի կոճակները, շագանակագույն մազ ու մորուքով պատած, փափլիկ այտերը հենեց ձեռներին, մտազբաղ ու երկար ծամծմեց հանգած ծխախոտը։ Նրա լայնադիր, կլոր, թուխ աչքերը հոգնածորեն կկոցված էին, գեղեցիկ դեմքը սփրթնած էր անքուն գիշերներից։

Մի ժամանակ նա ուսուցչություն էր անում եկեղեցական-ծխական դպրոցում, կիրակի օրերը հյուր էր գնում ստանիցայի վաճառականների մոտ, վաճառականների կանանց հետ ֆանդ և վաճառականների հետ քիչ փողով պրեֆերանս էր խաղում, վարպետությամբ կիթառ էր նվագում և ուրախ, զրուցասեր երիտասարդ էր. հետո ամուսնացավ մի ջահել ուսուցչուհու հետ ու այդպես էլ կապրեր ստանիցայում և հավանորեն կծառայեր մինչև կենսաթոշակ ստանալը, բայց մեծ պատերազմի ժամանակ նրան կանչեցին զինվորական ծառայության։ Յունկերների ուսումնարանը ավարտելուց հետո նրան ուղարկեցին Արևմտյան ճակատ, կազակական մի գունդ։ Պատերազմը չփոխեց Կոպիլովի բնավորությունն ու արտաքինը։ Ինչ-որ անպաճույճ, խորապես քաղաքացիական բան կար նրա գեր, ցածրահասակ կերպարանքում, բարեհոգություն արտահայտող դեմքի վրա, թուր կրելու ձևի մեջ, իրենից ցածր աստիճան ունեցողների հետ վարվելու ձևի մեջ։ Նրա ձայնի մեջ բացակայում էր հրամայական շեշտը, խոսակցության մեջ չկար զինվորականներին հատուկ արտահայտությունների չոր լակոնիզմը, սպայական

տարաղը նրա վրա անճոռնի կերպով էր նստում, շարային ձգվածություն ու կեցվածք նա այնպես էլ ձեռք չբերեց ռազմաճակատում անցկացրած երեք տարում. նրա մեջ ամեն ինչ մատնում էր պատերազմում պատահական մարդուն։ Նա ավելի շատ նման էր սպայի հագուստ հագած, պարարտացած քաղքենուն, քան իսկական սպային, բայց, չնայելով դրան, կազակները նրան հարգանքով էին վերաբերվում, շտաբի խորհրդակցություններում ունկնդրում էին նրա խոսքին, ու ապստամբական հրամկազմը նրան խորապես գնահատում էր զգաստ մտքի համար, մեղմաբարո բնավորության և մարտերում ոչ ցուցական, հաճախակի արտահայտվող քաջության համար։

Մինչև Կոպիլովը Գրիգորիի շտաբի պետը անգրագետ ու անխելք խորունժի Կրուժիլինն էր։ Ձիրի ափերին տեղի ունեցած մարտերից մեկում սպանեցին նրան, ու Կոպիլովը ընդունելով շտաբը, գործը տարավ հմուտ կերպով, հաշվենկատությամբ, խելացիորեն։ Նա նույնպիսի բարեխղճությամբ էր շտաբում երկար նստում ու մշակում գործողությունների պլանները, ինչպես մի ժամանակ ուղղում էր աշակերտական տետրակները, սակայն, անհրաժեշտության դեպքում, Գրիգորիի առաջին իսկ խոսքով թողնում էր շտաբը. ձի էր նստում և, ընդունելով գնդի հրամանատարությունը, այն դեպի մարտ էր առաջնորդում։

Գրիգորին սկզբում շտաբի նոր պետին վերաբերվում էր ոչ առանց կանխակալության, բայց երկու ամսվա ընթացքում ավելի մոտիկից ճանաչեց նրան և մի անգամ կովից հետո ուղղակի ասաց. «Ես քո մասին գարշելի կերպով էի մտածում, Կոպիլով, հիմի տեսնում եմ, որ սխալվում էի, այնպես որ, դու մի կերպ ներիր, էլի»։ Կոպիլովը ժպտաց, լռեց, բայց մի փոքր կոպիտ այդ խոստովանությունը ակնհայտորեն շոյեց նրա ինքնասիրությունը։

Զուրկ լինելով պատվամոլությունից և քաղաքական կայուն հայացքներից, Կոպիլովը պատերազմին վերաբերվում էր ինչպես անխուսափելի մի չարիքի և չէր ակնկալում նրա վախճանը։ Եվ ահա այժմ էլ նա բնավ չէր մտածում, թե ինչպես կծավալվեն Ուստ-Մեդվեդիցկուն տիրանալու գործողությունները, այլ հիշում էր տնեցիներին, հայրենի ստանիցան, ու մտածում էր, որ վատ չէր լինի տուն գնալ արձակուրդով, մեկ ու կես ամսով...

Գրիգորին երկար նայեց Կոպիլովին, հետո վեր կացավ։

— Էհ, աղբեր տղերք, եկեք ցրվենք ու քնենք։ Մենք չպիտի գլուխ ցավեցնենք, թե ոնց պիտի լինի Ուստ-Մեդվեդիցան։ Մեր փոխարեն հիմի գեներալներն են մտածելու և որոշելու։ Վաղը կգնանք Ֆիցխելաուրովի մոտ, թող մեզ, դարդիմաններիս խելք ու միտք սովորեցնի... Իսկ երկրորդ գնդի մասին այսպես եմ մտածում. քանի դեռ մեր իշխանությունն է, հենց հիմի հարկավոր է գնդի հրամանատար Դուդարևին պաշտոնից իջեցնել, զրկել բոլոր աստիճան-մաստիճաններից...

— Ու մի բաժին կաշայից,— վրա բերեց Երմակովը։

— Չէ, հանաքը դենը,— շարունակեց Գրիգորին,— հարկավոր է հենց այսօր նրան նշանակել հարյուրյակի հրամանատար, իսկ գնդի հրամանատարությունը հանձնել Խառլամպիին։ Հենց հիմի թոռը այնտեղ, Երմակով, ընդունիր գունդը և առավոտյան սպասիր մեր կարգադրություններին։ Դուդարևին փոխելու հրամանը հիմի կգրի Կոպիլովը, տար քեզ հետ։ Ես այսպես եմ նայում,— Դուդարևը գործը գլուխ չի բերի։ Իսկի էլ բան չի հասկանում, մեկ էլ տեսար կազակներին տարավ փորձանքի մեջ գցեց։ Հետևակ մարտը, դա այնպիսի գործ է, որ... Այստեղ մարդկանց զուր կորուստ կլինի, եթե հրամանատարը դմբո է։

— Ճիշտ է։ Ես կողմնակից եմ Դուդարևին փոխելուն,— պաշտպանեց Կոպիլովը Գրիգորիին։

— Դու դե՞մ ես, Երմակով,— հարցրեց Գրիգորին, ինչ-որ դժգոհություն նկատելով Երմակովի դեմքի վրա։

— Չէ, ես բան չեմ ասում։ Ի՞նչ է, հոնքերս է՞լ չեմ կարող շարժել։

— Ավելի լավ։ Երմակովը դեմ չի։ Նրա հեծյալ գունդը առայժմ կվերցնի Ռյաբչիկովը։ Միխայլո Գրիգորիչ, գրիր հրամանը ու պառկիր քնելու։ Ժամը վեցին վեր կկենաս։ Կգնանք այդ գեներալի մոտ։ Ինձ հետ չորս սուրհանդակ եմ վերցնում։

Կոպիլովը զարմանքից վեր քաշեց հոնքերը.

— Ինչո՞ւ այդքան շատ։

— Ցույց տալու համար։ Մենք էլ հո պակաս մարդ չենք, դիվիզիայի հրամանատար ենք։— Գրիգորին քմծիծաղ տալով, թոթվեց ուսերը, շինելը գցեց վրան, քայլեց դեպի դուռը։

Նա պառկեց մարագի չարդախի տակ, տապճակի վրա, առանց ոտնամաններն ու շինելը հանելու։ Բակում երկար, բարձր խոսակցում էին սուրհանդակները, մոտիկ տեղում փնչում ու կերը համաչափ ծամում էին ձիերը։ Զգացվում էր չոր տարթերի և ցերեկվա շոգից չպաղած հողի հոտը։ Գրիգորին քնի մեջ լսում էր սուրհանդակների ձայներն ու ծիծաղը, լսում էր, թե ինչպես նրանցից մեկը, ջահել մի տղա, ինչպես այդ երևում էր նրա ձայնից,— թամբելով ձին, տխուր ասաց.

— Է-է-է՛, տղերք, մարդու հոգի է դուրս գալի։ Հրե՛ս, գիշեր է, դե արի ու ծրար տար, քեզ համար ոչ քուն կա, ոչ հանգիստ... Կա՛ց, է՛, սատանա, ոտդ, ո՛տդ, ասում եմ քեզ...

Մի ուրիշը խուլ, մրսած ձայնով ցածր երգեց.

— «Ծառայություն, քեզնից մենք բեզարել ենք, ձանձրացել, մեր ձիերի ոտներին ուժ ու հալ չի մնացել...»— Ու անցավ աղերսագին, նախատական շուտասելուկին.— Մի պապիրոսի թամբաքու տուր, Պրոշկա։ Ի՞նչ չոր մարդ ես, հա՛-ա։ Մոռացե՞լ ես, որ Բելավինի մոտ ես քեզ կարմիրբանակայինի ոտնամաններ տվի։ Սրիկա ես դու։ Այդ տեսակ ոտնամանների համար մի ուրիշը ողջ կյանքում կհիշեր ինձ, իսկ քեզանից մի պապիրոսի թամբաքու էլ չի դուրս գա։

Ձիու ատամների տակ զրնգաց ու շաչեց սանձի բերանոցը։ Ձին շունչ առավ ամբողջ թոքերով մեկ ու գնաց՝ պայտերը չոր շրխկացնելով կայծքարի նման չոր ու պինդ գետնի վրա։ «Բոլորն էլ դրա մասին են խոսում... Ծառայություն, քեզնից մենք բեզարել ենք, ձանձրացել»,— ժպտալով, մրտքում կրկնեց Գրիգորին ու իսկույն քնեց։ Ու հենց որ քնեց, տեսավ մի երազ, որը առաջ էլ էր տեսել. գորշ դաշտով, բարձր խոզանի վրայով գալիս են կարմիրբանակայինների շղթաները։ Որքան որ աչքդ կտրի, ձգվել է առջևի շղթան։ Նրա ետևում կա վեց թե յոթ շղթա։ Ճնշող լռության մեջ մոտենում են հարձակվողները։ Աճում, մեծանում են սև կեր-

պարանքները, և ահա արդեն երևում է, թե ինչպես սայթաքող, արագ քայլքով գալիս են, գալիս, մոտենում գնդակի թռիչքի տարածության չափ, հրացանները հորիզոնադիր բռնած վազում են մարդիկ՝ ականջավոր փափախներով, լռելյայն բացված բերաններով։ Գրիգորին պառկած է ծանծաղ խրամատում, ջղաձգաբար շարժում է հրացանի փակաղակը, հաճախակի կրակում. նրա կրակոցներից, ետ շպրտվելով, ընկնում են կարմիրբանակայինները. փամփուշտների մի նոր պահունակ է դնում, ու մի վայրկյան աչք ածելով շուրջը, տեսնում է, որ հարևան խրամատներից վեր են թռչում կազակները։ Նրանք շուռ են գալիս ու փախչում. նրանց դեմքերը ծռմռված են վախից։ Գրիգորին զգում է իր սրտի սարսափելի զարկը, գոռում է՝ «Կրակեցեք, սրիկաներ, ո՞ւր, կանգնե՛լ, չփախչել»... Նա գոռում է ամբողջ ուժով, բայց նրա ձայնը ապշեցուցիչ կերպով թույլ է, հազիվ է լսվում։ Նա սարսափով է բռնվում։ Նա նույնպես վեր է թռչում, արդեն կանգնած, վերջին անգամ կրակում է տարիքավոր, թխադեմ, ուղիղ դեպի իրեն լուռ վազող մի կարմիրբանակայինի վրա, ու տեսնում է, որ վրիպել է։ Կարմիրբանակայինը հուզված ու լուրջ, աներկյուղ դեմք ունի։ Նա վազում է թեթևակի, ոտները համարյա չեն դիպչում գետնին, հոնքերը կիտված են, փափախը քաշել է ծոծրակին, քշտել շինելի փեշերը։ Ինչ-որ մի ակնթարթում Գրիգորին դիտում է մոտ վազող թշնամուն, տեսնում նրա փայլուն աչքերը և դալուկ այտերը, որոնք ծածկված են երիտասարդական խուճուճ մորուքով, տեսնում է սապոգների կարճ, լայն ճիտքերը, մի փոքր իջեցրած հրացանի փողաբերանի սև աչքը ու դրանից վեր— վազքի տակտով ճոճվող մթին սվինի սայրը։ Անըմբռնելի սարսափը համակում է Գրիգորիին։ Նա քաշում է հրացանի փակաղակը, բայց փակաղակը չի շարժվում, լռվել է, Գրիգորին հուսահատորեն, փակաղակը խփում է ծնկին,— ո՛չ մի արդյունք։ Կարմիրբանակայինը արդեն հինգ քայլի վրա է։ Գրիգորին ետ է դառնում ու փախչում։ Նրա առջևում ամբողջ գորշ, մերկ դաշտը պատած է փախչող կազակներով։ Գրիգորին ետևից լսում է հետապնդողի ծանր շնչառությունը, լսում է նրա ոտների հնչեղ դոփյունը, բայց չի կարողանում արագացնել իր վազքը։ Պահանջվում է սարսափելի ճիգ ու

ջանք, որպեսզի ակամա ծալվող ոտներին ստիպի ավելի արագ վազել։ Վերջապես, նա հասնում է մի ինչ-որ կիսավեր, մռայլ գերեզմանոց, ցատկում տապալված ցանկապատից, փախչում փոքրիկ, ցածր գերեզմանների, ծռմռված խաչերի ու մատուռների արանքով։ Էլի մի ջանք, և նա կփրկվի։ Բայց այստեղ ետևից լսվող դոփյունը սաստկանում է, դառնում ավելի հնչեղ։ Հետապնդողի տաք շնչառությունը վառում է Գրիգորիի պարանոցը, ու հենց նույն ակնթարթում նա զգում է, թե ինչպես բռնում են իր շինելի գոտիկից ու փեշից։ Գրիգորին խուլ ճիչ է արձակում և արթնանում է։ Նա պառկած է մեջքի վրա։ Նեղ սապոգների սեղմած նրա ոտները փայտացել են, ճակատին սառն քրտինք է դուրս տվել, ամբողջ մարմինը ցավում է ասես հարվածներից։ «Փիա՛, գրողը տանի...»— խռպոտ ասում է նա, հաճույքով ունկնդրում իր սեփական ձայնին ու դեռ չի հավատում, որ իր ամբողջ տեսածն ու զգացածը երազ է։ Ապա կողքի է շուռ գալիս, շինելը քաշում գլխին, մտքի մեջ ասում. «Հարկավոր էր մոտ թողնել նրան, ետ մղել հարվածը, հրացանի կոթով գետին գլորել, հետո էլ արդեն փախչել»... Մի բոպե նա խորհրդածում է երկրորդ անգամ տեսած երազի մասին, ուրախ հուզմունք է զգում, գիտակցելով, որ այդ ամենը լոկ վատ երազ է և իրականում նրան առայժմ ոչինչ չի սպառնում. «Զարմանալի է, թե ինչո՞ւ երազի մեջ դա տասն անգամ ավելի սարսափելի է, քան արթուն ժամանակ։ Ողջ կյանքումս, ինչքան էլ որ փորձանքների մեջ եմ ընկել, այդ տեսակ վախ իսկի չեմ զգացել»,— մտածում էր նա քուն մտնելով, հաճույքով ձգում ընդարմացած ոտները։

X

Լուսաբացին Կոպիլովը արթնացրեց նրան։

— Վեր կաց, ժամանակն է պատրաստվել, մեկնել։ Հրամայված է ժամը վեցին լինել այնտեղ։

Շտաբի պետը հենց նոր էր սափրվել, մաքրել սապոգները ու հագել ճխլտված, բայց մաքուր ֆրենչը։ Ըստ երևույթին նա շտապել էր. փափլիկ այտերը երկու տեղ կտրված

էին ածելիով։ Բայց նրա ամբողջ կերպարանքում պինազգաց ձգվածություն էր նկատվում, որ առաջ հատուկ չէր նրան։

Գրիգորին քննադատաբար ոտքից-գլուխ զննեց նրան, մտածեց՝ «Ի-ի՜հ, ո՞նց է կոկվել, հա՛-ա։ Չի ուզում փնթիմնթի երևալ գեներալին...».

Կարծես հետամուտ լինելով նրա մտքերի ընթացքին, Կոպիլովն ասաց.

— Անհարմար է փնթի տեսքով ներկայանալ։ Խորհուրդ եմ տալիս դու էլ քեզ կարգի բերես։

— Այսպես էլ չի խանգարի գնալ,— ճմլկոտվելով մրթմրթաց Գրիգորին։— Ասում ես հրամայված է վեցին լինել այնտե՞ղ։ Արդեն սկսում են հրամայե՞լ ինձ ու քեզ, հա՞։

Կոպիլովը ծիծաղելով թոթվեց ուսերը.

— Նոր ժամանակ— նոր երգեր։ Ավագության կարգով մենք պարտավոր ենք ենթարկվել։ Ֆիցխելաուրովը գեներալ է, հո ինքը չի գալու մեզ մոտ։

— Այդ այդպես է։ Ուր որ գնում էինք, այնտեղ էլ հասանք,— ասաց Գրիգորին և գնաց ջրհորից լվացվելու։

Տանտիրուհին վազեվազ նետվեց տուն, բերեց մի մաքուր, ասեղնագործած երեսսրբիչ, գլուխ տալով մատուցեց Գրիգորիին։ Վերջինս երեսսրբիչի ծայրով ուժեղ տրորեց աղյուսագույն-կարմիր և պաղ ջրից զովացած դեմքը, ասաց մոտ եկող Կոպիլովին.

— Այդ այդպես է, միայն թե պարոնայք գեներալները պետք է որ մտածեին այ թե ինչի մասին. ժողովուրդը ռևոլյուցիայից հետո ուրիշ տեսակ է դարձել, ասես թե նորից է ծնվել։ Իսկ նրանք ամեն բան հին արշինով են չափում։ Արշինն էլ մեկ էլ տեսար կոտրվեց... Ծանր են շուռ գալի նրանք։ Նրանց ուղեղներին պետք է անիվի յուղ քսել, որ ճռճռոց չլինի։

— Դու այդ ինչի՞ մասին ես ասում,— անուշադիր հարցրեց Կոպիլովը՝ փչելով ու դեն գցելով թևքին կպած չոփը։

— Այն եմ ասում, որ նրանք ամեն բան հնի կողմն են ծռում։ Ա՛յ, ես գերմանական պատերազմից սպայական աստիճան ունեմ։ Արյունո՛վ եմ արժանացել սրան։ Իսկ երբ ընկնում եմ սպայական հասարակության մեջ, ոնց որ թե ցուրտ ձմռանը խրճիթից դուրս եմ գալի միայն փոխանով։

Նրանցից այնպիսի ցուրտ է փչում ինձ վրա, որ կոնակս բոլորովին սառչում է.— Գրիգորին կատաղաբար փայլեցրեց աչքերը և իրեն համար աննկատելի կերպով բարձրացրեց ձայնը։

Կոպիլովի դժգոհությամբ նայեց շուրջը, շշնջաց.

— Կամաց, սուրհանդակները լսում են։

— Հարց է ծագում, ինչո՞ւ է այդպես,— ձայնը ցածրացնելով շարունակեց Գրիգորին։— Որովհետև ես նրանց համար ճերմակ ագռավ եմ։ Նրանց ձեռքերը կոկլիկ են, իսկ իմ ձեռքերը կոշտ-մոշտ են, ոնց որ սմբակ։ Նրանք քստքստացնում են ոտները, իսկ ես ոնց էլ որ շուռ գամ, ամեն բանի կպչում եմ։ Նրանցից երեսի սապոնի ու կնկա զանազան քսվածքների հոտ է փչում, իսկ ինձանից ձիու մեզի ու քրտնքի հոտ է գալիս։ Նրանք բոլորն էլ ուսումով են, իսկ ես դժվարությամբ եմ ավարտել եկեղեցական դպրոցը։ Ես ոտից գլուխ օտար եմ նրանց։ Այ թե ինչու է այդպես։ Դուրս եմ գալիս նրանց մոտից և ինձ թվում է, թե երեսիս փառ է նրստել. ջանս խտուտ է գալիս, ինձ կեղտի մեջ եմ զգում ու թունդ ուզում եմ մաքրվել։— Գրիգորին երեսսրբիչը գցեց ջրհորի փայտվածքին, մի կտոր ոսկրե սանրով սանրեց մազերը։ Նրա թուխ դեմքի վրա խիստ սպիտակին էր տալիս արևից չսևացած ճակատը։— Նրանք չեն ուզում հասկանալ, որ ամբողջ հինը փուլ է եկել, բրիշակ եղել,— արդեն կամացուկ ասաց Գրիգորին։— Նրանք կարծում են, թե մենք ուրիշ խմբից ենք թխված, թե ուսում չունեցող, հասարակ մարդը անասունի պես է։ Նրանք կարծում են, թե ռազմական գործում ես կամ ինձ նման մեկ ուրիշը իրենցից քիչ բան ենք հասկանում։ Իսկ կարմիրների մոտ ովքե՞ր են հրամանատարները։ Բուդյոննին սպա՞ է, հա՞։ Հին ծառայության վախմիստր է, բա նա չէ՞ր, որ ծնկի էր բերում գլխավոր շտաբի գեներալներին։ Նրանից չէ՞ր, որ փախչում էին սպայական գնդերը։ Գուսելշչիկովը կազակական գեներալներից ամենամարտականն է, փառավոր գեներալ է, իսկ նա չէ՞ր, որ այս ձմեռ միայն փոխանը հագին ծլկեց Ուստ-Խոպերսկուց։ Գիտե՞ս ով նրա հետևից հասավ սլկուն տեղում. մոսկովցի մի ինչ որ փականագործ,— կարմիր գնդի հրամանատարը։ Գեբիները հետո խոսում էին նրա մասին։ Սա պետք է հասկանալ։ Բա մենք՝ ուսում չունեցող սպաներս, կազակներին վա՞տ էինք ղեկավարում ապստամբության ժամանակ։ Գենեբալները շա՞տ էին օգնում մեզ, հա՞։

— Քիչ չէին օգնում,— նշանակալից պատասխանեց Կոպիլովը։

— Դե, կարելի է օգնում էին Կուդինովին, իսկ ես կռիվ էի գնում առանց օգնության ու խփում կարմիրներին, առանց ուրիշի խորհուրդները լսելու։

— Ուրեմն ի՞նչ, ռազմական գործում դու ժխտո՞ւմ ես գիտությունը։

— Ոչ, ես գիտությունը չեմ ժխտում։ Բայց, աղբերացու, պատերազմի մեջ դա չէ գլխավորը։

— Իսկ ի՞նչն է, Պանտելեևիչ։

— Այն գործը, որի համար կռիվ ես գնում...

— Դե, այդ արդեն ուրիշ բան է...— Կոպիլովը զգուշությամբ ժպտալով շարունակեց.— Ինքնըստինքյան հասկանալի է... Այդ գործում իդեան գլխավորն է։ Հաղթում է միայն նա, ով հաստատ գիտե, թե ինչի համար է կռվում, ու հավատում է իր գործին։ Այս ճշմարտությունը հին է ինչպես աշխարհը, և դու իզուր ես այն ներկայացնում իբրև քո հայտնագործություն։ Ես կողմնակից եմ հին, լավ ժամանակին։ Այլապես ես մատս էլ չէի շարժի, չէի գնա ինչ-որ բանի համար կռվելու։ Բոլոր նրանք, ովքեր մեզ հետ են, այնպիսի մարդիկ են, որոնք զենքի ուժով պաշտպանում են իրենց հին արտոնությունները, խաղաղացնում բունտ բարձրացրած ժողովրդին։ Ես ու դու էլ պատկանում ենք այդ խաղաղացնողների թվին։ Բայց ես վաղուց հետամուտ եմ լինում քեզ, Գրիգորի Պանտելեևիչ, ու չեմ կարողանում քեզ հասկանալ...

— Հետո կհասկանաս։ Եկ գնանք,— ասաց Գրիգորին ու քայլեց դեպի շարդախը։

Տանտիրուհին, որ հետևում էր Գրիգորիի յուրաքանչյուր շարժման, ցանկանալով գոհացնել նրան, առաջարկեց.

— Գուցե կա՞թ խմեք։

— Շնորհակալություն, մայրիկ, կաթ խմելու ժամանակ չկա։ Հետո կխմենք։

Պրոխոր Զիկովը շարդախի մոտ ագահությամբ մածուն էր ուտում թասից։ Տեսնելով, որ Գրիգորին արձակում է ձին, նա ամենևին էլ չշարժվեց տեղից։ Վերնաշապկի թևքով սրբեց շրթունքները, հարցրեց.

— Ո՞ւր ես գնում։ Ես է՞լ պիտի գամ քեզ հետ։

— Գրիգորին ցասկոտեց, սառը կատաղությամբ ասաց.

— Դու, քոսոտ, սևահոգի հիմար, ծառայությունը չգիտե՞ս, ինչ է։ Ինչո՞ւ ձին կանգնել է սանձը բերանին։ Ո՞վ պետք է ձին մատուցի ինձ, հը՞։ Գրողի տարած, կխտվում ես հա՛ զխտվում, իսկի չես կշտանում։ Հա՛-պա՛. դեն գցի գդալը։ Կարգապահություն չգիտե՝ս, հա՞... Սատանի ծնունդ։

— Էլ ի՞նչ ես շարանում,— նեղանալով մոթմոթաց Պրոխո՛րը տեղավորվելով ձիու վրա։— Բղավում ես զուր տեղը։ Միթամ մեծ բան ես, էլի՛։ Ճամփա գնալուց առաջ չե՞մ կարող մի բան ուտել, ինչ է։ Ի՞նչի համար ես դալմաղալ անում։

— Նրա համար, որ մարդու հոգի ես հանում, խոզի՛ մուութ։ Ո՞նց ես վարվում ինձ հետ, հը՞։ Հիմի գնում ենք գեներալի մոտ, տես, հա՛-ա... Սովորե՛լ ես քեզ տնավարի պահել... Ես քեզ համար ո՞վ եմ, հը՞։ Հինգ քայլ հեռու կգաս իմ ետևից,— հրամայեց Գրիգորին՝ դուրս գալով դարպասից։

Պրոխորը և մնացած երեք սուրհանդակները ետ մնացին, ու Գրիգորին Կոպիլովի հետ կողք-կողքի գնալով, շարունակելով սկսված խոսակցությունը, հեգնաբար հարցրեց.

— Հա՛, դու ի՞նչը չես հասկանում։ Գուցե ես քեզ բացատրե՞մ։

Զնկատելով ձայնի տոնի և հարցնելու ձևի մեջ եղած հեգնանքը, Կոպիլովը պատասխանեց.

— Չեմ հասկանում քո դիրքը այս գործում, այ թե ինչ։ Մի կողմից դու հնի համար պայքարող ես, իսկ մյուս կողմից,— ներիր խիստ արտահայտությունս,— բոլշևիկի պես մի բան ես։

— Ինչո՞վ եմ բոլշևիկ,— Գրիգորին մռայլվեց, թամքի վրա կտրուկ շարժում արավ։

— Ես չեմ ասում բոլշևիկ, այլ բոլշևիկի պես մի բան։

— Դա մեկ է։ Ինչո՞վ— հարցնում եմ։

— Թեկուզև սպայական հասարակության, դեպի քեզ եղած վերաբերմունքի մասին քո ասած խոսքերով։ Ի՞նչ ես

ուզում այդ մարդկանցից, ասհասարակ դու ի՞նչ ես ուզում,— բարեհոգության ժպիտը երեսին ու մտրակը խաչացնելով հարցրեց Կոպիլովը։ Նա շուտ եկավ, նայեց սուրհանդակներին, որոնք աշխուժությամբ ինչ-որ դատողություններ էին անում, ու ավելի բարձր ձայնով ասաց.— Քեզ վիրավորում է այն, որ նրանք քեզ չեն ընդունում իրենց միջավայրը որպես իրավահավասար, որ նրանք բարձրից են նայում քեզ։ Բայց նրանք իրենց տեսակետով իրավացի են, սա պետք է հասկանալ։ Ճիշտ է, դու սպա ես, բայց բացարձակապես պատահական սպա ես սպայության միջավայրում։ Նույնիսկ սպայական ուսադիրներ կրելով, դու մնում ես,— ներիր ինձ, — իբրև անտաշ մի կազակ։ Դու քաղաքավարի ձևեր չգիտես, սխալ ու կոպիտ ես արտահայտվում, զուրկ ես այն բոլոր անհրաժեշտ հատկություններից, որոնք հատուկ են դաստիարակված մարդուն։ Օրինակ, փոխանակ թաշկինակով օգտվելու, ինչպես այդ անում են բոլոր կուլտուրական մարդիկ, դու խնչում ես երկու մատիդ միջոցով, ուտելու ժամանակ ձեռներդ սրբում ես մերթ սապոգներիդ ճիթքերով, մերթ մազերիդ քսելով, լվացվելուց հետո առանց զզվելու երեսդ սրբում ես ձիու տապճակով, ձեռներիդ եղունգները կամ կծոտում ես, կամ կտրում թրի ծայրով։ Կամ է՛լ ավելի լավ մի օրինակ. հիշո՞ւմ ես, ձմռանը Կարգինսկում մի անգամ իմ ներկայությամբ խոսում էիր մի ինտելիգենտ կնոջ հետ, որի ամուսնուն ձերբակալել էին կազակները, ու նրա ներկայությամբ կոճկում էիր շալվարդ...

— Ուրեմն եթե ես շալվարս առանց կոճկելու թողնեի, ավելի լա՞վ կլիներ,— նոթոտ ժպտալով, հարցրեց Գրիգորին։

Նրանց ձիերը գնում էին քայլքով, կողք-կողքի, ու Գրիգորին շեղակի նայում էր Կոպիլովին, նրա բարի դեմքին, ու նրա խոսքերը լսում ո՛չ առանց դառնության։

— Բանն այդ չէ,— սրտնեղությամբ կնճռոտելով դեմքը, բացականչեց Կոպիլովը։— Ասհասարակ, դու ի՞նչպես կարող էիր ընդունել կնոջը, եթե միայն շալվարով ու ոտաբոբիկ էիր։ Նույնիսկ կիտելդ էլ վրադ չզցեցիր, ես այդ շատ լավ եմ հիշում։ Սրանք բոլորն էլ իհարկե մանր բաներ են, բայց բնորոշում են քեզ իբրև մի մարդու, որը... Ոնց ասեմ քեզ...

— Դե պարզ ասա՛, էլի՛։

— Հա՛, իբրև մի մարդու, որը չափազանց տգետ է։ Բա խոսե՞լդ։ Սարսափելի է։ Փոխանակ ասելու կվարտիրա, ասում ես ֆատերա, փոխանակ ասելու էվակուացիա, ասում ես էկաիցա, կարծես թե-ի փոխարեն— ոնց որ թե, արտիլերիայի փոխարեն— անտիլերիա։ Ու ինչպես ամեն մի անգրագետ մարդ, դու անբացատրելի հակում ունես դեպի օտարերկրյա հնչուն բառերը, տեղի ու անտեղի ես գործածում դրանք, չափազանց աղավաղում ես, իսկ երբ շտաբային խորհրդակցություններում քո ներկայությամբ զուտ ռազմական տերմինոլոգիայից այնպիսի բառեր են արտասանվում, ինչպես, օրինակ, դիսլոկացիա, դիսպոզիցիա, կոնցենտրացիա և այլն, դու խոսողին նայում ես հիացմունքով և, ես նույնիսկ կասեի,— նախանձով։

— Է-է՛, այդ մեկը դու արդեն փչում ես,— բացականչեց Գրիգորին ու նրա դեմքով ուրախ աշխուժություն անցավ։ Նայելով ձիու ականջների արանքից, քորելով նրա բաշի տակի փափուկ ու տաք մաշկը, նա խնդրեց.— Էհ, շարունակի տեսնենք, ջարդուփշուր արա քո հրամանատարին։

— Լսիր, ի՞նչ կա ջարդուփշուր անելու։ Առանց այդ էլ պետք է քեզ համար պարզ լինի, որ այդ կողմից քո բանը հաջող չէ։ Եվ դրանից հետո դու դեռ վիրավորվում ես, որ սպաները քեզ վերաբերվում են ո՛չ որպես իրենց հավասարին։ Պատշաճության ու գրագիտության հարցերում դու ուղղակի տհաս ես.— Կոպիլովը բերանից պատահմամբ թոցրեց այդ վիրավորական բառը և վախեցավ։ Նա գիտեր, թե Գրիգորին որքան անզուսպ է իր բարկության մեջ, ու վախենում էր ցասումից, բայց անցողակի մի հայացք նետելով նրա վրա, իսկույն հանգստացավ. Գրիգորին թամբի վրա մեջքին ընկած, քմծիծաղ էր տալիս, բեղերի տակից փայլեցնում սպիտակ ատամները։ Եվ Կոպիլովի համար այնքան անսպասելի էր իր խոսքերի հետևանքը, այնքան վարակիչ էր Գրիգորիի ծիծաղը, որ նա ինքն էլ ծիծաղեց, ասելով.— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, մի ուրիշ, խելոք մարդ լաց կլիներ այսպիսի հանդիմանությունից, իսկ դու քրքջում ես... Բա դու տարօրինակ չե՞ս։

— Այդպես, ուրեմն ասում ես, որ ես տհա՞ս եմ։ Գրողի ծոցը,— ծիծաղը վերջացնելով ասաց Գրիգորին։— Չե՛մ ցան-

կանում սովորել ձեր վարվեցողությունները ու պատշաճությունները։ Դրանք եղների կողքին ինձ պետք չեն գա։ Աստված կտա, սաղ կմնամ, եղներով կզբաղվեմ, ու նրանց հոգլուխ չե՞մ տալու և ասելու՝ «Ախ, մի քիչ դենը շարժվեցեք, չալդիկ. ներեցեք ինձ, չալպտուրիկ, թույլ կտա՞ք ուղղել ձեր լուծը։ Ողորմա՛ծ տեր, պարոն եզ, խոնարհաբար խնդրում եմ՝ չծռել ակոսը»։ Նրանց հետ խոսելը կարճ է. հո՛-հո՛, պրծավ-գնաց. ահա քեզ եզան ամբողջ դիսկլոկացիան։

— Ոչ թե դիսկլոկացիա, այլ դիսլոկացիա,— ուղղեց Կոպիլովը։

— Թող դիսլոկացիա լինի, հա՛։ Համա մի բանում ես քեզ հետ համաձայն չեմ։

— Այդ ի՞նչ բան է։

— Որ ես տհաս եմ։ Քեզ համար է, որ ես տհաս եմ, համա սպասիր, ժամանակ տուր, կանցնեմ կարմիրների կողմը, նրանց մոտ արճճից էլ ծանր կլինեմ։ Այն ժամանակ թե ձեռս կընկնե-ե՛ք, քաղաքավարի ու կրթված ձրիակերներ։ Հոգիներդ կհանեմ փոր ու փսորներիդ հետ,— կատակելով թե լրջորեն ասաց Գրիգորին ու քշեց ձին, միանգամից արագ վարգի անցավ։

Դոնի շրջակայքում առավոտը այնպիսի նրբահյուս անդորրության մեջ էր բացվում, որ յուրաքանչյուր ձայն, եթե նույնիսկ թույլ էր, խախտում էր այն ու արձագանքվում։ Տափաստանում իշխում էին միայն արտույտները և լորերը, իսկ միմյանց կից խուտորներում այնպիսի անլռելի, ցածրաձայն, դղրդալի աղմուկ էր, որպիսին սովորաբար ուղեկցում է խոշոր զորամասերի տեղափոխության։ Փոսերից անցնելիս զրխկում էին հրանոթների ու լցարկղների անիվները, ջրհորների մոտ վրնջում ձիերը, համաչափ, խուլ ու մեղմ դոփում անցնող հետևակ հարյուրյակների քայլերը, դղրդում բրիչկաները և բնակչական սայլերը, որոնք ռազմամթերք ու հանդերձանք էին տանում ռազմաճակատի գիծը. շրջիկ խոհանոցներից հաճելի բուրում էին խաշված կորեկաձավար, դափնու տերևով համովացրած մսով բորշչը և նոր թխված հացը։

Հենց Ուստ-Մեդվեդիցկու մոտ ճարճատում էր հրացանային արագ փոխհրաձգությունը, ծուլորեն ու որոտալից

թնդում էին հրանոթային հատ-հատ կրակոցները։ Մարտը նոր էր սկսվում։

Գեներալ Ֆիցխելաուրովը նախաճաշում էր, երբ ցոփ կյանքից հոգնած տեսք ունեցող, տարեց համհարզը զեկուցեց.

— Ապստամբական առաջին դիվիզիայի հրամանատար Մելեխովը և դիվիզիայի շտաբի պետ Կոպիլովը։

— Խնդրիր անցնել իմ սենյակը,— Ֆիցխելաուրովը իր մեծ, ջլուտ ձեռքով դեն հրեց ձվի կճեպով լեցուն ափսեն, առանց շտապելու մի բաժակ նոր կթած կաթ խմեց ու կանոնավոր ծալելով անձեռոցը, վեր կացավ սեղանից։

Սաժենանոց հասակով, ծերունաբար ծանրաշարժ և թույլ այդ մարդը չափազանց խոշոր էր թվում կազակական այդ փոքրիկ սենյակում, որի պատուհանները փոքր էին ու դրսների դրանդիները ծռմռված։ Քայլելիս շտկելով հիանալի կարված համազգեստի կանգուն օձիքը, սաստիկ հազալով, գեներալն անցավ հարևան սենյակը, թեթև բարևեց ոտքի ելած Կոպիլովին ու Գրիգորիին և առանց ձեռք տալու, ժեստով նրանց հրավիրեց նստել սեղանի մոտ։

Թուրը բռնած, Գրիգորին զգուշությամբ նստեց տաբուրետի մի ծայրի, տակևանց նայեց Կոպիլովին։

Ֆիցխելաուրովը ծանր նստեց իրեն տակ ճռճռացող վիեննական աթոռին, ծռեց երկարասրունք ոտները, ու ձեռների խոշոր դաստակները դնելով ծնկներին, հաստ, ցածր ձայնով ասաց.

— Ես ձեզ, պարոնայք սպաներ, հրավիրել եմ մի քանի հարցեր համաձայնեցնելու համար... Ապստամբական պարտիզանական կռվի եղանակը վերջացավ։ Ձեր զորամասերը դադարեցնում են իրենց գոյությունը իբրև ինքնուրույն ամբողջություն, ասենք նրանք, ըստ էության, ամբողջություն չեն էլ եղել։ Դա ֆիկցիա է։ Նրանք միացվում են Դոնի բանակին։ Մենք անցնում ենք պլանաչափ հարձակման, ժամանակն է գիտակցել այս բոլորը և առանց առարկության ենթարկվել բարձրագույն հրամանատարության հրամաններին։ Բարեհաճեցեք պատասխանել, երեկ ձեր հետևակ գունդը ինչո՞ւ չօժանդակեց գրոհական գումարտակի հարձակման։ Ինչո՞ւ գունդը հրաժարվեց գրոհի գնալուց, չնայելով

իմ հրամանին։ Ո՞վ է ձեր, այսպես կոչված, դիվիզիայի հրամանատարը։

— Ես եմ,— ցածրաձայն պատասխանեց Գրիգորին։

— Նեղություն քաշեցեք պատասխանել հարցին։

— Ես միայն երեկ եմ եկել դիվիզիա։

— Որտե՞ղ էիք բարեհաճում լինել։

— Տուն էի գնացել։

— Դիվիզիայի հրամանատարը մարտական գործողությունների ժամանակ բարեհաճում է տա՞նը լինել։ Դիվիզիայում անկարգությո՛ւն է, սանձարձակությո՛ւն, այլանդակությո՛ւն։— Գեներալի թավ ձայնը հետզհետե ավելի բարձր էր որոտում նեղլիկ սենյակում. դռան ետևում արդեն հանձնակատարները ոտների մատների վրա էին քայլում, փսփրսում ու ծիծաղում. Կոպիլովի այտերը ավելի ու ավելի էին դունատվում, իսկ Գրիգորին, նայելով գեներալի կարմրատակող դեմքին, նրա սեղմված, ուռուցիկ բռունցքներին, ղգում էր, որ իր մեջ էլ է արթնանում անզուսպ կատաղությունը։

Ֆիցխելաուրովը անսպասելի թեթևությամբ վեր թռավ, աթոռի մեջքից բռնելով գոռաց.

— Ձեր զորամասը ոչ թե զորամաս է, այլ կարմիրգվարդիական խուժան... Կեղտոտ թափթփուկներ են և ոչ թե կազակներ։ Դուք, պարոն Մելեխով, ոչ թե դիվիզիայի հրամանատար պետք է լինեք, այլ ծառայեք իբրև սպասյակ... Կոշիկներ պետք է մաքրեք։ Լսո՞ւմ եք, հը՞... Ինչո՞ւ հրամանը չկատարվեց, հը՞։ Միտինգ չէի՞ք արել։ Չէի՞ք քննարկել։ Ականջներիդ օղ արեք, հա՛-ա, այստեղ ձեզ համար ընկերներ չկան, ու մենք չենք թույլ տա բոլշևիկյան կարգեր մըտցընել... Չե՛նք թույլ տա...

— Ես ձեզ կխնդրեի չբղավել ինձ վրա,— խուլ ձայնով ասաց Գրիգորին ու վեր կացավ, ոտքով դեն հրեց տաբուրետը։

— Ինչ ասացի՞ք,— սեղանի վրա թեքվելով, հուզմունքից հևալով, խոպոտ ասաց Ֆիցխելաուրովը։

— Խնդրում եմ չբղավել ինձ վրա,— ավելի բարձր կրկնեց Գրիգորին։— Դուք մեզ կանչել եք, որպեսզի լուծեք... — Մի վայրկյան լռեց, խոնարհեց աչքերը ու, հայացքը չկըտ-

ելով Ֆիցխելաուրովի ձեռքերից, ձայնն իջեցրեց համարյա մինչև շշնջոց։— Եթե դուք, ձերդ կերազանցություն, փորձեք ինձ դիպչել թեկուզ մի մատով,— տեղնուտեղը կթրատեմ ձեզ։

Սենյակում այնպիսի լռություն տիրեց, որ պարզ լսվում էր Ֆիցխելաուրովի անհանգիստ շնչառությունը։ Լռությունը տևեց մի րոպեի չափ։ Դուռը կամացուկ ճռնչաց։ Ներս նայեց վախեցած համհարզը։ Դուռը նույնպես կամացուկ փակվեց։ Գրիգորին կանգնել էր թրի կոթից բռնած։ Կոպիլովի ծնկները թեթև դողում էին, նրա հայացքը թափառում էր պատի վրա։ Ֆիցխելաուրովը ծանր նստեց աթոռին, ծերունաբար տնքաց, մռթմռթաց.

— Հիանալի՜ է։— Եվ արդեն բոլորովին հանգիստ, բայց առանց Գրիգորիին նայելու։— Նստեցեք։ Տաքացաք, բավական է։ Հիմա բարեհաճեցեք լսել. հրամայում եմ ձեզ բոլոր հեծյալ զորամասերը նետել... Նստե՛ցեք, է՛...

Գրիգորին նստեց, թևքով սրբեց հանկարծակի երեսին դուրս տված առատ քրտինքը։

— ...Ուրեմն, բոլոր հեծյալ զորամասերը անմիջապես փոխադրեցեք հարավ-արևելյան ճակատամաս և իսկույն հարձակման անցեք։ Աջ թևով դուք կշփվեք զորական ավագ Ջոմակովի երկրորդ գումարտի հետ...

— Ես դիվիզիան այնտեղ չեմ տանի,— հոգնածորեն ասաց Գրիգորին և ձեռքը տարավ շալվարի գրպանը՝ թաշկինակը հանելու։ Նատալյայի կարած ժանյակավոր թաշկինակով մի անգամ էլ սրբեց ճակատի քրտինքը, կրկնեց.— Դիվիզիան այնտեղ չեմ տանի։

— Ինչո՞ւ։

— Վերախմբավորումը շատ ժամանակ կխլի...

— Այդ ձեզ չի վերաբերվում։ Գործողության արդյունքի համար ես եմ պատասխանատու։

— Ոչ, վերաբերվում է, և միայն դուք չեք, որ պատասխանատու եք...

— Դուք հրաժարվո՞ւմ եք իմ հրամանը կատարելուց,— ակներևաբար ճիգ անելով զսպել իրեն, խուզոտ հարցրեց Ֆիցխելաուրովը։

— Այո։

— Այդ դեպքում նեղություն քաշեցեք անմիջապես հանձնել դիվիզիայի հրամանատարությունը։ Հիմա ինձ համար հասկանալի է, թե ինչու չէր կատարվել երեկվա իմ հրամանը...

— Ինչպես որ դուք ցանկանում եք, միայն թե ես դիվիզիան չեմ հանձնի։

— Ինչպես եք հրամայում հասկանալ ձեզ։

— Այնպես, ինչպես ես ասացի.— Գրիգորին հազիվ նկատելի ժպտաց։

— Ես ձեզ հեռացնում եմ հրամանատարությունից.— Ֆիցխելաուրովը բարձրացրեց ձայնը, ու Գրիգորին իսկույն վեր կացավ։

— Ես ձեզ չեմ ենթարկվում, ձերդ գերազանցություն։

— Դուք առհասարակ ենթարկվո՞ւմ եք որևէ մեկին։

— Այո, ենթարկվում եմ ապստամբական ուժերի հրամանատար Կուդինովին։ Իսկ ձեզանից այդ բոլորը լսելը մինչև իսկ զարմացնում է ինձ... Առայժմ ես ու դուք հավասար իրավունքներ ունենք։ Դուք էլ եք դիվիզիայի հրամանատար, ե՛ս էլ։ Եվ դուք հլա դեռ մի բղավեք ինձ վրա... Երբ որ ինձ Հարյուրյակի հրամանատար կդարձնեն, այն ժամանակ — խնդրեմ։ Բայց կռիվ անել...— Գրիգորին բարձրացրեց կեղտոտ ցուցամատը, ու միաժամանակ թե ժպտալով և թե կատաղաբար փայլեցնելով աչքերը, վերջացրեց.— ...Կռիվ անել այն ժամանակ էլ չեմ թույլ տա։

Ֆիցխելաուրովը վեր կացավ, շտկեց իրեն խեղդող օձիքը, կիսով չափ գլուխ տալով ասաց.

— Մենք այլևս խոսելիք չունենք։ Վարվեցեք ձեր ուզածի պես։ Ձեր վարքի մասին ես անմիջապես կհաղորդեմ բանակի շտաբին, և, համարձակվում եմ ձեզ հավատացնել, հետևանքները շուտով կերևան։ Մեզ մոտ ռազմա-դաշտային դատարանը առայժմ աշխատում է անխափան։

Գրիգորին ուշադրություն չդարձնելով Կոպիլովի հուսահատական հայացքներին, գլխարկը քաշեց աչքերին, քայլեց դեպի դուռը։ Շեմքի վրա նա կանգ առավ, ասաց.

— Դուք հաղորդեք որտեղ որ պետք է, բայց ինձ մի վախեցնեք, ես վախկոտներից չեմ... Ու հլա ձեռ չտաք ինձ,— մտածեց և ավելացրեց,— թե չէ վախենում եմ՝ չլինի՞ թե իմ

կազակները ձեր բուրդը գղեն...— Աքացելով բացեց դուռը, ու թուրը շրխկացնելով, հաստատաքայլ ելավ հաշտը։

Հուզված Կոպիլովը մուտքի սանդուղքի վրա հասավ նրան։

— Դու գժվե՛լ ես, Պանտելեևիչ,— շշնջաց նա հուսահատորեն սեղմելով ձեռքերը։

— Ձիե՛ր,— բարձր գոչեց Գրիգորին՝ ձեռքերի մեջ սեղմբրտելով մտրակը։

Պրոխորը ճարպկությամբ վազ տվեց, մոտեցավ մուտքի սանդուղքին։

Դարպասից դուրս գալով, Գրիգորին ետ նայեց. երեք սուրհանդակ աճապարանքով օգնում էին գեներալ Ֆիցխելաուրովին՝ նստելու բարձրամարմին, շքեղ թամբով թամբած ձին...

Կես վերստի չափ լուռ էին ընթանում։ Կոպիլովը լռում էր, հասկանալով, որ Գրիգորին տրամադիր չէ խոսելու և նրա հետ այժմ վիճելը վտանգավոր է։ Վերջապես, Գրիգորին այլևս չհամբերելով, դիմեց նրան.

— Ինչո՞ւ ես լռում,— խիստ տոնով հարցրեց նա։— Դու ինչի՞ համար էիր եկել. վկա՞ էիր. լռախա՞ղ էիր խաղում։

— Է-է՛, եղբայր, այ թե օյին սարքեցիր, հա՛-ա։

— Իսկ նա օյին չսարքե՞ց։

— Ասենք՝ նա էլ իրավացի չէ։ Այն տոնը, որով նա խոսում էր մեզ հետ, ուղղակի վրդովեցուցիչ է։

— Բայց մի՞թե նա խոսում էր մեզ հետ։ Հենց սկզբից սկսեց բոռալ, ասես ետևը բիզ էին խրել։

— Սակայն դու էլ պակաս չես։ Չհնազանդվել աստիճանով ավագին... մարտական պարագաներում, դա, բարեկամ...

— Բանը իսկի էլ այդ չէ։ Ափսոս որ նա ինձ վրա ձեռք չբարձրացրեց։ Ես թրով կհասցնեի նրա ճակատին, գանգը կճեղքվեր զիկալով։

— Առանց դրան էլ քեզ լավ բան չի սպասում,— տհաճությամբ ասաց Կոպիլովը և դադարեցրեց ձիու վազքը, անցավ քայլի.— բոլոր նշաններից երևում է, որ հիմա նրանք կսկսեն ուժեղացնել դիսցիպլինան, պի՛նդ կաց։

Նրանց ձիերը փնչում էին, պոչերով քշում բոռերը, քայլում կողք-կողքի։ Գրիգորին հեգնաբար նայեց Կոպիլովին, հարցրեց.

— Դու ինչի՞ համար էիր զուգվում։ Երևի կարծում էիր, թե քեզ թեյո՞վ կհյուրասիրեն, հա՞։ Սպիտակ ձեռներով կբռնեն ձեռքդ ու սեղանի մո՞տ կտանեն։ Թրաշվեցիր, ֆրենչը դաքրեցիր, սապոգներդ պլպլացրիր... Ես տեսնում էի, թե ոնց էիր թքոտում սրբիչը ու մաքրում շալվարիդ ծնկները։

— Թո՛ղ, էլի՛,— կարմրատակելով պաշտպանվում էր Կոպիլովը։

— Ջարշարանքներդ զուր կորան,— ձեռ էր առնում Գրիգորին.— իսկի չթողեց, որ մոտենաս, ձեռք էլ չտվեց.

— Քեզ հետ այդ էլ չէր կարելի սպասել,— շուտասելուկով մոթմոթաց Կոպիլովը ու աչքերը կկոցելով, զարմացած ու բերկրալի բացականչեց.— Նայի՛ր։ Նրանք մերոնք չեն։ Դաշնակիցներն են։

Նրանց դեմուդեմ նեղ փողոցով վեց ջորի քարշ էին տալիս անգլիական մի թնդանոթ։ Կողքից շիկակարմիր, կարճաչոր ձիով դալիս էր անգլիական մի սպա։ Առջևի հոլիքի ձիավարը նույնպես անգլիական տարազով էր, բայց գլխարկի բոլորքի վրա ուներ ռուսական սպայական գդականիշ և պորուչիկի ուսադիրներով էր։

Գրիգորիից մի քանի սաժեն հեռու սպան երկու մատը տարավ իր խցանե սաղավարտի հովարին, գլխի շարժմամբ խնդրեց ճանապարհ տալ։ Փողոցը այնքան նեղ էր, որ իրար կողքից կարելի էր անցնել միայն Գրիգորիի ու յուրայիններ ի ձիերը քարե ցանկապատին ընդհուպ մոտեցնելով։

Գրիգորիի այտերի ուռուցքները շարժվեցին։ Ատամներն իրար սեղմելով, նա ձին քշեց հենց սպայի վրա։ Վերջինս զարմանքից բարձրացրեց հոնքերը, մի կողմ ծռվեց։ Նրանք դժվարությամբ անցան իրար կողքից, այն էլ միայն այն ժամանակ, երբ անգլիացին կաշվե սոնապանով պինդ պրկված աջ ոտը դրեց իր ազնվացեղ զամբիկի պլպլան, կոկիկ մաքրված գավակին։

Հրետանային անձնակազմից մի հոգի, ռուսական սպա,— ինչպես այդ երևում էր նրա արտաքինից, չարացած նայեց Գրիգորիին։

— Կարծեմ դուք կարող էիք ճանապարհ տալ։ Մի՞թե այստեղ էլ պետք է ցույց տաք ձեր անքաղաքավարությունը։

— Ձենդ կտրի ու անցի, շան ծիծ կերած, թե չէ ես քեզ քաղաքավարություն ցույց կտամ...— ցածր ձայնով խորհուրդ տվեց Գրիգորին։

Սպան քիչ բարձրացավ քարշակի վրայից, շուռ եկավ, բղավեց.

— Պարոններ, բռնեցեք այս լրբին։

Գրիգորին սպառնալից թափահարելով մտրակը, ձին կամաց քշում էր փողոցով։ Հոգնած, փոշոտված հրետանավորները,— բոլորն էլ անբեղ, երիտասարդ սպաներ,— նայում էին նրան անբարյացակամ հայացքով, բայց ոչ ոք բռնելու փորձ չարեց։ Վեց հրանոթ ունեցող մարտկոցը չքացավ տների ետևում, ու Կոպիլովը շրթունքները կծոտելով, ընդհուպ մոտեցավ Գրիգորիին։

— Գժություն ես անում, Գրիգորի Պանտելեևիչ, քեզ երեխայի պես ես պահում։

— Դու իմ դաստիարա՞կն ես, ինչ է,— բարկացկոտ պատասխանեց Գրիգորին։

— Ես հասկանում եմ, որ դու չարացել ես Ֆիցխելաուրովի վրա,— ուսերը թոթվելով ասաց Կոպիլովը,— բայց այստեղ ի՞նչ մեղք ունի այդ անգլիացին։ Թե՞ քեզ դուր չեկավ նրա սաղավարտը։

— Այստեղ, Ուստ-Մեդվեդիցայի մոտ նա ինչ-որ դուր չեկավ ինձ... Այդ սաղավարտը նա պետք է ուրիշ տեղ դներ գլխին... Երկու շուն գզվում են, երրորդը թող չխառնվի, գիտե՞ս։

— Հըմ։ Ուրեմն դու դե՞մ ես օտարերկրյա միջամտությանն։ Իմ կարծիքով, երբ կոկորդիցդ են բռնում, ամեն մի օգնության համար էլ ուրախ կլինես։

— Է՛հ, դու ուրախացիր, իսկ ես թույլ չէի տա, որ նրանք ոտ դնեն մեր հողը։

— Դու կարմիրների մոտ չինացիներ տեսե՞լ ես։

— Հետո ի՞նչ։

— Դա միևնույն չէ՞։ Հո նույնպես օտարերկրյա օգնություն է։

— Ձուր ես այդ ասում։ Չինացիք կամավոր են անցել կարմիրների կողմը։

— Իսկ սրանց, քո ասելով, զորո՞վ են քարշ տվել այստեղ։

Գրիգորին չիմացավ ինչ պատասխաներ, երկար լռեց, տանջալից մտածմունքի մեջ ընկավ, հետո էլ չթաքցրած բարկություն արտահայտող ձայնով ասաց.

— Դուք, ուսումով մարդիկդ, միշտ էլ այդպես եք... Դես-դեն եք ցատկում ոնց որ նապաստակները ձյան վրա։ Ես, աղբեր, զզում եմ, որ դու սխալ ես ասում, ամա քեզ նեղը լծել չեմ կարողանում... Եկ թողնենք այս խոսակցությունը։ Մի՛ շշկլացնի ինձ, ես առանց քեզ էլ շշկլված եմ։

Կոպիլովը նեղացած լռեց, ու մինչև բնակարան հասնելը նրանք այլևս չէին խոսում։ Պրոխորը, բուռն հետաքրքրությամբ համակված, հասավ նրանց ետևից, հարցրեց.

— Գրիգորի Պանտելեևիչ, ձերդ բարեծննդություն, ասա խնդրեմ, այդ ի՞նչ կենդանիներ էին լծված կադետների թընդանոթներին, հը՞։ Նրանց ականջները ոնց որ թե էշի ականջներ են, իսկ մնացած բաներով դրանք իսկական ձիեր են։ Մարդ զարմանքով է մտիկ տալի այդ հեյվաններին... Գրողը տանի, ախր դրանք ինչ ցեղից են,— բացատրի խնդրեմ, թե չէ մենք փողով գրազ ենք եկել...— Հինգ բոպեի չափ գնում էր ետևից, այնպես էլ պատասխան չստացավ, ետ մնաց, ու երբ մյուս սուրհանդակները հասան նրան, շշնջալով հաղորդեց.— Տղերք, նրանք իրենք էլ են սուս ու փուս գնում, երևում է, որ արմանք-զարմանք են կտրել ու ոչինչ էլ չգիտեն, թե այդ մունտուկ հեյվանները որտեղից են լույս-աշխարհ ընկել...

XI

Կազակական հարյուրյակները չորրորդ անգամ էին ելնում ոչ-խորունկ խրամատներից ու կրկին պառկում կարմիրների գնդացրային սպանիչ կրակի տակ։ Կարմիրբանակային մարտկոցները ձախափնյա անտառում թաքնված, հենց լուսաբացից անդադար հրակոծում էին կազակների դիրքերը և ձորակներում կուտակված ռեզերվները։

Դոնի շրջակա բարձունքների վրա բռնկվում էին շրապնելի կաթնագույն-սպիտակ ամպիկները։ Կազակական խրամատների ծուռումուռ գծի առջևում ու ետևում գնդակները գորշ փոշի էին բարձրացնում։

Կեսօրին մարտը ուժեղացավ, ու արևմտյան քամին հրետանային հրաձգության արձագանքը Դոնի վրայով տանում էր հեռուները։

Գրիգորին ապստամբական մարտկոցի դիտակետից հեռադիտակով հետևում էր կռվի ընթացքին։ Նա տեսնում էր, թե ինչպես սպայական վաշտերը, չնայելով կորուստներին, վազեվազքով համառորեն հարձակման էին գնում։ Երբ կրակը ուժեղանում էր, նրանք պառկում էին, խրամատներ փորում, ու դարձյալ առաջ էին նետվում դեպի մի նոր բնագիծ. իսկ ձախ կողմում, վանքի ուղղությամբ ապստամբական հետևազորը ոչ մի կերպ չէր կարողանում ոտքի ելնել։ Գրիգորին մի երկտող գրեց ու կապավորի հետ ուղարկեց Երմակովին։

Կես ժամից հետո ձիով շեշտակի եկավ սաստիկ հուզված Երմակովը։ Մարտկոցի ձիակապարանի մոտ նա իջավ ձիուց ու, ծանր շնչելով, բարձրացավ դիտորդի խրամատը։

— Չեմ կարողանում ոտքի հանել կազակներին, վեր չեն կենում,— դեռ հեռվից գոռաց նա՝ թափահարելով ձեռքերը... —Մեզանից արդեն քսաներեք մարդ է ընկել։ Տեսա՞ր, թե կարմիրները ոնց են խփում գնդացիրներով։

— Սպաները հարձակման են գնում, իսկ դու չե՞ս կարողանում ձերոնց ոտքի հանել,— բեղի տակից մոթմոթաց Գրիգորին։

— Մտիկ արա, է՛, նրանց ամեն մի դասակը ձեռքի գընդացիր ու անհաշիվ փամփուշտ ունի, իսկ մենք ի՞նչ ունենք։

— Դե, դե, գլուխս մի տանի, հենց հիմա հարձակվենք, թե չէ գլուխդ կթռցնենք։

Երմակովը մայր հայհոյեց, վազ տվեց բլուրից։ Գրիգորին գնաց նրա ետևից։ Նա որոշեց անձամբ գրոհի տանել 2-րդ հետևակ գունդը։

Մարտկոցի հրամանատարը նրան կանգնեցրեց վերջին հրանոթի մոտ, որ ճարտարությամբ քողարկված էր մլենու ոստերով։

— Հիացիր անգլիական աշխատանքով, Գրիգորի Պանտելեևիչ։ Հիմի նրանք կսկսեն հրակոծել կամուրջը։ Եկ բարձրանանք կուրգանի վրա, հը՞։

Հեռադիտակով հաղիվ երևում էր Դոնի վրայով կարմիր սակրավորների գցած նավակամրջի բոլորովին բարակ շերտը։ Դրա վրայից անընդմեջ հոսանքով սայլեր էին անցնում։

Տասը րոպեից հետո անգլիական մարտկոցը, որ տեղավորված էր ձորահովտում, քարքարոտ բլրակների ետևում, — կրակ բացեց։ Չորրորդ արկով կամուրջը քանդվեց համարյա մեջտեղից։ Սայլերի հոսանքը կանգ առավ։ Երևում էր, թե ինչպես կարմիրբանակայինները այս ու այն կողմ նետվելով, ջարդված սայլերն ու ձիերի դիակները գցում էին Դոնի մեջ։

Աջ ափից անմիջապես հեռացան սակրավորներով բեռնված չորս նավակներ։ Բայց նրանք դեռ չէին սարքել կամրջի քանդված ծածկը, երբ անգլիական մարտկոցը նորից մի քանի արկ արձակեց։ Դրանցից մեկը շուռ տվեց ձախ ափի մուտքի ամբարտակը, երկրորդը հենց կամրջի կողքին կանաչ ջրասյուն բարձրացրեց, ու կամրջի վրա վերասկսված շարժումը վերստին կանգ առավ։

— Ինչքա՞ն ճիշտ են խփում շան որդիները,— հիացումով ասաց մարտկոցի հրամանատարը.— հիմի նրանք մինչև գիշեր չեն թողնի անցնել գետը։ Այդ կամուրջը սաղ չի՛ մնա։

Գրիգորին աչքերը չկտրելով հեռադիտակից, հարցրեց.

— Բա դու ինչո՞ւ ես լռում։ Օժանդակի՛ր մեր հետևազորին։ Հրե՛ն, տեսնո՞ւմ ես գնդացրային բները։

— Ուրախությամբ կօժանդակեի, բայց ոչ մի արկ չկա։ Կես ժամ առաջ կրակեցի վերջին արկը ու հիմի պաս եմ պահում։

— Բա էլ ինչո՞ւ ես այստեղ կանգնել։ Վերցրու թնդանոթներդ ու գնա գրոհի ծոցը։

— Կադետների մոտ մարդ եմ ուղարկել արկեր բերելու։

— Չեն տա,— վճռականապես ասաց Գրիգորին։

— Մի անգամ մերժել էին, երկրորդ անգամ եմ ուղարկել։ Կարելի է թե խիղճ անեն։ Գոնե մի քսան հատ որ լիներ, կշնչեինք այն գնդացիրները։ Հանաք բան չի,— մերոնցից

քսաներեք հոգի կոտորեցին։ Ու դեռ ինչքա՞ն կկոտորեն։ Տես, թե ոնց են կրակ թափում...

Գրիգորին հայացքը դարձրեց դեպի կազակական խրամատները, դրանց մոտ, սարալանջի վրա գնդակները շարունակում էին փորփրել չոր հողը։ Այնտեղ, ուր թափվում էին գնդացիրների գնդակները, փոշու շերտ էր առաջանում, ասես անտեսանելի մեկը խրամատների երկայնքով կայծակի արագությամբ գորշ, հալչող գիծ էր քաշում։ Կազակական խրամատները իրենց ամբողջ տարածության վրա, փոշիով պատած, ասես ծուխ էին արձակում։

Գրիգորին հիմա արդեն չէր հետևում անգլիական մարտակոցի արկերի դիպչելուն։ Նա մի բոպե ականջ դրեց հրետանային ու գնդացրային անլռելի հրաձգության, հետո էլ իջավ կուրգանից, հասավ Երմակովին։

— Մինչև ինձանից հրաման չստանաս, գրոհի չգնաս։ Առանց հրետանային օժանդակության մենք նրանց ետ չենք քշի։

— Բա ես քեզ ի՞նչ էի ասում,— կշտամբանքով պատասխանեց Երմակովը՝ նստելով վազքից ու հրաձգությունից խլշկոտած իր ձին։

Գրիգորին աչքերով ուղեկցում էր կրակոցների տակ ձիով աներկյուղ սլացող Երմակովին, անհանգստությամբ մտածում էր՝ «Սատանան դրան տարավ ուղիղ ճամփով, էլի։ Կխփեն գնդացրից։ Կիջներ ձորը, կբարձրանար հատակով ու բլուրից դենը անվտանգ կհասներ իրեն կազակներին»։ Երմակովը կատաղի քառատրոփով հասավ ձորահովիտ, մտավ այնտեղ ու մյուս կողմում չերևաց։ «Ուրեմն հասկացավ, հիմի տեղ կհասնի»,— թեթևացած եզրակացրեց Գրիգորին ու պառկեց բլրակի մոտ, առանց շտապելու ծխախոտ փաթաթեց։

Տարօրինակ անտարբերություն էր տիրել նրան։ Ո՛չ, նա կազակներին չի տանի գնդացրային կրակի տակ։ Ինչի՞ համար տանի։ Թող գրոհ տան սպայական գրոհական ջոկատները։ Թող նրանք վերցնեն Ուստ-Մեդվեդիցկայան։ Եվ այստեղ, բլրակի տակ պառկած, Գրիգորին առաջին անգամ խուսափեց ճակատամարտին ուղղակի մասնակցություն ունենալուց։ Վախկոտությունը չէր, մահվան կամ աննպատակ կորուստների վախը չէր, որ այդ միջոցին ղեկավարում էր

նրան։ Կարճ ժամանակ առաջ նա չէր խնայում ոչ իր կյանքը, ոչ էլ իր հրամանատարությանը հանձնված կազակների կյանքը։ Բայց ահա այժմ կարծես մի ինչ-որ բան կոտրվեց... Մինչ այդ նա դեռ երբեք այդպիսի առավելագույն պարզությամբ չէր զգացել տեղի ունեցող իրադարձության ամբողջ ունայնությունը։ Կոպիլովի հետ ունեցած խոսակցությունը, թե Ֆիցխելաուրովի հետ ընդհարվելը, գուցեև թե մեկը և թե մյուսը միասին վերցրած՝ պատճառ դարձան այն տրամադրության, որը այնքա՛ն անսպասելի առաջացավ նրա մեջ, ու նա որոշեց այլևս չգնալ կրակի տակ։ Նա անորոշ կերպով մտածում էր, որ չի կարող կազակներին հաշտեցնել բոլշևիկների ետ, ու ինքն էլ հոգու խորքում չէր կարող նրանց հետ հաշտվել, իսկ պաշտպանել ոգով իրեն օտար, իր նկատմամբ թշնամաբար տրամադրված մարդկանց, այդ բոլոր Ֆիցխելաուրովներին, որոնք խորապես արհամարհում էին իրեն և որոնց ոչ պակաս խոր արհամարհում էր ինքը,— նա նույնպես չէր ուզում և չէր կարող։ Ու նրա առաջ վերստին ամբողջ անողոքությամբ ծառացան առաջվա հակասությունները։ «Թող կռվեն։ Կնայեմ հեռվից։ Հենց որ ինձնից վերցնեն դիվիզիան, կխնդրեմ, որ շարքից տեղափոխեն թիկունք։ Հերիք է ինչքան կռվեցի»,— մտածում էր նա, ու մտքում անդրադառնալով Կոպիլովի հետ ունեցած վեճին, զգաց, որ կարմիրների համար արդարացում է որոնում։ «Չինացիները մերկ ձեռքերով գնում են կարմիրների մոտ, ծառայության են մտնում ու զինվորի քոսոտ ոռճիկով ամեն օր իրենց կյանքը վտանգի են ենթարկում։ Ասենք այստեղ ոռճիկն ի՞նչ գործ ունի։ Դրանով ոտնե՞րս կարելի է գնել։ Հենց միայն թղթախաղով տարվելու բան է... Ուրեմն այստեղ շահասիրություն չկա, մի ուրիշ բան կա... Իսկ դաշնակիցները ուղարկում են սպաներ, տանկեր, թնդանոթներ, հրե՛ն մինչև իսկ ջորիներ է՛լ են ուղարկել։ Հետո էլ այդ բոլորի համար մեծ փող են պահանջելու։ Ա՛յ թե որտեղ է տարբերությունը։ Հը՛մ, դրա մասին մենք երեկոյան էլ կվիճենք։ Հենց որ մտնեմ շտաբ, նրան մի կողմ կկանչեմ ու կասեմ։— Տարբերություն կա, Կոպիլով, և դու ինձ մի մոլորեցնի»։

Բայց վիճել այնպես էլ չվիճակվեց։ Օրվա երկրորդ կեսին Կոպիլովը մեկնեց ռեզերվում գտնվող 4-րդ գունդը և ճանու-

պարհին սպանվեց պատահական գնդակով։ Գրիգորին այդ մասին իմացավ երկու ժամից հետո...

Գեներալ Ֆիցխելաուրովի 5-րդ դիվիզիայի զորամասերը առավոտյան կռվով գրավեցին Ուստ-Մեդվեդիցկայան։

XII

Գրիգորիի մեկնելուց երեք օր անց Միտկա Կորշունովը հայտնվեց Տատարսկի խուտորում։ Նա մենակ չեկավ, նրան ուղեկցում էին երկու հոգի, որոնք նրա հետ ծառայում էին պատժիչ ջոկատում։ Նրանցից մեկը տարիքավոր մի կալմիկ էր, Մանիչի կողմերից, մյուսը Ռասպոպինսկայա ստանիցայի անբարետես մի կազակ էր։ Միտկան կալմիկին արհամարհանքով անվանում էր «խոդյա», իսկ Ռասպոպինսկու հարբեցողին ու ստահակին Սիլանտի Պետրովիչ էր հորջորջում։

Երևում էր, որ Միտկան, լինելով պատժիչ ջոկատում, քիչ ծառայություն չէր մատուցել Դոնի զորքին. ձմռանը նա ստացել էր վախմիստրի, հետո էլ փոխխորունժիի կոչում և խուտոր ժամանեց նոր, սպայական տարազի ամբողջ փայլով։ Պետք է կարծել, որ նա վատ չէր ապրում նահանջից հետո, Դոնեցի մյուս կողմում. պաշտպանական գույնի թեթև ֆրենչը լավ նստել էր Միտկայի լայն ուսերին, վարդագույն մաշկի հաստ-հաստ ծալերը շնթռել էին պինդ, կանգուն օձիքի վրա, քիփ կարված, կապույտ, դիագոնալե լամպասավոր շալվարը քիչ էր մնում պատռվեր ետևից... Իր արտաքին արժանիքներով Միտկան ո՞նց կծառայեր լեյբ-գվարդիայի ատամանյան գնդում, ո՞նց կապրեր պալատում ու կպաշտպաներ նորին կայսերական մեծության սրբազան անձնավորությունը, եթե չլիներ այդ անիծված ռևոլյուցիան։ Բայց Միտկան առանց դրան էլ իր կյանքից չէր գանգատվում։ Նա էլ սպայական աստիճանի էր հասել, բայց ո՛չ Գրիգորի Մելեխովի պես կյանքը վտանգի ենթարկելով, թեթևամտորեն հերոսություն անելով։ Ծառայության մեջ բարձրանալու համար պատժիչ ջոկատում մարդուց այլ հատկություններ էին պահանջվում... Միտկան էլ հենց լիովին օժտված էր այդ հատկություններով. առանձնապես

չվստահելով կազակներին, նա ինքն էր բոլշևիզմի մեջ կասկածվողներին տանում ոչնչացնելու, չէր խորշում սեփական ձեռքով, մտրակի կամ հրացանի շամփրի միջոցով դատաստան տեսնելու դասալիքների դեմ, իսկ ձերբակալվածներին հարցաքննելու գործում ամբողջ ջոկատում նրան հավասար մարդ չկար, ու զորական ավագ Պրյանիշնիկովն ինքը, թոթվելով ուսերը, ասում էր. «Ոչ, պարոնայք, ինչ ուզում եք ասեք, բայց Կորշունովին գերազանցել անկարելի է. վիշապ է և ոչ թե մարդ»։ Միտկան մի նշանավոր հատկությամբ էլ էր աչքի ընկնում. երբ չէր կարելի գնդակահարել կալանավորվածին և պատժողները չէին ուզում կենդանի բաց թողնել նրան ձեռքից, նրան դատապարտում էին մարմնական պատժի,— ճիպոտահարության, և դրա կատարումը հանձնարարում էին Միտկային։ Եվ նա կատարում էր, ու այնպես էր կատարում, որ հիսուն հարվածից հետո պատժվածը սկսում էր անընդհատ արյուն փսխել, իսկ հարյուր հարվածից հետո մարդուն մեռած թե դեռ կենդանի վիճակում փաթաթում էին ճիլոպով... Միտկայի ձեռքն ընկած ոչ մի դատապարտյալ կենդանի չէր մնում։ Նա ինքը հաճախ ծիծաղելով ասում էր. «Թե որ ես հանեի իմ կոտորած բոլոր կարմիրների շալվարներն ու յուրկաները, կհագցնեի ամբողջ Տատարսկի խուտորը»։

Դաժանությունը, որ մանկուց հատուկ էր Միտկայի բնավորության, պատժիչ ջոկատում ոչ միայն իր արժանի գործադրությունը գտավ, այլև, ոչնչով սանձահարված չլինելով, հրեշավոր չափերի հասավ։ Իր ծառայության բնույթի շնորհիվ շփվելով սպայության բոլոր տականքների,— կոկաինիստների, բռնացողների, թալանչիների և այլ ինտելիգենտ սրիկաների հետ, որոնք լցվում էին ջոկատը,— Միտկան հաճույքով, գյուղացիական ջանադրությամբ յուրացնում էր այն ամենը, ինչ որ սովորեցնում էին նրանք, կարմիրների դեմ ատելությամբ լցված, և առանց մի առանձին դժվարության գերազանցում էր իր ուսուցիչներին։ Այնտեղ, ուր արյունից և ուրիշների տանջանքներից հոգնած ներաթենիկ սպան այլևս չէր դիմանում, Միտկան լոկ կկոցում էր մանրիկ կայծերով շաղված, դեղին իր աչքերը և գործը հասցնում իր վախճանին։

Այդպիսի մարդ էր դարձել Միտկան՝ կազակական զորամասից ընկնելով հեշտ ապրուստի տեղը,— զորական ավագ Պրյանիշնիկովի պատժիչ ջոկատը։

Հայտնվելով խուտորում, քիթը վեր ցցած ու հաղիվ պատասխանելով հանդիպող կանանց բարևներին, նա ձին քայլքով քշեց դեպի իրենց տունը։ Կիսով չափ վառված, մրոտած դարպասի մոտ իջավ ձիուց, սանձը տվեց կալմիկին, լայնաքայլ անցավ բակը։ Սիլանտիի ուղեկցությամբ լուռ պտտեց տան հիմքի շուրջը, մտրակի ծայրով շոշափեց հրդեհի ժամանակ ընկած, փիրուզի փայլ արձակող մի կտոր ապակի, հուզմունքից խռպված ձայնով ասավ.

— Վառել են... Հարուստ տուն էր, հա՛-ա։ Խուտորում առաջինն էր։ Մեր խուտորցին է վառել, Միշկա Կոշևոյը։ Նա էլ սպանել է պապիս։ Այսպես, Սիլանտի Պետրով, հայրենի ավերակն էլ տեսանք...

— Իսկ այդ Կոշևոյներից մարդ կա՞ տանը,— աշխույժ հարցրեց Սիլանտին։

— Երևի կա։ Մենք կտեսնվենք նրանց հետ... Իսկ հիմի գնանք խնամոնց մոտ։

Մելեխովների մոտ գնալիս Միտկան հարցրեց Բոգատիրյովների հարսին, որին հանդիպեց ճանապարհին.

— Մերս եկե՞լ է Դոնի այն կողմից։

— Կարծեմ հլա չի եկել, Միտրի Միրոնիչ։

— Իսկ խնամի Մելեխովը տա՞նն է։

— Ծերունի՞ն, հա։

— Այո։

— Ծերունին տանն է, մի խոսքով, ամբողջ ընտանիքը տանն է բացի Գրիգորիից։ Զմռանը Պետրոյին սպանեցին, լսե՞լ ես։

Միտկան գլխով արեց ու ձին քշեց վարգով։

Նա գնում էր դատարկ փողոցով, ու նրա դեղին, կատվի աչքերում, որոնք հղփացած ու սառն էին, քիչ առաջվա հուզումնալի աշխուժության հետքն անգամ չկար։ Մոտենալով Մելեխովների տանը, չդիմելով ուղեկիցներից որևէ մեկին, ցածր ձայնով ասաց.

— Այսպես է դիմավորում հայրենի խուտորը, հա՞-ա։

Ճաշելու համար էլ ազգականների մոտ պիտի գնալ... Լա՜վ, հլա դեռ կտեսնե՞նք...

Պանտելեյ Պրակոֆևիչը շարժուքի տակ կարգի էր բերում հնձիչը։ Տեսնելով ձիավորներին ու նրանց մեջ ճանաչելով Կորշունովին, գնաց դեպի դարպասը։

— Համեցեք,— սրտաբաց ասավ նա՝ բանալով դարպասը։— Ուրախությամբ կընդունենք հյուրերին։ Շնորհավոր ձեր գալը։

— Բարև, խնամի. ողջ-առո՞ղջ ես։

— Փառք աստծո, հլա ոչինչ։ Այդ ի՞նչ է, դու արդեն սպա՞ ես։

— Բա դու կարծում էիր մենակ տղե՞րքդ պիտի սպիտակ ուսադիրներ կրեն,— ինքնագոհ ասաց Միտկան՝ երկար, ջլուտ ձեռքը մեկնելով ծերունուն։

— Տղերքս այնքան էլ չեն դիրել դրանք,— ժպտալով պատասխանեց Պանտելեյ Պրակոֆևիչը ու առաջ անցավ, որպեսզի ցույց տա ձիերը կանգնեցնելու տեղը։

Աղ ու հացով Իլյինիչնան հյուրերին ճաշ տվեց, հետո էլ սկսվեցին խոսակցությունները։ Միտկան մանրամասն հարցուփորձ էր անում ամեն ինչի մասին, որ վերաբերում էր իր ընտանիքին, լռակյաց էր ու ոչ բարկություն, ոչ էլ տխրություն էր ցույց տալիս։ Որպես թե ի միջի այլոց հարցրեց, թե Միշկա Կոշևոյի ընտանիքից որևէ մեկը մնացե՞լ է խուտորում, և իմանալով, որ տանը մնացել է Միշկայի մայրը իր երեխաներով, կարճ և մյուսների համար աննկատելի կերպով աչքով արավ Սիլանտիին։

Հյուրերը շուտով վեր կացան։ Ճանապարհելով նրանց, Պանտելեյ Պրակոֆևիչը հարցրեց.

— Երկա՞ր պիտի մնաս խուտորում։

— Այնպես, էլի՛, մի երկու-երեք օր։

— Մորդ կտեսնե՞ս։

— Թե որ հաջողվի։

— Բա հիմի ո՞ւր ես գնում։

— Այնպես, էլի... խուտորցիներից ոմանց տեսնելու։ Մենք շուտով կգանք։

Միտկան և իր ուղեկիցները դեռ չէին վերադարձել Մելեխովների մոտ, երբ խուտորում լուր տարածվեց՝ «Կորշ-

նովը եկել է կալմիկների հետ, Կոշևոյի ամբողջ ընտանիքը կոտորել են»։

Ոչինչ չլսած Պանտելեյ Պրակոֆևիչը հենց նոր էր եկել դարբնոցից, հնձիչ մեքենայի կտրիչը ձեռքին, և ուզում էր նորից կարգի բերել հնձիչը, բայց Իլյինիչնան կանչեց նրան.

— Արի այստեղ, Պրակոֆիչ. շո՛ւտ արա։

Պառավի ձայնը չթաքցրած անհանգստություն էր արտահայտում, ու զարմացած Պանտելեյ Պրակոֆևիչը իսկույն գնաց տուն։

Լացակումած, գունատ Նատալյան կանգնել էր վառարանի մոտ։ Իլյինիչնան աչքերով ցույց տվեց Անիկուշկայի կնոջը, խուլ ձայնով հարցրեց.

— Նորություն լսե՞լ ես, ծերուկ։

«Ախ, չլինի՞ թե Գրիգորիին բան է պատահել... Պահպանի ու ողորմյա, տեր»,— այս միտքը դաղեց Պանտելեյ Պրակոֆևիչին։ Նա սփրթնեց ու, վախենալով և ցասկոտելով, որ ոչ մեկը բան չի ասում, բղավեց.

— Դե շուտ ասեք, է՛, անիծված լինեք դուք... Ի՞նչ է պատահել, հը՞։ Գրիգորիի՞ն...— Ու կարծես բղավելուց ուժասպառ եղած, ընկավ նստարանին, շփեց ցնցվող ոտները։

Դունյաշկան առաջինը գլխի ընկավ, որ հայրը վախենում է որդու վերաբերյալ սև լուրերից, հապճեպ ասաց.

— Ոչ, հայրիկ, լուրը Գրիշայի մասին չի։ Միտրին խփել է Կոշևոյներին։

— Այսինքն, ոնց թե խփել է.— Պանտելեյ Պրակոֆևիչի սիրտը միանգամից թեթևացավ ու, դեռ չհասկանալով Դունյաշկայի ասած խոսքերի իմաստը, նա նորից հարցրեց.— Կոշևոյների՞ն։ Միտրի՞ն։

Անիկուշկայի կինը, որ եկել էր նորությունները հաղորդելու, սկսեց պատմել շշկլվելով.

— Գնացել էի, ապի ջան, հորթը որոնելու, անցնում եմ Կոշևոյների տան կողքից, իսկ Միտրին ու էլի երկու զինվոր ձիերով մոտեցան տանը ու ներս գնացին։ Ես էլ մտածում եմ՝ հորթը հողմաղացից դենը չի գնա, հորթերն արածացնելու ժամանակն էր...

— Ախր ոտների՞ս է պետք քո հորթը, է՞,— բարկությամբ ընդհատեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— ...Ու նրանք մտան տունը,— շնչասպառ լինելով շարունակեց կինը,— ես էլ կանգնել եմ, սպասում եմ։ «Նրանք, — միտք եմ անում,— լավ բանի համար չեն եկել այստեղ»։ Ու այնտեղ ճվճվոց սկսվեց, լսում էի, որ խփում են։ Վախից մեռա ես, ուզեցի փախնել, ամա երբ որ ցանկապատից քիչ հեռացա, ետևիցս ոտի ձեն լսեցի. հա՛, ետ նայեցի. ձեր այդ Միտրին չվանը գցել է պառավի վիզը ու քարշ է տալի գետնի վրա ոնց որ շանը, մեղա քեզ տեր։ Քարշ տվեց շարդախի կողմը, խեղճ կնիկը իսկի ձեն չի հանում, երևի արդեն ուշքը գնացել էր. կալմիկը, որ նրա հետ էր, թռավ շարդախի գերանի վրա... Մտիկ եմ անում. Միտրին չվանի ծերը գցեց նրան ու բղավում է. «Քաշի ու կապի, հանգույց արա»։ Ա՛խ, ես ի՛նչ բան տեսա։ Աչքիս առաջ խեղդեցին խեղճ պառավին, հետո էլ թռան ձիերի վրա ու գնացին փոզոցով, երևի խուտորի վարչության կողմը։ Ես վախենում էի տունը մտնել... Տեսա, որ հաշտից, հենց դռան տակից արյուն էր հոսում սանդուղքի վրա։ Աստված չանի մեկ էլ այդպիսի զարշանդ բան տեսնեմ։

— Աստված լա՜վ հյուրեր է ուղարկել մեզ, հա՛-ա,— սպասողաբար նայելով ծերունուն, ասաց Իլյինիչնան։

Պանտելեյ Պրակոֆևիչը սարսափելի հուզումով լսեց պատմածը ու, ոչ մի բառ չասելով, դուրս ելավ։

Շուտով դարպասի մոտ երևաց Միտկան իր օգնականներով։ Պանտելեյ Պրակոֆևիչը կաղ-կաղ, արագ քայլեց նրանց ընդառաջ։

— Կանգնեցե՛ք,— դեռ հեռվից բղավեց նա,— չմտնեք բակը։

— Ի՞նչ է պատահել, խնամի,— զարմացած հարցրեց Միտկան։

— Ետ դարձեք.— Պանտելեյ Պրակոֆևիչը բոլորովին մոտեցավ ու նայելով Միտկայի դեղին, առկայծող աչքերին, վճռականորեն ասաց.— Մի նեղանա, խնամի, բայց ես չեմ ուզում, որ դու լինես իմ տանը։ Ավելի լավ է կամովին գնա ուր կուզես։

— Ա-ա՛-ա...— ձայնը երկարացնելով, հասկանալով բանի էությունը, ասաց Միտկան ու սփրթնեց։— Ուրեմն դո՞ւրս ես անում, հա՞-ա...

— Չեմ ուզում, որ դու մուտտառես իմ տունը,— վճռականորեն կրկնեց ծերունին.— էլ ինձ մոտ ոտ չդնես։ Մեզ՝ Մելեխովներիս, դահիճները չեն կարող ազգական լինել։

— Հասկանալի է։ Միայն թե դու, խնամի, չափից դուրս խղճով ես։

— Դու հո իսկի խիղճ ու գութ էլ չունես, եթե կնանոց ու երեխեքին ես սպանում։ Է-Է՛, Միտրի, բանի պետք չի քո արհեստը... Թե որ ողորմած հոգի հերդ քեզ մտիկ աներ, չէր ուրախանա։

— Իսկ դու, հիմար ծերուկ, ուզում էիր, որ ես նրանց գլխի՞ս նստեցնեի, հա՞-ա։ Հորս սպանեցին, պապիս սպանեցին, իսկ ես պետք է քրիստոսահամբո՞ւյր տայի նրանց։ Գնա ոադ եղիր, ես քո...— Միտկան զայրացած քաշեց սանձը, բակի դռնից դուրս քշեց ձին։

— Հայհոյանքը թող, Միտրի, դու ինձ տղի տեղ ես։ Ես ու դու բաժանելու բան չունենք, գնա, աստված քեզ հետ։

Հետզհետե ավելի գունատվելով, մտրակով սպառնալով, Միտկան խուլ բղավում էր.

— Դու ինձ մեղքի մեջ մի գցի, հա՛-ա, մի՛ գցի։ Նատալյային եմ խղճում, թե չէ ես քեզ, գութ անողիդ... Գիտե՛մ ձեզ, տեսնում եմ, թե ինչ պտուղ եք։ Դոնեցից դենը չնահանջեցի՞ք, հա՞-ա։ Կարմիրների՞ն հանձնվեցիք։ Հը՛մ... Բոլորիդ էլ, ոնց որ Կոշևոյներին, պետք է կախել։ Գնացինք, տղերք։ Դեհ, կաղ շուն, տե՛ս, աչքիս չերևաս։ Ձեռիցս չես պրծնի։ Իսկ քո աղ ու հացը ես կհիշեցնեմ քեզ։ Թքել եմ այդ տեսակ ազգականների վրա...

Պանտելեյ Պրակոֆևիչը դողդոջուն ձեռքերով գցեց բակի դռան սողնակը, գնաց տուն։

— Վոնդեցի քո աղբորը,— ասաց նա, առանց Նատալյային նայելու։

Նատալյան ոչինչ չպատասխանեց, թեպետև սրտով համաձայն էր կեսրարի վարմունքին. Իլյինիչնան արագ խաչակնքեց և ուրախացած ասավ.

— Փառք աստծու. սատանեն տարավ։ Ների փիս խոսքիս համար, Նատալյուշկա, բայց ձեր Միտկան իսկական թշնամի դուրս եկավ։ Իրեն հարմար էլ ծառայություն է գտել. փոխանակ մյուս կազակների պես կարգին զորամասերում

ծառայելու, նա պատժող ջոկատն է մտել։ Մի՞թե դա կազակի գործ է,— պատժող լինել, պառավներին կախել ու անմեղ երեխեքին թրով մորթոտել։ Մի՞թե նրանք պատասխանատու են իրենց Միշկայի համար։ Որ այդպես լինի, ուրեմն կարմիրներն էլ կարող էին Գրիշայի պատճառով սպանել ինձ ու քեզ, Միշատկային ու Պոլյուշկային, ամա, տես, չսպանեցին, խիղճ ու գութ ունեցան։ Չէ՛, աստված չանի, ես դրա հետ համաձայն չեմ։

— Ես աղբորս չեմ էլ պաշտպանում, մայրիկ...— միայն այսքանը ասաց Նատալյան, լաչակի ծայրով սրբեց արցունքները։

Միտկան հենց նույն օրը մեկնեց խուտորից։ Ասում էին, որ իբր թե Կարգինսկայայի մոտ մի տեղ նա միացել էր իր պատժիչ ջոկատին ու դրա հետ միասին ճանապարհվել էր կարգ հաստատելու Դոնեցի օկրուգի ուկրաինական գյուղերում, որոնց բնակչությունը մեղավոր էր համարվում այն պատճառով, որ մասնակցել էր Վերին Դոնի ապստամբությունը ճնշելուն։

Նրա մեկնելուց հետո խուտորում մի շաբաթ խոսակցություններ էին տեղի ունենում պատահած դեպքի մասին։ Մեծամասնությունը դատապարտում էր Կոշևոյի ընտանիքի դեմ եղած ինքնադատաստանը։ Հասարակական միջոցներով թաղեցին սպանվածներին. ուզում էին ծախել Կոշևոյների խրճիթը, բայց գնողներ չգտնվեցին։ Խուտորի ատամանի հրամանով պատուհանների փեղկերին խաչաձև տախտակներ խփեցին, ու երեխաները երկար ժամանակ վախենում էին խաղալ սարսափելի տան մոտ, իսկ ծերունիներն ու պառավները անցնելով անտեր տան կողքից, խաչակնքում էին ու աղոթում սպանվածների հոգու հանգստության համար։

Հետո վրա հասավ տափաստանային խոտհունձը, ու վերջին ժամանակների իրադարձությունները մոռացվեցին։

Խուտորը առաջվա պես աշխատում էր ու լուրեր լսում ռազմաճակատի մասին։ Այն տնտեսատերերը, որոնց ձեռքում լծկան անասուններ էին մնացել, փնթփնթում ու հայհոյանքներ էին թափում՝ իրենց սայլերով սպասարկելով ռազմական կարիքներին։ Համարյա ամեն օր ստիպված էին աշխատանքից կարել եզներն ու ձիերը և ուղարկել ստանիցա։ Հնձիչնե-

րից արձակելով ձիերը, ծերունիները հաճախակի անեծք էին թափում ձգձգվող պատերազմի վրա։ Բայց արկերը, փամփուշտները, փշալարերի փաթաթանները, պարենը պետք էր տանել ռազմաճակատ։ Ու տանում էին։ Իսկ այդ ժամանակ հակառակի պես օրերը արևոտ, պայծառ էին, հենց միայն պետք էր հնձել ու հավաքել հասունացած, չտեսնված կերպով լավորակ խոտը։

Պանտելեյ Պրակոֆևիչը պատրաստվում էր խոտի հնձին ու Թունդ բարկանում էր Դարյայի վրա։ Սա մի լուծ եզներով փամփուշտներ էր տարել, պետք է վերադառնար հանձնման կայանից, բայց անցել էր մի շաբաթ, ու նրա մասին լուր էլ չկար. իսկ առանց մի լուծ մեծ, ամենահուսալի եզների տափաստանում ոչինչ չէր կարելի անել։

Ուղիղն ասած՝ չպետք էր ուղարկել Դարյային... Պանտելեյ Պրակոֆևիչը սրտապնդվելով, եզները վստահել էր նրան, գիտենալով, թե նա որչափ սիրում է ուրախ ժամանակ անցկացնել և որչափ անփույթ է անասուններին խնամելու գործում, բայց, Դարյայից բացի, ուրիշ ոչ ոք չգտնվեց։ Դունյաշկային չէր կարելի ուղարկել, որովհետև օտար կազակների հետ հեռավոր ճանապարհ գնալը աղջկա գործ չէր. Նատալյան փոքր երեխաներ ուներ. ինքը, ծերուկը, հո չէ՞ր տանելու այդ անիծված փամփուշտները։ Իսկ Դարյան հաճույքով հանձն առավ գնալ։ Նա առաջ էլ մեծ բավականությամբ գնում էր ամեն տեղ,— աղաց, կորեկաձավար պատրաստելու, կամ թե մի այլ տեղ, որևէ տնտեսական կարիքի համար, և այդ միայն այն պատճառով, որ տանից դուրս նա իրեն անհամեմատ ավելի ազատ էր զգում։ Յուրաքանչյուր ճանապարհորդություն նրան դվարճանք և ուրախություն էր բերում։ Պոկվելով կեսարի հսկողությունից, նա կարող էր թե կանանց հետ կուշտ բլբլացնել ու բամբասել և թե,— ինչպես ինքն էր ասում,—«ոտքի վրա սիլի-բիլի անել» իրեն դուր եկած մի որևէ ժիր կազակի հետ։ Իսկ տանը Պետրոյի մահից հետո էլ Իլյինիչնան նրան ազատություն չէր տալիս, կարծես թե Դարյան, որը դավաճանում էր կենդանի ամուսնուն, պարտավոր էր հավատարիմ լինել մեռածին։

Պանտելեյ Պրակոֆևիչը գիտեր, որ եզները զուրկ կլինեն մալատիրոջ հոգատար աչքից, բայց ուրիշ ելք չկար,— ճանապարհեց մեծ հարսին։ Ճանապարհելը ճանապարհեց, բայց դեռ մի ամբողջ շաբաթ մեծ տագնապ և հոգեկան անհանգստություն ապրեց։ «Կորա՞ն եղներս»,— դիշերվա կեսին արթնանալով, ծանր հոգոց հանելով, հաճախ մտածում էր նա։

Դարյան ժամանեց տասնմեկերորդ օրվա առավոտյան։ Պանտելեյ Պրակոֆևիչը հենց նոր էր վերադարձել դաշտից։ Նա հնձում էր Անիկուշկայի կնոջ հետ միատեղ, ու նրան և Դունյաշկային թողնելով տափաստանում, եկել էր խուտոր՝ ջուր և ուտելիք տանելու։ Ծերուկներն ու Նատալյան նախաճաշում էին, երբ պատուհանների կողքից անիվների ծանոթ գոգոցով անցավ բրիչկան։ Նատալյան վազեվազ մոտեցավ պատուհանին, տեսավ մինչև աչքերը շալով փաթաթված Դարյային, որը դարպասից ներս էր քշում հոգնած, նիհարած եզները։

— Նա՞ է,— հարցրեց ծերունին՝ խեղդվելով չծամած պատառից։

— Դարյա՛ն է։

— Չէի սպասում, որ կտեսնեմ եզները։ Էհ, փառք քեզ, տեր։ Անզգամ, անիծվա՛ծ։ Զոռով հասավ տուն...— խաչակնքելով ու բարձր զկռտալով, մոթմոթաց ծերունին։

Եզներն արձակելով, Դարյան մտավ խոհանոց, չորս տակ ծալած կարպետը դրեց շեմքի մոտ, բարևեց տնեցիներին։

— Ի՞նչ կար որ, մումուշիկս, մի շաբաթ էլ ման գայիր, էլի՛,— հեգնանքով ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ աչքի տակից նայելով Դարյային ու չպատասխանելով նրա բարևին։

— Թող ինքներդ գնայիք,— բարկությամբ պատասխանեց Դարյան՝ գլխից հանելով փոշոտված լաչակը։

— Ինչի՞ այդքան երկար մնացիր,— միջամտեց Իլյինիչնան, որպեսզի հարթեր հանդիպման անախորժությունը։

— Չէին թողնում, դրա համար էլ երկար քաշեց։

Պանտելեյ Պրակոֆևիչը թերահավատությամբ օրորեց գլուխը, հարցրեց.

— Խրիստինյայի կնկանը հանձնման կայանից բաց թողին, իսկ քեզ — ո՞չ։

— Իսկ ինձ չթողին,— Դարյայի աչքերը բարկությունից կայծկլտեցին, նա ավելացրեց.— եթե չեք հավատում, գնացեք, հարցրեք սայլերին ուղեկցող պետին։

— Ինձ պետք չի տեղեկանալ քո մասին, բայց մյուս անգամ կնստես տանը։ Քեզ ոչ մի տեղ չի կարելի ուղարկել։

— Վախացրիք ինձ, օ-օ՛, վախացրիք, էլի՛։ Ես ինքս չեմ գնա։ Կուղենաք ուղարկել, ու չեմ գնա։

— Եղները առո՞ղջ են,— արդեն ավելի հանգիստ հարցրեց ծերունին։

— Առողջ են։ Ոչինչ էլ չի պատահել ձեր եղներին...— Դարյան դժկամորեն էր պատասխանում ու գիշերից էլ մռայլ էր։

«Ճանապարհին բաժանվել է մի որևէ սիրածից, դրա համար էլ չարացած է»,— մտածեց Նատալյան։

Նա միշտ էլ ցավակցության ու նողկանքի զգացումով էր վերաբերվում Դարյային ու սրա անմաքուր սիրային տարփանքներին։

Նախաճաշից հետո Պանտելեյ Պրակոֆևիչը պատրաստվեց գնալու, բայց այդ րոպեին եկավ խուտորի ատամանը։

— Կասեի՝ հաջողություն, ամա կաց, Պանտելեյ Պրակոֆևիչ, մի գնա։

— Հո էլի սայլ ուզելու չե՞ս եկել,— շինծու խոնարհությամբ հարցրեց ծերունին, իսկ ինքը քիչ էր մնում կատաղությունից շնչասպառ լիներ։

— Ոչ, այստեղ ուրիշ բան կա։ Այսօր մեզ մոտ է գալի ինքը, Դոնի ամբողջ բանակի հրամանատարը, գեներալ Սիդորինն ինքը, հասկացա՞ր։ Հենց հիմի հատուկ սուրհանդակի միջոցով թուղթ ստացա ստանիցայի ատամանից, հրամայում է բոլոր ալևորներին ու կնանոց հավաքել ժողովի։

— Հո խելառ չե՞ն նրանք,— բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը,— ախր այս տեսակ եռուն գործի ժամանակ ո՞վ է ժողով անում։ Իսկ քո գեներալ Սիդորինը ձմեռվա խոտ կհավաքի՞ ինձ համար։

— Նա ինչքան որ իմն է, այնքան էլ քոնն է, դա մեկ է,— հանգիստ պատասխանեց ատամանը։— Ինչ որ ինձ հրամայված է, այն էլ անում եմ։ Արձակիր սայլը։ Պետք է

աղ ու հացով դիմավորել։ Ի միջի այլոց, ասում են, թե նրա հետ դաշնակիցների գեներալներ են գալի։

Պանտելեյ Պրակոֆևիչը լուռ կանգնեց սայլի մոտ, մի փոքր մտածեց և սկսեց արձակել եղները։ Տեսնելով, որ մի ասածը ազդեցություն ունեցավ, ուրախացած ատամանը հարցրեց.

— Քո ձիուց չի՞ կարելի օգտվել։

— Ի՞նչ պիտի անես որ։

— Հրամայված է, նրանց հերն անիծվի, երկու եռաձի տարանտաս ուղարկել Դոնոյ ձորը, նրանց դիմավորելու։ Ո՞րտեղից տարանտաս ու ձի ճարեմ — չգիտեմ։ Լույսը չբացված վեր եմ կացել, վազ եմ տալի, շապիկս մի հինգ անգամ ջուր դառավ, ու միայն չորս ձի ճարեցի։ Ամբողջ ժողովուրդը աշխատանքի մեջ է, մարդ ուղղակի սրտաճաք է լինում։

Մեղմացած Պանտելեյ Պրակոֆևիչը համաձայնվեց տալ ձին և նույնիսկ առաջարկեց իր զսպանակավոր տարանտասը։ Ինչքան չլինի, բանակի հրամանատարն էր գալիս, հա՛-ա, այն էլ օտարերկրյա գեներալների հետ, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը միշտ էլ երկյուղած հարգանքի զգացմունք էր տածում դեպի գեներալները...

Ատամանի ջանքերով մի կերպ պատրաստվեց երկու եռաձի կառք և ուղարկվեց Դոնոյ ձորը՝ պատվավոր հյուրերին դիմավորելու։ Հրապարակում ժողովուրդ էր հավաքվում։ Շատերը թողնելով խոտի հունձը, տափաստանից դեպի խուտոր էին շտապում։

Պանտելեյ Պրակոֆևիչը ձեռք քաշելով աշխատանքից, զուգվեց, հագավ մաքուր վերնաշապիկ, մահուդե, լամպասներով շալվար, գլխին դրեց այն գլխարկը, որ մի ժամանակ Գրիգորին նվեր էր բերել և, ծանր ու մեծ, կաղ-կաղ քայլեց դեպի հրապարակը, պառավին պատվիրելով, որ Դարյայի հետ ջուր և ուտելիք ուղարկի Դունյաշկային։

Շուտով ճանապարհի վրա թանձր փոշի բարձրացավ ու հեղեղի նման հոսեց դեպի խուտորը, իսկ փոշու միջից փայլեց ինչ-որ մետաղե մի բան ու հեռվից լսվեց ավտոմոբիլի ազդանշանը։ Հյուրերը գալիս էին բոլորովին նոր, մուգկապույտ ներկով փայլող երկու ավտոմոբիլով. դրանց ետևից, հեռվից, վերադարձող հնձվորներից առաջ անցնելով,

դատարկ սլանում էին եռաձի տարանտասները, ու աղեղների տակին տխուր զրնգում էին փոստատարական զանգակները, որ ատամանը ճարել էր այդ հանդիսավոր դեպքի համար։ Հրապարակում, ամբոխի մեջ աշխուժություն, խոսակցություն սկսվեց, լսվեցին երեխաների ուրախ բացականչությունները։ Գլուխը կորցրած ատամանը վազվզում էր ամբոխի մեջ, պատվավոր ծերունիներ հավաքում, որոնք պետք է մատուցեին աղ ու հացը։ Նրա աչքովն ընկավ Պանտելեյ Պրակոֆևիչը, ու ատամանը ուրախացած կպավ նրան։

— Փրկի, ի սեր Քրիստոսի։ Դու ընկած-ելած մարդ ես, գիտես վարվելու ձևը... Դու հո գիտես ոնց բարևել նրանց ու մյուս բաները... Հա՛, դու ներկայացուցիչների Ժողովի անդամ ես ու այնպիսի տղա ունես որ... Խնդրեմ, վերցրու աղ ու հացը, թե չէ ես մի տեսակ վախում եմ ու ծնկներս էլ դողում են։

Պանտելեյ Պրակոֆևիչը իրեն ցույց տված պատվից միանգամայն բավարարված, հրաժարվում էր, քաղաքավարություն բանեցնում, հետո միանգամից, ուսերը թոթվելով, արագ խաչակնքեց ու վերցրեց ասեղնագործ երեսսրբիչով ծածկված, աղ ու հացով սկուտեղը. արմունկներով դես-դեն հ, ելով ամբոխին, առաջ անցավ։

Ավտոմոբիլները այլևայլ գույնի, հաչելուց ձայները խռպված շների մի ամբողջ ոհմակի ուղեկցությամբ մոտենում էին հրապարակին։

— Հը՛... ո՞նց է, հո չե՞ս վախենում,— շշնջալով հարցրեց սփրթնած ատամանը Պանտելեյ Պրակոֆևիչին։ Նա առաջին անգամն էր այդքան մեծ հրամանատարություն տեսնում։ Պանտելեյ Պրակոֆևիչը շեղակի նայեց նրան՝ փայլեցնելով աչքերի կապտավուն սպիտակուցները, ու հուզմունքից խռպված ձայնով ասավ.

— Առ, բռնի, մինչև ես սանրեմ մորուքս։ Վեցրու, է՛։

Ատամանը սիրով ընդունեց սկուտեղը, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը կոկեց բեղ ու մորուքը, կտրիճաբար ուղղեց կուրծքը, ու հենվելով խեղված ոտի մատների ծայրերին,— որպեսզի չերևա իր կաղությունը,— նորից վերցրեց սկուտեղը։ Բայց սկուտեղը այնպես դողաց նրա ձեռքին, որ ատամանը վախեցած հարցրեց.

— Հո վար չե՞ս զցի։ Օֆ, մտիկ արա, հա՛-ա։

Պանտելեյ Պրակոֆևիչը արհամարհանքով թոթվեց ուսը։ Ո՞նց թե. ինքը վար զցի՞։ Ի՞նչ հիմարություն կարող է ասել մարդը։ Ինքը, որ ներկայացուցիչների Ժողովի անդամ էր ու ատամանի պալատում ձեռք տալով էր բարևում բոլորին, հանկարծ պիտի վախենա մի ինչ-որ գեներալից, հա՞։ Այդ քոսոտ խուտորային ատամանը բոլորովին թոցրել է խելքը։

— Ես, աղբերս, երբ որ ներկայացուցիչների Ժողովումն էի, հենց իրեն, Ջորաց ատամանի հետ զցովի չայ խմեցի, հա՛-ա...— սկսեց Պանտելեյ Պրակոֆևիչը ու լռեց։

Առջևի ավտոմոբիլը կանգ առավ նրանից ընդամենը մի տասը քայլ հեռավորությամբ։ Սափրված շոֆերը, գլխին մեծ հովարով գլխարկ ու ֆրենչի ուսերին նեղ, ոչ-ռուսական ուսադիրներ,— ճարպկությամբ դուրս թռավ, բացեց դռնակը։ Ավտոմոբիլից ծանր ու մեծ դուրս եկան պաշտպանական տարազ հագած երկու զինվորական, քայլեցին դեպի ամբոխը։ Նրանք գնացին ուղիղ դեպի Պանտելեյ Պրակոֆևիչը, իսկ սա, ինչպես որ ձգված կանգնել էր, այնպես էլ մնաց։ Նա գլխի ընկավ, որ համեստ հագնված հենց այդ մարդիկ էլ գեներալներն են, իսկ նրանք, որոնք գալիս էին ետևից ու ավելի զուգված տեսք ունեին, ուղղակի նրանց ուղեկցող շքախմբի աստիճանավորներ էին։ Ծերունին անթարթ նայում էր մոտեցող հյուրերին, ու նրա հայացքում ավելի ու ավելի էր անդրադառնում չթաքցրած զարմանքը։ Բա ո՞ւր են գեներալական կախ ընկած էպոլետները, հը՞։ Ո՞ւր են ակսելբանտները և շքանշանները։ Էլ ի՞նչ գեներալներ են դրանք, եթե իրենց տեսքով իսկի էլ չեն տարբերվում ամենասովորական զինվորական գրագիրներից, հը՞։ Պանտելեյ Պրակոֆևիչը վայրկենապես և դառը կերպով հիասթափվեց։ Նրան մի տեսակ ցավ պատճառեցին թե իր հանդիսավոր պատրաստությունը հանդիպման համար և թե գեներալական կոչումը խայտառակող այդ գեներալները։ Գրրրո՜ղը տանի, եթե նա գիտենար, որ այդ տեսակ գեներալներ են գալու, այդչափ խնամքով չէր հագնվի ու չէր սպասի այդպիսի երկյուղածությամբ և, համենայն դեպս, հիմարի պես չէր կանգնի սկուտեղը ձեռքին ու սկուտեղի վրայի վատ թխված հացով, որը, իհարկե, մի որևէ քոսոտ պառավի թխածն էր։ Ոչ, Պանտելեյ

Մելեխովը երբեք էլ ծաղրատեղ չէր դառել մարդկանց համար, և ահա հիմի այդպես եղավ. մի րոպե առաջ նա ինքը լսեց, թե իր ետևում ոնց էին քոքռում երեխաները, իսկ մի սատանի լակոտ մինչև իսկ բղավեց ամբողջ կոկորդով մեկ. «Տղերք, հլա մտիկ արեք, թե կաղ Մելեխովը ոնց է փքվել, ասես թե աքերին ձուկ է կուլ տվել»։ Ինչի՞ համար է նա ծաղրանքի ենթարկվում ու նեղում հիվանդ ոտը՝ լարի պես ձգվելով... Պանտելեյ Պրակոֆևիչը ներքուստ այրվում, փոթոթվում էր զայրույթից։ Եվ այդ ամենի համար մեղավոր է վախկոտ ատամանը։ Եկավ, գլխից դուրս տվեց, վերցրեց ձին ու տարանտասը, լեզուն դուրս գցած վազվզեց խուտորով մեկ, ձիերի համար չխկաններ ու զանգուլակներ էր մանգալի։ Ճիշտ որ, լավ բան չի տեսել մարդը ու շոփի կտորի համար էլ ուրախ է։ Պանտելեյ Պրակոֆևիչն իր կյանքում ե՞րբ է այդպիսի գեներալներ տեսել. վերցնենք թեկուզ կայսերական ստուգատեսը. հրես, գալիս է մի գեներալ, ամբողջ դոշը կորել է խաչերի տակ, մեդալների տակ, ոսկե զարդակարերի մեջ. մտիկ ես տալի, ու քեֆդ գալիս է, սրբապատկեր է և ոչ թե գեներալ։ Իսկ սրանք ոտից գլուխ կանաչ են հագել, ոնց որ թե կանաչ թռչուններ լինեն։ Մեկի գլխին էլ ոչ թե հովարով գլխարկ է, ոնց որ պահանջում է նրա ամբողջ տարազը, այլ մարմաշի գույնի ինչ-որ կատելոկ է, մուրն էլ տկլոր թրաշած է, մի հատ մազ էլ չես գտնի, թեկուզ ճրագով ման գաս... Պանտելեյ Պրակոֆևիչը կիտեց հոնքերը ու քիչ մնաց թքեր զզվանքից, բայց մեկը ետևից ուժեղ բութեց նրան, բարձր շշնջաց.

— Դե, գնա՛, է, մատուցի...

Պանտելեյ Պրակոֆևիչը քայլեց դեպի առաջ։ Գեներալ Սիդորինը նրա գլխի վրայով անցողակի դիտեց ամբոխը, հնչեղ ձայնով ասաց.

— Բարև ձեզ, պարոնայք ծերունիներ.

— Առողջություն ենք ցանկանում, ձերդ գերազանցություն,— զատ-զատ բղավեցին խուտորցիները։

Գեներալը Պանտելեյ Պրակոֆևիչի ձեռքից ողորմածաբար ընդունեց աղ ու հացը, ասաց «շնորհակալություն» և սկուտեղը տվեց համհարզին.

Սիդորինի կողքին կանգնած անգլիական բարձրահասակ,

լղար գնդապետը աչքերին քաշած սաղավարտի տակից սառը հետաքրքրությամբ զննում էր կազակներին։ Գեներալ Բրիգգսի — Կովկասում բրիտանական ռազմական միսիայի պետի հրամանով նա ուղեկցում էր Սիդորինին, որը տեսչական ուղևորություն էր կատարում բոլշևիկներից մաքրված Դոնի Զորաց երկրում. այդ գնդապետը թարգմանչի միջոցով բարեխղճությամբ ուսումնասիրում էր կազակների տրամադրությունը, ինչպես նաև ծանոթանում էր ռազմաճակատների դրությանը։

Գնդապետը հոգնած էր ճանապարհի զրկանքներից, տափաստանային միապաղաղ տեսարաններից, ձանձրալի խոսակցություններից ու մեծ տերության ներկայացուցչի պարտականությունների ամբողջ բարդ կոմպլեքսից, բայց, ամենից առաջ — թագավորական ծառայության շահե-ե՞րը, և նա ուշադրությամբ լսում էր ստանիցայի հռետորի ճառը ու գրեթե ամեն ինչ հասկանում, որովհետև գիտեր ռուսաց լեզուն և այդ թաքցնում էր կողմնակի մարդկանցից։ Նա գոռոզությամբ էր նայում տափաստանների այդ ռազմասեր զավակների թուխ, տարբեր բնույթի դեմքերին՝ ապշելով ցեղային այն խառնակությունից, որ միշտ էլ աչքի է ընկնում կազակ ամբոխին նայելիս. շիկահեր կազակ-սլավոնի կողքին կանգնած էր տիպիկ մի մոնղոլ, իսկ սրա կողքին՝ ագռավի թևի պես սև, ջահել մի կազակ, թևը կեղտոտ վիրակապով կապած, ու ցածր ձայնով զրուցում էր ալեզարդ, բիբլիական մի նահապետի հետ, ու կարելի էր գրաղ գալ, որ ցուպին հենված, հին ձևի կազակական չեքմեն հագած այդ նահապետի երակներում կովկասյան լեռնականների ամենամաքուր արյունն է հոսում...

Գնդապետը մի քիչ գիտեր պատմությունը. զննելով կազակներին, նա մտածում էր, որ ոչ միայն այդ բարբարոսները, այլև նրանց թոռներն էլ չեն կարողանա մի որևէ նոր Պլատովի հրամանատարությամբ գնալ Հնդկաստան։ Բոլշևիկների դեմ հաղթանակ տանելուց հետո քաղաքացիական պատերազմից արյունաքամ եղած Ռուսաստանը երկար ժամանակով դուրս կգա մեծ տերությունների շարքից, ու մոտալուտ տասնամյակների ընթացքում այլևս ոչինչ չի սպառնա Բրիտանիայի արևելյան տիրություններին։ Իսկ որ բոլշևիկ-

ներին կհաղթեն, գնդապետը հաստատ համոզված էր դրանում։ Նա զգաստ մտքի տեր մարդ էր, մինչև պատերազմը երկար ապրել էր Ռուսաստանում, և իհարկե ոչ մի կերպ չէր կարող հավատալ, որ կիսավայրենի երկրում հաղթանակեին կոմունիզմի ուտոպիական գաղափարները...

Բարձր փսփսացող կանայք գրավեցին գնդապետի ուշադրությունը։ Առանց գլուխը շուռ տալու նա նայեց նրանց այտոսկրոտ, հողմահար դեմքերին, ու հաղիվ նկատելի արհամարհական քմծիծաղը շոշափեց պինդ սեղմված նրա շրթունքները։

Հանձնելով աղ ու հացը, Պանտելեյ Պրակոֆևիչը խառնվեց ամբոխին։ Նա չուզեց լսել, թե ինչպես վեշենցի մի ինչ որ ճոռոմախոս մարդ Վեշենսկայա ստանիցայի կազակ բնակչության անունից ողջունում էր ժամանածներին, այլ դուրս գալով ամբոխի միջից, քայլեց դեպի տարանտասները, որոնք կանգնած էին հեռվում։

Ձիերը բոլորն էլ քրտնակալած էին և ծանր հոգնած։ Ներունին մոտեցավ մեջտեղում լծած իր զամբիկին, թևքով սրբեց նրա ռունգները, հոգոց հանեց։ Նա ուզում էր հայհոյանք թափել, իսկույն արձակել զամբիկը և տուն տանել,— այնքա՛ն մեծ էր նրա հիասթափությունը։

Այդ ժամանակ գեներալ Սիդորինը տատարցիներին ճառ էր ասում։ Հավանություն տալով կարմիրների թիկունքում նրանց կատարած մարտական գործողություններին, նա ասաց.

— Դուք արիաբար կռվեցիք մեր ընդհանուր թշնամիների դեմ։ Ձեր ծառայությունները չի մոռանա հայրենիքը, որ հետզհետե ազատվում է բոլշևիկներից, նրանց սարսափելի լծից։ Ես կուզենայի պարգևատրել ձեր խուտորի այն կանանց, որոնք ինչպես մեզ հայտնի է, առանձնապես աչքի են ընկել կարմիրների դեմ մղվող զինված պայքարում։ Ես խնդրում եմ, որ առաջ գան ձեր այն հերոսուհի կազակուհիները, որոնց ազգանունները հիմա կկարդացվեն։

Սպաներից մեկը կարդաց մի կարճ ցուցակ։ Ցուցակում առաջինը Դարյա Մելեխովան էր, մնացածները ապստամբության սկզբում սպանված կազակների այրիներն էին, որոնք, ինչպես և Դարյան, մասնակցել էին Սերդոբյան գնդի

անձնատվությունից հետո Տատարսկի բերված գերի կոմունիստների սպանության։

Հակառակ Պանտելեյ Պրակոֆևիչի հրամանի, Դարյան դաշտ չէր գնացել։ Նա այնտեղ էր, խուտորի կանանց բազմության մեջ, ու զուգված-զարդարված էր ասես տոն օրվա համար։

Իր ազգանունը լսելուն պես կանանց դես-դեն հրելով առաջ անցավ՝ քայլելիս շտկելով սպիտակ, ժանյակավոր եզրերով լաչակը, կկոցելով աչքերը ու թեթև, շփոթված ժպտալով։ Նույնիսկ ճանապարհից և սիրային արկածներից հոգնած լինելով էլ նա խիստ գեղեցիկ էր։ Արևից չսևացած, դալուկ այտերը է՛լ ավելի պարզ էին ստվերագծում կկոցված, որոնող աչքերի թեժ փայլը, իսկ ներկած հոնքերի քմահաճ աղեղում ու ժպտացող շրթունքների ծալքում ինչ-որ գրգռիչ ու անմաքուր բան էր թաքնված։

Նրա ճանապարհը փակեց մեջքը ամբոխի կողմը դարձրած մի սպա։ Դարյան թեթև հրեց նրան, ասաց.

— Ճամփա տվեք փեսացուի ազգուտակին,— ու մոտեցավ Սիդորինին։

Սիդորինը համհարզի ձեռքից վերցրեց գեորգևյան ժապավենով մի մեդալ, մատների անվարժ շարժումներով դա կպցրեց Դարյայի կոֆտային, կրծքի ձախ կողմին ու ժպտալով նայեց նրա աչքերին։

— Դուք մարտ ամսին սպանված խորունժի Մելեխովի՞ այրի՞ն եք։

— Այո։

— Հիմա դուք փող կստանաք, հինգ հարյուր ռուբլի։ Փողը ձեզ կտա ահա այս տղան։ Զորաց ատաման Աֆրիկան Պետրովիչ Բոգաևսկին և Դոնի կառավարությունը ձեզ շնորհակալություն են հայտնում ձեր ցուցաբերած բարձր արիության համար և խնդրում են ընդունել իրենց ցավակցությունը... Նրանք ձեզ ցավակցում են ձեր վշտի համար։

Դարյան լրիվ չհասկացավ գեներալի ասածը։ Գլխի շարժմամբ նա շնորհակալություն հայտնեց, համհարզի ձեռքից վերցրեց փողը ու լուռ ժպտալով, նայեց դեռ չծերացած գեներալի հենց աչքերի մեջ։ Նրանք համարյա միևնույն բարձրության հասակով էին, ու Դարյան, առանձնապես չճնշվելով,

գնում էր գեներալի նիհար դեմքը։ «Էժան են գնահատել իմ Պետրոյին, մի լուծ եզան արժեքի չափ... Իսկ գեներալիկը տեսքով ոչի՛նչ, հարմար է»,— իրեն հատուկ ցինիզմով մտածում էր նա այդ պահին։ Սիդորինը սպասում էր, որ նա հեռանա, բայց Դարյան հապաղում էր։ Համհարզը և Սիդորինի ետևում կանգնած սպաները հոնքերի շարժմամբ միմյանց ցույց էին տալիս զալում այրի կնկանը. նրանց աչքերում ծիծաղի կայծեր թռթռացին. նույնիսկ անգլիացի գնդապետն էլ աշխուժացավ, շտկեց գոտին, մի ոտից մյուսին հենվեց, ու նրա անտարբեր դեմքի վրա ժպիտին հեռավոր նմանություն ունեցող ինչ-որ մի բան երևաց։

— Ես կարող եմ գնա՞լ,— հարցրեց Դարյան։

— Այո, այո, իհարկե,— հապճեպ թուլատրեց Սիդորինը։

Դարյան անհարմար շարժմամբ փողը խոթեց կոֆտայի կրծքի տակ, քայլեց դեպի ամբոխը։ Ճառերից ու ցերեմոնիաներից հոգնած բոլոր սպաները ուշադրությամբ հետևում էին նրա թեթև, սահուն քայլվածքին։

Հանգուցյալ Մարտին Շամիլի կինը անվստահ մոտեցավ Սիդորինին։ Երբ նրա հնամաշ կոֆտային էլ մեդալ կպցրին, նա հանկարծ լաց եղավ, ու այնպես տխուր և կանացիորեն դառն լաց եղավ, որ սպաների դեմքերը միանգամից կորցրին ուրախ արտահայտությունը և լրջացան, թթու ցավակցություն արտահայտեցին։

— Ձեր ամուսինը նույնպե՞ս սպանված է,— մռայլվելով հարցրեց Սիդորինը։

Լացող կինը ձեռներով ծածկեց դեմքը, լուռ շարժեց գլուխը։

— Նա մի տուն լիքը երեխեք ունի,— հաստ ձայնով ասաց կազակներից մեկը։

Սիդորինը դարձավ դեպի անգլիացին, բարձրաձայն ասաց.

— Մենք պարգևատրում ենք այն կանանց, որոնք բոլշևիկների դեմ մղված մարտերում բացառիկ քաջություն են ցուցաբերել։ Սրանց մեծամասնության ամուսինները սպանվել են բոլշևիկների դեմ ուղղված ապստամբության սկզբում, և այս այրի կանայք, վրեժ լուծելով ամուսինների համար,

ամբողջովին ոչնչացրել էին տեղական կոմունիստների խոշոր մի ջոկատ։ Իմ կողմից պարգևատրվածներից առաջինը, որ սպայի կին է, սեփական ձեռքով սպանել էր դաժանությամբ հռչակված մի կոմիսար-կոմունիստ։

Թարգմանիչ-սպան արագ խոսեց անգլերեն։ Գնդապետը լսեց, թեքեց գլուխը, ասաց.

— Ես սքանչանում եմ այդ կանանց քաջությամբ։ Ասացեք, գեներալ, նրանք տղամարդկանց հետ հավասարապե՞ս են մասնակցել մարտերին։

— Այո,— կարճ պատասխանեց Սիդորինը և ձեռքի անհամբեր շարժմամբ նշան արավ, որ երրորդ այրին ավելի մոտ գա։

Պարգևները հանձնելուց հետո հյուրերը շուտով մեկնեցին ստանիցա։ Ժողովուրդը սկսեց հապճեպ ցրվել հրապարակից՝ շտապելով խոտհնձի, ու մի քանի րոպեից հետո, երբ չքացան շների հաչոցի ուղեկցությամբ սլացող ավտոմոբիլները, եկեղեցու պարսպի մոտ մնացին միայն երեք ծերունի։

— Մազալու ժամանակներ են եկել, հա՛-ա,— ասաց նրանցից մեկը ու լայն տարածեց ձեռքերը։— Առաջ, կովի ժամանակ, Եգորի[1] խաչ կամ թե մեդալ էին տալի մենծ-մենծ գործերի համար, հերոսության համար, և ո՞ւմ էին տալի,— ամենաքաջերին, գլխից ձեռք վերցրածներին։ Շատ մարդիկ կային, որոնք խաչ ստանալու ռիսկ էին անում։ Զուր չէին ասում այս առածը. «Կամ խաչով գնա տուն, կամ կովում զարկվիր դուն»։ Իսկ հիմի մեդալները կնանոց վրա են կախում... Գոնե մի բանի համար էլա լիներ, թե չէ, այնպես էլի... Կազակները գերի, զինաթափ մարդկանց քշեցին-բերին խուտոր, իսկ կնանիքը ցցերով կոտորեցին նրանց։ Էլ հերոսությունս ո՞րն է։ Բան չեմ հասկանում, աղբեր։

Մի ուրիշ, տկար և աչքերից խեղճ ծերուկ երկարեց մի ոտը, գրպանից դանդաղ հանեց ծխախոտի լաթե, կոլոլած տոպրակը, ասաց.

— Նրանք մեծամեծները Ձերկասկովից ավելի լավ են տեսնում։ Ուրեմս, այնտեղ այսպես են դատել. հարկավոր է կնանոց էլ մի բան տալ, որ բոլորն էլ սիրտ առնեն, որ լավ կովեն, էլի՛։ Է՛լ մեդալ, է՛լ հինգ հարյուր մանեթ,

[1] Եգորի խաչ — գեորգևյան խաչ։ (Ե. Թ.)։

— ո՞ր կնիկը չի շլանա այդ տեսակ պատվից։ Կան կազակներ, որոնք չէին ուզենա ռազմաճակատ գնալ, կմտածեին խաբս տալ կռվիցը, իսկ հիմի էլ նա կմնա՞ տանը։ Կնիկը հա՝ կբզզա նրա ականջին։ Գիշերվա կկուն ոչ հանգիստ կտա, ոչ քուն։ Ամեն մի կնիկ էլ կմտածի. «Կարելի է իմ դոշին է՞լ մեդալ կախեն, հը՞»։

— Այդ մեկը դու զուր ես ասում, խնամի Ֆյոդոր,— առարկեց երրորդը։— Հարկավոր էր պարգև տալ, ու տվին։ Կնանիքը որբևայրի են մնացել, փողը նրանց մեծ օգնություն կլինի տունուտեղը կառավարելու համար, իսկ մեդալները դոշաղության համար են տրված։ Մելեխովների Դաշկան առաջինը արեց Կոտլյարովի դատը, ու ճիշտ է։ Տերն ինքն է նրանց բոլոր դատավորը, ամա կնանոնց էլ չի կարելի մեղավորացնել. ջիգյարը հո գիտե՞ս ինչ բան է...

Ծերունիները այնքան վիճեցին ու կշտամբեցին իրար, մինչև որ հնչեցին երեկոյան ժամասացության զանգերը։ Ու հենց որ ժամկոչը զարկեց զանգը, երեքն էլ վեր կացան, հանեցին գդակները, խաչակնքեցին և ծանր ու մեծ գնացին եկեղեցի։

XIII

Զարմանալի է, թե ինչպես փոխվեց կյանքը Մելեխովների ընտանիքում։ Բոլորովին կարճ ժամանակ առաջ Պանտելեյ Պրակոֆևիչը իրեն միանգամայն տեր ու տնօրեն էր զգում իր տանը, բոլոր տնեցիներն անվերապահորեն ենթարկվում էին նրան, աշխատում էին իրար կողքի, միասին ուրախանում, միասին տխրում, ու ամբողջ կենցաղում արտահայտվում էր երկարամյա մեծ կարգավորվածությունը։ Ընտանիքը միանգամայն համերաշխ էր, իսկ գարնանից ամեն ինչ փոխվեց։ Առաջինը անջատվեց Դունյաշկան։ Հոր նկատմամբ նա բացահայտ անհնազանդություն չէր ցուցաբերում, բայց ամեն մի աշխատանք, որ ընկնում էր իր վրա, նա կատարում էր ակներև դժկամությամբ ու այնպես, որ կարծես թե աշխատում էր ոչ թե իրեն համար, այլ վարձով. արտաքուստ էլ դարձել էր մի տեսակ ինքնամփոփ, օտարոտի. հիմա ուշ-ուշ էր լսվում Դունյաշկայի անհոգ ծիծաղը։

Երբ Գրիգորին մեկնեց ռազմաճակատ, այնուհետև Նատալյան էլ կտրվեց ծերունիներից. համարյա ամբողջ ժամանակն անց էր կացնում երեխաների հետ, միայն նրանց հետ էր հաճույքով խոսում ու զբաղվում, ու երևում էր, որ թունդ դարդ է անում մի բանի համար, բայց իր դարդի մասին ոչ մի անգամ ոչ մի խոսք չասաց մոտիկներից մեկնումեկին, ոչ ոքի չգանգատվեց և ամեն կերպ թաքցնում էր իր ծանր հոգեվիճակը։

Դարյայի մասին խոսելն էլ ավելորդ էր. ռազմական բեռ տարած բնակչական սայլերի հետ գնալ-գալուց հետո Դարյան բոլորովին փոխվել էր։ Ավելի և ավելի հաճախ էր ընդդիմախոսում կեսարարին, Իլյինիչնայի վրա իսկի ուշադրություն էլ չէր դարձնում, առանց որևէ նկատելի պատճառի բարկանում էր բոլորի վրա, հիվանդ ձևանալով հրաժարվում էր խոտի հնձից ու իրեն այնպես էր պահում, որ կարծես թե վերջին օրերն էր ապրում Մելեխովների տանը։

Պանտելեյ Պրակոֆևիչի աչքի առաջ քայքայվում էր ընտանիքը։ Նա և պառավը երկուսով էին մնում իրար հետ։ Անսպասելիորեն և արագ խախտվեցին ազգակցական կապերը, կորավ փոխհարաբերությունների ջերմությունը, խոսակցությունների մեջ ավելի ու ավելի հաճախ էին արտահայտվում ջղայնոտության և օտարացման նշանները... Ընդհանուր սեղան էին նստում ոչ թե առաջվա պես,— միասնական և միահամուռ ընտանիքով,— այլ ինչպես պատահմամբ միասին հավաքված մարդիկ։

Այդ բոլորի պատճառը պատերազմն էր, Պանտելեյ Պրակոֆևիչը դա շատ լավ էր հասկանում։ Դունյաշկան չարանում էր ծնողների վրա, որ նրանք իրեն զրկել էին այն հույսից, թե երբևէ կամուսնանա Միշկա Կոշևոյի հետ,— միակ մարդու, որին նա սիրում էր աղջկական ամբողջ անվերապահ սիրով. Նատալյան լուռ և խորապես, իրեն հատուկ ծածկամտությամբ, տանջվում էր Գրիգորիի և Ակսինյայի կապը վերսկսվելու պատճառով։ Պանտելեյ Պրակոֆևիչն էլ այդ բոլորը տեսնում էր, բայց ոչինչ չէր կարող անել ընտանիքում առաջվա կարգը վերականգնելու համար։ Հիրավի, այն բոլորից հետո, ինչ որ կատարվել էր, նա հո չէ՞ր կարող համաձայնություն տալ, որ իր աղջիկն ամուսնա-

նար թունդ բոլշևիկի հետ, և ի՞նչ օգուտ կլիներ իր համաձայնությունից, երբ այդ սատանի փեսացուն թրև էր գալիս ռազմաճակատում, այն էլ կարմիրբանակային զորամասում։ Նույնը նաև Գրիգորիի նկատմամբ. եթե նա սպայի աստիճան չունենար, Պանտելեյ Պրակոֆևիչը շատ շուտով նրա հախիցը կգար։ Եվ այնպես կգար հախիցը, որ Գրիգորին դրանից հետո աչքի տակով էլ չէր մտիկ տա Աստախովի տան կողմը։ Սակայն պատերազմն ամեն ինչ իրար խառնեց և ծերունուն զրկեց իր ուզածի պես ապրելու և իր տունը կառավարելու հնարավորությունից։ Պատերազմը տնաքանդ արեց նրան, զրկեց առաջվա պես եռանդով աշխատելու ձգտումից, խլեց նրա ավագ որդուն, ընտանիքի մեջ երկպառակություն և խառնափնթորություն մտցրեց։ Պատերազմը փչացրեց նրա կյանքը, ինչպես փոթորիկը — ցորենի արտը, բայց ցորենը փոթորկից հետո էլ բարձրանում ու կյանք է առնում արևի տակին, իսկ ծերունին էլ չէր կարող ոտքի ելնել։ Նա մտքում խաչ քաշեց ամեն ինչի վրա,— ինչ ուզում է լինի։

Գեներալ Սիդորինի ձեռքից ստանալով պարգևը, Դարյան զվարթացավ։ Այն օրը նա հրապարակից եկավ աշխուժացած ու երջանիկ։ Աչքերը փայլեցնելով, Նատալյային ցույց տվեց մեդալը։

— Այդ ինչի՞ համար են տվել քեզ,— զարմացավ Նատալյան։

— Քավոր Իվան Ալեքսեևիչի համար, ողորմի նրա, շան որդու հոգուն։ Սա էլ Պետրոյի համար...— Ու ինքն իրեն գովելով, ցույց տվեց Դոնի շխկշխկան թղթադրամները։

Դարյան այնպես էլ չգնաց դաշտ։ Պանտելեյ Պրակոֆևիչը ուզեց համոզել, որ նա գնա, ուտելիք տանի, բայց Դարյան վճռականապես հրաժարվեց։

— Ձեռ քաշեք ինձնից, հայրիկ, ես հոգնել եմ ճանապարհից։

Ծերունին մռայլվեց։ Դարյան մի փոքր կոպիտ իր մերժումը հարթելու համար կես-կատակով ասաց։

— Այս տեսակ օրը դուք մեղք գործած կլինեք, եթե ինձ ստիպեք դաշտ գնալ։ Ինձ համար այսօր տոն է։

— Ես ինքս կտանեմ,— համաձայնվեց ծերունին։— Լավ, բա փո՞ղը։

— Ի՞նչ փող,— Դարյան զարմանքից վեր քշեց հոնքերը։

— Փողը ի՞նչ պիտի անես, հարցնում եմ։

— Դա իմ գործն է։ Ինչ ուզենամ, այն էլ կանեմ։

— Այսինքս ո՞նց թե, հը՞։ Փողը հո Պետրոյի համա՞ր են տվել քեզ։

— Փողը ինձ են տվել և դուք այստեղ հաշիվ չունեք։

— Բա դու մեր տնից չե՞ս, ինչ է։

— Իսկ դուք ի՞նչ եք ուզում, հայրիկ, վերցնե՞լ փողը ինձնից։

— Բոլորը վերցնելու մասին բան չեմ ասում, բայց Պետրոն մեր տղե՞ն է թե ոչ։ Ես ու պառավը պիտի ստանա՞նք մեր մասը, թե ոնց։

Կեսարարը պարզապես անվստահ էր իր պահանջների նկատմամբ, և Դարյան վճռականապես պնդեց իր մերժումը։ Նա ծաղրանքով, հանգիստ ասաց.

— Ես ոչինչ չեմ տա ձեզ, մի ռուբլի էլ չեմ տա։ Դուք այստեղ մաս չունեք, եթե ունենայիք, ձեր բուրը կդնեին։ Ո՞րտեղից վերցրիք, թե այստեղ մաս ունեք, հը՞։ Դրա մասին խոսք էլ չի եղել, և դուք աչք մի տնկեք իմ փողի վրա, ոչինչ չեք ստանա։

Պանտելեյ Պրակոֆևիչը ձեռնարկեց վերջին փորձը.

— Դու մեր ընտանիքում ես ապրում, մեր հացն ես ուտում, ուրեմն մեր մեջ ամեն բան էլ պետք է ընդհանուր լինի։ Թե որ ամեն մեկն իր տնտեսությունն ունենա, այդ ի՞նչ կարգ ու կանոն կլինի, հը՞։ Ես այդ թույլ չեմ տա,— ասաց նա։

Բայց Դարյան իրեն պատկանող փողին տիրանալու այդ փորձին էլ մերժումով պատասխանեց։ Անամոթաբար ժպտալով, նա հայտարարեց.

— Ես ձեզ հետ պսակված չեմ, ապի, այսօր ձեզ մոտ եմ ապրում, իսկ վաղը մարդու կգնամ, և դուք էլ ինձ չեք տեսնի։ Իսկ ապրելու համար ես պարտավոր չեմ վճարել ձեզ։ Ես տասը տարի աշխատել եմ ձեր ընտանիքի համար, մեջք եմ ծռել։

— Դու քեզ համար ես աշխատել, անառակ,— վրդով-

ված բղավեց Պանտելեյ Պրակոֆևիչը։ Նա էլի ինչ-որ գոռ-գոռաց, բայց Դարյան չլսեց էլ, շուռ եկավ հենց նրա քթի առաջ ու թափահարելով փեշերը, գնաց օթախը։ «Ես քո գիտցածներից չեմ, հա՛-ա»,— հեգնաբար ժպտալով շշնջում էր նա։

Խոսակցությունը դրանով էլ վերջացավ։ Իրոք որ Դարյան այնպիսին չէր, որ զիջեր իր ունեցածը՝ վախենալով ծերունու բարկությունից։

Պանտելեյ Պրակոֆևիչը պատրաստվեց դաշտ գնալու և մինչ այդ կարճ խոսակցություն ունեցավ Իլյինիչնայի հետ։

— Դու հետևիր Դարյային...— խնդրեց նա։

— Ի՞նչ պիտի հետևեմ,— զարմացավ Իլյինիչնան։

— Նա պոկ կգա, կհեռանա տնից և մեզնից բան-ման կտանի։ Գիտե՞ս, մի բան կա, որ այդպես թևերն է թափ տալի... Երևում է, որ գտել է մեկին և էգուց-էլօր մարդի կգնա։

— Երևի այդպես է,— հոգոց հանելով համաձայնվեց Իլյինիչնան։— Ապրում է ոնց որ խախուլը օտարության մեջ, ոչ մի բան դուր չի գալի նրան, ոչինչ իրեն ուզածի պես չի... Հիմի նա կտրված պատառ է, իսկ կտրված պատառը չես կպցնի, ինչքան էլ շարշարվես։

— Մենք նրան ինչի՞ն պիտի կպցնենք որ։ Տես, դմբո պառավ, թե որ խոսակցություն լինի, փեշից չբռնես, հա՛-ա։ Թող գնա տնից։ Ես ձանձրացել եմ նրա հետ գլուխ ցավացնելուց։— Պանտելեյ Պրակոֆևիչը բարձրացավ սայլի վրա. քշելով եզները, վերջացրեց խոսքը.— Նա խուսափում է աշխատանքից, ոնց որ շունը ճանճերից, ու միշտ էլ ուզում է քաղցր պատառ լափել ու չքվել, երգ ու պարի գնալ։ Պետրոյից հետո, ողորմի նրա հոգուն, մենք չենք կարող պահել այդ տեսակ կնկանը։ Նա ոչ թե կնիկ է, այլ կպչող շոռ ու ցավ։

Ծերուկների ենթադրությունները սխալ էին։ Ամուսնանալը Դարյայի մտքովն էլ չէր անցնում։ Ամուսնանալու մասին նա չէր մտածում, սրտում մի այլ հոգս կար...

Այդ ամբողջ օրը Դարյան շատախոս և ուրախ էր։ Նույնիսկ փողի համար եղած ընդհարումն էլ չանդրադարձավ իր տրամադրության վրա։ Նա երկար ժամանակ

պատվում էր հայելու առաջ, այլևայլ դիրքեր ընդունելով դիտում մեդալը, մի հինգ անգամ փոխեց հագուստը, որ տեսնի, թե որ կոֆտային է ավելի շատ սաղում գեորգյան գալավոր ժապավենը, կատակում էր՝ «Հիմի ես պետք է խաչեր էլ ունենամ»։ Հետո Իլյինիչնային կանչեց օթախը, երկու հատ քսան ռուբլիանոց թղթադրամ ճխտեց նրա թևքի մեջ և իր տաք ձեռքերով Իլյինիչնայի հանգուցաշատ ձեռքը կրծքին սեղմելով, շշնջաց. «Սա Պետրայի հիշատակի համար է... Մայրիկ, եկեղեցական հոգեհանգիստ պատվիրեցեք, կուտյա եփեք...»— Ու լաց եղավ... Բայց մի բոպեից հետո արցունքներից դեռ փայլող աչքերով արդեն խաղում էր Միշատկայի հետ, իր տոնական, մետաքսե շալով ծածկում նրան ու այնպես ծիծաղում, որ կարծես երբեք չէր լացել ու չգիտեր արցունքների աղի համը։

Վերջնականապես անձնատուր եղավ ուրախության, երբ Դունյաշկան եկավ դաշտից։ Դարյան նրան պատմեց, թե ինչպես ստացավ մեդալը, ու ծիծաղաշարժ ձևերով ցույց տվեց, թե ինչպես էր հանդիսավոր կերպով խոսում գեներալը և ինչպես խրտվիլակի նման կանգնել և իրեն էր նայում անգլիացին, հետո էլ ծածուկ, խորամանկորեն աչքով արավ Նատալյային, լուրջ դեմք ընդունելով ուզեց հավատացնել Դունյաշկային, թե շուտով իրեն, Դարյային, որպես սպայի այրիացած կնոջ, որ պարգևատրված է գեորգյան մեդալով, նաև սպայի աստիճան կտան ու կնշանակեն ծեր կազակների հարյուրյակի հրամանատար։

Նատալյան նորոգում էր երեխաների շապիկները ու լսում Դարյային՝ թաքցնելով ժպիտը, իսկ շփոթված Դունյաշկան, ձեռները աղերսագին ծալելով, խնդրում էր.

— Դա՛րյուշկա, ջանիկս, մի փչի, ի սեր Քրիստոսի, թե չէ ես չեմ հասկանում, թե քո ասածից որն է սուտ, որը ճիշտ։ Լուրջ պատմիր, էլի՛։

— Չե՞ս հավատում։ Էհ, ուրեմն դու հիմար աղջիկ ես։ Ես քեզ իսկը ճշմարտությունն եմ ասում։ Բոլոր սպաներն էլ հո ռազմաճակատումն են, բա ո՞վ պետք է ծերունիներին սովորեցնի քայլվածքը և մյուս բոլոր բաները, որ պահանջում է զինվորական գործը։ Նրանց կհանձնեն իմ հրամանատարության, իսկ ես կգամ գրողի տարած այդ քավթառների

հախիցը։ Ա՛յ թե ոնց պիտի նրանց հրամաններ տամ։— Դարյան ծածկեց խոհանոց տանող դուռը, որ սկեսուրը չտեսնի, յուրքայի փեշը արագ շարժմամբ խոթեց ոտների արանքը ու ետևից այն բռնելով, մերկ պլպլան սրունքները բաց արած, քայլեց օթախում, կանգ առավ Դունյաշկայի մոտ, հաստ ձայնով հրաման տվեց՝ «Ծերուկներ, զգա՛ստ, բարձրացնե՛լ մորուքները, ետ ձախ քայլի՛»։

Դունյաշկան էլ չհամբերեց, փոթկաց՝ դեմքը առնելով բռերի մեջ։ Նատալյան ծիծաղելով ասաց.

— Դե լավ, հերիք է, էլի։ Շատ ծիծաղելուց վատ բան դուրս կգա։

— Հա՛, էլի՛, վատ բան։ Դուք իսկի լավ բան տեսնո՞ւմ եք որ։ Թե որ ձեզ չծիծաղեցնեմ դուք այստեղ կբորբոսնեք դարդից։

Բայց Դարյայի ուրախության այդ պոռթկումը վերջացավ նույնպես հանկարծակի, ինչպես և սկսվել էր։ Կես ժամից հետո նա գնաց կողքի սենյակը, կրծքից բարկությամբ պոկեց չարաբաստիկ մեդալը ու գցեց սնդուկը. ձեռները այտերին դրած, երկար նստեց պատուհանի տակ, իսկ գիշերամտին չքացավ ու վերադարձավ միայն առաջին աքլորականչից հետո։

Դրանից հետո նա չորս օր ջանասիրությամբ աշխատում էր դաշտում։

Խոտի հունձը թույլ էր ընթանում։ Պակասում էին աշխատող ձեռքերը։ Օրվա ընթացքում երկու դեսյատինից ավելի չէին հնձում։ Անձրևը թրջեց խոտի լասերը, ավելացավ աշխատանքը. հարկավոր եղավ լասերը փռել, շորացնել արևի տակ։ Դեռ դեզեր չէին դրել, երբ նորից հորդ անձրև եկավ ու աշնանային հարատևությամբ ու համառությամբ տեղաց երեկոյից մինչև արշալույս։ Հետո եղանակը պայծառացավ, փչեց արևելյան քամին, տափաստանում նորից սկսեցին թխկթխկալ հնձիչները, սևացած դեզերից բորբոսի դառն-անալի հոտ տարածվեց, տափաստանը պարուրվեց գոլորշիով, ու կապտավուն մուժի միջից հազիվ նշմարվեցին պահպանական կուրգանների անպարզ ուրվագծերը, ձորակների կապտավուն հունները և ուռենիների կանաչ գագաթները հեռավոր լճակի վրա։

Չորրորդ օրը Դարյան պատրաստվեց ուղղակի դաշտից գնալ ստանիցա։ Նա այդ հայտարարեց, երբ դաշտակայանում նստեցին կեսօրվա հացն ուտելու։

Պանտելեյ Պրակոֆևիչը անբավականությամբ և հեգնանքով հարցրեց.

— Այդ ի՞նչ վռազ գործ է։ Մինչև կիրակի չե՞ս կարող սպասել։

— Հա, գործ կա և սպասելու ժամանակ չկա։

— Գոնե մի օր է՞լ չի կարելի սպասել։

Դարյան ատամների միջից պատասխանեց։

— Չէ։

— Թե որ այդքան վռազ ես, որ մի քիչ էլ չես կարող սպասել,— գնա։ Բայց այդ ի՞նչ շտապ գործեր ունես, կարելի՞ է իմանալ։

— Շատ բան իմանաք, շուտ կմեռնեք։

Դարյան, ինչպես միշտ, խոսքի տակ չէր մնում, ու Պանտելեյ Պրակոֆևիչը բարկությունից թքելով, դադարեցրեց հարցուփորձը։

Մյուս օրը, ստանիցայից վերադառնալով, Դարյան մտավ իուտոր։ Տանը մնացել էին միայն Իլյինիչնան ու երեխաները։ Միշատկան վաղ տվեց մոր տեգրակնոջ մոտ, բայց վերջինս ձեռքով սառնասրտությամբ ետ մղեց նրան, հարցրեց սկեսուրին.

— Նատալյան ո՞րտեղ է, մայրիկ։

— Բոստանում է, կարտոֆիլի քաղհան է անում։ Նա քեզ ինչի՞ համար է հարկավոր։ Թե՞ ալևորն է նրան կանչել։ Թող չգժվի նա, այդպես էլ ասա նրան։

— Ոչ ոք էլ չի կանչել, ես ինքս կուզեի նրան մի բան ասել։

— Ոտո՞վ ես եկել։

— Ոտով։

— Շո՞ւտ կվերջացնեն մերոնք։

— Երևի, վաղը։

— Կաց, է՛, ո՞ւր ես թռչում. անձրևները շա՞տ են փչացրել խոտը,— պոկ չգալով հարցուփորձ էր անում պառավը՝ քայլելով մուտքի սանդուղքից իջած Դարյայի ետևից։

— Չէ, շատ չի փչացրել։ Դե, ես գնամ, ժամանակ չկա...

— Բոստանից արի, վերցրու ալևորի շապիկը, լսո՞ւմ ես։

Դարյան այնպես ցույց տվեց, որպես թե չլսեց, ու հապճեպ աճապարեց դեպի գոմերը։ Նավամատույցի մոտ կանգ առավ, աչքերը կկոցելով դիտեց Դոնի կանաչավուն տարածությունը, որից անալի խոնավություն էր փչում, ու դանդաղ քայլեց դեպի բանջարանոցները։

Դոնի վրա սուրում էր քամին, շողում էին որորների թևերը։ Ալիքները ծուլորեն խփում էին թեք ափին։ Արևի տակ աղոտ փայլում էին կավճասարերը, որոնք շղարշված էին թափանցիկ, յասամանագույն մուժով, իսկ Դոնի մյուս կողմի առափնյա անտառը, անձրևներով լվացված, մատղաշ թարմ դալարիքի նման կանաչին էր տալիս ինչպես գարնան սկզբում։

Դարյան հոգնած ոտներից հանեց քոշերը, լվաց ոտները ու երկար նստեց ափին, տաքացած գլաքարերի վրա, ձեռքով աչքերը պաշտպանելով արևից, ունկնդրելով որորների թախծոտ ճիչերին, ալիքների համաչափ շրշյունին։ Նա արտասվելու չափ տխրում էր այդ անդորրությունից, որորների սրտաճմլիկ ճիչերից, ու է՛լ ավելի ծանր և դառն էր թվում այն դժբախտությունը, որ այնպես հանկարծակի եկել էր նրա գլխին։

Նատալյան դժվարությամբ շտկեց մեջքը, քլունգը դեմ արեց ցանկապատին ու, տեսնելով Դարյային, գնաց նրա մոտ։

— Դու ինձ կանչելո՞ւ ես եկել, Դաշա։

— Քեզ մոտ, իմ դարդով...

Նրանք նստեցին իրար կողքի։ Նատալյան հանեց լաչակը, ուղղեց մազերը, սպասողաբար նայեց Դարյային։ Նրան ապշեցրեց այն փոփոխությունը, որ այդ օրերին կատարվել էր Դարյայի դեմքի վրա. այտերը փոս էին ընկել ու մթագնել, ճակատի վրա խորունկ մի կնճիռ էր առաջացել, վառ փայլող աչքերը անհանգստություն էին արտահայտում։

— Ի՞նչ է պատահել քեզ. երեսդ սևացել է,— կարեկցաբար հարցրեց Նատալյան։

— Բա ո՞նց չսևանա...— Դարյան բռնազբոսիկ ժպտաց, մի փոքր լռեց։— Հլա շա՞տ պիտի քաղհանես։

— Երեկոյան կվերջացնեմ։ Ի՞նչ է պատահել քեզ։

Դարյան ջղաձգաբար կուլ տվեց թուքը ու խուլ ձայնով, արագ ասաց.

— Ա՛յ թե ինչ. հիվանդացել եմ ես... Գեշ հիվանդություն է... Այս անգամ, երբ գնացել էի սայլով, խաթայի մեջ ընկա... Անիծված սպան հիվանդացրեց։

— Ա՛յ թե ման գալը որտեղ հասցրեց...— Նատալյան վախեցած ու վշտաբեկ իրար զարկեց ձեռքերը։

— Հա՛, հա՛, այս օրին հասցրեց... Ի՞նչ ասեմ, ումի՞ց գանգատվեմ... Իմ թուլությունից... Կպավ անիծվածը, խելքահան արեց։ Ատամները սպիտակ էին, իսկ ինքը որդնած դուրս եկավ... Հիմի կորած եմ։

— Անբա՛խտ կնիկ, բա այդ ո՞նց կլինի, հիմի դու ի՞նչ պիտի անես.— Նատալյան լայնացած աչքերով նայում էր Դարյային, իսկ սա ինքն իրեն հավաքելով, աչքերը ոտներին հառած, արդեն հանգիստ շարունակեց.

— Գիտե՞ս, հլա դեռ ճամփին ես զգացի այդ բանը... Սկզբում միտք արի՝ կարելի է սա... Դե, հո դու էլ գիտես կնկա գործերը, ի՞նչ ասես որ չի լինում։ Գարնանը գետնից մի ջվալ ցորեն էի բարձրացրել, երեք շաբաթ ամսական էր գալի։ Հա, իսկ այստեղ տեսնում եմ, որ բանն ուրիշ է... Նշաններ երևացին... Երեկ գնացել էի ստանիցա, ֆերշելի մոտ։ Քիչ մնաց մեռնեի ամոթից... Հիմի՛ ամեն բան պարզ է, հողե՛մ ինձ պես կնկա գլուխը։

— Բուժվել է պետք, ամա ինչքա՛ն ամոթանք կլինի։ Ասում են, թե կարելի է բուժել դրանք, այդ հիվանդությունները։

— Չէ, աղջի, իմը չի բուժվի։— Դարյան ծուռ ժպտաց ու խոսակցության ընթացքում առաջին անգամ բարձրացրեց կայծկլտող աչքերը։— Իմը սիֆիլիս է։ Սրանից չեն բուժում։ Սրանից մարդու քիթը թափվում է... Հրե՛ն, ոնց որ Անդրոնիխա տատի քիթը, տեսե՞լ ես։

— Բա հիմի դու ի՞նչ պիտի անես,— լացակումած ձայնով հարցրեց Նատալյան, ու նրա աչքերը լցվեցին արցունքներով։

Դարյան երկար լռեց։ Պոկեց եգիպտացորենի ցողունին կպած դաղձի ծաղիկը, մոտեցրեց աչքերին։ Փոքրիկ, հստակ ու թեթև, գրեթե անկշռելի ծաղկի քնքուշ, կարմրաբոլորք բա-

ժակը տարածում էր արևից տաքացած հողի ծաներ, թունդ բույրը։ Դարյան ագահությամբ և զմայլանքով էր նայում դրան, ասես առաջին անգամ էր տեսնում այդ հասարակ ու անպաճույճ ծաղիկը. ուղղելով ցնցվող պինչերը, հոտ քաշեց ծաղկից, հետո խնամքով դրեց փխրունացրած, քամիներից չոր-ացած հողի վրա, ասաց.

— Հարցնում ես՝ ի՞նչ պիտի անեմ։ Գալիս էի ստանիցայից. մտածում էի, շափ ու ձև անում... կսպանեմ ես ինձ, ա՛յ թե ինչ կանեմ։ Ցավալի է, ամա ուրիշ ճամփա չկա։ Մեկ է, թե որ բուժվեմ, խուտորում բոլորն էլ կիմանան, մատի փաթաթան կդարձնեն, երեսները շուռ կտան, կծիծաղեն... Այս վիճակում էլ ո՞ւմ հարկավոր կլինեմ։ Սիրունությունս կկորչի, բոլորովին կթառամեմ, կենդանի կփտեմ... Չէ, չեմ ուզում։— Նա այնպես էր խոսում, որ կարծես ինքն իր հետ էր դատողություններ անում և ուշադրություն չէր դարձնում Նատալյայի բողոքող շարժումներին։— Երբ դեռ ստանիցա չէի գնացել, միտք էի անում, որ եթե սա գեշ հիվանդություն է, կբուժվեմ։ Դրա համար էլ փողը չտվի հայրիկին, մտածում էի, որ դա ինձ պետք կգա ֆերշիլներին վճարելու համար... Հիմի էլ ուրիշ բան եմ որոշել։ Էհ, ձանձրացել եմ ամեն ինչից։ Չեմ ուզում։

Դարյան տղամարդու սարսափելի հայհոյանք թափեց, թքեց և ձեռքի արտաքին կողմով սրբեց երկար թարթիչներից կախված արցունքը։

— Ի՞նչ խոսքեր ես ասում, է՛... Բա աստծուց չե՞ս վախենում,— կամացուկ ասաց Նատալյան։

— Հիմի նա, աստված ինչի՞ս է պետք։ Առանց այն էլ նա տակնուվրա է արել ամբողջ կյանքս։— Դարյան ժպտաց, և Նատալյան շարաճճի ու խորամանկ այդ ժպիտում մի վայրկյան տեսավ առաջվա Դարյային։— Այս չէր կարելի անել, այն չէր կարելի, միշտ էլ մեղքերով ու ահեղ դատաստանով էին վախեցնում... Ավելի սարսափելի դատաստան, քան ես պիտի անեմ իմ դեմ, չես էլ կարող երևակայել։ Ամեն ինչ ձանձրացրել է ինձ, Նատաշկա, բոլոր մարդիկ էլ զզվեցրել են ինձ... Ինձ համար հեշտ կլինի իմ հաշիվը վերջացնել։ Ոչ ոք չունեմ, որ ցավը քաշեմ։ Ոչ ոք չկա, որ սրտիցս կըտրեմ... Ա՛յ թե ինչ։

Նատալյան սկսեց ջերմորեն խրատել, խնդրեց խելքի գալ ու չմտածել ինքնասպանության մասին, բայց Դարյան, որ սկզբում անտարբերությամբ էր լսում, ուշքի եկավ ու բարկությամբ նրան ընդհատեց կես խոսքի վրա.

— Դու այդ թող, Նատաշկա։ Ես նրա համար չեմ եկել, որ դու խրատես ու խնդրես ինձ։ Ես եկել եմ դարդս քեզ ասելու և նախազգուշացնելու, որ այսօրվանից երեխեքիդ ինձնից հեռու պահես։ Իմ հիվանդությունը կպչողական է, ֆերշիլը ասավ, ու ես էլ եմ դրա մասին լսել, չլինի՞ թե նրանք ինձնից վարակվեն, հասկացա՞ր, դմբո։ Պառավին էլ ասա, ես ամաչում եմ ասել։ Դե, ես... ես հո միանգամից թոկը չեմ գցի վիզս, դրա համար կգա ժամանակը... Կապրեմ, կուրախանամ լույս աշխարհով, հետո էլ մնաս բարով կասեմ նրան։ Թե չէ մենք գիտե՞ս ինչ ենք։ Քանի դեռ սիրտը չեն ծակում, ման ենք գալի ու մեր չորս բոլորը ոչինչ չենք տեսնում... Ես ի՞նչ տեսակ կյանք եմ անցկացրել, հ՛ա-ա, ու ասես կույր եմ եղել, իսկ երբ գալիս էի ստանիցայից, Դոնի ափերով, ու մտածում էի, որ շուտով պետք է մնաս բարով ասեմ ամեն ինչին, ոնց որ թե աչքերս բացվեցին։ Մտիկ եմ անում Դոնին, ալիքները թավռում են, արևի տակ նա ասես արծաթից լինի, այնպես է փայլփլում, որ աչքերդ չեն դիմանում։ Շուռ եմ գալի, մտիկ եմ անում,— տեր աստված, ինչպիսի՛ գեղեցկություն, իսկ առաջ ես դա իսկի չէի տեսնում...— Դարյան ամաչկոտ ժպտաց, լռեց, ձեռքերն իրար սեղմեց ու, հաղթահարելով կոկորդին դեմ առած հեկեկանքը, վերստին խոսեց, ու նրա ձայնը է՛լ ավելի բարձր էր և լարված։— Ճանապարհին ես մի քանի անգամ լաց եղա... Մոտեցա խուտորին, մտիկ եմ անում,— պստիկ երեխեքը լողանում են Դոնում... Է՛հ, մտիկ արի, սիրտս լցվեց, ու էլի հոնգուր-հոնգուր լաց եղա։ Երկու ժամ պառկած էի ավազի վրա։ Ի՞նչ էր իմ հալը, որ մտածում եմ...— Վեր կացավ գետնից, թափ տվեց շրջազգեստը, սովոր շարժմամբ ուղղեց լաչակը։— Որ մտածում եմ մահվան մասին, մենակ մի բան է ինձ ուրախացնում. հո այն աշխարհում կտեսնվեմ Պետրոյի հետ... «Դե,— կասեմ,— անուշիկս, Պետրո Պանտելեևիչ, ընդունիր քո փուչ կնկանը։— Ու իր համար սովորական ցինիկ հեգնանքով ավելացրեց։— Իսկ այն աշխարհում նա չի կարող կռվել, կռվաններին

դրախտ չեն թողնում, ճի՞շտ է։ Դե, բարով մնաս, Նատաշենկա։ Զմոռանաս կեսուրիս ասել իմ դժբախտության մասին։

Նատալյան նստել էր բարակ, հողոտ ձեռներով դեմքը ծածկած։ Նրա մատների արանքում փայլում էին արցունքները, ինչպես խեժը սոճու ճեղքերում։ Դարյան հասավ ուռից ջորձած դռնակին, հետո վերադարձավ, լրջորեն ասաց.

— Այսօրվանից ես պետք է ջոկ ամանից ուտեմ։ Դրա մասին ասա մայրիկին։ Հա՛, մի բան էլ. թող նա հայրիկին բան չասի, թե չէ ծերուկը կկատաղի և ինձ տնից դուրս կանի։ Այդ էր պակաս։ Ես այստեղից կգնամ խոտհարքը։ Մնաս բարով։

XIV

Այս օրը հնձվորները վերադարձան դաշտից։ Պանտելեյ Պրակոֆևիչը որոշեց ճաշին սկսել խոտի փոխադրությունը։ Դունյաշկան եզները տարավ Դոն, ջրելու, իսկ Իլյինիչնան ու Նատալյան արագ սեղան գցեցին։

Դարյան վերջինը մոտեցավ սեղանին, նստեց ծայրին։ Իլյինիչնան նրա առաջ դրեց մի փոքրիկ ամանով շչի, գդալ և մի կտոր հաց, մյուսների համար, ինչպես միշտ, շչին լցրեց մեծ, ընդհանուր ամանի մեջ։

Պանտելեյ Պրակոֆևիչը զարմացած նայեց կնոջը, աչքերով ցույց տալով Դարյայի ամանը, հարցրեց.

— Այդ ի՞նչ բան է, ինչի՞ նրա համար ջոկ լցրիր։ Նա իրեն հավատը փոխե՞լ է թե ինչ։

— Ի՞նչ ես ուզում, է՞։ Կեր ու սուս։

Ծերունին հեգնանքով նայեց Դարյային, ժպտաց։

— Ըհը՛մ, հասկանում եմ։ Այն օրվանից, երբ նրան մեղալ տվին, նա չի ուզում ընդհանուր ամանից ուտել։ Դաշկա, այդ ի՞նչ է, դու զզվո՞ւմ ես մեզ հետ մի քրեղանից ուտել, հը՞։

— Ոչ թե զզվում եմ, այլ չի կարելի,— խոպոտ պատասխանեց Դարյան։

— Ախր ի՞նչ պատճառով, է՞։

— Բուկս ցավում է։

— Է՛, ի՞նչ կա որ։

— Գնացել էի ստանիցա, ֆերշիլը ասավ, որ ջոկ ամանից ուտեմ։

— Իմ բուկն էլ էր ցավում, ամա ես չէի ջոկվում, ու փառք աստծու, ցավս մյուսներին չանցավ։ Դու այդ ի՞նչ տեսակ ես մրսել որ։

Դարյան գունատվեց, ձեռքով սրբեց շրթունքները, գդալը վար դրեց։ Ծերունու հարցուփորձից վրդովված Իլյինիչնան բղավեց նրա վրա.

— Ի՞նչ ես կպել հարսին, հը՞։ Սեղանի շուրջն էլ մեզ հանգիստ չես թողնում։ Կպչո՞ւմ է տզի պես ու պոկ գալ չի լինում, վո՞ւյ։

— Էհ, ի՛նձ ինչ,— ջղայնորեն մշմշաց Պանտելեյ Պրակոֆևիչը,— ինձ համար մեկ է, որտեղից կուզեք կերեք։

Բարկությունից նա մի ամբողջ գդալ տաք շչի թաթլեր. վառեց բերանը, ու շչին բերանից թափելով մորուքի վրա, գեշ ձայնով գոռաց.

— Կերակուր տալ չգիտեք, անիծվածներ։ Ո՞վ է այսպես շչին տալի հենց կրակի վրայից, ո՞վ։

— Քիչ խոսեիր սեղանի վրա, չէիր վառվի,— պատասխանեց Իլյինիչնան։

Դունյաշկան քիչ մնաց փոթկար, նայելով, թե ինչպես է կարմրատակած հայրը մորուքի միջից հանում կաղամբը և կարտոֆիլի կտորները, բայց մյուսների դեմքերն այնքան լուրջ էին, որ նա էլ իրեն զսպեց ու էլ չնայեց հորը, վախենալով, որ չի կարողանա պահել ծիծաղը։

Ճաշից հետո ծերունին ու երկու հարսը երկու սայլով գնացին խոտ բերելու։ Պանտելեյ Պրակոֆևիչը երկար եղանով խոտը գցում էր սայլերի վրա, իսկ Նատալյան ընդունում էր նամշահոտ արձակող խոտի կույտերը, ոտներով տափում սայլի վրա։ Նա դաշտից վերադառնում էր Դարյայի հետ։ Պանտելեյ Պրակոֆևիչը լայն-լայն քայլող մեծ եզներով առաջ էր անցել։

Արևն իջնում էր կուրգանի ետևը։ Հնձած տափաստանի օշինդրային դառն հոտը իրիկնադեմին ուժեղացավ, բայց հետո մեղմացավ, հաճելի դարձավ՝ կորցնելով կեսօրվա հեղձուցիչ սրությունը։ Շոգն անցավ։ Եզները հաճույքով էին գնում, ու ամառային ճամփի վրա նրանց կճղակների բարձ-

բացված փոշին նստում էր ճանապարհամերձ ուղտափշի թփերի վրա։ Ուղտափշի վերին մասերը վառ փայլում էին փթթած մուգ կարմիր կատարներով։ Նրանց վրա ճախրում էին իշամեղուները։ Կիվիվները, ձայն ձայնի տալով, թռչում էին դեպի հեռավոր տափաստանային լճակը։

Դարյան երեսնիվայր պառկել էր ճոճվող խոտաբեռի վրա, արմունկներին հենված, երբեմնակի նայելով Նատալյային։ Վերջինս մտաղբաղ դիտում էր վերջալույսը, պղնձակարմիր ցոլքերը ընկել էին նրա հանգիստ, մաքուր դեմքին։ «Ա՛յ, Նատաշկան երջանիկ է, մարդ էլ ունի, երեխեք էլ, նրան ուրիշ ոչինչ պետք չէ, ընտանիքում սիրում են նրան, իսկ ես կորած մարդ եմ։ Կսատկեմ, ոչ ոք էլ ախ չի քաշի», — մտածում էր Դարյան, ու հանկարծ նրա մեջ ցանկություն առաջացավ մի կերպ վշտացնել Նատալյային, նրան էլ ցավ պատճառել։ Ինչո՞ւ պետք է միայն ինքը՝ Դարյան, թպրտա հուսալքման մոլուցքներում, անդադար մտածի իր խորտակված կյանքի մասին և այդպես շարաշար տանջվի։ Նա մի անգամ էլ թռուցիկ նայեց Նատալյային ու, աշխատելով մտերմական շեշտ տալ ձայնին, ասաց.

— Ուզում եմ քո առաջ խոստովանել մեղքս, Նատալյա...

Նատալյան միանգամից չպատասխանեց։ Դիտելով վերջալույսը, նա վերհիշեց, թե ինչպես մի ժամանակ, վաղուց, երբ ինքը դեռ Գրիգորիի հարսնացուն էր, վերջինս եկավ իրեն տեսնելու, և ինքը դուրս եկավ դարպասից նրան ճանապարհելու, ու այն ժամանակ ճիշտ այդպես էր հրավառվել վերջալույսը, կարմրավառ ցոլքերով էր պարուրվել արևմուտքը, ուռենիների վրա, կռնչում էին սերմնաքաղները... Գրիգորին հեռանում էր ձիու վրա կիսով չափ շուռ գալով, ու ինքը նրա ետևից նայում էր հուզումնալի ուրախության արցունքներով ու, ձեռները աղջկական պիրկ կրծքին սեղմած, զգում էր սրտի շեշտակի բաբախումը... Նա տհաճություն զգաց այն պատճառով, որ Դարյան հանկարծ խախտել էր լռությունը, ու դժկամ հարցրեց.

— Ի՞նչ մեղք ես խոստովանելու։

— Ա՛յ թե ինչ մեղք... Մի՞տդ է, գարնանը Գրիգորին ռազմաճակատից տուն էր եկել։ Այն օրվա իրիկունը, միտս է, ես կովն էի կթում։ Գնում էի տուն, լսում եմ, Ակսինյան

կանչում է ինձ։ Հա՛, տարավ իրեն մոտ, ուղղակի գոռով նվիրեց այս մատանին,— Դարյան մատնամատի վրա պրատեց ոսկե մատանին,— ու խնդրեց, որ ես Գրիգորիին ուղարկեմ իրեն մոտ... Էհ, ի՛նձ ինչ,— մտածեցի... Ասի Գրիգորիին։ Գրիգորին այն ամբողջ գիշերը... Մի՞տդ է, նա ասում էր, որ միթամ Կուդինովն էր եկել ու ինքը եղել էր նրա մոտ։ Սուտ է։ Նա Ակսինյայի մոտ էր։

Շշմած, գունատված Նատալյան մատներով լուռ կոտրատում էր իշաուլույտի չոր ոստը։

— Դու չբարկանաս ինձ վրա, Նատաշա։ Ես ինքս էլ ուրախ չեմ, որ խոստովանեցի քեզ...— զննողաբար ասաց Դարյան՝ փորձելով նայել Նատալյայի աչքերին։

Նատալյան լուռ կուլ էր տալիս արցունքները։ Այնքան անակնկալ ու մեծ էր վերստին նրան խոցող վիշտը, որ նա իր մեջ ուժ չգտավ Դարյային որևէ բան պատասխանելու, և միայն շուռ էր գալիս՝ թաքցնելով տանջանքից աղճատված իր դեմքը։

Արդեն խուտոր մտնելուց առաջ, ինքն իր վրա ջղայնանալով, Դարյան մտածեց՝ «Սատանան ինձ դրդեց դարդի մեջ գցել սրան։ Հիմի մի ամբողջ ամիս արցունք է թափելու։ Ավելի լավ է ապրեր առանց մի բան գիտնալու։ Ավելի լավ է, որ սրա պես կովերը կուրորեն ապրեն»։ Իր խոսքերի տպավորությունը մի կերպ հարթելու համար նա ասաց.

— Լա՛-ավ, դու շատ էլ դարդ մի անի։ Ի՞նչ մեծ փորձանք է որ։ Իմ դարդը քոնից ծանր է, ամա ես էլի դիք-դիք եմ ման գալի։ Դե, ո՛վ գիտի, կարելի է նա իսկի էլ չի տեսնվել Ակսինյայի հետ, այլ Կուդինովի մոտ է գնացել։ Ես հո նրան չէի հետևում։ Որ բռնված չի, ուրեմն գող չի։

— Գլխի էի ընկնում...— կամացուկ ասաց Նատալյան, լաչակի ծայրով սրբեց աչքերը։

— Բա որ գլխի էիր ընկնում, ինչի՞ նրան հարցուփորձ չէիր անում։ Է-է՛, անպետք։ Ես լինեի, նա իմ ձեռքից չէր պրծնի։ Ես նրան այն օրը կգցեի, որ սատանան էլ կսարսափեր։

— Վախենում էի իմանալ ճշմարտությունը... Կարծում ես դա հե՞շտ է,— աչքերը փայլեցնելով, հուզումից կակազելով, ասաց Նատալյան,— դու էիր այդպես... Պետրոյի

հետ ապրում... իսկ ես հենց որ հիշում եմ... հենց որ հիշում եմ, թե ինչեր եմ քաշել... հիմի էլ սարսափում եմ։

— Դե, ուրեմն մոռացիր այդ բանը,— սրտանց խորհուրդ տվեց Դարյան։

— Մի՞թե դա մոռացվում է...— օտարոտի ձայնով բացականչեց Նատալյան։

— Ես լինեի, կմոռանայի։ Մե՛ծ բան է, էլի՛։

— Մոռացիր հիվանդությունդ։

Դարյան ծիծաղեց։

— Ուրախությամբ կմոռանայի, ամա այս անիծված հիվանդությունը ինքն է իր մասին հիշեցնում։ Լսիր, Նատաշկա, ուզո՞ւմ ես, ես Ակսինյայից ամեն բան իմանամ։ Նա ինձ կասի, ասված վկա։ Չկա այնպիսի կնիկ, որ սկզբի, չպատմի, թե ով և ոնց է իրեն սիրում։ Հենց մեկը ես։

— Չեմ ուզում, որ դու նեղություն քաշես։ Առանց այդ էլ նեղություն քաշեցիր,— շոր պատասխանեց Նատալյան։— Ես կույր չեմ, տեսնում եմ, թե դու ինչի համար ինձ պատմեցիր դրա մասին։ Հո ինձ խղճալուց չէր, որ խոստովանեցիր միջնորդ լինելդ, այլ իմ վիճակը ծանրացնելու համար էր...

— Ճիշտ է,— հոգոց հանելով համաձայնվեց Դարյան։— Լավ միտք արա, բա մենակ ե՞ս տանջվեմ, հը՞։

Դարյան իջավ սայլից, վերցրեց եզների գլխներից կապած պարանը, հոգնածորեն շարժվող ոտներով քայլեց նրանց առջևից, իջնելով բլուրից։ Փողոցի մուտքում նա մոտեցավ սայլին։

— Է՛յ, Նատաշկա։ Տես ինչ եմ ուզում հարցնել քեզ... Շա՞տ ես սիրում մարդուդ։

— Ինչքան որ կարող եմ,— անորոշ պատասխանեց Նատալյան։

— Ուրեմն շատ ես սիրում,— հոգոց հանեց Դարյան։— Իսկ ես իսկի էլ շատ չեմ սիրել որևէ մեկին։ Սիրել եմ շնավարի, մի կերպ, ոնց որ պատահեր... Թե որ հնար լիներ նորից սկսել կյանքս, գուցե ես էլ ուրիշ լինեի, հը՞։

Ամառային կարճատև մթնշաղին հաջորդեց սև գիշերը։ Մթության մեջ բակում բեռնաթափում էին խոտը։ Կանայք լուռ էին աշխատում, ու Դարյան նույնիսկ Պանտելեյ Պրակոֆևիչի կանչերին է՛լ չէր պատասխանում։

XV

Շեշտակի հետապնդելով Ուստ-Մեդվեդիցկայայից նահանջած հակառակորդին, Դոնի բանակի ու Վերին Դոնի ապրոտամբների միավորված զորամասերը գնում էին դեպի հյուսիս։ 9-րդ կարմիր բանակի ջարդված գնդերը Մեդվեդիցայի ափին գտնվող Շաշկին խուտորի մոտ փորձեցին կանգնեցնել կազակներին, բայց նորից ետ մղվեցին ու նահանջեցին համարյա մինչև Գրյազի-Ցարիցինի երկաթուղագիծը՝ առանց վճռական դիմադրություն ցույց տալու։

Գրիգորին իր դիվիզիայով մասնակցեց Շաշկինի մոտ տեղի ունեցած կռվին և մեծապես օգնեց գեներալ Սուտուլովի հետևակ բրիգադին, որ թևային հարվածի տակ էր ընկել։ Երմակովի հեծյալ գունդը Գրիգորիի հրամանով գրոհ տալով, գերի վերցրեց մոտ երկու հարյուր կարմիրբանակային, գրավեց չորս հաստոցավոր գնդացիրը և տասնմեկ փամփշտասայլ։

Իրիկնադեմին Գրիգորին առաջին գնդի մի խումբ կազակների հետ մտավ Շաշկին։ Դիվիզիայի շտաբի գրված տան մոտ կես հարյուրյակ կազակների հսկողության տակ կանգնած էր գերիների հոծ ամբոխը, սպիտակին էին տալիս նրանց շապիկներն ու վարտիքները։ Նրանց մեծամասնության ոտնամաններն ու հագուստը հանված էին, բացի սպիտակեղենից, ու սպիտակավուն ամբոխի մեջ միայն հազվադեպ էր կանաչին տալիս պաշտպանական գույնի կեղտոտ վերնաշապիկը։

— Ո՞նց են ճերմակել, ասես սագեր լինեն,— բացականչեց Պրոխոր Զիկովը՝ ցույց տալով գերիներին։

Գրիգորին քաշեց սանձը, ձին կողքի դարձրեց. կազակների ամբոխի մեջ գտնելով Երմակովին, մատով կանչեց նրան։

— Մոտեցիր, է՛, ի՞նչ ես թաքնվել ուրիշների մեջքերի ետևում։

Բռունցքի մեջ հազալով, Երմակովը ձին քշեց, մոտեցավ։ Նրա սև, նոսր բեղերի տակին, ջարդված շրթունքների վրա մակարդվել էր արյունը, աջ թուշը ուռել էր ու սևին էր տալիս թարմ քերծվածքներով։ Գրոհի ժամանակ նրա ձին

լրիվ թափով սլանալիս սայթաքել էր ու ընկել, նրա վրայից քարի պես ընկած Երմակովը երկու սաժեն սլկվել էր փորի վրա, խորդուբորդ գետնով։ Նա էլ, ձին էլ միաժամանակ ոտքի էին ելել։ Իսկ մի րոպեից հետո Երմակովը ձիուն նստած, առանց գլխարկի, սարսափելի արյունոտված, բայց թափահարելով մերկացրած թուրը, արդեն հասել էր սարալանջից ցած սլացող կազակական ցրիվ շղթային...

— Ինչո՞ւ պետք է թաքնվեմ,— առերևույթ զարմանքով հարցրեց նա՝ հասնելով Գրիգորիին, իսկ ինքը շփոթվելով մի կողմ էր դարձնում կովից հետո դեռ չհանգած, արյունալի, դիվոտած աչքերը։

— Կատուն գիտի, թե ում միսն է կերել։ Ինչո՞ւ ես ետևից գալիս,— բարկությամբ հարցրեց Գրիգորին։

Երմակովը դժվարությամբ ժպտալով ուռած շրթունքներով, ծուռ նայեց գերիներին։

— Այդ ի՞նչ մսի մասին ես խոսում։ Դու հիմի ինձ հանելուկներ մի ասա, մեկ է, չեմ լուծի, այսօր գլխիվայր ընկել եմ ձիուց...

— Քո աշխատա՞նքն է.— Գրիգորին մտրակով ցույց տվեց գերիներին։

Երմակովն այնպես ձևացրեց, որ իբր թե առաջին անգամ է տեսել գերիներին, ու անասելի զարմանք ցույց տվեց.

— Տե՛ս, է՛, շան որդիներ, անիծվածներ, թյո՛։ Տկլորացրել են։ Ոնց էլ ժամանակ են գտել դրա համար... Ա՛յ քեզ բան։ Խիստ հրամայել էի ձեռ չտալ, բայց հենց որ հեռացա, վերցրին ու տկլորացրին խեղճերին...

— Դու չքմեղ մի ձևանա։ Ո՞ւմ ես խաբում, հը՞։ Դո՞ւ ես ասել, որ հանեն դրանց շորերը։

— Աստված չանի։ Ինչե՞ր ես ասում, Գրիգորի Պանտելևիչ։

— Հրամանը հիշո՞ւմ ես։

— Դրա մասին, հա՞, դե ես...

— Այո, այո, հենց դրա մասին...

— Ո՛նց չէ, հիշում եմ։ Բերանացի եմ հիշում։ Ոնց որ դպրոցում սովորած ոտանավորները։

Գրիգորին ակամա ժպտաց ու, թամքից թեքվելով, բրուտ

նեց Երմակովի սուսերակալի փոկից։ Նա սիրում էր այդ խիզախ, կատաղիորեն քաջ հրամանատարին։

— Խռլամպի, հանաքը դենը, ախր ինչի՞ ես թույլ տվել։ Նոր գնդապետը, որ Կոպիլովի փոխարեն նստեցրել են շտաբում, կհաղորդի ուր հարկն է, ու ստիպված կլինենք պատասխան տալ։ Հո ուրախ չես լինի, եթե սկսվեն քաշքշուկները, հարցուփորձն ու հարցաքննությունները։

— Չկարացի համբերել, Պանտելևիչ,— լուրջ ու պարզ պատասխանեց Երմակովը,— նրանց վրա ամեն ինչ նոր էր, հենց նոր էին տվել Ուստ-Մեդվեդիցայում, դե, իմ տղերքն էլ մաշել էին իրենց հագուստը, տներումն էլ հագնելու բան չկա։ Մեկ է, թիկունքում կհանեին դրանց վրա եղածը։ Մենք դրանց գերի վերցնենք, իսկ թիկունքի սրիկաները հանեն դրանց շորերը, հա՞-ա։ Չէ, աղբեր, ավելի լավ է մերոնք օգտվեն։ Ես պատասխան կտամ, իսկ ինձնից ի՞նչ կարող են պահանջել։ Դու էլ մի կպչի ինձ, հա՛-ա։ Ես ոչինչ չգիտեմ ու այդ գործերից իսկի էլ մաս չունեմ։

Մոտեցան գերիների ամբոխին։ Ամբոխի մեջ զուսպ խոսակցությունը դադարեց։ Ծայրից կանգնածները ձիավորներից մի կողմ քաշվեցին, մոայլ երկյուղով ու լարված սպասումով նայում էին կազակներին։ Մի կարմիրբանակային, հանձինս Գրիգորիի ճանաչելով հրամանատարին, հուպ մոտեցավ, ձեռքը դրեց ասպանդակին։

— Ընկեր պետ, ասացեք ձեր կազակներին, որ գոնե շինելները վերադարձնեն։ Գութ արեք, էլի։ Գիշերները ցուրտ է, իսկ մենք ուղղակի տկլոր ենք, ինքներդ եք տեսնում։

— Ամառ է, ցրտատար չես լինի, վախկոտ,— խիստ տոնով ասաց Երմակովը ու ձիով ետ մղելով կարմիրբանակայինին, դարձավ դեպի Գրիգորին։— Մի՛ կասկածի, ես կասեմ, որ հնոտիքից մի քիչ տան դրանց։ Դեհ մի կողմ քաշվեք, դե՛ն գնացեք, ռազմիկներ։ Ձեր գործն է փոխաններիդ ոջիլները ջարդել և ոչ թե կազակների դեմ կռվել։

Շտաբում հարցաքննում էին մի վաշտի գերի հրամանատարին։ Հնամաշ մոմլաթով ծածկված սեղանի մոտ նստել էր շտաբի նոր պետը, գնդապետ Անդրեյանովը,— տարեց, կարճաքիթ մի սպա քունքերի խիստ ճերմակած մազերով ու տղայի ականջների պես ցցված, խոշոր ականջներով։

Նրա դիմաց, սեղանից երկու քայլ հեռավորությամբ՝ կանգնած էր կարմիր հրամանատարը։ Հարցաքննվողի ցուցմունքները գրի էր առնում շտաբը սպաներից մեկը, հարյուրապետ Սուլինը, որ դիվիզիա էր ժամանել Անդրեյանովի հետ միասին։

Կարմիր հրամանատարը,— բարձրահասակ, շիկաբեղ մի մարդ մոխրագույն-սպիտակավուն, կարճ խուզած մազերով,— կանգնել էր և օխրայով ներկված հատակի վրա անհարմար կոթնում էր մեկ կամ մյուս բոբիկ ոտին՝ երբեմնակի նայելով գնդապետին։ Կազակները գերու վրա թողել էին միայն զինվորի դեղին, շճերմակացրած բյազի շապիկը ու վերցրած շալվարի փոխարեն տվել էին կազակական պատրոտված մի շալվար՝ խունացած լամպասներով ու մի կերպ կպցրած կարկատաններով։ Մոտենալով սեղանին, Գրիգորին նկատեց, թե ինչպես գերին կարճ, շփոթված շարժումով շրջեց հետնաթշերի վրա պատռված շալվարը՝ աշխատելով ծածկել մերկ մարմինը։

— Դուք ասում եք՝ Օրյոլի նահանգական զինկոմիսարիատի կողմի՞ց,— հարցրեց գնդապետը, անցողակի, ակնոցների վերևից նայեց գերուն, վերստին խոնարհեց աչքերը ու գրանք կկոցելով, սկսեց զննել, շուռումուռ անել մի ինչ-որ թուղթ,— ըստ երևույթին փաստաթուղթ։

— Այո։

— Անցյալ տարվա աշնա՞նը։

— Աշնան վերջում։

— Դուք ստո՛ւմ եք։

— Ես ճշմարտությունն եմ ասում։

— Պնդում եմ՝ դուք ստում եք...

Գերին լուռ թոթվեց ուսերը։ Գնդապետը նայեց Գրիգորիին, գլխով արհամարհաբար ցույց տալով հարցաքննվողին, ասաց.

— Ահա, հիացեք. կայսերական բանակի նախկին սպա, իսկ այժմ, ինչպես տեսնում եք,— բոլշևիկ։ Բռնվել է ու դուրս է տալիս, որ իբր թե պատահմամբ է ընկել կարմիրների մոտ, իբր թե իրեն մոբիլիզացրել են։ Ստում է անամոթաբար, միամիտ ձևանալով, ինչպես գիմնազիստ, ու կարծում է, թե իրեն կհավատան, քաղաքացիական քաջություն

չունի խոստովանելու, որ դավաճանել է հայրենիքին... Վախենում է սրիկան։

Դժվարությամբ շարժելով ադամախնձորը, գերին ասաց.

— Ես տեսնում եմ, պարոն գնդապետ, որ դուք քաղաքացիական քաջություն ունեք գերուն վիրավորելու...

— Ես սրիկաների հետ չեմ խոսում։

— Իսկ ես այժմ ստիպված եմ խոսել։

— Զգո՛ւյշ։ Մի՛ հարկադրեք ինձ, ես կարող եմ ձեզ վիրավորել գործողությամբ։

Ոչ մի խոսք չասելով, Գրիգորին նստեց սեղանի մոտ, համակրական ժպիտով նայեց զայրույթից գունատված, բարկությամբ ու աներկյուղ պատասխանող գերուն։ «Լա՛վ կմշտեց գնդապետին»,— հաճույքով մտածեց Գրիգորին ու ո՛չ առանց չարախնդության նայեց Անդրեյանովի մոտ, կարմրատակած թշերին, որոնք ցնցվում էին ջղային վիճակից։

Գրիգորին առաջին իսկ հանդիպումից չսիրեց իր շտաբի պետին։ Անդրեյանովը պատկանում էր այն սպաների թվին, որոնք համաշխարհային պատերազմի տարիներին չէին եղել ռազմաճակատում, այլ խոհեմաբար նստել էին թիկունքում՝ օգտագործելով պաշտոնական ու ազգակցական ազդեցիկ կապերը և ծանոթությունները, ամեն կերպ կառչելով անվտանգ ծառայությունից։ Գնդապետ Անդրեյանովը քաղաքացիական պատերազմի ժամանակ էլ հնարք գտավ պաշտպանության համար աշխատել Նովոչերկասկում նստած, և միայն ատաման Կրասնովին իշխանությունից հեռացնելուց հետո ստիպված եղավ մեկնել ռազմաճակատ։

Անդրեյանովի հետ մի բնակարանում անցկացրած երկու գիշերվա ընթացքում Գրիգորին նրա ասածներից իմացավ, որ նա շատ բարեպաշտ է, որ նա չի կարող առանց արցունքների խոսել եկեղեցական հանդիսավոր արարողությունների մասին, որ իր կինը ամենաօրինակելի կինն է, որպիսին միայն կարելի է պատկերացնել, որ իր կնոջն անվանում են Սոֆիա Ալեքսանդրովնա և որ վերջինին մի ժամանակ անհաջող կերպով սիրատածում էր հենց նշանակովի ատաման բարոն ֆոն-Գրաբբեն. բացի դրանից, գնդապետը սիրով և մանրամասն պատմեց, թե ինչպիսի անվան տեր էր իր հանգուցյալ հայրը, թե ինքը, Անդրեյանովը ինչպես էր հասել

գնդապետի աստիճանին, ինչպիսի բարձրաստիճան անձանց հետ էր որսի գնում 1916 թվականին. հաղորդեց նաև, որ ինքը լավագույն խաղ է համարում վիստը, խմիչքներից ամենաօգտակարը — չամանի տերևով թրմած կոնյակը, իսկ ամենաշահավետ ծառայությունը՝ զորական համբարակության մեջ ծառայելը։

Գնդապետ Անդրեյանովը ցնցվում էր թնդանոթային մոտիկ կրակոցներից, տհաճությամբ էր ձի նստում՝ պատճառ բերելով լյարդի հիվանդությունը. անդադար հոգում էր շտաբին կից պահպանական զորախումբն ավելացնելու մասին, իսկ կազակներին վերաբերվում էր վատ թաքցրած թշնամանքով, որովհետև, իր ասելով, նրանք բոլորն էլ դավաճաններ էին 1917 թվականին, և այդ թվականից նա էլ ավելի էր ատում առանց խտրության բոլոր «ստորին զինծառայողներին»։ «Միայն ազնվականությունը կփրկի Ռուսաստանը»,— ասում էր գնդապետը՝ անցողակի հիշատակելով նաև այն, թե ինքն էլ ազնվական տոհմից է և որ Անդրեյանովների տոհմը ամենահինն ու ամենաարժանավորն է Դոնում։

Անդրեյանովի գլխավոր արատը, անկասկած, շաղակրատությունն էր, այն ծերունական, անզուսպ ու ահավոր շաղակրատությունը, որով տառապում են որոշ շատախոս ու անխելք մարդիկ, որոնք ծերության են հասնում և դեռ ջահել հասակից սովորած են լինում ամեն ինչի մասին դատել թե-թև կերպով և առանց քաշվելու։

Գրիգորին իր կյանքում շատ անգամ էր հանդիպել այդ թռչնային ցեղի մարդկանց և միշտ էլ խորին զզվանքի զգացում էր տածել նրանց։ Անդրեյանովի հետ ունեցած ծանոթության երկրորդ օրը Գրիգորին սկսեց խուսափել նրան հանդիպելուց, և ցերեկը այդ հաջողվում էր նրան, բայց հենց որ կանգ էին առնում գիշերելու, Անդրեյանովը գտնում էր նրան, հապճեպ հարցնում՝ «Միասի՞ն ենք գիշերում», ու չըսպասելով պատասխան ստանալուն, սկսում էր՝ «Այ, սիրելիդ իմ, դուք ասում եք, թե կազակները չեն դիմանում հետիոտն մարտին, իսկ երբ ես հանձնարարություններ կատարող սպա էի նորին գերազանցության մոտ... Է՛յ, ո՞վ կա այնտեղ, ճամպրուկս ու անկողինս այստեղ բերեք»։ Գրիգորին պառկում էր մեջքի վրա, փակում աչքերը, ու ատամներն իրար

սեղմելով, լսում էր, հետո անքաղաքավարությամբ մեջքը դարձնում անխոնջ պատմողի կողմը, շինելը քաշում գլխին, լուռ զայրույթով մտածում. «Հենց որ տեղափոխվելու հրաման ստանամ, մի որևէ ծանր բանով կշրմփացնեմ սրա գլխին. գուցե դրանից հետո գոնե մի շաբաթով լալկի լեզուն»։ «Դուք քնա՞ծ եք, հարյուրապետ»,— հարցնում էր Անդրեյանովը։ «Քնում եմ»,— խուլ պատասխանում էր Գրիգորին։ «Թույլ տվեք, ես դեռ չեմ վերջացրել»,— ու պատմելը շարունակվում էր։ Գրիգորին քնի մեջ մտածում էր. «Այս գյավազային դիտմամբ են խոթել ինձ մոտ։ Երևի դա Ֆիցխելաուրովի ջանքով է եղել։ Դե արի ու ծառայի այսպիսի տխմարի հետ։ Ու քնելիս լսում էր գնդապետի սուր, բարակ ձայնը, որ հնչում էր ինչպես երկաթե կտուրի վրա թափվող անձրևի կաթիլների տկտկոցը։

Ահա թե ինչու էր Գրիգորին շարախնդում, տեսնելով, թե գերի հրամանատարը ինչպիսի ճարպկությամբ է շշպռում իր շտաբի շատախոս պետին։

Անդրեյանովը մի բոպե լուռ էր, կկոցում էր աչքերը. նրա ցցված ականջների երկար բլթակները վառ կարմրին էին տալիս, ցնցվում էր սեղանի վրա դրված սպիտակ, փափկիկ ձեռքը, որի ցուցամատի վրա փայլում էր ոսկե հաստ մատանին։

— Լսեցեք, ճիվաղ,— ասաց նա հուզմունքից խռպված ձայնով,— ես հրամայել էի ձեզ ինձ մոտ բերել ո՛չ նրա համար, որ վիճեմ ձեզ հետ, դուք այդ չմոռանաք։ Հասկանո՞ւմ եք դուք, որ չեք կարող դուրս պրծնել։

— Շատ լավ եմ հասկանում։

— Ավելի լավ ձեզ համար։ Վերջիվերջո ինձ համար միևնույն է՝ կամավոր կերպո՞վ եք միացել բոլշևիկներին, թե՞ մոբիլիզացրել են ձեզ։ Կարևորն այդ չէ, կարևորն այն է, որ դուք սխալ հասկանալով պատվի նկատառումները, չեք ուզում խոսել...

— Ակներև է, որ ես ու դուք տարբեր կերպով ենք հասկանում պատվի հարցերը։

— Այդ նրանից է, որ ձեզ մոտ պատվի նշույլ անգամ չի մնացել։

— Ինչ վերաբերում է ձեզ, պարոն գնդապետ, ապա,

գտնելով ինձ հետ վարվելուց, ես կասկածում եմ, որ դուք առհասարակ երբևէ պատիվ եք ունեցել։

— Ինչպես տեսնում եմ, դուք ուզում եք արագացնե՞լ վախճանը։

— Իսկ դուք կարծում եք ես շահագրգռվա՞ծ եմ դրա ձգձգումով։ Մի՛ վախեցնեք ինձ, բան չի դուրս գա։

Անդրեյանովը դողդոջուն ձեռքերով բացեց պորտսիգարը, վառեց ծխախոտը, երկու անգամ ագահությամբ կուլ տվեց ծուխը ու կրկին դիմեց գերուն.

— Այդպես ուրեմն, դուք հրաժարվո՞ւմ եք հարցերին պատասխանելուց։

— Ես իմ մասին արդեն ասել եմ։

— Կորե՛ք, է՛։ Ձեր գարշելի անձնավորությունը ինձ ամենից քիչ է հետաքրքրում։ Նեղություն քաշեցեք պատասխանելու ահա այս հարցին. Սերբյակովո կայարանից ի՞նչ զորամասեր մոտեցան ձեզ։

— Ես ձեզ պատասխանեցի, որ չգիտեմ։

— Ո՛չ, գիտեք։

— Լավ, կգոհացնեմ ձեզ. այո, գիտեմ, բայց չեմ պատասխանի։

— Ես կհրամայեմ հրացանի շամփրով ձաղկել ձեզ, այն ժամանակ կբացվի ձեր լեզուն։

— Հաղիվ թե,— գերին ձախ ձեռքով շոշափեց բեղերը, վստահորեն ժպտաց։

— Կամիշինյան գունդը մասնակցո՞ւմ էր այդ մարտին։

— Ոչ։

— Բայց մի հեծյալ զորամաս պաշտպանում էր ձեր ձախ թևը, այդ ինչ զորամաս էր։

— Թողե՛ք, է՛։ Նորից եմ կրկնում, որ այդպիսի հարցերին չեմ պատասխանելու։

— Ընտրիր. կամ դու, շուն, հիմա ևեթ բաց կանես լեզուդ, կամ տասը րոպեից հետո կգնդակահարվես։ Դե՞հ։

Ու այդ ժամանակ գերին անսպասելիորեն բարձր, երիտասարդական հնչեղ ձայնով ասաց.

— Դուք ինձ ձանձրացրիք, հիմար քոփակ, դդմագլո՛ւխ։ Եթե դուք իմ ձեռքը ընկնեիք, ես ձեզ այդպես չէի հարցաքննի...

Անդրեյանովը սիրթնեց, ձեռքը տարավ նագանի պատյանին։ Այդ րոպեին Գրիգորին անշտապ վեր կացավ և նախազգուշացման ժեստով բարձրացրեց ձեռքը։

— Հը՛մ։ Դեհ, հերիք եղավ։ Խոսեցիք պրծանք, ինչպես տեսնում եմ, երկուսդ էլ տաքարյուն եք... էհ, իրար հետ չհամաձայնվեցիք, ու չի էլ հարկավոր, էլ ի՞նչ խոսել։ Նա ճիշտ է վարվում, որ չի մատնում յուրայիններին։ Դա լավ է, աստված վկա։ Ես չէի էլ սպասում։

— Ո՛չ, թույլ տվեք...— տաքանում էր Անդրեյանովը՝ ապարդյուն փորձելով բանալ ատրճանակի պատյանը։

— Ձեմ թույլ տա,— ուրախ աշխուժությամբ ասաց Գրիգորին՝ հոպ մոտենալով սեղանին, իր մարմնով պաշտպանելով գերուն։— Դատարկ բան է դա — սպանել գերուն։ Ո՞նց է ձեր խիղճը թույլ տալիս ձեռք բարձրացնել նրա վրա։ Մարդը անզեն է, գերի է բռնվել, հրե՛ն նրա վրա շոր էլ չեն թողել, իսկ դուք խփել եք ուզում...

— Դե՛ն գնացեք, ինձ վիրավորեց այդ սրիկան.— Անդրեյանովը ուժով ետ հրեց Գրիգորիին, հանեց նագանը։

Գերին արագությամբ շուռ եկավ դեպի պատուհանը, թափահարեց ուսերը, ասես մրսում էր։ Գրիգորին ժպտալով հետևում էր Անդրեյանովին, իսկ սա, ձեռքի մեջ զգալով ատրճանակի անհարթ կոթը, մի տեսակ անհեթեթ կերպով թափահարեց այն, հետո իջեցրեց փողաբերանը ցած պահելով ու շուռ եկավ։

— Ձեմ ուզում կեղտոտել ձեռքերս...— շունչ առնելով ու լիզելով չորացած շրթունքները, խռպոտ ասաց նա։

Ձպահելով ծիծաղը, բեղերի տակից ցույց տալով սպիտակափայլ ատամները, Գրիգորին ասաց.

— Այդ չէր էլ հաջողվի։ Մտիկ արեք, ձեր նագանը լցահանված է։ Դեռ գիշերելու տեղում առավոտյան ես զարթնեցի, սեղանից վերցրի դա ու մտիկ տվի... Մեջը ո՛չ մի փամփուշտ, ու երևի մի երկու ամիս չի մաքրված։ Դուք վատ եք պահում անձնական զենքը։

Անդրեյանովը խոնարհեց աչքերը, մեծ մատով պտտեց ատրճանակի թմբուկը, ժպտաց.

— Գրո՛ղը տանի, ճիշտ է, էլի...

Հարյուրապետ Սուլինը, որ լուռ և հեգնականորեն դիտում էր այդ ամենը, ծալեց հարցաքննության արձանագրությունը, հաճելի թոթովախոսելով ասաց.

— Ես ձեզ, Սեմյոն Պոլիկարպովիչ, մի քանի անգամ ասել եմ, որ դուք զենքի հետ վատ եք վարվում։ Այսօրվա դեպքը դրա մի ավելորդ ապացույցն է։

Անդրեյանովը կնճռոտեց ճակատը, բղավեց.

— Է՛յ, ստորին զինծառայողներից ո՞վ կա այստեղ։ Եկեք։

Նախասենյակից ներս մտան երկու սուրհանդակ և պահակապետը։

— Տարեք,— Անդրեյանովը գլխով ցույց տվեց գերուն։

Վերջինս դեմքով դարձավ դեպի Գրիգորին, լուռ գլուխ տվեց նրան, քայլեց դռան կողմը։ Գրիգորիին թվաց, թե գերու շիկակարմրավուն բեղերի տակից հազիվ նկատելի, շնորհակալական քմծիծաղից շարժվեցին շրթունքները...

Երբ քայլերը լռեցին, Անդրեյանովը հոգնածորեն հանեց ակնոցը, զամշի մի կտորով մանրակրկիտ սրբեց այն, մաղձոտ ասաց.

— Դուք փայլուն կերպով պաշտպանեցիք այդ սրիկային, դա ձեր համոզմունքների գործն է, բայց նրա ներկայությամբ խոսել նագանի մասին, ինձ անհարմար դրության մեջ դնել,— լսեցեք, այդ ի՞նչ բան է։

— Շատ մեծ փորձանք չէ,— հաշտվողաբար պատասխանեց Գրիգորին։

— Ոչ, այնուամենայնիվ իզուր էր դա։ Գիտե՞ք, ես կարող էի սպանել նրան։ Վրդովեցուցիչ տիպ է։ Մինչև ձեր գալը ես կես ժամ գլուխ էի շարդում նրա հետ։ Որչա՛փ նա ստում էր, շփոթեցնում, դես-դեն անում, դիտավորյալ կերպով սուտ տեղեկություններ հաղորդում,— ուղղակի սարսա՛փ։ Իսկ երբ ես բռնեցի նրա ստերը, ուղղակի և կտրականապես հրաժարվեց խոսելուց։ Միթամ թե սպայական պատիվը նրան թույլ չի տալիս ռազմական գաղտնիքը հայտնել հակառակորդին։ Շան որդին սպայական պատվի մասին չէր մտածում այն ժամանակ, երբ ծախվում էր բոլշևիկներին... Կարծում եմ, որ պետք է սուսուփուս գնդակահարել նրան ու հրամանատարական կազմից էլի երկուսին։ Մեզ հետաքրքրող տեղեկությունները ստանալու իմաստով նրանք բոլորն էլ անհուսալի են. մոլաղար և անուղղելի, հետևաբար չպետք է խնայել նրանց։ Դուք ի՞նչ կասեք։

— Դուք ի՞նչպես իմացաք, որ նա վաշտի հրամանատար է,— պատասխանելու փոխարեն հարցրեց Գրիգորին։

— Նրան մատնեց հենց իր կարմիրբանակայիններից մեկը։

— Ես կարծում եմ, որ պետք է գնդակահարել այդ կարմիրբանակայինին, իսկ հրամանատարներին թողնե՛լ,— Գրիգորին սպասողաբար նայեց Անդրեյանովին։

Վերջինս թոթվեց ուսերը և այնպես ժպտաց, ինչպես ժըպտում են, երբ խոսակիցը անհաջող է կատակում։

— Չէ, լուրջ եմ հարցնում, դուք ի՞նչ կասեք։

— Այն, ինչ որ արդեն ասացի։

— Բայց, թույլ տվեք, ի՞նչ նկատառումներով։

— Ինչ նկատառումնե՞ր. որպեսզի ռուսական բանակի համար պահպանվի դիսցիպլինան ու կարգը։ Երեկ, երբ մենք պառկում էինք քնելու, դուք, պարոն գնդապետ, խիստ բանիմաց կերպով պատմում էիք, թե բոլշևիկներին ջարդելուց հետո ինչպիսի կարգեր պիտի սահմանվեն բանակում, երիտասարդության միջից կարմիր վարակը չքացնելու համար։ Ես ձեզ հետ բոլորովին համաձայն էի, հիշո՞ւմ եք։— Գրիգորին թիմարում էր բեղերը, ու հետևելով գնդապետի դեմքի փոխվող արտահայտության, խելացիորեն ասում էր։— Իսկ հիմի դուք ի՞նչ եք առաջարկում։ Հենց դրանով դուք ապականություն եք մտցնում։ Ուրեմն թող զինվորները մատնեն իրենց հրամանատարներին, հա՞-ա։ Դրանով դուք նրանց ի՞նչ եք սովորեցնում։ Իսկ եթե ես ու դուք այդպիսի դրության մեջ ընկնենք, այն ժամանակ ի՞նչ կլինի։ Ոչ, ներեցեք, ես այստեղ կհակառակվեմ։ Ես դեմ եմ։

— Ինչպես կուզեք,— սառն ասաց Անդրեյանովը և ուշադրությամբ նայեց Գրիգորիին։ Նա լսել էր, որ ապստամբական դիվիզիայի հրամանատարը քմահաճ և մի քիչ տարօրինակ է, բայց այսպիսի բան նրանից չէր սպասում։ Նա միայն ավելացրեց.— Մենք սովորաբար այդպես ենք վարվել գերի բռնված կարմիր հրամանատարների և մանավանդ նախկին

սպանների նկատմամբ։ Դուք ինչ-որ նոր բան եք ասում... Ու ինձ համար այնքան էլ հասկանալի չէ ձեր վերաբերմունքը կարծես թե անվիճելի այս հարցի նկատմամբ։

— Մենք սովորաբար նրանց սպանում էինք մարտում, եթե այդ հաջողվում էր, բայց գերիներին իզուր տեղը չէինք գնդակահարում,— կարմրատակելով պատասխանեց Գրիգորին։

— Լավ, խնդրեմ, նրանց կուղարկենք թիկունք,— համաձայնվեց Անդրեյանովը։— Հիմի մի ուրիշ հարց. գերիների մի մասը,— Սարատովի նահանգի մոբիլիզացված գյուղացիներ,— ցանկություն հայտնեց կռվել մեր շարքերում։ Մեր երրորդ հետևակ գունդը երեք հարյուր սվին էլ չունի։ Արդյոք դուք հնարավո՞ր եք համարում մանրակրկիտ ընտրությունից հետո գերի կամավորների մի մասը միացնել այդ գնդին։ Դրա մասին բանակի շտաբից ստացված որոշակի ցուցումներ կան մեզ մոտ։

— Ես ոչ մի մուժիկ չեմ վերցնի ինձ մոտ։ Թող մեր կոբուստները կազակներով լրացնեն,— կտրականապես հայտարարեց Գրիգորին։

Անդրեյանովը փորձեց համոզել նրան.

— Լսեցեք, չվիճենք։ Ինձ համար հասկանալի է ձեր ցանկությունը՝ դիվիզիայում միատարր կազակական կազմ ունենալ, բայց անհրաժեշտությունը մեզ ստիպում է չխորշել նաև գերիներից։ Նույնիսկ կամավորական բանակում որոշ գնդեր գերիներով են կոմպլեկտավորվում։

— Նրանք ինչ ուզում են թող անեն, իսկ ես հրաժարվում եմ մուժիկներին ընդունելուց։ Եկեք էլ չխոսենք դրա մասին,— կտրուկ ասաց Գրիգորին։

Մի քիչ հետո նա դուրս եկավ գերիների ուղարկման մասին կարգադրություն անելու։ Իսկ ճաշի ժամանակ Անդրեյանովը հուզմունքով ասաց.

— Ակներև է, որ ես ու դուք չենք կարող միասին աշխատել։

— Ես էլ եմ կարծում,— անտարբեր պատասխանեց Գրիգորին։ Չնկատելով Սուլինի ժպիտը, նա ափսեից մատներով վերցրեց ոչխարի մի կտոր եկած միս, սկսեց գայլի պես այնպիսի ղռճղռճոցով ծամել պինդ կոճիկը, որ Սուլինը կնճռոտեց ճակատը, ինչպես ուժեղ ցավից, և նույնիսկ մի վայրկյան փակեց աչքերը։

Երկու օրից հետո գեներալ Սայլնիկովի զորախումբը շարունակեց նահանջող կարմիր զորամասերի հետապնդումը, իսկ Գրիգորիին շտապ կանչեցին զորախմբի շտաբը, ու շտաբի պետը,— տարեց, բարեսիրտ մի գեներալ,— նրան ծանոթացնելով ապստամբական բանակը ցրելու վերաբերյալ Դոնի բանակի հրամանատարի հրամանին, ուղղակի ասաց.

— Կարմիրների դեմ պարտիզանական պատերազմ մղելով, դուք հաջողությամբ էիք ղեկավարում դիվիզիան, իսկ այժմ մենք չենք կարող ձեզ վստահել ոչ միայն դիվիզիայի, այլև գնդի հրամանատարությունը։ Դուք ռազմական կրթություն չունեք, և լայն ռազմաճակատի, մարտը վարելու ժամանակակից մեթոդների պայմաններում դուք չեք կարող զորական խոշոր միավորի հրամանատար լինել։ Դուք համաձա՞յն եք ասածիս հետ։

— Այո՛,— պատասխանեց Գրիգորին,— ես ինքս էի ուզում հրաժարվել դիվիզիայի հրամանատարությունից։

— Շատ լավ է, դուք չեք գերագնահատում ձեր հնարավորությունները։ Այժմյան երիտասարդ սպաների մոտ այդ հատկությունը խիստ հազվադեպ է։ Այսպես ուրեմն, ռազմաճակատի հրամանատարի հրամանով դուք նշանակվում եք 19-րդ գնդի չորրորդ հարյուրյակի հրամանատար։ Գունդը այժմ երթումն է, այստեղից մի քսան վերստ հեռու, Վյաչնիկով խուտորի մերձակայքում։ Մեկնեցեք այսօր ևեթ, ծայրահեղ դեպքում՝ վաղը։ Դուք կարծես ուզում եք մի բա՞ն ասել։

— Ես ուզում էի, որ ինձ նշանակեիք տնտեսական մաս։

— Այդ անկարելի է։ Դուք անհրաժեշտ կլինեք ռազմաճակատին։

— Ես երկու պատերազմի ընթացքում տասնչորս անգամ վիրավորվել ու կոնտուզիա եմ ստացել։

— Դա նշանակություն չունի։ Դուք ջահել եք, հիանալի տեսք ունեք և դեռ կարող եք կռվել։ Ինչ վերաբերվում է վի-

բավորված լինելուն, ապա սպաներից ո՞վ չի վիրավորված։ Կարող եք գնալ։ Ամենայն հաջողություն։

Հավանորեն դժգոհությունը կանխելու համար, որ ապստամբական բանակը լուծելու ժամանակ անխուսափելիորեն պետք է առաջանար վերին դոնեցիների մեջ, ապստամբության ընթացքում աչքի ընկած շարքային շատ կազակներին Ուստ-Մեդվեդիցկայան գրավելուց հետո անմիջապես ավելի բարձր կոչումներ տվին, գրեթե բոլոր վախմիստրները փոխխորունժիի կոչում ստացան, իսկ ապստամբության մասնակից սպաներին ավելի բարձր աստիճաններ և պարգևներ տվին։

Գրիգորին էլ չմոռացվեց. նրան հարյուրապետի աստիճան տվին, բանակին տրված հրամանում նշեցին նրա աչքի ընկնող ծառայությունները կարմիրների դեմ ուղղված պայքարում և շնորհակալություն հայտնեցին։

Լուծումը կատարեցին մի քանի օրում։ Դիվիզիաների ու գնդերի անգրագետ հրամանատարներին փոխարինեցին գեներալներն ու գնդապետները, հարյուրյակների հրամանատարներ նշանակվեցին փորձված հրամանատարները. ամբողջովին փոխվեց մարտկոցների և շտաբների հրամանատարական կազմը, իսկ շարքային կազակները ուղարկվեցին համալրելու Դոնեցի ավազանում, մարտերում մեծ կորուստներ ունեցած Դոնի բանակի համարակալված գնդերը։

Գրիգորին իրիկնադեմին հավաքեց կազակներին, հայտարարեց դիվիզիայի լուծման մասին ու, հրաժեշտ տալով, ասաց.

— Ավել-պակասը կներեք, հայրենակիցներ։ Միասին ծառայեցինք, գերությունը ստիպեց այդ, իսկ այսօրվանից ջոկ-ջոկ պիտի քաշենք մեր քամբախտությունը։ Ամենագլխավորը — գլուխներդ լավ պահեցեք, որ կարմիրները չխփեն դրանց։ Մեր գլուխները թեև խելոք չեն, բայց չպետք է դրանք գնդակների տակ պահել։ Դրանցով հլա դեռ պետք է մտածել, թունդ մտածել, թե հետո ինչ պետք է անել...

Կազակները ճնշված լռում էին, հետո բոլորն էլ միանգամից, տարբեր և խուլ ձայներով սկսեցին խոսել.

— Էլի սկսվո՞ւմ է հինը։

— Բա հիմի մեզ ո՞ւր պիտի ուղարկեն։

— Ժողովրդին ճնշում են, շա՜ն որդեներ։

— Չենք ցանկանում լուծվել։ Այդ ի՞նչ նոր կարգեր են։

— Է-է՛, տղերք, միավորվեցինք, որ մեր գլխին փորձանք գա...

— Նոցին բարեծննդությունները էլի սկսում են նեղել մեզ։

— Հիմի պինդ կացեք, հա՛-ա։ Պիտի սկսեն հա՛ դզել հոդերդ...

Գրիգորին սպասեց մինչև նրանց հանդարտվելը, ասաց.

— Ձուր տեղն եք ձեններիդ զոռ տալի։ Վերջացավ հեշտ ժամանակը, երբ կարելի էր քննարկել հրամանները ու հակառակվել պետերին։ Գնացեք ձեր բնակարանները ու քիչ բանեցրեք լեզուներդ, թե չէ հիմիկվա ժամանակներում դրանք կհասցնեն ոչ թե Կիև, այլ հենց դաշտային դատարանները և պատժական հարյուրյակները։

Կազակները մոտենում էին դասակներով, ձեռք տալով հրաժեշտ էին տալիս Գրիգորիին, ասում էին.

— Մնաս բարով, Պանտելևիչ։ Դու էլ մեզ ների ավել-պակասը։

— Է-է՛, մեզ համար հեշտ չի լինի օտարների հետ ծառայություն կատարելը։

— Դու զուր տեղը մեզ թողիր։ Չհամաձայնվեիր դիվիզիան հանձնել, էլի՛։

— Ափսոսում ենք քեզ, Մելեխով։ Օտար հրամանատարները կարելի է թե քեզանից ավելի ուսումով են, ամա դրանով մեր վիճակը ոչ թե թեթև, այլ ծանր կլինի, ա՛յ թե որն է դժբախտությունը։

Միայն մի կազակ, որ Նապոլով խուտորից էր, մասխարա ու սրախոս,— ասաց.

— Դու, Գրիգորի Պանտելևիչ, մի հավատա սրանց։ Մերոնց հետ աշխատես թե ուրիշների հետ, մեկ է, ծանր է, եթե աշխատանքը խղճովդ չի։

Գիշերը Գրիգորին օդի խմեց Երմակովի ու մյուս հրամանատարների հետ, իսկ առավոտյան իր հետ վերցրեց Պրոխոր Զիկովին ու մեկնեց 19-րդ գնդին հասնելու։

Դեռ չէր ընդունել հարյուրյակը և ինչպես հարկն է ծանոթացել մարդկանց հետ, երբ նրան կանչեցին գնդի հրամանատարի մոտ։ Վաղ առավոտ էր։ Գրիգորին զննեց ձիերը, ուշացավ ու մի կես ժամից հետո ներկայացավ։ Նա սպասում էր, որ գնդի հրամանատարը, որ խիստ ու պահանջկոտ էր սպաների նկատմամբ, իրեն նկատողություն կանի, բայց գնդի հրամանատարը շատ սիրալիր կերպով բարևեց, հարցրեց. «է՛, ի՞նչպես եք գտնում հարյուրյակը, լա՞վ են մարդիկ», ու առանց պատասխանի սպասելու, Գրիգորիի կողքից ինչ-որ տեղ նայելով, ասաց.

— Ա՛յ թե ինչ, սիրելիս, ես պետք է մի շատ տխուր նորություն հաղորդեմ ձեզ... Ձեր տանը մեծ դժբախտություն է պատահել։ Այս գիշեր Վեշենսկուց հեռագիր է ստացված։ Ձեզ մի ամսվա արձակուրդ եմ տալիս ընտանեկան գործերը կարգավորելու համար։ Մեկնեցեք։

— Տվեք հեռագիրը,— գունատվելով ասաց Գրիգորին։

Նա վերցրեց չորս տակ ծալած թուղթը, բացեց, կարդաց, ճմռթեց վայրկենապես քրտնած ձեռքով։ Պահանջվեց մի թեթև ջանք, որպեսզի հավաքեր ինքն իրեն, և նա լոկ մի փոքր կակազեց, երբ ասաց.

— Այո, ես այդ չէի սպասում։ Ուրեմն ես մեկնում եմ։ Մնաք բարով։

— Ցմոռանաք արձակուրդի վկայական վերցնել։

— Այո, այո։ Շնորհակալություն, չեմ մոռանա։

Նա դուրս եկավ վստահորեն ու հաստատ քայլելով, ըստ սովորության թուրը գետնից վեր պահած, բայց երբ սկսեց իջնել մուտքի բարձր սանդուղքից, հանկարծ այլևս չլսեց իր իսկ քայլերի ձայնը և անմիջապես զգաց, թե ինչպես սուր ցավը սվինի պես խոցեց սիրտը։

Ներքևի սանդղաստիճանի վրա նա ճոճվեց ու ձախ ձեռքով բռնեց խախուտ բազրիքից, իսկ աջով արագ արձակեց վերնաշապկի օձիքը։ Մի րոպե կանգնած էր խոր ու արագ շնչելով, բայց այդ րոպեի ընթացքում նա ասես հարբեց տանջանքից, ու երբ կտրվեց բազրիքից ու գնաց բակի դռան մոտ կապված ձիու կողմը, քայլերն արդեն ծանր էին, նա մի փոքր օրորվում էր։

XVI

Դարյայի հետ ունեցած խոսակցությունից հետո Նատալյան մի քանի օր այնպիսի զգացմունք էր ապրում, որպիսին լինում է քնի մեջ, երբ ծանր ճնշում է վատ երազը և արթնանալու ուժ չի լինում։ Նա պատշաճավոր պատրվակ էր փնտրում, որպեսզի գնար Պրոխոր Զիկովի կնոջ մոտ ու փորձեր նրանից իմանալ, թե նահանջի ժամանակ Գրիգորին ինչպես էր ապրում Վեշենսկում և Ակսինյայի հետ տեսնվո՞ւմ էր թե ոչ։ Նա ուզում էր պարզել ամուսնու մեղքը, իսկ Դարյայի խոսքերին և՛ հավատում էր, և՛ չէր հավատում։

Ուշ երեկոյան նա մոտեցավ Զիկովի տանը՝ անհոգ թափահարելով ճիպոտը։ Պրոխորի կինը գործերը վերջացրած լինելով, նստել էր դարպասի մոտ։

— Բարև, զինվորակին. մեր հորթը չե՞ս տեսել,— հարցրեց Նատալյան։

— Բարև, անուշս. չէ՛, չեմ տեսել։

— Այնպես փչացածն է անտերը. տանը իսկի չի լինում։ Չգիտեմ որտեղ փնտրեմ։

— Կաց, մի քիչ հանգստացիր, կգտնվի։ Սեմիչկա կուղե՞ս։

Նատալյան մոտեցավ, նստեց։ Սկսվեց կանացի անպաճույճ խոսակցությունը։

— Մարդուցդ խաբար չկա՞,— հետաքրքրվեց Նատալյան։

— Չէ։ Ոնց որ թե սկել է անիծվածը։ Իսկ քո մարդը խաբա՞ր է ղրկել, թե ինչ։

— Չէ։ Գրիշան խոստացել էր գրել, ամա նամակ չի գալի։ Խալխն ասում է, որ միթամ մերոնք Ուստ-Մեդվեդիցայից դեռն են գնացել, դրանից ջոկ ուրիշ բան չեմ լսել։— Նատալյան շուտ տվեց խոսակցությունը՝ շոշափելով վերջին ժամանակների նահանջը Դոնի մյուս կողմը, սկսեց զգուշությամբ հարցուփորձ անել, թե կազակներն ինչպես էին ապրում Վեշենսկում և խուտորցիներից ով էր լինում նրանց հետ։ Պրոխորի խորամանկ կինը գլխի ընկավ, թե Նատալյան ինչու էր եկել իր մոտ, ու վերջինիս զուսպ, չոր պատասխաններ էր տալիս։

Ամուսնու պատմածներից նա ամեն ինչ գիտեր Գրիգո-

րիի մասին, ու թեև նրա լեզուն քոր էր գալիս, նա վախենում էր պատմել, հիշելով Պրոխորի նախազգուշացումը. «Լավ իմացիր, թե դրա մասին մի խոսք ասես մեկն ու մեկին, գլուխդ կդնեմ քոթուկի վրա, մունտոիկ լեզուդ մի արշին դուրս կքաշեմ ու կկտրեմ։ Եթե դրա մասին լուր հասնի Գրիգորիին, նա ոտքի վրա, հենց գործի ժամանակ կսպանի ինձ։ Իսկ ինձ մենակ դու ես զզվեցրել, կյանքը հլա չի զզվեցրել, հասկացա՞ր։ Դե, սուս կմնաս, ոնց որ թե սատկած լինես»։

— Քո Պրոխորը Վեշկիում չէ՞ր տեսնում Ակսինյա Աստախովային,— արդեն ուղղակի հարցրեց համբերությունը կորցրած Նատալյան։

— Ո՞րտեղից տեսներ նրան։ Դրա համար նրանք մի՞թե ժամանակ ունեին։ Աստված վկա բան չգիտեմ, Միրոնովնա, ու դրա մասին դու ինձ մի հարցնի։ Իմ շեկո սատանից իսկի կարգին բան չես իմանա։ Նրա խոսքը միայն այս է՝ բեր և ընդունի։

Այսպես, առանց որևէ բան իմանալու գնաց Է՛լ ավելի վրդովված ու հուզված Նատալյան։ Բայց նա այլևս չէր կարող անտեղյակ մնալ, հենց դա էլ նրան դրդեց անցնել Ակսինյայի մոտ։

Միմյանց հարևան լինելով, նրանք վերջին տարիներին հաճախ էին հանդիպում, լուռ բարևում իրար, երբեմն մի քանի խոսք փոխանակում։ Անցել էր այն ժամանակը երբ նրանք հանդիպելիս առանց բարևելու ատելությամբ լեցուն հայացքներով էին նայում իրար. փոխադարձ թշնամանքի սրությունը մեղմացել էր, ու Նատալյան, գնալով Ակսինյայի մոտ, հույս ուներ, որ վերջինս իրեն չի վռնդի և անպատճառ կխոսի Գրիգորիի մասին։ Ու Նատալյայի ենթադրությունները սխալ չէին։

Չթաքցնելով զարմանքը, Ակսինյան նրան հրավիրեց օթախը, ծածկեց պատուհանների վարագույները, վառեց լույսը, հարցրեց.

— Հը՛, ի՞նչ լավ գործով ես եկել։

— Ես լավ գործով չեմ գա քեզ մոտ...

— Ասա վատը։ Գրիգորի Պանտելևիչին փորձա՞նք է պատահել։

Ակսինյայի հարցը այնպիսի խորունկ, չթաքցրած անհանգստություն արտահայտեց, որ Նատալյան ամեն ինչ հասկացավ։ Մի նախադասությամբ արտահայտվեց ամբողջ Ակսինյան, բացվեց այն ամենը, ինչով ապրում և ինչից վախենում էր նա։ Դրանից հետո, ըստ էության, կարիք էլ չկար հարցնել նրա և Գրիգորիի հարաբերությունների մասին, սակայն Նատալյան չգնաց. մի քիչ ուշացնելով պատասխանը, նա ասաց.

— Չէ, մարդս ողջ-առողջ է, մի վախենա։

— Ես չեմ վախենում, ո՞րտեղից վերցրիր դա։ Դու պետք է մորմոքվես նրա առողջության համար, իսկ իմ հոգս ու ցավը ինձ հերիք է.— Ակսինյան ազատ էր խոսում, բայց զգալով, որ արյունը խփում է դեմքին, արագ մոտեցավ սեղանին ու, մեջքը Նատալյայի կողմը դարձրած, երկար ուղղում էր առանց այն էլ լավ վառվող լամպի բոցը։

— Քո Ստեպանից լուր կա՞։

— Օրեր առաջ բարև էր ուղարկել։

— Ողջ-առո՞ղջ է նա։

— Երևի.— Ակսինյան թոթվեց ուսերը։

Այստեղ էլ նա չկարողացավ կեղծել, թաքցնել իր զգացմունքները. այդ պատասխանը այնքան պարզ ցույց տվեց ամուսնու բախտի նկատմամբ նրա անտարբերությունը, որ Նատալյան ակամա ժպտաց։

— Երևում է, որ դու շատ չես քաշում նրա դարդը... էհ, դա քո գործն է։ Ես ա՛յ թե ինչի համար եմ եկել. խուտորում ասում են, թե Գրիգորին էլի հանդիպում է քեզ, էլի դուք տեսնվում եք, երբ նա տուն է գալի։ Այդ ճի՞շտ է։

— Մա՛րդ գտար այդ բանը հարցնելու, էլի,— հեգնանքով ասաց Ակսինյան։— Արի ես քեզ հարցնեմ՝ ճի՞շտ է դա, թե ոչ։

— Վախենո՞ւմ ես ճշմարտությունը ասել։

— Չէ, չեմ վախենում։

— Ուրեմն ասա, որ ես գիտենամ, չտանջվեմ։ Ինչի՞ զուր տեղը ինձ մաշել։

Ակսինյան կկոցեց աչքերը, շարժեց սև հոնքերը։

— Մեկ է, ես քեզ չեմ խղճա,— կտրուկ ասաց նա։— Իմ ու քո գործն այսպես է. ես տանջվում եմ, քեզ համար լավ է,

դու տանջվում ես, ինձ համար է լավ... Երկուսս էլ հո մեկին ենք սիրում, չէ՞։ Դե, ես քեզ կասեմ ճշմարտությունը, որ առաջուց գիտենաս։ Այդ բոլորը ճիշտ է, զուր չեն ասում։ Էլի ես տիրացել եմ Գրիգորիին ու հիմի կաշխատեմ ձեռքիցս բաց չթողնել նրան։ Դե, սրանից հետո դու ի՞նչ պիտի անես. տանս ապակինե՞րը պիտի ջարդես, թե՞ դանակով մորթես։

Նատալյան վեր կացավ, հանգույց կապեց ճկուն ճիպոտը, շպրտեց դեպի վառարանը և իրեն ոչ հատուկ վճռականությամբ պատասխանեց.

— Հիմի ես քեզ ոչ մի վատ բան չեմ անի։ Կսպասեմ, կգա Գրիգորին, կխոսեմ նրա հետ, հետո կտեսնեմ, թե ոնց պիտի վարվեմ ձեզ, երկուսիդ հետ։ Ես երկու երեխա ունեմ, կպաշտպանեմ նրանց է՛լ, ինձ է՛լ։

Ակսինյան ժպտաց։

— Ուրեմն ես հլա դեռ կարող եմ ապրել առանց վախենալո՞ւ։

Չհասկանալով հեգնանքը, Նատալյան մոտեցավ Ակսինյային, շոշափեց նրա թևքը։

— Ակսինյա, ամբողջ կյանքումս դու փակում ես իմ ճամփեն, բայց ես հիմի քեզնից ոչինչ չեմ խնդրի, հիմի այն ժամանակը չի, մի՞տդ է։ Այն ժամանակ ես ավելի ջահել էի, անխելք էի, կարծում էի, որ եթե քեզ խնդրեմ, կխղճաս, գութ կանես ու կհրաժարվես Գրիգորիից։ Հիմի չեմ խնդրի։ Ես գիտեմ, որ դու նրան չես սիրում, այլ ընկնում ես նրա ետևից, որովհետև սովոր ես այդ բանին։ Մի՞թե դու երբևիցե նրան այնպես ես սիրել, ինչպես ես։ Երևի ոչ։ Դու Լիստնիցկու հետ էիր լինում, էլ ո՞ւմ հետ ասես, որ չես եղել դու, ման եկող կնիկ։ Երբ որ սիրում են, այդպես չեն անում։

Ակսինյան գունատվեց. Նատալյային ձեռքով ետ մղելով, վեր կացավ սնդուկից։

— Նա ինձ դրանով չէր փնովում, իսկ դու փնովում ես, հա՞-ա։ Քո ի՞նչ գործն է։ Լավ, ես վատն եմ, իսկ դու լավն ես, հետո ի՞նչ։

— Ես ամեն բան ասի։ Մի հերսոտի։ Հիմի կերթամ։ Շնորհակալ եմ, որ ասեցիր ճշմարտությունը։

— Ջարժե, շնորհակալություն մի ասա, առանց ինձ էլ կիմանայիր։ Մի քիչ կաց, ես քեզ հետ դուրս կգամ պատու-

հանների փեղկերը ծածկելու։— Ակսինյան մուտքի սանդուղքի վրա մի փոքր կանգ առավ, ասաց.— ես ուրախ եմ, որ մենք հաշտ կերպով, առանց կռվելու ենք բաժանվում, բայց վերջին անգամ այ թե ինչ կասեմ քեզ, սիրելի հարևանուհի. թե որ կարողացար, կվերցնես նրան, իսկ թե չէ, չնեղանաս։ Ես էլ իմ հոժար կամքով չեմ հրաժարվի նրանից։ Հասակս ջահել չի, ու ես, չնայած դու ինձ ման եկող անվանեցիր,— ձեր Դաշկան չեմ, այդ տեսակ գործերով կյանքումս չեմ զբաղվել։ Դու գոնե երեխեք ունես, իսկ ես,— Ակսինյայի ձայնը դողաց, ավելի խուլ ու ցածր հնչեց,— ես մենակ նրան ունեմ արար-աշխարհում։ Առաջինն ու վերջինն է։ Գիտե՞ս ինչ, եկ էլ չխոսենք նրա մասին։ Երկնային թագավորը մահվանից կպաշտպանի նրան, նա սաղ կմնա, կվերադառնա, ինքը կընտրի...

Նատալյան գիշերը չքնեց, իսկ առավոտյան Իլյինիչնայի հետ գնաց բանջարանոցը քաղհանելու։ Աշխատանքի մեջ նա իրեն ավելի լավ էր զգում։ Նա ավելի քիչ էր մտածում թորխը հավասարաչափ խփելով արևի չորացրած ավազոտ կավահողի կտորներին, որոնք փշրվում էին, երբեմնակի կանգ էր առնում, որ հանգստանար, սրբեր դեմքի քրտինքը ու ջուր խմեր։

Կապույտ երկնքում սահում ու հալչում էին քամու ծվատած սպիտակ ամպերը։ Արևի ճառագայթները կիզում էին տաքացած գետինքը։ Արևելքից անձրև էր սպասվում։ Նատալյան առանց գլուխը բարձրացնելու մեջքով զգում էր, թե ինչպես վրա հասած ամպը ծածկում էր արևը. մի ակնթարթ փչեց հովը, գորշ ստվերը շեշտակի փռվեց թուխ, թեժացած գետնքի, ձմերուկի ճյուղավորված ոստերի, արևածաղկի բարձր ցողունների վրա։ Ստվերը ծածկում էր բլրալանջի վրա փռված բոստանները, տոթից նվաղած ու պառկած խոտաբույսերը, մլենու և վայրի սալորենու թփերը՝ թռչունների ծեռոտած, գլխիկոր տերևներով։ Ավելի զիլ էր հնչում լորի լարված կանչը, ավելի հստակ էր լսվում արտույտների դուրեկան երգը, ու նույնիսկ քամին, օրորելով տաքացած բույսերը, ավելի զով էր թվում։ Հետո էլ արևը շեղակի թափանցեց դեպի արևմուտք սահող ամպի կուրացուցիչ-սպիտակ եզրի տակից ու, բացվելով, նորից լույսի ոսկեհուր, շողշողուն հեղեղներ թափեց երկրի վրա։ Հեռո՜ւ-հեռվում, Դոնի շրջակա լեռների կապուտակ ճյուղերի վրա ամպը ուղեկցող ստվերը դեռ տնտղում ու

մթագնում էր գետինքը, իսկ բոստանների վրա արդեն իշխում էր սաթի պես դեղին կեսօրը, հորիզոնում դողում, փայլփլում էր հոսանուտ մուժը, ավելի հեղձուկ էր հողի ու նրա սնած խոտաբույսերի բույրը։

Կեսօրին Նատալյան գնաց ձորակում փորված ջրհորը, սափորով շատ պաղ ջուր բերեց։ Նա և Իլյինիչնան ջուր խմեցին, լվացին ձեռքերը, թեժ արևի տակ նստեցին ճաշելու։ Իլյինիչնան փռած գոգնոցի վրա կանոնավոր կերպով հաց կտրեց, տոպրակից հանեց գդալները, թասը, բերեց վերարկուով արևից ծածկած, մածնով լիքը, բուկը նեղ սափորը։

Նատալյան տհաճությամբ էր ուտում, ու կեսուրը հարցրեց.

— Վաղուց տեսնում եմ, որ դու մի տեսակ փոխվել ես... Քո և Գրիշայի մեջ հո բան չի՞ պատահել։

Նատալյայի հողմահար շուրթերը ցավագին դողդողացին։

— Նա, մայրիկ, էլի Ակսինյայի հետ է ապրում։

— Այդ... ո՞րտեղից է հայտնի։

— Երեկ ես եղա Ակսինյայի մոտ։

— Եվ նա, այդ դարձվորը խոստովանե՞ց։

— Այո։

Իլյինիչնան մի փոքր լռեց. մտածմունքի մեջ ընկավ։ Բարկությունը ստվերեց նրա կնճռոտ դեմքը, շարժեց շուրթերի անկյունները։

— Կարելի է նա, անիծվածը, զուր տեղը պարծենում է, հը՞։

— Չէ, մայրիկ, ի՞նչ պարծենալ, ճիշտ է...

— Լավ չես մտիկ արել Գրիշային...— զգուշությամբ ասաց պառավը.— աչքդ չպիտի կտրես այդ տեսակ էրիկից։

— Ո՞նց բռնես։ Ես նրա խղճի վրա էի հույս դնում... Մի՞թե նրա փեշը պետք է կարեի փեշիս։— Նատալյան դառը ժպտաց, հազիվ լսելի ձայնով ավելացրեց.— նա հո Միշատկան չի, որ սաստես։ Մազերի կեսը ճերմակել է, իսկ նա հինը չի մոռանում...

Իլյինիչնան լվաց ու սրբեց գդալները, ողողեց թասը։ Ամանը-չամանը հավաքեց տոպրակի մեջ ու միայն այդ ժամանակ հարցրեց.

— Ա՞յդ է ամբողջ փորձանքը։

— Ի՞նչ տեսակ կնիկ եք դուք, մայրիկ... Այդ փորձանքն է՛լ հերիք է, որ լույս-աշխարհը սև դառնա։

— Բա դու ի՞նչ ես մտածել։

— Էլ ի՞նչ պիտի մտածեմ։ Կվերցնեմ երեխեքին ու կգընամ մերոնց մոտ։ Նրա հետ էլ չեմ ապրելու։ Թող Ակսինյային տուն բերի, ապրի նրա հետ։ Հերիք է ինչքան տանջվեցի։

— Ջահել ժամանակս ես էլ էի այդպես մտածում,— հոգոց հանելով ասաց Իլյինիչնան։— Իմ մարդն էլ պակասը չէր։ Ինչքա՜ն դարդ եմ քաշել նրա ձեռից, ասել չեմ կարող։ Մենակ թե հարազատ էրիկից հեռանալը հեշտ չի, միտք էլ չունի։ Որ լավ մտածես, ինքդ կհամոզվես։ Երեխեքին հորից վերցնելը տանել, այդ ո՞նց կլինի։ Չէ, այդ մեկը դու զուր ես ասում։ Իսկի չմտածես էլ դրա մասին, չեմ թույլ տա։

— Չէ, մայրիկ, ես նրա հետ չեմ ապրելու, խոսելն ավելորդ է։

— Ո՞նց թե խոսելն ավելորդ է,— վրդովվեց Իլյինիչնան։— Բա դու իմ հարազատը չե՞ս, ինչ է։ Ես հո ձեզ, անիծվածներիդ մեղքանո՞ւմ եմ թե չէ։ Եվ դու ինձ, պառավիս, մորդ այդ տեսակ խոսքե՞ր ես ասում, հա՞։ Քեզ ասում են՝ գլխիցդ դեն գցի այդ, ուրեմս պրծավ-գնաց։ Ի-ի-ի՜հ, միթամ բան ես մտածել՝ «Կերթա՞մ տնից»։ Ո՞ւր կերթաս։ Ձերոնցից ո՞ւմ ես պետք։ Հերդ չկա, տունը վառել են, մերդ ուրիշի պատի տակ ուզվորություն անելով պիտի ապրի, ու դու կճխտվես այնտեղ և թոռներիս էլ հետդ կտանես, հա՞-ա։ Չէ, անուշս, քո ասածը չի լինի։ Կգա Գրիշկան, այն ժամանակ կտեսնենք, թե ինչ կանենք նրան, իսկ հիմի դու ինձ այդ բանը մի՛ ասա, չեմ թույլ տալի ու չեմ լսի։

Այն ամենը, ինչ որ այնքա՛ն երկար կուտակվել էր Նատալյայի սրտում, հանկարծ դուրս թափվեց հեկեկանքների ջղաձգական մոլուցքով։ Նա հառաչելով գլխից պոկեց լաչակը, երեսնիվայր ընկավ շոր, անհամբույր հողի վրա ու կուրծքը սեղմելով նրան, հեկեկաց անարցունք։

Իլյինիչնան,— այդ խելոք ու բարի պառավը,— տեղից էլ չշարժվեց։ Նա վերարկուով փաթաթեց մածնի մնացորդով սափորը, դրեց ստվերի մեջ, հետո թասի մեջ ջուր լցրեց, մոտեցավ ու նստեց Նատալյայի կողքին։ Նա գիտեր, որ այդպիսի վիշտը խոսքերով չի ամոքվի. գիտեր նա, որ

արցունքներն ավելի լավ են, քան չոր աչքերը և պինդ սեղմված շրթունքները։ Թողնելով, որ Նատալյան լացը կտրի, Իլյինիչնան աշխատանքից կոշտացած իր ձեռքը դրեց հարսի գլխին, ու շոյելով նրա սև, պլպլան մազերը, խստորեն ասաց.

— Դե, հերիք է։ Բոլոր արցունքներդ հո չես թափի, մյուս անգամվա համար էլ թող։ Ա՛ռ, ջուր խմի։

Նատալյան հանդարտվեց։ Միայն երբեմնակի ցնցվում էին նրա ուսերը ու մարմնով թեթև դող էր անցնում։ Անբսպասելիորեն նա վեր թռավ, դեն հրեց Իլյինիչնային, որ թասով ջուրը մեկնել էր նրան ու, երեսը դարձնելով դեպի արևելք, ասես աղոթելու համար արցունքոտ ձեռները կրծքին ծալած, շուտասելուկով, շնչահեղձ լինելով գոչեց.

— Տեր աստված, նա հոգիս բերանս բերեց։ Էլ ուժ չկա այսպես ապրելու։ Աստվա՛ծ, պատժիր նրան, անիծվածին։ Այնտեղ մահ տուր նրան։ Թող էլ չապրի, չտանջի ինձ...

Սև, քուլա-քուլա ամպը սողում էր արևելքից։ Խուլ թնդում էր որոտը։ Ճեղքելով ամպերի կլոր կատարները, գալարվելով, երկնքում սահում էր հրեղեն-սպիտակ կայծակը։ Քամին դեպի արևմուտք էր թեքում հեծեծող խոտաբույսերը, ճանապարհից դառն փոշի էր բերում, արևածաղկի սերմնակալած գլխիկները ծռում համարյա մինչև գետին։

Քամին փոփոացնում էր Նատալյայի արձակ մազերը, շորացնում նրա թաց դեմքը, ամեն օրվա գորշ շրջազգեստի լայն փեշը փաթաթում ոտների շուրջը։

Իլյինիչնան մի քանի վայրկյան սնոտիապաշտական սարսափով նայում էր հարսին։ Վերջինս նրան անծանոթ և ահավոր էր թվում երկնքի կեսը բռնած սև, փոթորկաբեր ամպի ֆոնի վրա։

Շեշտակիորեն վրա էր հասնում անձրևը։ Փոթորկին նախորդող լռությունը երկար չտևեց։ Տագնապալից կերպով կոնչաց շեղակի ցածրացող մանրաբազեն, իր բնի մոտ վերջին անգամ ճտճտաց գետնասկյուռը, ուժեղ քամին մանր ավազափոշի շպրտեց Իլյինիչնայի դեմքին, ոռնալով սլացավ տափաստանով մեկ։ Պառավը դժվարությամբ ոտքի ելավ։ Նրա դեմքը մահվան դալկությամբ էր պատած, երբ նա վերահաս փոթորկի աղմուկում խուլ ձայնով բղավեց.

— Խելքդ գլխիդ հավաքի, աստված քեզ հետ, ո՞ւմ համար ես մահ խնդրում։

— Տեր, պատժի նրան, տեր, պատժի,— ճչում էր Նատալյան՝ խելագար աչքերը հառելով դեպի այնտեղ, ուր վեհորեն և ահասարսուռ կերպով կուտակվում էին մրրիկից ծառս լինող սև ամպերը, որոնք մի ակնթարթ լուսավորվում էին կայծակների կուրացուցիչ բռնկոցներով։

Տափաստանի վերևում չոր ճայթեց որոտը։ Վախով բռնված Իլյինիչնան խաչակնքեց, անհաստատ քայլերով մոտեցավ Նատալյային, բռնեց նրա ուսից։

— Ծունկ չոքիր, լսո՞ւմ ես, Նատաշկա, հը՞։

Նատալյան ինչ-որ չտեսնող աչքերով նայեց սկեսուրին, ակամա ծունկ չոքեց։

— Թողություն խնդրի աստծուց,— վճռականորեն հրամայեց Իլյինիչնան,— խնդրի, որ չընդունի քո աղոթքը։ Ո՞ւմ համար էիր մահ խնդրում. քո երեխեքի հարազատ հո՞րը։ Օֆ, ինչքա՜ն մեծ մեղք... խաչակնքի, ծունր դիր։ Ասա՝ «Տե՛ր իմ, ների իմ, անիծվածիս մեղքը»։

Նատալյան խաչակնքեց, ինչ-որ շշնջաց գունաթափ շրթունքներով ու, ատամներն իրար սեղմելով՝ անհարմար ընկավ կողքի վրա։

Հորդառատ անձրևով լվացված տափաստանը զմայլականորեն կանաչին էր տալիս։ Հեռավոր լճակից մինչև Դոն ձգվել էր ծիածանի գունագեղ աղեղը։ Արևմուտքում խուլ գոմռում էր որոտը։ Ջորակում զիլ կարկաչյունով սլանում էր լեռնային պղտոր հեղեղը։ Փրփրակալած առվակները լեռնալանջով, բոստանների միջով հոսում էին ներքև, դեպի Դոնը։ Նրանք տանում էին անձրևի թափած տերևները, հողից հանած՝ բույսերի արմատները, տարեկանի ջարդված հասկերը։ Ջրի բերած ավազը փռվում էր բոստաններում՝ ծածկելով ճմերուկի ու սեխի ցողունները. ջուրը խայտալով հոսում էր ամառային ճանապարհներով, լցվում աղուրները։ Հեռավոր մի ձորակի ճյուղի մոտ դեռ վառվում էր կայծակի հրկիզած խոտի դեզի մնացորդը։ Ծխի գորշ սյունը բարձրանալով, համարյա հասնում էր երկնքով մեկ ձգված ծիածանին։

Իլյինիչնան ու Նատալյան յուրքաները բարձր քշտած, բոբիկ ոտները զգուշությամբ դնելով ցեխոտ, սլկուն ճանապարհին, իջնում էին խուտոր։ Իլյինիչնան ասում էր.

— Դուք, ջահելներդ շատ մեծսրտանի եք, խաչը վկա։ Մի բան եղավ թե չէ, կատաղում եք։ Որ այնպես ապրեիր, ինչպես ես եմ ապրել ջահել ժամանակս, ի՞նչ պիտի անեիր։ Գրիշկան ձեր ամբողջ կյանքումը իսկի մատով էլ չի բռթել քեզ, ու էլի դու անբավական ես, զարմանք բան արեցիր. հեռանալ էիր ուզում, ուշագնաց լինում, էլ ի՞նչ ասես, որ չէիր անում, աստծուն էլ խառնեցիր ձեր մուտտաո գործերի մեջ... Դե հիմի ասա, անուշս, բա այդ լա՞վ բան է, հը՞։ Իսկ իմ թոփալ սաղայելը ջահել օրերից մեռցնելու չափ ծեծում էր ինձ, այն էլ զուր տեղը. ես նրա առաջ իսկի էլ մեղավոր չէի լինում։ Ինքը մունտռիկութեն էր անում, հերսը գլխիս թափում։ Մեկ էլ տեսար գալիս էր առավոտ ծեգին, ես լաց էի լինում դառն արցունքներով, նախատում նրան, իսկ նա ինձ բռունցքներովը տո՛ւր թե կտաս... Ամիսներով կապուտկած էի լինում, ամա էլի ապրում էի, պահում, մեծացնում երեխեքին ու ոչ մի անգամ էլ միտք չէի անում անից փախնել։ Ես չեմ գովում Գրիշկային, բայց այդ տեսակ մարդու հետ դեռ կարելի է ապրել։ Թե որ այդ օձը չլիներ, Գրիշկան խուտորի կազակներից առաջինը կլիներ։ Կախարդել է նա Գրիշկային, ուրիշ ոչինչ։

Նատալյան երկար ժամանակ լուռ էր քայլում ու ինչ-որ մտածում, հետո ասաց.

— Մայրիկ, ես էլ չեմ ուզում դրա մասին խոսել։ Գրիգորին կգա, կտեսնենք, թե ես ինչ պիտի անեմ։ Կարելի է ինքս հեռանամ, կամ նա դուրս անի, իսկ հիմի ես ձեր տնից ոչ մի տեղ չեմ գնա։

— Ա՛յ, վաղուց պիտի այդպես ասեիր,— ուրախացավ Իլյինիչնան։— Աստված կտա, ամեն բան կարգի կընկնի։ Նա խսկի էլ գուրս չի անի քեզ, դրա մասին չմտածես է՛լ։ Նա այնպես է սիրում քեզ էլ, երեխեքին էլ, որ այդ բանը մըտքովն էլ չի անցկացնի։ Չէ՛-է։ Նա քեզ չի թողնի ու չի գնա Ակսինյային, չի կարող այդ տեսակ բան անել։ Դե, մարդ ու կնկա մեջ շատ էլ շատ բան է լինում, ի՞նչ կա որ։ Մենակ թե նա առաջ գլխով տուն գա...

— Ես նրա մահը չեմ ուզում... Սրտիս հերսից էի ասում այն խոսքերը... Դուք դրա համար մի նախատեք ինձ... Նրան սրտիցս պոկել չի լինի, ամա այսպես ապրելն էլ ծանր է...

— Սիրելիս, հարազատս, բա ես չգիտե՞մ։ Մենակ թե առանց մտածելու ոչինչ չպիտի անել։ Դրուստ եմ ասում, թողնենք դրա մասին խոսելը։ Դու հիմի, ի սեր Քրիստոսի, ալևորին ոչինչ չասես, հա՛-ա։ Սա նրա գործը չի։

— Ես ուզում եմ ձեզ մի բան ասել... Գրիգորիի հետ ես կապրեմ թե չէ, հլա հայտնի չէ, բայց նրանից երեխա բերել էլ չեմ ուզում։ Այս երեխեքի հոգս ու ցավն էլ հերիք է... Իսկ հիմի ես երեխով եմ, մայրիկ...

— Վաղո՞ւց է։

— Երրորդ ամիսն է։

— Դրանից ո՞նց կարող ես պրծնել։ Ուզես-չուզես պետք է բերես։

— Չեմ բերի,— վճռականապես ասաց Նատալյան,— հենց այսօր կգնամ Կապիտոնովնա տատի մոտ։ Նա ինձ կազատի դրանից... Մի քանի կանանց այդպես է արել։

— Ո՞նց թե, փչացնե՞լ պտուղը։ Լեզուդ ո՞նց է դառնում, հը՞, անամոթ։— Վրդովված Իլյինիչնան կանգ առավ ճանապարհի մեջտեղում, ձեռներն իրար զարկեց։ Նա ուզում էր էլի մի բան ասել, բայց ետևից լսվեց անիվների գոգոց, ցեխը կոխկրտող ձիերի սմբակների չպչպոց և մեկի շտապեցնող ձայնը։

Իլյինիչնան և Նատալյան ճանապարհից մի կողմ անցան՝ իջեցնելով քշտած յուրքաները։ Դաշտից վերադարձող ծերունի Ֆիլիպ Ագեևիչ Բեսխլեբնովը հասավ նրանց, կանգնեցրեց կայտառ զամբիկը։

— Նստեք տանեմ, կնանիք, զուր տեղը մի կոխկրտեք ցեխը։

— Այ շնորհակալությո՛ւն, Ագեևիչ, թե չէ մենք բեղարկել ենք սլկալուց,— գոհությամբ ասաց Իլյինիչնան ու առաջինը նստեց ընդարձակ սայլին։

Ճաշից հետո Իլյինիչնան ուզում էր խոսել Նատալյայի հետ, ապացուցել, որ կարիք չկա ազատվել հղիությունից.

ամանները լվալով, նա մաքում փնտրում էր իր կարծիքով առավելապես համոզիչ փաստարկները, նույնիսկ մտածում էր Նատալյայի մտադրությունը հայտնել ծերունուն և նրա օգնությամբ համոզել վշտից կատաղած հարսին, որ հրաժարվի անմիտ քայլից, բայց, մինչդեռ նա զբաղված էր իր գործերով, Նատալյան դաղտուկ պատրաստվեց ու գնաց։

— Ո՞րտեղ է Նատալյան,— հարցրեց Իլյինիչնան Դունյաշկային։

— Ինչ-որ կապոց արավ ու գնաց։

— Ո՞ւր։ Ի՞նչ ասաց։ Ի՞նչ կապոց։

— Դե ես ի՞նչ գիտեմ, մայրիկ։ Աղլուխի մեջ մաքուր յուբկա ու էլի մի բան դրեց ու գնաց, ոչինչ չասաց։

— Վա՛յ իմ գլխին.— Իլյինիչնան ի զարմանս Դունյաշկայի հուսահատորեն լաց եղավ, նստեց նստարանին։

— Ինչ եղավ ձեզ, մայրիկ. տեր աստված, ինչո՞ւ եք լալիս։

— Կորի, անմուրազ, քո գործը չի։ Բա ի՞նչ էր ասում նա։ Ինչի՞ դու ինձ չասիր, երբ նա պատրաստվում էր գնալու։

Դունյաշկան վրդովված պատասխանեց.

— Ձեզ հետ գործ ունենալը ուղղակի փորձանք է, էլի. ես ո՞րտեղից գիտենայի, թե դրա մասին պետք է ասեմ ձեզ։ Նա հո բոլորովին չի՞ գնացել։ Երևի մոր մոտ հյուր էր գնում, և ինչո՞ւ եք դուք լալիս, իսկի բան չեմ հասկանում։

Իլյինիչնան մեծագույն անհանգստությամբ սպասում էր Նատալյայի վերադարձին։ Վախենալով կշտամբանքներից և մեղադրանքներից, որոշեց ոչինչ չասել ծերունուն։

Արևը մայր մտնելիս տափաստանից եկավ նախիրը։ Իջավ ամառային կարճատև մթնշաղը։ Խուտորում տեղ-տեղ լույսեր վառվեցին, իսկ Նատալյան դեռ չկար։ Մելեխովների տանը իրիկնահացի նստեցին։ Հուզմունքից գունատված Իլյինիչնան պասուց յուղի մեջ դաղած սոխով էրիշտա դրեց սեղանին։ Ծերունին վերցրեց գդալը, քարթու հացի փշուրները լցրեց դրա մեջ, տարավ բեղ ու մորուքի մեջ կորած բերանը, ու մտացրիվ նայելով սեղանի շուրջը նստածներին, հարցրեց.

— Նատալյա՞ն ուր է։ Ինչի՞ չեք կանչում հաց ուտելու։

— Տանը չի,— ցածրաձայն պատասխանեց Իլյինիչնան։

— Բա ո՞րտեղ է։

— Երևի մոր մոտ է գնացել և հյուրասիրվում է։

— Այդքան երկար հյուրասիրվե՞լ կլինի։ Ժամանակն է կարգ ու կանոն գիտենալ...— դժգոհ մոթմոթաց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Ինչպես միշտ, նա ջանադրությամբ, նոանդով էր ուտում. երբեմնակի դդալը թարս կողմով դնում էր սեղանին, շեղակի, ուրախ հայացքով նայում իր կողքին նստած Միշատկային, մի քիչ կոպիտ ասում. «Մի քիչ դեսը դարձիր, զավակս, թող սրբեմ պռոշներդ։ Մերդ փուչ է, ու ձեզ մտիկ անող չկա...»Ու մեծ, կոշտ, սև ձեռքով սրբում էր թոռնիկի քնքուշ, վարդագույն շրթնիկները։

Լուռ վերջացրին ընթրիքը, վեր կացան սեղանից։ Պանտելեյ Պրակոֆևիչը հրամայեց.

— Հանգցրեք լույսը։ Նավթը քիչ է և թող զուր տեղը չվառվի։

— Դռները փակե՞մ,— հարցրեց Իլյինիչնան։

— Փակի։

— Բա Նատալյա՞ն։

— Կգա — կծեծի։ Կարելի է մինչև առավո՞տ պիտի թլև գա։ Ա՛յ քեզ մոդա... Դու հո իսկի ձեն չես հանի, քավթառ ջադու։ Մտիկ, է՛, գիշերները հյուր է գնում... Առավոտը ես նրան ցո՛ւյց կտամ։ Դաշկայից բա՛ն է սովորել...

Իլյինիչնան պառկեց առանց հանվելու։ Կես ժամ պառկած էր կամացուկ շուռումուռ գալով, հոգոց հանելով, ու հենց նոր էր ուզում վեր կենալ ու գնալ Կապիտոնովնայի մոտ, երբ պատուհանի տակից լսվեցին ինչ-որ մեկի անվստահ, քստքստան քայլերը։ Պառավը վեր թռավ իր տարիքին անհամապատասխան աշխուժությամբ, հապճեպ վազեց հաշտը, բացեց դուռը։

Մեռելի պես գունատ Նատալյան կառչելով բազրիքից, դժվարությամբ բարձրանում էր մուտքի սանդուղքով։ Լիալուսինը պարզ լուսավորում էր նրա նիհարած դեմքը, փոս ընկած աչքերը, տանջալից կերպով ծռված հոնքերը։ Նա քայլում էր ցնցվելով, ինչպես ծանր վիրավորված գազանը, ու այնտեղ, ուր ոտ էր դնում, մուգ, արյունոտ բիծ էր մնում։

Իլյինիչնան լուռ գրկեց նրան, տարավ հաշտը։ Նատալյան մեջքով հենվեց դռան, խոպոտ շշնջաց.

— Մերոնք քնա՞ծ են։ Մայրիկ, սրբեք ինձնից թափված արյունը... Տեսնում եք, հետք եմ թողել...

— Այդ ի՞նչ ես արե՛լ,— հեկեկանքներից խեղդվելով, շածրաձայն բացականչեց Իլյինիչնան։

Նատալյան փորձեց ժպտալ, բայց ժպիտի փոխարեն ողորմելի ծամածռությունը աղճատեց նրա դեմքը։

— Կամաց, մայրիկ... Թե չէ կզարթեցնեք մերոնց... Ես պրծա... Հիմի հոգիս հանգիստ է... Մենակ թե շատ արյուն է գալի... Ոնց որ մորթված լինեմ... Տվեք ինձ ձեր ձեռքը, մայրիկ... Գլուխս պտույտ է գալի։

Իլյինիչնան սողնակով փակեց դուռը։ Ասես անծանոթ տանը լիներ,— դողդոջ ձեռքով երկար փնտրում էր ու մթության մեջ ոչ մի կերպ չէր գտնում դռան ունկը։ Ոտների մատների վրա քայլելով՝ Նատալյային տարավ մեծ օթախը. արթնացրեց ու դուրս արեց Դունյաշկային, կանչեց Դարյային, վառեց լամպը։

Խոհանոցի դուռը բաց էր և այնտեղից լսվում էր Պանտելեյ Պրակոֆևիչի համաչափ, հուժկու խռմփոցը։ Փոքրիկ Պոլյուշկան քնի մեջ քաղցր ճպճպացնում էր շրթունքները ու ինչ-որ թոթովում։ Խոր է մանկական առողջ ու հանգիստ քունը։

Մինչդեռ Իլյինիչնան հարդարում էր բարձը ու անկողին պատրաստում, Նատալյան նստեց նստարանին, ուժասպառ վիճակում գլուխը դրեց սեղանի ծայրին։ Դունյաշկան ուզեց մտնել սենյակը, բայց Իլյինիչնան խստորեն ասաց.

— Հեռացիր, անամոթ, ու էլ չերևաս։ Այստեղ քսմսվելու դործ չունես։

Հոնքերը կիտած Դարյան վերցրեց թրջած փալասը, գնաց հաշտը։ Նատալյան դժվարությամբ բարձրացրեց գլուխը, ասաց.

— Մահճակալից վերցրեք մաքուր շորերը... Քաթանե կարպետ փռեցեք... Մեկ է, կկեղտոտվի...

— Լռիր,— հրամայեց Իլյինիչնան։— Հանվիր, պառկիր։ Վա՞տ ես զգում։ Գուցե ջո՞ւր բերեմ։

— Թուլացել եմ... Բերեք մաքուր շապիկ ու ջուր։

Նատալյան ճիգ անելով վեր կացավ, երերուն քայլերով մոտեցավ մահճակալին։ Իլյինիչնան միայն այստեղ նկատեց, որ Նատալյայի արնաշաղախ յուբկան ծանր կախվել, կպչում է ոտներին։ Նա սարսափով էր նայում, թե ինչպես Նատալյան, ասես անձրևից թրջված, քամեց փեշը, սկսեց հանվել։

— Ախր դու արնաքամ ես եղել,— փղձկաց Իլյինիչնան։

Նատալյան հանվում էր աչքերը փակելով, ուժգին ու արագ շնչելով։ Իլյինիչնան նայեց նրան ու վճռական քայլերով գնաց խոհանոց։ Նա դժվարությամբ, հրմշտելով արթնացրեց Պանտելեյ Պրակոֆևիչին, ասաց.

— Նատալյան հիվանդացել է... Շատ վատ է, չլինի՞ թե մեռնի... Հենց հիմի լծիր ձին ու գնա ստանիցայից ֆերշիլ բեր։

— Սարսաղ բաներ ես հնարում։ Ի՞նչ է պատահել նրան։ Հիվանդացե՞լ է։ Թող գիշերները քիչ քարշ գար...

Պառավը կարճ բացատրեց եղելությունը։ Կատաղած Պանտելեյ Պրակոֆևիչը վեր թռավ ու, քայլելիս կոճկելով շալվարը, աճապարեց դեպի սենյակը։

— Ախ գարշելի, ա՛խ շան աղջիկ։ Այդ ի՞նչ է արել։ Կարիքն է նրան ստիպել, հա՞-ա... Հիմի ես նրան շանսատակ կանեմ...

— Գժվե՞լ ես, անիծված... Ո՞ւր ես քշում... Չգնաս այնտեղ, նա քեզ հետ գլուխ չունի... Կզարթեցնես երեխեքին։ Գնա բակը ու շուտ լծի ձին...— Իլյինիչնան ուզում էր կանգնեցնել ծերունուն, բայց վերջինս նրան չլսելով, մոտեցավ օթախի դռան, աքացելով բացեց այն։

— Այդ ի՞նչ ես արել, սատանի ծնունդ,— գոռաց նա՝ կանգնելով շեմքին։

— Չի կարելի, հայրիկ, ներս մի գա ի սեր Քրիստոսի, ներս մի գա,— սուր ճչաց Նատալյան՝ հանած շապիկը սեղմելով կրծքին։

Հայհոյանք թափելով, Պանտելեյ Պրակոֆևիչը սկսեց փնտրել կապան, գլխարկը, լծասարքը։ Նա այնքան երկար հապաղեց, որ Դունյաշկան այլևս չհամբերեց, ներխուժեց խոհանոց ու արտասվելով վրա տվեց հորը.

— Շուտ գնա, է՛։ Ի՞նչ ես պրպտում ոնց որ բզեզը աղբի մեջ։ Նատալյան մեռնում է, իսկ դու մի ամբողջ ժամ

մլոլ ես անում։ Ամա թե հայր ես, հա՛-ա։ Թե չես ուզում գնալ, այդպես էլ ասա։ Ես ինքս կլծեմ ձին ու կերթամ։

— Թյո՛ւ, սրա՛ն տես, կորցրել է խելքը։ Կապդ կտրե՞լ ես, հա՞։ Ակաս-մակաս դո՛ւ էիր պակաս, քոսոտ երինջ։ Հորդ վրա՞ ես ճվում, մունտռիկ։— Պանտելեյ Պրակոֆևիչը կապան թափ տվեց աղջկա վրա ու քթի տակին անեծքներ մոթմոթալով, դուրս ելավ բակը։

Նրա մեկնելուց հետո տանը բոլորն էլ իրենց ավելի ազատ զգացին։ Դարյան սրբում էր հատակները, զրխկացնելով դեսդեն քշում աթոռներն ու նստարանները, Դունյաշկան, որ հոր մեկնելուց հետո Իլյինիչնայից թույլտվություն ստացավ սենյակ մտնելու, նստել էր Նատալյայի մոտ, ուղղում էր բարձը, ջուր էր տալիս. Իլյինիչնան երբեմնակի մտնում էր կողքի սենյակում քնած երեխաների մոտ ու, վերադառնալով սենյակ, թուշը ձեռքին հենելով, երկար նայում էր Նատալյային, տխուր օրորում գլուխը։

Նատալյան պառկել էր լուռ, բարձի վրա դես ու դեն էր գարձնում գլուխը, մազերը գզգզված էին, քրտնքից թրջված։ Նա արյունաքամ էր լինում։ Իլյինիչնան յուրաքանչյուր կես ժամը մի անգամ խնամքով բարձրացնում էր նրան, հանում տիլի պես թաց փոռոցը, նորն էր փռում։

Նատալյան ժամ առ ժամ թուլանում էր։ Կեսգիշերից անց նա բացեց աչքերը, հարցրեց.

— Շո՞ւտ կլուսանա։

— Շատ շուտ,— հանգստացրեց նրան պառավը, իսկ ինքն իր մեջ մտածեց. «Ուրեմն չի ապրի. վախենում է, որ ուշքը կկորցնի ու չի տեսնի երեխեքին...»

Կարծես նրա ենթադրությունը հաստատելու համար Նատալյան կամացուկ ասաց.

— Մայրիկ, զարթնեցրեք Միշատկային ու Պոլյուշկային...

— Ի՞նչ ես ասում, աղունիկս։ Կեսգիշերին ինչի՞ նրանց զարթեցնեմ։ Նրանք կվախենան քեզ մտիկ տալով, լաց ու կոծ կբարձրացնեն... Ինչի՞ նրանց զարթեցնել։

— Ուզում եմ տեսնել նրանց... Վատ է վիճակս։

— Աստված քեզ հետ, ի՞նչ ես ասում։ Հիմի հերդ կբերի ֆերշիլին, ու նա կօգնի քեզ։ Քնիր, էլի, հա՞, մատաղդ լինեմ։

— Ո՞նց քնեմ, է՛,— թեթև վրդովմունք արտահայտող ձայնով պատասխանեց Նատալյան։ Ու դրանից հետո երկար ժամանակ լուռ էր, ավելի հանգիստ էր շնչում։

Իլյինիչնան կամացուկ դուրս եկավ տանից, մուտքի սանդուղքի վրա սկսեց բուռ-բուռ արցունք թափել։ Ուռած, կարմրատակած դեմքով վերադարձավ սենյակ, երբ արևելքում հազիվ նշմարվում էր լուսաբացը։ Լսելով դռան ճռռոցը, Նատալյան բացեց աչքերը, մի անգամ էլ հարցրեց.

— Շո՞ւտ կլուսանա։

— Լուսանում է։

— Ոտներս ծածկեցեք մուշտակով...

Դունյաշկան ոչխարենու մուշտակը գցեց նրա ոտներին, կողքերից ուղղեց տաք վերմակը։ Նատալյան հայացքով շնորհակալություն հայտնեց, հետո կանչեց Իլյինիչնային, ասաց.

— Նստեցեք կողքիս, մայրիկ, իսկ դու, Դունյաշկա, դու էլ, Դարյա, մի բոպե դուրս ելեք, ես ուզում եմ միայն մայրիկի հետ մի քիչ խոսել... Գնացի՞ն նրանք,— առանց աչքերը բաց անելու հարցրեց Նատալյան։

— Գնացին։

— Հայրիկը դեռ չի՞ եկել։

— Շուտով կգա։ Դու ավելի վա՞տ ես զգում քեզ, հա՞։

— Ոչ, միևնույն է... Այ թե ինչ էի ուզում ասել... Ես, մայրիկ, շուտով կմեռնեմ... Սիրտս զգում է։ Ինչքա՛ն արյուն գնաց ինձանից, վա-ա՛յ։ Դուք ասեք Դաշկային, որ նա, երբ վառարանը վառի, շատ ջուր դնի... Դուք ինքներդ լողացրեք ինձ, չեմ ուզում, որ ուրիշները...

— Նատալյա, խաչ հանի, զավակս։ Ինչի՞ խոսեցիր մահվան մասին։ Աստված ողորմած է, կլավանաս։

Նատալյան ձեռքի թույլ շարժումով սկեսուրին խնդրեց լռել, ասաց.

— Դուք խոսքս մի՛ կտրեք... Ես արդեն խոսել էլ չեմ կարողանում, ամա ուզում եմ բան ասել... Էլի գլուխս պտույտ է գալի... Ջրի մասին ես ձեզ ասի՞։ Հա՛, ուրեմն ես ուժով եմ... Կապիտոնովնան վաղուց էր արել այս բանը, ճաշին, հենց որ գնացի իր մոտ... Խեղճը ինքն էլ վախեցավ... Օ՛յ, շատ արյուն գնաց ինձանից... Մենակ թե մինչև

առավոտ ապրեմ... Շատ ջուր տաքացրեք... Ուզում եմ մաքուր լինել, երբ մեռնեմ... Մայրիկ, ինձ հագցրեք կանաչ յուբկաս, որ հաշիայով բոլորք ունի... Գրիշան սիրում էր, երբ ես այդ էի հագնում... ու պապլինե կոֆտաս... սնդուկում է, վերևից, աջ անկյունում, շալիս տակ է դրված... Երբ որ ես մեռնեմ, երեխեքին թող տանեն մերոնց մոտ... Դուք կանչեիք մորս, էլի՛, թող հիմի գա... Ես արդեն պետք է մնաս բարով ասեմ... Վերցրեք տակիս շորը։ Բոլորովին թաց է...

Իլյինիչնան Նատալյայի մեջքի տակից բռնելով, քիչ բարձրացրեց նրան, դուրս քաշեց փռոցը, մի կերպ դրեց նորը։ Նատալյան կարողացավ շշնջալ։

— Ինձ դարձրեք... կողքիս վրա,— ու անմիջապես կորցրեց գիտակցությունը։

Կապտավուն լուսաբացը նայեց պատուհաններից։ Դունյաշկան լվաց դույլը, գնաց կովերը կթելու։ Իլյինիչնան բացեց պատուհանը, ու ամառային առավոտվա զվարթացուցիչ, թարմ ու հաճելի զովը ներխուժեց սենյակը, ուր տարածված էր թարմ արյան, այրված նավթի ծանր հոտը։ Քամին բալենու տերևներից ցող — արցունքներ թափեց պատուհանի գոգին. լսվեցին թռչունների վաղորդյան ձայները, կովերի բառաչը, նախրապանի մտրակի զիլ, հատուկենտ շրմփոցները։

Նատալյան ուշքի եկավ, բացեց աչքերը, լեզվի ծայրով լիզեց չոր, արյունաքամ, դեղին շուրթերը, ջուր խնդրեց։ Նա այլևս չէր հարցնում ոչ երեխաների, ոչ էլ մոր մասին։ Ամեն ինչ հեռանում էր նրանից, ըստ երևույթին — ընդմիշտ...

Իլյինիչնան ծածկեց պատուհանը, մոտեցավ մահճակալին։ Որքա՜ն սարսափելի էր փոխվել Նատալյան մեկ գիշերվա ընթացքում։ Մի օր առաջ նա կարծես մատաղ, ծաղկած խնձորենի լիներ. գեղեցիկ էր, առողջ, ուժեղ, իսկ այժմ նրա այտերը Դոնի մերձակա լեռան կավճից էլ սպիտակ էին, քիթը սրվել էր, շուրթերը կորցրել էին առաջվա վառ թարմությունը, ավելի բարակել էին ու կարծես դժվարությամբ էին ծածկում բացված ատամները։ Նատալյայի միայն աչքերն էին պահպանել առաջվա փայլը, բայց արդեն այլ էր նրանց արտահայտությունը։ Ինչ-որ մի նոր, անծանոթ ու վախեցնող բան էր նշմարվում Նատալյայի հայացքում, երբ նա, ենթարկվելով անբացատրելի պահանջին, երբեմնապկի մի քիչ բարձրացնում էր կապտավուն կոպերը ու աչքերով տնտղում սենյակը՝ դրանք մի վայրկյան կանգնեցնելով Իլյինիչնայի վրա...

Արևածագին ժամանեց Պանտելեյ Պրակոֆիևիչը։ Քնած բուժակը, որ հոգնել էր անքուն գիշերներից և տիֆով հիվանդների ու վիրավորների պատճառած անվերջ գլխացավանքից, ճմլկոտվելով իջավ տարանտասից, նստելատեղից վերցրեց փաթեթը, քայլեց դեպի տունը։ Մուտքի սանդուղքի վրա հանեց բրեզենտե պլաշչը, ու բաղրիքի վրայից կռանալով, երկար սապնեց մաղոտ ձեռքերը, աչքի տակով մի քանի անգամ նայեց Դունյաշկային, որ սափորից ջուր էր լցնում նրա ձեռքերին, ու նույնիսկ մի-երկու անգամ աչքով արեց նրան։ Հետո մտավ օթախ ու մի տասը րոպե մնաց Նատալյայի մոտ՝ այնտեղից նախապես դուրս անելով բոլորին։

Պանտելեյ Պրակոֆիևիչը և Իլյինիչնան նստել էին խոհանոցում։

— Է՛, ո՞նց է,— շշնջալով հարցրեց ծերունին՝ հենց որ նրանք դուրս եկան օթախից։

— Վատ է...

— Ինքնագլո՞ւխ է այդպես արել։

— Ինքը, հա...— Իլյինիչնան խուսափեց ուղղակի պատասխանից։

— Տաք ջո՛ւր, շո՛ւտ,— հրամայեց բուժակը՝ դռնից դուրս հանելով փրշոտ գլուխը։

Մինչդեռ ջուր էին եռացնում, բուժակը դուրս եկավ խոհանոցից։ Ծերունու համար հարցին նա պատասխանեց ձեռքի անհույս թափահարումով։

— Մինչև ճաշ կմահանա։ Արյան սարսափելի կորուստ։ Ոչինչ չի կարելի անել։ Գրիգորի Պանտելեևիչին չե՞ք հաղորդել։

Պանտելեյ Պրակոֆիևիչը առանց պատասխանելու արագ, կաղ-կաղ դուրս եկավ։ Դարյան տեսավ, թե ինչպես ծերունին անցնելով շարդախի տակ դրված հնձիչի ետևը ու գլուխը դնելով նախորդ տարվա տարթերի դեզին, հոնգուր-հոնգուր լաց էր լինում...

Բուժակը մնաց էլի մի կես ժամ, նստեց մուտքի սանդուղքին, մի քիչ ննջեց ծագած արևի ճառագայթների տակ, հետո, երբ ինքնաեռը եռաց, նա կրկին մտավ սենյակ, Նատալյային կամֆարա սրսկեց, դուրս եկավ ու կաթ խնդրեց։ Դժվարությամբ հաղթահարելով հորանջը, երկու բաժակ կաթ խմեց, ասաց.

— Հիմա դուք տարեք ինձ։ Ստանիցայում հիվանդներ ու վիրավորներ ունեմ, այստեղ լինելս էլ ավելորդ է։ Ամեն ինչ իզուր է։ Ես սրտանց ծառայություն կմատուցեի Գրիգորի Պանտելեևիչին, բայց աղնվորեն ասում եմ՝ օգնել չեմ կարող։ Մենք մեր գործը գիտենք,— մենք միայն հիվանդներին ենք բուժում, իսկ մեռելներին հարություն տալ դեռ չենք սովորել։ Իսկ ձեր հարսի գլխին այնպիսի օյին են խաղացել, որ նրա մեջ կյանքի նշույլ էլ չի մնացել... Արգանդը պատռված է, ուղղակի սաղ տեղ չկա։ Ինչպես երևում է, պառավը երկաթե չանգալով է գործ տեսել։ Մեր տգիտությունից է այդ բոլորը, ի՞նչ կարող ես անել։

Պանտելեյ Պրակոֆևիչը խոտ գցեց տարանտասի վրա, ասաց Դարյային.

— Դու կտանես։ Զմոռանաս ձին ջրել, երբ իջնես Դոնի ափը։

Նա փող առաջարկեց բուժակին, բայց վերջինս վճռականապես հրաժարվեց, կշտամբեց ծերունուն.

— Ամոթ է, Պանտելեյ Պրակոֆևիչ, դրա մասին ի՞նչ խոսք կարող է լինել։ Մոտիկ մարդիկ ենք, իսկ դու փող ես տալիս։ Ո՛չ, ոչ, իսկ մի էլ մոտենա։ Ինչով շնորհակալ լինե՞ս։ Դրա մասին ոչ մի խոսք։ Եթե ես նրան, ձեր հարսին ոտքի հանեի, այդ ուրիշ բան։

Առավոտյան ժամը մոտ վեցին Նատալյան իրեն բավական լավ զգաց։ Նա լվացվելու ջուր խնդրեց, մազերը սանրեց հայելու առաջ, որ բռնել էր Դունյաշկան, ու մի տեսակ նոր փայլ առած աչքերով հարազատներին նայելով, դժվարությամբ ժպտաց.

— Հիմա ես կլավանամ։ Վախենում էի... Կարծում էի վերջս եկել է... Այդ ի՞նչ երկար են քնել երեխեքը։ Դունյաշկա, գնա տես, զարթնե՞լ են։

Գրիպաշկայի հետ եկավ Լուկինիչնան։ Նայելով իր աղջկան, պառավը լաց եղավ, բայց Նատալյան հուզված ու արագ ասաց.

— Ինչի՞ եք լալիս, մայրիկ։ Ես այնքան էլ վատ չեմ... Հո ինձ թաղելու չե՞ք եկել։ Դե լավ, էլի, ինչի՞ եք լալիս։

Գրիպաշկան աննկատելիորեն բութեց մորը, և սա գլխի ընկնելով, արագ սրբեց աչքերը, հանգիստ ասաց.

— Բան չկա, աղջիկս, ես հենց այնպես, հիմարությունից արցունք թափեցի։ Սիրտս ճմլվեց, երբ նայեցի քեզ... Դու շատ, շատ ես փոխվել...

Նատալյայի այտերը մի քիչ շիկնեցին, երբ նա լսեց Միշատկայի ձայնը և Պոլյուշկայի ծիծաղը։

— Կանչեցեք նրանց այստեղ, շուտ կանչեցեք...— խնդրեց նա։— Թող նրանք հետո հագնվեն...

Պոլյուշկան առաջինը ներս մտավ, շեմքի վրա կանգ առավ, թաթիկով տրորեց քնաթաթախ աչքերը։

— Հիվանդացել է մայրիկդ...— ժպտալով ասաց Նատալյան։— Մոտեցիր ինձ, պուպոշիկս։

Պոլյուշկան զարմանքով նայեց նստարանների վրա ծանր ու մեծ նստած հասակավորներին ու, մոտենալով մորը, նեղացած հարցրեց.

— Ինչո՞ւ դու ինձ չզարթեցրիր, և սրանք ինչո՞ւ են հավաքվել։

— Սրանք եկել են ինձ տեսնելու... Իսկ ես ինչո՞ւ պիտի քեզ զարթեցնեի։

— Ես քեզ ջուր կբերեի, կնստեի կողքիդ...

— Դե, գնա, լվացվի, սանրվի, աղոթի աստծուն, հետո կգաս, կնստես ինձ մոտ։

— Իսկ դու վեր կկենա՞ս նախաճաշելու։

— Չգիտեմ։ Երևի ոչ։

— Ուրեմն ես քեզ համար կբերեմ այստեղ, լա՞վ, մայրիկ ջան։

— Իսկական հերն է, միայն սիրտը նրա սրտի պես չի, փափուկ է...— Թույլ ժպիտով ասաց Նատալյան, գլուխը ետ տալով ու վերմակը քաշելով ոտներին։

Մի ժամից հետո Նատալյան վատացավ։ Նա մատով կանչեց երեխաներին, գրկեց նրանց, խաչակնքեց, համբուրեց ու մորը խնդրեց, որ սա նրանց տանի իր մոտ։ Լուկի-

Նիշնան Գրիպաշկային հանձնարարեց տանել երեխաներին, իսկ ինքը մնաց դստեր մոտ։

Նատալյան փակեց աչքերը, ասես թեթև քնի մեջ մրմնջաց.

— Ես նրան չեմ էլ տեսնի...— Հետո, կարծես մի բան հիշելով, կտրուկ շարժմամբ մի քիչ բարձրացավ մահճակալից։— Վերադարձրեք Միշատկային։

Լացակումած Գրիպաշկան տղային ներս արեց օթախը, ինքը հաղիվ լսելի հեկեկալով, մնաց խոհանոցում։

Նոթոտ, մելեխովյան խոժոռ նայվածքով Միշատկան անհամարձակ մոտեցավ մահճակալին։ Մոր դեմքի մեծ փոփոխությունը նրան համարյա անծանոթ, օտար էր դարձրել Միշատկայի համար։ Նատալյան գրկեց որդուն, զգաց, թե ինչպես արագ է բաբախում Միշատկայի փոքրիկ սիրտը, որ կարծես բռնված ճնճղուկի սիրտ լիներ։

— Եկ, որդյակս, էլի՛, էլի՛ մոտիկ,— խնդրեց Նատալյան։

Նա ինչ-որ շշնջաց Միշատկայի ականջին, հետո ետ մղեց նրան, զննողաբար նայեց աչքերին, սեղմեց դողդոջ շուրթերը ու ողորմելի, տանջալից, թույլ ժպիտը դեմքին հարցրեց.

— Չե՞ս մոռանա, կասե՞ս։

— Չեմ մոռանա...— Միշատկան վերցրեց մոր ցուցամատը, սեղմեց իր փոքրիկ, տաք բռունցքով, մի բոպե պահեց ու բաց թողեց։ Մահճակալից նա հեռացավ հայտնի չէ ինչու ոտների մատների վրա քայլելով, ձեռքերի տարածմամբ պահպանելով հավասարակշռությունը...

Նատալյան նրան հայացքով ուղեկցեց մինչև դուռը և լուռ շուռ եկավ դեպի պատը։

Կեսօրին նա մեռավ։

XVII

Գրիգորին շատ բան վերհիշեց ու կշռադատեց ռազմաճակատից մինչև հայրենի խուտորը անցած երկու օրվա ճանապարհին... Նա իր հետ վերցրել էր Պրոխոր Զիկովին, որպեսզի տափաստանում մենակ չլիներ իր վշտով, Նատալյային վերաբերող աննահանջ մտքերով։ Հենց որ մեկնեցին հարյուրյակի գրված վայրից, Գրիգորին խոսակցություն բացեց պատերազմի մասին, վերհիշեց, թե ինչպես էր ծառայում 12-րդ գնդում, ավստրիական ռազմաճակատում, ինչպես էին գնում Ռումինիա, ինչպես էին կռվում գերմանացիների դեմ։ Նա խոսում էր անդադար, վերհիշում ամեն տեսակ զվարճալի պատմությունները, որ պատահել էին նույն գնդում ծառայած մարդկանց հետ, ու ծիծաղում էր...

Պարզամիտ Պրոխորը սկզբում տարակուսանքով, աչքի տակով էր նայում Գրիգորիին՝ զարմանալով նրա շատախոսության վրա, հետո էլ այնուամենայնիվ գլխի ընկավ, որ Գրիգորին ուզում է վաղուց անցած օրերի վերհուշերով իրենից վանել ծանր մտքերը, ու սկսեց աշխուժացնել խոսակցությունը՝ գուցեև նույնիսկ ավելորդ ջանադրությամբ։ Ամենայն մանրամասնությամբ պատմելով, թե ինչպես մի ժամանակ պառկած էր Ջեռնիգովի հիվանդանոցում, Պրոխորը պատահմամբ նայեց Գրիգորիին, տեսավ, թե ինչպես նրա թուխ այտերի վրայով առատորեն հոսում են արցունքները... Պրոխորը համեստության համար մի քանի սաժեն ետ մնաց, կես ժամ ետևից էր գնում, հետո էլ նորից առաջացավ, փորձեց խոսել ինչ-որ կողմնակի, դատարկ բանի մասին, բայց Գրիգորին խոսակցության չբռնվեց։ Այսպես էլ նրանք վարգում էին մինչև կեսօր, լուռ, իրար կողքի, ասպանդակ ասպանդակի։

Գրիգորին սարսափելի շտապում էր։ Ջնայելով շոգին, նա իր ձին քշում էր մերթ արագ վարգով, մերթ քառատրոփով, ու միայն հազվադեպ էր քայլով ընթանում։ Միայն կեսօրին, երբ արեգակի ուղղահայաց ճառագայթները սկսեցին կիզել անտանելի կերպով, Գրիգորին կանգ առավ մի ձորակում, հանեց ձիու թամքը, ձին թողեց արածելու, ինքն էլ երեսնիվայր պառկեց ստվերում ու այդպես այնքան մնաց, մինչև որ շոգն անցավ։ Մի անգամ նրանք ձիերին վարսակ կերցրին, բայց Գրիգորին խախտեց կերակրման համար սահմանված ժամանակը։ Նույնիսկ նրանց ձիերը, որոնք սովոր էին մեծ տարածություններ անցնելու, առաջին օրվա վերջում խիստ նիհարեցին, այլևս չէին ընթանում այնպես անխոնջ ու կայտառորեն, ինչպես սկզբում։ «Այսպիսով դժվար չէ տուրը տալ ձիերը։ Ո՞վ է այսպես ձի քշում։ Սրա, գրողի տարածի համար ի՞նչ կա որ, իրեն ձին կսատկացնի և ուզած մոմենտ

տին մի ուրիշ ձի կվերցնի, բա ե՞ս որտեղից ճարեմ։ Սատանան բանը այնտեղ կհասցնի, որ ստիպված կլինենք մինչև Տատարսկի մնացած երկար ճամփեն անցնել ոտով կամ բնակիչներից վերցրած ձիերով»,— ջղայնացած մտածում էր Պրոխորը։

Հետևյալ օրվա առավոտյան Ֆեդոսեևսկայա ստանիցայի խուտորներից մեկի մոտ նա այլևս չհամբերեց, դիմելով Գրիգորիին, ասաց.

— Դու ոնց որ թե կյանքումդ մալատեր չես եղել... Ո՞վ է այսպես գիշեր-ցերեկ թոնում առանց հանգստի։ Մտիկ արա, թե ձիերը ոնց են լղարել։ Արի գոնե իրիկնամտին սրանց կարգին կեր տանք։

— Քշիր, ետ մի մնա,— մտացրիվ պատասխանեց Գրիգորին։

— Ես քո ետևից չեմ հասնում, իմ ձին հալից ընկել է։ Կարելի է հանգստանա՞նք, հը՞։

Գրիգորին լուռ էր։ Կես ժամ վարգում էին առանց մի բառ ասելու, հետո Պրոխորը վճռականապես հայտարարեց.

— Ախր եկ թողնենք, որ սրանք գոնե մի քիչ շունչ քաշեն, է՛։ Ես էլ չեմ կարող գնալ, լսո՞ւմ ես։

— Քշի, քշի։

— Մինչև ե՞րբ, է՞, մինչև որ սմբակները ջարդվե՞ն։

— Շատ մի խոսի։

— Ախր խիղճ արա, է՛, Գրիգորի Պանտելեևիչ։ Ես չեմ ուզում ձիս սատկացնել, իսկ բանը այդտեղ է հասնում...

— Դեհ, ջհաննամը, կանգ առ։ Տես թե խոտը որտեղ է լավ։

Հեռագիրը, որ Խոպերի օկրուգում ստանիցայից ստանիցա էր ուղարկվում Գրիգորիին հանձնելու համար, շատ ուշ ստացվեց... Գրիգորին տուն հասավ Նատալյայի թաղման երրորդ օրը։ Բակի դռան մոտ նա իջավ ձիուց, քայլելիս գրկեց տնից դուրս թռած, հեկեկացող Դունյաշկային, հոնքերը կիտելով, խնդրեց.

— Ձին մի լավ ման ածա, հանգստացրու... էլ ի՞նչ ես լալիս,— ու դարձավ դեպի Պրոխորը.— գնա տուն։ Որ հարկավոր լինես, կասեմ։

Իլյինիչնան Միշատկայի ու Պոլյուշկայի ձեռքերից բռնած, դուրս եկավ որդուն դիմավորելու։

Գրիգորին խոտեց երեխաներին, դողդոջ ձայնով ասաց.

— Միայն թե լաց չլինել, միայն թե արցունքներ չլինեն, ջանիկներս։ Ուրեմն որբացաք, հա՞։ Դե-դե՛... Օ-օ-օ՛... Մայրիկը թողեց մեզ, էլի...

Իսկ ինքը մեծագույն ջանքով զսպելով հեկեկանքը, մտավ տուն, բարևեց հորը։

— Չկարացինք պահպանել...— ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը և իսկույն անցավ հաշտը։

Իլյինիչնան Գրիգորիին տարավ օթախը, երկար պատմեց Նատալյայի մասին։ Պառավը չէր ուզում ամեն ինչ ասել, բայց Գրիգորին հարցրեց.

— Ինչո՞ւ նա չուզեց երեխա բերել, դու գիտե՞ս։

— Գիտեմ։

— Է՞։

— Նա դրանից առաջ գնացել էր քո սիրուհու մոտ... Ակսինյան ամեն բան պատմել էր նրան...

— Ըհը՛մ... Այդպե՞ս,— Գրիգորին թունդ կարմրատակեց խոնարհեց աչքերը։

Նա սենյակից դուրս եկավ ծերացած ու գունատ. անխոս շարժելով կապտավուն, դողդոջ շրթունքները, նստեց սեղանի մոտ, երեխաներին նստեցրեց ծնկներին ու երկար փայփայեց նրանց, հետո փամփշտանոցից հանեց փոշուց գորշացած մի կտոր շաքար, բռի վրա ջարդեց դանակով, ժպտաց մեղավորի պես.

— Ահա և իմ ամբողջ նվերը ձեզ... Ա՛յ թե ինչ տեսակ հեր ունեք... Դե, վազ տվեք բակը, կանչեցեք պապին։

— Գերեզմանը տեսնելու կերթա՞ս,— հարցրեց Իլյինիչնան։

— Հետո կերթամ... Մեռելները չեն նեղանում... Միշատկան, Պոլյուշկան ո՞նց էին, ոչի՞նչ։

— Առաջին օրը շատ էին մղկտում, մանավանդ Պոլյուշկան... Հիմի, երբ հանդարտվել են, մեզ մոտ նրան չեն էլ մտաբերում, իսկ այս գիշեր լսեցի, որ Միշատկան կամաց լաց էր լինում... Գլուխը դրել էր բարձի տակ, որ ձենը չլսվի... Ես մոտեցա, հարցնում եմ. «Ի՞նչ է, բալիկս, գուցե ինձ

հետ կպառկես»։ Նա էլ ասում է. «Բան չկա, տատի ջան, երևի երազիս մեջ էի ձեն հանում...» Խոսիր հետները, խղճա նրանց... Երեկ առավոտը լսում եմ, հաշտում խոսում են իրար հետ։ Պոլյուշկան ասում է. «Մայրիկը կգա մեզ մոտ։ Մայրիկը ջահել է, իսկ ջահելները հո բոլորովին չեն մեռնում»։ Հլա դեռ անխելք են, իսկ սրտերը ցավում են ոնց որ մեծերինը... Դու սոված կլինես, չէ՞, բա ինչի չես ասում, հիմի ես քեզ ուտելու բան կբերեմ։

Գրիգորին մտավ սենյակը։ Կարծես առաջին անգամն էր ընկել այստեղ, նա ուշադրությամբ դիտեց պատերը, հայացքը սևեռեց հարդարած, թափ տված բարձերով մահճակալին։ Դրա վրա էր մեռել Նատալյան, այնտեղից վերջին անգամ հնչել էր նրա ձայնը... Գրիգորին պատկերացրեց, թե Նատալյան ինչպես էր հրաժեշտ տվել երեխաներին, ինչպես էր նրանց համբուրել և գուցե խաչակնքել, ու վերստին, ինչպես այն ժամանակ, երբ կարդում էր նրա մահվան հեռագիրը, զգաց սրտի սուր, մրմուռ ցավը, ականջների խուլ դժժոցը։

Տանը յուրաքանչյուր մանրուք Նատալյային էր հիշեցնում։ Նրա վերաբերմամբ հուշերը անսպառ ու տանջալից էին։ Գրիգորին չգիտես ինչու մտավ բոլոր սենյակները ու համարյա վազելով դուրս ելավ տանից։ Սրտի ցավը գնալով ուժեղանում էր։ Ճակատի վրա դուրս տվեց քրտինքը։ Ձեռքը երկչոտությամբ սեղմելով կրծքի ձախ կողմին, նա իջավ մուտքի սանդուղքից, մտածեց. «Երևում է, որ բանս բուրդ է, հա՛-ա...»

Դունյաշկան բակում ման էր ածում ձին։ Ամբարի մոտ ձին, դիմադրելով սանձին, կանգ առավ, հոտոտեց գետինը. ձգելով վիզը ու բարձրացնելով վերին շրթունքը, բացեց ատամների դեղին սալերը, հետո փնչաց ու սկսեց անհարմար ծալել առջևի ոտները։ Դունյաշկան քաշեց սանձը, բայց ձին չհնազանդվեց, փորձեց պառկել։

— Չթողնե՛ս պառկի,— ախոռից բղավեց Պանտելեյ Պրակոֆիևիչը։— Չե՞ս տեսնում, թամբած է։ Ինչո՞ւ թամքը չես հանել, դղում գլուխ։

Դանդաղաքայլ, դեռևս ունկնդրելով այն ամենին, ինչ որ կատարվում էր իր կրծքի տակ, Գրիգորին մոտեցավ ձիուն, հանեց թամքը, բռնազբոսիկ կերպով ժպտաց Դունյաշկային.

— Հերդ դալմաղա՞լ է անում։

— Ինչպես և միշտ,— նույնպես ժպտաց Դունյաշկան։

— Մի քիչ էլ ման ածա, քուրս։

— Սա արդեն բեզարեց, լավ, ման կածեմ։

— Թող մի քիչ պառկի, մի՛ արգելի։

— Է-է, աղբերս... Դա՞րդ ես անում, հա՞։

— Բա ի՞նչ էիր կարծում,— շնչահեղձ լինելով պատասխանեց Գրիգորին։

Կարեկցության զգացումից դրդված՝ Դունյաշկան համբուրեց նրա ուսը, ու ինչ-որ պատճառով արտասվելու չափ շփոթված, արագ շուռ եկավ, ձին տարավ դեպի ախոռը։

Գրիգորին գնաց հոր մոտ։ Սա ախոռից ջանադրությամբ դուրս էր կրում թրիքը։

— Ձիուդ համար եմ պատրաստում ախոռը։

— Ինչո՞ւ չասիր, ես ինքս կմաքրեի։

— Բա՛ն ասիր, էլի՛։ Ես հո տկար չե՞մ։ Ես չախմախի հրացան եմ, տղաս։ Ինձ մաշվել չկա։ Հլա դեռ թռնում եմ քիչ-քիչ։ Միտք ունեմ էգուց գնալ գարին քաղելու։ Դու ինչքա՞ն ժամանակով ես եկել։

— Մի ամսով։

— Ա՛յ, դա լավ է։ Գնա՞նք արտերը։ Աշխատանքը կթեթևացնի վիշտդ...

— Արդեն ես էլ եմ մտածել դրա մասին։

Մերունին վար դրեց եղանը, թևքով սրբեց դեմքի քրտինքը, ձայնին խորհրդավորություն տալով ասաց.

— Գնանք տուն, կճաշես։ Դրա, այդ դարդի ձեռքից պրծնել չկա... Դրանից ոչ կփախնես, ոչ էլ կթաքնվես։ Այդպես է, էլի...

Իլյինիշնան սեղան գցեց, մաքուր երեսսրբիչ մատուցեց։ Ու էլի Գրիգորին մտածեց՝ «Պատահում էր, որ Նատալյան հյուրասիրում էր...» Հուզմունքը թաքցնելու համար նա սկսեց արագ-արագ ուտել։ Նա երախտագիտության զգացումով նայեց հորը, երբ սա մառանից խոտով բերանը ծածկած մի սափոր տնական օղի բերեց։

— Խմենք ողորմածիկ հարսիս հիշատակին, լույս դառնա նրա հոգին,— վճռականորեն ասաց Պանտելեյ Պրակոֆիևիչը։

խմեցին մի-մի բաժակ։ Ծերունին անմիջապես էլի լցրեց, հոգոց հանեց.

— Մի տարվա մեջ մեր ընտանիքից գնացին երկուսը... Մահը սեր է գցել մեր տան վրա։

— Եկ չխոսենք դրա մասին, ապի,— խնդրեց Գրիգորին։

Նա միանգամից ըմպեց երկրորդ բաժակը, երկար ծամեց չորացած ձկան կտորը, շարունակ սպասում էր, թե օղին երբ է խփելու գլխին, մոռացնել տալու տանջալից մտքերը։

— Այս տարի գարին լավ է։ Մեր ցանքերն էլ ուրիշների ցանքերից շատ ավելի լավ են,— պարծենկոտությամբ ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը։ Եվ այդ պարծենկոտության մեջ, ծերունու խոսելաձևի մեջ Գրիգորին մի ինչ-որ շինծու, միտումնավոր բան նշմարեց։

— Բա ցորե՞նը։

— Ցորե՞նը։ Մի քիչ վնասված է, ամա էլի ոչինչ, մի երեսունհինգ-քառասուն փութ կլինի։ Ուրիշների արտերումը գարնովկան շատ լավ է դուրս եկել, իսկ մենք թարսի պես չկարացինք ցանել։ Ամա ես շատ չեմ ափսոսում։ Այս տուրուդմբոցի ժամանակ ի՞նչ պիտի անես հացը։ Պարամոնովի աղացը տանել չես կարող, ոչ էլ կարող ես ամբարներումը պահել։ Ռազմաճակատը մոտեցավ թե չէ, ընկերները ինչ կա չկա կսրբեն ու կտանեն։ Ամա դու չմտածես, հա՛-ա, մեր հացը առանց այս տարվա բերքի էլ մի երկու տարի հերիք է։ Է՛հ, փառք աստծո, ամբարներս էլ լիքն են, ուրիշ տեղ էլ կա...— ծերունին խորամանկաբար աչքով արավ, ասաց.— Հարցրու Դաշկային, թե ինչքան հաց ենք թաղել սև օրվա համար։ Քո բոյի չափ խորությամբ և մեկ ու կես սաժեն լայնությամբ մի հոր լիքը լցրել ենք։ Այս անիծված կյանքը մեզ մի քիչ աղքատացրեց, թե չէ մենք էլ հո ունեինք...— Ծերունին հարբած ծիծաղեց իր կատակի վրա, բայց մի քիչ հետո ծանր ու մեծ թիմարեց մորուքը և արդեն բանիմացությամբ ու լուրջ ասաց.— Կարելի է դու զոքանչիդ մասին ես մտածում, ես այ թե ինչ կասեմ քեզ. ես նրան չեմ մոռացել և օգնել եմ։ Մի անգամ նա հլա բերանը չբացած՝ ես մեկել օրը առանց չափելու մի սայլ հաց վերցրի ու տարա նրան։ Ողորմած հոգի Նատալյան շատ գոհ եղավ, բուռ-բուռ արտասուք թափեց, երբ իմացավ դրա մասին... Է՛հ, որդի, եկ խմենք երրորդ բաժակը, հա՞։ Ինձ համար մի ուրախություն է մնացել,— այսինքն դո՛ւ։

— Խմե՛նք, էլի,— համաձայնվեց Գրիգորին՝ մոտ տանելով բաժակը։

Այդ ժամանակ Միշատկան կողքի քայլելով, անհամարձակ մոտեցավ սեղանին։ Նա մագլցելով բարձրացավ հոր ծնկների վրա ու ձախ ձեռքով անհարմար գրկելով նրա պարանոցը, պինդ համբուրեց նրա շրթունքները։

— Այս ի՞նչ բան է, տղա ջան,— հուզված հարցրեց Գրիգորին, նայելով մանկական արցունքված աչքերին, աշխատելով, որ շնչելիս արաղի գարշ հոտը չփչի որդու դեմքին։

Միշատկան ցածր ձայնով պատասխանեց.

— Մայրիկս, երբ որ պառկած էր սենյակում... Երբ նա դեռ կենդանի էր, ինձ կանչեց իրեն մոտ և պատվիրեց այսպես ասել քեզ. «Երբ որ հայրիկդ կգա, իմ տեղը համբուրի նրան ու ասա, որ նա խղճա ձեզ»։ Նա էլի ուրիշ բան ասավ, բայց ես մոռացա...

Գրիգորին վար դրեց բաժակը, շուռ եկավ պատուհանի կողմը։ Սենյակում երկար ժամանակ ծանր լռություն էր տիրում։

— Խմե՞նք,— կամացուկ հարցրեց Պանտելեյ Պրակոֆեվիչը։

— Չեմ ուզում։— Գրիգորին ծնկներից իջեցրեց որդուն, վեր կացավ, արագ դուրս ելավ։

— Կաց, որդիս, բա մի՞սը։ Հլա դեռ եփած հավ կա, բիշի կա։— Իլյինիչնան նետվեց դեպի վառարանը, բայց Գրիգորին արդեն իր ետևից ծածկել էր դուռը։

Աննպատակ թափառելով բակում, նա զննեց գոմը, ախոռը. նայեց ձիուն, մտածեց. «Պետք է լողացնել դրան», հետո մտավ շարդախի տակ։ Հնձի համար պատրաստված մեքենայի մոտ տեսավ սոճու փայտի ծպեղներ, տաշեղներ, որոնք թափթփված էին գետնին, ու ծուռ կտրած մի տախտակ։ «Հերս Նատալյայի համար դագաղ էր շինել»,— որոշեց Գրիգորին։ Ու շտապելով քայլեց դեպի տունը։

Ձիջելով որդու թախանձանքներին, Պանտելեյ Պրակոֆևիչը շուտով վեր կացավ, ձիերը լծեց հնձիչին, փոքրիկ տակառով ջուր վերցրեց. երեկոյան նա ու Գրիգորին մեկնեցին դաշտ։

XVIII

Գրիգորին տանջվում էր ոչ միայն այն պատճառով, որ յուրովի էր սիրում Նատալյային ու ընտելացել էր նրան վեց տարի միասին ապրելիս, այլև այն պատճառով, որ իրեն մեղավոր էր զգում նրա մահվան համար։ Եթե Նատալյան կենդանի օրով իրագործեր իր սպառնալիքը,— վերցներ երեխաներին ու գնար մոր մոտ ապրելու, եթե նա, անհավատարիմ ամուսնու հանդեպ ատելությամբ լցված ու չհաշտված, մեռներ այնտեղ, Գրիգորին թերևս այդպիսի թափով չզգար կորբստի ծանրությունը, և անշուշտ զղջումը այդչափ կատաղորեն չէր հոշոտի նրան։ Բայց նա Իլյինիչնայի ասածներից գիտեր, որ Նատալյան ամեն ինչ ներել էր իրեն, որ նա սիրում էր իրեն ու մտաբերում մինչև վերջին րոպեն։ Դա ավելացնում էր Գրիգորիի տանջանքները, անլռելի կշտամբանքով ծանրացնում նրա խիղճը, ստիպում էր նոր եղանակով իմաստավորել անցյալը և իր վարմունքը անցյալում...

Կար ժամանակ, երբ Գրիգորին, բացի սառն անտարբերությունից և նույնիսկ թշնամանքից, ոչինչ չէր տածում դեպի իր կինը, բայց վերջին տարիներում նա սկսել էր այլ կերպ վերաբերվել Նատալյային, ու վերջինիս նկատմամբ նրա վերաբերմունքի փոփոխման հիմնական պատճառը երեխաներն էին։

Սկզբում Գրիգորին նրանց նկատմամբ չէր ապրում հայրական այն խոր զգացմունքը, որ նրա մեջ առաջացավ վերջին ժամանակներում։ Ռազմաճակատից կարճ ժամանակով տուն գալով, նա երեխաներին խնամում ու փայփայում էր մի տեսակ պարտականությունից դրդված և մորը հաճույք պատճառելու համար, իսկ ինքը ոչ միայն որևէ պահանջ չէր զգում դրա համար, այլև չէր կարողանում առանց կասկածոտ զարմանքի նայել Նատալյային, վերջինիս մայրական զգացմունքների բուռն արտահայտությանը։ Նա չէր հասկանում, թե

ինչպես կարելի է այդպիսի անձնուրացությամբ սիրել այդ փոքրիկ, լալկան արարածներին, ու հաճախ գիշերները վրդովմունքով ու հեգնանքով ասում էր կնոջը, երբ սա դեռ կրծքով էր կերակրում երեխաներին.—«Ի՞նչ ես վեր թռչում կատաղածի նման։ Ձենը դուրս եկավ թե չէ, դու արդեն ոտքի վրա ես։ Թող տղան, լաց լինի, լալով պիտի մեծանա»։ Երեխաները ոչ պակաս անտարբերությամբ էին վերաբերվում նրան, բայց որքան մեծանում էին, այնքան կապվում էին հոր հետ։ Մանկական սերը Գրիգորիի մեջ էլ սիրո զգացմունք վառեց, և այդ զգացմունքը որպես մի կայծ, անցավ Նատալյային։

Ակսինյայի հետ կապը խզելուց հետո Գրիգորին երբեք լրջորեն չէր մտածել կնոջից բաժանվելու մասին. նույնիսկ կրկին միանալով Ակսինյայի հետ, նա երբեք չէր մտածում, որ վերջինս որևէ կերպ փոխարիներ իր երեխաների մորը։ Գրիգորին դեմ չէր նրանց երկուսի հետ էլ ապրել, յուրաքանչյուրին սիրել տարբեր սիրով, բայց երբ կորցրեց կնոջը, հանկարծ Ակսինյայի նկատմամբ էլ զգաց մի ինչ-որ խորթություն, հետո՝ խուլ ցասում այն պատճառով, որ Ակսինյան մատնել էր իրենց հարաբերությունները ու դրանով էլ դեպի մահ մղել Նատալյային։

Որքան էլ ջանք էր թափում Գրիգորին, գնալով դաշտ, մոռանալ իր վիշտը, այնուամենայնիվ մտքում անխուսափելիորեն անդրադառնում էր դրան։ Նա ինքն իրեն հյուծում էր աշխատանքով, ժամերով չէր իջնում հնձիչ մեքենայից, բայց և այնպես հիշում էր Նատալյային. հիշողությունը համառորեն վերականգնում էր վաղուց անցածը, միասին ապրած կյանքի այլևայլ, հաճախ աննշան միջադեպերը, խոսակցությունները։ Բավական էր մի րոպե սանձազերծ անել համառ հիշողությունը, ու նրա աչքերի առաջ կանգնում էր կենդանի, ժպտացող Նատալյան։ Գրիգորին վերհիշում էր նրա կերպարանքը, քայլվածքը, մազերն ուղղելու շարժումը, նրա ժպիտը, ձայնի ելևէջները...

Երրորդ օրը սկսեցին հնձել գարին։ Կեսօրին, երբ Պանտելեյ Պրակոֆևիչը կանգնեցրեց ձիերը, Գրիգորին իջավ հնձիչի ետին պատվանդանից, կարճ եղանը դրեց թառակին, ասաց.

— Ուզում եմ մի րոպե տուն գնալ, հայրիկ։

— Ինչի՞ համար։

— Կարոտել եմ երեխաներին...

— Ի՞նչ կա որ, գնա,— սիրով համաձայնվեց ծերունին։— Իսկ մենք այդ ժամանակ դեզեր կդնենք։

Գրիգորին հնձիչից իսկույն արձակեց իր ձին, նստեց ու դեղին, կոշտ խողանի վրայով ձին քայլքով քշեց դեպի ճանապարհը։ «Ասա նրան, որ խղճա ձեզ»,— հնչում էր Նատալյայի ձայնը նրա ականջներում։ Գրիգորին փակում էր աչքերը, ձեռքից բաց թողնում սանձը, և հուշերի մեջ խորասուզված, թույլ էր տալիս, որ ձին ընթանա ճանապարհազուրկ տեղերով։

Թունդ կապույտ երկնքում գրեթե անշարժ կանգնած էին քամու ցրիվ տված նոսր ամպերը։ Խոզանի վրա շորորալով թափառում էին ագռավները։ Դրանք ընտանիքներով նստոտել էին դեզերի վրա. պառավ ագռավները կտուցներով կերակրում էին մատղաշ, նոր փետրավորված ու թևերը դեռ թույլ շարժող ձագերին։ Հնձած դեսյատիններ վրա անլռելի հնչում էր ագռավների կռնչոցը։

Գրիգորիի ձին գնում էր ճանապարհի կողքից, քայլելիս երբեմն պոկում էր առվույտի մի ճյուղ, ծամում էր այն՝ չխչխկացնելով սանձի բերանոցը։ Մի երկու անգամ նա կանգ էր առնում, վրնջում էր՝ հեռվում ձիեր տեսնելով, ու այդ ժամանակ Գրիգորին աչքերը բանալով՝ խթանում էր նրան, չտեսնող հայացքով նայում տափաստանին, փոշոտ ճանապարհին, դեղին, ցրիվ դեզերին, հասունացող կորեկի կանաչավուն-թուխ արտերին։

Հենց որ Գրիգորին տուն հասավ, եկավ Խրիստոնյան, որ մոայլ տեսք ուներ, ու չնայելով շոգին, հագել էր անգլիական մահուդե ֆրենչ ու հեծելազորային լայն շալվար։ Նա եկավ հացենու մի ահագին, նոր տաշտշած մահակին հենվելով, բարևեց։

— Եկա այցելության։ Լսել էի ձեր դարդի մասին։ Ուրեմն թաղեցիք Նատալյա Միրոնովնային, հա՞։

— Դու ի՞նչպես ես եկել ռազմաճակատից,— հարցրեց Գրիգորին այնպես ձևացնելով, որպես թե չի լսել հարցը, հետաքրքրությամբ զննելով Խրիստոնյայի անճոռնի, մի փոքր կորացած կերպարանքը։

— Վիրավորվելուցս հետո արձակուրդ տվին։ Միանգամից երկու գնդակ էր կպել փորիս։ Մինչև հիմի էլ, ուրեմս, այդ անիծվածները խրված-նստած են աղիքներիս կողքին։ Դրա համար էլ դագանակով եմ ման գալի, տեսնո՞ւմ ես։

— Ո՞րտեղ են խփել քեզ։

— Բալաշովի մոտ։

— Վերցրի՞ն Բալաշովը։ Բա դու ո՞նց վիրավորվեցիր։

— Գրոհ էինք տալի։ Հա՛, ուրեմս, Բալաշովն էլ վերցրին, Պովորինոն էլ։ Ե՛ս վերցրի։

— Դե պատմիր տեսնենք ում հետ էիր, որ զորամասում, մեր խուտորից ով կար քեզ հետ։ Նստիր, ահա քեզ թութուն։

Գրիգորին ուրախացավ, որ նոր մարդ է եկել, որ հնարավոր է խոսել ինչ-որ կողմնակի բաների մասին, որոնք չէին վերաբերում իր ապրումներին։ Խրիստոնյան որոշ խելամտություն ցուցաբերեց, գլխի ընկնելով, որ Գրիգորին նրա ցավակցության կարիքը չի զգում, ու սկսեց հաճույքով, բայց դանդաղ պատմել Բալաշովը գրավելու, իր վիրավորվելու մասին։ Փստացնելով իր փաթաթած ահագին ծխախոտը, նա թավ ձայնով ասում էր.

— Հա՛, մեր հետևակ շարքը գնում էր արևածաղիկների միջով։ Նրանք, ուրեմս, կրակում էին գնդացիրներից ու թընդանոթներից, հրացաններից կրակելն էլ իրեն կարգին։ Դե՛, ես պոլոզ մարդ եմ, էլի, գնում եմ շղթայի հետ, ոնց որ որձ սագը հավերի հետ. ինչքան էլ կռանում էի, էլի երևում էի, դե, դրանք, գնդակներն էլ եկան գտան ինձ։ Լավ է, որ բոյս բարձր է, իսկ թե որ ցածր լիներ, հենց գլխիս պիտի զարկեին։ Գնդակները, ուրեմս, շատ հեռու տեղից էին գալի, թուլացել էին, ամա այնպես զարկեցին, որ փորումս ինչ կաչկա զողոաց, ու ամեն մեկն էլ տաք էր, ասես անտերը վառարանի միջից էր թռել... Հա՛, ձեռս տարա այդ տեղս, զգացի, որ դրանք նստել են մեջս, շարժվում եմ կաշուս տակին, ոնց որ թե ուռուցքներ լինեն, մեկը մյուսից քիչ դենն է։ Դե, ես մատներովս ճմռեցի դրանք և, ուրեմս, ընկա։ Միտք եմ անում՝ սա հանաք բան չի հա՛-ա, զրրրո՛ղը տանի։ Ավելի լավ է պառկեմ, թե չէ մեկ ուրիշ, ավելի ուժեղ գնդակ կգա,

կծակի ինձ ու դուրս կթռչի։ Հա՛, ուրեմս պառկած եմ։ Չեմ էլ համբերում, շոշափում եմ դրանք, այդ գնդակները։ Նրանք էլի այս տեղս են, իրար մոտ։ Դե, ես էլ վախեցա, միտք արի՝ բա որ դրանք, այդ շան անտերները փորս ընկնեն, ո՞նց կլինի։ Կթաղվեն աղիքներիս արանքումը, դե արի ու դրանց գտի, բժիշկ։ Բա իմ հա՞լը ոնց կլիներ։ Մարդուս մարմինը, հենց թեկուզ իմը, հո թույլ է, գնդակները կհասնեն գլխավոր աղիքիս, դե արի ու ման արի դրանք զնդզնդացնելով, ոնց որ փոշտավորի զանգուլակը։ Լրիվ խախտում կստացվի։ Պառկած եմ, կտրում եմ արևածաղկի գլուխը, սեմիշկա եմ ուտում, ամա վրես զարդանդ է գալի։ Մեր շրջթան գնաց։ Հա՛, հենց որ վերցրին այդ Բալաշովը, ինձ էլ այնտեղ ղրկեցին։ Պառկեցի Տիշանսկու լազարեթումը։ Այնտեղ մի բժիշկ կար, ժիր էր ոնց որ ծիտը։ Հարցնում է ու հարցնում. «Հը՛, չհանե՞նք գնդակները»։ Ես էլ նրան մրտքումս... Նրան հարցրի. «Ձերդ բարեծննդություն, դրանք կարո՞ղ են ընկնել փոր ու փսորս»։—«Չէ, ասում է, չեն կարող»։ Էհ, միտք եմ անում, չեմ թողնի, որ փորս կտրեն ու հանեն։ Գիտե՛մ այդ օյինները։ Կկտրեն, ու վերքը հլա չսաղացած՝ արի ու գնա զորամաս։ «Չէ, ասում եմ, ձերդ բարեծննդություն, չեմ թողնի։ Ինձ մինչև իսկ հետաքրքիր է, որ դրանք փորումս լինեն։ Ուզում եմ դրանք տուն տանել, ցույց տալ կնկանս, դե, ինձ էլ հո չեն խանգարում, շատ ծանդր չեն»։ Նա ինձ հայհոյեց, ամա մի շաբաթով արձակուրդ տվեց։

Գրիգորին ժպտալով լսեց անպաճույճ պատմությունը, հարցրեց.

— Դու ո՞րտեղ էիր, ո՞ր գնդում։

— Չորրորդ խառն գնդում։

— Քեզ հետ ովքե՞ր կան մեր խուտորից։

— Շատ են մերոնք. այնտեղ են Անիկուշկա Սկոպեցը, Թեսխլեբնովը, Կոլովեյդին Ակիմը, Միրոշնիկով Սյոմկան, Գորբաչև Տիխոնը։

— Ո՞նց են կազակները, չե՞ն գանգատվում։

— Հա, ուրեմս, նեղանում են սպաներից։ Այնպիսի սրիկաներ են այդ սպաները, որ իսկի օր չեն տալի։ Ու համարյա բոլորն էլ ռուսներ են, կազակներ չկան։

Խրիստոնյան պատմելիս ձգում էր ֆրենչի կարճ թևքերը ու, ասես չհավատալով աչքերին, զարմացած զննում ու շփում էր անգլիական լավորակ, կոկլիկ մահուդից կարված շալվարի ծնկները։

— Իմ ոտներին հարմար կոշիկներ չգտնվեցին,— մտազբաղ ասաց նա։— Անգլիական տերության մեջ այսքան մեծ ոտներ ունեցողներ չկան... Մենք հո ցորյան ենք ցանում և ուտում, իսկ այնտեղ, ինչպես և Ռուսաստանում, հենց մենակ տարեկանով են ապրում։ Էլ ո՞րտեղից պիտի այս տեսակ ոտներ ունենան։ Ամբողջ հարյուրյակին հագուստ ու ոտնաման տվին, հոտավետ ծխախոտներ բաժանեցին, ու էլի բանը վատ է...

— Ի՞նչն է վատ,— հետաքրքրվեց Գրիգորին։

Խրիստոնյան ժպտաց, ասավ.

— Դուրսը լավ է, մեջը վատ։ Գիտե՞ս, կազակներն էլի չեն ուզում կռվել։ Ուրեմս, այս պատերազմից ոչինչ չի դուրս գա։ Ասում էին, որ Խոպերի օկրուգից դենը չեն գնա։

Խրիստոնյային ճանապարհ դնելով, Գրիգորին մի քիչ մտածելուց հետո որոշեց. «Կմնամ մի շաբաթ ու կգնամ ռազմաճակատ։ Այստեղ կմեռնես ձանձրույթից»։ Մինչև երեկո նա տանն էր։ Վերհիշեց մանկությունը ու Միշատկայի համար եղեգնից հողմաղաց շինեց, ձիու մազից թակարդ հյուսեց ճնճղուկներ որսալու համար, դստրիկի համար սարքեց մի փոքրիկ կառք՝ պտտվող անիվներով և խայտաբղետ զարդարված առեղով, փորձեց նույնիսկ տիկնիկ սարքել լաթերից, սակայն ոչինչ դուրս չեկավ. տիկնիկը սարքվեց Գունյաշկայի օգնությամբ։

Երեխաները, որոնց նկատմամբ Գրիգորին առաջ երբեք այդչափ ուշադիր չէր եղել, սկզբում անվստահ էին վերաբերվում նրա հնարքներին, բայց հետո արդեն ոչ մի բոպե չէին հեռանում նրանից, ու իրիկնադեմին, երբ Գրիգորին պատրաստվեց դաշտ գնալու, Միշատկան լացը պահելով հայտարարեց.

— Դու միշտ էլ այդպես ես։ Գալիս ես մի բոպե ու էլի մեզ թողնում-գնում ես... Տա՛ր քեզ հետ թակարդն էլ, աղացն էլ, շաշանակն էլ, բոլորը տար։ Ինձ հարկավոր չեն։

Գրիգորին որդու թաթիկները վերցրեց իր մեծ ձեռքերի մեջ, ասաց.

— Թե որ այդպես է, ա՛յ ինչ կասեմ. դու կազակ ես, արի գնանք դաշտերը. գարի կհնձենք, դեզեր կդնենք, պապիդ հետ կնստես հնձիչի վրա, ձի կքշես։ Օ՛, ինչքա՛ն բզեզ կա այնտեղ, խոտերի մեջ, ինչքա՛ն զանազան թռչնակներ կան ձորում։ Իսկ Պոլյուշկան տատի հետ կնստի տանը։ Նա մեզանից չի նեղանա։ Նա աղջիկ է, նրա գործն է տունը ավլել, փոքրիկ դույլով Դոնից ջուր բերել տատի համար, ու էլ ի՞նչ գործ ասես, որ չանի տանը։ Համաձա՞յն ես։

— Բա ո՞նց,— ցնծությամբ բացականչեց Միշատկան։ Նրա աչքերը նույնիսկ փայլեցին սպասվելիք հաճույքից։

Իլյինիշնան փորձեց հակառակել.

— Ո՞ւր պիտի տանես դրան։ Սատանեն գիտե, թե ինչեր ես մոգոնում։ Բա նա ո՞րտեղ պիտի քնի, ո՞վ պիտի նրան մտիկ անի։ Աստված չանի, կմոտենա ձիերին,— կխփեն, կամ թե օձը կկծի։ Մի՛ գնա հորդ հետ, մեռնե՛մ արևիդ, մնա տանը,— դիմեց նա Թոռնիկին։

Բայց վերջինիս կկոցված աչքերը հանկարծ փայլեցին չարագուշակորեն (իսկևիսկ ինչպես Պանտելեյ պապի աչքերը, երբ սա կատաղության էր հասնում), սեղմվեցին փոքրիկ բռունցքները, և նա բարձր, լացակումած ձայնով բղավեց.

— Տատի, սուս արա, հա՛-ա... Մեկ է, կգնամ։ Հայրիկ, դրան մի՛ լսի...

Գրիգորին ծիծաղելով գրկեց որդուն, հանգստացրեց մորը.

— Սա ինձ հետ կքնի։ Այստեղից ձին քայլով կքշենք, ես հո սրան վայր չե՞մ գցի։ Սրա համար շոր պատրաստի, մերս, ու մի վախենա,— ողջ և առողջ կպահեմ, իսկ էգուց իրիկուն կբերեմ։

Այսպես սկսվեց Գրիգորիի ու Միշատկայի բարեկամությունը։

Տատարսկում անցկացրած երկու շաբաթվա ընթացքում Գրիգորին Ակսինյային տեսավ միայն երեք անգամ, այն էլ հարևանցիորեն։ Ակսինյան իրեն հատուկ խելացիությամբ և տակտով խուսափում էր հանդիպումներից, հասկանալով, որ ավելի լավ է ինքը չերևա Գրիգորիի աչքին։ Կանացի հոտառությամբ նա իմացավ Գրիգորիի տրամադրությունը, հասկացավ, որ նրա նկատմամբ իր զգացումների յուրաքանչյուր անզգույշ և անժամանակ արտահայտությունը կարող է նրան զինել իր, Ակսինյայի դեմ, ինչ-որ մի բիծ նետել իրենց փոխհարաբերությունների վրա։ Նա սպասում էր, որ Գրիգորին ինքը խոսի նրա հետ։ Այդ պատահեց ռազմաճակատ մեկնելուց մի օր առաջ։ Գրիգորին օրան բարձած սայլով գալիս էր դաշտից, ուշացել էր, մթնշաղին ծայրամասի մի նրբանցքի մոտ հանդիպեց Ակսինյային։ Վերջինս հեռվից բարև տվեց, հազիվ նկատելի ժպտաց։ Նրա ժպիտը սպասողականություն և անհանգստություն էր արտահայտում։ Գրիգորին պատասխանեց բարևին, բայց չկարողացավ լուռ անցնել։

— Ի՞նչպես ես ապրում,— հարցրեց նա՝ աննկատելիորեն քաշելով երասանները, չափավորելով ձիերի թեթև քայլը։

— Ոչինչ, շնորհակալ եմ, Գրիգորի Պանտելեևիչ։

— Ո՞նց է, իսկի չես երևում։

— Արտերումն էի... Գործը մենակ եմ տանում։

Գրիգորիի հետ սայլի վրա նստած էր Միշատկան։ Թերևս այդ պատճառով Գրիգորին չկանգնեցրեց ձիերը, այլևս խոսակցությամբ չզբաղեցրեց Ակսինյային։ Նա մի քանի սաժեն առաջ անցավ, լսեց Ակսինյայի ձայնը, ու ետ նայեց։ Ակսինյան կանգնած էր ցանկապատի մոտ։

— Երկա՞ր պիտի մնաս խուտորում,— հարցրեց նա՝ հուզված պոկոտելով իր քաղած երիցուկի թերթիկները։

Ակսինյայի վայրկենական շփոթությունից երևում էր, որ նա ուզում էր էլի մի բան հարցնել։ Բայց չգիտես ինչու չհարցրեց, ձեռքը թափ տվեց ու հապճեպ քայլեց դեպի արոտավայրը, ոչ մի անգամ ետ չնայեց։

XIX

Երկինքը ծածկված էր ամպերով։ Մանր, ասես մաղով շաղ տրվող անձրև էր տեղում։ Փայլում էին մատաղ աշնանախոտը, քոլախոտերը, տափաստանում տեղ-տեղ աճած վայրի սալորենու թփերը։

Պրոխորը, որ չափազանց վրդովված էր ժամկետից առաջ խուտորից մեկնելու պատճառով, գնում էր լուռ, ամբողջ ճանապարհին ոչ մի անգամ չխոսեց Գրիգորիի հետ։ Սևաստյանովսկի խուտորից դենը երեք ձիավոր կազակ հանդիպեցին։ Նրանք գալիս էին կողք-կողքի, կրունկներով բոթում էին ձիերին, աշխույժ խոսակցում։ Նրանցից մեկը, տարեց և շիկամորուք, տանը գործած գորշ կապան հագին, հեռվից ճանաչեց Գրիգորիին, բարձրաձայն ասաց իր ուղեկիցներին.— «Դա Մելեխովն է, տղերք»,— ու մոտենալով, կանգնեցրեց բարձրամարմին, շիկակարմիր ձին։

— Բարով հաղար բարի, Գրիգորի Պանտելևիչ,— ողջունեց նա Գրիգորիին։

— Բարև,— պատասխանեց Գրիգորին՝ ապարդյուն փորձելով վերհիշել, թե որտեղ էր հանդիպել այդ շիկամորուք, մռայլադեմ կազակին։

Վերջինս ըստ երևույթին նոր էր փոխխորունժիի կոչում ստացել, ու հասարակ կազակի չնմանվելու համար հենց կապայի վրա բոլորովին նոր ուսադիրներ էր կպցրել։

— Չե՞ս ճանաչում,— բոլորովին մոտենալով հարցրեց նա՝ մեկնելով հրակարմիր մազերով պատած, լայն ձեռքը, քիթ ու բերանից փչելով օղու թունդ հոտը։ Բութ ինքնագոհությունը փայլում էր նորաթուխ փոխխորունժիի դեմքին, փոքրիկ, լուրթ աչքերը կայծկլտում էին, շեկլիկ բեղերի տակին շրթունքները ծռմռվում էին ժպիտից։ Գեղջկական կապա հագած սպայի անհեթեթ տեսքը զվարճացրեց Գրիգորիին։ Չթաքցնելով ծաղրանքը, նա պատասխանեց.

— Չեմ ճանաչում։ Երևի ես հանդիպել եմ քեզ, երբ դու դեռ շարքային էիր... Քեզ նո՞ր են փոխխորունժիի կոչում տվել։

— Ըհը՛մ, ճիշտ իմացար։ Մի շաբաթ է, որ կոչում են տվել։ Ես ու դու հանդիպել ենք Կուդինովի շտաբում, կարծյոք ավետումին։ Դու այն ժամանակ ինձ ազատեցիր փորձանքից, միտդ բեր։ Է՛յ, Տրիֆոն, կամաց-կամաց գնացեք, ես կհասնեմ ձեր ետևից,— դիմեց մորուքավորը քիչ հեռու կանգ առած կազակներին։

Գրիգորին դժվարությամբ մտաբերեց, թե ինչ հանգամանքներում էր տեսնվել այդ շիկամազ փոխխորունժիի հետ, վերհիշեց նրա «Սեմակ» մականունը և Կուդինովի կարծիքը նրա մասին.— «Անիծվածը առանց վրիպելու է կրակում, փախչող նապաստակներ է խփում հրացանով. կովումն էլ քաջ է ու լավ հետախույզ է, ամա խելքով փոքրիկ երևխա է»։ Ապստամբության ժամանակ Սեմակը լինելով հարյուրյակի հրամանատար, ինչ որ մի զանգանք էր կատարել, որի համար Կուդինովը ուզում էր նրան պատժել, բայց Գրիգորին միջամտել էր, ու Սեմակը ներվել, մնացել հարյուրյակի հրամանատարի պաշտոնում։

— Ռազմաճակատի՞ց ես գալի,— հարցրեց Գրիգորին։

— Ճիշտ այդպես, Նովոխոպերսկի մոտերքից, արձակուրդ եմ գնում։ Մի քիչ, մի հարյուր հիսուն վերստ ծռեցի ճամփես, գնացի Սլաշչևսկայա, այնտեղ ազգականներ ունեմ։ Ես հիշում եմ քո արած լավությունը, Գրիգորի Պանտելևիչ։ Շնորհ արա, էլի՛, ուզում եմ քեզ հյուրասիրել, հը՞։ Տոպրակումս երկու շիշ մաքուր սպիրտ կա, եկ հիմի խմենք, հը՞։

Գրիգորին կտրականապես հրաժարվեց, բայց իրեն առաջարկված մի շիշ սպիրտը վերցրեց իբրև նվեր։

— Է-է՛, ինչե՛ր եղան այնտեղ։ Կազակներն ու սպաները լա՛վ խեր տեսան, հա՛-ա,— պարծենկոտությամբ պատմում էր Սեմակը,— ես Բալաշովումն էլ եղա։ Վերցրինք դա, ու գլխապատառ թռանք դեպի երկաթուղին, այնտեղ կանգնած էին լեփ-լեցուն գնացքները, բոլոր երկաթգծերը բռնված էին։ Մի վագոնում շաքար կար, մյուսում՝ հագուստ, երրորդում՝ զանազան գույք։ Կազակներից ոմանք քառասուն ձեռք շոր վերցրին։ Հետո էլ, երբ գնացինք ջհուդներին թափ տալու,— ուղղակի ծիծաղ էր։ Իմ կիսահարյուրյակից մի ղոչաղ կազակ ջհուդներից տասնութ հատ գրպանի ժամացույց հավաքեց, դրանցից տասը հատը — ոսկի. շան կատուն կախ տվեց դոշից, հենց իսկական հարուստ վաճառական դարձավ։ Այնքան մատանի և օղ էր վերցրել, որ հաշիվ չկար։ Ամեն մատին՝ երկու-երեք մատանի...

Գրիգորին ցույց տվեց Սեմակի լեփ-լեցուն խուրջիններ-ը, հարցրեց.

— Այդ ինչ է քեզ մոտ։

— Այնպես, էլի՛... Զանազան բաներ են։

— Դու է՞լ ես թալանել։

— Ա՛յ քեզ բան, թալանելս ո՞րն է... Ոչ թե թալանել եմ, այլ օրենքով ձեռք բերել։ Մեր գնդի հրամանատարն այսպես ասաց.—«Կվերցնեք քաղաքը, և դա երկու օր ձեր տրամադրության տակ կլինի»։ Դե՛, ես ուրիշներից վա՞տ եմ, ինչ է։ Վերցնում էի պետականը, ինչ որ ձեռքս էր ընկնում... Ուրիշներն ավելի վատ բան էին անում։

— Լա՜վ ռազմիկներ եք,— Գրիգորին զզվանքով նայեց կողոպտիչ փոխխորունժիին, ասաց.— Քեզ նմանները պետք է մեծ ճանապարհին, կամուրջների տակ նստեն ավազակության համար, և ոչ թե կռվեն։ Պատերազմը ալան-թալան եք դարձրել։ Է-հե՛, սրիկանե՛ր։ Նոր արհեստ եք գտել։ Դու կարծում ես դրա համար մի օր չե՞ն քերթի թե ձեր և թե գնդապետի կաշին։

— Այդ ինչի՞ համար։

— Հենց դրա համար։

— Այդ ո՞վ կարող է քերթել։

— Ով աստիճանով ավելի բարձր է։

Սեմակը հեգնանքով ժպտաց, ասավ.

— Նրանք իրենք էլ են այդպես։ Մենք գոնե խուրջիններով ու սայլերով ենք տանում, իսկ նրանք ամբողջ գումակներով են ուղարկում։

— Դու տեսե՞լ ես։

— Բա՛ն ասացիր, էլի՛,— տեսե՜լ ես։ Ինքս եմ այդ տեսակ գումակ տարել մինչև Յարիժենսկայա։ Մի սայլ լեփ-լեցուն էր արծաթե ամաններով, բաժակներով, գդալներով։ Սպաներից ոմանք վրա էին հասնում. «Ի՞նչ եք տանում, հապա ցույց տվեք»։ Հենց որ ասում եմ՝ սա այսինչ գեներալի անձնական գույքն է, թողնում-հեռանում են դատարկ ձեռքով։

— Այդ ո՞ր գեներալն է,— կկոցելով աչքերը և ջղայնորեն տնտղելով սանձափոկը, հարցրեց Գրիգորին։

Սեմակը խորամանկ ժպտաց, ասավ.

— Մոռացել եմ նրա ազգանունը... Ո՞վ էր նա, աստվա՛ծ, հիշողություն տուր։ Չէ՛, մոռացել եմ, չեմ կարողանում մտաբերել։ Բայց դու զուր ես մեզ նախատում, Գրիգորի Պանտելևիչ։ Դրուստ խոսք է ասածս, բոլորն էլ այդպես են անում։ Ես հլա ուրիշների դիմաց այնպես եմ, ինչպես

գառը գայլի դիմաց. ես քիչ էի վերցնում, իսկ ուրիշները մարդկանց տկլորացնում էին հենց փողոցի մեջտեղում, ջհուդ կանանց բռնաբարում որտեղ պատահեր։ Ես այդ գործերով չէի զբաղվում, ես օրինական կնիկ ունեմ, այն էլ ի՞նչ կնիկ, ուղղակի ջեյրան։ Չէ, չէ, դու զուր տեղը վրես հերստոտեցիր։ Կաց, ո՞ւր ես գնում։

Գրիգորին գլխի շարժումով սառն հրաժեշտ տվեց Սեմակին, ասաց Պրոխորին.

— Ե՛կ իմ ետևից,— ու սլացավ վարդով։

Ճանապարհին հաճախակի հանդիպում էին միայնակ ու խմբերով արձակուրդ գնացող կազակներ։ Երբեմն էլ երկձի սայլեր էին պատահում։ Դրանց բեռը ծածկված էր բրեզենտներով կամ հաստ քաթաններով, կապված էր հոգատարությամբ։ Սայլերի ետևից, ասպանդակների վրա կիսով չափ կանգնելով, վարգում էին կազակները, որոնք հագել էին նոր, ամառային բլուզներ, պաշտպանական գույնի կարմիրբանակային շալվարներ։ Կազակների փոշոտ, արևից սևացած դեմքերը աշխույժ, ուրախ էին, բայց հանդիպելով Գրիգորիին, նրանք աշխատում էին շուտ անցնել նրա կողքից, լռում էին, ասես հրամանով ձեռքերը տանում էին գլխարկների հովարներին,— պատիվ էին տալիս, ու նրանից բավական հեռանալով, նորից խոսում էին իրար մեջ։

— Գալիս են վաճառականները,— ծաղրանքով ասում էր Պրոխորը՝ հեռվում տեսնելով ձիավորների, որոնք ուղեկցում էին թալանված գույքով բեռնված սայլը։

Սակայն բոլորը չէին, որ ավարով արձակուրդ էին գնում։ Մի խուտորում, ձիերը ջրելու համար կանգ առնելով ջրհորի մոտ, Գրիգորին հարևան տանից երգի ձայն լսեց։ Դատելով մանկականորեն մաքուր, լավ ձայներից, երգողները երիտասարդ կազակներ էին։

— Երևի զինվոր մարդու են ճանապարհ գցում,— ասաց Պրոխորը դույլով ջուր հանելիս։ Նախորդ օրը մի շիշ սպիրտ խմելուց հետո նա դեմ չէր նորից կոկորդը թրջելուն, դրա համար էլ հապճեպորեն ջրելով ձիերը, ծիծաղելով առաջարկեց.

— Պանտելևիչ, չգնա՞նք այնտեղ, հը՞։ Կարելի է այդ քեֆի մեջ մենք էլ մի-մի բաժակ խմենք։ Թեև տունը եղեգնով է ծածկված, բայց երևում է, որ հարուստ է։

Գրիգորին համաձայնվեց գնալ տեսնել թե ինչպես են ճանապարհ դնում «խոխային»։ Ձիերը կապելով ցանկապատին, նա ու Պրոխորը մտան բակը։ Մարագի չարդախի տակ, կլոր մսուրի շուրջը թամբած չորս ձի կար։ Ամբարից դուրս եկավ մի պատանի, վարսակով լիք լցված կոտը ձեռքին։ Նա անցողակի նայեց Գրիգորիին, մոտեցավ վրնջող ձիերին։ Տան անկյունից դեռը թնդում էր երգը։ Մեկը երերուն, բարձրը տենորով սկսում էր.

Կար ժամանակ, կար մի ճամփա, այն ճամփով
Ոչ ոք ոտով չէր գնում...

Թավ, ծխելուց խռպված մի ձայն, կրկնելով վերջին բառերը, միախառնվեց տենորին, հետո մասնակցեցին նոր, ներդաշնակվող ձայներ, ու երգը ղնգաց վեհորեն, ազատ ու տրտում։ Գրիգորին չուզեց իր ներկայությամբ ընդհատել երգիչներին. նա շոշափեց Պրոխորի թևքը, շշնջաց.

— Կաց, չերևաս, թող վերջացնեն երգը։

— Ճանապարհ դնողներ չեն։ Այդպես ելանցիներն են երգում։ Այնպես, էլի, երգերով են տարվել։ Լավ են մղմղացնում անիրավները,— հավանություն տվեց Պրոխորը և ջղայնացած թքեց. խմելու գործը ըստ երևույթին գլուխ չէր գալիս։

Նույնը տենորը երգով մինչև վերջ պատմեց պատերազմում անփութություն ցուցաբերած կազակի բախտի մասին.

Հետևակի ձիավորի հետք էլ չկար այն ճամփին։
Կազակական հեծյալ գունդը անց էր կենում այն ճամփով։
Գնդի հետքով վազ էր տալի նժույգ մի ձի գովական։
Նրա մեջքից չերքեզական թամքը կողքին էր ընկել։
Աչ ականչից կախ էր ընկել սանձը նրա զարդարուն։
Աբրեշումե սանձափոկը ոտների տակ է ընկնում։
Նրա հետքով վազ է տալի Դոնի ջահել մի կազակ,
Բղավում է հավատարիմ իր նժույգի ետևից,—
«Կանգ առ, հոգիս, սպասիր դու, հավատարիմ իմ նժույգ,
Ինձ մի թողնի, ինձ մի թողնի միայնակ,
Ես առանց քեզ չեմ ազատվի չեչեններից չարամիտ...»

Երգեցողությամբ հմայված, Գրիգորին կանգնել էր մեջքը խրճիթի սպիտակ պատին հենած, չլսելով ոչ ձիերի վրնջոցը, ոչ էլ փողոցով անցնող սայլի ճռինչը...

Խրճիթի անկյունից դեռը երգիչներից մեկը վերջացնելով երգը, հազաց, ասավ.

— Մեր պարը գալն ավելի լավ էր, քանց երգելը։ Էհ, ինչքան որ կարող ենք, այնքան էլ երգում ենք։ Լավ կլիներ, տատիկներս, դինվոր տղերքին ճամփի համար էլ ուտելու բան տայիք։ Լավ կերանք, փառք աստծու, ամա ճանապարհին ուտելու ոչինչ չունենք...

Գրիգորին սթափվեց մտորումներից, դուրս եկավ անկյունից։ Մուտքի սանդուղքի ստորին աստիճանի վրա չորս երիտասարդ կազակներ էին նստած, խիտ բաղմությամբ նրանց շրջապատած, կանգնել էին հարևան տներից հավաքված կանայք, պառավները, երեխաները։ Ունկնդրող կանայք փղձկալով ու խնչելով, լաչակների ծայրերով սրբում էին արցունքները։ Երբ Գրիգորին մոտեցավ մուտքի սանդուղքին, պառավներից մեկը,— բարձրահասակ ու սևաչյա, պատկերանկարչական ակնառու գեղեցկության հետքերը թորշոմած դեմքին,— ծոր տվող ձայնով ասում էր.

— Ձեր արևին մեռնեմ, ինչքան լավ ու դարդոտ եք երգում։ Ձեզնից ամեն մեկը երևի մեր ունի, ու երևի նա, հիշելով, որ իր որդին կորչում է կռվի մեջ, բուռ-բուռ արտասուք է թափում...— Նայելով բարևող Գրիգորիին ու փայլեցնելով աչքերի դեղին սպիտակուցները, պառավը հանկարծ ցասկոտ ասավ.— Եվ դու, ձերդ բարեծննդություն, այս տեսակ ծաղիկներին մեռցնելու ես տանում, հա՞-ա։ Կործանո՞ւմ ես պատերազմում։

— Մեզ էլ են կործանում, տատի,— նոթոտ պատասխանեց Գրիգորին։

Անծանոթ սպայի գալուց շփոթված կազակները արագությամբ ոտքի ելան, ոտներով դեն քշեցին սանդուղքի աստիճաններին դրված ափսեները կերակրի մնացորդներով, շտկեցին վերնաշապիկները, հրացանների փոկերը, սուսերակալները։ Երգելու ժամանակ նրանք հրացանները նույնիսկ չէին իջեցրել ուսերից։ Նրանցից ամենամեծը տեսքով քսանհինգ տարեկանից ավելի չէր լինի։

— Որտեղի՞ց եք,— հարցրեց Գրիգորին՝ դիտելով կազակների երիտասարդական թարմ դեմքերը։

— Զորամասից...— անվճռականորեն պատասխանեց նրանցից մեկը, որ կարճաքիթ էր, ծիծաղկոտ աչքերով։

— Ես հարցնում եմ՝ ո՞րտեղացի եք, ո՞ր ստանիցայից։ Այստեղացի չե՞ք։

— Ելանսկից ենք, գնում ենք արձակուրդ, ձերդ բարեծննդություն։

Գրիգորին ձայնից ճանաչեց երգը սկսողին, ժպտալով հարցրեց.

— Դո՞ւ էիր սկսում երգը։

— Ե՛ս։

— Լա՛վ ձայն ունես, հա՛-ա։ Իսկ ի՞նչ առիթով էիք երգում. ուրախությունի՞ց, թե ինչ։ Ձեր տեսքից չի երևում, որ խմած լինեք։

Բարձրահասակ, խարտյաշ մի երիտասարդ, որ խնամքով սանրած, փոշոտ քյաքուլով էր և թուխ, մեջտեղը թունդ կարմիր այտերով, շեղակի նայեց պառավներին ու, շփոթված ժպտալով, դժկամ պատասխանեց.

— Ի՞նչ ուրախություն, ի՞նչ բան... Կարիքն է մեզ երգել տալի։ Միթամ ապրուստ է, էլի, այս կողմերումը լավ չեն կերակրում, մի կտոր հաց են տալի, ու պրծավ-գնաց։ Մենք էլ երգ ասելուն զոռ տվինք։ Հենց որ երգում ենք, կնանիքը վազեվազ գալիս են լսելու. մենք մի որևէ տխուր բան ենք երգում, դե, նրանց սիրտն էլ լցվում է, ու մեկը մի կտոր խոզաճարպ է բերում, մյուսը կճուճով կաթ և էլի ուրիշ ուտելիք...

— Մենք տերտերների պես ենք, պարոն հարյուրապետ, երգում ենք ու տնօրհնեքի նվերներ հավաքում,— ընկերներին աչքով անելով, ժպտալիս կկոցելով ծիծաղկոտ աչքերը, ասաց երգ սկսողը։

Կազակներից մեկը կրծքի գրպանից հանեց կեղտոտված մի թուղթ, մեկնեց Գրիգորիին։

— Ահա մեր արձակուրդի վկայականը։

— Դա ինչի՞ս է պետք։

— Կարելի է կասկածում եք, մենք դասալիքներ չենք...

— Դու այդ ցույց կտաս, երբ հանդիպեք պատժիչ ջոկատին,— վրդովմունքով ասաց Գրիգորին, բայց գնալուց առաջ այնուամենայնիվ այսպիսի խորհուրդ տվեց.— Դուք գիշերով գնացեք, իսկ ցերեկները կարելի է անցկացնել որևէ տեղում։ Ձեր թուղթը անհուսալի է, կարող է պատահել բռնվեք... Թուղթը առանց կնիքի՞ է։

— Մեր հարյուրյակում կնիք չկա։

— Դե, եթե չեք ուզում, որ կալմիկները հրացանի շամփուրներով ձաղկեն ձեզ, կատարեցեք իմ խորհուրդը։

Խուտորից երեք վերստ հեռավորությամբ, որտեղից մի հարյուր հիսուն սաժեն էր մնում մինչև անտառը, որ սկսվում էր հենց ճանապարհի եզրից,— Գրիգորին նորից տեսավ դեմուդեմ եկող երկու ձիավոր։ Նրանք մի բոպե կանգ առան, նայեցին Գրիգորիի կողմը, հետո կտրուկ շուռ եկան դեպի անտառը։

— Դրանք առանց թղթի են գնում,— ասաց Պրոխորը։— Տեսա՞ր, թե ոնց ծլկեցին անտառ։ Հիմարները զուր են ցերեկով գնում։

Էլի մի քանի մարդ, տեսնելով Գրիգորիին ու Պրոխորին, շուռ եկան ճանապարհից, շտապեցին անհայտանալ։ Մի հետևակային, տարիքավոր կազակ, որ ծածուկ տուն էր գնում, նետվեց արևածաղիկների մեջ, թաքնվեց ինչպես նապաստակը թփերում։ Անցնելով նրա կողքից, Պրոխորը կանգնեց ասպանդակների վրա, բղավեց.

— Է՛յ, հայրենակից, լավ չես թաքնվում... Գլուխդ թաքցրել ես, իսկ ո... երևում է։— Եվ շինծու զայրույթով գոռաց.— Հապա դուրս եկ, ցույց տուր փաստաթղթերդ։

Երբ կազակը վեր թռավ և կուզեկուզ փախավ արևածաղիկների միջով, Պրոխորը փա՛ռ-փառ ծիծաղեց, փորձեց քշել ձին, որ ընկնի նրա ետևից, բայց Գրիգորին կանգնեցրեց նրան.

— Հիմարություն մի անի։ Թող չհաննամը գնա, առանց այդ էլ նա վազելու է մինչև քրտնախաշ լինի։ Հլա դեռ կարող է մեռնել վախից...

— Ի՞նչ ես ասում։ Որսկան շներով էլ չես հասնի նրա ետևից։ Հիմի նա մի տասը վերստ յորդա կգնա։ Տեսա՞ր, թե ոնց ճղեց արևածաղիկների միջով։ Այսպիսի դեպքերում մարդը ո՞նց է այդքան արագ վազ տալի, ես մինչև իսկ զարմանում եմ։

Առհասարակ բացասաբար արտահայտվելով դասալիքների մասին, Պրոխորն ասաց.

— Ո՞նց են գնում, է՛, հենց իրար գլխի հավաքված։ Ասես ջվալի միջից են դրանց թափել։ Տե՛ս, Պանտելեիչ, չլինի թե շուտով մենակ ես ու դու պահենք ռազմաճակատը...

Գրիգորին որքան մոտենում էր ռազմաճակատին, այնքան նրա աչքերի առաջ լայն չափով էր բացվում Դոնի բանակի քայքայման նողկալի պատկերը,— քայքայում, որ սկսվել էր հենց այն միջոցին, երբ ապստամբներով համալրված բանակը առավել հաջողությունների էր հասել Հյուսիսային ռազմաճակատում։ Արդեն այդ ժամանակ նրա զորամասերը ոչ միայն անընդունակ էին վճռական հարձակման անցնելու և կոտորելու հակառակորդի դիմադրությունը, այլև իրենք էլ անկարող կլինեին դիմադրելու լուրջ գրոհին։

Այն ստանիցաներում ու գյուղերում, ուր տեղավորվում էին ռազմաճակատին մոտիկ ռեզերվները, սպաներն անդադար զբաղվում էին հարբեցողությամբ. բոլոր կարգերի գումակները լեփ-լեցուն էին թալանված և դեռ թիկունք չուղարկված գույքով. զորամասերում մնում էր նրանց կազմի ամենաշատը 60 տոկոսը. կազակները ինքնակամ էին արձակուրդ գնում, ու կալմիկներից կազմված, տափաստաններում թրևող պատժիչ ջոկատները անզոր էին կանգնեցնելու մասսայական դասալքության ալիքը։ Սարատովի նահանգի գրավված գյուղերում կազակներն իրենց պահում էին ինչպես նվաճողներ՝ օտար տերիտորիայում. թալանում էին բնակչությանը, բռնաբարում կանանց, ոչնչացնում հացի պաշարները, մորթում անասունները։ Բանակը համալրվում էր բոլորովին երիտասարդ տղաներով և հիսունամյա ծերունիներով. ռազմաճակատ գնացող հարյուրյակներում բացահայտ ասում էին, որ չեն ցանկանում կռվել, իսկ այն զորամասերում, որոնք ուղարկվում էին Վորոնեժի ուղղությամբ, կազակները ուղղակի չէին հնազանդվում սպաներին։ Ըստ լուրերի, առաջավոր դիրքերում հաճախ սպաների սպանություններ էին կատարվում։

Երեկոյան մթնշաղին Գրիգորին գիշերելու համար կանգ առավ Բալաշովի մերձակայքում, մի փոքրիկ գյուղում։ Զորակոչման ավագ հասակի կազակներից բաղկացած 4-րդ

առանձին պահեստի հարյուրյակը և Տագանոգյան գնդի սակրային վաշտը գրավել էին գյուղի բոլոր բնակելի շենքերը։ Գրիգորին ստիպված եղավ երկար ժամանակ տեղ փնտրել գիշերելու համար։ Կարելի էր դաշտում գիշերել, ինչպես նրանք սովորաբար անում էին, բայց գիշերամտին անձրև եկավ, ու Պրոխորն էլ բռնվել էր մալարիայի հերթական մոլուցքով։ Հարկավոր էր գիշերն անցկացնել որևէ ծածկի տակ։ Գյուղի ծայրում, բարդիներով շրջապատված մի մեծ տան մոտ կանգնած էր արկից վնասված մի զրահապատ ավտոմոբիլ։ Դրա կողքից անցնելիս Գրիգորին կարդաց կանաչ պատի չջնջված մակագրությունը՝ «Մա՛հ սպիտակ սրիկաներին», ու դրա տակին ավտոմոբիլի անունը՝ «Սվիրեպի» (դաժան)։ Բակից, ձիակապարանից ձիերի փնչոց և մարդկային ձայներ էին լսվում. տան ետևում, այգում խարույկ էր վառված, ծուխը փռվում էր ծառերի կանաչ գագաթների վրա ու ցնդում. խարույկի լույսի տակ կազակների շարժվող կերպարանքներ էին երևում։ Քամին խարույկից տանում էր վառվող ծղոտի և խոզի այրված մազի հոտը։

Գրիգորին իջավ ձիուց, գնաց տունը։

— Ո՞վ է տանտերը,— հարցրեց նա՝ մտնելով մարդկանցով լեցուն, ցածրիկ մի սենյակ։

— Ես եմ։ Ի՞նչ եք ուզում,— Ցածրահասակ մի մուժիկ, որ հենվել էր վառարանին, առանց դիրքը փոխելու նայեց Գրիգորիին։

— Թույլ կտա՞ք ձեզ մոտ գիշերել։ Մենք երկու հոգի ենք։

— Առանց այդ էլ մենք այստեղ շատ ենք ոնց որ կորիզները ձմերուկի մեջ,— դժգոհ մոթմոթաց նստարանի վրա պառկած տարիքավոր մի կազակ։

— Ես բան չէի ասի, միայն թե շատ մարդ կա մեզ մոտ,— կարծես արդարանալով, ասաց տանտերը։

— Մի կերպ կտեղավորվենք։ Հո անձրևի տակ չե՞նք գիշերելու,— պնդում էր Գրիգորին։— Իմ սուրհանդակը հիվանդ է։

Նստարանի վրա պառկած կազակը տնքաց, իջեցրեց ոտները ու գննելով Գրիգորիին, արդեն ուրիշ տոնով ասաց.

— Մենք, ձերդ բարեծննդություն, տանտիրոջ հետ միասին տասնչորս հոգի ենք երկու սենյակում, իսկ երրորդ սեն-

յակը կբաղեցրել է անգլիական մի սպա իր երկու սպասյա-
կով, դրանից ջոկ նրանց հետ տեղավորվել է նաև մեր մի
սպան։

— Կարելի է տեղավորվե՞ք նրանց հետ,— բարյացա-
կամորեն ասաց մի ուրիշ կազակ՝ ալեխառն մորուքով և ա-
վագ ուրյադնիկի ուսադիրներով։

— Ոչ, ավելի լավ է այստեղ մնամ։ Ինձ քիչ տեղ է
հարկավոր, հատակի վրա կպառկեմ, ձեզ չեմ նեղի։— Գրիգո-
րին հանեց շինելը, ձեռքի ափով կոկեց մազերը, նստեց սե-
ղանի մոտ։

Պրոխորը դուրս ելավ ձիերին նայելու։

Հարևան սենյակում հավանորեն լսեցին խոսակցությու-
նը։ Հինգ րոպեից հետո ներս մտավ կարճահասակ, պճնա-
գեղ հագնված մի պորուչիկ։

— Դուք գիշերելու տե՞ղ եք փնտրում,— դիմեց նա Գրի-
գորիին, ու հարևանցիորեն նայելով նրա ուսադիրներին, սի-
րալիր ժպիտով առաջարկեց.— Տեղափոխվեցեք մեզ մոտ,
մեր սենյակը, հարյուրապետ։ Ես և անգլիական բանակի լեյ-
տենանտ պարոն Քեմփբելը խնդրում ենք ձեզ, այնտեղ ձեզ
համար ավելի հարմար կլինի։ Իմ ազգանունը Շչեգլով է։
Ձե՞րը։— Նա սեղմեց Գրիգորիի ձեռքը, հարցրեց.— Դուք
ռազմաճակատի՞ց եք գալիս. ա՜խ, արձակուրդի՜ց։ Գնանք,
գնանք։ Մենք ուրախությամբ կհյուրընկալենք ձեզ։ Դուք հա-
վանորեն քաղցած կլինեք, իսկ մենք հյուրասիրելու շատ
բան ունենք։

Պորուչիկի ֆրենչի վրա, որ կարված էր հիանալի, բաց
կանաչ մահուդից, երևում էր սպայական գեորգևյան խաչը,
աչքի էր ընկնում փոքրիկ գլխի անբասիր մազաբաժանը,
սապոգները խնամքով մաքրված էին, թխադալուկ, մաքուր
սափրված նրա դեմքից, ամբողջ վայելչակազմ նրա կերպա-
րանքից մաքրություն և ինչ-որ ծաղկային օդեկոլոնի թունդ
հոտ էր զգացվում։ Հաշտում նա քաղաքավարությամբ սպա-
սեց, որ Գրիգորին առաջ անցնի, ու ասաց.

— Դուռը ձախ կողմն է։ Զգույշ, այստեղ արկղ կա,
չդիպչեք։

Գրիգորիին դիմավորելու համար ոտքի ելավ երիտա-
սարդ, բարձրահասակ ու ամրակազմ լեյտենանտը՝ շեղակի

ճեղքված վերին շրթունքը ծածկող խիտ, սև բեղերով և մի-
մյանց մոտիկ գորշ աչքերով։ Պորուչիկը Գրիգորիին ծանո-
թացրեց նրա հետ, անգլերեն ինչ-որ բան ասաց։ Լեյտենանտ-
ը թափահարեց հյուրի ձեռքը ու, նայելով մերթ նրան մերթ
պորուչիկին, մի քանի խոսք ասաց. ժեստով հրավիրեց նըս-
տել։

Սենյակի մեջտեղում իրար կողքի դրված էր երթական
չորս մահճակալ, անկյունում կուտակված էին ինչ-որ ար-
կղներ, ուղեպարկեր, կաշվե ճամպրուկներ։ Սնդուկի վրա
դրված էին Գրիգորիին անծանոթ սիստեմի մի ձեռքի գնդա-
ցիր, հեռադիտակի պատյան, ցինկե փամփշտանոցներ, սև
ագուստով ու նոր, չքերքրված, գորշ-կապտավուն փողով մի
կարճ հրացան։

Լեյտենանտը դուրեկան, խուլ և թավ ձայնով ինչ-որ բան
էր ասում, բարյացակամորեն նայում Գրիգորիին։ Գրիգորին
չէր հասկանում օտար, իր ականջին տարօրինակ հնչող լե-
զուն, բայց գլխի ընկնելով, որ իր մասին են խոսում, իրեն
զգում էր փոքր-ինչ անհարմար վիճակում։ Պորուչիկը խառ-
նըխտում էր ճամպրուկներից մեկը, ժպտալով լսում, հետո
ասաց.

— Միստր Քեմփբելն ասում է, որ շատ է հարգում կա-
զակներին, որ, իր կարծիքով, նրանք հիանալի հեծելակ-
ներ ու ռազմիկներ են։ Դուք հավանորեն ուտե՞լ եք ուզում,
այո՞. դուք խմո՞ւմ եք։ Նա ասում է, որ վտանգը մտերմաց-
նում է... է-է՛, գրողը տանի, ամեն տեսակ դատարկություն
է ասում։— Պորուչիկը ճամպրուկից հանեց մի քանի տուփ
պահածո, երկու շիշ կոնյակ ու նորից կռացավ ճամպրուկի
վրա՝ շարունակելով թարգմանել.— Դրա ասելով՝ Ուստ-Մեդ-
վեդիցկում կազակ սպաները իրեն շատ սիրալիր էին ընդու-
նել։ Այնտեղ նրանք մի ահագին տակառ Դոնի գինի էին
խմել, բոլորն էլ թունդ հարբել էին և խիստ ուրախ ժամա-
նակ անցկացրել ինչ-որ գիմնազիստուհիների հետ։ Դե, այդ-
պես է ընդունված, էլի։ Սա իրեն համար հաճելի պարտա-
կանություն է համարում իրենց ցույց տված հյուրասիրու-
թյան համար հատուցել ոչ պակաս հյուրասիրությամբ։ Եվ
դուք պետք է տանեք այդ։ Ես խղճում եմ ձեզ... Դուք
խմո՞ւմ եք։

— Շնորհակալություն, խմում եմ,— ասաց Գրիգորին՝ գաղտուկ զննելով սանձափոկից ու ճանապարհի փոշուց կեղտոտված իր ձեռքերը։

Պորուչիկը տուփերը դրեց սեղանին. ճարպկությամբ բացեց դրանք, հոգոց հանելով ասաց.

— Գիտե՞ք, հարյուրապետ, սա, այս անգլիացի խողը հոգիս հանել է։ Խմում է առավոտից մինչև ուշ գիշեր։ Կոնծում է չտեսնված կերպով։ Ես ինքս, գիտե՞ք, դեմ չեմ խմելուն, բայց այդքան ահռելի չափով չեմ կարող խմել։ Իսկ սա,— պորուչիկը ժպտալով նայեց լեյտենանտին, Գրիգորիի համար անսպասելի մայր հայհոյեց,— սոված թե կուշտ փորով խմում է հա՛ խմում։

Լեյտենանտը ժպտում էր, գլխով անում, ռուսերեն կոտրատելով ասում էր.

— Այո՛ւ, այո՛ւ... լավ է... Պետք է խմել ցեր գենացը։

Գրիգորին ծիծաղեց, գլխով թափ տվեց մազերը։ Այդ երիտասարդները նրան ուղղակի դուր էին գալիս, իսկ անիմաստ ժպտացող և ծիծաղաշարժ կերպով ռուսերեն խոսող լեյտենանտը ուղղակի հիանալի էր։

Սրբելով բաժակները, պորուչիկն ասում էր.

— Երկու շաբաթ է, որ ես սրա հետ քարշ եմ գալիս, այդ ի՞նչպես կարելի է։ Նա աշխատում է իբրև տանկերը վարելու հրահանգիչ, որոնք տրված են մեր երկրորդ կորպուսին, իսկ ինձ սրա մոտ թարգմանիչ են նշանակել։ Ես ազատ խոսում եմ անգլերեն, հենց այդ էլ կործանեց ինձ... Մեզանում էլ են խմում, բայց ոչ այդպես։ Իսկ սա սատանան գիտե, թե ինչ է։ Կտեսնեք, թե ինչի է ընդունակ։ Միայն իրեն օրական չորս-հինգ շիշ կոնյակ է հարկավոր։ Ընդմիջումներով այդքան խմում է ու չի հարբում, նույնիսկ այդքան խմելուց հետո էլ ընդունակ է աշխատելու։ Նահատակել է ինձ։ Ստամոքսս սկսում է ցավել, այս օրերին տրամադրությունս զարհուրելի է, ու ես այնքան եմ զզվել սպիրտից, որ հիմա վախենում եմ նույնիսկ վառվող լամպի մոտ նստել... Սատանան գիտե, թե ինչ է սա։— Խոսելիս նա երկու բաժակ լիքը լցրեց կոնյակով, իսկ իր համար միայն մի քիչ լցրեց։

Լեյտենանտը աչքերով ցույց տալով բաժակը, ծիծաղելով, սկսեց աշխույժ խոսել ինչ-որ բանի մասին։ Պորուչիկը

ձեռքը աղերսականորեն կրծքին դրած, զուսպ ժպտալով, պատասխանում էր նրան, ու միայն երբեմնակի նրա սև, բարի աչքերում մի ակնթարթ բարկության կայծեր էին բռնկվում։ Գրիգորին վերցրեց բաժակը, չխկացրեց սրտաբաց տանտերերի հետ, խմեց միանգամից։

— Օ՛,— հավանությամբ ասաց անգլիացին ու, դատարկելով իր բաժակը, արհամարհանքով նայեց պորուչիկին։

Լեյտենանտը իր մեծ, թուխ, բանուկ ձեռքերը դրել էր սեղանին, ձեռքերի երեսին, ծակոտիների մեջ սևին էր տալիս մեքենայի քսուքը, մատները թեփոտվել էին բենզինի հետ հաճախակի գործ ունենալուց և պատած էին հին քերծվածքներով, իսկ դեմքը փափլիկ էր, պարարտ, կարմիր։ Ձեռքերի ու դեմքի միջև այնքան մեծ էր հակադրությունը, որ Գրիգորին երբեմն թվում էր, թե լեյտենանտը դիմակով է նստած։

— Դուք ինձ փրկում եք,— ասաց պորուչիկը՝ պոնկեպոռնկ լցնելով երկու բաժակը։

— Իսկ սա մենակ չի՞ խմում, ինչ է։

— Հենց այդ է բանը։ Առավոտից մենակ է խմում, իսկ երեկոյան չի կարող։ Դեհ, խմե՛նք, էլի՛։

— Թունդ բան է...— Գրիգորին մի քիչ խմեց բաժակից, բայց նկատելով լեյտենանտի զարմացած հայացքը, կոնծեց մնացած կոնյակը։

— Նա ասում է, որ դուք հիանալի եք։ Ձեր խմելը նրան դուր է գալիս։

— Ես իմ պաշտոնը կփոխեի ձեր պաշտոնի հետ,— ժպտալով ասաց Գրիգորին։

— Հավատացած եմ, որ երկու շաբաթից հետո կփախչեիք։

— Այդպիսի բարիքի՞ց։

— Ես, համենայն դեպս, կփախչեմ այս բարիքից։

— Ռազմաճակատում ավելի վատ է։

— Այստեղ նույնպես ռազմաճակատ է։ Այնտեղ կարելի է մեռնել գնդակից կամ արկի բեկորից, այն էլ ոչ միշտ իսկ այստեղ ինձ համար ապահովված է հարբեցողության տենդը։ Փորձեցեք այս պահածո պտուղները։ Վետչինա չե՞ք ուզում։

— Շնորհակալություն, ես ուտում եմ։

— Անգլիացիք այս բաների վարպետներ են։ Նրանք իրենց բանակն այնպես չեն կերակրում, ինչպես մենք։

— Մի՞թե մենք կերակրում ենք։ Մեր բանակը արոտով է կերակրվում։

— Ցավոք սրտի դա ճիշտ է։ Սակայն մարտիկներին սպասարկելու այս մեթոդով հեռու չես գնա, մանավանդ եթե այդ մարտիկներին թույլատրվի անպատիժ թալանել բնակչությանը...

Գրիգորին ուշադրությամբ նայեց պորուչիկին, հարցրեց,

— Իսկ դուք հեռո՞ւ եք գնալու։

— Մենք միևնույն ճանապարհով ենք գնալու, ինչի՞ մասին եք հարցնում։— Պորուչիկը չնկատեց, թե ինչպես լեյտենանտը վերցրեց շիշը ու լիքը լցրեց նրա բաժակը։

— Հիմա մնում է, որ դուք խմեք ամբողջ բաժակը,— ժպտաց Գրիգորին։

— Սկսո՞ւմ է,— նայելով բաժակին, հոգոց հանեց պորուչիկը։ Նրա այտերը շիկնեցին անընդմեջ, նուրբ կարմրությամբ։

Երեքն էլ լուռ չխկացրին բաժակները, խմեցին։

— Մեր ճանապարհը մեկ է, բայց ամեն մեկը տարբեր կերպ է գնում...— Նորից խոսեց Գրիգորին՝ կնճռոտելով ճակատը և չկարողանալով պատառաքաղով բռնել ափսեի մեջ սահող ծիրանը։— Մեկը մոտիկ տեղ է իջնում, մյուսն ավելի հեռու գնում, ոնց որ գնացքում...

— Մի՞թե դուք մինչև վերջին կայարանը չեք գնալու։

Գրիգորին զգում էր, որ հարբում է, բայց խմիչքը դեռ չէր հաղթահարել նրան. ծիծաղելով, նա պատասխանեց.

— Իմ կապիտալը չի հերիքի մինչև վերջին կայարանը տոմս գնելու համար։ Իսկ դո՞ւք։

— Դե, իմ դրությունը ուրիշ է. եթե նույնիսկ իջեցնեն գնացքից, ոտով կգնամ մինչև վերջ։

— Ուրեմն ձեզ բարի ճանապարհ։ Դեհ, խմենք։

— Մնում է խմել։ Դժվարը սկսելն էր...

Լեյտենանտը բաժակը չխկացնում էր Գրիգորիի ու պորուչիկի բաժակներին, խմում էր լուռ, համարյա չէր ուտում։ Նրա դեմքը աղյուսե-կարմիր գույն էր ստացել, աչքերը պայ-

ծառացել էին, շարժումների մեջ դիտավորյալ դանդաղկոտություն երևաց։ Դեռ չէին վերջացրել երկրորդ շիշը, իսկ նա արդեն ծանր վեր կացավ, վստահաքայլ մոտեցավ ճամպրուկներին, հանեց ու բերեց երեք շիշ կոնյակ։ Շշերը դնելով սեղանին, ժպտաց շրթունքների ծայրերով, թավ ձայնով ինչ-որ բան մոմոնաց։

— Միստր Քեմփբելն ասում է, որ պետք է երկարաձգել հաճույքը։ Գրրրո՛ղը տանի այս միստրին։ Դուք ի՞նչ կասեք։

— Ի՞նչ կա որ, կարելի է երկարաձգել,— համաձայնվեց Գրիգորին։

— Այո՛, բայց ինչպիսի՞ թափ։ Այս անգլիական մարմնի մեջ ռուս վաճառականի հոգի կա։ Ես կարծես թե արդեն...

— Ձեր տեսքից այդ չի երևում,— խորամանկեց Գրիգորին։

— Ո՞րտեղից։ Ես այժմ թույլ եմ աղջկա պես... Բայց դեռ կարող եմ շարունակել, այո, այո, կարող եմ շարունակել և նույնիսկ առանց ետ մնալու։

Պորուչիկը իր բաժակը կոնծելուց հետո բավական շշմեց. նրա սև աչքերը փայլեցին ու սկսեցին մի փոքր շլել, դեմքի մկանները թուլացան, շրթունքները գրեթե չէին ենթարկվում նրան ու այտերի ստորին մասերը ռիթմիկ ցնցվում էին։ Կոնյակը շշմեցուցիչ ազդեցություն գործեց նրա վրա։ Պորուչիկի դեմքը այնպիսի արտահայտություն ուներ, ինչպես այն եզան դեմքը, որի ճակատին, նախքան մորթելը, շրմփացրել են տասը ֆունտանոց մուրճով։

— Դուք դեռ միանգամայն կարգին վիճակում եք։ Խմեցիք, ու իսկի էլ չազդեց ձեր վրա,— հավաստեց Գրիգորին։ Նա էլ բավական հարբել էր, բայց զգում էր, որ կարող է դեռ շատ խմել։

— Լո՞ւրջ,— պորուչիկը զվարթացավ։— Ոչ, ոչ, սկզբում ես մի քիչ թթվեցի, իսկ այժմ—խնդրեմ, ինչքան կուզեք խմենք, այո՛, ինչքան կուզեք։ Դուք ինձ դուր եք գալիս, հարյուրապետ։ Ես կասեի՝ ձեր մեջ ուժ և անկեղծություն կա։ Այդ ինձ դուր է գալիս։ Եկեք խմենք այս հիմարի ու հարբեցողի հայրենիքի կենացը։ Ճիշտ է, սա անասունի է նման, բայց սրա հայրենիքը լավն է։ «Իշխիր ծովերի վրա, Բրի-

տա՛նիա»։ Խմե՞նք։ Միայն թե ոչ լրիվ։ Ձեր հայրենիքի կենացը, միստր Քեմփբել։— Պորուչիկը խմեց, հուսալքված կկոցեց աչքերը, վետշինա կերավ։— Ինչպի՞սի երկիր է դա, հարյուրապետ, դուք չեք կարող պատկերացնել, իսկ ես ապրել եմ այնտեղ... Դե, խմե՛նք։

— Մայրը ինչ տեսակ էլ որ լինի, ուրիշի մորից ավելի հարազատ է։

— Չվիճենք, խմենք։

— Խմենք։

— Հարկավոր է երկաթով ու հրով մեր հայրենիքից դուրս շպրտել նեխվածքը, իսկ մենք անզոր ենք։ Բանից դուրս եկավ, որ մենք առհասարակ հայրենիք չունենք։ Էհ, սատանան տանի։ Քեմփբելը չի հավատում, որ մենք կհաղթահարենք կարմիրներին։

— Չի՞ հավատում։

— Այո, չի հավատում։ Նա վատ կարծիք ունի մեր բանակի մասին և գովասանքով է արտահայտվում կարմիրների մասին։

— Նա մասնակցե՞լ է մարտերին։

— Իհարկե։ Քիչ մնաց կարմիրները բռնեին սրան։ Անիծվա՛ծ լինի կոնյակը։

— Թունդ է։ Սպիրտի պե՞ս է, հա՞։

— Քիչ ավելի թույլ է։ Հեծելազորը Քեմփբելին ազատեց փորձանքից, թե չէ գերի կբռնվեր։ Այդ պատահեց Ժուկով խուտորի մոտ։ Կարմիրները այնտեղ մեզնից մի տանկ գրավեցին... Դուք տխուր տեսք ունեք։ Ի՞նչ պատահեց։

— Օրեր առաջ կինս մեռավ։

— Այդ զարհուրելի է։ Երեխանե՞ր են մնացել։

— Այո։

— Ձեր երեխաների կենացը։ Ես երեխաներ չունեմ, գուցեև ունեմ, բայց եթե դրանք կան, ապա, հավանորեն, մի տեղ լրագրավաճառներ են... Քեմփբելը Անգլիայում հարսնացու ունի։ Սա կանոնավոր, շաբաթը երկու անգամ գրում է նրան։ Ու երևի ամեն տեսակ դատարկ բաներ է գրում։ Ես սրան համարյա ատում եմ, ի՞նչ։

— Ես ոչինչ չեմ ասում։ Իսկ ինչո՞ւ է սա հարգում կարմիրներին։

— Ո՞վ ասաց, թե «հարգում» է։

— Դուք ասիք։

— Չի՛ կարող պատահել։ Սա չի հարգում նրանց, չի կարող հարգել, դուք սխալվում եք։ Սակայն, ես կհարցնեմ սրան։

Քեմփբելը ուշադրությամբ լսեց գունատ ու հաբբած պորուչիկին, երկար մի բան ասաց։ Գրիգորին դեռ պատասխան չստացած, հարցրեց.

— Ի՞նչ է փնթփնթում։

— Սա տեսել էր, թե ինչպես նրանք հետևակ շարքով, տրեխներ հագած, գրոհ էին տվել տանկերի վրա։ Այդքանը բավակա՞ն է։ Նա ասում է, որ անկարելի է հաղթել ժողովրդին։ Հիմա՛ր։ Դուք սրան մի՛ հավատաք։

— Ի՞նչպես չհավատամ։

— Առհասարակ։

— Լավ, ի՞նչպես։

— Սա հաբբած է և դատարկ բան է դուրս տալիս։ Ի՞նչ է նշանակում, թե չի կարելի հաղթել ժողովրդին։ Կարելի է նրա մի մասը ոչնչացնել, մնացածներին ի կատար ածել... Ինչպես ասացի ե՞ս։ Ոչ, ոչ թե ի կատար ածել, այլ հնազանդեցնել։ Մենք ո՞ր շիշն ենք վերջացնում, հը՞։— Պորուչիկը գլուխը դրեց ձեռքերին, արմունկով շուռ տվեց պահածոյի տուփը և տասը րոպեի չափ նստեց կրծքով սեղանին ընկած, արագ-արագ շնչելով։

Դրսում չոքել էր գիշերվա մթությունը։ Խիտ անձրևը խփում էր պատուհանների փեղկերին։ Հեռո՛ւ-հեռվում խուլ որոտմունք էր լսվում, ու Գրիգորին չէր կարողանում հասկանալ, որո՞ն է այդ, թե՞ թնդանոթների բոմբյուն։ Քեմփբելը սիգարի ծխի կապույտ ամպով պատած, կոնյակ էր կոնծում։ Գրիգորին բոթեց պորուչիկին ու, կանգնած տեղում ճոճվելով, ասաց.

— Լսիր, հարցրու սրան, թե ինչո՞ւ կարմիրները պետք է մեզ ջարդեն։

— Գրողի ծո՛ցը,— մռմռաց պորուչիկը։

— Ոչ, դու հարցրու։

— Չհանեմը։ Կորի գնա։

— Հարցրու, ասում եմ քեզ։

Պորուչիկը մի բոպե շշմած նայեց Գրիգորիին, հետո էլ, կակազելով, ինչ-որ բան ասաց ուշադրությամբ լսող Քեմփբելին ու նորից գլուխը դրեց շերեփաձև միացրած ձեռների վրա։ Քեմփբելը արհամարհական ժպիտով նայեց պորուչիկին, շոշափեց Գրիգորիի թևքը, սկսեց լուռ բացատրել. ծիրանի կորիզը դրեց սեղանի մեջտեղը, դրա կողքին, ասես համեմատելու համար, կողքին դրեց իր մեծ ձեռքը ու շրխկացնելով լեզուն, ձեռքով ծածկեց կորիզը։

— Միթամ բա՛ն արեցիր, էլի։ Առանց քեզ էլ ես այդ հասկանում եմ...— մտազբաղ փնթփնթաց Գրիգորին։ Օրորվելով, նա գրկեց հյուրասեր լեյտենանտին, ձեռքի լայն տարածմամբ ցույց տվեց սեղանը, գլուխ տվեց։— Շնորհակալություն հյուրասիրության համար։ Մնաս բարով։ Եվ գիտե՞ս ինչ կասեմ քեզ։ Որքան կարելի է, դու շուտ մեկնիր տուն, քանի դեռ գլուխդ չեն թոցրել։ Ես այդ քեզ ասում եմ անկեղծ սրտով։ Հասկանալի՞ է։ Դուք մեր գործերին մի՛ խառնվեք։ Հասկացա՞ր։ Գնա՝ խնդրեմ, թե չէ այստեղ քեզ կջընջրխեն։

Լեյտենանտը վեր կացավ, գլուխ տվեց, սկսեց աշխույժ խոսել՝ երբեմնակի անզոր նայելով քնած պորուչիկին, բարեկամաբար ձեռքը տփտփացնելով Գրիգորիի մեջքին։

Գրիգորին դժվարությամբ գտավ դռան փակը, օրորվելով դուրս ելավ։ Մանր, շեղակի անձրևը խփեց նրա դեմքին։ Կայծակի բռնկոցը լուսավորեց լայն բակը, թաց ցանկապատը, այգու ծառերի պլպլող սաղարթը։ Իջնելով մուտքի սանդուղքից, Գրիգորին սայթաքեց, ընկավ ու երբ վեր կացավ, ինչ-որ ձայներ լսեց.

— Սպաներն էլի խմո՞ւմ են,— հարցրեց մեկը՝ հաշտում վառելով լուցկին։

Խուլ, մրսած մի ձայն զուսպ սպառնալիքով պատասխանեց.

— Նրանք խմելով գլուխկունձի կգան... Նրանք խմելով կգտնե՛ն իրենց վերջը։

XX

Դոնի բանակը, դուրս գալով Խոպերի օկրուգի սահմաններից, դարձյալ, ինչպես և 1918 թվականին, կորցրեց իր

առաջշարժման հարձակողական ուժը։ Վերին Դոնի ապրստամբ կազակները և մասամբ խոպերցիները առաջվա պես չէին ուզում կռվել Դոնի մարզի սահմաններից դուրս. ուժեղացել էր նաև կարմիր զորամասերի դիմադրությունը, որոնք նոր օժանդակ ուժեր էին ստացել, կռվում էին այն տերիտորիայում, որի բնակչությունը նրանց համակրում էր։ Կազակներն էլի դեմ չէին անցնել պաշտպանողական պատերազմի, և Դոնի բանակի հրամանատարությունը ոչ մի հնարքով չէր կարող նրանց ստիպել, որ կռվեն այնպիսի համառությամբ, որով նրանք մինչ այդ կռվում էին իրենց մարզի սահմաններում,— չնայելով, որ այդ ճակատամասում ուժերի փոխհարաբերությունը նրանց օգտին էր. մարտերում զգզզված 9-րդ կարմիր բանակի դեմ,— որ ուներ 11000 հետևակ և 5000 հեծյալ մարտիկ, 52 թնդանոթ,— գործում էին կազակական կորպուսները՝ ունենալով 14 400 հետևակ, 10600 հեծյալ և 53 թնդանոթ։

Առավելապես ակտիվ գործողությունները տեղի էին ունենում թևային ուղղություններում և հատկապես այնտեղ, ուր գործում էին Կամավորական-Կուբանյան հարավային բանակի զորամասերը։ Կամավորական բանակը մի կողմից հաջողությամբ մուտք էր գործում Ուկրաինայի խորքը, մյուս կողմից նրա մի մասը գեներալ Վրանգելի հրամանատարությամբ ուժեղ ճնշում էր գործադրում 10-րդ կարմիր բանակի վրա՝ նեղելով նրան ու կատաղի մարտերում առաջ շարժվելով Սարատովի ուղղությամբ։ Հուլիսի 28-ին կուբանյան հեծելազորը ընդհուպ մոտեցավ Կամիշինին՝ գերի վերցնելով այն պաշտպանող զորքերի մեծ մասը։ 10-րդ բանակի զորամասերի ձեռնարկած հակագրոհը ետ մղվեց։ Համարձակորեն մանևրներ կատարող Կուբանյան-Թերեքյան հեծյալ խառն դիվիզիան սպառնում էր շրջանցել ձախ թևը, որի հետևանքով 10-րդ բանակի հրամանատարությունը ետ տարավ Բորզենկովո—Լատիշևո—Կրասնի Յառ—Կամենկա—Բաննոյե ռազմաճակատը։ Այդ ժամանակ 70-րդ բանակն իր շարքերում ուներ 18000 հետևակ, 8000 հեծյալ և 132 թնդանոթ. նրա դեմ կանգնած Կամավորական-Կուբանյան բանակն ուներ 7600 հետևակ, 10750 հեծյալ և 68 թնդանոթ։ Բացի դրանից, սպիտակներն ունեին տանկերի ջոկատներ, ինչ-

պես նաև զգալի քանակությամբ ինքնաթիռներ, որոնք հետախուզական ծառայություն էին կատարում և մասնակցում մարտական գործողություններին։ Բայց Վրանգելին չօգնեցին ոչ ֆրանսիական ինքնաթիռները, ոչ էլ անգլիական տանկերն ու մարտակոցները։ Նրան չհաջողվեց Կամիշինից դենն անցնել։ Այդ ճակատամասում սկսվեցին երկարատև, համառ մարտեր, որոնց հետևանքով ռազմաճակատի գիծը լոկ աննշան փոփոխությունների ենթարկվեց։

Հուլիսի վերջին սկսվեց կարմիր բանակների նախապատրաստությունը՝ Հարավային ռազմաճակատի կենտրոնական ամբողջ ճակատամասում լայն հարձակման անցնելու համար։ Այդ նպատակով 9-րդ և 10-րդ բանակները Տրոցկու պլանով ու Շորինի հրամանատարությամբ միավորվեցին իբրև հարվածային զորախումբ։ Հարվածային զորախմբի ռեզերվը պիտի կազմեին Արևելյան ռազմաճակատից փոխադրվող 28-րդ դիվիզիան՝ Կազանի նախկին ամրացված ռայոնի բրիգադով և 25-րդ դիվիզիան՝ Սարատովի ամրացված ռայոնի բրիգադով։ Բացի դրանից, Հարավային ռազմաճակատի հրամանատարությունը հարվածային զորախումբը ուժեղացնում էր ռազմաճակատի ռեզերվում գտնվող զորքերով և 56-րդ հրաձգային դիվիզիայով։ Մրագրվում էր Վորոնեժի ուղղությամբ օժանդակ հարված հասցնել 8-րդ բանակի ուժերով և նրան միացրած 31-րդ հրաձգային դիվիզիայով, որ փոխադրված էր Արևելյան ռազմաճակատից, և 7-րդ հրաձգային դիվիզիայով։

Ընդհանուր հարձակման անցնելը նշված էր օգոստոսի 1-ից մինչև 10-ը։ Գլխավոր կարմիր հրամանատարության պլանով 8-րդ և 9-րդ բանակների հարվածին պետք է զուգակցվեին թևային բանակների շրջանցման գործողությունները, ըստ որում, առանձնապես պատասխանատու և բարդ խնդիր էր դրվում 10-րդ բանակի վրա, որ գործելով Դոնի ձախ ափերին, պետք է հակառակորդի գլխավոր ուժերը կտրեր Հյուսիսային Կովկասից։ Ենթադրվում էր արևմուտքում 14-րդ բանակի ուժերի մի մասով եռանդուն դեմոնստրատիվ շարժում կատարել դեպի Զապլինո—Լոզովայա գիծը։

Այն ժամանակ, երբ 9-րդ և 10-րդ բանակների ճակատամասերում անհրաժեշտ վերախմբավորումներ էին կատարվում, սպիտակ հրամանատարությունը հակառակորդի նախապատրաստած հարձակումը վիժեցնելու նպատակով ավարտում էր Մամոնտովի կորպուսի կազմակերպումը՝ մտադրված լինելով ճեղքել ռազմաճակատը և այդ կորպուսը խորը ասպատակի նետել կարմիր բանակների թիկունքներում։ Ցարիցինի ուղղությամբ Վրանգելի բանակի հաջողությունը հնարավորություն տվեց այդ բանակի ռազմաճակատը ընդլայնել դեպի ձախ ու դրանով իսկ կրճատելով Դոնի բանակի ռազմաճակատը նրա կազմից մի քանի հեծյալ դիվիզիա վերցնել։ Օգոստոսի 7-ին Ուրյուպինսկա ստանիցայում կենտրոնացվեց 6000 հեծյալ, 2800 հետևակ և երեք մարտակոց, յուրաքանչյուրը չորս թնդանոթով։ Իսկ ամսի 10-ին նոր կազմված կորպուսը գեներալ Մամոնտովի հրամանատարությամբ 8-րդ և 9-րդ բանակների արանքում ճեղքեց ռազմաճակատը և Նովոխոպերսկից շարժվեց դեպի Տամբով։

Սպիտակների հրամանատարության սկզբնական մտադրությամբ ենթադրվում էր, բացի Մամոնտովի կորպուսից, կարմիրների թիկունքները ասպատակի նետել նաև գեներալ Կոնովալովի հեծյալ կորպուսը, բայց որովհետև Կոնովալովի կորպուսի զորամասերի գրաված ճակատամասում մարտեր սկսվեցին, ուստի չհաջողվեց այդ կորպուսը դուրս բերել ռազմաճակատից։ Այս հանգամանքով էլ բացատրվում է այն խնդրի սահմանափակությունը, որ տրված էր Մամոնտովին, որի վրա պարտականություն էր դրված չափը չանցկացնել ու չերազել Մոսկվայի վրա արշավելու մասին, այլ ջախջախելով հակառակորդի թիկունքներն ու կոմունիկացիաները, նորից միանալ բանակին, մինչդեռ սկզբում նրան և Կոնովալովին հրամայված էր հեծելազորային ամբողջ զանգվածով ջախջախիչ հարված հասցնել կենտրոնական կարմիր բանակների թև ու թիկունքին, հետո արդեն արագ երթով շարժվել դեպի Ռուսաստանի խորքը ու բնակչության հակասովետական տրամադրություն ունեցող խավերի հաշվին համալրելով ուժերը, շարունակել առաջխաղացումը մինչև Մոսկվա։

8-րդ բանակին հաջողվեց բանակային ռեզերվը կռվի հանելու միջոցով վերականգնել իր ձախ թևի դրությունը։ 9-րդ բանակի աջ թևը ավելի մեծ չափով տուժեց։ Ձեռնարկված միջոցներով գլխավոր հարվածային զորախմբի հրամա-

նատար Շորինին հաջողվեց միակցել երկու բանակների ներքին թևերը, բայց չհաջողվեց կանգնեցնել Մամոնտովի հեծելազորը։ Շորինի հրամանով ռեզերվային 56-րդ դիվիզիան Կիրսանովի ռայոնից ուղարկվեց Մամոնտովի կորպուսի առաջը կտրելու։ Մամոնտովի կորպուսի կողային ջոկատներից մեկը հանդիպական մարտում ջարդեց այդ դիվիզիայի մի գումարտակը, որ սայլերով ուղարկվել էր Սամպուր կայարանը։ Նույնպիսի բախտ վիճակվեց նաև 36-րդ հրաձգային դիվիզիայի հեծելազորային բրիգադին, որ ուղարկված էր Տամբով—Բալաշով երկաթուղու մի ուղեմասը պաշտպանելու համար։ Հանդիպելով Մամոնտովի հեծելազորի ամբողջ զանգվածին, բրիգադը կարճատև մարտից հետո ցրիվ տրվեց։

Օգոստոսի 18-ին Մամոնտովը հարձակմամբ գրավեց Տամբովը։ Բայց այս հանգամանքը Շորինի հարվածային զորախմբի հիմնական ուժերին չխանգարեց սկսել հարձակումը, թեպետև հարկավոր եղավ զորախմբի կազմից համարյա երկու հետևակ դիվիզիա առանձնացնել Մամոնտովի դեմ պայքարելու համար։ Միաժամանակ հարձակում սկսվեց Հարավային ռազմաճակատի նաև ուկրաինական ճակատամասում։

Ռազմաճակատը, որ հյուսիսում և հյուսիս-արևելքում Ստարի Օսկոլից համարյա ուղիղ գծով ձգվում էր մինչև Բալաշով և աստիճանաձև հասնում մինչև Ցարիցին, սկսեց հավասարվել։ Կազակական գնդերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ նահանջում էին դեպի հարավ՝ անցնելով մասնակի հակագրոհների, կանգ առնելով յուրաքանչյուր բնագծում։ Մտնելով Դոնի հողը, նրանք նորից վերականգնեցին կորցրած մարտունակությունը. դասալքությունը խիստ կրճատվեց. միջին Դոնի ստանիցաներից համալրումներ եկան։ Շորինի հարվածային խմբի զորամասերը որքան շատ էին ներխուժում Դոնի Զորաց երկիրը, այնքան ուժեղանում ու դաժանանում էր նրանց ցույց տրվող դիմադրությունը։ Վերին Դոնի օկրուգի ապստամբ ստանիցաների կազակները սեփական նախաձեռնությամբ ժողովներում ընդհանուր մոբիլիզացիա էին հայտարարում, մաղթանքներ էին կատարում և առանց հապաղելու մեկնում էին ռազմաճակատ։

Տրոցկու պարտվողական պլանի կործանարար հետևանքները սկսում էին երևան գալ լիակատար չափով. անդադար մարտերով առաջ շարժվելով դեպի Խոպեր և Դոն, հաղթահարելով սպիտակների կատաղի դիմադրությունը և գտնվելով մի այնպիսի տերիտորիայում, որի բնակչության մեծամասնությունը պարզապես թշնամաբար էր վերաբերվում կարմիր զորամասերին,— Շորինի զորախումբը աստիճանաբար վատնում էր հարձակողական պոռթկումի ուժը։ Իսկ այդ ժամանակ Կոչալինսկայա ստանիցայի և Կոտլուբան կայարանի ռայոնում սպիտակ հրամանատարությունը արդեն մանևրային ուժեղ զորախումբ էր կազմել կուբանյան երեք կորպուսից և 6-րդ հետևակ դիվիզիայից, 10-րդ կարմիր բանակին հարվածելու համար, որի առաջշարժումը մեծագույն հաջողությամբ էր ծավալվում։

XXI

Մելեխովների ընտանիքը մեկ տարում կիսով չափ պակասեց։ Իրավացի էր Պանտելեյ Պրակոֆիևիչը, մի անգամ ասելով, թե մահը սեր է գցել իրենց տան վրա։ Դեռ նոր էին թաղել Նատալյային, երբ Մելեխովների ընդարձակ սենյակում նորից տարածվեց խնկի և կապույտ տերեփուկի հոտը։ Մեկ ու կես շաբաթ էր անցել այն օրից, երբ Գրիգորին մեկնեց ռազմաճակատ, և այդ մեկ ու կես շաբաթից հետո Դարյան խեղդվեց Դոնում։

Շաբաթ օրը, գալով դաշտից, նա Դունյաշկայի հետ գնաց լողանալու։ Բանջարանոցների մոտ նրանք հանվեցին, երկար նստեցին ոտներով ճմռթված, փափուկ խոտի վրա։ Դեռ առավոտից Դարյան վատ տրամադրության մեջ էր, գանգատվում էր գլխացավից ու տկարությունից, մի քանի անգամ թաքուն լաց էր եղել... Նախքան ջուրը մտնելը Դունյաշկան մազերը հանգույց արեց, կապեց գլխաշորով ու շեղակի նայելով Դարյային, ցավակցաբար ասաց.

— Ինչքա՜ն լղարել ես, Դաշկա, ուղղակի բոլոր դամարներդ դուրս են ընկել։

— Շուտով կչաղանամ։

— Գլուխդ էլ չի՞ ցավում։

— Չի ցավում։ Դեհ, եկ լողանանք, թե չէ ուշ է։— Նա առաջինը թափ առավ ու նետվեց ջուրը, ամբողջովին սկեց, ու դուրս գալով, փոփոխանելով, լող տվեց գետի մեջտեղը։ Արագ հոսանքը վերցրեց նրան, սկսեց հեռու տանել։

Զմայլված նայելով Դարյային, որ լողում էր վարժ կերպով, տղամարդու պես, Դունյաշկան մինչև գոտկատեղը մտավ ջուրը, լվացվեց, թրջեց կուրծքը և արևից տաքացած, ուժեղ, կանացիորեն կլորիկ թևերը։ Հարևան բանջարանոցում Օբնիզովների երկու հարսները ջրում էին կաղամբը։ Նրանք լսում էին, թե ինչպես Դունյաշկան ծիծաղելով կանչում էր Դարյային.

— Ե՛տ արի, Դաշկա, թե չէ լոքոն քարշ կտա ու կտանի քեզ։

Դարյան ետ դարձավ, լողաց մի երեք սաժենի չափ, հետո էլ մի ակնթարթ մինչև մարմնի կեսը դուրս թռավ ջրից, գլխի վրա ծալեց ձեռները, բղավեց՝ «Մնաք բարով, աղջկերք»,— ու քարի պես ընկավ ջրի տակ։

Քառորդ ժամից հետո գունաթափ Դունյաշկան միայն տակի յուրկայով վազ տվեց տուն։

— Դարյան խեղդվեց, մայրիկ...— շնչասպառ լինելով, հազիվ ասաց նա։

Միայն հետևյալ օրվա առավոտյան Դարյային բռնեցին փորակավոր կեռերով։ Տատարսկում հին և ամենափորձված ձկնորս Արխիպ Պեսկովատսկովը վաղ առավոտյան պարաններին կապված վեց հատ փորակավոր կեռ դրեց Դարյայի սկած տեղից հոսանքի ուղղությամբ դեպի ներքև, հետո Պանտելեյ Պրակոֆևիչի հետ գնաց ստուգելու։ Գետի ափին երեխաների ու կանանց բազմություն էր հավաքվել։ Նրանց մեջ էր նաև Դունյաշկան։ Երբ Արխիպը չորրորդ պարանը կապելով թիակի բռնակին, տասը սաժենի չափ հեռացավ ափից, Դունյաշկան պարզ լսեց, թե ինչպես նա ցածր ձայնով ասաց՝ «Կարծեմ գտնվեց...» ու սկսեց զգուշությամբ քաշքշել պարանը, որ ուղղաձիգ սուզված էր ջրի խորքը։ Հետո մի, ինչ-որ բան սպիտակին տվեց աջ ափի մոտ, երկու ծերունիները կռացան ջրի վրա, նավակը ծռվեց և մեջը ջուր թափվեց, ու լուռ ամբոխը լսեց նավակի մեջ գցած մարմնի խուլ

թխկոցը։ Ամբոխը միանգամից շունչ առավ։ Կանանցից մեկը կամացուկ հեծկլտաց։ Մոտիկում կանգնած Խրիստոնյան կոպիտ բղավեց երեխաների վրա՝ «Դեհ, կորեք գնացեք այստեղից»։ Արտասվող Դունյաշկան տեսավ, թե ինչպես Արխիպը նավակի ետին մասում կանգնած, ճարպկությամբ ու անաղմուկ բանեցնելով թիակը, նավակը դեպի ափն էր քշում։ Նավակի քիթը շրշյունով ու ճռճռոցով փշրեց առափնյա կավճի կտորները, նստեց գետնին։ Դարյան ընկել էր ոտները անշարժ ծալված, թուշը նավակի թաց հատակին կպած։ Նրա սպիտակ մարմնի վրա, որ միայն քիչ չափով էր կապուտակել և ինչ-որ մթին-երկնագույն երանգ ընդունել, երևում էին խորունկ խոցեր,— կեռերի հետքերը։ Նիհար, թուխ սրունքի վրա, ծնկից մի քիչ ցածր, գուլպայի գործվածքային կապիչի մոտ, որ Դարյան ըստ երևույթին մոռացել էր հանել լողանալուց առաջ,— կարմրին էր տալիս մի քիչ արյունոտ քերծվածքը։ Փորակավոր կեռի ծայրը քսվել էր ոտին, ծուռումուռ խազել, քերծել էր այն։ Զղջագաբար սեղմրտելով գոգնոցը, Դունյաշկան առաջինը մոտեցավ Դարյային, ծածկեց նրան կարի տեղից պատռած պարկով։ Պանտելեյ Պրակոֆևիչը բանիմացությամբ, հապճեպորեն քշտեց շալվարի ծայրերը, սկսեց նավակը քաշել դեպի ափը։ Շուտով մի սայլ եկավ։ Դարյային տարան Մելեխովների տունը։

Հաղթահարելով վախը և նողկանքի զգացումը, Դունյաշկան օգնում էր մորը՝ ննջեցյալի սառն, Դոնի խորքերի պաղությունը պահպանած մարմինը լողացնելիս։ Ինչ-որ անծանոթ, անխախտելի բան կար Դարյայի մի փոքր ուռած դեմքին, ջրից անգույն դարձած աչքերի փայլում։ Նրա մազերի մեջ արծաթի նման պսպղում էր գետային ավազը, այտերի վրա կանաչին էին տալիս կպած գորտնխալիի թաց թելերը, իսկ տարածված, նստարանից անզոր կախ ընկած թևերի մեջ այնքան սարսափելի անշարժություն կար, որ Դունյաշկան նայելով, հապճեպ ետ էր քաշվում, զարմանքով ու սարսափով տեսնում, թե ինչպես մեռած Դարյան բոլորովին նման չէր այն Դարյային, որը դեռ կարճ ժամանակ առաջ կատակում էր ու ծիծաղում և այնքա՜ն սիրում էր կյանքը։ Հետո էլ երկար ժամանակ, վերհիշելով Դարյայի ստինքների ու փորի

քարե պաղությունը, ոսկրացած անդամների առաձգականությունը, Դունյաշկան ամբողջ մարմնով ցնցվում էր ու աշխատում շուտ մոռանալ այդ ամենը։ Նա վախենում էր, որ գիշերները երազում կտեսնի մեռած Դարյային, մի շաբաթ Իլյինիչնայի հետ քնում էր մի մահճակալի վրա ու պառկելուց առաջ աղոթում էր աստծուն, մտքով խնդրում. «Տեր աստված, այնպես արա, որ նա երազումս չերևա, ծածկիր նրան, տեր իմ»։

Եթե Օբնիզովների կնանիքը պատմած չլինեին, որ լսել էին Դարյայի բղավոցը՝ «Մնաք բարով, աղջկերք»,— խեղդվածին կթաղեին սուսուփուս, անաղմուկ, բայց տեր Վիսսարիոնը, իմանալով այդ բացականչության մասին, որ պարզապես ցույց էր տալիս, թե Դարյան դիտավորյալ էր իրեն զրկել կյանքից,— վճռականապես հայտարարեց, որ ինքնասպանին չի թաղի։ Պանտելեյ Պրակոֆևիչը վրդովվեց.

— Ո՞նց թե չես թաղի։ Նա մկրտված չէ՞, ինչ է։

— Անձնասպաններին չեմ կարող թաղել, օրենքով չի թույլատրվում։

— Բա ո՞նց թաղենք նրան, շան պե՞ս, հա՞։

— Ոնց ուզում ես և որտեղ ուզում ես, միայն թե չթաղես գերեզմանոցում, որտեղ թաղված են ազնիվ քրիստոնյաները։

— Դե լավ, գութ արա, էլի,— համոզում էր Պանտելեյ Պրակոֆևիչը։— Մեր ընտանիքում այդ տեսակ խայտառակություն երբեք չի եղել։

— Չեմ կարող։ Քեզ, Պանտելեյ Պրակոֆևիչ, հարգում եմ իբրև օրինակելի ծխականի, բայց չեմ կարող։ Լուր կտանեն գործակալին, ու ես փորձանքի մեջ կընկնեմ,— համառում էր տերտերը։

Դա խայտառակություն էր։ Պանտելեյ Պրակոֆևիչը ամեն կերպ փորձում էր համոզել կամակոր տերտերին, խոստանում էր վճարել սովորականից շատ և Նիկոլայի հուսալի փողով, որպես նվեր մի թոխլի էր առաջարկում, բայց ի վերջո տեսնելով, որ հորդորանքը չի ազդում, սպառնալիքի դիմեց.

— Ես նրան գերեզմանոցից դուրս չեմ թաղի։ Նա օտար չէ, այլ հարազատ հարսս է։ Նրա մարդը սպանվել է կարմիրների դեմ մղված կռվում ու սպայի աստիճան է ունեցել, ինքն էլ գեորգևյան մեդալ էր ստացել, իսկ դու ինձ այդ տեսակ սարսաղ բան ես ասում, հա՞-ա։ Չէ, տերտեր, քո ասածը չի անցնի, այնպես կթաղես, որ քեֆդ գա։ Թող նա դեռ մնա օթախում, իսկ ես հենց հիմի կհայտնեմ ստանիցայի ատամանին։ Կտեսնես, թե նա ո՞նց կխոսի քեզ հետ։

Պանտելեյ Պրակոֆևիչը առանց հրաժեշտ տալու դուրս եկավ տերտերի տանից ու ջղայնացած վիճակում նույնիսկ շրխկոցով ծածկեց դուռը։ Սակայն սպառնալիքը ազդեցություն թողեց. կես ժամից հետո տերտերի կողմից մարդ եկավ ու հայտնեց, թե տեր-Վիսսարիոնը հիմա -կգա տիրացուի հետ։

Ինչպես որ կարգն էր, Դարյային թաղեցին գերեզմանոցում, Պետրոյի կողքին։ Երբ գերեզման էին փորում, Պանտելեյ Պրակոֆևիչը իրեն համար էլ սիրահոժար տեղ նշեց։ Բանեցնելով բահը, նա նայեց շուրջը, միտք արեց, որ ավելի լավ տեղ չի գտնվի և կարիք էլ չկա փնտրելու։ Պետրոյի գերեզմանի վրա շրշում էին վերջին տարիներում տնկած բարդու մատաղ ճյուղերը. վերահաս աշունը արդեն թառամության դեղին, դառն գույն էր տվել նրա տերևներին։ Հորթերը արահետներ էին բացել ջարդոտված ցանկապատի միջով, գերեզմանների արանքում. ցանկապատի կողքից ճանապարհն անցնում էր դեպի արահետը. ննջեցյալների հոգատար ազգականների տնկած ծառերը,— թխկիները, բարդիները, ակացիաները, ինչպես նաև վայրի աճած մասրենին հաճելի կերպով, թարմությամբ կանաչին էին տալիս. դրանց կողքին ճոխ փթթել էր դաղձը, դեղնին էր տալիս ուշ աճող կանճրակը, հասկավորվում էր խոպուկը և հատիկավոր սեղը։ Խաչերը վարից վեր պարուրվել էին քաղցրահամբույր, մուգկապույտ պատատուկներով։ Տեղը իրոք որ հաճելի, չոր էր...

Ծերունին գերեզման էր փորում, հաճախ վար էր դնում բահը, նստում խոնավ, կավոտ գետնին, ծխում, մտածում մահվան մասին։ Բայց երևում էր, որ այնպիսի ժամանակ չէր, որ ծերուկները կարողանային հանգիստ մեռնել հայրենական տներում ու հանգչել այնտեղ, ուր իրենց վերջին ապաստանն էին գտել նրանց հայրերն ու պապերը...

Դարյային թաղելուց հետո Մելեխովների տանը էլ

ավելի խոր լռություն էր տիրում։ Սայլով բերում էին օրանը, կալսում, հավաքում բոստանների հարուստ բերքը։ Գրիգորիից լուրեր էին սպասում, բայց այն օրվանից, երբ նա մեկնեց ռազմաճակատ, նրա մասին ոչինչ չէր լսվում։ Իլյինիչնան երբեմն ասում էր՝ «Անիծվածը երեխաներին բարև է՛լ չի ուղարկում. կնիկը մեռավ, ու մենք բոլորս էլ հարկավոր չենք նրան...» Հետո զինծառայող կազակները սկսեցին շուտ-շուտ գալ Տատարսկի։ Լուրեր տարածվեցին, թե կազակներին ետ են քշել Բալաշովի ռազմաճակատում, և նրանք դեպի Դոն են նահանջում, որպեսզի օգտագործեն ջրային արգելքը, պաշտպանվեն մինչև ձմեռ։ Իսկ թե ինչ պետք է պատահեր ձմռանը, այդ մասին բոլոր ճակատայինները բացահայտ կերպով ասում էին. «Հենց որ Դոնը սառչի, կարմիրները մեզ կքշեն մինչև ծով»։

Պանտելեյ Պրակոֆևիչը ջանադիր աշխատելով կալսման վրա, կարծես թե ուշադրություն չէր դարձնում Դոնի շրջակայքում պտտվող լուրերին, բայց և չէր կարող անտարբեր մնալ դեպի իրադարձությունները։ Նա սկսել էր է՛լ ավելի հաճախ բղավել Իլյինիչնայի ու Դունյաշկայի վրա, է՛լ ավելի ջղային էր դարձել՝ իմանալով, որ ռազմաճակատը մոտենում է։ Նա հաճախակի որևէ երկրագործական պիտույք էր շինում բայց բավական էր, որ իր ձեռքի գործը հեշտությամբ գլուխ չգար, և նա զայրացած թողնում էր աշխատանքը, թքելով ու հայհոյանք թափելով գնում կալը, որպեսզի այնտեղ մեղմեր վրդովմունքը։ Դունյաշկան քանիցս ականատես էր լինում ջղայնության այդ բռնկումներին։ Մի անգամ ծերունին ձեռնամուխ եղավ լուծը կարգի բերելուն, աշխատանքը ձախողվեց, ու անակնկալ կերպով կատաղած ծերունին վերցրեց կացինը ու այնպես ջարդոտեց լուծը, որ դրանից միայն տաշեղներ մնացին։ Նույնը տեղի ունեցավ նաև անուրը նորոգելիս։ Երեկոյան, լամպի լույսի տակ Պանտելեյ Պրակոֆևիչը երկտակեց մոմած թելը, սկսեց կարել անուրի պատռված տեղը. արդյո՞ք թելն էր փտած, թե՞ ծերունին էր ջղայնացել, բայց թելը իրար ետևից երկու անգամ կտրվեց. այդ բավական էր. սարսափելի հայհոյանք թափելով, Պանտելեյ Պրակոֆևիչը վեր թռավ, շուռ տվեց տաբուրետը, ոտով շպրտեց դեպի վառարանը, ու շան պես գոմռալով, սկսեց ատամներով պոկել անուրի կաշվե վրաքաշը, հետո էլ անուրը շպրտեց հատակին, ու աքլորի պես ցատկոտելով, ոտների տակ ճմռթեց այն։ Իլյինիչնան, որ շուտ էր պառկել քնելու, աղմուկը լսելուն պես վախեցած վեր թռավ, բայց իմանալով գործի էությունը, էլ չհամբերեց, կշտամբեց ծերունուն.

— Ալևոր տեղդ գժվե՞լ ես, անիծված։ Անուրը ի՞նչ մեղք ուներ, հը՞։

Պանտելեյ Պրակոֆևիչը խելագար աչքերով նայեց կնոջը, գոռաց.

— Ձենդ կտրի՛, ֆլան-ֆստան,— ու վերցնելով անուրի մի կտորը, շպրտեց պառավի վրա։

Խեղդելով ծիծաղը, Դունյաշկան գնդակի պես դուրս թռավ հաշտը։ Ծերունին էլ մի քիչ աղմկելով, հանդարտվեց. կնոջից ներողություն խնդրեց բարկացած վիճակում իր ասած թարս խոսքերի համար, երկար տնքտնքաց ու քորեց ծոծրակը՝ նայելով շարաբաստիկ անուրի կտորտանքներին, միտք անելով, թե դրանք ինչպես կարելի է օգտագործել։ Նրա կատաղության այդպիսի մոլուցքները հաճախ էին կրկնվում, բայց Իլյինիչնան դառը փորձից խրատված, միջամտության այլ տակտիկա ընտրեց. հենց որ Պանտելեյ Պրակոֆևիչը, հայհոյանքներ թափելով, սկսում էր տնտեսական որևէ պիտույք ջարդոտել, պառավը խոնարհությամբ, սակայն բավականաչափ բարձր ձայնով ասում էր.

— Խփի, ջարդի, Պրակոֆիչ։ Էլի՛ կճարենք։— Եվ նույնիսկ փորձում էր օգնել իրերը ջարդուփշուր անելու։ Այն ժամանակ Պանտելեյ Պրակոֆևիչը միանգամից հանդարտվում էր, անիմաստ հայացքով մի րոպե նայում կնոջը, հետո էլ դողդոջ ձեռքերով քրքրում գրպանը, գտնում ծխախոտի տոպրակը, շվարելով մի կողմ քաշվում, նստում ծխելու, հանգստացնելու գրգռված ջղերը՝ անիծելով իր դյուրագրգռությունը ու հաշվելով եղած վնասները։ Ծերունու սանձարձակ բարկության զոհ դարձավ տան առջևի փոքրիկ պարտեզը խցկված երեք ամսական մի խոճկոր։ Պանտելեյ Պրակոֆևիչը ցցով ջարդեց նրա ողնաշարը, իսկ հինգ րոպեից հետո, մեխով պոկելով մորթած խոճկորի մազերը, մեղավորաբար, քծնությամբ նայեց նոթոտ Իլյինիչնային, ասաց.

— Դե, այս գոճին հո փորձանք էր, էլի... Մեկ է, պետք է սատկեր։ Հիմի դրանց բռնում է ժանտախտը. գոնե կուտենք, թե չէ զուր տեղը պիտի կորչեր։ Ճիշտ չե՞մ ասում, ա՛ կնիկ։ Էլ ի՞նչ ես մթնել ոնց որ կարկտի ամպը։ Թող կորչի այս գոճին, է-է՛։ Գոճին էլ գոճի լիներ, ո՞վ ցավ կաներ։ Դրան ոչ թե ցցով, այլ փչելով էլ կարելի էր սատկացնել։ Եվ ի՛նչ վնասակարն էր, հա՛-ա։ Մի քառասուն թուփ կարտոլ է քանդել։

— Պարտեզում կարտոլը երեսուն թփից ավել չէր լինի,— կամացուկ ուղղեց Իլյինիչնան։

— Էհ, որ քառասուն լիներ, քառասունն էլ կփչացներ, այդպես էր նա։ Փառք աստծու, որ ազատվեցինք դրանից, այդ սատանի ձագից,— առանց երկար մտածելու պատասխանեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Հոր մեկնելուց հետո երեխաները ձանձրանում էին։ Տընտեսության գործերով զբաղված Իլյինիչնան չէր կարող բավականաչափ ուշադրություն դարձնել նրանց, որ երեխաները իրենց բախտին թողնված, ամբողջ օրը խաղում էին այգում կամ կալում։ Մի անգամ ճաշից հետո Միշատկան չքացավ ու տուն եկավ միայն արևը մայր մտնելու ժամին։ Իլյինիչնայի այն հարցին, թե որտեղ էր, Միշատկան պատասխանեց, որ երեխաների հետ խաղում էր Դոնի ափին, բայց Պոլյուշկան իսկույն բռնեց նրա սուտը.

— Սուտ է ասում, տատի, նա մորաքույր Ակսինյայի մոտ էր։

— Դու որտեղի՞ց գիտես,— հարցրեց Իլյինիչնան, որին անհաճելի զարմանք պատճառեց այդ նորությունը։

— Ես տեսա, որ նա ցանկապատի վրայով դուրս եկավ նրանց բակից։

— Այնտե՞ղ էիր, հա՞. դե ասա, զավակս, ինչի՞ կարմրեցիր։

Միշատկան ուղիղ նայեց տատի աչքերին, պատասխանեց.

— Ես խաբեցի, տատիկ ջան... ճիշտ է, ես ոչ թե Դոնի ափին էի, այլ մորաքույր Ակսինյայի մոտ։

— Ինչի՞ էիր գնացել այնտեղ։

— Նա ինձ կանչեց, ես էլ գնացի։

— Բա ինչի՞ խաբեցիր, թե երեխեքի հետ էիր խաղում։

Միշատկան մի վայրկյան նայեց հատակին, բայց հետո բարձրացրեց վճիտ աչիկները, շշնջաց.

— Վախենում էի, որ դու կբարկանաս...

— Ինչի՞ պիտի բարկանայի։ Չէ՛-է... Իսկ նա ինչի՞ կանչեց քեզ։ Ի՞նչ էիր անում նրա մոտ։

— Ոչինչ։ Նա ինձ տեսավ, ձեն տվեց՝ «եկ ինձ մոտ», ես մոտեցա, նա ինձ տարավ տուն, նստեցրեց աթոռի վրա...

— Է՞,— անհամբերությամբ հարցուփորձ էր անում Իլյինիչնան՝ ճարտարությամբ թաքցնելով իրեն համակած հուզմունքը։

— ...Սառն բլիններ տվեց ուտելու, հետո էլ ա՛յ, թե ինչ տվեց։— Միշատկան գրպանից մի կտոր շաքար հանեց, հպարտությամբ ցույց տվեց այն ու էլի թաքցրեց գրպանում։

— Նա քեզ ի՞նչ էր ասում, կարելի է մի բան հարցրեց, հը՞։

— Ասում էր, որ ես մեկ-մեկ գնամ իրեն մոտ, թե չէ ինքը մենակ տխրում է. խոստացավ նվեր տալ... Ասավ, որ ես չասեմ, թե եղել եմ իրեն մոտ։ Թե չէ,— ասավ,— տատիկդ կբարկանա։

— Ա՛յ թե ինչ...— զսպած վրդովմունքից շնչասպառ լինելով՝ ասաց Իլյինիչնան։— Լավ, նա էլ ուրիշ բան հարցնո՞ւմ էր քեզ։

— Հարցնում էր։

— Ի՞նչ էր հարցնում. պատմիր, մատաղ քեզ, մի վախենա։

— Հարցնում էր, թե ես կարոտո՞ւմ եմ հայրիկիս։ Ես ասի, որ որ կարոտում եմ։ Հետո էլ հարցրեց, թե նա ե՞րբ է գալու և նրանից ինչ լուր կա, ես էլ ասի, որ չգիտեմ, որ նա կռիվ է գնացել։ Հետո էլ նա ինձ նստեցրեց ծնկների վրա ու հեքիաթ պատմեց։— Միշատկան աշխուժացավ, ժպտաց, աչքերը փայլեցին։— Մի լավ հեքիաթ ինչ-որ Վանյուշկայի մասին, թե ինչպես սագերը, կարապները նրան տարան իրենց թևերի վրա, ու կախարդ պառավի մասին։

Իլյինիչնան շրթունքները սեղմելով լսեց Միշատկայի խոստովանությունը, խստորեն ասաց.

— Էլ չգնաս նրա մոտ, Թոռնիկս, հարկավոր չէ գնալ։ Նրանից ոչ մի նվեր էլ մի վերցնի, հարկավոր չէ, պապդ կիմանա ու կծեծի քեզ։ Աստված չանի պապդ իմանա, կը-քերթի կաշիդ։ Մի՛ գնա, բալիկս։

Սակայն, չնայելով այդ խիստ հրամանին, երկու օրից հետո Միշատկան նորից եղավ Աստախովենց տանը։ Իլյինիչնան այդ մասին իմացավ՝ նայելով Միշատկայի շապկին. պատռված թևքը, որ նա առավոտյան ժամանակ չէր ունեցել կարելու, ճարտարությամբ թակալված էր, իսկ օձիքի վրա սպիտակին էր տալիս մի նոր սադափ-կոճակ։ Գիտենալով, որ կալով զբաղված Դունյաշկան ցերեկը չէր կարող կարկատել երեխաների հագուստը, Իլյինիչնան կշտամբանքով հարցրեց.

— Էլի հարևանների մո՞տ ես գնացել։

— Էլի՛...— շփոթված ասավ Միշատկան և իսկույն ավելացրեց.— Էլ չեմ գնա, տատի, միայն թե դու մի բարկանա...

Հենց այդ ժամանակ Իլյինիչնան որոշեց խոսել Ակսինյայի հետ և կտրուկ կերպով ասել, որ նա հանգիստ թողնի Միշատկային և նրան չգրավի ոչ նվերներով, ոչ էլ հեքիաթներ պատմելով։ «Նատալյայի գլուխը կերավ, հիմի էլ անիծվածը սուսիկ-փուսիկ ձեռք է գցում երեխեքին, որ հետը նրանց միջոցով ճանկի Գրիշկային։ Ա՛մա թե օձ է, հա՛-ա։ Կենդանի մարդ ունի, ամա ուզում է ուրիշի հարս դառնալ... Նրա մտածածը գլուխ չի գա։ Եվ մի՞թե այդ տեսակ մեղքից հետո Գրիշկան կառնի նրան»,— մտածում էր պառավը։

Նրա մայրական խորաթափանց և խանդոտ հայացքից չէր վրիպել այն հանգամանքը, որ Գրիգորին, լինելով տանը, խուսափում էր Ակսինյային հանդիպելուց։ Նա հասկանում էր, որ Գրիգորին այդ անում էր ոչ թե մարդկանց կշտամբանքներից վախենալուց, այլ այն պատճառով, որ Ակսինյային մեղավոր էր համարում իր կնոջ մահվան համար։ Իլյինիչնան գաղտուկ հուսադրում էր իրեն, որ Նատալյայի մահը Գրիգորիին առմիշտ կբաժանի Ակսինյայից, ու վերջինս երբեք չի դառնա իրենց ընտանիքի անդամ։

Նույն օրվա երեկոյան Իլյինիչնան Ակսինյային տեսավ նավամատույցում, Դոնի ափին, կանչեց նրան.

— Մի րոպե եկ այստեղ, հարկավոր է խոսել...

Ակսինյան վար դրեց դույլերը, հանգիստ մոտեցավ, բարևեց։

— Այ թե ինչ, սիրելի,— սկսեց Իլյինիչնան՝ զննողաբար նայելով հարևանուհու գեղեցիկ, բայց իր համար ատելի դեմքին։— Դու ինչի՞ ես ուրիշի երեխաներին գրավում, հը՞։ Ինչի՞ ես կանչում մեր երեխին ու թլոզում նրա գլուխը։ Ո՞վ քեզ խնդրեց կարկատել նրա շապիկը ու ինչ-որ նվերներ տալ նրան։ Կարծում ես առանց մորը նրան մտիկ անող չկա՞, հը՞, առանց քեզ չե՞ն ապրի։ Բա դու խիղճ ունե՞ս, ա՛յ անամոթ։

— Ես ի՞նչ վատ բան եմ արել, ինչի՞ եք ինձ նախատում, տատի,— վրդովված հարցրեց Ակսինյան։

— Ո՞նց թե ինչ վատ բան։ Բա դու իրավունք ունե՞ս ձեռ տալ Նատալյայի երեխին, երբ նրան գերեզման ես տարել, հը՞։

— Ի՞նչ եք ասում, տատի, խաչ հանեցեք, ո՞վ է նրան գերեզման տարել։ Հենց նա ինքն է իրեն վերջ տվել։

— Եվ ոչ թե քո պատճառո՞վ։

— Դե, այդ արդեն ես չգիտեմ։

— Իսկ ես գիտեմ,— հուզված բղավեց Իլյինիչնան։

— Մի՛ գոռաք, տատի, ես ձեր հարսը չեմ, որ ինձ վրա գոռաք։ Դրա համար ես մարդ ունեմ։

— Ես քեզ լավ եմ տեսնում, հա՛-ա։ Տեսնում եմ, թե ուզածդ ինչ է։ Հարսս չես, ամա ուզում ես հարսս լինել։ Ուզում ես առաջ քո կողմը քաշել երեխեքին, հետո էլ Գրիշկային կպչել, հա՛-ա։

— Ես միտք էլ չունեմ ձեր հարսը դառնալու։ Խելքից դուրս եք խոսում, տատի։ Մարդս հո սաղ է։

— Հենց այդ է, է՛, ուզում ես սաղ մարդուցդ փախնել, ուրիշին կպչել։

Ակսինյան բավական սփրթնեց, ասաց.

— Չգիտեմ, թե ինչու դուք վրա տվիք ինձ ու պախարակում եք այդպես... Ես երբեք ոչ ոքի չեմ կպել ու միտք էլ չունեմ կպչելու, իսկ որ ձեր Թոռնիկին մոտս եմ կանչել, այստեղ ի՞նչ վատ բան կա։ Ես երեխաներ չունեմ. դուք ինքներդ գիտեք, չունեմ, ուրիշի երեխաներով եմ ուրախանում։

այդ էլ մխիթարանք է, դրա համար էլ կանչել եմ նրան... Միթամ թե նվե՞ր եմ տվել։ Երեխին մի կտոր շաքար եմ տվել, և դա նվե՞ր է, հա՞։ Ինչի՞ պետք է նվեր տամ։ Է՜-է, աստված գիտի, թե ինչ եք դուրս տալի...

— Քանի մերը սաղ էր, չէիր կանչում։ Հենց որ Նատալյան մեռավ, դու նրա երեխեքի բարեկամ դարձար։

— Նա Նատալյայի ժամանակ էլ էր գալիս ինձ մոտ,— հազիվ նկատելի ժպտալով՝ ասաց Ակսինյան։

— Սուտ ես ասում, անամոթ։

— Հարցրեք նրան, հետո ստից խոսեք։

— Էհ, ինչ ուզում ես ասա, ամա էլ չհամարձակվես երեխին կանչել քեզ մոտ։ Ու չկարծես, թե դրանով սիրելի կդառնաս Գրիգորիի համար։ Դու նրա կինը չես լինի, լավ իմանաս։

Ակսինյայի դեմքը մռայլվեց բարկությունից, նա խռպոտ ասաց.

— Լոի, դրա մասին նա քեզ չի հարցնի։ Մի խառնվի ուրիշի գործերի մեջ։

Իլյինիչնան ուզում էր էլի մի բան ասել, բայց Ակսինյան լռությամբ շուռ եկավ, մոտեցավ դույլերին, լծակը արագ առավ ուսին, շտապ գնաց արահետով։

Այդ ժամանակից նա, հանդիպելով Մելեխովներին, նրանցից ոչ մեկին չէր բարևում, սատանայական հպարտությամբ, պնչերը ուռցնելով, անցնում էր նրանց կողքից, բայց որևէ տեղ տեսնելով Միշատկային, երկչոտ նայում էր շուրջը, ու եթե մոտիկում ոչ ոք չէր լինում, վազեվազ մոտենում էր նրան, կռանում ու սեղմում էր կրծքին ու, համբուրելով արևից սևացած նրա ճակատը և մի փոքր մռայլ մելեխովյան սև աչիկները, ծիծաղելով ու լալով, անկապ շշնջում էր. «Ի՜մ հարազատ Գրիգորևիչ, լավի՜կս, ինչքա՜ն էի կարոտել քեզ։ Հիմար է քո մորաքույր Ակսինյան... Ա՜խ ի՜նչ հիմարն է»։ Հետո էլ դողդոջ ժպիտը երկար ժամանակ չէր չքանում նրա շուրթերից, իսկ թրջված աչքերը շողում էին երջանկությունից, ինչպես ջահել աղջկա աչքերը։

Օգոստոսի վերջին Պանտելեյ Պրակոֆևիչը մոբիլիզացիայի ենթարկվեց։ Միաժամանակ նրա հետ Տատարսկից ռազմաճակատ գնացին զենք կրելու ընդունակ բոլոր կա-

զակները։ Խուտորում տղամարդկանցից մնացին միայն հաշմանդամները, անչափահասները և զառամած ծերունիները։ Մոբիլիզացիան ընդհանուր էր և բժշկական հանձնաժողովները ոչ ոքի չէին ազատում, բացի ակնհայտնի հաշմանդամներից։

Պանտելեյ Պրակոֆևիչը խուտորի ատամանից հրաման ստանալով հավաքակետ ներկայանալու մասին, շտապ հրաժեշտ տվեց պառավին, թոռներին ու Դունյաշկային, տընքտընքալով ծունկ չոքեց, երկու անգամ երկրպագեց, խաչակնքեց սրբապատկերների առաջ ,ասաց.

— Մնաք բարով, սիրելիներս։ Կարելի է թե էլ չտեսնվենք, երևի հասել է վերջին ժամը։ Ես ձեզ այ թե ինչ պատվեր եմ տալի. գիշեր-ցերեկ կալսեք հացը, աշխատեք վերջացնել մինչև անձրևները։ Թե որ հարկավոր լինի մարդ վարձեք, որ օգնի ձեզ։ Թե որ մինչև աշուն չվերադառնամ, կառավարվեցեք առանց ինձ. աշնան հերկ արեք ինչքան որ կարող եք, գոնե մի դեսյատին հաց ցանեցեք։ Տես, ա՛ կընիկ, գործը խելքով կտանես, թևաթափ չլինես։ Ես ու Գրիգորին կվերադառնանք թե չէ, մեկ է, հացը ձեզ շատ հարկավոր կլինի։ Պատերազմ է, ամա առանց հացի ապրելը տրխուր կլինի։ Էհ, աստված պահի ձեզ։

Իլյինիչնան ծերունուն ուղեկցեց մինչև հրապարակը, վերջին անգամ նայեց, թե նա ինչպես է խրիստոնյայի կողքին շտապ, կաղ-կաղ քայլում սայլի ետևից, հետո էլ գոգնոցով սրբեց ուռած աչքերը և առանց ետ նայելու գնաց տուն։ Կալում նրան սպասում էր ցորենի չկալսած օրանը, վառարանի մեջ կաթ էր դրված, երեխաները առավոտից չէին կերակրվել, պառավը հազար ու մի հոգս ու ցավ ուներ ու շտապում էր տուն առանց կանգ առնելու, լուռ բարևելով հանդիպող կանանց, խոսակցության չբռնվելով ու միայն գլխով դրական պատասխան էր տալիս, երբ ծանոթներից մեկն ու մեկը ցավակցությամբ հարցնում էր. «Մարդուդ ճամփո՞ւ դրեցիր, հա՞»։

Մի քանի օրից հետո Իլյինիչնան վաղ առավոտյան կթելով կովերը, դրանք դուրս քշեց դեպի նրբանցքը և հենց նոր էր ուզում վերադառնալ տուն, երբ լսեց հեռավոր խուլ

որոտմունք։ Նայելով վերև, նա երկնքում ոչ մի ամպ չտեսավ։ Մի քիչ հետո որոտմունքը կրկնվեց։

— Լսո՞ւմ ես երաժշտությունը, տատի,— հարցրեց նախիրը հավաքող ծեր նախրապանը։

— Ի՞նչ երաժշտություն։

— Հրեն, որ մենակ բասերն են երգում։

— Լսելը լսում եմ, ամա չեմ հասկանում, թե ինչ բան է։

— Շուտով կհասկանաս։ Հենց որ սկսեն այն կողմից խուտորին խփել, միանգամից կհասկանաս։ Թնդանոթ են կրակում։ Մեր բիձաների փոր ու փսորն են թափում...

Իլյինիչնան խաչակնքեց, լուռ մտավ բակը։

Այդ օրվանից չորս օր անդադար հնչում էր թնդանոթային որոտմունքը։ Վաղ առավոտները առանձնապես պարզ էր լսվում։ Բայց երբ փչում էր հյուսիս-արևելյան քամին, հեռավոր մարտերի որոտմունքը կեսօրին էլ էր լսվում։ Կալերում մի բոպե կանգ էր առնում աշխատանքը, կնանիքը խաչակնքում էին, ծանր հառաչում՝ հիշելով հարազատներին, աղոթքներ մրմնջալով, հետո էլ կալերում վերստին դղրդում էին քարե գլոգոնները, ձիերն ու եզները քշող տղաները ճվճվում էին դրանց վրա, դղրդում էին քամհարները, աշխատանքային օրը ընթանում էր սովորական կարգով։ Օգոստոսի վերջին եղանակը հիանալի, չոր էր։ Քամին խուտորով մեկ ցրիվ էր տալիս մղեղի փոշին, տարածված էր կալսած տարեկանի ծղնոտի քաղցր բույրը, արևը կիզում էր անողորմաբար, բայց արդեն ամեն ինչում զգացվում էր աշնան մոտենալը։ Արոտավայրերում աղոտ կերպով սպիտակին էր տալիս թառամած, գորշ-կապտավուն օշինդրը, Դոնի մյուս կողմում դեղնել էին բարդիների գագաթները, այգիներում ավելի թունդ էր բուրում անտոնովկա խնձորը, աշնանային պայծառությամբ էին պարուրվել հեռավոր հորիզոնները, և ամայացած դաշտերում արդեն երևում էին չվող կռունկների առաջին երամները։

Հետմանական ճանապարհով օրեցօր արևմուտքից դեպի արևելք էին գնում գումակները, որոնք ռազմամթերք էին տանում Դոնի անցման տեղերը։ Դոնի շրջակա խուտորներում փախստականներ երևացին։ Նրանք պատմում էին, թե

կազակները նահանջում են կռվելով, ոմանք հավատացնում էին, որ իբր թե այդ նահանջը դիտմամբ է կատարվում, որպեսզի կարմիրներին դեպի առաջ քաշեն, հետո էլ նրանց շրջապատեն ու ոչնչացնեն։ Տատարցիներից ոմանք կամաց-կամաց սկսեցին պատրաստվել մեկնելու։ Ուժեղացրած կեր էին տալիս եզներին ու ձիերին, գիշերները հորում էին հացը, ամենաարժեքավոր գույքով լցված սնդուկները։ Առժամանակ դադարած թնդանոթային դղրդյունը սեպտեմբերի 5-ին վերսկսվեց նոր թափով, և հիմա արդեն պարզ ու ահարկու էր լսվում։ Մարտերը տեղի էին ունենում Դոնից մի քառասուն վերստ հեռավորությամբ, Տատարսկի հյուսիս արևելյան կողմերում։ Մեկ օրից հետո թնդանոթները որոտացին նաև Դոնի վերին կողմերում, արևմուտքում։ Ռազմաճակատը անխափանելիորեն մոտենում էր Դոնին։

Գիտենալով, որ խուտորցիների մեծամասնությունը պատրաստվում է նահանջելու, Իլյինիչնան Դունյաշկային առաջարկեց մեկնել։ Նա շփոթմունքի և տարակուսանքի ըզգացում էր ապրում և չգիտեր ինչ անի տնտեսությունը, տունը. արդյո՞ք հարկավոր է թողնել այդ ամենը և մեկնել ուրիշների հետ, թե՞ մնալ տանը։ Պանտելեյ Պրակոֆևիչը ռազմաճակատ մեկնելուց առաջ խոսել էր կալսի, աշնանահերկի, անասունների մասին, բայց ոչ մի խոսք չէր ասել, թե ինչ պիտի անել, եթե ռազմաճակատը մոտենա Տատարսկիին։ Իլյինիչնան համենայն դեպս այսպես որոշեց. խուտորցիներից մեկն ու մեկի հետ ուղարկել Դունյաշկային, երեխաներին և ամենաարժեքավոր գույքը, իսկ ինքը կմնա նույնիսկ այն դեպքում, եթե կարմիրները գրավեն խուտորը։

Սեպտեմբերի լույս 17-ի գիշերը Պանտելեյ Պրակոֆևիչը անսպասելի կերպով տուն եկավ։ Նա Կազանսկայա ստանիցայի մերձակայքից եկել էր ոտով, հոգնած էր, չարացած։ Մի կես ժամ հանգստանալով սեղան նստեց ու սկսեց այնպիսի ագահությամբ ուտել, որպիսին Իլյինիչնան չէր տեսել իր ամբողջ կյանքում. ամբողջովին խպշտեց կես դույլանոց չուգունով պասուց շչին, հետո էլ հարձակվեց կորեկաձավարի կաշայի վրա։ Իլյինիչնան զարմանքից ձեռքերն իրար զարկեց.

— Տեր աստված, ախր ո՞նց ես ուտում, Պրակոֆիչ։ Ասես երեք օր բան չես կերել։

— Իսկ դու կարծում ես կերե՞լ եմ, անխելք պառավ, հենց երեք օր է, որ բերանս բան չեմ դրել։

— Ո՞նց թե, բա այնտեղ ձեզ չե՞ն կերակրում։

— Գրրո՛ղը նրանց այդպես կերակրի,— կատվի պես մռռալով, լիքը լցված բերանով պատասխանեց Պանտելեյ Պրակոֆիչը։— Ինչ որ գտնես, այն էլ կլափես, իսկ ես հլա գողանալու սովոր չեմ։ Դա ջահելների շնորհքն է, նրանց մեջ իսկի խիղճ չի մնացել... Այս անիծված պատերազմի ժամանակ նրանք այնպես են վարժվել գողության մեջ, որ ես ուղղակի սարսափում էի։ Ինչ որ տեսնում են, վերցնում են, գողանում, քարշ են տալիս... Ոչ թե պատերազմ է, այլ աստծու պատիժ։

— Դու միանգամից շատ մի ուտի։ Կարող է քեզ հետ մի բան պատահել։ Տես թե ոնց ես ուռել, տիկ ես դառել։

— Ձենդ կտրի։ Կաթ բեր մեծ կճուճով։

Նայելով սովահար եղած իր ամուսնուն, Իլյինիչնան նույնիսկ լաց եղավ։

— Դու բոլորովի՞ն ես եկել, թե ինչ,— հարցրեց նա, երբ Պանտելեյ Պրակոֆիչը արդեն կերել էր կաշան։

— Կտեսնենք, էլի՛...— խուսափուկ պատասխանեց նա։

— Ուրեմն ձեզ, ծերունիներին տո՞ւն են թողել։

— Ոչ ոքի տուն չեն թողել։ Ո՞նց թողնեն, երբ կարմիրները արդեն Դոնին են մոտենում։ Ես ինքս եկա։

— Բա դրա համար դու պատասխան չե՞ս տա,— վախենալով հարցրեց Իլյինիչնան։

— Թե որ բռնեն, գուցեև պատասխան տամ։

— Ուրեմն թաքնվելո՞ւ ես, ինչ է։

— Բա դու կարծում ես երգ ու պարի՞ պիտի վազ տամ, կամ հյո՞ւր գնամ։ Թյո՛ւ, դդում գլուխ.— Պանտելեյ Պրակոֆիչը բարկացած թքեց, բայց պառավը չէր զսպվում.

— Օֆ, վա՛յ մեզ, գլխներիս փորձանք կգա, կսկսեն քարշ տալ քեզ...

— Ավելի լավ է այստեղ բռնեն ու բանտ նստեցնեն, քան հրացանով քարշ գամ այնտեղ, տափաստաններում.—

հոգնածորեն ասաց Պանտելեյ Պրակոֆիչը,— ես ջահել տղա չեմ, որ օրական քառասուն վերստ թռչեմ, խրամատներ փորեմ, գրոհի գնամ, գետնի վրա սողամ ու թաքնվեմ գնդակներից։ Սատանեն էլ չի ազատվի դրանցից։ Կրիվայա Ռեչկայից մեկը կար, առաջ ծառայել էր ինձ հետ. գնդակը կպավ նրա ձախ թիակից ցած, նա ընկավ ու իսկի ոտներն էլ չշարժեց։ Ի՞նչ դուրեկան բան կա այդ գործում։

Ծերունին հրացանը և փամփուշտներով լցված փամփշտանոցը տարավ ու թաքցրեց հարդանոցում, իսկ երբ Իլյինիչնան հարցրեց թե ուր է նրա կապան,— նոթոտ ու դժկամ պատասխանեց.

— Կերել եմ։ Ավելի ճիշտ ասած՝ դեն եմ գցել։ Շումիլինսկայա ստանիցայի մոտերքում մեզ այնպես հուպ տվին, որ ամեն բան թողինք փախանք գժվածի պես։ Այնտեղ էլ ո՞վ գլուխ ուներ կապայի հետ... Ոմանք կիսամուշտակներ ունեին, դրանք էլ թողին... Ինչի՞դ է պետք կապան, ինչի՞ դա միտդ բերիր։ Կապան էլ հո լավը չէր, այնպես, էլի, աղքատի հագուստ էր։

Իրոք այդ կապան լավն էր, նոր էր, բայց այն ամենը, որից զրկվում էր ծերունին, նրա ասելով անպետք էր։ Իրեն սփոփելու այսպիսի սովորություն ուներ նա։ Իլյինիչնան գիտեր այդ, դրա համար էլ չվիճեց կապայի որակի մասին։

Գիշերը ընտանեկան խորհրդում որոշեցին, որ Իլյինիչնան ու Պանտելեյ Պրակոֆիչը մինչև վերջ կմնան տանը, կպահպանեն գույքը, կալսած հացը կհորեն, իսկ Դունյաշկային մի լուծ եզով ու սնդուկներով կուղարկեն ազգականների մոտ, դեպի Ջիր, Լատիշև խուտորը։

Այդ պլաններին վիճակված չէր լրիվ չափով իրագործվել։ Առավոտյան ճանապարհեցին Դունյաշկային, իսկ կեսօրին Տատարսկի մտավ Սալսկի կազակ-կալմիկներից բաղկացած պատժիչ ջոկատը։ Երևի խուտորցիներից մեկն ու մեկը տեսել էր տուն եկած Պանտելեյ Պրակոֆիչին. պատժիչ ջոկատը խուտոր մտնելուց մեկ ժամ անց շորս կալմիկ ձիհրով եկան Մելեխովների տունը։ Տեսնելով ձիավորներին, Պանտելեյ Պրակոֆիչը զարմանալի արագությամբ ու ճարպկությամբ բարձրացավ չարդախը. Իլյինիչնան դուրս ելավ եկվորներին դիմավորելու։

— Որտե՞ղ է քո ալևորը,— հարցրեց տարիքավոր, գեղահասակ, ավագ ուրյադնիկի ուսադիրներով մի կալմիկ՝ իջնելով ձիուց և Իլյինիչնայի կողքից մտնելով բակը։

— Ֆրոնտումն է, էլ որտե՞ղ պիտի լինի,— կոպիտ պատասխանեց Իլյինիչնան։

— Տար մեզ տուն, պիտի խուզարկենք։

— Ի՞նչ կա խուզարկելու։

— Քո ծերուկին պիտի փնտրեմ։ Ա՛յ, բա ամոթ չի՞. պառավ կնիկ ես ու սուտ ես խոսում,— կշտամբանքով գլուխն օրորելով, ռուսերեն կոտրատելով ասաց կորովի ուրյադնիկը ու ցույց տվեց խիտ, սպիտակ ատամները։

— Դու ատամներդ մի ցույց տա, մունտուրիկ։ Քեզ ասում են չկա, ուրեմն չկա։

— Մի վովոա, տար մեզ տուն, թե չէ մենք ինքներս կըգնանք,— խստորեն ասավ նեղացած կալմիկը և վճռականորեն քայլեց դեպի արտաքին սանդուղքը՝ լայն-լայն դնելով ծուռ ոտները։

Նրանք մանրակրկիտ կերպով զննեցին սենյակները, իրար մեջ խոսեցին կալմիկական լեզվով, հետո երկուսը գնացին զննելու բակի շենքերը, իսկ մեկը, որ ցածրահասակ էր, սևության չափ թուխ, շեշտ դեմքով ու տափակ քթով, վեր քաշեց լամպասներով զարդարված լայն շալվարը, դուրս ելավ հաշտը։ Իլյինիչնան բաց դռնից տեսավ, թե ինչպես կալմիկը վեր ցատկեց, բռնեց շեղագերանից ու ճարպկությամբ վերև բարձրացավ։ Հինգ րոպեից հետո նա նույնպես ճարպիկ կերպով ցած թռավ, նրա ետևից, տնքտնքալով, զգուշությամբ իջավ Պանտելեյ Պրակոֆևիչը, որ ամբողջովին կավոտել էր, մորուքի վրա էլ սարդի ոստայն էր նստել։ Նայելով շրթունքները պինդ սեղմած պառավին, նա ասաց.

— Անիծվածները գտան, էլի՛։ Ուրեմն մեկն ու մեկը մատնել էր...

Պանտելեյ Պրակոֆևիչին ուղեկցուրդի հսկողության տակ ուղարկեցին Կարգինսկայա ստանիցան, ուր գտնվում էր ռազմա-դաշտային դատարանը, իսկ Իլյինիչնան մի քիչ լաց ու կոծ արեց, ու ականջ դնելով վերսկսված թնդանոթային որոտմունքին և Դոնի մյուս կողմից եկող գնդացրային ճարճատյունին, գնաց ամբար, որ դոնե մի քիչ հաց թաքցնի։

XXII

Բռնված տասնչորս դասալիքները դատի էին սպասում։ Դատը կարճատև ու անողորմ էր։ Զառամած մի յասավուլ, որ նախագահում էր նիստերում, հարցնում էր դատվողի ազգանունը անունը, հայրանունը, աստիճանը և զորամասի համարը, իմանում էր, թե դատվողը որքան ժամանակ է փախած եղել, այնուհետև ցածր ձայնով մի քանի ֆրազ էր փոխանակում դատարանի անդամների,— թևը կտրած մի խորունժիի ու ձրիակերությունից տոզած, երկարաբեղ ու փափկամոութ մի վախմիստրի հետ,— և հայտարարում էր դատավճիռը։ Դասալիքների մեծամասնությունը ենթարկվում էր մարմնական պատժի,— ճիպոտահարության, որը տեղի էր ունենում այդ նպատակին հատկացված անբնակելի մի շենքում, կալմիկների ձեռքով։ Զափազանց շատ էին Դոնի ռազմամոլ բանակի դասալիքները, այնպես որ հնարավոր չէր նրանց ճիպոտահարել բացահայտ կերպով, հրապարակավ, ինչպես այդ լինում էր 1918 թվականին...

Կանչեցին Պանտելեյ Պրակոֆևիչին,— նա վեցերորդն էր։ Հուզված ու գունատ կանգնեց նա դատավորների սեղանի առաջ, թևերը ուղիղ կախած։

— Ազգանո՞ւնդ,— հարցրեց յասավուլը՝ առանց նայելու դատվողին։

— Մելեխով, ձերդ բարեծննդություն։

— Անո՞ւնդ, հայրանո՞ւնդ։

— Պանտելեյ Պրակոֆև, ձերդ բարեծննդություն։

Յասավուլը թղթերից բարձրացրեց աչքերը, զննողաբար նայեց ծերունուն։

— Դուք ո՞րտեղացի եք։

— Վեշենսկայա ստանիցայի Տատարսկի խուտորից, ձերդ բարեծննդություն։

— Դուք Մելեխով Գրիգորիի՝ հարյուրապետի, հայրը չե՞ք։

— Ճիշտ այդպես, հայրն եմ, ձերդ բարեծննդություն.— Պանտելեյ Պրակոֆևիչը միանգամից աշխուժացավ, զգալով, որ ճիպոտը կարծես թե չի դաղելու իր ծեր մարմինը։

— Լսեցեք, բա չե՞ք ամաչում,— հարցրեց յասավուլը՝ ծակող աչքերը չկտրելով Պանտելեյ Պրակոֆևիչի նիհարած դեմքից։

Պանտելեյ Պրակոֆևիչը այստեղ խախտելով կանոնագիրքը, ձախ ձեռքը դրեց կրծքին, լացակումած ձայնով ասավ.

— Ձերդ բարեծննդություն, պարոն յասավուլ։ Ստիպեք, որ ես ձեզ համար միշտ աղոթեմ աստծուն,— մի՛ հրամայեք, որ ինձ թակեն։ Ես երկու ամուսնացած տղա ունեմ... մեծ տղիս սպանեցին կարմիրները... Թոռներ ունեմ, բա ո՞նց կարելի է ձաղկել ինձ, փտած ալևորիս։

— Մենք ալևորներին էլ ենք սովորեցնում, թե ինչպես պետք է ծառայել։ Իսկ դու կարծում էիր, թե զորամասից փախչելու համար քեզ խա՞չ կտան,— ընդհատեց նրան թևը կտրած խորունժին։ Նրա բերանի անկյունները ջղայնորեն ցնցվեցին։

— Խաչը էլ ի՞նչ պիտի անեմ... Ինձ ուղարկեցեք զորամաս, կծառայեմ հավատով և ճշմարտությամբ... Ես ինքս էլ չգիտեմ, թե ոնց փախա. կարելի է սատանեն մոլորեցրեց... Պանտելեյ Պրակոֆևիչը անկապ կերպով էլի ինչ-որ բաներ ասաց կիսատ մնացած կալսի, իր կարողության, անտեր մնացած տնտեսության մասին, բայց յասավուլը ձեռքի շարժմամբ նրան ստիպեց լռել, թեքվեց դեպի խորունժին ու ինչ-որ երկար շշնջաց նրա ականջին։ Խորունժին գլխով դրական շարժում արեց, ու յասավուլը դարձավ դեպի Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Լավ։ Դուք ամեն ինչ ասացի՞ք։ Ես ճանաչում եմ ձեր որդուն և զարմանում եմ, որ նա այդպիսի հայր ունի։ Ե՞րբ եք փախել զորամասից։ Մի շաբաթ առա՞ջ։ Դուք ուզում եք, որ կարմիրները գրավեն ձեր խուտորը և քերթե՞ն ձեր կաշին, հա՞։ Այդպիսի օրինա՞կ եք ցույց տալիս երիտասարդ կազակներին։ Օրենքով մենք պետք է ձեզ դատենք և մարմնական պատժի ենթարկենք, բայց, հարգելով ձեր որդու սպայական աստիճանը, ես ձեզ ազատում եմ այդ խայտառակությունից։ Դուք շարքայի՞ն էիք։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծննդություն։

— Ձեր աստիճա՞նը։

— Կրտսեր ուրյադնիկ էի, ձերդ բարեծննդություն։

— Հանե՛լ թելերը։— Անցնելով «դու»-ի, յասավուլը բարձրացրեց ձայնը, կոպիտ հրամայեց.— Հենց հիմա գնա զորամաս։ Զեկուցիր հարյուրյակի հրամանատարին, որ ռազմա-դաշտային դատարանի վճռով դու զրկված ես ուրյադնիկի կոչումից։ Այս կամ անցյալ պատերազմների համար պարգևներ ունեցե՞լ ես... Գնա՛։

Ուրախությունից ինքն իրեն մոռացած Պանտելեյ Պրակոֆևիչը դուրս եկավ, խաչակնքեց եկեղեցու գմբեթի կողմը և... բլուրի վրայով, ճանապարհազուրկ տեղերով գնաց տուն։ «Հիմի ես էլ այնպես չեմ թաքնվի. ոտնե՛րս կգտնեն, թեկուզ երեք հարյուրյակ կալմիկներ ուղարկեն»,— մտածում էր նա՝ կաղ-կաղ քայլերով վազուց հնձած արտերում, որտեղ խոզանը աշնանային կանաչով էր պատած։

Տափաստանում նա որոշեց, որ անցորդների ուշադրությունը չգրավելու համար ավելի լավ է ճանապարհով գնալ։ «Հլա դեռ կարող են մտածել, թե ես դասալիք եմ։ Մեկ էլ տեսար մեծավորների ճանկը ընկար, ու առանց դատի մտրակ ուտեցրին»,— լսելի ձայնով դատողություններ էր անում նա՝ շուռ գալով հերկած դաշտից դեպի ամառային, լքած, ջղախոտով պատած ճանապարհը և չգիտես ինչու այլևս իրեն դասալիք չէր համարում։

Որքան նա մոտենում էր Դոնին, այնքան ավելի հաճախ էին հանդիպում փախստականների սայլերը։ Կրկնվում էր այն, ինչ որ եղել էր գարնանը, երբ ապստամբները նահանջում էին Դոնի ձախ կողմը. տափաստանով մեկ ամեն ուղղությամբ ձգվել էին տնային իրերով բեռնված սայլերն ու բրիչկաները, գնում էին բառաչող անասունների նախիրները, փոշի էին բարձրացնում ոչխարների հոտերը, ասես երթում գտնվող հեծելազոր լինեին... Անիվների ճռճռոցը, ձիերի վրնջյունը, մարդկանց կանչերը, բազմաթիվ կճղակների ու սմբակների դոփյունը, ոչխարների մայունը, երեխաների լացը,— այս ամենը անլռելի ու տագնապալից աղմուկով էր լցրել տափաստանի անդորր տարածությունները։

— Ո՞ւր բարով, ա՛յ պապի։ Ետ գնա, մեր ետևից կարմիրներն են գալի,— անցնող սայլի վրայից բղավեց գլուխը վիրակապով փաթաթած, անծանոթ մի կազակ։

— Փչում ես, էլի՛։ Ո՞րտեղ են նրանք, կարմիրները.— Պանտելեյ Պրակոֆևիչը շփոթված կանգ առավ։

— Դոնի մյուս կողմումն են։ Մոտենում են Վեշկիին։ Իսկ դու նրանց մո՞տ ես գնում։

Սիրտը հանգստացնելով, Պանտելեյ Պրակոֆևիչը շարունակեց ճանապարհը և իրիկնադեմին մոտեցավ Տատարսկուն։ Իջնելով սարից, նա ուշադրությամբ նայում էր դեպի առաջ։ Խուտորը նրան ապշեցրեց մարդկանց բացակայությամբ։ Փողոցներում ոչ ոք չկար։ Լուռ կանգնած էին լքած, պատուհանների փեղկերը ծածկված տները։ Ոչ մարդկային ձայն էր լսվում, ոչ էլ անասունների բառաչ. միայն Դոնի ափին աշխուժությամբ մարդիկ էին շարժվում։ Մոտենալով, Պանտելեյ Պրակոֆևիչը առանց դժվարության ճանաչեց զինված կազակներին, որոնք ջրից նավակներ էին դուրս քաշում ու տանում խուտոր։ Բնակիչները հեռացել էին Տատարսկից, դա պարզ էր Պանտելեյ Պրակոֆևիչի համար։ Զգուշությամբ մոտենալով իրենց նրբանցքը, նա քայլեց դեպի տուն։ Իլյինիչնան ու երեխաները նստած էին խոհանոցում։

— Օ-օ՛, պապին եկավ,— ուրախացած բացականչեց Միշատկան՝ ընկնելով պապի վիզը։

Իլյինիչնան ուրախությունից լաց եղավ, արտասվելով ասաց.

— Չէի սպասում, որ քեզ կտեսնեմ։ Է՛հ, Պրակոֆիչ, ինչ ուզում ես ասա, ես համաձայն չեմ էլի մնալ այստեղ։ Թող ամեն բան վառվի, միայն թե ես չեմ հսկի դատարկ տունը։ Համարյա բոլորն էլ գնացել են խուտորից, իսկ ես երեխաների հետ նստել եմ հիմարի պես։ Հենց հիմի ձին լծի, գնանք ուր որ պտահի։ Քեզ բա՞ց թողին։

— Բաց թողին։

— Բոլորովի՞ն։

— Բոլորովին, մինչև բռնվելս...

— Է-է՛, դու այստեղ չես կարող թաքնվել։ Այսօր առավոտ կարմիրները այնպես էին կրակում Դոնի մյուս կողմից, որ ուղղակի սարսափելի էր։ Քանի դեռ շարունակվում էին տրաքոցները, ես երեխաների հետ նստել էի մառանում։ Հիմի նրանց դեն են քշել։ Կազակներ էին գալի, կաթ էին խնդրում ու խորհուրդ էին տալի գնալ այստեղից։

— Այդ կազակները մեր խուտորից չէի՞ն,— հետաքրքրվեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ ուշադրությամբ դիտելով պատուհանի շրջանակի մեջ գնդակի նոր բացած ծակը։

— Չէ, ուրիշ կազակներ էին, կարծեմ Խոպերից։

— Ուրեմն պետք է գնալ,— հոգոց հանելով ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Երեկոյան նա տարթանոցում հոր փորեց, յոթ ջվալ ցորեն տեղավորեց այնտեղ, ջանադրությամբ ծածկեց հողով ու վրան տարթ կուտակեց ու, հենց որ մութն ընկավ, ձին լծեց սայլակին, բարձեց երկու մուշտակ, մի պարկ ալյուր, կորեկաձավար, կապված մի ոչխար, երկու կովը պարաններով կապեց սայլի ետևից, ու Իլյինիչնային և երեխաներին նստեցնելով սայլակին, ասաց.

— Դեհ, հիմի գնացինք։— Սայլակը բակից դուրս քշեց, երասանները տվեց պառավին, ծածկեց դարպասը, ու մինչև բլուրը խնչում էր և չեքմենի թևքով սրբում արցունքները՝ քայլելով սայլի կողքից։

XXIII

Շորինի հարվածային խմբի զորամասերը սեպտեմբերի 17-ին երեսուն վերստ տարածություն անցնելով, ընդհուպ մոտեցան Դոնին։ 18-ի առավոտից կարմիր մարտկոցները որոտում էին Մեդվեդիցայի գետաբերանից մինչև Կազանսկայա ստանիցան։ Հրետանային կարճատև նախապատրաստությունից հետո հետևազորը գրավեց առափնյա խուտորները և Բուկանովսկայա, Ելանսկայա, Վեշենսկայա ստանիցաները։ Օրվա ընթացքում Դոնի ձախ ափը ավելի քան հարյուր հիսուն վերստ տարածությամբ մաքրվեց սպիտակներից։ Կազակական հարյուրյակները նահանջեցին կարգով, անցան Դոնը ու գրավեցին վաղօրոք պատրաստված դիրքերը։ Գետանցման բոլոր միջոցները նրանց ձեռքի տակ էին, իսկ Վեշենսկու կամուրջը քիչ մնաց գրավվեր կարմիրների կողմից։ Կազակները կամրջի մոտ նախօրոք ծղնոտ դարսեցին ու կամրջի փայտե երեսքին նավթ լցրին, որպեսզի նահանջելիս վառեին, և արդեն պատրաստվում էին վառելու, երբ ժամանեց մի կապավոր և հաղորդեց, որ 37-րդ գնդի

հարյուրյակներից մեկը Պերևյազնի խուտորից գալիս է Վեշենսկայա, դեպի գետանցքը։ Ետ մնացած հարյուրյակը քառատրոփով մոտեցավ կամրջին այն պահին, երբ կարմիր հետևակը արդեն ստանիցա էր մտնում։ Գնդացրային կրակի տակ կազակները այնուամենայնիվ կարողացան անցնել կամրջից և ապա հրկիզել այն՝ կորցնելով ավելի քան տասը մարդ,— որոնք սպանվեցին կամ վիրավորվեցին,— և նույնքան ձիեր։

9-րդ կարմիր բանակի 22-րդ և 23-րդ դիվիզիաների գընդերը մինչև սեպտեմբերի վերջը իրենց ձեռքումն էին պահում Դոնի ձախ կողմում գրաված խուտորները և ստանիցաները։ Հակառակորդներին բաժանում էր գետը, որի առավելագույն լայնությունը այն ժամանակ ութսուն սաժենից ավելի չէր, տեղ-տեղ էլ երեսուն սաժեն կլիներ։ Կարմիրները գետանցման ակտիվ փորձեր չէին ձեռնարկում. տեղ-տեղ նրանք փորձում էին ծանծաղուտներով անցնել Դոնը, բայց ետ էին մղվում։ Ռազմաճակատի ամբողջ տարածության վրա այդ ճակատամասում երկու շաբաթվա ընթացքում հրետանային ու հրացանային աշխույժ փոխհրաձգություն էր տեղի ունենում։ Կազակները գրավել էին տեղանքի վրա իշխող առափնյա բարձունքները, հրակոծում էին հակառակորդի կուտակումները Դոնի մատույցներում, թույլ չտալով, որ նա ցերեկով մոտենա ափին. բայց որովհետև այդ ճակատամասում կազակական հարյուրյակները կազմված էին առավելապես քիչ մարտունակ տարրերից (ծերունիներ և տասնյոթից մինչև տասնինը տարեկան երիտասարդներ), ուստի նրանք իրենք էլ չէին փորձում անցնել Դոնը, ետ մղել կարմիրներին և հարձակում ձեռնարկել գետի ձախ ափում։

Նահանջելով Դոնի աջ կողմը, կազակները առաջին օրը սպասում էին, որ ահա որտեղ որ է կրոցավառվեն կարմիրների գրաված խուտորների խրճիթները, բայց, ի մեծ զարմանս նրանց, գետի ձախ կողմից բոլորովին ծուխ չերևաց. դեռ ավելին. գետի ձախ կողմից գիշերով աջ կողմն անցած բնակիչները հաղորդեցին, որ կարմիրբանակայինները բնակիչների գույքից ոչինչ չեն վերցնում, իսկ վերցրած մթերքների, նույնիսկ ձմերուկների ու կաթի համար առատաձեռնությամբ սովետական փող են վճարում։ Սա կազակների

մեջ շփոթվածություն և մեծագույն տարակուսանք առաջացրեց։ Նրանց թվում էր, որ ապստամբությունից հետո կարմիրները պետք է հրո ճարակ դարձնեին բոլոր ապստամբ խուտորները և ստանիցաները. նրանք սպասում էին, որ բնակչության մնացած մասը, համենայն դեպս տղամարդ բնակչությունը անողոք կերպով կոչնչացվի, բայց հավատի տեղեկությունների համաձայն, կարմիրները խաղաղ բնակիչներից ոչ ոքի ձեռք չէին տալիս, ու ամեն ինչից երևում էր, որ նույնիսկ մտադիր է՛լ չէին վրեժ առնել։

Ամսի լույս 19-ի գիշերը խոպերցի այն կազակները, որոնք Վեշենսկու դիմաց գտնվող ուղեկալումն էին, որոշեցին պարզել հակառակորդի այդչափ տարօրինակ վարքը. ուժեղ ձայն ունեցող մի կազակ ձեռքերը խողովակաձև դրեց բերանին, բղավեց.

— Է՛յ, կարմրափորիկներ, ինչի՞ չեք վառում մեր տները. լուցկի չունե՞ք. լող տվեք-եկեք մեզ մոտ, մենք ձեզ լուցկի կտանք։

Մթության միջից հնչեղ ձայնով նրան պատասխանեցին.

— Ափսոս որ ձեզ տեղնուտեղը չբռնեցինք. թե չէ կվառեինք տների հետ միասին։

— Աղքատացե՞լ եք, վառելու համար կրակ չունե՞ք,— մոլեգնաբար գոռում էր խոպերցին։

Նրան հանգիստ և ուրախ պատասխանեցին.

— Լող տուր եկ այստեղ, սպիտակ բոզ, մենք փոխանիդ մեջ վառած ածուխ կլցնենք, որ տրճիկ տաս ու պար գաս։

Ուղեկալներում երկար հայհոյում և ամեն կերպ խայթում էին իրար, հետո էլ մի քիչ կրակեցին ու սսկվեցին։

Հոկտեմբերի սկզբին Դոնի բանակի հիմնական ուժերը, որոնք քանակով երկու կորպուս էին ու կենտրոնացված էին Կազանսկայա-Պավլովսկ ճակատամասում, հարձակման անցան։ Դոնի 3-րդ կորպուսը, որ իր կազմում ուներ 8000 սվին և ավելի քան 6000 թուր, Պավլովսկի մերձակայքում անցավ Դոնը, ետ մղեց 56-րդ կարմիր դիվիզիան ու սկսեց հաջողությամբ առաջ շարժվել դեպի արևելք։ Շուտով Դոնն անցավ նաև Կոնովալովի 2-րդ կորպուսը։ Հեծելազորի գերակշռությունը նրան հնարավորություն տվեց սո-

զոսկել հակառակորդի դասավորության խորքերը և մի շարք խորտակիչ հարվածներ հասցնել։ Գործի դրված 21-րդ հրաձիգ կարմիր դիվիզիան, որ մինչ այդ գտնվում էր ռազմաճակատի ռեզերվում, մի փոքր կասեցրեց Դոնի 3-րդ կորպուսի առաջշարժումը, բայց միացած կազակական կորպուսների ճնշման տակ ստիպված էր ետ քաշվել։ Հոկտեմբերի 14-ին կազակական 2-րդ կորպուսը կատաղի մարտում ջախջախեց և գրեթե ամբողջովին ոչնչացրեց 14-րդ կարմիր հրաձգային դիվիզիան։ Մի շաբաթվա ընթացքում կարմիրները Դոնի ձախ ափից ետ մղվեցին ընդհուպ մինչև Վեշենսկայա ստանիցան։ Լայն ռազմադաշտ գրավելով, կազակական կորպուսները Լուզևո—Շիրինկին—Վորոբյովկա ռազմաճակատում ետ մղեցին 9-րդ կարմիր բանակի զորամասերը, 9-րդ բանակի 23-րդ դիվիզիային ստիպեցին հապճեպորեն վերակազմել ռազմաճակատը արևմտյան ուղղությամբ, Վեշենսկուց դեպի Կրուգլովսկի խուտորը։

Գեներալ Կոնովալովի 2-րդ կորպուսի հետ գրեթե միաժամանակ իր ճակատամասում Դոնն անցավ նաև Դոնի 1-ին կորպուսը, որ գտնվում էր Կլեցկայա ստանիցայի շրջանում։

Ձախ թևի 2-րդ և 3-րդ կարմիր դիվիզիաները շրջապատման սպառնալիքի տակ էին գտնվում։ Հաշվի առնելով այդ, հարավ-արևելյան ռազմաճակատի հրամանատարությունը 9-րդ բանակին հրամայեց ետ քաշվել Իկորեցի գետաբերանում — Բուտուրլինովկա—Ուսպենսկայա—Տիշանսկայա—Կումիլժենսկայա ռազմաճակատը։ Սակայն բանակին չհաջողվեց դիմանալ այդ գծի վրա։ Ընդհանուր մոբիլիզացիայով հավաքված թվաշատ և ցաք ու ցրիվ կազակական հարյուրյակները անցան Դոնի ձախ ափը ու միանալով կազակական 2-րդ կորպուսի կանոնավոր զորամասերին, շարունակեցին այդ բանակը շեշտակի քշել դեպի հյուսիս։ Հոկտեմբերի 24-ից մինչև 29-ը սպիտակները գրավեցին Ֆիլոնովո, Պովորինո կայարանները և Նովոխոպերսկ քաղաքը։ Սակայն, որքան էլ մեծ էին Դոնի բանակի հաջողությունները հոկտեմբեր ամսին, այնուամենայնիվ կազակների տրամադրության մեջ արդեն բացակայում էր այն վստահությունը, որ նրանց թևավորում էր գարնանը, երբ նրանք հաղթականորեն առաջ էին գնում դեպի մարզի սահմանները։ Ճակատային մեծամասնությունը հասկանում էր, որ այդ հաջողությունը ժամանակավոր է և որ ձմռանից դենը դիմանալ իրենց չի հաջողվի։

Այն պահից, երբ Ստալինը ժամանեց Հարավային ռազմաճակատ և երբ հարավային կոնտրռևոլյուցիան ջախջախելու վերաբերյալ նրա առաջարկած պլանը (առաջխաղացում Դոնբասի և ոչ թե Դոնի մարզի վրայով)[1] սկսեց իրագործվել, հարավային ռազմաճակատում իրադրությունը խիստ փոխվեց։ Օրյոլ—Կրոմսկ ուղղությամբ եղած գլխավոր ճակատամարտում կամավորական բանակի պարտությունը

---

1 Լենինին ուղարկած իր պատմական նամակի մեջ Ստալինը գրել էր.

«...Օրերս Գլխհրամը դիրեկտիվ տվեց Շորինին հարձակվելու Ցարիցինի շրջանից Նովորոսիյսկի վրա Դոնի տափաստաններով — մի գծով, որով գուցե հարմար լինի թռչել մեր օդաչուներին, բայց արդեն բոլորովին անկարելի կլինի թափառել մեր հետևակին ու հրետանուն։ Հարկ անգամ չկա ապացուցելու, որ այդ ցնորամիտ (ենթադրվող) արշավանքը մեզ թշնամի միջավայրում, քաղաքական ճանապարհազրկության պայմաններում — կատարյալ կրախ է սպառնում մեզ։ Դժվար չէ հասկանալ, որ այդ արշավանքը կազակային ստանիցաների վրա, ինչպես այդ ցույց տվեց մոտիկ անցյալի պրակտիկան, կարող է միայն համախմբել մեր դեմ կազակներին Դենիկինի շուրջը իրենց ստանիցաները պաշտպանելու համար, կարող է միայն Դենիկինին ցուցադրել որպես Դոնի փրկիչ, կարող է միայն կազակների բանակ ստեղծել Դենիկինի համար, այսինքն՝ կարող է միայն ուժեղացնել Դենիկինին։

Հենց դրա համար էլ անհրաժեշտ է այժմ իսկ, առանց ժամանակ կորցնելու, փոխել պրակտիկայով արդեն վերացված հին պլանը, այն փոխարինելով Վորոնեժի շրջանից Խարկով—Դոնեցի ավազանի վրայով դեպի Ռոստով հիմնական հարվածի պլանով։ Նախ, այստեղ մենք կունենանք ո՛չ թե թշնամական, այլ ընդհակառակը — մեզ համակրող միջավայր, որը կհեշտացնի մեր առաջխաղացումը։ Երկրորդ, մենք ստանում ենք կարևորագույն երկաթուղային ցանց (Դոնեցինը) և Դենիկինի բանակը սնող հիմնական զարկերակը՝ Վորոնեժ—Ռոստով գիծը... Երրորդ, այդ առաջխաղացումով մենք Դենիկինի բանակը ճեղքում ենք երկու մասի, որոնցից՝ կամավորականը թողնում ենք Մախնոյին կերակուր, իսկ կազակային բանակներին թիկնանցման սպառնալիքի տակ ենք դնում։ Չորրորդ, մենք հնարավորություն ենք ստանում կազակներին գժտեցնելու Դենիկինի հետ, որը (Դենիկինը) մեր հաջող առաջխաղացման դեպքում կաշխատի կազակային զորամասերը տեղափոխել դեպի արևմուտք, որին կազակների մեծամասնությունը չի համաձայնի... Հինգերորդ, մենք ածուխ ենք ստանում, իսկ Դենիկինը մնում է առանց ածուխի։

Այս պլանն ընդունելու հարցում չի կարելի դանդաղել...»

և Վորոնեժի ճակատամասում Բուդյոննու հեծելազորի փայլուն գործողությունները որոշեցին պայքարի վախճանը. նոյեմբերին Կամավորական բանակը գլորվեց դեպի հարավ՝ մերկացնելով Դոնի բանակի ձախ թևը, ու նրան էլ ստիպեց նահանջել իր հետ։

XXIV

Պանտելեյ Պրակոֆևիչը իր ընտանիքի հետ երկու և կես շաբաթ բարեհաջող կերպով ապրեց Լատիշև խուտորում, ու հենց որ լսեց, թե կարմիրները նահանջել են Դոնից, պատրաստվեց տուն մեկնելու։

Խուտորից մի հինգ վերստ հեռավորությամբ նա վճռական տեսքով իջավ սայլակից, ասավ.

— Էլ համբերություն չունեմ կամաց գնալու։ Այս անիծված կովերի պատճառով չենք կարող ձին յորդա քշել։ Ինչի՞ դրանց տարանք հետներս, է՞։ Դունյաշկա, կանգնեցրու եզները։ Կովերը կապի քո արաբային, իսկ ես ձին վարգով կքշեմ տուն։ Կարելի է հիմի այնտեղ տուն ու տեղից միայն մոխիր է մնացել...

Մեծագույն անհամբերությամբ համակված, նա երեխաներին իր սայլակից նստեցրեց Դունյաշկայի ընդարձակ արաբային, ավելորդ բեռը տեղավորեց դրա վրա ու ձին, վարգով քշելով, արագ, դղրդալից սլացավ խորդուբորդ ճանապարհով։ Զամբիկ ձին մի վերստ անցավ թե չէ՝ քրտնեց. ձիատերը դեռ երբեք այդչափ անողորմ չէր վարվել նրա հետ. ծերունին ձեռքից բաց չէր թողնում մտրակը, անդադար վազեցնում էր ձին։

— Հալից կգցես զամբիկին, ի՞նչ ես դժվածի պես թրոչում,— ասում էր Իլյինիչնան, կառչում սայլակի կողերից, տանջալից կերպով դեմքը կնճռոտում ցնցումներից։

— Մեկ է, սա հո չի գա գերեզմանիս վրա լալու... Դեհ-դեհ, անիծված, մի սրա քրտնելո՛ւն մտիկ... Կարելի է այնտեղ տանից մենակ քոթուկներն են մնացել...— ատամներն իրար սեղմում, մոթմոթում էր Պանտելեյ Պրակոֆևիչը։

Նրա վախը չարդարացավ. տունը անվթար էր, բայց համարյա բոլոր պատուհաններ ջարդված էին, դուռը պոկ-

ված էր ծղխնիներից, պատերը ճաքճքել էին գնդակներից։ Բակում ամեն ինչ լքվածության ու ավերածության տեսք ուներ։ Ախոռի անկյունը բոլորովին փլվել էր արկից, երկրորդ արկը ծանծաղ փոս էր առաջացրել ջրհորի մոտ, քանդել դրա փայտվածքը ու ջարդել, երկու կես արել ջրհորի կոունկը։ Պատերազմը, որից փախչում էր Պանտելեյ Պրակոֆևիչը, ինքն էր եկել նրա տունը, իրենից հետո ավերածության այլանդակ հետքեր թողել։ Բայց տնտեսությանը է՛լ ավելի մեծ վնաս էին պատճառել խոպերցիները, որոնք տեղավորվել էին խուտորում. նրանք տապալել էին գոմի ու բակի ցախե ցանկապատը, խորունկ, մարդաբոյ խրամատներ էին փորել. ավելորդ աշխատանքով չծանրաբեռնվելու համար քանդել էին ամբարի պատերը և գերաններից ծածկ էին շինել խրամատներում. ցրիվ էին տվել քարե ցանկապատը և գնդացիրների համար հրակնատներ սարքել. ոչընչացրել էին կես դեզի չափ խոտ, անտնտեսավարի փչացրել, կերցրել ձիերին. վառել էին ցախե ցանկապատերը և կեղտոտել ամառային ամբողջ խոհանոցը...

Դիտելով տունը և բակի շենքերը, Պանտելեյ Պրակոֆևիչը շշմելուց ձեռքերը տարավ գլխին։ Այս անգամ նրան դավաճանեց կորցրածը արժեքազրկելու իր մշտական սովորությունը։ Սատանան տանի, նա հո չէր կարող ասել, որ իր ունեցած այդ ամբողջ գույքը ոչինչ չարժեր և պետք է ջարդուփշուր արվեր։ Ամբարը հո մի կապա չէր և դրա կառուցումը էժան չէր նստել։

— Ասես ամբարը իսկի չի էլ եղել,— հոգոց հանելով ասաց Իլյինիչնան։

— Ամբարը եղել է, կար...— արագ արձագանքեց Պանտելեյ Պրակոֆևիչը, բայց չվերջացրեց խոսքը, թափ տվեց ձեռքը, գնաց կալը։

Տան խայտաճամուկ, արկաբեկորներից ու գնդակներից ծակծկված պատերը անհաճելի ու ամայի տեսք ունեին։ Սենյակներում սուլում էր քամին, սեղանների, նստարանների վրա հաստ շերտով փոշի էր նստել... Շատ ժամանակ էր պահանջվում այդ բոլորը կարգի բերելու համար։

Պանտելեյ Պրակոֆևիչը հենց մյուս օրը ձիով գնաց ստանիցա և ծանոթ բուժակից դժվարությամբ մի թուղթ վերց-

բեց, որը վկայում էր, թե կազակ Մելեխով Պանտելեյը ոտքի հիվանդության պատճառով ընդունակ չէ հետիոտն երթևեկության և բուժման կարիք է զգում։ Այս վկայականը օգնեց Պանտալեյ Պրակոֆևիչին՝ ազատվելու ռազմաճակատ ուղարկվելուց։ Նա վկայականը ներկայացրեց ատամանին, ու երբ գնում էր խուտորի վարչություն, այդ թուղթը միանգամայն համոզիչ դարձնելու համար հերթով կաղում էր երկու ոտքից։

Տատարսկում կյանքը դեռ երբեք չէր ընթացել այնպես անհանգիստ ու անհեթեթ, ինչպես ընթանում էր նահանջից վերադառնալուց հետո։ Մարդիկ տնետուն էին գնում, փընտրում խոպերցիների վերցրած գույքը, շրջում էին տափաստանում ու ձորակներում՝ որոնելով կորած կովերը։ Հենց որ Տատարսկին հրետանային հրակոծության էր ենթարկվել, առաջին իսկ օրը խուտորի վերին ծայրից չքացել էր երեք հարյուր ոչխարից բաղկացած մի հոտ։ Հովվի ասելով՝ արկերից մեկը պայթել էր արածող հոտի առջևում, ու ոչխարները օրորելով դմակները, սարսափահար փախել էին տափաստան և չքացել։ Դրանց գտան խուտորից քառասուն վերստ հեռու վայրերում, Ելանսկայա ստանիցայի հողում, երբ խուտոր վերադառնալուց հետո արդեն մի շաբաթ էր անցել, իսկ երբ սկսեցին ջոկել բերված ոչխարները, պարզվեց, որ հոտի կեսը օտար, ականջների վրա անծանոթ նշան արված ոչխարներ են, իսկ խուտորի ոչխարներից պակասում էր ավելի քան հիսուն գլուխ։ Մելեխովների բանջարանոցում գտնվեց մի կարի մեքենա, որը պատկանում էր Բոգատիրյովներին, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը իր ամբարի թիթեղը գտավ Անիկուշկայի կալում։ Նույնն էր կատարվում նաև հարևան խուտորներում։ Ու դեռ երկար ժամանակ Դոնի շրջակա մոտիկ և հեռու խուտորների բնակիչները գալիս էին Տատարսկի. ու դեռ երկար ժամանակ մարդիկ իրար հանդիպելիս հարցնում էին. «Հո չեք տեսել շեկո մի կով, ճակատը շալ, ձախ պոզը կոտրված»։ «Պատահմամբ հո ձեզ մոտ չի՞ գտնվում անցած տարվա թուխ գույնի մի աշառ»։

Հավանորեն քիչ չէին այն աշառները, որոնք եփվել էին կազակական հարյուրյակների կաթսաներում կամ շրջիկ խոհանոցներում, բայց հուսադրված անասնատերերը երկար

շափշփում էին տափաստանը, մինչև որ համոզվեցին, որ ամեն մի կորած բան չի գտնվի։

Պանտելեյ Պրակոֆևիչը ծառայությունից ազատվելով, եռանդով կարգի էր բերում շենքերն ու ցանկապատը։ Կալում կանգնած էին չկասլած հացի դեզերը, դրանց մեջ վրխտում էին անկշտում մկները, բայց ծերունին ձեռնամուխ չէր լինում կալսին։ Եվ մի՞թե կարելի էր դրան ձեռնամուխ լինել, երբ բակը առանց ցանկապատի էր, ամբարի հետքն էլ չկար և տնտեսության մեջ ամեն ինչ քայքայման գարշելի տեսք ուներ։ Այն էլ ասած՝ աշնանային եղանակը լավ էր և կարիք չկար շտապեցնել կալսը։

Դունյաշկան և Իլյինիչնան սվաղեցին ու սպիտակացրին տունը, ամեն կերպ օգնում էին Պանտելեյ Պրակոֆևիչին՝ ժամանակավոր ցանկապատ կառուցելու և այլ տնտեսական գործերում։ Մի կերպ ապակի ճարեցին, գցեցին լուսամուտներին, մաքրեցին խոհանոցը, ջրհորը։ Ծերունին ինքն էր իջնում ջրհորը, ու ինչպես երևում է, այնտեղ մրսեց, մի շաբաթ հազում էր, փռշտում, շապիկը թրջվում էր քրտնքից։ Սակայն բավական էր, որ մի անգամ սեղան նստելով նա երկու շիշ տնական օղի խմեր, հետո էլ պառկեր տաք վառարանի վրա, որպեսզի չքանար նրա հիվանդությունը։

Գրիգորիից դարձյալ տեղեկություններ չկային, և միայն հոկտեմբերի վերջին Պանտելեյ Պրակոֆևիչը պատահմամբ իմացավ, որ Գրիգորին միանգամայն ողջ-առողջ էր և իր գնդի հետ գտնվում է Վորոնեժի նահանգում։ Նրան այդ մասին հաղորդեց Գրիգորիի հետ նույն գնդում ծառայող մի վիրավոր, որը անցնում էր խուտորով։ Ծերունին զվարթացավ, ուրախությունից խմեց բուժիչ, կարմիր պղպեղով թրմած տնական օղու վերջին շիշը ու հետո ամբողջ օրը ման էր գալիս սրա-նրա հետ ուրախ խոսելով, ջահել աքլորի պես հպարտ, կանգնեցնում էր յուրաքանչյուր անցորդի, ասում էր.

— Լսե՞լ ես։ Մեր Գրիգորին վերցրել է Վորոնեժը։ Լուր ենք իմացել, թե նոր, բարձր աստիճան է ստացել ու հիմի նորից դիվիզիայի, կարելի է թե կորպուսի հրամանատար է։ Այդ տեսակ կովող ճրագով էլ ման գաս, չես գտնի։ Դե, գիտես, էլի... ծերունին փչում էր, իր ուրախությունը ուրիշին

հայտնելու, պարծենալու, անհաղթահարելի պահանջ էր ըզ-
զում։

— Տղեդ հերոս է, հա՛-ա,— ասում էին նրան խուտոր-
ցիները։

Պանտելեյ Պրակոֆևիչը երջանիկ աչքով էր անում։

— Հը՛մ, ո՞ւմ է քաշել, որ հերոս չլինի։ Ջահել ժամա-
նակս ես էլ, առանց գլուխս գովելու կասեմ, հո նրանից
պակաս չէի։ Անտեր ոտքս չի թողնում, թե չէ ես հիմի էլ
ինձ ամոթով չէի անի։ Դիվիզիայի մասին չեմ ասում, ամա
հարյուրյակը կարգին կկառավարեի։ Թե որ մենք, այս տե-
սակ ծերուկներս, շատ լինեինք ռազմաճակատում, վաղուց
վերցրած կլինեինք Մոսկվան, թե չէ թփթփում են միշտ
մեկ տեղում, իսկի չեն կարենում մուժիկների հախիցը գալ...

Վերջին մարդը, որի հետ Պանտելեյ Պրակոֆևիչը խո-
սեց այդ օրը, ծերունի Բեսխլեբնովն էր։ Սա անցնում էր Մե-
լեխովենց տան կողքից, ու Պանտելեյ Պրակոֆևիչը չմոռա-
ցավ նրան կանգնեցնել։

— Է՛յ, մի քիչ կաց, Ֆիլիպ Ագևիչ։ Բարով տեսանք։ Եկ
մի քիչ խոսենք։

Բեսխլեբնովը մոտեցավ, բարևեց։

— Լսե՞լ ես, թե իմ Գրիշկան ինչ հնարներ է բանեցնում,
հը՞,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Ի՞նչ է որ։

— Օ-օ՜, նրան էլի դիվիզիա են տվել։ Ա՛յ թե ինչ մենծ
զորքի հրամանատար է։

— Դիվիզիա՞։

— Հը՛մ, դիվիզիա։

— Ա՛յ թե ի-ի-ի՞նչ։

— Բա՛ս։ Ուրիշը լիներ, չէին տա, ի՞նչ ես կարծում։

— Բա կտա՞յին։

Պանտելեյ Պրակոֆևիչը ցնծագին նայեց խոսակցին,
շարունակեց իր սրտի համար քաղցր խոսակցությունը։

— Տղես հո ծնվել էր բոլորին արմանք-զարմանք պատ-
ճառելու համար։ Բոլոր խաչերն էլ ունի, դա մեծ բան է,
հա՛-ա։ Քանի՞-քանի անգամ էլ վիրավորվել ու կոնտուզիա
է ստացել։ Ուրիշը լիներ, վաղուց շունչը փչած կլիներ, իսկ
նրա համար դա հեչ բան է, ոնց որ թե սագը ջուրը մտնի ու

դուրս գա։ Չէ, աղբիր, խաղաղ Դոնումը հլա դեռ չեն չքացել
իսկական կազակները։

— Չքանալը չեն չքացել, ամա նրանցից ոնց որ թե շատ
խեր չկա,— մտազբաղ ասաց Բեսխլեբնով պապին, որ
առանձնապես աչքի չէր ընկնում զրուցասիրությամբ։

— Է-է՛, ոնց թե շատ խեր չկա։ Մտիկ արա, թե ոնց են
քշել կարմիրներին, արդեն Վորոնեժից դեռն են անցել, Մոս-
կովին են մոտենում։

— Երկար ժամանակ է, որ մոտենում են...

— Շուտ չի կարելի, Ֆիլիպ Ագևիչ։ Դու լավ միտք արա,
պատերազմումը ոչ մի բան շտապ չի արվում։ Շտապողի
գործը գլուխ չի գա։ Այստեղ ամեն բան պետք է անել կա-
մաց-կամաց, քարտեզներով, նրանց այդ զանազան պլաններ-
ով... Ռուսաստանումը մուժիկներին թիվ չկա, իսկ մենք,
կազակներս որքա՞ն կլինենք. մի բուռ, էլի՛։

— Այդ դրուստ է, ամա մերոնք դժվար թե երկար դիմա-
նան։ Զմռանը էլի պետք է հյուրերի սպասել, ժողովրդի մեջ
այդպես են ասում։

— Թե որ հիմի մերոնք նրանցից Մոսկովը չվերցնեն,
նրանք կգան այստեղ, դու իսկությունն ես ասում։

— Կարծում ես կվերցնե՞ն։

— Պետք է որ վերցնեն, դե, աստծու բանն է։ Մի՞թե մե-
րոնք չեն կարենա։ Կազակական ամբողջ տասներկու զոր-
քը ոտքի է ելել, ու չպիտի՞ կարենան վերցնել։

— Դե, ո՛վ գիտի։ Դու կովեցիր-պրծա՞ր, թե ոնց։

— Ես ի՞նչ կովող եմ որ։ Թե որ ոտքիս ցավը չլիներ, ես
նրանց ցույց կտայի, թե ոնց պետք է կռվել թշնամու հետ։
Մենք, ալևորներս, պինդ մարդիկ ենք։

— Ասում են, թե այդ պինդ ալևորները Դոնի այս կողմում
այնպես էին փախչում կարմիրներից, որ ոչ մեկի վրա
կիսամուշտակ չմնաց, փախչելով, իրենց վրայից ամեն բան
հանեցին մինչև տկլորանալը, ու դեն գցեցին։ Միծաղով
ասում են, թե ամբողջ տափաստանը դեղնել է կիսամուշ-
տակներից, ասես ծաղիկներով էր ծածկվել։

Պանտելեյ Պրակոֆևիչը ծուռ նայեց Բեսխլեբնովին, չոր
տոնով ասաց.

— Իմ կարծիքով դա սուտ է։ Կարելի է թե ոմանք թե-

թևանալու համար դեն էին գցում շորերը, ամա մարդիկ հո հարյուր անգամ ավելի են փչում։ Մե՛ծ բան է, էլի՛, մի կապա, թե, իքը մի կիսամուշտակ։ Կյանքը դրանցից ավելի թա՞նկ է, թե չէ, հարցնում եմ քեզ։ Հո ամեն մի ալևոր չի՞ կարող շորերով վազել։ Այս անիծված պատերազմումը պետք է այնպիսի ոտներ ունենալ, ոնց որ բարակ շան ոտները, իսկ ես, զորօրինակ, դրանք ո՞րտեղից վերցնեմ։ Եվ ինչի՞ համար ես դարդ անեմ, Ֆիլիպ Ագևիչ։ Դրանք, այդ կիսամուշտակները ի՞նչ սատանի են պետք, մեղա քեզ աստված։ Բանը կիսամուշտակները կամ թե, խոսքի օրինակ, կապաները չեն, բանը թշնամուն հաջողությամբ ջարդելն է, դրուստ չե՞մ ասում։ Էհ, բարով երթաս, ես քեզ հետ խոսքի ընկա, թողի բան ու գործը։ Հա, հորթդ գտա՞ր թե չէ։ Հլա փընտրո՞ւմ ես։ Իսկի ձեն-ձուն էլ չկա։ Դե, ուրեմն խոպերցիներն են կուլ տվել, գրող ու ցավ ուտեին։ Կովի մասին մի կասկածի. մերոնք կհաղթեն մուժիկներին։— Ու Պանտելեյ Պրակոֆևիչը ծանր ու մեծ, կաղ-կաղ քայլեց դեպի տուն։

Բայց, ինչպես երևում է, այնքան էլ հեշտ չէր հաղթել «մուժիկներին»... Կազակների վերջին հարձակումն էլ կորուստներ տվեց։ Մի ժամից հետո Պանտելեյ Պրակոֆևիչի լավ տրամադրությունը մոռայլվեց մի անհաճելի նորությամբ։ Տաշելով մի գերան, որ գցելու էր ջրհորի բերանին, նա կանացի լաց ու կոծ լսեց. այդպես լալիս էին մեռելի վրա։ Ճիչ ու աղաղակը մոտենում էր։ Պանտելեյ Պրակոֆևիչը Դունյաշկային ուղարկեց լուր իմանալու։

— Վազ տուր իմացիր, թե ով է մեռել,— ասաց նա՝ կացինը խրելով կոճղի մեջ։

Շուտով Դունյաշկան վերադարձավ և հաղորդեց, որ Ֆելոնովսկու ռազմաճակատից բերել են երեք սպանված կազակ,— Անիկուշկային, Խրիստոնյային և էլի մի տասնյոթ տարեկան տղայի, որը խուտորի մյուս ծայրից էր։ Նորությունից ապշած, Պանտելեյ Պրակոֆևիչը հանեց գլխարկը, խաչակնքեց.

— Աստված ողորմի նրանց հոգուն։ Ի՜նչ կազակ էր, է-է՛...— վշտոտ ասաց նա՝ մտածելով Խրիստոնյայի մասին, վերհիշելով, թե ինչպես վերջերս նրա հետ Տատարսկից գընացել էր հավաքակետ։

Նա այլևս չկարողացավ աշխատել։ Անիկուշկայի կինը ճչում էր, ասես միսն էին կտրել, ու այնպես էր լալիս և ողբում, որ Պանտելեյ Պրակոֆևիչի սիրտը կծկվեց։ Կանացի աղիողորմ ճիչերը չլսելու համար նա մտավ տուն, պինդ ծածկեց դուռը։ Օթախում Դունյաշկան շնչասպառ լինելով պատմում էր Իլյինիշնային.

— ...Մտիկ արի, հարազատ մայրիկո ջան, ու ի՜նչ տեսա՛-ա, Անիկուշկայի գլուխը համարյա թե չկա, գլխի տեղ արյունլվիկ կաշա է։ Օ՛յ, զարզանդելի բան է, հա՛-ա։ Ու նրանցից փիս հոտ է գալի մի վերստի վրա... Ինչի՞ էին բերել դրանց, չգիտեմ։ Խրիստոնյան էլ պառկել էր մեջքի վրա, սայլի մի ծերից մյուսը, ոտները կախվել են սայլի ետևից շինելի տակից... Խրիստոնյան մաքուր է ու սպիտա՛կ-սպիտակ, ուղղակի փրփուր։ Միայն թե աջ աչքի տակին ծակ կա, պստիկ, տասը կոպեկանոցի չափ, ու ականջի ետևը չորացած-կպած արյուն է երևում։

Պանտելեյ Պրակոֆևիչը զայրացած թքեց, դուրս ելավ բակը, վերցրեց կացինը և նավակի թիակը ու կաղ-կաղ աճապարեց դեպի Դոն։

— Ասա տատիկիդ, որ ես գնացի Դոնի այն կողմում ուռ կտրելու, լսո՞ւմ ես, մանչուկս,— քայլելիս դիմեց նա խոհանոցի մոտ խաղացող Միշատկային։

Դոնի մյուս կողմում, անտառում իջել էր մեղմ, փաղաքուշ աշունը։ Շրշյունով թափվում էին կաղամախիների չոր տերևները։ Մասրենու թփերը ասես բոցավառված էին, ու դրանց նոսր սաղարթում կարմիր մասուրները վառվում էին հրեղեն լեզուների նման։ Անտառը լցված էր կաղնու մգլած կեղևի դառն, ուժեղ հոտով։ Մոշի խիտ ու կպչող թփերը ցանցել էին գետինը. դրանց գետնատարած ճյուղերի հյուսվածքների տակ արևից ճարտարորեն թաքնվել էին մոշի գորշ-կապտավուն, հասունացած ողկույզները։ Թառամած խոտաբույսերի վրա, ստվերի մեջ մինչև կեսօր նստած էր ցողը, փայլում էր նրա արծաթած սարդոստայնը։ Լռությունը խախտում էին միայն փայտփորիկի աշխույժ տկտկոցը և կեռնեխների ճռվողյունը։

Անտառի լռելյայն, վեհասքանչ գեղեցկությունը մեղմիչ ներգործություն ունեցավ Պանտելեյ Պրակոֆևիչի վրա։ Նա

կամացուկ քայլում էր թփերի արանքով. ոտներով ցրիվ տալով թափված սաղարթի խոնավ ծածկոցը, մտածում էր. «Այ թե ինչ բան է կյանքը. երեկ կենդանի էին, իսկ այսօր արդեն նրանց լողացնում են, որ թաղեն։ Ինչպիսի՜ կազակ սպանվեց, է՛։ Ասես երեկ-մեկել օրն էր, որ եկել էր մեզ մոտ, կանգնել էր Դոնի ափին, երբ բռնում էին Դարյային։ Էհ, Խրիստան, Խրիստան, թշնամու գնդակը քեզ էլ կպավ... Բա Անիկուշկա՜ն... Ի՜նչ ուրախ մարդ էր, սիրում էր խմել, խընդալ, իսկ հիմի արդեն պրծավ, ննջեցյալ է...»— Պանտելեյ Պրակոֆևիչը վերհիշեց Դունյաշկայի խոսքերը և հիշողության մեջ անսպասելի պայծառությամբ վերականգնեց Անիկուշկայի ժպտուն, անբեղ, գրեթե ներքինու դեմքը, ու ոչ մի կերպ չէր կարողանում պատկերացնել այժմյան անշունչ, գլուխը ջնջված Անիկուշկային։ «Ձուր տեղը ես բարկացրի աստծուն,— պարծեցա Գրիգորիով,— կշտամբեց նա ինքն իրեն, մտաբերելով Բեսխլեբնովի հետ ունեցած խոսակցությունը։— Գուցե Գրիգորին է՞լ հիմի ընկած է մի տեղ, գընդակներով խոցված։ Է-է՛, աստվա՛ծ չանի։ Բա ես ու պառավը ո՞ւմ մոտ պիտի ապրենք»։

Թփի տակից թռչելով, դարչնագույն մի կտցար Պանտելեյ Պրակոֆևիչին ստիպեց ցնցվել անակնկալից։ Նա անսպատակ դիտեց թռչունի շեղ, արագ թռիչքը, շարունակեց գնալ։ Մի փոքրիկ լճակի մոտ զննեց ուռի մի քանի թուփ, սկսեց կտրատել։ Աշխատելով, ճիգ էր անում ոչ մի բանի մասին չմտածել։ Մեկ տարվա ընթացքում մահը այնքան ազգականներ ու ծանոթներ էր տարել, որ դրանց հենց միայն մտքովն անցկացնելիս նա տանջվում էր հոգեպես ու նրա առաջ ամբողջ աշխարհը աղոտանում, ասես ինչ-որ սև քողով էր ծածկվում։

— Այս թուփը պետք է կտրել։ Լավ ուռ է։ Հենց ցանկապատի համար պետք կգա,— լսելի ձայնով խոսում էր նա ինքն իր հետ, որպեսզի վաներ մոայլ մտքերը։ Բավականաչափ աշխատելով, Պանտելեյ Պրակոֆևիչը հանեց կուրտկան, նստեց կտրած ուռերի կույտի վրա, ու ագահությամբ ներշնչելով թառամած սաղարթի տտիպ հոտը, երկար նայում էր կապույտ մուժով շղարշված հեռավոր հորիզոնին, աշնան ոսկեզօծած, վերջին գեղեցկությամբ փայլող հեռավոր անտառներին։ Մոտիկում կանգնած էր իլենու մի թուփ։ Անասելի շքեղ էր դա, ամբողջովին շողում էր աշնանային պաղ արևի տակ, ու դրա լայնատարած ճյուղերը ծիրանեգույն սաղարթով փթթած, բացվել էին որպես գետնից բարձրացող հեքիաթային հավքի թևեր։ Պանտելեյ Պրակոֆևիչը երկար նայում էր դրանց, հետո էլ պատահմամբ մտիկ տվեց լճակին ու թափանցիկ, կանգուն ջրի մեջ տեսավ սև մեջքերով, խոշոր ծածան ձկներ, որոնք ջրի մակերեսին այնքան մոտիկ էին լողում, որ երևում էին նրանց լողաթևերը և շարժվող, մուգ-կարմրավուն պոչերը։ Ձկները ութ հատ էին։ Նրանք երբեմն թաքնվում էին ջրաշուշաններին կանաչ վահանակների տակ ու վերստին դուրս էին գալիս, բռնում ուռենու ընկղմող, թաց տերևները։ Լճակը գոլորշիացել, բոլորովին փոքրացել էր աշնանը, ու բնա՛վ էլ դժվար չէր որսալ այդ ձկները։ Պանտելեյ Պրակոֆևիչը երկար որոնումներից հետո գտավ հարևան լճի մոտ թողած, առանց հատակի մի կողով, վերադարձավ լճակի մոտ, հանեց շալվարը ու, ցրտից կուչ գալով և տնքտնքալով, սկսեց որսը։ Պղտորելով ջուրը, մինչև ծնկները թաղվելով տիղմի մեջ, նա անցավ լճակի երկայնքով, սուզեց կողովը, դրա ծայրերը սեղմեց, մինչև որ կողովը հասներ հատակին, հետո էլ ձեռքը խոթեց կողովի մեջ, սպասելով, որ թպրտալով բռնվի հուժկու ձուկը։ Նրա ջանքերը հաջողությամբ պսակվեցին. նա կարողացավ բռնել երեք ծածան, յուրաքանչյուրը տասը ֆունտ ծանրությամբ։ Նա այլևս չկարողացավ շարունակել որսը, ցրտից սկսեց ջղակծկվել, ընդարմանալ նրա հաշմված ոտքը։ Որսով բավարարված, նա դուրս եկավ լճակից, ճիլ խոտով սրբեց ոտները, հագնվեց, նորից սկսեց ուռ կտրել, որպեսզի տաքանար։ Ինչքան չլինի, դա էլ հաջողություն էր։ Ամեն մեկին հո չի վիճակվի անսպասելի կերպով համարյա մի փութ ձուկ բռնել։ Որսը զբաղեցրեց նրան, վանեց մոայլ մտքերը։ Նա հուսալի կերպով թաքցրեց կողովը՝ մտադրվելով էլի գալ ու բռնել մնացած ձկները, ու վախով նայեց շուրջը. չլինի՞ թե մեկն ու մեկը տեսավ, թե ինչպես նա լճի ափն էր գցում ոսկեհուր ու հաստ ծածանները, որոնք ասես խոճկորներ լինեին, ու միայն դրանից հետո

վերցրեց կապած ուռերը, ցախից քարշ արած ձկները, առանց շտապելու քայլեց Դոնի կողմը։

Գոհության ժպիտով նա Իլյինիչնային պատմեց իր ձկնորսական բախտավորության մասին, մի անգամ էլ հիացած նայեց կարմիր պղնձի գույնով երանգավորված ծածաններին, բայց Իլյինիչնան սառը վերաբերվեց նրա ցնծությանը։ Իլյինիչնան գնացել էր սպանվածներին տեսնելու և վերադարձել էր լացակումած, տրտում։

— Կերթա՞ս Անիկեյին տեսնելու,— հարցրեց նա։

— Չեմ գնա։ Մեռելներ չե՞մ տեսել, ինչ է։ Այնքա՜ն եմ տեսել, որ հերիք է։

— Գնայի՛ր, էլի՛։ Անհարմար բան կլինի, կասեն՝ գնաս բարով ասելու էլ չեկավ։

— Չեռ քաշի, ի սեր Քրիստոսի։ Ես նրա հետ երեխաներ չեմ մկրտել, և պետք էլ չի, որ երթամ գնաս բարով ասելու,— բարկությամբ պատասխանեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Նա թաղման էլ չգնաց, առավոտից անցավ Դոնի մյուս կողմը և ամբողջ օրը մնաց այնտեղ։ Թաղման զանգահարությունը անտառում նրան ստիպեց հանել գլխարկը, խաչակնքել, հետո էլ մինչև իսկ բարկացավ տերտերի վրա. ինչպե՞ս կարելի էր այնքան երկար զանգահարել։ Ամեն մի զանգը կզարկեին մի անգամ, ու պրծավ-գնաց, թե չէ մի ամբողջ ժամ զը՛նգ հա զընգ։ Եվ ի՞նչ օգուտ այդ զնգզընգոցից։ Հենց միայն մարդու սիրտ կցավացնեն ու կստիպեն մի ավելորդ անգամ հիշել մահը։ Առանց այդ էլ աշնանը մահ է հիշեցնում ամեն ինչ,— թե ընկնող տերևը, թե կապույտ երկնքում կռնչյունով թռչող սագերի երամները և թե անկյանք փռված խոտը...

Պանտելեյ Պրակոֆևիչը որքան էլ աշխատում էր իրենից վանել ամեն տեսակ ծանր ապրումները, բան չէր դուրս գալիս, ու շուտով նա մի նոր ցնցում ապրեց։ Մի անգամ, ճաշի ժամանակ, Դունյաշկան պատուհանից դուրս նայեց, ասաց.

— Էլի սպանված մարդ են բերում ռազմաճակատից։ Արաբայի ետևից կազակի թամբած մի ձի է գալի, սանձով կապված է արաբային, կամաց են գալիս... Մեկը ձիերն է

քշում, իսկ մեռելը ծածկված է շինելով։ Չի քշողը նստել է մեջքը դեպի մեզ, չեմ ճանաչում. մեր խուտորից է թե ոչ... Դունյաշկան ուշադրությամբ դիտեց, ու նրա այտերը կըտավից է՛լ ավելի ճերմակեցին։— Ոնց որ թե... ոնց որ թե...

— անհասկանալի շշնջաց նա ու հանկարծ սրտաճմլիկ ճչաց.

— Գրիշկայի՛ն են բերում... նրա ձին է.— ու հեկեկալով դուրս վազեց։

Իլյինիչնան առանց սեղանից վեր կենալու, ձեռքով ծածկեց աչքերը։ Պանտելեյ Պրակոֆևիչը ծանր վեր կացավ նըստարանից ու, կույրի պես ձեռները դեպի առաջ պարզելով, քայլեց դեպի դուռը։

Պրոխոր Զիկովը բացեց դարպասը, հարևանցի նայեց մուտքի սանդուղքից վազեվազ իջնող Դունյաշկային, անուրախ ասաց.

— Ընդունեցեք հյուրերին... Չէի՞ք սպասում։

— Ա՜խ հարազատս, աղբերս,— ձեռքերը կոտրատելով հեծեծաց Դունյաշկան։

Եվ միայն այդ պահին, նայելով արտասվաթոր նրա դեմքին, մուտքի սանդուղքի վրա լուռ կանգնած Պանտելեյ Պրակոֆևիչին, Պրոխորը գլխի ընկավ, թե ինչ պետք է ասի.

— Մի՛ վախենաք, մի վախենաք, նա կենդանի է։ Տիֆով է հիվանդ։

Պանտելեյ Պրակոֆևիչը թուլանալուց մեջքով հենվեց դռան դրանդիին։

— Կենդանի-ի-ի է՛,— ծիծաղելով ու լալով գոչեց Դունյաշկան՝ դիմելով նրան.— Գրիշան կենդանի է, լսո՞ւմ ես։ Հիվանդ է, դրա համար են բերել։ Գնա ասա մորս։ Դեհ ինչի՞ ես կանգնել։

— Մի վախենա Պանտելեյ Պրակոֆևիչ։ Սաղ եմ բերել, իսկ առողջության մասին մի հարցնի,— իսկույն ավելացրեց Պրոխորը՝ ձին սանձից բռնած տանելով բակը։

Պանտելեյ Պրակոֆևիչը մի քանի անվստահ քայլ արեց, նստեց սանդուղքի աստիճաններից մեկի վրա։ Դունյաշկան մրրկաթափ սլացավ նրա կողքից ու տուն մտավ, որ հանգըստացներ մորը։ Պրոխորը ձիերը կանգնեցրեց հենց մուտքի սանդուղքի մոտ, նայեց Պանտելեյ Պրակոֆևիչին։

— Ինչի՞ ես նստել։ Բեր կարպետից-բանից, ներս տանենք։

Մերունին լուռ նստած էր։ Նրա աչքերից կարկտի նման գլորվում էին արցունքները, իսկ դեմքը անշարժ էր ու դրա ոչ մի մկանը չէր դողում։ Նա երկու անգամ բարձրացրեց ձեռքը, որ խաչակնքեր, ու իջեցրեց՝ չկարողանալով այն հասցնել մինչև ճակատը։ Հեկեկանքը դեմ էր առնում նրա կոկորդին։

— Ոնց որ երևում է, դու վախից խելքդ թռցրիր,— ցավակցությամբ ասաց Պրոխորը։— Ոնց էլ ես գլխի չընկա առաջուց մի կերպ մարդ ուղարկել, նախազգուշացնել ձեզ։ Դմբո եմ, ես, դրուստ խոսք, դմբո եմ։ Դե, վեր կաց, Պրակոֆիչ, հիվանդին պետք է ներս տանել։ Ո՞րտեղ է ձեր կարպետը։ Թե՞ ձեռքերով տանենք։

— Մի քիչ կաց...— խռպոտ ասաց Պանտելեյ Պրակոֆիևիչը։— Ոտներս փետացել են... Կարծեցի սպանված է... Փառք աստծու... Չէի սպասում...— Նա կտրեց իր հին շապիկի օձիքի կոճակները ու սկսեց լայն բացված բերանով ագահությամբ օդ ներշնչել։

— Վեր կաց, վեր կաց, Պրակոֆիչ,— շտապեցրեց Պրոխորը։— Մեզնից ջոկ ոչ ոք չկա, որ նրան տուն տանի, չէ՞։

Պանտելեյ Պրակոֆիևիչը զգալիորեն ջանք թափելով ոտքի ելավ, իջավ մուտքի սանդուղքից, բացեց շինելը ու կռացավ գիտակցությունը կորցրած Գրիգորիի վրա։ Հեկեկանքը նորից դեմ առավ նրա կոկորդին, բայց նա հավաքեց ինքն իրեն, դարձավ դեպի Պրոխորը։

— Վերցրու ոտներից։ Տանենք։

Գրիգորիին տարան օթախ, հանեցին սապոգները, շորերը, ու պառկեցրին մահճակալի վրա։ Դունյաշկան խոհանոցից անհանգիստ բղավեց.

— Հայրիկ, մորս ուշքը գնում է... եկ այստեղ։

Խոհանոցում, հատակի վրա պառկած էր Իլյինիշնան։ Դունյաշկան ծունկ չոքած, ջուր էր շաղ տալիս նրա կապուտկած դեմքին։

— Վազ տուր, կանչիր Կապիտոնովնա տատին, շո՛ւտ։ Նա արյուն առնել գիտի։ Ասա, որ պետք է մայրիկից արյուն առնել, թող վերցնի գործիքը,— հրամայեց Պանտելեյ Պրակոֆիևիչը։

Դունյաշկան, հարսնացու դարձած այդ աղջիկը հո չէր կարող գլխաբաց վազել խուտորի միջով. նա վերցրեց շալը, հապճեպ գցեց վրան, ասաց.

— Երեխեքին փիս վախացրինք։ Տեր աստված, այս ի՞նչ խաթա է... Մտիկ արա նրանց, հայրիկ, իսկ ես վազ կտամ մի րոպեում։

Դունյաշկան գուցեև հարևանցիորեն նայեր հայելուն, բայց աշխուժացած Պանտելեյ Պրակոֆիևիչը աչքերն այնպես չռեց Դունյաշկայի վրա, որ սա վայրկենապես դուրս թռավ խոհանոցից։

Բակի դռնից դուրս վազելով, Դունյաշկան տեսավ Ակսինյային։ Վերջինիս սպիտակ դեմքը բոլորովին սփրթնած էր։ Ակսինյան կանգնել էր ցանկապատին հենված, թևերը թուլ կախած։ Նրա մշուշված, սև աչքերում արցունքներ չէին փայլում, բայց դրանց մեջ այնքան տանջանք և լռին աղերսանք կար, որ Դունյաշկան մի վայրկյան կանգ առնելով, ակամայից և իրեն համար անսպասելի կերպով ասաց.

— Կենդանի է, կենդանի է, տիֆով է հիվանդ։— Ու արագ վազեց նրբանցքով, ցատկոտող, փարթամ կուրծքը ձեռքով պահած։

Հետաքրքրվող կնանիքը ամեն կողմից շտապում էին դեպի Մելեխովենց տունը։ Նրանք տեսան, թե ինչպես Ակսինյան դանդաղաքայլ հեռացավ Մելեխովենց բակի դռնից, հետո էլ հանկարծ արագացրեց քայլերը, կռացավ ու ձեռքերով ծածկեց դեմքը։

XXV

Գրիգորին մի ամսից հետո առողջացավ։ Նա առաջին անգամ անկողնից վեր կացավ նոյեմբերի քսանից հետո ու բարձրահասակ, կմախքի պես նիհար կերպարանքով, անվստահ քայլեց օթախում, կանգնեց պատուհանի մոտ։

Գետնքի, մարագների ծղնոտե կտուրների վրա կուրացուցիչ կերպով սպիտակին էր տալիս նոր եկած ձյունը։ Փողոցից երևում էին սահնակների հիմնաձողերի հետքերը։ Ցանկա-

պատերին ու ծառերին նստած կապտավուն եղյամը շողում էր ու մայր մտնող արևի ճառագայթների տակ ծիածանային գույներ արձակում։

Գրիգորին երկար ժամանակ պատուհանից դուրս էր նայում, ժպտում, ոսկրացած մատներով սղալում բեղերը։ Կարծես թե նա այդպիսի հիանալի ձմեռ դեռ երբեք չէր տեսել։ Ամեն ինչ նրան թվում էր արտասովոր, նոր ու նշանակալից։ Հիվանդությունից հետո ասես սրվել էր նրա տեսողությունը, և նա նոր առարկաներ հայտնաբերեց իր շրջապատում ու փոփոխություններ գտավ այն առարկաների մեջ, որոնք վաղուց ծանոթ էին նրան։

Գրիգորիի բնավորության մեջ անսպասելի կերպով երևան եկավ հետաքրքրություն և շահագրգռվածություն դեպի այն ամենը, ինչ որ կատարվում էր խուտորում և տնտեսության մեջ. առաջ դա հատուկ չէր նրան։ Նրա համար կյանքում ամեն բան մի ինչ-որ նոր, խորհրդավոր իմաստ էր ստանում, ամեն բան գրավում էր նրա ուշադրությունը։ Նա մի փոքր զարմացած աչքերով էր նայում իրեն նոր ձևով պատկերացող աշխարհին, ու նրա շրթունքներից երկար ժամանակ չէր չքանում պարզ, մանկական ժպիտը, որ տարօրինակ կերպով փոխել էր դեմքի մոայլ տեսքը, գազանաբարո աչքերի արտահայտությունը, մեղմել էր բերանի անկյունների կոշտ ծալերը։ Երբեմն նա զննում էր տնտեսական կարիքի համար անհրաժեշտ, մանկությունից իրեն ծանոթ որևէ առարկա, լարված խաղացնելով հոնքերը, ու այնպիսի տեսքով, որ կարծես օտար, հեռավոր երկրից նոր եկած մարդ լիներ և այդ բոլորը առաջին անգամն էր տեսնում։ Մի անգամ Իլյինիչնան անասելի զարմացավ, տեսնելով, որ նա ամեն կողմից դիտում է ճախարակը։ Հենց որ նա օթախ մտավ, Գրիգորին մի փոքր շփոթված հեռացավ ճախարակից։

Դունյաշկան չէր կարողանում առանց ծիծաղի նայել նրա ոսկրոտ, երկար կերպարանքին։ Գրիգորին օթախում քայլում էր միայն տակի սպիտակեղենով, ձեռքով պահում ընկնող վարտիքը, կորանում և անհամարձակ փոխում լղարած, երկարասրունք ոտները, իսկ երբ նստում էր, անպայման բռնում էր որևէ առարկայից, վախենալով, որ վայր կընկնի։ Նրա սև հիվանդության ժամանակ երկարած մազերը թափվում էին, գանգուր, խիստ ալեխառն քյաքուլը խճճվում էր։

Դունյաշկայի օգնությամբ նա ինքը սափրեց իր գլուխը, ու երբ երեսով դարձավ դեպի քույրը, սա ածելին գցեց հատակին, բռնեց փորը ու, ընկնելով մահճակալին, ծիծաղից շնչասպառ եղավ։

Գրիգորին համբերությամբ սպասում էր, մինչև որ նա կտրեր ծիծաղը։ բայց հետո չդիմացավ, թույլ դողդոջ ու բարակ ձայնով ասաց.

— Տես, շատ ծիծաղես, վերջը լաց կլինես։ Հետո կամաչես, չէ՞ որ հարսնացու ես,— նրա ձայնը թեթև վիրավորանք արտահայտեց։

— Օ՛յ, աղբերս, օ՛յ ջանիկս, ավելի լավ է ես գնամ։ Էլ հալ չկա։ Օ՛յ, այդ ինչի՞ ես նման, է՛։ Հենց բոստանի խրտվիլակ ես որ կաս.—ծիծաղի ընդմիջումների պահին հազիվ կարողանում էր ասել Դունյաշկան։

— Մի տեսնեի, թե դու ինչ կդառնայիր տիֆից հետո։ Վերցրու ածելին, դե՞հ։

Իլյինիչնան պաշտպանեց Գրիգորիին, բարկությամբ ասաց.

— Էլ ի՞նչ ես խրխնջում, է՞։ Իսկը դմբո ես։ Դո՛ւյնկա։

— Ախր մի տես թե նա ինչի է նման, մերս,— արցունքները սրբելով ասաց Դունյաշկան,— գլուխը բշտոտ է, կլոր, ոնց որ ձմերուկ, ու իրեն պես թուխ է... Օ՛յ, չեմ կարող։

— Տուր հայելին,— խնդրեց Գրիգորին։

Նա նայեց մի փոքրիկ կտոր հայելուն ու ինքն էլ երկար, անձայն ծիծաղեց։

— Ախր ինչի՞ թրաշվեցիր, որդյակս, ավելի լավ է թողնեիր մազերդ,— անգոհ ասաց Իլյինիչնան։

— Քո ասելով քաշալ լինելը ավելի լա՞վ է, հա՞։

— Դե, այդպես էլ բոլորովին ամոթալի է։

— Ձե՛ռ քաշեք, է՛,— սրտնեղելով ասաց Գրիգորին, վրձինով խառնեց սապոնի փրփուրը։

Զուրկ լինելով տանից դուրս գալու հնարավորությունից, նա երկար զբաղվում էր երեխաներով։ Նրանց հետ ամեն ինչի մասին խոսելով, խուսափում էր հիշեցնել Նատալյային։ Բայց մի անգամ Պոլյուշկան, գգվելով նրան, հարցրեց.

— Հայրիկ, բա մայրիկը չի՞ գալու մեզ մոտ։

— Չէ, մումուշս, այնտեղից ետ չեն գալիս...

— Ո՞րտեղից, գերեզմանոցի՞ց։

— Դե, մի խոսքով, մեռելները ետ չեն գալի...

— Իսկ նա բոլորովի՞ն մեռած է։

— Դե, բա ո՞նց։ Իհարկե մեռած է։

— Իսկ ես կարծում էի, թե նա մի օր կկարոտի մեզ ու կգա...— հազիվ լսելի շշնջաց Պոլյուշկան։

— Դու նրա մասին մի մտածի, բալիկս, չպետք է մտածել,— խուլ ձայնով ասաց Գրիգորին։

— Բա ո՞նց չմտածեմ։ Մեզ տեսնելու համար է՛լ չի գալի։ Մի քիչ դար, էլի՛։ Չէ՞։

— Չէ՛։ Լա՛վ, գնա խաղա Միշատկայի հետ։— Գրիգորին շուռ տվեց դեմքը։ Երևում էր, որ հիվանդությունը թուլացրել էր նրա կամքը. աչքերում արցունքներ երևացին, ու դրանք երեխաներից թաքցնելու համար նա երկար կանգնեց պատուհանի մոտ, դեմքը ապակուն հպած։

Նա չէր սիրում երեխաների հետ խոսել պատերազմի մասին, իսկ Միշատկային աշխարհում առավելապես պատերազմն էր հետաքրքրում։ Նա հաճախ հարցեր էր տալիս հորը, թե ինչպես են կռվում, ինչպիսին են կարմիրները և ինչով ու ինչի համար են նրանց սպանում։ Գրիգորին մռայլվում էր, սրտնեղելով ասում։

— Է-է՛, էլի թաց աղունը վրա լցրիր։ Ախր քո ինչի՞ն է պետք այդ պատերազմը։ Ավելի լավ է եկ խոսենք, թե ամռանը ոնց պետք է կարթերով ձուկ որսանք։ Քեզ համար կարթ սարքե՞մ։ Այ, հենց որ սկսեմ ելնել բակը, քեզ համար անպատճառ ձիու մազից կարթի թել կպատրաստեմ։

Նա ներքին ամոթանք էր զգում, երբ Միշատկան խոսում էր պատերազմի մասին. ոչ մի կերպ չէր կարողանում պատասխանել մանկական պարզ ու անպաճույճ հարցերին։ Եվ ո՞վ գիտե թե ինչու։ Արդյո՞ք դա այն պատճառով չէր, որ նա իր համար էլ չէր գտնում այդ հարցերի պատասխանները։ Բայց Միշատկայի ձեռքից պրծնելն այնքան էլ հեշտ չէր. նա կարծես թե ուշադրությամբ էր լսում հոր պլանները ձկնորսության մասին, հետո նորից հարցնում էր.

— Դու, հայրիկ, կռվի մեջ մարդ սպանե՞լ ես։

— Վերջ տուր, մի կպչի տզի պես։

— Մարդ սպանելը սարսափելի՞ է, հա՞։ Երբ որ նրան սպանում են, արյո՞ւն է գալի։ Շա՞տ արյուն, հա՞։ Հավից կամ ոչխարից է՞լ շատ։

— Ես քեզ ասի, որ դրա մասին չխոսես։

Միշատկան մի բոպե լռում էր, հետո մտազբաղ ասում.

— Ես տեսա, թե անցած օրը պապս ոնց մորթեց ոչխարը։ Ես չվախեցա... Կարելի է թե մի քիչ, մի քիչ վախենալու բան է, ամա իսկի էլ իմ պետքը չէր։

— Դրան վռնդի, է՛,— բարկությամբ բացականչում էր Իլլինիչնան։— Մեծանա, հոգեառ պիտի դառնա։ Խաթա է, էլի։ Հենց միայն կռվից է խոսում, ուրիշ բան չգիտի։ Ա՛յ որդի, ախր ի՞նչ գործ ունես խոսելու այդ անիծված պատերազմի մասին, մեղա քեզ, աստված։ Արի այստեղ, բլինչիկ վերցրու կեր, գոնե մի քիչ սուս արա, վա-ա՛յ...

Բայց պատերազմը ամեն օր հիշեցնում էր իր մասին։ Ռազմաճակատից վերադարձած կազակները գալիս էին Գրիգորիին այցելելու, պատմում էին, թե Բուդյոննու հեծելազորը ինչպես էր ջախջախել Շկուրոյին և Մամոնտովին, պատմում էին Օրյոլի մոտ եղած անհաջող մարտերի, ռազմաճակատներում սկսված նահանջի մասին։ Գրիբանովկայի և Կարդաիլի մոտ տեղի ունեցած մարտերում սպանվել էր էլի երկու տատարցի, բերին վիրավորված Գերասիմ Ախվատկինին։ Մեռավ տիֆով հիվանդացած Դմիտրի Գոլոշչեկովը։ Գրիգորին մտքում հաշիվ էր անում, թե երկու պատերազմում իրենց խուտորից քանի մարդ էր սպանվել, ու բանից դուրս եկավ, որ Տատարսկում չկա մի տուն, որտեղից մարդ սպանված չլինի։

Գրիգորին դեռ տանից չէր դուրս գալիս, բայց արդեն խուտորի ատամանը ստանիցայի ատամանից կարգադրություն բերեց, որով հրամայված էր ծանուցել հարյուրապետ Մելեխովին, որ անմիջապես ներկայանա բժշկական հանձնաժողովին՝ քննության համար։

— Գրի՛ նրան, թե հենց որ սովորեմ քայլել, ինքս կներկայանամ առանց նրանց հիշեցումների,— սրտնեղելով ասաց Գրիգորին.

Ռազմաճակատը գնալով մոտենում էր Դոնին։ Խուտորում սկսեցին խոսել նահանջի մասին։ Շուտով հրապարակում կարգացվեց օկրուգային ատամանի հրամանը, որը բոլոր չափահաս կազակներին պարտավորեցնում էր հեռանալ խուտորներից։

Պանտելեյ Պրակոֆևիչը եկավ հրապարակից, Գրիգորիին պատմեց հրամանի մասին, հարցրեց.

— Ի՞նչ պիտի անենք։

Գրիգորին թոթվեց ուսերը.

— Էլ ի՞նչ արած։ Պետք է հեռանալ։ Առանց հրամանի էլ բոլորը կհեռանան։

— Ես իմ ու քո մասին եմ հարցնում. միասի՞ն գնանք, թե ոնց։

— Միասին չենք գնա։ Մի երկու օրից հետո ես ձիով կերթամ ստանիցա, կիմանամ, թե որ զորամասերն են անցնելու Վեշկիի միջով, կմիանամ դրանցից մեկն ու մեկին։ Իսկ քո գործն է գնալ իբրև փախստական։ Թե՞ ուզում ես զորամաս մտնել։

— Կորչի, է՛,— վախեցած ասավ Պանտելեյ Պրակոֆևիչը։— Ես կգնամ Բեսխլեբնով պապի հետ, նա անցած օրը հրավիրում էր միասին ճանապարհվել։ Նա հանգիստ ալևոր է, ձին էլ լավն է, կլծենք երկու ձին ու հա՛յդա կերթանք սահնակով։ Իմ զամբիկն էլ տրաքվում է շաղությունից։ Անիծվածը այնքան է կերել ու այնպես է քացի տալի, որ մարդ վախում է։

— Դե ուրեմն գնա նրա հետ,— հավանություն տվեց Գրիգորին։— Իսկ հիմի եկ պայմանավորվենք ձեր մարշրուտի մասին, որովհետև գուցե ես էլ նույն ճափով գնամ։

Գրիգորին գծագրոցից հանեց հարավային Ռուսաստանի քարտեզը, մանրամասն պատմեց հորը, թե որ խուտորների միջով պետք է գնալ, և արդեն սկսում էր գրի առնել խուտորների անունները, բայց ծերունին հարգանքով նայելով քարտեզին, ասաց.

— Կաց, մի գրի։ Դու, իհարկե, այդ գործերում ինձնից ավելի շատ բան ես հասկանում, քարտեզն էլ հո լուրջ բան է, չի մոլորեցնի և ուղիղ ճամփա ցույց կտա, միայն թե ո՞նց գնամ դրանով, եթե դա ինձ համար չէ։ Դու ասում ես,

պետք է սկզբում գնալ Կարգինսկու միջով, ես հասկանում եմ, այդպես ճամփեն ուղիղ է, ամա մեկ է, այստեղ պետք է ծռեմ ճամփես։

— Ինչի՞ համար պիտի ծռես։

— Նրա համար, որ Լատիշևում քեռու աղջիկ ունեմ, նրա մոտ համ ինձ համար ուտելիք, համ ձիերի համար կեր կճարեմ, իսկ ուրիշների մոտ իմ ունեցածը պիտի ծախսեմ։ Հետո, դու ասում ես, թե հարկավոր է գնալ Աստախովո գյուղի միջով, այդ ճամփեն ավելի ուղիղ է, ոնց որ ցույց է տրված քարտեզում, իսկ ես կգնամ Մալախովսկի. այնտեղ էլ հեռու ազգական և ինձ հետ ծառայած մի մարդ ունեմ. այնտեղ էլ կարելի է մեր խոտը չծախսել, ուրիշի խոտից օգտվել։ Նկատի ունեցիր, որ չենք կարող հետներս խոտի դեզ տանել, իսկ օտար երկրումը կարող է պատահել, որ չէ՛ թե խնդրելով, այլ փողով էլ խոտ չճարես։

— Իսկ Դոնի մյուս կողմում դու ազգական չունե՞ս,— նենգաբար հարցրեց Գրիգորին։

— Այնտեղ էլ կա։

— Գուցե դու այդ կո՞ղմը գնաս։

— Դու ինձ անխելք բան մի ասա,— տաքացավ Պանտելեյ Պրակոֆևիչը։— Լուրջ խոսի և ոչ թե հանաք արա։ Հանաքի ժամանա՞կ ես գտել, տո, խելքի պուտուկ։

— Բա ազգականների մոտ գնալու ժամանա՞կ է, հը՞։ Պետք է նահանջել և ոչ թե ազգականների տները գնալ, հիմի քեզ համար բարեկենդան չի։

— Դու ինձ մի խրատի, թե ուր պիտի գնամ, ինքս գիտեմ։

— Դե որ գիտես, ուր ուզում ես գնա։

— Բա հո քո պլաններով չե՞մ շարժվելու։ Ուղիղ ճամփով միայն կաչաղակն է թռչում, դու այդ լսե՞լ ես։ Քո ասելով պետք է այնպիսի տեղերով գնալ, որտեղ ձմռանը իսկի ճամփա էլ չի լինում։ Դու մտածեցի՞ր, որ այդ տեսակ դատարկ բան ասիր։ Միթամ դիվիզիայի հրամանատար էլ ես եղել։

Գրիգորին և ծերուկը երկար վիճեցին, բայց հետո, կըշռադատելով ամեն ինչ, Գրիգորին ստիպված եղավ ընդունել, որ հոր ասածների մեջ արդարացի շատ բան կար, ու հաշտվողաբար ասաց.

— Մի՛ հերսոտի, հերս, ես քո վզին չեմ փաթաթում իմ մարշրուտը, գնա ոնց որ ուզում ես։ Կաշխատեմ Դոնեցից դենը գտնել քեզ։

— Վաղուց պետք է այդպես ասեիր,— ուրախացավ Պանտելեյ Պրակոֆևիչը,— թե չէ զանազան պլաններ ու մարշրուտներ ես մեջտեղ բերում ու չես հասկանում, որ պլանը լավ բան է, ամա ձիերն առանց կերի ոչ մի տեղ էլ չեն գնա։

Դեռ Գրիգորիի հիվանդության ժամանակ ծերունին կամաց-կամաց պատրաստվում էր մեկնելու, մի առանձին խնամքով էր կեր տալիս ձիուն, նորոգում էր սահնակը, նոր թաղյակներ էր պատվիրել և դրանց տակից սեփական ձեռքով կաշի կարել, որ խոնավ եղանակին ջուր չանցկացնեին. նախօրոք ջվալները լցրել էր ընտիր վարսակով։ Նա նահանջելու համար էլ պատրաստվում էր որպես իսկական տնտեսարար մարդ. հեռատեսությամբ պատրաստել էր այն ամենը, ինչ որ կարող էր պետք գալ ճանապարհին։ Կացին, ձեռքի սղոց, դուր, կոշկակարական գործիքներ, թել, պահեստի կոշկատակեր, մեխեր, մուրճ, փոկերի մի կապոց, պարան, մի կտոր կուպր, պայտեր ու պայտամեխեր,— այս ամենը փաթաթված էր բրեզենտով և կարող էր մի բոպեում դրվել սահնակի վրա։ Պանտելեյ Պրակոֆևիչը նույնիսկ ձեռքի կշեռք էր վերցնելու իր հետ, և Իլյինիչնայի այն հարցին, թե ճանապարհին այդ կշեռքը նրա ինչին է պետք, կշտամբանքով պատասխանեց.

— Ա՛ կնիկ, քանի պառավում ես, այնքան հիմարանում ես։ Մի՞թե այդ հասարակ բանը չես հասկանում։ Ճանապարհին ես հո քաշո՞վ պետք է խոտ կամ դարման գնեմ։ Այնտեղ խոտը հո արշինով չեն չափում։

— Այնտեղ կշեռք է՞լ չկա,— զարմացավ Իլյինիչնան։

— Դու ի՞նչ գիտես, թե այնտեղ ինչ տեսակ կշեռք կա,— շարունակեց Պանտելեյ Պրակոֆևիչը։— Կարելի է այնտեղ բոլոր կշեռքներն էլ ճիշտ չեն, մեզ նմաններին խաբելու համար են։ Բա-ա՜ս։ Գիտենք, թե այնտեղ ինչ մարդիկ են ապրում։ Երեսուն ֆունտ կգնես, ամա մի փթի փող կտաս։ Փոխանակ ամեն անգամ կանգ առնելիս այդ տեսակ վնաս քաշեմ, ավելի լավ է իմ կշեռքը տանեմ, հո մի մեծ բեռ չի։

Իսկ դուք այստեղ առանց կշեռքի էլ կապրեք, դա ձեր խնդիրն է պետք։ Զորամասերը կգան ու կերթան, խոտը առանց կշռելու կվերցնեն... Դու նրանց հենց միայն խոտ տուր։ Տեսել եմ ես նրանց, անպոզ սատանաներին, շատ լավ գիտեմ։

Պանտելեյ Պրակոֆևիչն սկզբում մտածում էր մինչև իսկ սահնակով սայլ տանել, որպեսզի գարնանը ծախս չաներ — սայլ չգներ, իր սայլը բանեցներ, բայց հետո, մի լավ մտածելով, հրաժարվեց այդ կործանարար մտքից։

Գրիգորին էլ սկսեց պատրաստվել մեկնելու։ Նա մաքրեց մաուզերը, հրացանը, կարգի բերեց իրեն հավատարմությամբ ծառայող սուրը. ապաքինվելուց մի շաբաթ անց գնաց ձին տեսնելու, և նայելով դրա պլպլան գավակին. համոզվեց, որ ծերունին նրա ձին էլ է շաղացրել։ Դժվարությամբ նստեց թռչկոտող ձին, կարգին վարժեցրեց դրան ու, վերադառնալով տուն, տեսավ,— գուցեև նրան միայն թվաց,— որպես թե մեկը սպիտակ թաշկինակով իրեն ողջունեց Աստախովենց տան պատուհանից...

Ժողովում տատարցիները որոշեցին մեկնել ամբողջ խուտորով։ Կնանիքը երկու օր կազակների համար ճամփապաշար,— զանազան ուտելիք էին պատրաստում։ Մեկնումը նշանակված էր դեկտեմբերի 12-ին։ Պանտելեյ Պրակոֆևիչը խոտն ու վարսակը իրիկվանից տեղավորեց սահնակի վրա. իսկ առավոտյան, հենց որ լույսը մի քիչ բացվեց, նա հագավ քուրքը, կապեց լաթագոտին, կաշվե թաթմանները խրեց դրա տակ, աղոթեց աստծուն և հրաժեշտ տվեց ընտանիքին։

Շուտով հսկայական գումակը խուտորից ձգվեց սարն ի վեր։ Ճանապարհելու համար դուրս եկած կանայք թաշկինակները երկար թափահարում էին մեկնողների կողմը, հետո էլ տափաստանում քամի բարձրացավ, և ձյան թանձր մուժում էլ չէին երևում ոչ դանդաղորեն սարը բարձրացող սահնակները, ոչ էլ դրանց կողքին քայլող կազակները։

Գրիգորին Վեշենսկի մեկնելուց առաջ տեսնվեց Ակսինյայի հետ, նա Ակսինյայի մոտ մտավ երեկոյան, երբ խուտորում արդեն վառվել էին լույսերը։ Ակսինյան թել էր մանում։ Նրա մոտ նստել էր Անիկուշկայի այրին, գուլպա էր գործում, ինչ-որ բան պատմում։ Տեսնելով կողմնակի կնոջը, Գրիգորին կարճ ասաց Ակսինյային.

— Մի բոպե դուրս եկ, գործ կա։

Հաշտում նա ձեռքը դրեց Ակսինյայի ուսին, հարցրեց.

— Կգա՞ս ինձ հետ նահանջելու։

Ակսինյան երկար լռեց, կշռադատեց պատասխանը, հետո կամացուկ ասաց.

— Բա տնտեսությո՞ւնը, տո՞ւնը։

— Կթողնես մեկն ու մեկին։ Պետք է գնալ։

— Ե՞րբ։

— Էգուց կգամ քեզ տանելու։

Մթության մեջ ժպտալով, Ակսինյան ասաց.

— Հիշո՞ւմ ես, ես քեզ վաղուց ասել էի, որ քեզ հետ կգամ թեկուզ մինչև աշխարհի ծայրը։ Ես հիմի էլ այդպես եմ։ Հավատարմությամբ եմ քեզ սիրում։ Կգամ, ոչ մի բանի էլ մտիկ չեմ անի։ Ե՞րբ սպասեմ քեզ։

— Իրիկունը։ Հետդ շատ բան չվերցնես։ Հագնելիք և ուտելիք,— պրծավ-գնաց։ Դե, առայժմ բարով մնաս։

— Բարով գնաս։ Գուցե նե՞րս գայիր... Նա հիմի կգնա։ Շատ վաղուց է, որ քեզ չեմ տեսել... Սիրելիս, Գրիշենկա։ Ես կարծում էի, թե դու... Չէ, չեմ ասի։

— Ոչ, չեմ կարող։ Հիմի ես պետք է Վեշկի մեկնեմ, բարով մնաս։ Վաղը սպասիր։

Գրիգորին արդեն դուրս էր եկել հաշտից ու հասել բակի դռան, իսկ Ակսինյան դեռ կանգնած էր հաշտում, ժպտում էր ու ձեռքերով շփում հրաբորբոք այտերը։

Վեշենսկում սկսվել էր օկրուգային հիմնարկների և համբարակային պահեստների էվակուացիան։ Գրիգորին օկրուգային ատամանի վարչությունում տեղեկացավ ռազմաճակատի դրության մասին։ Երիտասարդ մի խորունժի, որ ադյուտանտի պաշտոն էր կատարում, ասաց նրան.

— Կարմիրները Ալեկսեևսկայա ստանիցայի մոտերքումն են։ Մեզ հայտնի չէ, թե ինչ զորամասեր պիտի անցնեն Վեշենսկու միջով և արդյո՞ք կանցնեն։ Դուք ինքներդ եք տեսնում—ոչ ոք ոչինչ չգիտե, բոլորն էլ շտապում են փախչել... Ես ձեզ խորհուրդ կտայի այժմ չփնտրել ձեր զորամասը, այլ գնալ Միլլերովո, այնտեղ դուք ավելի շուտ կիմանաք, թե որտեղ է այն։ Համենայն դեպս, ձեր գունդը երկաթուղու գծով է անցնելու։ Հակառակորդին կկանգնեցնե՞ն Դոնի մոտ։

Չեմ կարծում։ Վեշենսկայան կհանձնեն առանց կռվի, դա անկասկած է։

Գրիգորին ուշ գիշերով վերադարձավ տուն։ Ընթրիք պատրաստելով, Իլյինիշնան ասաց.

— Քո Պրոխորը երևաց։ Գնալուցդ մի ժամ անց եկավ ու խոստացավ էլի գալ, բայց չգիտեմ ինչու չի երևում։

Ուրախացած Գրիգորին շուտ-շուտ ընթրեց, գնաց Պրոխորի մոտ։ Վերջինս նրան դիմավորեց անուրախ ժպտալով, ասաց.

— Ես կարծում էի, թե դու նահանջել ես հենց Վեշենսկուց։

— Այդ ո՞ր սատանաներն են քեզ բերել, և ո՞րտեղից,— հարցրեց Գրիգորին՝ ծիծաղելով ու տփտփացնելով հավատարիմ հանձնատարի ուսին։

— Պարզ բան է,— ռազմաճակատից։

— Ճղե՞լ ես։

— Ի՞նչ ես ասում, տնա՛շեն։ Ինձ պես քաջ ռազմիկը կճղի՞։ Օրենքով եմ եկել, չէի ուզում առանց քեզ տաք տեղեր գնալ։ Միասին ենք մեղք գործել, միասին էլ պետք է գնանք ահեղ դատաստանի։ Մեր բանը բուրդ է, գիտե՞ս։

— Գիտեմ։ Դու պատմիր, թե քեզ ո՞նց են թողել զորամասից։

— Դա երկար պատմություն է, հետո կպատմեմ,— խուսափուկ պատասխանեց Պրոխորն ու է՛լ ավելի մռայլվեց։

— Գունդը որտե՞ղ է։

— Սատանեն գիտի, թե հիմի որտեղ է։

— Բա դու ե՞րբ եկար այնտեղից։

— Երկու շաբաթ առաջ։

— Բա այդքան ժամանակ ո՞րտեղ էիր։

— Է-է՛, ի՛նչ տեսակ մարդ ես...— Դժգոհ ասաց Պրոխորը ու աչքերը ծռեց կնոջ կողմը։— ո՛րտեղ էիր, ֆլան, ֆստան... Որտեղ որ եղել եմ, հիմի այնտեղ չեմ։ Ասի կըպատմեմ, ուրեմն կպատմեմ, էլի՛։ Ա՛յ կնիկ, օղի ունե՞ս։ Հարկավոր է, որ ես ու հրամանատարս մի քիչ թրջենք բըկներս, կա՞, թե ոնց։ Չկա՞։ Դեհ, վազ տուր, ճարի, ամա շուտ արի, հա՛-ա։ Մարդդ տանը չի եղել, դրա համար էլ մոռացել ես զինվորական կարգապահությունը։ Փնթիացել ես։

— Էլ ի՞նչ ես լեզվիդ զոռ տալի,— ժպտալով հարցրեց Պրոխորի կինը.— ինձ վրա շատ մի բղավի, հա՛-ա, այնքան էլ տանտիրոջ իրավունք մի բանացնի, տարենը երկու անգամ ես տանը լինում։

— Բոլորն էլ ինձ վրա բղավում են, բա ես քեզնից ջոկ էլ ո՞ւմ վրա բղավեմ։ Հլա կաց, գեներալի աստիճան կստանամ, այն ժամանակ ուրիշների վրա կբղավեմ, իսկ առայժմ համբերի, դե, շուտ հագի հանդերձանքդ ու վազ տուր։

Երբ կինը հագնվեց ու գնաց, Պրոխորը կշտամբանքով նայեց Գրիգորիին, ասաց.

— Դու իսկի ոչ մի հասկացողություն չունես, Պանտելևիչ... Ես հո չե՞մ կարող կնկաս մոտ ամեն բան պատմել քեզ, իսկ դու հուպ ես տալի, թե ոնց եղավ, ինչ եղավ։ Հա՛, տիֆից պրծա՞ր, առողջացա՞ր։

— Ես առողջացել եմ, պատմիր քո մասին։ Այդ ի՞նչ գաղտնիքներ ես պահում, սատանի զավակ... Պատմիր ի՞նչ ես արել, ո՞նց ես ծլկել։

— Այստեղ բանը ծլկելուց էլ վատ է... Քեզ հիվանդ վիճակումդ տուն տանելուց հետո վերադառնում եմ զորամաս։ Ինձ ուղարկում են հարյուրյակ, երրորդ դասակը։ Ես էլ հո սարսափելի սիրում եմ կռվել։ Երկու անգամ գրոհի գնացի, հետո էլ միտք եմ անում. «Այստեղ ես շանսատակ կլինեմ. հարկավոր է մի որևէ ելք գտնել, թե չէ, Պրոշա, այսօր կաս, էդուց չկաս»։ Թարսի պես թունդ կռիվներ սկսվեցին, այնպես են հուպ տալի մեզ, որ չեն թողնում մարդ շունչ քաշի։ Որտեղ որ ճեղքվածք է, մեզ այնտեղ են խոթում. որտեղ դրությունը խախուտ է, էլի մեր գունդը այնտեղ են քշում։ Մի շաբաթվա մեջ հարյուրյակում տասնմեկ կազակ պակասեց, ոնց որ թե իսկի չէին էլ եղել։ Դե, ես էլ դարդոտեցի, դարդից մինչև իսկ վրես ոջիլ երևաց։— Պրոխորը ծխեց, թութունի տոպրակը մեկնեց Գրիգորիին, առանց շտապելու շարունակեց։— Եվ ահա հենց Լիսկիի մոտ ես հետախուզության գնացի։ Երեքով էինք։ Յորղա գնում ենք կոնդի վրով, մտիկ ենք անում բոլոր կողմերը, մեկ էլ ի՞նչ ենք տեսնում,— յառի տակից դուրս է գալի կարմիրներից մեկը ու բարձրացնում է ձեռները։ Մոտենում ենք նրան, իսկ նա բղավում է. Կազակներ, ես ձերոնցից եմ, մի՛ թրատեք ինձ,

ես անցնում եմ ձեր կողմը»։ Սատանեն մոլորեցրեց ինձ. չգիտեմ ինչի կատաղեցի, վրա վազեցի ու ասում եմ նրան. «Շան որդի, թե որ դու հանձն ես առել, որ կռվես, ուրեմն չպիտի անձնատուր լինես։ Ախմախի մեկը,— ասում եմ,— Բա չե՞ս տեսնում, որ մենք թուլացած ենք, զոռով ենք դիմանում։ Դու անձնատուր ես լինում, որ մեզ ուժեղացնես, հա՞-ա»։ Ասի ու թրովս,— առանց պատյանից հանելու,— մի լավ հասցրի քամակին։ Մյուս կազակներն էլ, որոնք ինձ հետ էին, նույնպես նախատեցին նրան. «Բա ո՞նց կարելի է այդպես կռվել, ֆռռալ դես ու դեն, հը՞։ Թե որ վազուց միասին կռվեինք, հո կվերջանար կռիվը»։ Միտք արեցինք՝ սատանեն գիտի ով է սա, մեր կողմը փախած այս մարդը. կարելի է սպա լինի։ Դուրս եկավ, որ նա հենց սպա էր որ կար։ Երբ որ ես հերսիցս նրան խփեցի թրով, նա սփրթնեց ու կամացուկ ասաց. «Ես սպա եմ, չհամարձակվեք ինձ զարկել։ Ես հին ժամանակ հուսար եմ եղել, իսկ կարմիրների մոտ մոբիլիզացիայով եմ ընկել, դուք ինձ տարեք ձեր հրամանատարի մոտ, այնտեղ ես նրան ամեն բան կպատմեմ»։ Մենք ասում ենք՝ «Տուր քո փաստաթուղթը»։ Նա էլ հպարտ պատասխանում է՝ «Ես ձեզ հետ խոսել է՛լ չեմ ցանկանում, տարեք ինձ ձեր հրամանատարի մոտ»։

— Ինչո՞ւ չէիր ուզում կնոջդ մոտ խոսել դրա մասին,— զարմացած ընդհատեց Գրիգորին։

— Հլա դեռ չեմ հասել այն բանին, որի մասին նրա մոտ չէի կարող պատմել, և դու ինձ խնդրեմ չընդհատես։ Մենք որոշեցինք նրան տանել հարյուրյակ, ամա զուր բան էր դա... Պետք է նրան հենց այնտեղ սպանեինք, պրծավ-գնաց։ Բայց մենք նրան տարանք ոնց որ կարգն է, իսկ մեկ օրից հետո ի՞նչ ենք տեսնում. նրան նշանակում են մեր հարյուրյակի հրամանատար։ Եղա՞վ։ Այստեղից էլ սկսվեց խաթան։ Հետո նա կանչում է ինձ, հարցնում է՝ «Այդպե՞ս ես դու կռվում միասնական անբաժանելի Ռուսաստանի համար, հա՞ շան որդի։ Դու ի՞նչ էիր ասում ինձ, երբ գերի էիր վերցնում, հիշո՞ւմ ես»։ Ես դես եմ ընկնում, դեն եմ ընկնում, նա ինձ իսկի չի խղճում, ու հենց հիշում է, որ ես թրով իրեն շրմփացրի, թունդ կատաղում է։ «Դու գիտե՞ս,—

ասում է,— որ ես հուսարական գնդի ռոտմիստր և ազնվական եմ, և դու, գյադայի մեկը, կարողացար ինձ խփել, հա՞-ա»։ Կանչում է հա կանչում, իսկի օր չի տալի։ Դասակապետին հրամայում է հերթից դուրս ինձ ուղարկել ուղեկալ ու պահակախումբ, պատիժ է, որ թափվում է գլխիս, ոնց որ սիսեռն է թափվում դույլից, մի խոսքով, շան որդին հոգիս է հանում։ Հալածում է մյուս երկուսին էլ, որոնք ինձ հետ էին, երբ նրան գերի վերցրինք։ Տղերքը համբերեցին, համբերեցին, հետո էլ մի անգամ կանչում են ինձ ու ասում. «Եկեք դրան սպանենք, թե չէ նա մեզ օր ու արև չի տա»։ Ես միտք արի ու որոշեցի ամեն բան պատմել գնդի հրամանատարին, իսկ սպանել խիղճս չէր թողնում։ Այն մոմենտին, երբ նրան գերի վերցրինք, կարելի էր սատկացնել, իսկ հետո ոնց որ թե ձեռս չէր ուզում բարձրանալ նրա վրա... Երբ որ կնիկս հավ է մորթում, ես փակում եմ աչքերս, իսկ այստեղ արի ու մարդ սպանի...

— Է՛, սպանեցի՞ք,— նորից ընդհատեց Գրիգորին։

— Մի քիչ կաց, ամեն բան կիմանաս։ Հա՛, ես գնացի գնդի հրամանատարի մոտ, պատմեցի, իսկ նա ծիծաղեց ու ասաց. «Դու չպետք է նեղանաս, Զիկով, քանի որ դու ինքդ ես նրան խփել, նա ճիշտ է պահպանում կարգը։ Նա լավ և գիտուն սպա է»։ Դուրս եմ գալի նրա մոտից, մտածում եմ՝ «Դու այդ լավ սպային խաչի տեղակ դայթանով կախ տուր վզիցդ, իսկ ես համաձայն չեմ նրա հետ ծառայել մի հարյուրյակում»։ Խնդրեցի, որ ինձ տեղափոխեն ուրիշ հարյուրյակ, բան դուրս չեկավ, չտեղափոխեցին։ Ես էլ մտածեցի ծլկել զորամասից։ Դե, ո՞նց ծլկես։ Մեզ ետ քաշեցին մոտիկ թիկունքը, մի շաբաթ հանգստանալու համար, ու այստեղ էլի սատանեն մոլորեցրեց ինձ... Մտածում եմ՝ էլ ճար չկա, ես պետք է հիվանդանամ այդ զահրումար տրիպերով, այն ժամանակ կընկնեմ հիվանդանոց, հետո էլ կըստկըսվի նահանջը, բանից այդպես էր երևում։ Կյանքումս իսկի այդ տեսակ բան չէր եղել,— սկսեցի կնանոնց ետևից ընկնել, աչք դնել, թե որն է իր տեսքով կասկածելի։ Դե արի ու իմացի։ Կնկա ճակատին հո չի գրված, թե հիվանդ է, դե արի ու գլուխ ջարդի։— Պրոխորը բարդով թքեց, ակտնջ դրեց, թե արդյոք չի՞ գալիս կինը։

Գրիգորին ձեռքով ծածկեց բերանը, որ թաքցներ ժպիտը, ու փայլեցնելով ծիծաղից կկոցված աչքերը, հարցրեց.

— Հիվանդացա՞ր։

Պրոխորը արցունքոտ աչքերով նայեց նրան։ Դրանց նայվածքը տխուր ու հանգիստ էր ինչպես քավթառ, իր վերջին օրերն ապրող շան նայվածքը։ Կարճ լռությունից հետո նա ասաց.

— Դու կարծում ես հե՞շտ էր հիվանդանալը։ Երբ որ հարկավոր չի, այդ անտերին ոնց որ թե քամին է բերում, իսկ այստեղ թարսի պես չէի հիվանդանում, ուղղակի սիրտս ճաքում էր։

Կիսով չափ շուռ գալով, Գրիգորին ծիծաղում էր անձայն, հետո ձեռքը վերցրեց դեմքից, կերկերող ձայնով հարցրեց.

— Հոգի մի հանիր, ի սեր Քրիստոսի։ Ասա գտար, թե չէ։

— Իհարկե, քեզ համար ծիծաղելի է...— նեղացած ասավ Պրոխորը,— ուրիշի քամբախտության վրա ծիծաղելը ախմախություն է, ես այդպես եմ հասկանում։

— Ես չեմ ծիծաղում... հետո ի՞նչ եղավ։

— Հետո էլ ես սկսեցի տանտիրոջ աղջկա ետևից ընկնել։ Մի քառասուն տարեկան աղջիկ էր, կամ դրանից քիչ փոքր։ Երեսը բշտոտ էր, տեսքն էլ այնպես էր, որ օ՛ֆ, աստված չանի։ Հարևանները ասին, թե նա վերջի օրերումը բուժակի մոտ էր գնում։ «Է՛հ,— միտք եմ անում,— սրանից անպայման մի բան կլինի»։ Եվ ահա ես, ոնց որ ջահել աքլոր, պտույտ եմ գալի նրա շուրջը, քուչս եմ ուռցնում ու թունդ լեզու եմ թափում... Ո՞րտեղից էի գտնում այն խոսքերը, ինքս էլ չեմ հասկանում.— Պրոխորը մեղավորի պես ժպտաց ու կարծես թե նույնիսկ մի փոքր ջվարթացավ հիշողություններից.— խոստանում էի ամուսնանալ և ուրիշ ամեն տեսակ ախմախ բաներ էի ասում... Վերջը մոտիկացա նրա հետ, գրավեցի, հենց այն է, բանը մեղքի էր հասնում, իսկ նա այստեղ լաց է լինում, արտասուք թափում։ Ես գուրգուրում եմ, հարցնում՝ «Կարելի է դու հիվանդ ես, այդ ոչինչ, մինչև իսկ ավելի լավ է»։ Ինքս էլ վախում եմ. գիշեր ժամանակ է, մեկ էլ տեսար մեկն ու մեկը լսեց մեր քչփչոցը ու մոտեցավ հարդանոցին։ «Սուս արա, աստված սիրես,— ասում եմ։— Թե որ դու հիվանդ ես, մի վախի։ Ես

քեզ սիրելուցս ամեն բանի համաձայն եմ»։ Նա էլ ասում է՝ «Իմ սիրելի, Պրոշենկա, ես իսկի էլ հիվանդ չեմ։ Ես կույս աղջիկ եմ, վախում եմ, դրա համար էլ լաց եմ լինում»։ Կըհավատա՞ս, Գրիգորի Պանտելևիչ, հենց որ նա ինձ այդ ասաց, վրաս պաղ քրտինք եկավ։ «Տեր հիսուս,— մտածում եմ,— այս ի՞նչ խաթայի մեջ ընկա, ակաս-մակաս ա՞յդ էր պակաս... Ողբալի ձենով հարցնում եմ նրան. «Բա ինչի՞ էիր բուժակի մոտ վազում, հը՞, անիծված. ինչի՞ էիր մարդկանց խաբում»։— «Նրա մոտ,— ասում է,— գնում էի երեսիս համար դեղ-մեղ վերցնելու»։ Այստեղ ես շվարեցի ու ասում եմ նրան՝ «Հենց հիմի վեր կաց ու հեռացի ինձանից, անիծված լինես դու, գարշելի սատանա։ Դու քո կուսությունով ինձ պետք չես ու ես քեզ հետ չեմ ամուսնանա»,— Պրոխորն էլ ավելի զայրացած թքեց, դժկամ շարունակեց,— այդպես էլ զուր եղան չարչարանքներս։ Գնացի խրճիթ, հավաքեցի ինչ որ ունեի ու հենց նույն գիշերը տեղափոխվեցի ուրիշ բնակարան։ Հետո տղերքից իմացա, որ պետք է ձեռ գցել մի այրի կնկա, սրանից էլ ստացա ինչ որ ինձ պետք էր։ Մենակ թե այստեղ ես երկար ու բարակ չխոսեցի, հարցրի՝ «Հիվա՞նդ ես».— «Մի քիչ կա»,— ասաց նա։ «Էհ, ես էլ հո փթով չեմ ուզում»։ Ինձ փրկելու համար նրան վճարեցի Կերենսկու մի հատ քսանանոց, հետո էլ հիվանդացա ու հա՛յդա դեպի հիվանդանոց, այնտեղից էլ՝ տուն։

— Դու առանց ձիո՞ւ եկար։

— Ո՞նց թե առանց ձիու։ Ձիով և մարտական լրիվ հանդերձանքով։ Տղերքը ինձ համար ձի ուղարկեցին հիվանդանոց։ Մենակ թե բանը այդ չէ, խորհուրդ տուր, թե ինչ ասեմ կնկանս։ Թե ավելի լավ է մեղքից փախչեմ քեզ մոտ գիշերելու։

— Չէ, պետք չի։ Գիշերիր տանդ։ Ասա, որ վիրավորված ես։ Բինտ կա՞։

— Կա անձնական փաթեթ։

— Ուրեմն գործի անցիր։

— Չի հավատա,— տխուր ասաց Պրոխորը, բայց և այնպես վեր կացավ։ Խառնխտելով մախաղները, գնաց օթախ, այնտեղից ցած ձայնով ասաց.— երբ նա գա, զբաղեցրու խոսակցությամբ, իսկ ես հենց հիմի կվերջացնեմ։

Գրիգորին ծխախոտ փաթաթելով, կշռադատում էր մեկնելու պլանը։ «Ձիերը կլծենք ու կգնանք սահնակով,— որոշեց նա։— Պետք է իրիկունը դուրս գալ, որ մերոնք չտեսնեն, թե Ակսինյային տանում եմ ինձ հետ։ Ասենք մեկ է, կիմանան...»

— Հարյուրյակի հրամանատարի մասին խոսքս չվերջացրի.— Պրոխորը մի փոքր կաղալով դուրս եկավ օթախից, նստեց սեղանի մոտ.— հիվանդանոց գնալուցս երկու-երեք օր հետո մերոնք սպանեցին նրան։

— Ինչ ես ասու-ո՞ւմ։

— Ասված վկա։ Կովի մեջ ետևից խփեցին, դրանով էլ բանը վերջացավ։ Դուրս է գալիս, որ ես զուր տեղը փորձանքի մեջ ընկա, այ թե ինչն է ցավալի։

— Մեղավորին չգտա՞ն,— անտարբեր հարցրեց Գրիգորին, որ մտածում էր առաջիկա ճանապարհորդության մասին։

— Էլ ե՞րբ փնտրեին։ Այնպիսի իրարանցում սկսվեց, որ ոչ ոք դրա հետ գլուխ չուներ։ Ի՞նչ եղավ, չեկավ կնիկս, է՛։ Խմելու ախորժակը կփախչի։ Ե՞րբ ես մտածում մեկնել։

— Վաղը։

— Մի օր էլ չսպասե՞նք։

— Ինչի՞ համար։

— Ոչիներս թափ տամ, հետաքրքիր չէ դրանցով գնալ։

— Ճանապարհին թափ կտաս։ Գործը չի թողնում սպասել։ Կարմիրները Վեշկիից երկու օրվա ճանապարհի վրա են։

— Առավոտյա՞ն կգնանք։

— Ոչ, երեկոյան։ Կհասնենք Կարգինսկայա, այնտեղ էլ կգիշերենք։

— Կարմիրները մեզ չե՞ն բռնի։

— Պետք է պատրաստ լինել։ Այ թե ինչ... ես մտածում եմ ինձ հետ տանել Ակսինյա Աստախովային։ Դեմ չե՞ս։

— Ինձ ի՞նչ։ Թեկուզ երկու Ակսինյա վերցրու... Ձիերի բեռը քիչ ծանր կլինի։

— Մեծ ծանրություն չէ։

— Կնանոց հետ ճամփա գնալը հարմար չի... Ախր նա քո ինչի՞ն է պետք, է՛։ Ես ու դու ավելի ազատ կլինենք

ճամփին,— Պրոխորը հոգոց հանեց, մի կողմ նայելով ասաց.— ես այդպես էլ գիտեի, որ դու պետք է քարշ տաս քեզ հետ։ Կնկանից ձեռ չես քաշում, էլի... է-է՛, Գրիգորի Պանտելեևիչ, մտրակը վաղուց կարոտում է քո ջանին։

— Դե, այդ քեզ չի վերաբերում,— սառը տոնով ասաց Գրիգորին,— դրա մասին կնկանդ բան չասես։

— Ե՞րբ եմ ասել որ։ Խիղճ ունեցիր, էլի՛։ Բա Ակսինյան տունը ո՞ւմ է թողնելու։

Հաշտից քայլեր լսվեցին։ Ներս մտավ տանտիրուհին։ Նրա մոխրագույն, բրդոտ շալի վրա պսպղում էր ձյունը։

— Թիփի՞ է։— Պրոխորը պահարանից երկու բաժակ հանեց և միայն այդ պահին հարցրեց.— մի բան բերի՞ր, թե չէ։

Նրա կարմրաթուշ կինը ծոցից հանեց երկու թրջված շիշ, դրեց սեղանին։

— Ա՛յ, լավ է ճամփի համար,— աշխուժացած ասավ Պրոխորը։ Հոտ քաշելով արաղից, ավելացրեց.— առաջին տեսակի է, շատ էլ թունդ է։

Գրիգորին երկու փոքրիկ բաժակ արաղ խմեց ու պատճառ բերելով հոգնածությունը, գնաց տուն։

XXVI

— Է՛հ, պատերազմը վերջացավ։ Կարմիրները այնպես շարդեցին մեզ, որ հիմի մինչև ծովը պիտի ետ-ետ գնանք, մինչև որ հետույքներս ընկնեն աղի ջրի մեջ,— ասաց Պրոխորը՝ երբ դուրս եկան խուտորից ու սկսեցին բարձրանալ սարն ի վեր։

Ներքևում, կապույտ մուժով պարուրված, փռվել էր Տատարսկին։ Ձյունափառ, վարդերանգ հորիզոնում մայր էր մտնում արևը։ Սահնակի հիմնաձողերի տակ ճռռում էր ձյունը։ Ձիերը քայլով էին գնում։ Երկձի սահնակի ետին մասում, կոնակը թամքերին դեմ արած, կիսապառկած էր Գրիգորին։ Նրա կողքին նստել էր Ակսինյան, Դոնի մուշտակով փաթաթված, որի բոլորքը ջրաքիսի մորթուց էր։ Սպիտակ, բրդոտ շալի տակից փայլում, խնդագին կայծկլտում էին նրա սև աչքերը։ Գրիգորին շեղակի նայում էր նրան, տեսնում էր ցրտից քնքշորեն շիկնած այտը, խիտ, սև հոնքը ու եղյամակալած կամար արտևանունքի տակին կապտավուն փայլ արձակող ակնասպիտակուցը։ Ակսինյան աշխույժ հետաքրքրությամբ դիտում էր ձյունով ու ձնակույտով պատած տափաստանը, պսպղալու չափ տրորված ճանապարհը, հեռավոր, միգապատ հորիզոնները։ Տանը նստելուն սովոր Ակսինյայի համար ամեն ինչ նոր էր ու արտասովոր, ամեն ինչ գրավում էր նրա ուշադրությունը։ Բայց երբեմն էլ, խոնարհելով աչքերը և արտևանունքների վրա զգալով եղյամի ծակծկող, դուրեկան պաղությունը, նա ժպտում էր այն մտքից, որ այդպես անսպասելի ու տարօրինակ կերպով իրականացավ իրեն վաղուց գերող երազանքը,— Գրիգորիի հետ մեկնել որևէ տեղ, հեռանալ Տատարսկից, հարազատ և անիծված վայրերից, ուր այնքան շատ էր տանջվել ինքը, ուր իր կյանքի կեսը ապրել էր չսիրած ամուսնու հետ, ուր նրա համար ամեն ինչ լեցուն էր ահռելի ու ծանր հուշերով։ Նա ժպտում էր՝ ամբողջ մարմնով զգալով Գրիգորիի ներկայությունը, և արդեն չէր մտածում ոչ այն մասին, թե ինչ գնով էր ձեռք բերել այդ երջանկությունը, ոչ էլ ապագայի մասին, որը վարագուրված էր նույնպիսի մթին միգով, ինչպես և այդ տափաստանային, հեռածավալ, դյութեղ հորիզոնները։

Պատահմամբ ետ նայելով, Պրոխորը նկատեց Ակսինյայի կարմիր և սառնամանիքից ուռած շուրթերի դողդոջ ժպիտը՝ բարկությամբ հարցրեց.

— Էլ ի՞նչ ես ատամներդ ցույց տալի։ Հարս ես դառել, պրծավ-գնաց։ Ուրա՞խ ես, որ տնից դուրս պրծար։

— Դու կարծում ես ուրախ չե՞մ,— զրնգուն ձայնով պատասխանեց Ակսինյան։

— Լա՜վ ուրախություն է... հիմար կնիկ ես դու։ Հլա դեռ չի երևում, թե այս զբոսանքը ինչով կվերջանա, և դու վաղորոք մի ժպտա, ծածկի ատամներդ։

— Ինձ համար ամեն բան լավ կլինի։

— Մտիկ եմ անում ձեզ, ու սիրտս այնպես է խառնում...— Պրոխորը ցասկոտ մտրակեց ձիերը։

— Դու էլ շուտ եկ ու մատդ տար բերանդ,— ծիծաղելով խորհուրդ տվեց Ակսինյան։

— Բա որ ասում եմ հիմար կնիկ ե՞ս։ Այդպես էլ մատս բերանս դրած գնամ մինչև ծովը, հա՞-ա։ Միթամ բա՛ն ասացիր։

— Այդ ինչի՞ց է, որ սիրտդ խառնում է։

— Լավ կլիներ սուս անեիր։ Մարդդ ո՞րտեղ է։ Կպել ես ուրիշին ու գնում ես, սատանեն գիտե թե ուր։ Բա որ հիմի Ստեպանը գա խուտոր, ի՞նչ կլինի։

— Գիտե՞ս ինչ, Պրոշա, լավ կլիներ դու մեր գործերին չխառնվեիր,— խնդրեց Ակսինյան,— թե չէ դու էլ բախտավոր չես լինի։

— Ես չեմ խառնվում ձեր գործերին, դուք իմ ինչի՞ն եք պետք։ Ես հո կարո՞ղ եմ ասել իմ կարծիքը։ Թե՞ ես ձեզ հետ պետք է գնամ իբրև կառապան և միայն ձիերի հետ խոսեմ։ Միթամ էլի բա՛ն ասիր։ Չէ, Ակսինյա, թեկուզ բարկանաս, թեկուզ չբարկանաս, բայց քեզ պետք է ծեծել մի մեծ ճիպոտով, ծեծել ու չթողնել, որ ձեն-ծպտուն հանես։ Իսկ բախտավորության կողմից ինձ մի վախեցնի, իմ բախտը ինձ հետ է։ Նա մի առանձին տեսակի է, այնպես է, որ ոչ երգ է ասում, ոչ էլ քնել է թողնում... Դեհ, անկծվածներ, կարգին վազեք, էլի, կախականջ սատանեք։

Գրիգորին լսում էր ժպտալով, հետո էլ հաշտվողաբար ասաց.

— Ամենից առաջ մի նախատեք իրար։ Մեր ճամփեն երկար է, դրա համար դեռ ժամանակ կունենաք։ Ինչի՞ ես կպչում սրան, Պրոխոր։

— Նրա համար եմ կպչում,— վրդովված ասաց Պրոխորը,— որ նա ինձ հակառակ է խոսում։ Ես հիմի միտք եմ անում, որ արար-աշխարհում կնանոնցից ավելի փիս բան չկա։ Դրանք փշի սերմեր են... դրանք, աղբերս, այդ կնանիքը, աստծու ամենափիս հնարքն են։ Ես դրանց, այդ վնասակար սատանաներին մեկ-մեկ բնաջինջ կանեի, որ աշխարհում դրանց իղն ու թոքն էլ չերևար։ Ա՛յ թե հիմի դրանց վրա ոնց եմ չարացել։ Դու ինչի՞ ես ծիծաղում։ Ուրիշի քամբախտության վրա ծիծաղելը ախմախություն է։ Բռնի երասանները ես մի բոպե կիջնեմ։

Պրոխորը երկար ժամանակ ոտով էր գնում, հետո էլ տեղավորվեց սահնակի վրա ու այլևս չէր խոսում։

Գիշերեցին Կարգինսկայայում։ Առավոտյան, նախաճաշելով, նորից ճանապարհվեցին ու մինչև երեկո վաթսուն վերստ ճանապարհ անցան։

Փախստականների հսկայական գումակները ձգվում էին դեպի հարավ։ Գրիգորին որքան հեռանում էր Վեշենսկայա ստանիցայի հողից, այնքան դժվարանում էր գիշերելու տեղ գտնելը։ Մորոզովսկու մոտ սկսեցին հանդիպել կազակների առաջին զորամասերը։ Գնում էին հեծյալ զորամասերը, որոնցից ամեն մեկում երեսուն-քառասուն մարդուց ավելի չկար, անվերջ ձգվում էին գումակները։ Երեկոներին խուտորներում բոլոր շենքերը զբաղված էին լինում և ոչ միայն գիշերելու, այլև ձիերը կանգնեցնելու տեղ էլ չէր լինում։ Ուկրաինական գյուղերից մեկում, գիշերելու համար երկար ժամանակ տուն փնտրելով, Գրիգորին ստիպված եղավ գիշերը անցկացնել մի մարագում։ Բուք-բորանի ժամանակ թրջված հագուստը առավոտյան սառել էր, ծռմռվել ու ճըք-ճըքում էր ամեն մի շարժումից։ Գրիգորին, Ակսինյան ու Պրոխորը համարյա ամբողջ գիշերը չքնեցին, լուսաբացից առաջ բակից դուրս մի տեղ ծղնոտից խարույկ վառեցին ու միայն այդ կերպ տաքացան։

Առավոտը Ակսինյան երկչոտությամբ առաջարկեց.

— Գրիշա, գուցե ցերեկը այստե՞ղ անցկացնենք։ Ամբողջ գիշերը տանջվել ենք ցրտից ու համարյա չենք քնել, գուցե մի քիչ հանգստանա՞նք։

Գրիգորին համաձայնվեց։ Նա դժվարությամբ մի ազատ անկյուն գտավ, լուսաբացին գումակները շարունակել էին իրենց ճանապարհը, բայց շրջիկ լազարեթը, որ ավելի քան հարյուր վիրավոր և տիֆով հիվանդներ էր փոխադրում, նույնպես մնացել էր ցերեկը այնտեղ անցկացնելու։

Մի փոքրիկ սենյակում, կեղտոտ, հողե հատակի վրա քնած էին մի տասը կազակ։ Պրոխորը ներս բերեց կարպետը և ուտելիքով լեցուն պարկը, հենց դռան մոտ ծղնոտ փռեց, ոտից բռնեց ու մի կողմ քարշ տվեց մեռածի նման քնած մի ինչ-որ ծերունու, մի փոքր կոպիտ սիրալիրությամբ ասաց.

— Պառկի, Ակսինյա, թե չէ այնքան ես բեզարել, որ իսկի ինքդ քեզ նման չես։

Գյուղը երեկոյան նորից ծայրեծայր լցվեց մարդկանցով։ Մինչև արշալույս փողոցներում խարույկներ էին վառվում, լսվում էին մարդկային ձայներ, ձիերի խրխնջոց, սահնակների հիմնաձողերի ճռճռոց։ Հենց որ մի քիչ լույսը բացվեց, Գրիգորին արթնացրեց Պրոխորին, շշնջաց.

— Լծիր։ Պետք է գնալ։

— Ինչո՞ւ այսքան վաղ,—հորանջելով հարցրեց Պրոխորը։

— Ականջ դիր։

Պրոխորը թամքի բարձից բարձրացրեց գլուխը, լսեց թնդանոթային կրակոցի խուլ ու հեռավոր որոտմունքը։

Լվացվեցին, խոզաճարպ կերան ու դուրս եկան աշխուժացած գյուղից։ Փողոցներում շարեշար սահնակներ էին կանգնած, իրար էին անցնում մարդիկ, վաղորդյան խավարում մեկը խռպոտ ձայնով բղավում էր.

— Չէ ու չէ, ինքներդ թաղեք դրանց։ Մինչև մենք վեց մարդու գերեզման փորենք, կեսօր կլինի։

— Ախր մենք հո պարտավոր չե՞նք թաղել,— հանգիստ հարցրեց մի ուրիշը։

— Ոչինչ, կթաղեք,— բղավեց խռպոտ ձայնով խոսողը։ — Իսկ եթե չեք ուզում, թող մնան հոտեն այստեղ, իմ ի՞նչ գործն է։

— Ի՞նչ եք ասում, պարոն բժիշկ։ Թե որ մենք բոլորին թաղենք, ովքեր այստեղից անցնելիս մեռնում են, ուրեմն էլ ուրիշ գործ չպիտի անենք։ Կարելի է վերցնե՞ք դրանց։

— Կորի գնա, ավանակի մեկը։ Ուզում ես որ քո պատճառով լազարեթը կարմիրների՞ն հանձնեմ, հա՞։

Սայլերով լեփ-լեցուն փողոցով անցնելիս Գրիգորին ասաց.

— Մեռելները ոչ ոքի պետք չեն...

— Այստեղ կենդանի մարդկանց մասին էլ չեն մտածում, էլ ո՛ւր մնաց մեռելների մասին,— արձագանքեց Պրոխորը։

Դոնի բոլոր հյուսիսային ստանիցաները դեպի հարավ էին շարժվում։ Փախստականների բազմաթիվ գումակները անցան Յարիցին—Լիխայա երկաթուղին, մոտեցան Մանիչին։ Մի շաբաթ գտնվելով ճանապարհին, Գրիգորին հարցուփորձ էր անում տատարցիների մասին, բայց այն խուտորներում, որոնց միջով անցնում էր նա, տատարցիները չէին եղել. ամենայն հավանականությամբ նրանք շուռ էին եկել ձախ կողմը ու, չմտնելով ուկրաինացիների գյուղերը, կազակական խուտորների միջով գնում էին դեպի Օբլիվսկայա։ Միայն տասներեքերորդ օրը Գրիգորիին հաջողվեց գտնել իրենց խուտորցիների հետքը։ Արդեն երկաթուղին անցնելուց հետո խուտորներից մեկում նա պատահմամբ իմացավ, որ հարևան տանը Վեշենսկայա ստանիցայի մի կազակ է պառկած, որ հիվանդ է տիֆով։ Գրիգորին գնաց իմանալու, թե որտեղացի է այդ հիվանդը, ու մտնելով ցածրիկ մի խրճիթ, տեսավ հատակի վրա պառկած ծերունի Օբնիզովին։ Գրիգորին նրանից իմացավ, որ տատարցիները երկու օր առաջ գնացել էին այդ խուտորից, որ նրանց մեջ տիֆով հիվանդներ շատ կան, որ երկուսը արդեն մեռել են ճանապարհին և որ նրան, Օբնիզովին իր ցանկությամբ թողել են այստեղ։

— Թե որ առողջանամ և կարմիր ընկերները խղճան ինձ, չսպանեն, մի կերպ տուն կհասնեմ, իսկ եթե ոչ, կմեռնեմ այստեղ։ Որտեղ մեռնես մեկ է, ամեն տեղ էլ ցավալի է դա...— ասաց ծերունին՝ հրաժեշտ տալով Գրիգորիին։

Գրիգորին հարցրեց հոր առողջության մասին, բայց Օբնիզովը պատասխանեց, թե ոչինչ չի կարող ասել, որովհետև եկել էր ետին սայլերից մեկով և Մալախովսկի խուտորից սկսած Պանտելեյ Պրակոֆևիչին չէր տեսել։

Գիշերելու հետևյալ վայրում Գրիգորիի գործը հաջող գնաց։ Հենց առաջին տանը , ուր նա մտավ, որպեսզի գիշերելու տեղ խնդրի,— հանդիպեց ծանոթ կազակների, որոնք Վերխնե-Չիր խուտորից էին։ Նրանք տեղ տվին, ու Գրիգորին տեղավորվեց վառարանի մոտ։ Սենյակում իրար վրա թափված պառկել էին մի տասնհինգ հոգի փախստականներ, որոնցից երեքը տիֆով հիվանդներ էին ու մեկն էլ ցրտահար էր եղել։ Ընթրիքի համար կազակները կորեկաձավարից խոզաճարպով կաշա եփեցին, սրտաբացությամբ առաջարկեցին Գրիգորիին և նրա ուղեկիցներին։ Պրոխորը և Գրիգորին ախորժակով էին ուտում, Ակսինյան հրաժարվեց։

— Բա սոված չե՞ս,— հարցրեց Պրոխորը, որը վերջին օրերում առանց նկատելի պատճառի փոխել էր իր վերաբերմունքը դեպի Ակսինյան ու վերջինիս հետ կոպիտ, բայց կարեկցաբար էր վարվում։

— Սիրտս խառնում է...— Ակսինյան շալը գցեց վրան, դուրս ելավ խրճիթից։

— Չլինի՞ թե հիվանդացել է,— հարցրեց Պրոխորը՝ դիմելով Գրիգորիին։

— Ո՛վ գիտի.— Գրիգորին դեն հրեց կաշայով լցված ափսեն, նույնպես դուրս ելավ։

Ակսինյան կանգնել էր մուտքի սանդուղքի մոտ, ձեռքը սեղմել կրծքին։ Գրիգորին գրկեց նրան, անհանգստությամբ հարցրեց.

— Ի՞նչ պատահեց քեզ, Կսյուշա։

— Սիրտս խառնում է ու գլուխս ցավում։

— Գնա խրճիթ, կպառկես։

— Գնա, ես հիմի կգամ։

Ակսինյայի ձայնը խուլ ու նվաղկոտ էր, շարժումները թույլ էին։ Երբ նա մտավ խիստ տաք վառած սենյակը, Գրիգորին խորաձնին նայեց նրան, նկատեց այտերի բորբոք կարմրությունը, աչքերի կասկածելի փայլը։ Նրա սիրտը ճմլվեց անհանգստությունից. Ակսինյան պարզապես հիվանդ էր։ Գրիգորին հիշեց, որ նա երեկ էլ գանգատվում էր դողից ու գլխապտույտից, իսկ առավոտյան դեմ այնպես էր քրտնել, որ վզին ընկած մազափնջերը թրջվել էին, ասես նա լողացել էր. արշալույսին արթնանալով, Գրիգորին նկատել էր այդ, ու երկար ժամանակ աչք չէր կտրում Ակսինյայից, չէր ուզում վեր կենալ, որպեսզի չարթնացներ նրան։

Ակսինյան արիաբար տանում էր ճանապարհի զրկանքները, նա մինչև անգամ քաջալերում էր Պրոխորին, որը հաճախ ասում էր. «Այս ի՞նչ զահրումար պատերազմ է, և ո՞վ է գլխից այս տեսակ բան հանել։ Ցերեկը գնում ես ու գնում, իսկ երբ կանգ առար, գիշերելու տեղ չի լինում, ու հայտնի չէ, թե մինչև երբ ենք այսպես քարշ գալու»։ Բայց այդ օրը Ակսինյան էլ չդիմացավ։ Գիշերը, երբ պառկեցին քնելու, Գրիգորին թվաց, թե նա լալիս է։

— Ի՞նչ պատահեց քեզ,— շշնջալով հարցրեց նա,— ի՞նչդ է ցավում։

— Հիվանդացել եմ... Հիմա ի՞նչ անենք։ Կթողնե՞ս ինձ։

— Ա՛յ քեզ հիմար։ Ո՞նց կթողնեմ քեզ։ Լաց մի լինի, գուցե դատարկ բան է, ճանապարհին մրսած կլինես, պետք չէ վախենալ։

— Գրիշենկա, սա տիֆ է։

— Չուր մի խոսի։ Ոչինչ էլ չկա. ճակատդ սառն է, գուցեև տիֆ չէ։— Մխիթարում էր Գրիգորին, բայց ներքուստ համոզված էր, որ Ակսինյան հիվանդացել է բծավոր տիֆով, ու տանջալից կերպով մտածում էր, թե ինչպես վարվի նրա հետ, եթե հիվանդությունը նրան գետին գլորի։

— Օֆ, ծանր է այսպես ճանապարհ գնալը,— շշնջաց Ակսինյան՝ սեղմվելով Գրիգորիին։— Տես թե ինչքան մարդ է լցվում գիշերելու տեղերը։ Ոջիլները կուտեն մեզ, Գրիշա։ Ես վրես նայելու տեղ էլ չունեմ, չորս բոլորս տղամարդիկ են... Երեկ մտա մարագը, հանեցի շորերս, ու շապիկիս վրա... Տեր աստված, կյանքումս այս տեսակ չարչարանք չեմ տեսել։ Հենց որ դրանք միտս են գալի, սիրտս խառնում է, ոչինչ չեմ ուզում ուտել... Երեկ տեսա՞ր, թե ինչքան կար նստարանին պառկած այն ալևորի վրա։ Դրանք հենց չեքմենի վրայով են սողում։

— Դու դրանց մասին մի մտածի, սատանեն գիտե, թե ինչեր ես ասում։ Դե, ոջիլներ կան, հետո ի՞նչ, ծառայության մեջ դրանց չեն հաշվում,— սրտնեղելով շշնջաց Գրիգորին։

— Ամբողջ մարմինս քոր է գալի։

— Բոլորի մարմինն էլ քոր է գալի, ի՞նչ արած։ Համբերի։ Կհասնենք Եկատերինոդար, այնտեղ կլողանանք։

— Մաքուր շոր հագնելն էլ զուր է,— հոգոց հանելով ասաց Ակսինյան։— Կկորչենք մենք դրանցից, Գրիշա։

— Քնիր, էգուց շուտ ենք գնալու։

Գրիգորին երկար ժամանակ չէր կարողանում քնել։ Ակսինյան էլ չէր քնում։ Նա մի քանի անգամ հեկեկաց՝ մուշտակի փեշը քաշելով գլխին. հետո երկար շուռ էր գալիս այս ու այն կողմ, հառաչում էր, ու քուն մտավ միայն այն ժամանակ, երբ Գրիգորին երեսով դարձավ նրա կողմը, գրկեց

նրան։ Գիշերվա կեսին Գրիգորին արթնացավ ուժեղ թխկոցից։ Մեկը ծեծում էր դուռը, հուժկու ձայնով գոռում.

— Դեհ, բաց արեք, թե չէ դուռը կջարդենք։ Քնե՛լ են անիծվածները...

Տանտերը,— տարեց և հանգիստ մի կազակ,— դուրս ելավ հաշտը, հարցրեց.

— Ովքե՞ր եք, ի՞նչ եք ուզում։ Եթե գիշերելու եք եկել, մեզ մոտ տեղ չկա, տունը լեփ-լեցուն է, շարժվելու տեղ չկա։

— Քեզ ասում են բաց արա,— գոռացին դրսից։

Դուռը լայն բաց անելով, մի հինգ հոգի զինված կազակներ լցվեցին նախասենյակը։

— Ովքե՞ր են գիշերում քեզ մոտ,— հարցրեց նրանցից մեկը, որ սառնամանիքից սևացել, թուջի գույն էր ստացել և դժվարությամբ էր շարժում սառած շրթունքները։

— Փախստականները։ Իսկ դուք ովքե՞ր եք։

Պատասխանի փոխարեն նրանցից մեկը քայլեց դեպի օթախը, գոռաց.

— Է՛յ, ի՞նչ եք փովել, հենց հիմի դուրս գնացեք այստեղից։ Այստեղ զորքեր են տեղավորվում։ Վեց կացեք, վեր կացեք։ Շուտ արեք, թե չէ մենք ձեզ դուրս կշպրտենք։

— Դու ո՞վ ես, որ այդպես բոռում ես,— քնկոտ, խռպված ձայնով հարցրեց Գրիգորին և դանդաղ վեր կացավ։

— Ես հիմի քեզ ցույց կտամ, թե ով եմ,— կազակը քայլեց դեպի Գրիգորին, ու նավթի լամպի աղոտ լույսի տակ նրա ձեռքին պլպլաց նագանի փողաբերանը։

— Ի՞նչ ճարպիկն ես, հա՛-ա...— կեղծ երկյուղածությամբ ասաց Գրիգորին,— ապա, ցույց տուր քո խաղալիքը։— Արագ շարժմամբ նա բռնեց կազակի ձեռքի դաստակը, սեղմեց այնպիսի ուժով, որ կազակը ախ արավ ու թուլացրեց մատները։ Նագանը մեղմ թխկոցով ընկավ կարպետի վրա։ Գրիգորին ետ հրեց կազակին, արագ կռացավ, վերցրեց նագանը, դրեց գրպանը, հանգիստ ասաց.— իսկ հիմա եկ խոսենք։ Ո՞ր զորամասից ես։ Այստեղ քանի՞ հոգի կլինեն քեզ նման ժիր մարդիկ, քեզ հետ եկածները։

Կազակը ուշքի գալով անակնկալից, բղավեց.

— Տղերք, այստեղ եկեք։

Գրիգորին մոտեցավ դռանը, կանգնեց շեմքի վրա ու, մեջքը դեմ անելով դրանդիին, ասաց.

— Ես Դոնի տասնիններորդ գնդի հարյուրապետ եմ։ Կամա՛ց։ Զբղավե՛լ։ Ո՞վ է այնտեղ ճվճվում։ Այդ ի՞նչ է, հարգելի կազակներ, ի՞նչ զալմաղալ եք անում։ Այդ ո՞ւմ պիտի դուրս շպրտեք։ Ո՞վ է ձեզ այդպիսի լիազորություններ տվել, հը՞։ Դեհ, մա՛րշ, հեռացեք այստեղից։

— Ի՞նչ ես գոռում,— բարձրաձայն ասաց կազակներից մեկը։— Քեզ պես հարյուրապետներ մենք շատ ենք տեսել։ Մենք պետք է բակո՞ւմ գիշերենք, ինչ է։ Աղատեք շենքը։ Մեզ այսպիսի հրաման է տրված,— բոլոր փախստականներին դուրս անել տներից, հասկանալի՞ է։ Հլա դեռ գոռում ես էլ։ Քեզ նմաններին շատ ենք տեսել։

Գրիգորին հուպ մոտեցավ խոսողին, իրար սեղմվող առամների միջից մռմռաց.

— Ինձ նմաններին դու հլա դեռ չես տեսել։ Քեզ երկու կտո՞ր անեմ, հիմար։ Այդպես էլ կանեմ։ Չէ, դու ետ-ետ մի գնա, սա իմ նագանը չի, ձերոնցից եմ խլել։ Ա՛ռ, կտաս տիրոջը, ու շուտ ռադ եղեք այստեղից, քանի դեռ չեմ զարկել, թե չէ հիմի կաշիներդ կքերթեմ։— Գրիգորին թեթևակի շուռ տվեց կազակին, հրեց դեպի դուրս։

— Շրմփացնե՞մ սրան,— մտամոլոր հարցրեց հաղթանդամ մի կազակ, որի դեմքը փաթաթված էր ուղտի բրդից գործած բաշլուղով։ Նա կանգնել էր Գրիգորիի ետևում՝ ուշադրությամբ զննելով նրան, կոթնելով մեկ կամ մյուս ոտին, ճռճռացնելով ահագին թաղյակները, որոնց տակին կաշի էր կարված։

Գրիգորին շուռ եկավ նրա կողմը, և արդեն սաստիկ զայրացած, սեղմեց բռունցքները, բայց կազակը բարձրացրեց ձեռքը, բարեկամաբար ասաց.

— Լսի՛ր դու, ձերդ բարեծննդություն, կամ ոնց անվանեմ քեզ, չգիտեմ. կա՛ց, մի՛ զարկի։ Մենք կհեռանանք զալմաղալից։ Բայց դու հիմիկվա ժամանակներում շատ մի քշի կազակների վրա։ Հիմի էլի լուրջ ժամանակ է գալի, ոնց որ տասնյոթ թվին էր։ Կհանդիպես գլխից անցած մարդկանց, ու նրանք քեզ ոչ թե երկու, այլ տասը կտոր կանեն։ Մենք տեսնում ենք, որ քաջ սպա ես, ու խոսելուցդ երևում է, որ մեզ

նմաններից ես, բայց դու հիմի քեզ զգույշ պահի, թե չէ գըլխիդ խաթա կգա...

Այն կազակը, որի նագանը խլել էր Գրիգորին, ջղայնությամբ ասավ.

— Հերիք է դրա գլխին ավետարան կարդաս։ Գնանք հարևան խրճիթը։— Նա առաջինը քայլեց դեպի շեմքը ու, անցնելով Գրիգորիի կողքից, ծուռ նայեց նրան, ափսոսանքով ասաց.— Չենք ուզում կպչել քեզ, պարոն սպա, թե չէ մենք քեզ կսղկեինք։

Գրիգորին արհամարհանքով ծռմռեց շրթունքները.

— Հենց դու պիտի սղկեիր, հա՞-ա։ Գնա, գնա, քանի դեռ շալվարդ չեմ հանել։ Սղկողի՞ս մտիկ։ Ափսոս որ նագանդ ետ տվի, քեզ նման կտրիճները ոչ թե նագան, այլ ոչխար խուզելու մկրատ պիտի կրեն։

— Գնանք, տղերք, ջհաննամը գնա սա։ Քանի փորես, այնքան փիս հոտ կգա,— բարեսրտությամբ ծիծաղելով՝ ասաց այն կազակներից մեկը, որոնք չէին մասնակցել խոսակցությանը։

Հայհոյանք թափելով, ճռճռացնելով սառած սապոգները, կազակները խմբովին դուրս գնացին։ Գրիգորին խստորեն հրամայեց տանտիրոջը.

— Չհամարձակվես դուռը բաց անել։ Կծեծեն ու կհեռանան, իսկ եթե չհեռանան, արթնացրու ինձ։

Վերին Ջիրի կազակները աղմուկից արթնանալով, ցածրաձայն խոսում էին իրար մեջ։

— Ա՛յ թե ո՛նց փուլ եկավ դիսցիպլինան,— տխուր հոգոց հանեց ծերուկներից մեկը։— Շան որդենիքը տես թե ոնց են խոսում սպայի հետ... Բա որ հին ժամանակները լինեի՞ն։ Դրանց հո տաժանակրության կքշեին։

— Խոսելը հե-ե՛չ։ Տեսա՞ր, կուվել էին ուզում։ «Շրըմփացնե՞մ սրան»,— ասում է մեկը, այն ածդահա բարդին, որ բաշլուղով էր։ Ո՛նց են կատաղել այդ սատանեքը։

— Եվ դու նրանց կներե՞ս այդ բանը, Գրիգորի Պանտելեիչ,— հարցրեց կազակներից մեկը։

Շինելը քաշելով վրան ու անչար ժպիտը դեմքին ականջ դնելով խոսակցությանը, Գրիգորին պատասխանեց.

— Դե, նրանցից ի՞նչ պահանջես։ Նրանք հիմի բոլորից էլ կտրվել են ու ոչ ոքի չեն ենթարկվում. գնում են խուժանավարի, առանց հրամանատարական կազմի, ո՞վ է նրանց դատավորը և ո՞վ է պետը։ Նրանց պետը նա է, ով նրանցից ուժեղ է։ Նրանց զորամասում երևի ոչ մի սպա էլ չի մնացել։ Ես տեսել եմ այդպիսի հարյուրյակներ,— անտեր-անգլուխ մարդիկ են։ Էհ, քնեցինք։

Ակսինյան կամացուկ շշնջաց.

— Ախր ի՞նչ գործ ունեիր նրանց հետ, Գրիշա։ Այդպիսի մարդկանցից հեռու կաց, ի սեր Քրիստոսի։ Նրանք կարող են և սպանել, կովարարներ են։

— Քնիր, քնիր, էգուց շուտ ենք վեր կենալու։ Հը՛, ո՞նց ես զգում քեզ, լա՞վ ես։

— Էլի այնպես է։

— Գլուխդ ցավո՞ւմ է։

— Ցավում է։ Երևի էլ վեր չեմ կենա...

Գրիգորին ձեռքը դրեց Ակսինյայի ճակատին, հոգոց հանեց.

— Քեզանից տաքություն է գալի, ոնց որ վառարանից։ Ոչինչ, մի վախենա։ Առողջ կնիկ ես, կլավանաս։

Ակսինյան լռեց։ Ծարավը նեղում էր նրան։ Մի քանի անգամ նա գնում էր խոհանոց, խմում գարշելի, տաքացած ջուրը և, հաղթահարելով սրտախառնուքն ու գլխապտույտը, նորից պառկում էր կարպետի վրա։

Գիշերվա ընթացքում էլի չորս խումբ մարդիկ եկան։ Նրանք հրացանների կոթերով ծեծում էին դուռը, բաց անում փեղկերը, թխկթխկացնում պատուհանները ու հեռանում միայն այն ժամանակ, երբ տանտերը կատարելով Գրիգորիի ցուցումը, հայհոյելով գոռում էր հաշտից. «Հեռացեք այստեղից, այստեղ բրիգադի շտաբն է տեղավորվել»։

Լուսաբացին Պրոխորն ու Գրիգորին լծեցին ձիերը։ Ակսինյան դժվարությամբ հագնվեց, դուրս եկավ։ Ծագում էր արևը։ Գորշ-կապտավուն ծուխը ծխնելույզներից երկինք էր բարձրանում։ Ներքևից արևով լուսավորված կարմիր մի ամպիկ բարձր կանգնած էր երկնքում։ Ցանկապատի, մարագների կտուրների վրա խիտ եղյամ էր նստել։ Ձիերից գոլորշի էր բարձրանում։

Գրիգորին օգնեց Ակսինյային սահնակ նստելու, հարցրեց.

— Գուցե կպառկե՞ս։ Քեզ համար ավելի հարմար կլինի։

Ակսինյան գլխով դրական նշան արեց։ Նա լռին շնորհակալությամբ նայեց Գրիգորիին, երբ վերջինս խնամքով փաթաթեց նրա ոտները. Ակսինյան գոցեց աչքերը։

Կեսօրին, երբ ճանապարհից երկու վերստ հեռու գտնվող Նովո-Միխայլովսկ գյուղում կանգ առան ձիերին կեր տալու, Ակսինյան արդեն չկարողացավ սահնակից վեր կենալ։ Գրիգորին նրան թեանցուկ տարավ տուն, պառկեցրեց մահճակալին, որ հյուրընկալաբար առաջարկել էր տանտիրուհին։

— Վա՞տ ես զգում քեզ, հարազատս,— հարցրեց Գրիգորին՝ թեքվելով գունաթափ Ակսինյայի վրա։

Ակսինյան դժվարությամբ բացեց աչքերը, նայեց մշուշված հայացքով և նորից ընկավ կիսամոռացության մեջ։ Գրիգորին դողդոջ ձեռքերով նրա վրայից հանեց շալը։ Ակսինյայի այտերը պաղ էին ինչպես սառույց, իսկ ճակատը վառվում էր, ու քունքերին, ուր դուրս էր տալիս քրտինքը, սառցի լուլաներ էին կպել։ Իրիկնադեմին Ակսինյան կորցրեց գիտակցությունը։ Դրանից առաջ նա ջուր խնդրեց, շշընջաց.

— Միայն սառը, ձյան ջուր,— մի փոքր լռեց և պարզ արտասանեց.— կանչեցեք Գրիշային։

— Ես այստեղ եմ։ Ի՞նչ ես ուզում, Կսյուշկա։— Գրիգորին վերցրեց նրա ձեռքը, շոյեց անշնորհք կերպով և ամաչկոտությամբ։

— Ինձ չթողնես, Գրիշենկա։

— Չեմ թողնի, այդ ո՞րտեղից վերցրիր։

— Մի թողնի օտար տեղում։ Ես կմեռնեմ այստեղ։

Պրոխորը ջուր բերեց։ Ակսինյան չորացած շուրթերը ագահությամբ հպեց պղնձե գավաթի բերանին, մի քանի կում խմեց ու, տնքալով, գլուխը գցեց բարձին։ Հինգ րոպեից հետո սկսեց խոսել անկապ ու անհասկանալի։ Գրիգորին, որ նստել էր նրա գլխավերևում, լսեց մի քանի բառ. «Պետք է լվալ... լեղակ ճարի... շուտ է...» Ակսինյայի անհասկանալի խոսքերը շշնջոցի փոխվեցին։ Պրոխորը օրորեց գլուխը, կշտամբանքով ասաց.

— Ասում էի քեզ, մի՛ վերցրու սրան։ Հիմի ի՞նչ պիտի անենք։ Պատիժ է, էլի, աստված վկա։ Այստե՞ղ պիտի գիշերենք, հը՞։ Խլացե՞լ ես, ինչ է։ Հարցնում եմ՝ այստե՞ղ պիտի գիշերենք, թե՞ գնանք։

Գրիգորին լուռ էր։ Նա նստել էր կորացած, աչք չկտրելով Ակսինյայի դալկացած դեմքից։ Տանտիրուհին,— սրտաբաց ու բարի մի կին,— աչքերով ցույց տալով Ակսինյային, կամացուկ հարցրեց Պրոխորին։

— Նրա կի՞նն է։ Երեխաներ կա՞ն։

— Երեխաներ էլ կան, ամեն բան էլ կա, մենակ թե հաջողություն չկա մեզ համար,— մոթմոթաց Պրոխորը։

Գրիգորին գնաց բակ, նստեց սահնակին, երկար ծխեց։ Հարկավոր էր Ակսինյային թողնել գյուղում, հետագա ճանապարհորդությունը կարող էր կործանել նրան։ Դա պարզ էր Գրիգորիի համար։ Նա մտավ տուն, կրկին նստեց մահճակալի մոտ։

— Գիշերելո՞ւ ենք թե ոնց,— հարցրեց Պրոխորը։

— Այո։ Գուցե վաղն էլ մնանք։

Շուտով եկավ տանտերը,— ցածրահասակ և վտիտ մի մուժիկ՝ խորամանկ, թափառող աչքերով։ Թխկթխկացնելով փայտե ոտքը (նրա մի ոտքը կտրված էր մինչև ծունկը), նա աշխույժ, կաղ-կաղ մոտեցավ սեղանին, հանեց վերնազգեստը, անբարյացակամ ու ծուռը նայեց Պրոխորին, հարցրեց։

— Աստված հյուրե՞ր է ուղարկել, որտեղից,— ու առանց պատասխանի սպասելու հրամայեց կնոջը.— շուտ արա, ուտելու բան բեր, շան պես սոված եմ։

Նա երկար ու ագահությամբ էր ուտում։ Նրա թափառող հայացքը հաճախակի կանգ էր առնում Պրոխորի, անշարժ պառկած Ակսինյայի վրա։ Գրիգորին դուրս եկավ օթախից, բարևեց տանտիրոջը։ Վերջինս լուռ շարժեց գլուխը, հարցրեց.

— Նահանջո՞ւմ եք։

— Նահանջում ենք։

— Կովեցիք պրծա՞ք, ձերդ բերեծննդություն։

— Համարյա թե։

— Դա ձեր կի՞նն է,— տանտերը գլխով ցույց տվեց Ակսինյայի կողմը։

— Կինս է։

— Դու նրան ինչի՞ ես պառկեցրել մահճակալի վրա, բա մենք ո՞րտեղ պիտի քնենք,— դժգոհությամբ դիմեց նա կնոջը։

— Հիվանդ է, Վանյա, խղճալ է պետք։

— Խղճա՜լ։ Արի ու դրանց բոլորին խղճա, գալիս են հա՛ գալիս։ Դուք կնեղեք մեզ, ձերդ բարեծննդություն...

Գրիգորիի ձայնը նրան ոչ-հատուկ խնդրողականություն, գրեթե աղերսանք արտահայտեց, երբ նա, դիմելով տանտերերին, ձեռքը դնելով կրծքին, ասաց.

— Բարի՛ մարդիկ, օգնեցեք ինձ, փորձանքի մեջ ընկած մարդուն, ի սեր Քրիստոսի։ Էլ չի կարելի տանել կնոջս, կմեռնի, թույլ տվեք նրան թողնել ձեզ մոտ։ Խնամքի համար ես կվճարեմ ինչ որ ուզեք և ամբողջ կյանքումս կհիշեմ ձեր բարությունը... Մի՛ մերժեք, գութ արեք։

Տանտերը սկզբում կտրուկ կերպով մերժեց, առարկելով, որ ժամանակ չի լինի հիվանդին խնամելու, որ նա կնեղի իրենց, հետո էլ, վերջացնելով ճաշը, ասաց.

— Հասկանալի է, ձրի ո՞վ կխնամի նրան։ Իսկ դուք ի՞նչքան փող կտայիք մեր աշխատանքների համար։

Գրիգորին գրպանից հանեց իր ունեցած ամբողջ փողը, մեկնեց տանտիրոջը։ Վերջինս տատանվելով վերցրեց Դոնի մի փաթեթ թղթադրամները, մատները թքոտելով հաշվեց դրանք, հարցրեց.

— Բա Նիկոլայի փող չունե՞ք։

— Չունեմ։

— Գուցե Կերենսկու փո՞ղ կա։ Սրանք արդեն շատ անհուսալի են...

— Կերենսկու փող էլ չկա։ Ուզո՞ւմ եք իմ ձին թողնեմ ձեզ։

Տանտերը երկար մտածեց, հետո մտազբաղ պատասխանեց։

— Ոչ։ Ես իհարկե, կվերցնեի ձին, գյուղացու համար ձին ամենահարկավոր բանն է, բայց հիմիկվա ժամանակներում դրանից բան չի դուրս գա. մեկ է, սպիտակները չվերցնեն, կարմիրները կվերցնեն ձին, դրանից օգուտ չի լինի։ Հլեն, ես մի քոսոտ զամբիկ ունեմ, ոտից ընկած է, ամա էլի խիղճ ասածդ բանը չկա, մեկ էլ տեսար այդ էլ վերցրին ու տարան իմ տնից։— Նա մի փոքր լռեց, մտածեց ու, կարծես արդարանալով, ավելացրեց.— դուք չկարծեք, թե ես շատ ագահ եմ, աստվա՛ծ չանի։ Բայց ինքներդ դատեցեք, ձերդ բարեծննդություն. նա կպառկի մի ամիս, գուցեև ավելի. արի ու խնամք տար նրան, հարկավոր է կերակրել, հաց, կաթ, ձու, միս տալ, իսկ այդ բոլորը հո փող արժի, դրուստ չե՞մ ասում։ Հարկավոր է շորերը լվալ, լողացնել նրան, ու ես ի՞նչ գիտեմ, թե էլ ինչ... Կնիկս տուն ու տեղի գործերն է անում, իսկ հիմի նրանից չպիտի հեռանա, պետք է խնամք տանի։ Դա հեշտ գործ չի։ Չէ, դուք մի ժլատանաք, մի բան էլ ավելացրեք։ Ես հաշմանդամ եմ, տեսնում եք, էլի, ոտք չունեմ, էլ ի՞նչ աշխատող, ապրուստ ճարող կարող եմ լինել։ Այնպես, էլի, ապրում ենք աստծու տվածով, մեր ապրուստը մենակ հացն է ու կվասը...

Գրիգորին բորբոք, խուլ ջղայնությամբ ասաց.

— Ես չեմ ժլատանա, այ մարդ։ Իմ ունեցած ամբողջ փողը տվի քեզ, ես առանց փողի էլ կապրեմ։ Էլ ի՞նչ ես ուզում ինձանից։

— Միթամ ամբողջ փողդ տվիր, էլի՛,— թերահավատությամբ քմծիծաղ տվեց տանտերը։— Դուք այնպիսի ոռճիկ եք ստանում, որ ամբողջ տոպրակներով փող պետք է ունենաք։

— Դու շիտակ ասա,— գունատվելով վրա բերեց Գրիգորին,— կարելի՞ է հիվանդին թողնել ձեզ մոտ թե ոչ։

— Ոչ, քանի որ դուք այդպես եք վերաբերվում, մեզ համար հաշիվ չէ նրան թողնել մեզ մոտ։— Տանտիրոջ ձայնը պարզապես վիրավորվելու տոնով էր հնչում.

— Հետո, դա հասարակ բան չի... Սպայի կին է, հարևանները կիմանան, լուր կտարածեն, ձեզնից հետո էլ կգան ընկերները, կարմիրները, կիմանան ու կսկսեն քարշ տալ ինձ... Ոչ, այդ դեպքում տարեք նրան, կարելի է հարևաններից մեկն ու մեկը կհամաձայնվի, կվերցնի։— Տանտերը ակնհայտ ափսոսանքով փողը վերադարձրեց Գրիգորիին, հանեց ծխախոտի տոպրակը ու սկսեց ծխախոտ փաթթել։

Գրիգորին շինելը գցեց վրան, ասաց Պրոխորին.

— Կաց Ակսինյայի մոտ, ես գնամ բնակարան փնտրեմ։

Նա արդեն ձեռքը դրել էր դռան բռնակին, երբ տանտերը կանգնեցրեց նրան։

— Սպասեք, ձերդ բարեծննդություն, ինչո՞ւ եք շտապում։ Դուք կարծում եք ես չե՞մ ափսոսում խեղճ կնոջը։ Մինչևիսկ շատ եմ ափսոսում, ինքս էլ զինվոր եմ եղել ու հարգում եմ ձեր կոչումն ու աստիճանը, իսկ դուք չէի՞ք կարող այդ փողի վրա մի բան ավելացնել։

Այստեղ Պրոխորն էլ չհամբերեց. զայրույթից կարմրատակելով, մռնչաց։

— Էլ ավելացնելս ո՞րն է, ա՛յ թոփալ իժ։ Ոտներս կտրենք քե՞զ տանք, հա՛-ա՞, ա՞յդ է ուզածդ։ Գրիգորի Պանտելևիչ, թույլ տվեք ես սրան շան պես սատկացնեմ, իսկ հետո վերցնենք Ակսինյային ու գնանք, թող երիցս անիծված լինի այս շան որդին...

Տանտերը լսեց Պրոխորի ցասումնալից խոսքերը, առանց մի բառով անգամ նրան ընդհատելու. ի վերջո ասաց.

— Զուր եք ինձ վիրավորում, աղբեր տղերք։ Այստեղ իրար հետ համաձայնվել է պետք, և մենք իրար հայհոյելու, նեղանալու պատճառ չունենք։ Էլ ի՞նչ ես վրես բղավում, կազակ։ Մի՞թե ես փողի մասին եմ խոսում։ Ես իսկի էլ փող ավելացնելու մասին չխոսեցի։ Միտքս այն էր, որ կարելի է դուք մի որևէ ավելորդ զենք ունեք, դե, ասենք հրացան կամ ատրճանակ, ինչ տեսակ էլ որ դա լինի։ Ձեզ համար մեկ է, ունեք թե չունեք, իսկ մեզ համար հիմիկվա ժամանակներում դա մի ամբողջ կարողություն է։ Տան համար պետք է անպայման զենք ունենալ։ Այ թե ինչ էր իմ ասածը։ Տվեք հենց այդ փողը և դրան ավելացրեք մի հրացան, ու պրծավ-գնաց, թողեք ձեր հիվանդին, մտիկ կանենք նրան ոնց որ մեր հարազատին, աստված է վկա.

Գրիգորին նայեց Պրոխորին, կամացուկ ասաց.

— Տուր դրան իմ հրացանը, փամփուշտները, հետո գնա լծիր։ Ակսինյան թող մնա.. Թող աստված դատի ինձ, բայց ես չեմ կարող նրան տանել մեռցնելու։

XXVII

Անցնում էին գորշ և անուրախ օրերը։ Թողնելով Ակսինյային, Գրիգորին միանգամից կորցրեց հետաքրքրությունը դեպի շրջապատը։ Առավոտից սահնակ էր նստում, գնում լայնատարած, անծայրածիր, ձյունապատ տափաստանով, երեկոյան որևէ տեղ գիշերելու ապաստան գտնելով, պառկում էր քնելու։ Ու այսպես ամեն օր։ Այն, ինչ որ տեղի էր ունենում դեպի հարավ անցած ռազմաճակատում, նրան չէր հետաքրքրում։ Նա հասկանում էր, որ իսկական, լուրջ դիմադրությունը վերջացել էր, որ կազակների մեծամասնության մեջ չքացել է հայրենի ստանիցաները պաշտպանելու ձգտումը, որ, դատելով ամեն ինչից, սպիտակ բանակները ավարտում են իրենց վերջին արշավանքը, ու Դոնում չդիմանալով, Կուբանում արդեն չեն կարողանա դիմանալ...

Պատերազմը մոտենում էր իր վախճանին։ Շեշտակիորեն ու անխուսափելիորեն վրա էր հասնում լուծումը։ Հազարավոր կուբանցիներ թողնում էին ռազմաճակատը, գնում իրենց տները։ Դոնեցիները ջախջախված էին։ Մարտերից ու տիֆից արյունաքամ եղած, իր կազմի երեք քառորդը կորցրած կամավորական բանակը անզոր էր մենակ դիմադրելու հաջողություններով թևավորված Կարմիր բանակի գրոհին։

Փախստականների մեջ խոսակցություններ էին տեղի ունենում, թե Կուբանում աճում է վրդովմունքը, որ առաջացել է Կուբանյան Ռադայի անդամների դեմ գեներալ Դենիկինի գործադրած գաղանային դատաստանից։ Ասում էին, որ Կուբանը ապստամբություն է պատրաստում կամավորական բանակի դեմ և որ իբր թե բանակցություններ են մղվում Կարմիր բանակի ներկայացուցիչների հետ՝ սովետական զորքերին անարգել կերպով դեպի Կովկաս ճանապարհ բաց անելու մասին։ Համառորեն ասում էին նաև, որ Կուբանի և Թերեքի ստանիցաներում խիստ թշնամաբար են վերաբերվում դեպի դոնեցիները, ինչպես և դեպի կամավորականները, և որ իբր թե Կորենովսկու մերձակայքում, թե որտեղ, արդեն տեղի է ունեցել առաջին մեծ մարտը Դոնի դիվիզիայի և կուբանյան պլաստունների միջև։

Գրիգորին գիշերելու տեղերում ուշադրությամբ ունկնդրում էր խոսակցություններին՝ օրեցօր ավելի ու ավելի համոզվելով, որ սպիտակների պարտությունը վերջնական է ու անխուսափելի։ Եվ այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ նրա մեջ աղոտ հույս էր առաջանում, որ վտանգը սպիտակների ջլատված, բարոյալքված և միմյանց հետ գժտվող ուժերին կստիպի միավորվել, հակահարված տալ ու ետ մղել հաղթականորեն հարձակվող կարմիր զորամասերը։ Բայց Ռոստովը հանձնելուց հետո նա կորցրեց այդ հույսը և անվստահությամբ ընդունեց այն լուրը, թե Բատայսկի մոտ համառ մարտերից հետո կարմիրները սկսել են նահանջել։ Ճնշվելով անգործությունից, նա ուզում էր մտնել մի որևէ զորամաս, բայց երբ այդ առաջարկեց Պրոխորին, վերջինս վճռականապես հակառակվեց.

— Երևում է, որ դու, Գրիգորի Պանտելևիչ, վերջնականապես թոցրել ես խելքդ,— վրդովված պատասխանեց նա։— Ինչի՞ համար խցկվենք այնտեղ, այն դժոխքը։ Բանը վերջացած է, ինքդ ես տեսնում, ինչո՞ւ մենք զուր տեղը կորչենք։ Թե՞ կարծում ես, որ մենք երկուսս կօգնենք նրանց։ Քանի մեզ ձեռ չեն տալի ու զոռով չեն տանում զորամաս, պետք է, ինչքան կարելի է շուտ, հեռանանք խաթայից, իսկ դու այդ տեսակ սարսաղ բան ես ասում։ Չէ, եկ, խնդրեմ, նահանջենք խաղաղ կերպով, ծերունիների պես։ Ես ու դու առանց այն էլ բավական շատ ենք կռվել հինգ տարում, հիմի էլ թող ուրիշները փորձեն։ Ես հո նրա համար չե՞մ տրիպեր ընկել, որ ինձ էլի շարշարեն ռազմաճակատում։ Շնորհակալ եմ, հերիք է շարշարանքս։ Ես այս պատերազմից այնքան եմ կշտացել, որ մինչև օրս էլ սիրտս խառնում է, երբ այն միտս է գալի։ Ուզում ես ինքդ գնա, իսկ ես համաձայն չեմ։ Ես այդ դեպքում կմտնեմ հիվանդանոց, հերիք եղավ։

Երկար լռությունից հետո Գրիգորին ասաց.

— Թող քո ասածը լինի։ Կգնանք Կուբան, հետո կտեսնենք, թե ինչ կլինի։

Պրոխորը իր գիծն էր տանում. յուրաքանչյուր խոշոր բնակավայրում նա բուժակ էր փնտրում, դեղափոշի կամ խմելու դեղ էր բերում, բայց բուժվում էր անփույթ կերպով,

և Գրիգորիի այն հարցին, թե ինչո՞ւ նա, մի դեղափոշի խմելով, մնացածները ոչնչացնում է, ջանադրությամբ կոխկըրտում ձյան մեջ,— պատասխանեց, որ ուզում է ոչ թե բոլորովին բուժվել, այլ միայն նվազեցնել հիվանդությունը, որովհետև բժշկական քննության դեպքում այդ կերպ իր համար հեշտ կլինի խուսափել զորամաս ուղարկվելուց։ Վելիկոկնյաժեսկայա ստանիցայում մի ինչ-որ փորձված կազակ նրան խորհուրդ տվեց բուժվել բադի խաշած թաթիկների ջրով։ Պրոխորը այդ օրվանից հետո, մտնելով որևէ խուտոր կամ ստանիցա, հարցնում էր առաջին պատահած մարդուն. «Ասացեք, խնդրեմ, այստեղ, ձեզ մոտ բադ պահո՞ւմ են»։ Ու երբ զարմացած բնակիչը բացասաբար էր պատասխանում, ասելով, որ մոտիկ տեղերում ջուր չկա և բադ պահելը հաշիվ չէ,— Պրոխորը ջախջախիչ արհամարհանքով մոթմոթում էր. «Մարդավարի՛ չեք ապրում, հա՛-ա։ Երևի ձեր կյանքումը բադի կվկվոց իսկի չեք լսել։ Զոլ ու տափի քոթուկներ եք»։ Հետո, դիմելով Գրիգորիին, դառն ափսոսանքով ավելացնում էր. «Մենք անպատճառ տերտերի ենք հանդիպել։ Ոչ մի հաջողություն չենք ունենում։ Եթե այստեղ բադեր լինեին, հենց հիմի մեկը կգնեի առանց փողը ափսոսալու, կամ կգողանայի, ու գործերս լավ կգնային, կառողջանայի, թե չէ հիվանդությունս շատ է զոռում։ Սկզբում դատարկ բան էր, ճամփին միայն քունս էր խանգարում, իսկ հիմի անտերը իսկական պատիժ է դառնում։ Սահնակի վրա նստել չի լինում»։

Գրիգորիի կողմից ցավակցություն չտեսնելով, Պրոխորը երկար լռում էր ու երբեմն էլ մռայլ տեսք ընդունում, ժամերով ձայն-ծպտուն չէր հանում։

Գրիգորիին տաղտկալիորեն երկար էին թվում ճանապարհներին անցկացրած օրերը, է՛լ ավելի երկար էին ձմեռվա անվերջանալի գիշերները։ Նա շատ ժամանակ ուներ ներկան կշռադատելու և անցյալը վերհիշելու համար։ Հիշողության մեջ նա երկար տնտղում էր իր տարօրինակ և ձախորդ ընթացք ստացած կյանքի անցած տարիները։ Սահնակին նստած, մշուշվող հայացքը քարի պես լուռ, ձյունապատ տափաստանի հեռուներին հառելով կամ գիշերը որևէ խեղդուկ, մարդկանցով լեփ-լեցուն սենյակում իրար

սեղմված ատամներով ու փակ աչքերով պառկած, շարունակ մտածում էր միևնույն բանի մասին,— հիվանդ, գիտակցությունը կորցրած, անհայտ գյուղում թողնված Ակսինյայի մասին, Տատարսկում թողած մերձավորների մասին... Այնտեղ, Դոնում սովետական իշխանություն էր, ու Գրիգորին շարունակ թախծալի անհանգստությամբ հարցնում էր ինքն իրեն. «Մի՞թե իմ պատճառով տանջելու են մորս կամ Դունյաշկային»։ Ու իսկույն սկսում էր հանգստացնել ինքն իրեն, վերհիշում էր ճանապարհին հաճախ լսած այն լուրերը, թե կարմիրբանակայինները գալիս են խաղաղ կերպով և լավ են վարվում իրենց գրաված ստանիցաների բնակչության հետ։ Անհանգստությունը հետզհետե անցնում էր, այն միտքը, թե պառավ մայրը պատասխանատու պետք է լինի նրա համար, արդեն նրան թվում էր անհավանական, օտարոտի, ոչ մի բանի վրա չհիմնված։ Երեխաներին հիշելիս Գրիգորիի սիրտը մի վայրկյան ճմլվում էր տխրությունից. նա վախենում էր, որ տանը անկարող կլինեն երեխաներին պաշտպանել տիֆից, ու միևնույն ժամանակ զգում էր, որ երեխաների նկատմամբ իր ամբողջ սիրով հանդերձ, Նատալյայի մահից հետո այլևս ոչ մի վիշտ չի կարողանա իրեն ցնցել այդպիսի թափով...

Սալսկի ձմեռանոցներից մեկում Գրիգորին ու Պրոխորը ապրեցին չորս օր,— որոշել էին հանգիստ տալ ձիերին։ Այդ ժամանակվա ընթացքում նրանք մի-երկու անգամ խոսեցին, թե հետագայում ինչ պետք է անեն։ Հենց որ հասան ձմեռանոց, առաջին իսկ օրը Պրոխորը հարցրեց.

— Մերոնք Կուբանում կպահե՞ն ռազմաճակատը, թե՞ կանցնեն Կովկաս. ի՞նչ ես կարծում։

— Չգիտեմ։ Քեզ համար միևնույն չէ՞։

— Ա՛յ քեզ բան. ո՞նց կարող է ինձ համար միևնույն լինել։ Այսպես մեզ կքշեն անօրենների երկրները, թուրքի կողմերը թե ինչ, ու հետո այնտեղ վա՞յ տանք գլխներիս, հա՞։

— Ես քեզ համար Դենիկին չեմ, և դու ինձ մի հարցնի, թե ուր կքշեն մեզ,— դժգոհությամբ պատասխանեց Գրիգորին։

— Ես նրա համար եմ հարցնում, որ լսել եմ, թե Կուբան գետի վրա էլի պիտի սկսեն պաշտպանվել, իսկ գարնանը կցրվեն իրենց տները։

— Այդ ովքե՞ր պիտի պաշտպանվեն,— քմծիծաղ տվեց Գրիգորին։

— Դե, կազակներն ու կազետները, էլ ո՞վքեր։

— Հիմար բաներ ես ասում։ Խելքդ ո՞րտեղ է, չե՞ս տեսնում, թե շուրջը ինչ է կատարվում։ Բոլորն էլ աշխատում են շուտ փախչել, էլ ո՞վ պիտի պաշտպանվի։

— Է-է՛, աղբեր, ես ինքս եմ տեսնում, որ մեր բանը բուրդ է, ամա ոնց որ թե հավատալս չի գալի... հոգոց հանեց Պրոխորը։— Իսկ եթե հարկավոր լինի օտար երկրներ գնալ կամ խեցգետնի պես հետույքի կողմը լող տալ, դու ի՞նչ կանես, կերթա՞ս։

— Իսկ դո՞ւ։

— Իմ գործն այսպես է՝ որտեղ դու, այնտեղ էլ ես։ Թե որ ժողովուրդը գնա, մենակ ես հո չպիտի՞ մնամ։

— Ես էլ եմ այդպես մտածում։ Քանի որ մենք ոչխարների դրության մեջ ենք ընկել, ուրեմն պետք է ղոչերի ետևից գնանք...

— Նրանք, ղոչերը, մեկ էլ տեսար ախմախություն արեցին, գրողի ծոցը քշեցին... Չէ՛, դու այդ հանաք-մանաքը թող, կարգին բան ասա։

— Ձեռ քաշի, աղբեր։ Հետո կերևա, թե ինչ կլինի։ Կարիք չկա առաջուց գուշակություններ անել։

— Դրուստ ես ասում։ Ես քեզ էլ ոչինչ չեմ հարցնի,— համաձայնվեց Պրոխորը։

Բայց մյուս օրը, երբ գնացին ձիերը վերցնելու, նորից անդրադարձավ առաջվա խոսակցության։

— Կանաչների մասին լսե՞լ ես,— զգուշությամբ հարցրեց նա, ձևացնելով, որ իբր թե դիտում է եռատամ եղանի կոթը։

— Լսել եմ, հետո ի՞նչ։

— Ի՞նչ մարդիկ են այդ կանաչները։ Ո՞ւմ կողմն են։

— Կարմիրների կողմը։

— Բա ինչի՞ են կանաչ անվանվում։

— Սատանեն գիտի, անտառներում են թաքնվում, երևի դրանից է առաջացել այդ անունը։

— Կարելի է ես ու դու է՞լ կանաչ ենք, հը՞,— երկար մտածելուց հետո անհամարձակ առաջարկեց Պրոխորը։

— Չէ, չէի ուզենա։

— Իսկ կանաչներից չոկ չկա՞ն այնպիսիները, որոնց շնորհիվ շուտ գնանք տուն։ Ինձ համար մեկ է՝ կանաչներ լինեն թե կապույտներ, կամ թե ձվի դեղնուցի պես դեղիններ, ես ուրախ սրտով ուղածդ գույնը կստանամ, մենակ թե այդ մարդիկ հակառակ լինեն պատերազմին ու տուն թողնեն զինվորներին...

— Համբերի, կարելի է այդ տեսակներն էլ մեջտեղ գան,— խորհուրդ տվեց Գրիգորին։

Հունվարի վերջին, մառախլապատ և տաք կեսօրին Գրիգորին ու Պրոխորը ժամանեցին Բելայա Գլինա ավանը։ Ավանում մի տասնհինգ հազար փախստական էր հավաքվել, դրանց մոտ կեսը հիվանդ էր բծավոր տիֆով։ Բնակարաններ և ձիերի կեր փնտրելու համար փողոցներում շրջում էին կազակները՝ անգլիական կարճ շինելներով, կիսամուշտակներով, բեշմետներով ձիավորներ ու սահնակներ էին երթևեկում։ Տասնյակ հյուծված ձիեր էին կանգնել բակերում, մսուրների մոտ, ու ծուլորեն ծղնոտ էին ծամում. փողոցներում, նրբանցքներում երևում էին լքած սահնակներ, գումակային սայլակներ, լցարկղներ։ Մի փողոցով անցնելիս Պրոխորը հայացքով զննեց ցանկապատին կապած բարձրամարմին ու շիկակարմիր մի ձի, ասաց.

— Սա խնամի Անդրյուշկայի ձին է, ուրեմն մեր խուտորցիները այստեղ են։— Ու ճարպկությամբ թռավ ձիուց, գնաց տուն՝ լուր իմանալու։

Մի քանի րոպեից հետո, շինելը ուսերին գցած, տանից դուրս եկավ Անդրեյ Տոպոլսկովը,— Պրոխորի խնամին ու հարևանը։ Պրոխորի ուղեկցությամբ նա ծանր ու մեծ մոտեցավ սահնակին, ձիու քրտնքի հոտ արձակող սև ձեռքը մեկնեց Գրիգորիին։

— Մեր խուտորի գումակի հե՞տ ես գնում,— հարցրեց Գրիգորին։

— Միասին ենք շարշարանք քաշում, էլի՛։

— Ո՞նց էիք գալիս։

— Փորձանքն անպակաս է... Ամեն անգամ գիշերելու տեղերում մարդիկ ու ձիեր ենք թողնում...

— Հերս ողջ-առո՞ղջ է։

Գրիգորիի կողքից ինչ-որ մի կողմ նայելով, Տոպոլսկովը հոգոց հանեց։

— Վատ է, Գրիգորի Պանտելևիչ, վատ է բանը... Ողորմի ասա հորդ, երեկ իրիկուն հոգին տվեց աստծուն, վախճանվեց...

— Թաղեցի՞ք,— գունատվելով հարցրեց Գրիգորին։

— Չեմ կարող ասել, այսօր այնտեղ չեմ եղել։ Գնանք, ես ցույց կտամ բնակարանը... Անցնենք աջ կողմով, խնամի, աջ կողմի անկյունից չորրորդ տունն է։

Մոտեցան ընդարձակ, թիթեղածածկ մի տան։ Պրոխորը ցանկապատի մոտ կանգնեցրեց սահնակը, բայց Տոպոլսկովը խորհուրդ տվեց մտնել բակը։

— Այստեղ էլ նեղվածք է, մի քսան մարդ կա, բայց մի կերպ կտեղավորվեք,— ասաց նա և իջավ սահնակից, որ բաց անի դարպասը։

Գրիգորին առաջինը մտավ տաք վառած սենյակը։ Հատակի վրա իրար գլխի հավաքվել, պառկել ու նստել էին ծանոթ խուտորցիները։ Ոմանք ոտնամաններ ու լծասարք էին նորոգում, երեք հոգի, որոնց թվում նաև Պանտելեյ Պրակոֆևիչի հետ մի սահնակով եկած Բեսխլեբնովը, սեղան էին նստել և ապուր էին ուտում, տեսնելով Գրիգորիին, կազակները վեր կացան, միասին պատասխանեցին նրա կարճ բարևին։

— Ո՞րտեղ է հերս,— հարցրեց Գրիգորին՝ հանելով փափախը, դիտելով սենյակը։

— Փորձանք պատահեց մեզ մոտ... Պանտելեյ Պրակոֆևիչը արդեն ննջեցյալ է,— կամացուկ պատասխանեց Բեսխլեբնովը ու, չեքմենի թևքով բերանը սրբելով, վար դրեց գդալը, խաչակնքեց։— Երեկ իրիկուն վախճանվեց, հոգին լույս դառնա։

— Գիտեմ։ Թաղեցի՞ք։

— Հլա չէ։ Մենք պատրաստվում էինք այսօր նրան թաղելու, իսկ հիմի այստեղ է նա, տարել ենք ցուրտ օթախը։

Եկ այստեղ։— Բեսխլեբնովը բաց արեց հարևան սենյակի դուռը, ասես ներողություն խնդրելով՝ ասաց.— կազակները չուզեցին մեռելի հետ գիշերել մի սենյակում, ծանր հոտ է գալի, նրա համար այստեղ հարմար է... Տանտերերը չեն տաքացնում։

Ընդարձակ օթախում կանեփի սերմի, մկների թունդ հոտ էր գալիս։ Օթախի մի ամբողջ անկյունը լցված էր կոբեկով, կանեփով. նստարանի վրա ալյուրով ու յուղով լիքը տակառներ էին դրված։ Սենյակի մեջտեղում, կարպետի վրա պառկած էր Պանտելեյ Պրակոֆևիչը։ Գրիգորին Բեսխլեբնովից առաջ անցավ, մտավ օթախը, կանգնեց հոր կողքին։

— Երկու շաբաթ հիվանդ էր,— ցածր ձայնով ասաց Բեսխլեբնովը։— Դեռ Մեչետկայի մոտերքում տիֆը զոռեց։ Ա՛յ թե որտեղ էր մահ վիճակվել հայրիկիդ... է-է-հե՛, այսպես է մեր կյանքը, էլի՛.....

Գրիգորին դեպի առաջ թեքված, նայում էր հորը։ Հիվանդությունը փոխել էր նրան հարազատ դիմագծերը, դրանք դարձրել մի տեսակ անծանոթ, օտարոտի։ Պանտելեյ Պրակոֆևիչի դալուկ, նիհարած այտերը ծածկվել էին ճերմակած մորուքով, բեղերը ցածր կախվել ներս ընկած բերանի վրա, աչքերը կիսափակ էին և դրանց սպիտակուցների կապտավուն էմալը արդեն կորցրել էր կայծկլտող աշխուժությունը և փայլը։ Ծերունու կախ ընկած ստորին ծնոտը կապված էր կարմիր շորով, ու կարմիր գործվածքի ֆոնի վրա մորուքի ճերմակ, գանգրավուն մազերը է՛լ ավելի ճերմակ, արծաթափայլ էին թվում։

Գրիգորին ծունկ չոքեց, որպեսզի վերջին անգամ ուշադրությամբ դիտեր և հիշողության մեջ տպավորեր հարազատ դեմքը, և ակամա ցնցվեց վախից ու նողկանքից. Պանտելեյ Պրակոֆևիչի գորշ, մոմագույն դեմքի վրա օջիլներ էին սողում, դրանցով լիքն էին ակնախոռոչները, այտերի խորշոմները։ Նրանք կենդանի, շարժուն ծածկոցով էին պատել մեռելի դեմքը, զեռում էին մորուքում, վխտում հոնքերի մեջ, գորշ շերտով պատել էին թուխ-կապույտ շեքմենի կանգուն օձիքը։

Գրիգորին ու երկու կազակ քլունդներով գերեզման փորեցին սառած, թույլ պես պինդ կավահողում, Պրոխորը տախտակների կտորտանքներից մի կերպ դագաղ շինեց։ Իրիկնադեմին տարան Պանտելեյ Պրակոֆևիչին և թաղեցին ստավրոպոլյան օտար հողում։ Իսկ մի ժամից հետո, երբ ավանում արդեն վառվեցին լույսերը, Գրիգորին Բելայա Գլինայից մեկնեց Նովո-Պոկրովսկի ուղղությամբ։

Կորենովսկայա ստանիցայում նա իրեն վատ զգաց։ Պրոխորը օրվա կեսի չափ ժամանակ կորցրեց բժիշկ փընտրելու վրա, վերջը գտավ մի ինչ-որ կիսահարբած զինվորական բժիշկ, դժվարությամբ համոզեց նրան, բերեց բնակարանը։ Բժիշկը առանց շինելը հանելու զննեց Գրիգորիին, շոշափեց զարկերակը, լիահավատ հայտարարեց.

— Անդրադարձ տիֆ է։ Խորհուրդ եմ տալիս ձեզ, պարոն հարյուրապետ, դադարեցնել ճանապարհորդությունը, այլապես ճանապարհին կմեռնեք։

— Կարմիրների՞ն սպասեմ,— ծուռ ժպտաց Գրիգորին։

— Դե, կարմիրները հավանաբար դեռ հեռու են։

— Կմոտենան...

— Ես դրանում չեմ կասկածում։ Բայց ձեզ համար ավելի լավ է մնալ։ Ես կգերազասեի երկու շարիքներից ընտրել այդ՝ փոքրագույնը։

— Ոչ, ես մի կերպ կգնամ,— վճռականապես ասաց Գրիգորին ու սկսեց հագնել վերնաշապիկը։— Դուք ինձ դեղեր չե՞ք տա։

— Գնացեք, ձեր գործն է։ Ես պարտավոր էի ձեզ խորհուրդ տալ, իսկ այնուհետև ինչպես որ կամենաք։ Ինչ վերաբերում է դեղերին, ապա դրանցից լավագույնը հանգիստն ու խնամքն է. կարող էի դեղատոմս գրել ձեզ համար, բայց դեղատունը էվակուացված է, իսկ ինձ մոտ ոչինչ չկա բացի քլորոֆորմից, յոդից և սպիրտից։

— Գոնե սպիրտ տվեք։

— Ուրախությամբ։ Միևնույն է, ճանապարհին դուք կմեռնեք, դրա համար էլ սպիրտը ոչ մի օգուտ չի տա։ Թող ձեր սպասյակը գա ինձ հետ, մի հազար գրամ բաց կթողնեմ ձեզ համար, ես բարի մարդ եմ...— Բժիշկը ձեռքը քուն-

քին տանելով հրաժեշտ տվեց, անհասատատ քայլերով դուրս ելավ։

Պրոխորը բերեց սպիրտը, որտեղից-որտեղ մի խարխուլ, երկձի սայլ ճարեց, լծեց ձիերը, ու մտնելով սենյակ, մռայլ հեգնանքով ղեկուցեց.

— Կառքը պատրաստ է, ձերդ բարեծննդություն։

Ու վերստին ձգվեցին ծանր, տխուր օրերը։

Հարավային անապարող գարունը նախալեռներից դեպի Կուբան էր գալիս։ Հարթավայրերի տափաստաններում ամենուրեք հալչում էր ձյունը, մերկանում էին սևահողով փայլող հալուտները, արծաթե ձայներով կարկաչում էին գարնանային վտակները, ճանապարհը խայտաբղետ տեսք էր ընդունել, և արդեն գարնանային փայլ էին առել հեռավոր, կապույտ հեռուները, և Կուբանի ընդարձակ երկինքը է՛լ ավելի էր խորացել, կապուտկել, ջերմացել։

Երկու օրից հետո արևի դեմ բացվեց աշնանացան ցորենը, վարած արտերի վրայով սահում էր սպիտակ մշուշը։ Ձիերն արդեն ոտներով ճլմփացնում էին ձյունից մերկացած ճանապարհի ցեխը, նրանց ոտները կոճիկներից վեր թաղվում էին ցեխի մեջ, նրանք խրվում էին ձորակներում, լարվածությունից ծռում մեջքերը, քրտնքի գոլորշի արձակում։ Պրոխորը ձիատիրոջ հոգատարությամբ կապել էր նրանց պոչերը, հաճախ իջնում էր սայլից, քայլում դրա կողքից, ոտները դժվարությամբ դուրս քաշում ցեխից, մոթմոթում.

— Սա ոչ թե ցեխ է, այլ կպչուն կուպր, աստված վկա։ Ձիերը չեն շորանում մի տեղից մինչև մի ուրիշ տեղ հասնելը։

Գրիգորին քուրքով փաթաթված պառկել էր սայլի վրա, լռում էր։ Բայց Պրոխորը ձանձրանում էր առանց խոսակցության ճանապարհ գնալուց. նա շոշափում էր Գրիգորիի ոտները կամ թևքը, ասում.

— Ա՛յ քեզ պինդ ցեխ։ Իջիր, փորձիր։ Ձեռ քաշիր հիվանդությունից, է՛։

— Կորի գնա,— հազիվ լսելի շշնջում էր Գրիգորին։

Որևէ մեկին հանդիպելիս Պրոխորը հարցնում էր.

— Այստեղից դենը ցեխն ավելի շա՞տ է, թե՞ այսպես է։

Նրան կատակով էին պատասխանում և ծիծաղում,

Պրոխորն էլ գոհ լինելով, որ մի խոսք է փոխանակել կենդանի մարդու հետ, միաժամանակ լուռ էր լինում, հաճախակի կանգնեցնում ձիերը, սրբում դարչնագույն ճակատի առատ, կաթիլ-կաթիլ քրտինքը։ Նրանց ետևից ձիավորներ էին հասնում, ու Պրոխորը այլևս չկարողանալով լռել, կանգնեցնում էր նրանց, բարևում, հարցնում, թե ուր են գնում և որտեղացի են, վերջն էլ ասում էր.

— Ձուր եք գնում։ Այնտեղ գնալ անհնարին է։ Ինչո՞ւ։ Որովհետև այնտեղ, հանդիպող մարդկանց ասելով, այնպիսի ցեխ է, որ ձիերը թաղվում են մինչև փորերը, սայլերի անիվները չեն պտտվում, իսկ ոտով գնացողները, եթե ցածրահասակ են, հենց ճանապարհին ընկնում են ու սկսում ցեխի մեջ։ Թե սուտ եմ ասում, աչքերս քոռանան։ Մենք ինչի ենք գնո՞ւմ։ Ուրիշ կերպ չենք կարող, ես հիվանդ եպիսկոպոս եմ տանում, նա ոչ մի կերպ չի կարող կարմիրների հետ մեկտեղ ապրել։

Ձիավորների մեծամասնությունը առանց բարկության հայհոյելով Պրոխորին, շարունակում էր ճանապարհը, ոմանք էլ նախքան հեռանալը ուշադրությամբ նայում էին նրան, ասում.

— Դոնից հիմարներն է՞լ են նահանջում։ Ձեր ստանիցայում բոլորը քեզ պե՞ս են, հը՞։

Ուրիշ այսպիսի դեպքեր էին լինում,— ոչ պակաս վիրավորական։ Միայն մի կուբանցի, որը ետ էր մնացել կազակների խմբից, լրջորեն բարկացավ Պրոխորի վրա, որովհետև վերջինս նրան կանգնեցրել ու զբաղեցրել էր հիմար խոսակցությամբ, և ուզեց մտրակով ճակատն ի վար դաղել նրան, բայց Պրոխորը զարմանալի ճարպկությամբ թռավ սայլի վրա, կարպետի տակից հանեց կարաբինը, դրեց ծնկներին։ Կուբանցին մայր հայհոյելով հեռացավ, իսկ Պրոխորը ամբողջ կոկորդով մեկ քրքջալով, գոռաց նրա ետևից.

— Ցարիցինի մոտերքո՞ւմն է, որ սիմինդրի արտի մեջ թաքնվես, հա՞։ Ուրիշի ծամածը լափող։ Է՛յ, ետ դառ, վախլուկ քոստի մեկը։ Վրա էիր քշում, հա՞-ա։ Շալվարդ վեր քշտի, մեկ է, ցեխի մեջ լող ես տալու։ Ո՞նց է թռչում, ծրատո՛տ։ Վախլո՛ւկ կնիկ։ Ափսոսում եմ փամփուշտը, թե չէ կքնացնեի քեզ։ Է՛յ, վար գցի մտրակը, լսո՞ւմ ես։

Ջանքությից, անգործությունից գժվելով, Պրոխորը զվարճանում էր ինչով որ կարող էր։

Իսկ Գրիգորին հիվանդությունը սկսվելու օրից կարծես երազի մեջ լիներ։ Ժամանակ առ ժամանակ կորցնում էր գիտակցությունը, հետո նորից ուշքի էր գալիս։ Մի անգամ, երբ նա սթափվեց երկարատև մոռացումից, Պրոխորը թեքվեց նրա վրա։

— Դու հլա սա՞ղ ես,— հարցրեց նա՝ կարեկցաբար նայելով Գրիգորիի պղտորված աչքերին։

Նրանց վերևում շողում էր արևը։ Մերթ խմբվելով, մերթ ցրիվ գալով ու բեկուն, թավշյա-սև գիծ կազմելով, երկնքի թանձր կապույտում կռնչալով թռչում էին ծովասագերի երամները։ Տաքացած հողը, մատղաշ կանաչները թմրեցուցիչ բույրեր էին տարածում։ Գրիգորին արագ շնչելով, ագահությամբ ծծում էր դարնանային կենարար օդը։ Նա դժվարությամբ էր լսում Պրոխորի ձայնը, ու նրա համար շուրջը ամեն ինչ մի տեսակ անիրական էր, անհավանականորեն նվազած, հեռավոր։ Ետևում, հեռու-հեռվից խուլ որոտում էին թնդանոթային կրակոցները։ Մոտիկ տեղում ներդաշնակ ու չափածո թխկթխկում էին երկաթե սոնի ու անիվներ ունեցող սայլերը, փնչում ու վրնջում էին ձիերը, մարդկային ձայներ էին հնչում. թխած հացի, խոտի, ձիու քրտնքի թունդ հոտ էր գալիս։ Այս ամենը կարծես մի այլ աշխարհից էր հասնում Գրիգորիի մթագնած գիտակցությանը։ Լարելով ամբողջ կամքը, նա ունկնդրեց Պրոխորի ձայնին, մեծագույն ճիգ անելով հասկացավ, որ Պրոխորը իրեն հարցնում է.

— Կաթ կխմե՞ս։

Գրիգորին հազիվ շարժելով լեզուն, լպստեց չորացած շրթունքները, զգաց, թե ինչպես իր բերանն է լցվում թանձր, պաղ հեղուկը, որի քաղցրավուն համը ծանոթ էր նրան։ Մի քանի կում խմելուց հետո նա ատամներն իրար սեղմեց։ Պրոխորը փակեց ջրասրվակի բուկը, կրկին թեքվեց Գրիգորիի վրա, ու վերջինս Պրոխորի հողմահար շրթունքների շարժումներից ավելի շուտ կռահեց, քան թե լսեց իրեն ուղղված հարցը.

— Գուցե քեզ թողնե՞մ ստանիցայում։ Ճամփեն դժվա՞ր է քեզ համար։

Գրիգորիի դեմքը տանջանք և անհանգստություն արտահայտեց. նա մի անգամ էլ ի մի հավաքեց կամքը, շշնջաց.

— Տար... մինչև որ մեռնեմ...

Նա Պրոխորի դեմքից կռահեց, որ Պրոխորը լսել է իր ասածը, ու հանգստացած գոցեց աչքերը՝ ուշագնացությունը ընդունելով որպես թեթևացում, սուզվելով մոռացության թանձր խավարի մեջ, հեռանալով այդ ամբողջ ճղճղան, աղմկոտ աշխարհից...

XXVIII

Ամբողջ ճանապարհին, մինչև Աբինսկայա ստանիցան հասնելը, Գրիգորիի հիշողության մեջ մնաց լոկ մի բան. անթափանց, մթին գիշերով նա արթնացավ խիստ, մինչև ոսկորները թափանցող ցրտից։ Ճանապարհով մի քանի շարքերով սայլեր էին ընթանում։ Դատելով ձայներից, անիվների խուլ, անլռելի աղմուկից, գումակը հսկայական էր։ Այն սայլը, որով գնում էր Գրիգորին, գտնվում էր այդ գումակի մեջտեղում։ Ձիերը քայլքով էին ընթանում։ Պրոխորը ճրպճրպացնում էր շրթունքները, մրսած, խոպոտ ձայնով երբեմնակի բղավում՝ «Դե՛, բարեկամներս»,— ու թափահարում էր մտրակը։ Գրիգորին լսում էր կաշվե մտրակի բարակ սվսվոցը, զգում էր, թե ինչպես շրխկացնելով քաշանները սայլին միացնող ձողերը, ձիերը ավելի ուժեղ թափով էին քաշում սայլը, որը ընթանում էր արագ, երբեմն առեղի ծայրը ճքալով դիպչում էր առջևի սայլի ետին մասին։

Գրիգորին քուրքի փեշը դժվարությամբ քաշեց իր վրա, պառկեց մեջքին։ Սև երկնքում քամին դեպի հարավ էր քշում անընդմեջ, քուլա-քուլա ամպերը։ Դրանց նեղլիկ արանքից դեղին կայծի նման երբեմնակի վայրկենապես առկայծում էր մենավոր մի աստղ, ու վերստին անթափանց խավարը պարուրում էր տափաստանը, քամին մելամաղձիկ սվսվացնում էր հեռագրալարերը, գետնքի վրա նոսր, ուլունքի պես մանրիկ անձրև էր թափվում։

Ճանապարհի աջ կողմից վրա հասավ հեծելազորի եր-

թական մի շարասյուն։ Գրիգորին լսեց կազակական քիպ հարմարեցված հանդերձանքի վաղուց ծանոթ, ներդաշնակ, ռիթմիկ զրնգոցը, բազմաթիվ սմբակների խուլ և նույնպես ներդաշնակ ճլմփոցը ցեխի մեջ։ Անցավ ոչ ավելի քան երկու հարյուրյակ, իսկ դոփյունը դեռ լսվում էր. ճանապարհի կողքից հավանորեն մի գունդ էր գնում։ Եվ հանկարծ առջևում, լռին տափաստանով մեկ թռչունի պես թռավ երգ սկսողի առնական, կոշտ ձայնը.

Հե՛յ, լսեցեք, եղբայրներ, Կամիշինկա գետի մոտ,
Սարատովի տափերում լայնատարած, պանծալի...

Ու հարյուրավոր ձայներ հուժկու թափով շարունակեցին հնամյա կազակական երգը, ու բոլորից բարձր հնչեց ձայնակցողի տենորը, որ զարմանալի ուժ և գեղեցկություն ուներ։ Ծածկելով հանդարտվող բասերը, մթության մեջ դեռ մղմղում էր զրնգուն, սրտագրավ տենորը, ու երգը սկսողը դարձյալ վրա էր բերում.

Ապրում էին կազակներ, ազատ մարդիկ, բոլորն էլ—
Դոնից էին, Ցաիցկից, Գրեբենսկու կողմերից...

Գրիգորիի սրտում ասես մի ինչ-որ թել կտրվեց... Հանկարծակի վրա հասած հեկեկանքը ցնցեց նրա մարմինը, ջղակծկումը բռնեց նրա կոկորդը։ Կուլ տալով արցունքները, նա ագահությամբ սպասում էր, թե երգը երբ կշարունակի այն սկսողը, ու նրա հետ միասին անձայն շշնջում էր պատանեկական տարիներից ծանոթ խոսքերը.

Ատամանը Երմակն էր, Տիմոֆեյի զավակը,
Յասավուլը—Աստաշկան, Լավրենտիչի զավակը...

Հենց որ հնչեց երգը, միանգամից լռեցին սայլերի վրա խոսող կազակների ձայները, ոչ ոք չէր արագացնում ձիերի ընթացքը, և հաղարավոր սայլերով գումակը շարժվում էր խորին, լարված լռությամբ. միայն անիվների դղրդյուն և ցեխը հունցող սմբակների չփչփոցն էր լսվում այն բոպեներին, երբ երգ սկսողը պարզ առոգանությամբ վրա էր բերում սկզբի բառերը։ Միայն հին, դարեր ապրած երգն էր ապրում ու իշխում սև տափաստանում։ Այդ երգը պարզ, անպաճույճ խոսքերով պատմում էր կազակական ազատ

նախնիների մասին, որոնք մի ժամանակ անվեհերությամբ ջարդում էին ցարական զորքը, գողային թերթ նավակներով շրջում Դոնի ու Վոլգայի վրայով, թալանում ցարական նարծվանիշ նավերը, «շոշափում» վաճառականներին, բոյարներին ու զորավարներին, նվաճում հեռավոր Սիբիրը... Ու մռայլ լռություն պահպանելով, հզոր երգն էին լսում ազատ կազակների հետնորդները, որոնք նահանջում էին խայտառակ կերպով, ջարդված էին ռուս ժողովրդի դեմ մղված անփառունակ պատերազմում...

Գունդն անցավ։ Երգիչները գումակից առաջ անցնելով, հետզհետե հեռացան։ Բայց գումակը դեռ երկար ընթանում էր կախարդված լռության մեջ, ու սայլերի վրա ոչ ոք չէր խոսում, չէր բղավում հոգնած ձիերի վրա։ Իսկ մթության մեջ, հեռվում ծորում, տարածվում էր վարարած Դոնի պես հորդուն երգը.

Ու բոլորն էլ շարունակ մի բան էին մտածում,—
Ահա արդեն անցնում է ամառը տաք ու պայծառ,
Շուտով ձմեռն է գալու. ցուրտ ձմեռը, եղբայրներ.
Ու մենք ո՞ւրտեղ եղբայրներ և ո՞նց պիտի ձմեռենք.
Թե որ Ցաիցկ գնանք մենք,— հանապարհը երկար է.
Թե որ Վոլգա գնանք մենք,— գողի համբավ կունենանք.
Թե ոչ Կազան գնանք մենք,— այնտեղ ցարն է պինդ նստել,—
Ահեղ ցարն է այն կողմում,— Վասիլևիչ Իվանը...

Երգիչների ձայնն արդեն չէր լսվում, իսկ ձայնակցողի ձայնը զրնգում էր, ընդմիջվում ու նորից հնչում։ Բոլորն էլ նույն լարված ու մռայլ լռությամբ լսում էին նրան։

...Գրիգորին, ինչպես երազ, հիշում էր նաև հետևյալը. նա արթնացավ մի տաք սենյակում, առանց աչքերը բաց անելու ամբողջ մարմնով զգաց անկողնի մաքուր սպիտակեղենի դուրեկան թարմությունը, ինչ-որ դեղերի տոիպ հոտը խփեց նրա քթածակերին։ Մի պահ նա կարծեց, թե գտնվում է հիվանդանոցում, բայց հարևան սենյակից լսվեց տղամարդու փառ-փառ ծիծաղ, ամանեղենի զրնգոց, հարբած մարդկանց ձայներ հնչեցին։ Մեկը ծանոթ, բամբ ձայնով ասաց.

— ...Ի-ի՛հ, խելքի պուտուկ։ Հարկավոր էր իմանալ, թե որտեղ է մեր զորամասը, մենք կօգնեինք։ Խմի՛ր, էլի՛։ Ինչի՞ ես քիթդ կախել։

Պրոխորը, որ հարբած էր, լացակումած ձայնով ասավ.

— Տեր աստված, ախր ես ո՞րտեղից գիտենայի։ Կարծում եք ինձ համար հե՞շտ էր նրան խնամելը, ես նրան ծամած բաներով էի կերակրում, ոնց որ պստիկ երեխին. կաթ էի խմեցնում, Քրիստոսը վկա։ Հացը ծամում էի ու խոթում բերանը։ Թրիս ծերով էի ատամները բաց անում... Մի անգամ էլ սկսեցի կաթ լցնել բերանը, իսկ նա խեղդվեց և քիչ մնաց մեռներ... Բա հե՞շտ բան է սա, հը՞։

— Երեկ լողացրե՞լ ես նրան։

— Թե լողացրել եմ և թե մեքենայով մազերը խուզել, ամբողջ փողս էլ ծախսել եմ կաթի վրա... Դե, հո չե՞մ ափսոսում, ջհաննամը։ Ամա ախր ո՞նց կարելի էր ուտելիքը ծամել ու ծամածով կերակրել նրան։ Կարծում ես դա հե՞շտ բան է։ Չասես թե հեշտ է, թե չէ ես քեզ կխփեմ, մտիկ էլ չեմ անի աստիճանիդ։

Պրոխորը, Խարլամպի Երմակովը, կարակուլե մոխրագույն փափախը ծոծրակին քշած և ճակնդեղի պես կարմիր Պետրո Բոգատիրյովը, Պլատոն Ռյաբչիկովը և էլի երկու անծանոթ կազակ ներս մտան Գրիգորիի մոտ։

— Գրիգորին նայու-ու-ում է-է,— լեղապատառ բղավեց Երմակովը՝ երերաքայլ ու հապճեպ մոտենալով Գրիգորիին։

Աշխույժ ու ուրախ Պլատոն Ռյաբչիկովը թափահարելով շիշը ու լալով գոռաց.

— Գրիշա, հարազատս, հիշիր, թե Չիրի մոտերքում ոնց էինք քեֆ անում։ Բա ո՞նց էինք կռվում։ Ո՞րտեղ մնաց մեր քաջությունը։ Ո՞նց են վարվում գեներալները մեզ հետ և ի՞նչ արեցին մեր բանակը։ Գրողի ծոցը գնան նրանք։ Է՛, լավացել ես։ Ա՛ռ, խմի, միանգամից կառողջանաս։ Սա մաքուր սպիրտ է։

— Հաղիվ գտանք քեզ, հա՛-ա,— ուրախացած բացականչեց Երմակովը՝ փայլեցնելով սև, ժպտուն աչքերը։ Նա ծանր նստեց Գրիգորիի մահճակալին, որ իջավ նրա ծանրությունից։

— Մենք ո՞րտեղ ենք,— հաղիվ լսելի հարցրեց Գրիգորին՝ դժվարությամբ դիտելով շրջապատը, նայելով կազակների ծանոթ դեմքերին։

— Նկատերինոդարն ենք գրավել։ Շուտով ավելի հեռու կճղենք։ Խմի՛, Գրիգորի Պանտելեիչ, հոգիդ սիրեմ։ Վեր կաց, ի սեր աստծու, ես չեմ կարող քեզ պառկած տեսնել։— Ռյաբչիկովը ընկավ Գրիգորիի ոտներին, բայց Բոգատիրյովը, որ լուռ ժպտում էր ու տեսքով բոլորից ավելի զգաստ էր, բռնեց նրա գոտուց, առանց դժվարության բարձրացրեց նրան, խնամքով դրեց հատակին։

— Վերցրու շիշը դրա ձեռքից, կթափվի,— վախեցած բացականչեց Երմակովը ու լայն, հարբած ժպտալով, դիմեց Գրիգորիին.— գիտե՞ս ինչու ենք քեֆ անում։ Անբավականությունից ասեմ թե նրանից, որ օտար տեղում մեր կազակների ձեռքը բան ընկավ... Գինու մի պահեստ թալանեցին, որ կարմիրների ձեռքը չընկնի... Ի՞նչ էր կատարվում այնտեղ, օ-օ՛-օ... Այդ տեսակ բան մարդ երազումն էլ չի տեսնի։ Սկսեցին հրացաններից կրակել ցիստեռնի վրա. ծակում են, ու դրա միջից շիթ-շիթ թափվում է սպիրտը։ Ամբողջ ցիստեռնը ծակծկեցին ու մոտ վազեցին, մեկը փափախով է սպիրտը վերցնում, մյուսը դույլով, ոմանք ջրամանով, ոմանք էլ ուղղակի բռով են վերցնում, տեղնուտեղը խմում... Թրատեցին երկու կամավոր, որոնք պահպանում էին պահեստը, դե, ձեռք գցեցին այն, ու սկսվեց ուրախությունը։ Մի կազակ աչքիս առաջ ելավ ցիստեռնի վրա, ուզեց հենց դույլով սպիրտ հանել դրա միջից, ընկավ ցիստեռնի մեջ ու խեղդվեց։ Հատակը ցեմենտից էր, այնքան սպիրտ թափվեց, որ մինչև ծունկդ կհասներ, ման են գալի դրա մեջ, կռանում, խմում, ոնց որ թե ձիերը ջուր խմեն գետից, խմում են ոտների տակից ու հենց այնտեղ էլ պառկոտում... Համ ծիծաղ, համ մեղք։ Շատերը խմում են տրաքվելու չափ։ Այնտեղ մենք էլ խելագարվեցինք։ Մեզ շատ բան հարկավոր չէր, վերցրինք հինգ դույլանոց մի փոքր տակառ, դե, հերիք է մեզ, էլի՛։ Քեֆ արա, հոգիս։ Մեկ է, կկորչի խաղաղ Դոնը։ Քիչ մնաց այնտեղ խեղդվեր Պլատոնը։ Գցեցին հատակի վրա, սկսեցին տրորել ոտներով, նա մի երկու անգամ սպիրտ կուլ տվեց ու հենց այն է, խեղդվելու էր։ Ես նրան զոռով դուրս քաշեցի այնտեղից....

Բոլորից էլ սպիրտի, սոխի, ծխախոտի թունդ հոտ էր դալիս։ Գրիգորին սրտախառնուքի թեթև մոլուցք ու գլխա-

պտույտ զգաց, թույլ, բռնաղբոսիկ ժպտալով՝ փակեց աչքերը։

Նա մի շաբաթ պառկեց Եկատերինոդարում, Բոգատիրյովին ծանոթ մի բժշկի բնակարանում, կամաց-կամաց ապաքինվեց հիվանդությունից, հետո, ինչպես ասում էր Պրոխորը, «գնաց կազդուրվելու», և Աբինսկայա ստանիցայում նահանջի ժամանակվա ընթացքում առաջին անգամ ձի նստեց։

Նովորոսիյսկում էվակուացիա էր տեղի ունենում։ Շոգենավերը Թուրքիա էին տանում Ռուսաստանի զորքերին, կալվածատերերին, գեներալներին և քաղաքական ազդեցիկ գործիչների ընտանիքները։ Նավամատույցներում գիշեր-ցերեկ բեռնվում էին նավերը։ Յունկերները աշխատում էին բեռնողների արտելներում, նավամբարները լցնում ռազմական գույքով, պայծառափայլ փախստականների ճամպրուկներով ու արկղերով։

Կամավորական բանակի զորամասերը, փախչելիս դոնեցիներից ու կուբանցիներից առաջ անցնելով, առաջինը հասան Նովորոսիյսկ, սկսեցին նստել փոխադրանավերը։ Կամավորական բանակի շտաբը կանխատեսությամբ փոխադրվեց նավահանգիստ ժամանած անգլիական «Հնդկաստանի կայսր» դրեդնոուտի վրա։ Կռիվները տեղի էին ունենում Տոննելնու մերձակայքում։ Տասնյակ հազարավոր փախստականներ լցվել էին քաղաքի փողոցները։ Զորամասերը շարունակում էին ժամանել։ Նավամատույցների մոտ աննկարագրելի հրմշտոց էր։ Անտեր թողնված հազարավոր ձիերի երամակները թափառում էին Նովորոսիյսկի շրջակա լեռների կրաքարոտ լանջերում։ Նավամատույցներին կից փողոցներում թափթփված էին կաղակական թամբեր, հանդերձանք, զինվորական դույլ։ Այդ բոլորը այլևս ոչ ոքի պետք չէր։ Քաղաքում լուրեր էին պտտվում, թե նավ է նստելու միայն կամավորական բանակը, իսկ դոնեցիները և կուբանցիները երթակարգով կգնան Վրաստան։

Մարտի 25-ի առավոտյան Գրիգորին և Պլատոն Ռյաբչիկովը գնացին նավամատույց, իմանալու, թե արդյոք Դոնի երկրորդ կորպուսի զորամասերը բեռնվո՞ւմ են նավերին, որովհետև նախորդ օրը կաղակների մեջ լուր էր տարածվել,

որ իբր թե գեներալ Դենիկինը հրաման է տվել Ղրիմ փոխադրել այն բոլոր դոնեցիներին, որոնք պահպանել են զենքերն ու ձիերը։

Նավամատույցը լեփ-լեցուն էր Սալսկի օկրուգի կալմիկներով։ Նրանք Մանիչից և Սալից ձիերի և ուղտերի երամակներ էին բերել, իրենց փայտե, բնակելի տնակները քարշ տվել մինչև ծով։ Ամբոխի մեջ շնչելով ոչխարի ճարպի քաղցրավուն հոտը, Գրիգորին ու Ռյաբչիկովը մոտեցան նավամատույցի մոտ կանգնած մի մեծ փոխադրանավի կամրջակին։ Մարկովի դիվիզիայի սպաներից բաղկացած մի ուժեղ պահակախումբ պահպանում էր կամրջակը։ Դոնեցի հրետանավորները խմբվել էին այնտեղ, սպասելով բեռնման։ Շոգենավի ետին մասում դրված էին թնդանոթներ, որոնք ծածկված էին պաշտպանական գույնի բրեզենտներով։ Դժվարությամբ առաջ անցնելով, Գրիգորին կտրիճի տեսք ունեցող, սևաբեղ մի վախմիստրի հարցրեց.

— Սա ո՞ր մարտկոցն է, կազակ։

Վախմիստրը ծուռ նայեց Գրիգորիին, դժկամ պատասխանեց.

— Երեսունվեցերորդը։

— Կարգինսկո՞ւ։

— Ճիշտ այդպես։

— Ո՞վ է ղեկավարում բեռնումը։

— Հրե՛ն, կանգնած է բազրիքի մոտ, ինչ-որ գնդապետ է։

Ռյաբչիկովը քաշեց Գրիգորիի թևքից, ցասկոտ ասաց.

— Գնանք այստեղից, դրանց հերն էլ անիծած։ Մի՞թե դրանցից կարգին բան կիմանաս։ Երբ որ կռվում էինք, հարկավոր էինք, իսկ հիմի մենք դրանց ինչի՞ն ենք պետք...

Վախմիստրը ժպտաց, աչքով արեց հերթի կանգնած հրետանավորներին.

— Ձեր բախտը բանեց, հրետանավորներ։ Պարոնայք սպաներին էլ տեղ չեն տալի։

Գնդապետը, որ հսկում էր բեռնման վրա, արագաքայլ իջնում էր կամրջակից. նրա ետևից սայթաքելով, աճապարում էր ճաղատ մի չինովնիկ՝ կոճակներն արձակած թանկարժեք մուշտակով։ Նա ծովարջի մորթու փափախը աղերսա-

գին սեղմում էր կրծքին, ինչ-որ բան էր ասում, ու նրա քրտնքոտ դեմքը և կարճատես աչքերը այնպիսի պաղատանք էին արտահայտում, որ գնդապետը չդայնանում, դեմքը շուռ էր տալիս նրանից, կոպիտ բղավում էր.

— Ես արդեն մի անգամ ասացի ձեզ։ Մի կպչեք, այլապես ես կհրամայեմ ափ իջեցնել ձեզ։ Գժվե՞լ եք, ինչ է։ Մենք ի՞նչպես կարող ենք վերցնել ձեր իրերը։ Դուք կուրացե՞լ եք, ինչ է։ Չե՞ք տեսնում ինչ է կատարվում։ Է-է՛, համը տարաք, էլի։ Խնդրեմ, գանգատվեցեք, թեկուզ հենց գեներալ Դենիկինին։ Ասացի, որ չեմ կարող, ուրեմն չեմ կարող, դուք հասկանո՞ւմ եք ռուսերեն։

Երբ նա խուսափելով պնդերես չինովնիկից, անցնում էր Գրիգորիի կողքից, վերջինս փակեց նրա ճանապարհը ու, ձեռքը տանելով գլխարկի հովարին, հուզվելով հարցրեց.

— Սպաները կարո՞ղ են հույս դնել նավ նստելու վրա։

— Այս նավը—ոչ։ Տեղ չկա։

— Իսկ ո՞ր նավը կարելի է նստել։

— Իմացեք էվակուացման կայանում։

— Մենք եղանք այնտեղ, ոչ ոք ոչինչ չգիտե։

— Ես էլ չգիտեմ, թողեք անցնեմ.

— Բայց դուք հո բեռնում եք երեսունվեցերորդ մարտկոցը։ Ինչո՞ւ մեզ համար տեղ չկա։

— Ճանապարհ տվեք, ասում եմ ձեզ։ Ես տեղեկատու բյուրո չեմ։— Գնդապետը փորձեց թեթև հրել Գրիգորիին, բայց սա իր տեղում պինդ էր կանգնած։ Աչքերում կապտավուն կայծեր էին բռնկվում ու մարում։

— Հիմա մենք ձեզ հարկավոր չենք, հա՞-ա։ Իսկ առաջ հարկավո՞ր էինք։ Ետ տարեք ձեռքդ, ինձ չեք կարող դեն հրել։

Գնդապետը հայացքը ուղղեց Գրիգորիի աչքերին, ետ նայեց. կամրջակի վրա կանգնած մարկովականները, հրացանները ձեռներին պահած, դժվարությամբ էին կանգնեցնում վրա տվող ամբոխին։ Նայելով Գրիգորիի կողքից, գնդապետը հոգնածորեն հարցրեց.

— Դուք ո՞ր զորամասից եք։

— Ես Դոնի տասնիններորդ գնդից եմ, մնացածները՝ զանազան գնդերից։

— Ընդամենը քանի՞ հոգի եք։

— Տասը հոգի։

— Չեմ կարող։ Տեղ չկա։

Ռյաբչիկովը տեսավ, թե ինչպես ցնցվեցին Գրիգորիի ուսնգերը, երբ վերջինս ցածր ձայնով ասաց.

— Ի՞նչ ես դուրս տալիս, ի՛ժ, թիկունքի ոջիլ։ Հենց հիմա տեղ տուր մեզ, թե չէ...

«Հիմի Գրիշան դրան կխփի»,— ցասկոտ բավականությամբ մտածեց Ռյաբչիկովը, բայց տեսնելով , որ երկու մարկովականներ ամբոխի մեջ հրացանների կոթերով ճանապարհ բաց անելով, շտապում են գնդապետին փրկելու, նախազգուշացուցիչ կերպով քաշեց Գրիգորիի թևքից.

— Գործ չունես դրա հետ, Պանտելևիչ։ Գնանք...

— Դուք ապուշ եք, դուք պատասխան կտաք ձեր վարքի համար,— ասավ սփրթնած գնդապետը ու, դիմելով վրա հասած մարկովականներին, ցույց տվեց Գրիգորիին.

— Պարոններ, սաստեցեք այս ընկնավորին։ Պետք է այստեղ կարգ ու կանոն պահպանել։ Ես շտապ գործ ունեմ պարետի մոտ, իսկ այստեղ հաճեցեք ամեն տեսակ սիրալիր խոսքեր լսել ամեն մեկից...— Ու հապճեպ անցավ Գրիգորիի կողքից։

Բարձրահասակ մի մարկովական, որ պորուչիկի ուսադիրներով էր, կապույտ բեկեշով և անգլիական ձևով կանոնավոր կտրած բեղիկներով,— հուպ մոտեցավ Գրիգորիին։

— Ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ եք խանգարում կարգը։

— Տեղ եմ ուզում շոգենավում, այ թե ինչ։

— Ո՞րտեղ է ձեր զորամասը։

— Չգիտեմ։

— Ձեր փաստաթո՛ւղթը։

Երկրորդ մարկովականը, որ ուռուցիկ շրթունքներով, ակնոցավոր մի երիտասարդ էր, կոտրատվող, թավ ձայնով ասաց.

— Սրան պետք է պահակատուն տանել։ Ժամանակ մի կորցնեք, Վիսոցկի։

Պորուչիկը ուշադրությամբ կարդաց Գրիգորիի վկայականը, վերադարձրեց այն։

— Գտեք ձեր զորամասը։ Խորհուրդ եմ տալիս այստեղից հեռանալ և չխանգարել բեռնմանը։ Մենք հրաման ունենք ձերբակալել բոլորին,— անկախ նրանց կոչումից,— ովքեր անկարգապահություն են ցուցաբերում, խանգարում բեռնման։— Պորուչիկը պինդ սեղմեց շրթունքները, սպասեց մի քանի վայրկյան ու, ծուռ նայելով Ռյաբչիկովին, թեքվեց դեպի Գրիգորին, շշնջաց.— կարող եմ ձեզ խորհուրդ տալ,— խոսեցեք երեսունվեցերորդ մարտկոցի հրամանատարի հետ, կանգնեցեք նրանց հերթում, և դուք շոգենավ կնստեք։

Ռյաբչիկովը լսեց պորուչիկի ասածը, ուրախացած ասավ.

— Գնա Կարգինի մոտ, իսկ ես արագ վազ կտամ տղերանց կանչելու։ Քո իրերից, բացի մախաղից, էլ ի՞նչ վերցնեմ։

— Գնանք միասին,— անտարբեր ասաց Գրիգորին։ Ճանապարհին նրանք հանդիպեցին մի ծանոթ կազակի, որ Սեմյոնովսկի խուտորից էր։ Սա մի ահագին արաբայով թբխած հաց էր տանում նավակայան. հացը ծածկված էր բրեզենտով։ Ռյաբչիկովը ձայն տվեց կազակին.

— Ֆյոդոր, բարև։ Հացն ո՞ւր ես տանում։

— Օ-օ-օ՛, Պլատոն, Գրիգորի Պանտելևիչ, բարև ձեզ։ Մեր գնդին հաց ենք մատակարարում ճանապարհի համար։ Հազիվ թխեցինք, թե չէ ստիպված կլինեինք ճանապարհին միայն կուտյա (չամչով կամ մեղրով ձավար) ուտել...

Գրիգորին մոտեցավ կանգ առած արաբային, հարցրեց.

— Հացդ կշռվա՞ծ է, թե մեկ-մեկ հաշված։

— Ո՞ր սատանեն պիտի հաշվեր։ Ձեզ հո հաց չի՞ հարկավոր։

— Հարկավոր է։

— Վերցրու։

— Ինչքա՞ն կարելի է վերցնել։

— Ինչքան որ կարենաս տանել, հացը հերիք է մեզ։

Ռյաբչիկովը զարմանքով նայում էր, թե ինչպես Գրիգորին մեկը մյուսի ետևից իջեցնում է հացերը ու, չհամբերելով, հարցրեց.

— Ինչո՞ւ համար ես այդքան վերցնում։

— Հարկավոր է,— կարճ պատասխանեց Գրիգորին։

Նա սայլապանից երկու պարկ վերցրեց, հացը դարսեց

դրանց մեջ, շնորհակալություն հայտնեց ու հրաժեշտ տալով՝ հրամայեց Ռյաբչիկովին.

— Վերցրու, տանենք։

— Դու հո այստեղ ձմեռելու չե՞ս պատրաստվում,— հեգնանքով հարցրեց Ռյաբչիկովը, շալակելով մի պարկը։

— Սա ինձ համար չէ։

— Բա ո՞ւմ համար է։

— Ձիու համար։

Ռյաբչիկովը պարկը ճարպկությամբ գցեց գետին, շփոթված հարցրեց.

— Կատա՞կ ես անում։

— Ոչ, լուրջ եմ ասում։

— Ուրեմն դու... դու ի՞նչ ես որոշել, Պանտելևիչ, ուզում ես մնա՞լ, ես այդ ճի՞շտ եմ հասկանում։

— Ճիշտ ես հասկանում։ Դեհ, վերցրու պարկը, գնանք։ Պետք է կեր տալ ձիուն, թե չէ նա կրծոտել է ամբողջ մսուրը։ Ձին դեռ պետք կգա ծառայության մեջ...

Ռյաբչիկովը մինչև բնակարան հասնելը լուռ էր, տընքտընքում էր՝ ուսի վրա վերև գցելով պարկը. մոտենալով ցանկապատի դռնակին, հարցրեց.

— Տղերանց կասե՞ս,— ու պատասխանի չսպասելով, թեթև վրդովմունք արտահայտող ձայնով ասաց.— ա՛մա թե բան ես մտածել, հա՛-ա... Բա մենք ի՞նչ անենք։

— Ինչ որ ուզում եք,— շինծու անտարբերությամբ պատասխանեց Գրիգորին։— Մեզ չեն վերցնում, բոլորիս համար տեղ չի գտնվում,— և պետք էլ չի։ Մեր ինչի՞ն են պետք նրանք, ինչո՞ւ պիտի նրանց ոտները ընկնենք։ Կմնանք։ Կփորձենք մեր բախտը։ Անցի՛ր, է՛, ի՞նչ ես կանգնել դռան շեմքին։

— Այս տեսակ խոսակցությունից մարդ կսառի ու կմնա... Ես իսկի շեմքն էլ չեմ տեսնում։ Ա՛յ քեզ բա-ա՛ն։ Դու, Գրիշա, ոնց որ թե կացնով տվիր կարկաչիս։ Ուղակի թոցրիր խելքս։ Ես էլ ասում եմ. «Ախր սա ինչի՞ համար է խնդրում այդ հացը»։ Հիմի մեր տղերքը կիմանան, կհուզվեն...

— Բա դո՞ւ, չե՞ս մնա,— հետաքրքրվեց Գրիգորին։

— Ինչ ես ասում,— վախեցած բացականչեց Ռյաբչիկովը։

— Լավ մտածիր։

— Մտածե՞լս որն է։ Անպատճառ կգնամ, քանի դեռ տեղ կա։ Կմիանամ Կարգինի մարտկոցին ու կգնամ։

— Իզո՛ւր։

— Ա՛յ քեզ բան։ Ինձ համար, աղբեր, թանկ է գլուխս։ Չեմ ուզում, որ կարմիրները գլխիս վրա փորձեն իրենց թրերը։

— Լավ մտածիր, Պլատոն, դա այնպիսի բան է որ...

— Էլ մի ասա։ Հենց հիմի կգնամ։

— Դե, ինչպես կուզես, չեմ համոզում,— սրտնեղելով ասաց Գրիգորին և առաջինը բարձրացավ մուտքի սանդուղքի քարե աստիճաններով։

Բնակարանում չկային ոչ Երմակովը, ոչ Պրոխորը, ոչ էլ Բոգատիրյովը։ Տանտիրուհին,— տարեց, կորամեջք մի հայուհի,— ասաց, թե կազակները գնացել են ու խոստացել շուտով վերադառնալ։ Գրիգորին առանց շինելը հանելու խոշոր կտորներով կարատեց մի հաց, տարավ մարագ, ուր գտնվում էին ձիերը։ Հացը երկու հավասար մասի բաժանեց, տվեց իր և Պրոխորի ձիերին ու հենց նոր էր վերցրեց դույլը, որ գնար ջուր բերելու, երբ Ռյաբչիկովը երևաց դռան շեմքին։ Շինելի փեշերով նա պինդ բռնել էր խոշոր պատառների բաժանած հացը։ Տեսնելով տիրոջը, Ռյաբչիկովի ձին կարճ վրնջաց, իսկ նրա տերը լուռումունջ անցավ զուսպ ժպտացող Գրիգորիի կողքից, հացի կտորները լցրեց մսուրի մեջ, առանց Գրիգորիին նայելու ասաց.

— Ատամներդ մի՛ ցույց տա, էլի՛։ Քանի որ բանն այդպես է, ուրեմն ես էլ պետք է կեր տամ ձիուս... Դու կարծում ես, թե ես շա՞տ կուզենայի մեկնել։ Ինքս ինձ զոռով պիտի ստիպեի նստել այդ անիծված նավը, լա՛վ իմացիր։ Ախր թունդ վախ էր ընկել սիրտս... ունեմ-չունեմ մի գլուխ ունեմ, չէ՞։ Աստված չանի կտրեն այս գլուխս, մի ուրիշ գլուխ հո մինչև աստվածածնի տոնը չի՞ բուսնի։

Պրոխորը և մյուս կազակները միայն իրիկնադեմին վերադարձան։ Երմակովը բերեց մի ահագին շիշ սպիրտ, իսկ Պրոխորը՝ մի պարկ հերմետիկորեն խցած բանկաներ՝ պղտորավուն-դեղին հեղուկով։

— Ա՛յ թե ինչ լավ բան ճարեցինք, ամբողջ գիշերը կհերիքի,— Երմակովը պարծենալով ցույց տվեց մեծ շիշը,

բացատրեց.— մի զինվորական բժիշկ պատահեց, խնդրեց պահեստից դեղորայք փոխադրել նավակայան։ Բեռնողները հրաժարվել էին աշխատելուց, միայն յունկերներն էին պահեստից դեղորայք տանում, մենք էլ աշխատեցինք նրանց հետ։ Մեր օգնության համար բժիշկը սպիրտ տվեց, իսկ այս բանկաները Պրոխորը գողացել է, թե սուտ եմ ասում, աստված պատժի ինձ։

— Իսկ ի՞նչ կա դրանց մեջ,— հետաքրքրվեց Ռյաբչիկովը։

— Սպիրտից էլ լավ բան է, հոգիդ սիրեմ։— Պրոխորը թափահարեց մի բանկա, նայեց լույսի դեմ, թե մուգ ապակու միջին ինչպես է փրփրում թանձր հեղուկը, ինքնագոհ վերջացրեց խոսքը.— սա իսկական արտասահմանյան թանկ գինի է։ Սա միայն հիվանդներին են տալի, ինձ այդպես ասավ մի յունկեր, որ հասկանում է անգլերեն։ Կնստենք շոգենավ, կխմենք դարդից, կերգենք «Դու հարազատ իմ երկիր»-ը ու կխմենք մինչև Ղրիմ հասնելը, բանկաներն էլ ծովը կգցենք։

— Շուտ արա, գնա նստի, թե չէ քո պատճառով շոգենավը կանգնած է, չեն ուղարկում։ «Ո՞րտեղ է,— ասում են,— Պրոխոր Զիկովը, հերոսների հերոսը, առանց նրան չենք կարող մեկնել»,— հեգնանքով ասաց Ռյաբչիկովը, ու մի փոքր լռելուց հետո ծխախոտից դեղնած մատը տնկեց դեպի Գրիգորին, ասաց.— Նա չի ուզում գնալ։ Ես էլ չեմ ուզում։

— Ո՞նց թե,— ասաց Պրոխորը ու քիչ մնաց, որ զարմանքից վար գցեր ձեռքի բանկան։

— Ի՞նչ է պատահել, այդ ի՞նչ եք մոգոնել,— մռայլվելով ու աչքերը Գրիգորիի վրա հառելով, հարցրեց Երմակովը։

— Որոշել ենք չմեկնել։

— Ինչո՞ւ։

— Որովհետև մեզ համար տեղ չկա։

— Այսօր չկա, վաղը կլինի,— վստահորեն հայտարարեց Բոգատիրյովը։

— Իսկ դու եղե՞լ ես նավակայաններում։

— Հետո ի՞նչ։

— Տեսե՞լ ես, թե այնտեղ ինչ է կատարվում։

— Տեսել եմ։

— Որ տեսել ես, էլ ինչի՞ մասին է խոսքը։ Միայն երկուսիս,— ինձ ու Ռյաբչիկովին էին վերցնում, այն էլ, ինչպես ասաց մի կամավոր, պետք է միանայինք Կարգինի մարտկոցին, ուրիշ կերպ չէր կարելի։

— Նա, այդ մարտկոցը, դեռ չի՞ բեռնվել,— աշխուժությամբ հարցրեց Բոգատիրյովը։ Իմանալով, որ հրետանավորները հերթի էին կանգնած և բեռնման էին սպասում, նա իսկույն պատրաստվեց գնալու. սպիտակեղենը, պահուստ շալվարը, վերնաշապիկը և հացը դրեց իրերի պարկի մեջ, հրաժեշտ տվեց։

— Մի՛ գնա, Պետրո,— խորհուրդ տվեց Երմակովը,— մենք չպետք է բաժանվենք։

Բոգատիրյովը առանց պատասխանելու ձեռքը մեկնեց նրան, շեմքից մի անգամ էլ մնաք բարով ասավ։— Ողջառողջ լինեք, աստված կտա, էլի կտեսնվենք։— Ու դուրս վազեց։

Նրա գնալուց հետո սենյակում երկար ժամանակ ճնշող լռություն էր տիրում։ Երմակովը գնաց խոհանոց, տանտիրուհու մոտ, բերեց չորս բաժակ, լուռումունջ սպիրտ լցրեց դրանց մեջ, պաղ ջրով լիքը պղնձե մի թեյաման դրեց սեղանի վրա, խոզաճարպ կտրտեց ու էլի լուռումունջ նստեց սեղանի մոտ, կոթնեց սեղանին, մի քանի բոպե բութ հայացքով նայեց հատակին, հետո հենց թեյամանի բերանից ջուր խմեց, խռպոտ ասաց.

— Կուբանում ամեն տեղ ջրից նավթի հոտ է գալիս, ինչի՞ց է դա։

Նրան ոչ ոք չպատասխանեց։ Ռյաբչիկովը կոշտ փալասով սրբում էր թրի թաց փորակները։ Գրիգորին խառնում էր իր փոքրիկ սնդուկը, Պրոխորը մտացրիվ նայում էր պատուհանից դուրս, լերկ ու մերկ լեռնալանջերին, որոնց վրա ձիերի երամակներ էին ցրված։

— Սեղան նստենք, խմենք։— Երմակովը առանց սպասելու մի կես բաժակ սպիրտ գցեց, վրայից ջուր խմեց ու ծամելով վարդերանգ խոզաճարպի մի պատառ, աշխուժացած աչքերը հառելով Գրիգորիի վրա, հարցրեց.

— Կարմիր ընկերները մեզ շանսատակ չե՞ն անի, հը՞։

— Բոլորին չեն կոտորի։ Այստեղ հազար-հազար մարդ կմնա,— պատասխանեց Գրիգորին։

— Բոլորի մասին չէ, որ ես դարդ եմ անում,— ծիծաղեց Երմակովը,— ես իմ գլխի մասին եմ մտածում...

Երբ արդեն բավական խմել էին, խոսակցությունը աշխուժացավ։ Մի քիչ հետո էլ անսպասելի երևաց ցրտից կապտած, նոթոտ, մռայլ Բոգատիրյովը։ Շեմքի մոտ նա գցեց մի ամբողջ հակ բոլորովին նոր անգլիական շինելներ, սկսեց լուռումունջ հանվել։

— Շնորհավոր լինի ձեր գալուստը,— գլուխ տալով՝ հեգնեց Պրոխորը։

Բոգատիրյովը կատաղի մի հայացք նետեց նրա կողմը, հոգոց հանելով ասաց.

— Այդ բոլոր Դենիկինները և մյուս բ... որ խնդրեն էլ, չեմ մեկնի։ Հերթ կանգնեցի, մրսեցի, ոնց որ շունը սառնամանիքին, ու ոչինչ էլ դուրս չեկավ։ Հերթս հասնելու վրա էր։ Ինձանից առաջ երկու հոգի էին կանգնած, մեկին անցկացրին, մյուսին՝ ոչ։ Մարտկոցի կեսը մնաց, դա ի՞նչ բան է, հը՞։

— Այ թե ոնց են վռնդում քեզ նմաններին,— քրքջաց Երմակովը ու մեծ շշից մի բաժակ սպիրտ լցրեց Բոգատիրյովի համար, թափթփելով այն։— Վերցրու, խմիր դարդից։ Թե՞ պիտի սպասես, որ գան քեզ խնդրելու։ Մտիկ արա լուսամուտից, հո գեներալ Վրանգելը չի՞ գալի քեզ կանչելու։

Բոգատիրյովը սուսուփուս քամեց սպիրտը։ Նա բնավ տրամադիր չէր կատակելու։ Երմակովն ու Ռյաբչիկովն էլ, կիսահարբած լինելով, թունդ խմացրին պառավ տանտիրուհուն և արդեն ցանկություն էին հայտնում գնալ մի որևէ տեղ, հարմոնիստ գտնել։

— Ավելի լավ է գնացեք կայարան,— խորհուրդ տվեց Բոգատիրյովը,— այնտեղ թալանում են վագոնները։ Մի ամբողջ գնացք հագուստեղենով է բեռնված։

— Ինչերի՞ս է պետք հագուստեղենը,— բղավեց Երմակովը,— քո բերած շինելները մեզ հերիք են։ Մեկ է, ավելորդը կվերցնեն։ Պետրո, շան որդի, մենք միտք ունենք կարմիրներ դառնալ, հասկացա՞ր։ Մենք հո կազակներ ենք, չէ՞։ Թե որ կարմիրները մեզ կենդանի թողնեն, կգնանք

նրանց մոտ ծառայելու։ Մենք Դոնի կազակներ ենք, զտարյուն կազակներ առանց խառնուրդի։ Մեր գործը թրատելն է։ Գիտե՞ս ես ոնց եմ թրատում. ոնց որ քյալամ կտրես։ Կանգնիր, փորձեմ քեզ վրա։ Հը՛մ, վախո՞ւմ ես։ Մեզ համար մեկ է, թե ում կթրատենք, միայն թե թրատենք, դրուստ չե՞մ ասում, Մելեխով։

— Ձեռ քաշի, է՛,— հոգնածորեն պատասխանեց Գրիգորին։

Շլելով արյունալի աչքերը, Երմակովը փորձում էր ձեռքը հասցնել սնդուկի վրա դրված թրին։ Բոգատիրյովը առանց բարկության ետ էր հրում նրան, ասում.

— Շատ մի կատաղի, է՛յ, քաջ զինվոր, թե չէ ես քեզ հիմի կհանդարտացնեմ, հա՛-ա։ Ջափավոր խմիր, էլի՛, դու հո սպայի աստիճան ունես։

— Ես խնչել եմ այդ աստիճանի վրա։ Դա հիմի ինձ այնքան է պետք, որքան կաղապարը՝ խոզին։ Մի՛ հիշի, դու էլ ես այդպես։ Թող ես կտրեմ քո ուսադիրները։ Պետյա, հոգիդ սիրեմ, կաց, ես հիմի դրանք...

— Հլա ժամանակը չի, դրա օրն էլ կգա,— քմծիծաղ էր տալիս Բոգատիրյովը՝ ետ մղելով չափն անցկացրած ընկերոջը։

Խմեցին մինչև լուսաբաց։ Դեռ երեկոյից որտեղից-որտեղ եկան անծանոթ կազակներ, սրանցից մեկը՝ հարմոնիստ։ Երմակովը այնքան «կազաչոկ» պարեց, որ վայր ընկավ։ Նրան քարշ տվին սնդուկի մոտ, ու նա իսկույն քնեց մերկ հատակի վրա, ոտները լայն տարածած, գլուխը անհարմար ետ գցած։ Անուրախ քեֆը շարունակվեց մինչև առավոտ։ «Ես Կոմշատսկուց եմ... հենց այդ ստանիցայից։ Հիանալի եղներ ունեինք, երկար պոզերով ու առյուծի պես ձիեր։ Իսկ հիմի ի՞նչ է մնացել տնտեսության մեջ. մենակ մի քավթառ շուն, այն էլ շուտով կսատկի, կերակրելու ոչինչ չկա»...— հարբած հեկեկալով ասում էր տարեց մի կազակ,— քեֆին եկած պատահական ծանոթներից մեկը։ Պատռտված չերքեզկայով մի ինչ-որ կուբանցի «նաուրյան» եղանակ էր պատվիրում հարմոնիստին, ու թևերը գեղեցիկ տարածելով, այնպիսի ապշեցուցիչ թեթևությամբ էր սահում

սենյակով մեկ, որ Գրիգորիին թվում էր, թե կուբանցու լեռնական սապոգների ներբանները բոլորովին էլ չեն դիպչում կեղտոտ, մաշված հատակին։

Կեսգիշերին կազակներից մեկը որտեղից-որտեղ բերեց երկու հատ երկար, նեղ բկերով սափոր. դրանց կողերի վրա սևին էին տալիս կիսափտած պիտակները, խցանները կնքված էին զմուռսով, բալի պես կարմիր զմուռսե կնիքների տակից կապարե ծանր պլոմբներ էին կախված։ Պրոխորը դույլանոց սափորը երկար պահել էր ձեռքին, լարված շարժում էր շրթունքները՝ աշխատելով ըմբռնել պիտակի արտասահմանյան մակագրությունը։ Նոր արթնացած Երմակովը նրա ձեռքից վերցրեց սափորը, դրեց հատակին, հանեց թուրը։ Պրոխորը դեռ ձայն-ծպտուն էլ չէր հանել, երբ Երմակովը շեղակի ետ տանելով թուրը, դրանով խփեց ու քառորդաչափ կտրեց սափորի բուկը, բարձր բղավեց՝ «Մոտեցրեք ամանները»։

Թանձր, չտեսնված կերպով անուշաբույր և տաք գինին խմեցին մի քանի բոպեում, ու հետո Ռյաբչիկովը երկար ժամանակ հիացմունքից ծնոտացնում էր լեզուն, մոթմոթում. «Դա ոչ թե գինի է, այլ սուրբ հաղորդություն։ Այդ տեսակ գինին պետք է միայն մահից առաջ խմել, այն էլ պետք է խմեն ոչ թե բոլորը, այլ նրանք, որոնք իրենց ողջ կյանքումը թուղթ չեն խաղացել, բռնոթի չեն քաշել ու կնոնոնց ձեռք չեն տվել... Մի խոսքով, եպիսկոպոսական խմիչք է, էլի՛»։ Այստեղ Պրոխորը հիշեց, որ իր մախաղում բանկաներով բուժիչ գինի կա։

— Կաց, Պլատոն, շատ մի գովի։ Իմ գինին դրանից ավելի լավը կլինի։ Դա աղբ է, իսկ այն, որ ես բերել եմ պահեստից, հիանալի գինի է։ Խունկ ու մեղր է, կարելի է թե մինչև իսկ է՛լ ավելի լավ։ Ոչ թե և [illegible]հոպոսի, այլ հենց թագավորի գինի է։ Առաջ թագա[illegible] էին խմում, հիմի էլ մեր ձեռքն է ընկել...— պարծենում էր Պրոխորը՝ բաց անելով բանկաներից մեկը։

Խմելու համար մեռած Ռյաբչիկովը մթանգամից կուլ տվեց կես բաժակ դեղնապղտոր, թանձր հեղուկը, վայրկենապես սփրթնեց ու չռեց աչքերը։

— Սա ոչ թե գինի է, այլ կարբոլ,— խոխոտացրեց նա ու բաժակի հատակին մնացած հեղուկը դայրացած թափելով Պրոխորի շապկի վրա, օրորվելով գնաց միջանցք։

— Սուտ է ասում նա, շան որդին։ Անգլիական գինի է, առաջին տեսակի։ Չհավատաք նրան, տղերք,— գոռաց Պրոխորը՝ աշխատելով, որ իր ձայնը մյուս ձայներից ավելի բարձր հնչի։ Նա միանգամից խմեց մի բաժակ և Ռյաբչիկովից էլ ավելի շատ սփրթնեց։

— Հը, ո՞նց է,— հարցրեց Երմակովը՝ ուղղելով պինչերը, նայելով Պրոխորի կկոցված աչքերին.— Թագավորական գինու պե՞ս է, հա՞, թո՞ւնդ է, քա՞ղցր է, դե ասա, է՛, գրողի տարած, թե չէ այս բանկան գլխիդ վրա կչարդեմ։

Պրոխորը օրորում էր գլուխը, լուռ տանջվում, հետո էլ զկոտաց, արագ վեր թռավ ու դուրս վազեց Ռյաբչիկովի ետևից, Երմակովը ծիծաղից թուլանալով, դավադրաբար աչքով արեց Գրիգորիին, գնաց բակը։ Մեկ րոպեից հետո նա վերադարձավ սենյակը։ Նրա որոտընդոստ քրքիջը ծածկեց բոլոր ձայները։

— Ի՞նչ պատահեց,— հոգնածորեն հարցրեց Գրիգորին,— ի՞նչ ես խրխնջում, ա՛յ սարսաղ։ Ո՞ւմ ես տկլոր տեսել։

— Օֆ, տղա, գնա տես, թե նրանք ինչ օրն են ընկել։ Գիտե՞ս ինչ են խմել։

— Ի՞նչ։

— Անգլիական օծանելիք՝ ոջիլների դեմ։

— Սուտ ես ասում։

— Աստված վկա։ Ես էլ, երբ պահեստումն էի, սկզբում կարծում էի, թե դա գինի է, հետո էլ հարցրի բժշկին՝ «Սա ի՞նչ է, պարոն բժիշկ»։— «Դեղ է»— ասում է նա։ Ես հարցնում եմ.— «Հո դարդի դեղ չի՞, սպիրտով չի՞»։— «Աստված չանի,— ասում է,— դա մեզ ուղարկել են դաշնակիցները, իբրև միջոց՝ ոջիլների դեմ։ Դա ջանին քսելու դեղ է, խմել բոլորովին չի կարելի»։

— Բա ինչո՞ւ չես ասել սրանց, ա՛յ չարագործ,— բարկությամբ կշտամբեց Գրիգորին։

— Թող այդ սատանեքը մաքրվեն անձնատուր լինելուց առաջ, հո չեն սատկելու։— Երմակովը սրբեց ծիծաղից դուրս

տված արցունքները, ոչ առանց չարախնդության ավելացրեց.— հիմի քիչ կխմեն, թե չէ մինչև դու սեղանից մի գավաթ վերցնես, նրանք տասն են վերցնում։ Այդպես պետք է խելքի բերել ագահներին։ Էհ, ես ու դու խմե՞նք, թե սպասենք։ Եկ խմենք մեր կործանման բաժակը։

Լուսաբացից առաջ Գրիգորին դուրս ելավ, մուտքի սանդուղքի վրա դողդոջ ձեռներով թութուն փաթաթեց, ծխեց, երկար կանգնեց՝ մեջքը հենելով մշուշից խոնավացած պատին։

Տանը անլսելի հնչում էին հարբածների ճչոցները, հարմոնի լարված ելևէջները, ուրախ-զվարթ սուլոցը, մոլեռանդ պարողների կրունկները անդադար, չոր, քթքթում էին հատակի վրա... Քամին էլ ծովախորշից բերում էր շոգենավերի շչակների թավ, ցածր մռնչոցը. նավակայաններում մարդկային ձայները միախառնվում, անընդմեջ դժժոց էին դառնում, որը ճեղքվում էր հրամանի բարձր բացականչություններով, ձիերի վրնջյունով, շոգեքարշերի շչյուններով։ Որտեղից-որտեղ, Տոնելնայա կայարանի ուղղությամբ կոիվ էր տեղի ունենում։ Խուլ որոտում էին թնդանոթները, դրանց մի կրակոցից մինչև մյուսը հազիվ լսվում էր գնդացիրների երկար ճարճատյունը։ Մարխոտյան լեռնանցքից դենը վերև թռավ լուսացայտ մի հրթիռ։ Մի քանի վայրկյան երևացին կանաչ, երերուն փայլով լուսավորված լեռնագագաթները, հետո էլ մարտի գիշերվա թանձր մթությունը նորից ծածկեց լեռները, ու է՛լ ավելի հստակ ու արագ, գրեթե միախառնվելով, որոտացին հրետանային համազարկերը։

XXIX

Աղի, թանձր, պաղ քամի էր փչում ծովից։ Անհայտ, օտար երկրների բույրն էր նա բերում դեպի ափը։ Բայց դոնեցիների համար ոչ միայն քամին, այլև ամեն ինչ էլ օտար, անհարազատ էր այդ ձանձրալի, միջանցիկ քամիներով ներթափանցված, ծովափնյա քաղաքում։ Անընդմեջ, խուռն մասսայով կանգնել էին նրանք ծովապատնեշի վրա, բեռնման էին սպասում... Ափի մոտ խաղում էին կանաչ, փրփրուն ալիքները։ Ջտաքացնող արևը ամպի միջից նայում էր

երկրին։ Խարսխակայանում ծուխ էին արձակում անգլիական ու ֆրանսիական ականակիրները. կանգնած էր գորշ, վիթխարի մի դրեդնոուտ։ Նրա վերևում գալարվում էր ծխի սև ամպը։ Նավակայաններում չարագուշակ լռություն էր տիրում։ Այնտեղ, ուր քիչ առաջ ճոճվում էր վերջին փոխադրանավը, ջրի երեսին օրորվում էին սպայական թամքեր, ճամպրուկներ, վերմակներ, մուշտակներ, կարմիր թավիշով պատած աթոռներ, էլի ինչ-որ իրեր, որոնք հապճեպորեն նետված էին նավի կամրջակից...

Գրիգորին առավոտից եկել էր նավակայան. ձին թողնելով Պրոխորի խնամքին, երկար քայլում էր ամբոխի մեջ, ծանոթներ էր փնտրում, ունկնդրում կցկտուր, տագնապալից խոսակցություններին։ Նրա աչքերի առաջ «Սվյատոսլավի» կամրջակի մոտ ինքն իրեն գնդակահարեց պաշտոնաթող, տարեց մի գնդապետ, որին տեղ չէին տվել շոգենավում։

Դրանից մի քանի րոպե առաջ գնդապետը, որ կարճահասակ էր, անհանգիստ, ճերմակած մորուքով, լացակումած, ուռուցիկ, պարկավոր աչքերով,— բռնում էր պահակապետի սուսերակալի փոկերից, ողորմելի տեսքով ինչ-որ շշնջում էր, խնչում և անմաքուր թաշկինակով սրբում ծխահարված բեղերը, աչքերն ու դողդոջ շրթունքները, հետո էլ ինչ-որ միանգամից ինքնասպանության դիմեց... Ու մի ճարպիկ կազակ մեռածի ձեռքից անմիջապես հանեց նիկելե փայլուն բրաունինգը, բացմոխրագույն սպայական շինելով դիակը ոտներով, ինչպես գերան, գլորեցին դեպի կուտակված արկղերը, ու կամրջակի մոտ է՛լ ավելի հոծ ամբոխ հավաքվեց, է՛լ ավելի սաստկացավ հերթում եղած տուրուդմբոցը, է՛լ ավելի կատաղի դարձան փախստականների խոպոտ, չարացած ձայները։

Երբ վերջին շոգենավը սկսեց ճոճվելով հեռանալ ափից, ամբոխի մեջ լսվեցին կանանց հեկեկանքներ, հիստերիկ ճչոցներ, հայհոյանք... Դեռ չէր լռել շոգենավի շչակի կարճ, թավ մռնչոցը, երբ աղվեսի մորթու ականջավոր փափախով մի երիտասարդ կալմիկ նետվեց ջուրը, լողաց շոգենավի ետևից։

— Չհամբերեց,— հոգոց հանելով ասաց կազակներից մեկը։

— Ուրեմն նա ոչ մի կերպ չէր կարող մնալ,— վրա բերեց Գրիգորիի կողքին կանգնած մի կազակ։— Ուրեմն նա կարմիրներին շատ վնաս է հասցրել...

Գրիգորին, ատամներն իրար սեղմելով, նայում էր լող տվող կալմիկին։ Լողորդի թևերը հետզհետե ավելի դանդաղ էին թափահարվում, ուսերն ավելի ու ավելի էին իջնում։ Թրջված չեքմենը նրան ներքև էր քաշում։ Ալիքները նրա գլխից պոկեցին աղվեսի մորթու շիկակարմիր փափախը, ետ շպրտեցին։

— Կխեղդվի անիծված անօրենը,— ափսոսանքով ասաց բեշմետ հագած մի ինչ-որ ծերունի։

Գրիգորին կտրուկ շուռ եկավ, գնաց դեպի իր ձին։ Պրոխորը աշխույժ խոսում էր ձիերով իրեն մոտեցած Ռյաբչիկովի ու Բոգատիրյովի հետ։ Տեսնելով Գրիգորիին, Ռյաբչիկովը այլևս չկարողացավ ձիու վրա հանգիստ մնալ, կրունկները անհամբերությամբ խփեց ձիու կողքերին, բղավեց.

— Շտապիր, է՛, Պանտելևիչ,— ու չսպասելով Գրիգորիի մոտենալուն, դեռ հեռվից ասաց.— քանի դեռ ուշ չէ, եկ հեռանանք։ Այստեղ մի հիսուն հոգի կազակներ ենք հավաքվել, ուզում ենք գնալ Գելենջիկ, այնտեղից էլ՝ Վրաստան։ Դու կգա՞ս։

Գրիգորին մոտենում էր ձեռները շինելի խոր գրպանները դրած, ուսերով լուռումունջ ճանապարհ բաց անելով նավակայանում աննպատակ ամբոխված կազակների մեջ։

— Կգա՞ս թե չէ,— ձիով հուպ մոտենալով, կտրուկ հարցրեց Ռյաբչիկովը։

— Ոչ, չեմ գա։

— Մեզ հետ է մի զորական ավագ։ Նա այստեղի ճանապարհները լավ գիտի, ասում է. «Աչքերս խփած մինչև Թիֆլիզ կհասցնեմ»։ Գնանք, էլի, Գրիշա։ Այնտեղից էլ թուրքերի մոտ, հը՞։ Հո պե՞տք է մի կերպ փրկվել։ Մեր վերջն է գալիս, իսկ դու քնկոտ ես, ոնց որ ձուկ...

— Ոչ, չեմ գա,— Գրիգորին Պրոխորի ձեռքից վերցրեց սանձը, ծանր, ծերունու պես ձի նստեց։— Չեմ գա։ Միտք չունի։ Մի քիչ էլ ուշ է... Հապա, նայի՛ր։

Ռյաբչիկովը ետ նայեց, հուսալքված ու զայրացած ճմռթեց, պոկեց թրափունջը. լեռներից իջնում էին կարմիր-

բանակայինների շղթաները։ Ցեմենտի գործարանների մոտ տենդային կերպով ճարճատեցին գնդացիրները։ Զրահագնացքների թնդանոթներից կրակ բացեցին շղթաների վրա։ Ասլանիդիի աղացի մոտ պայթեց առաջին արկը։

— Տղերք, գնանք մեր բնակարանը, եկեք իմ ետևից,— հրամայեց ուրախացած ու մի տեսակ աշխուժացած Գրիգորին։

Բայց Ռյաբչիկովը բռնեց Գրիգորիի ձիու սանձից, վախեցած բացականչեց.

— Հարկավոր չի, մնանք այստեղ... Գիտե՞ս, մարդկանց աչքի առաջ մեռնելը սարսափելի չէ...

— Եկ, դմբո, ի՞նչ մահ, ի՞նչ ես դուրս տալի։— Գրիգորին բարկացած ուզում էր էլի մի բան ասել, բայց ծովից եկած ահարկու որոտմունքը կտրեց նրա ձայնը։ «Հնդկաստանի կայսր» կոչված անգլիական դրեդնոուտը, հեռանալով դաշնակից Ռուսաստանի ափերից, շուտ եկավ կողքի և իր տասներկու դյույմանոց թնդանոթներից մի քանի արկ արձակեց։ Պաշտպանելով ծովախորշից դուրս եկող շոգենավերը, նա հրակոծում էր քաղաքի ծայրամասերին մոտեցող կարմիրների, կանաչների շղթաները, կրակը փոխադրում էր լեռնանցքի կատարը, որտեղ երևացել էին կարմիր մարտկոցները։ Անգլիական արկերը ծանր կրճկրճոցով ու ոռնոցով թռչում էին նավակայանում խոնված կաղակների գլուխների վերևից։

Պինդ քաշելով սանձը, զսպելով գետնին չոքող ձիուն, Բոգատիրյովը հրաձգության որոտմունքի մեջ բղավում էր.

— Ի՞նչ զիլ են հաչում անգլիական թնդանոթները։ Զո՛ւր են չարացնում կարմիրներին։ Նրանց կրակոցներից ոչ մի օգուտ չկա, հենց միայն աղմուկ են բարձրացնում...

— Թող չարացնեն, հիմի մեզ համար մեկ է,— ժպտալով, Գրիգորին քշեց ձին, գնաց փողոցով։

Փողոցի անկյունից կատաղի քառատրոփով, մերկացրած սրերով նրա դեմուդեմ դուրս թռան վեց ձիավոր։ Առջևի ձիավորի կրծքին արյունոտ վերքի նման կարմրին էր տալիս դոմաշե բանտը։

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Հարավից երկու օր տաք քամի էր փչում։ Դաշտերում հալվել էր վերջին ձյունը։ Լռել էին գարնանային փրփրուն հեղեղները, հանդարտվել տափաստանային հովիտներն ու գետակները։ Երրորդ օրվա արշալույսին քամին դադարեց, ու տափաստանի վրա իջան խիտ մեգերը, խոնավությամբ արծաթափայլեցին նախորդ տարվա փետրախոտի թփերը, անթափանց, սպիտակավուն մուժով պարուրվեցին բլուրները, ձորակները, ստանիցաները, զանգակատների գմբեթները, բրգաձև բարդիների վերձիգ գագաթները։ Դոնի լայնարձակ տափաստանի վրա իջավ կապույտ գարունը։

Մշուշաքող մի առավոտ Ակսինյան ապաքինվելուց հետո առաջին անգամ դուրս ելավ տնից ու երկար կանգնեց արտաքին սանդուղքի հարթակին՝ գարնանային թարմ օդի զմայլական քաղցրությամբ արբեցած։ Հաղթահարելով սրբտախառնուքը և գլխապտույտը, նա հասավ պարտեզում գտնվող ջրհորը, վար դրեց դույլը, նստեց ջրհորի փայտե պռունգին։

Նրա համար աշխարհը այլ էր, հրաշալիորեն նորոգ ու հրապուրիչ։ Նա փայլուն աչքերով, հուզված նայում էր շուրջը՝ մանկականորեն տնտղելով շրջազգեստի ծալերը։ Մշուշով սքողված հեռուն, այգում հալված ձյան ջրով հեղեղված խրնձորենիները, թաց ցանկապատը և դրանից դենը ձգված ճանապարհը՝ նախորդ տարվա խորունկ, ողողված աղուրներով, — այս ամենը նրան չտեսնված գեղեցիկ էր թվում, ամեն

ինչ ծաղկում էր թանձր ու քնքուշ գույներով, ասես արևով լուսավորված։

Մշուշի միջից նայող ջինջ երկնքի մի կտոր նրան շլացրեց ցուրտ կապտությամբ. փտած ծղնոտի և հալված սևահողի բուրմունքը այնքան ծանոթ էր ու հաճելի, որ Ակսինյան խոր շունչ քաշեց ու ժպտաց շուրթերի ծայրերով. արտույտի անպաճույճ երգը, որ գալիս էր հեռվից, մշուշոտ տափաստանից, նրա մեջ անիմանալի տխրություն առաջացրեց։ Եվ դա, օտարության մեջ լսված այդ երգը, արագացրեց Ակսինյայի սրտի տրոփյունը ու երկու կաթիլ ժլատ արցունք քամեց նրա աչքերից...

Անխոհ հրճվելով վերադարձած իր կյանքով, Ակսինյան բուռն ցանկություն էր զգում ամեն ինչ շոշափել ձեռներով, ամեն ինչ դիտել։ Նա ուզում էր շոշափել խոնավությունից սևացած հաղարջենու թուփը, թուշը սեղմել գորշ, թավշյա փառով պատած խնձորենու ոստին, ուզում էր անցնել քանդված, ցախե ցանկապատի վրայով ու ցեխի միջով, ճանապարհաղուրկ տեղերով գնալ այնտեղ, լայն հովտից դենը, ուր միախառնվելով մշուշապատ հեռուներին, հեքիաթաբար կանաչին էր տալիս աշնանացան դաշտը...

Ակսինյան մի քանի օր սպասում էր, որ ահա որտեղից որ է կերևա Գրիգորին, բայց հետո տանտիրոջ մոտ եկող հարևաններից իմացավ, որ պատերազմը չի վերջացել, որ շատ կազակներ Նովորոսիյսկից ծովով գնացել են Ղրիմ, իսկ ովքեր մնացել են, մտել են Կարմիր բանակ և հանքերը։

Շաբաթվա վերջում Ակսինյան հաստատապես որոշեց գնալ տուն, շուտով ուղեկից էլ գտնվեց։ Մի երեկո առանց դուռը ծեծելու խրճիթ մտավ կարճահասակ, կորամեջք մի ծերուկ։ Նա լուռումունջ գլուխ տվեց, սկսեց արձակել իր վրա անճոռնի նստած, կեղտոտ, կողքի կարերը ճեղքված անգլիական շինելի կոճակները։

— Այդ ի՞նչ է, այ բարի մարդ, «բարև ձեզ» չասացիր, ու տեղավորվում ես ագրելու համար,— հարցրեց տանտերը՝ զարմացած նայելով անկոչ հյուրին։

Վերջինս արագ հանեց շինելը, թափ տվեց շեմքի մոտ, խնամքով կախեց կեռից, ու աղալելով կարճ խուզած, ալեզարդ մորուքը, ժպտալով ասաց.

— Ներիր ի սեր Քրիստոսի, հոգիդ սիրեմ, բայց ես հիմիկվա ժամանակներում այսպես եմ սովորել,— ամենից առաջ շինել-մինելդ հանի, հետո արդեն դիշերելու տեղ խընդրի, թե չէ չեն թողնի։ Հիմի մարդիկ կոպտացել են, հյուրեր չեն ընդունում...

— Ո՞րտեղ պառկեցնենք քեզ, տեսնո՞ւմ ես, նեղ է տեղերս,— արդեն ավելի հաշտ ասաց տանտերը։

— Ինձ էլ աղունիկի քթի չափ տեղ է հարկավոր։ Ա՛յ, այստեղ, շեմքի մոտ գունդ ու կծիկ կլինեմ ու կքնեմ։

— Հրամանքդ ո՞վ ես, պապի, փախստակա՞ն ես,— հետաքրքրվեց տանտիրուհին։

— Հա-ա՛-ա-հա՛, փախստական եմ որ կամ։ Փախ ու փախա, հասա մինչև ծովը, հիմի էլ այնտեղից արդեն կամաց-կամաց եմ գալի, բեզարել եմ փախնելուց...— պատասխանեց զրուցասեր ծերունին՝ պպզելով շեմքի մոտ։

— Բա ո՞վ ես, է՞, ո՞րտեղացի ես,— շարունակեց հարցեր տալ տանտերը։

Ծերունին գրպանից հանեց դերձակի մի մեծ մկրատ, ձեռքերի մեջ շուռումուռ արեց ու էլի շարունակելով ժրպտալ, ասաց.

— Ահա իմ պաշտոնի դոկումենտը, սրանով հենց Նովորոսիյսկից եմ գալի, իսկ իմ ապրելատեղը հեռու է, Վեշենսկայակա ստանիցայից դենն է։ Ծովում աղի ջուր խմելուց հետո այնտեղ եմ գնում։

— Ես է՛լ Վեշենսկուց եմ,— ուրախությունից կարմրելով, ասաց Ակսինյան։

— Օ-հո՛,— բացականչեց ծերունին,— ա՛յ թե որտեղ հայրենակցուհի պատահեց։ Ասենք հիմիկվա ժամանակներում դա զարմանալի չէ. հիմի մենք ոնց որ թե հրեաներ լինենք. ցրվել ենք երկրի երեսին։ Կուբանում այսպես է,— շան վրա փոտ գցես, կդիպչի Դոնի կազակին։ Ամեն տեղ էլ լիքն են, ու ավելի շատ հողումն են թաղված։ Է-է՛. լավ մարդիկ. ինչո՞ր չեմ տեսել այս նահանջի ժամանակ։ Ինչ որ է քաշում ժողովուրդը, իսկի ասելու բան չի։ Երեկ չէ մեկել օրը նստած եմ կայարանում, կողքիս նստել է մի ազնվական կին, ակնոցը աչքերին, ակնոցի միջից ոջիլներ է ման գալի իր վրա։ Ոջիլները ոտով ման են գալի նրա վրա։

Նա մատներով բռնում է դրանք, ու այնպես է կնճռոտվում, որ կարծես քոլի խնձոր է կծոտել։ Սատկացնում է ոջիլը ու ավելի շատ է կնճռոտվում, ծռմռում երեսը, անչափ զզվում։ Մեկ ուրիշը, պինդ լինելով, մարդ է սպանում ու չի կնճռոտում երեսը, չի ծռմռում բերանը։ Իմ աչքի առաջ այդ տեսակ մի ջահել երեք կալմիկ թրատեց, հետո էլ թուրը սրբեց ձիու բաշով, պապիրոս հանեց, ծխեց, մոտենում է ինձ ու հարցնում. «Հը՛, պապո, ի՞նչ ես աչքերդ չռել, ուզո՞ւմ ես կտրեմ գլուխդ»։— «Ո՞նց թե, որդիս,— ասում եմ,— աստված քեզ հետ, բա որ գլուխս կտրես, էլ ո՞նց հաց ուտեմ»։ Նա ծիծաղեց ու հեռացավ։

— Ով այդ գործում վարժվել է, նրա համար մարդ սպանելը ավելի հեշտ է, քան ոջիլ ջարդելը։ Ռևոլյուցիայի ժամանակ էժանացել է մարդը,— խորամիտ ավելացրեց տանտերը։

— Դրուստ խոսք է,— հաստատեց հյուրը։— Մարդը անասուն չի, ամեն բանի էլ ընտելանում է։ Ես հարցնում եմ այդ կնկան՝ «Ո՞վ եք։ Տեսքով ոնց որ թե հասարակներից չեք»։ Մտիկ արավ նա ինձ, լաց եղավ։ «Ես գեներալ-մայոր Գրեչիխինի կինն եմ»։ Ահա քեզ գեներալն էլ, մայորն էլ,— մտածում եմ,— ու այնքան ոջիլ, որքան լու կգտնվի քոսոտ կատվի վրա։ Ասում եմ նրան՝ «Ձերդ գերազանցություն, ներողություն, եթե դուք այդպես ոչնչացնեք ձեր միջատներին, ձեր աշխատանքը մինչև աստվածածնի տոնն էլ չի վերջանա։ Բոլոր եղունգներդ էլ կկոտրատեք։ Դրանց բոլորին միանգամից ջարդեցեք»։— «Ի՞նչպես»,— հարցնում է նա։ Ես էլ նրան խորհուրդ տվի. «Հանեցեք շորերդ,— ասում եմ,— փռեցեք պինդ տեղ ու շշով կոտորեցեք»։ Մտիկ եմ տալի. վեր է կենում գեներալիս կնիկը ու անցնում ջրմուղի ետևը, մեկ էլ մտիկ եմ տալի, կանաչ ապակե շշով գրտնակում է շապիկը, ու այնպես լավ, որ ասես ողջ կյանքումը հենց գրտնակելով է զբաղվել։ Մտիկ եմ անում նրան ու մտածում եմ՝ աստված ինչ ասես ունի, միջատներ է շաղ տվել ազնվական մարդկանց վրա, միթամ թող այդ միջատները ծծեն նրանց քաղցր արյունը, հո միշտ էլ չարքաշ մարդի արյունը չե՞ն խմելու... Դե աստված հո Նիկոլը չի՞։ Նա իր գործը գիտի։ Մեկ էլ տեսար բարի վերաբերվեց մարդկանց ու այն-

քան ճիշտ բան կարգադրեց, որ դրանից լավը չես էլ կարող մոգոնել...

Անընդհատ շաղակրատելով ու տեսնելով, որ տանտերը իրեն մեծ ուշադրությամբ են լսում, դերձակը ճարպկությամբ ակնարկեց, որ կարող էր էլի շատ հետաքրքրական բաներ պատմել, բայց այնքան քաղցած է, որ քունը տանում է։

Ընթրիքից հետո պառկելով, նա հարցրեց Ակսինյային.

— Դու այստեղ երկա՞ր ես մնալու, հայրենակցուհի։

— Պատրաստվում եմ տուն գնալու, պապի։

— Գնանք միասին, ավելի ուրախ կլինի։

Ակսինյան սիրով համաձայնվեց, ու. առավոտյան հրաժեշտ տալով տանտերերին, նրանք թողին տափաստանային հեռավոր Նովո-Միխայլովսկի գյուղը։

Տասներկու օրից հետո գիշերով հասան Միլյուտինսկայա ստանիցան։ Մի մեծ, տեսքով հարուստ տան մեջ գիշերելու թույլտվություն ստացան։ Առավոտյան Ակսինյայի ուղեկիցը որոշեց մի շաբաթ մնալ ստանիցայում, հանգստանալ և բուժել արյունոտելու չափ հարած ոտները։ Նա չէր կարող շարունակել ճանապարհը։ Տանը նրա համար դերձակի աշխատանք գտնվեց, և գործին կարոտած ծերուկը իսկույն տեղավորվեց պատուհանի տակ, հանեց մկրատը և թելով կապված ակնոցը, սկսեց ճարպկությամբ ձևել ինչոր մի հնոտի։

Հրաժեշտ տալով Ակսինյային, ուրախ և մասխարա ծերուկը խաչակնքեց նրան ու անսպասելիորեն արտասվեց, բայց իսկույն սրբեց արցունքները, իր համար սովորական կատակով ասաց.

— Կարիքը հարազատ մայր չի, ամա մարդկանց հարազատ է դարձնում... Դրա համար էլ խղճում եմ... Դե, ի՞նչ արած, գնա մենակ, աղջիկս, քեզ ուղեկցողը միանգամից երկու ոտից էլ կաղ դարձավ, երևի մի տեղ նրան գարի հացով են կերակրել... Ասենք ես ու դու բավական երկար ճամփա ենք անցել, դա չափից դուրս է ինձ պես յոթանասուն տարեկանի համար։ Թե որ հանդիպես պառավիս, ա-

սա, որ իր սիրունիկ աղավնյակը ողջ-առողջ է, նրան թե հավանգի մեջ են սղկել և թե ծեծանի մեջ ծեծել, ամա նա էլի սաղ է, ոտքի վրա շալվար է կարում լավ մարդկանց համար ու շատ շուտով կգա տուն... Ասա նրան, որ սարսաղը վերջացրել է նահանջը ու հարձակվում է դեպի տուն, անհամբեր սպասում է, թե երբ պետք է տուն հասնի ու պառկի վառարանի վրա...

Ակսինյան մի քանի օր էլ անցկացրեց ճանապարհին։ Պատահած մի սայլով Բոկովսկուց գնաց մինչև Տատարսկի։ Ուշ երեկոյան ներս մտավ իր բակի լայն բացված դրռնակից, նայեց Մելեխովների տանը ու շնչասպառ եղավ հանկարծակի կոկորդին դեմ առած հեկեկանքից... Դատարկ, ամայացած խոհանոցում թափեց երկար ժամանակվա ընթացքում կուտակված կանացի դառն արցունքները, հետո էլ գնաց Դոնից ջուր բերելու, վառեց վառարանը, նստեց սեղանի մոտ, ձեռները դրեց ծնկներին։ Մտածմունքի մեջ ընկած, նա չլսեց դռան ճռնչոցը ու սթափվեց, երբ Իլյինիչնան ներս մտավ ու ցածր ձայնով ասաց.

— Բարև, հարևանուհիս, այդ ի՞նչ երկար մնացիր օտար երկրներում...

Ակսինյան վախեցած նայեց նրան, վեր կացավ։

— Ի՞նչ ես այդպես մտիկ տալի ու ձեն չես հանում, հո վատ լուրեր չե՞ս բերել։— Իլյինիչնան դանդաղ մոտեցավ սեղանին, նստեց նստարանի ծայրին զննող հայացքը չկտրելով Ակսինյայի դեմքից։

— Չէ, ի՛նչ լուրեր պիտի բերեի... Չէի սպասում ձեզ, մտածմունքի մեջ էի ու չլսեցի, թե դուք ոնց ներս մտաք... — շփոթվելով ասաց Ակսինյան։

— Լղարել ես դու, վրեդ հալ չի մնացել։

— Հիվանդացել էի տիֆով...

— Բա մեր Գրիգորին... Ո՞նց է... Դու նրանից ո՞րտեղ բաժանվեցիր։ Սա՞ղ է նա։

Ակսինյան կարճ պատմեց։ Իլյինիչնան առանց մի բառ ասելու լսեց նրան, հետո էլ հարցրեց.

— Երբ որ նա քեզ թողեց ու գնաց, հո հիվանդ չէ՞ր։

— Չէ, նա չէր հիվանդացել։

— Դու նրա մասին էլ ոչինչ չլսեցի՞ր։

— Չէ։

Իլյինիչնան թեթևացած շունչ առավ.

— Շնորհակալ եմ լավ խոսքիդ համար։ Այստեղ, խուտորումը ինչ ասես փչում են նրա մասին...

— Ի՞նչ,— հագիվ լսելի հարցրեց Ակսինյան։

— Դատարկ բաներ, էլի՛... Ո՞ր մեկի ասածը լսես։ Խուտորցիներից միայն Վայնկա Բեսխլեբնովն է վերադարձել։ Նա Գրիշային Կատերինոդարում տեսել է հիվանդ, իսկ մյուսներին ես չեմ հավատում։

— Բա ի՞նչ են ասում, տատի։

— Մենք լսեցինք, թե Սինգին խուտորի մի կազակ ասել է, որ Նովորոսիյսկ քաղաքումը կարմիրները իբր թրատել են Գրիշային։ Ես ոտով գնացի Սինգին,— դե, մոր սիրտ է, ո՞նց համբերեր,— գտա այդ կազակին։ Ուրացավ նա։ Ոչ տեսել եմ, ոչ լսել,— ասում է։ Մի լուր էլ եկավ, թե բանտ են նստեցրել ու այնտեղ մեռել է տիֆից... — Իլյինիչնան կախեց գլուխը ու երկար լռեց դիտելով իր գոսացած, ծանր ձեռները։ Պառավի ուռած դեմքը հանգիստ էր, շրթունքները պինդ սեղմված էին, սակայն հանկարծ նրա թուխ այտերի վրա բալի կարմրություն երևաց ու կոպերը թեթև ցնցվեցին։ Նա չոր, մոլեգնաբար վառվող աչքերով նայեց Ակսինյային, խռպոտ ասաց.

— Ես չեմ հավատում։ Ո՞նց կլինի, որ ես զրկվեմ իմ վերջին որդուց։ Աստված ինչի՞ համար պետք է ինձ պատժի... Ինձ համար քիչ ժամանակ է մնացել ապրելու... բոլորովին քիչ, առանց դրան էլ հազար ու մի դարդ եմ տեսել... Սա՛ղ է Գրիշան, սիրտս հանգիստ է, ուրեմն սաղ է որդյակս։

Ակսինյան լուռումունջ շուռ տվեց դեմքը։

Խոհանոցում երկար ժամանակ լռություն էր տիրում, հետո քամին բացեց հաշտի դուռը, ու լսվեց, թե Դոնից դենը, բարդիների մեջ ինչպես է խուլ վշշում վարարած ջուրը և ինչպես անհանգիստ կերպով ձայն ձայնի են տալիս վայրի սագերը։

Ակսինյան ծածկեց դուռը, հենվեց վառարանին։

— Դուք նրա համար դարդ մի անեք, տատի,— կամացուկ ասաց նա։— Մի՞թե հիվանդությունը կբռնի այդպիսի

մարդուն։ Նա պինդ է, ուղղակի երկաթ է։ Այդպիսիները չեն մեռնում։ Նա ամբողջ ճանապարհը ճքճքան սառնամանիքին առանց ձեռնոցների էր գնում...

— Երեխաներին մտաբերո՞ւմ էր,— հոգնածորեն հարցրեց Իլյինիչնան։

— Ձեզ էլ էր մտաբերում, երեխաներին էլ։ Առո՞ղջ են նրանք։

— Առողջ են, նրանց ի՞նչ պիտի լինի որ։ Իսկ մեր Պանտելեյ Պրակոֆիչը մեռավ ճամփին։ Մենք անտեր-անտիրական մնացինք...

Ակսինյան լուռ խաչակնքեց՝ ինքն իր մեջ զարմանալով, որ պառավը այդքան հանգիստ կերպով հաղորդեց ամուսնու մահվան մասին։

Հենվելով սեղանին, Իլյինիչնան ծանր վեր կացավ։

— Էհ, շատ նստեցի, արդեն մութն ընկավ։

— Էլի՛ նստեք, տատի։

— Դունյաշկան մենակ է, պետք է գնալ։— Շտկելով լաչակը, Իլյինիչնան դիտեց խոհանոցը, կնճռոտեց դեմքը։— Վառարանից ծուխ է գալի։ Երբ որ գնում էիր, պետք է մեկն ու մեկին բերեիր այստեղ ապրելու։ Դեհ, հաջողություն.— և արդեն վերցնելով դռան բռնակը, առանց ետ նայելու ասաց.— տուն ու տեղիդ կընտելանաս, կգաս մեզ մոտ։ Կարելի է թե Գրիգորիի մասին բան լսես,— արի ասա։

Այդ օրվանից Մելեխովների և Ակսինյայի հարաբերությունները խիստ փոխվեցին։ Գրիգորիի կյանքի նկատմամբ անհանգստությունը մոտեցրեց ու մտերմացրեց նրանց։ Հետևյալ առավոտյան Դունյաշկան Ակսինյային տեսավ բակում, կանչեց նրան, մոտեցավ ցանկապատին ու գրկելով Ակսինյայի նիհար ուսերը, սրտաբաց ու փաղաքուշ ժպտաց նրան։

— Ա՛խ, ո՛նց ես լղարել, Կսյուշա, հենց մենակ ոսկորներդ են մնացել։

— Կնիհարես այս տեսակ կյանքից,— նույնպես ժպտաց Ակսինյան թաքցրած նախանձով դիտելով հասուն գեղեցկությամբ ծաղկած, կարմրաթուշ աղջկական դեմքը։

— Երեկ մերս եկա՞վ քեզ մոտ,— հայտնի չէ ինչու շշընջալով հարցրեց Դունյաշկան։

— Եկավ։

— Ես այդպես էլ մտածեցի, որ նա քեզ մոտ էր եկել։ Գրիշայի մասին հարցրե՞ց։

— Այո։

— Հո լաց չեղա՞վ։

— Չէ, պինդ է պառավը։

Դունյաշկան վստահորեն նայելով Ակսինյային, ասաց.

— Ավելի լավ է նա լաց լիներ, սիրտը կթեթևանար... Գիտե՞ս, Կսյուշա, այս ձմեռվանից նա մի տեսակ տարօրինակ է դարձել, այնպես չէ ինչպես առաջ էր։ Երբ նա լսեց հորս մահվան մասին, ես կարծում էի, թե սրտաճաք կլինի, սարսափելի վախեցա, իսկ նա մի կաթիլ արտասուք էլ չթափեց։ Միայն ասաց «Ողորմի նրա հոգուն, ազատվեց ցավ ու տանջանքից...» Մինչև իրիկուն ոչ ոքի հետ չէր խոսում։ Ես դիմում եմ նրան, իսկ նա ձեռքն է թափ տալի ու լռում է։ Ինչե՞ր չքաշեցի ես այդ օրը։ Իրիկունն էլ անասուններին կեր տվի, մտա տուն ու հարցնում եմ նրան՝ «Մայրիկ, իրիկնահացի համար մի բան պիտի եփե՞նք, թե չէ»։ Նրա սիրտը հանգստացել էր, սկսեց խոսել... — Դունյաշկան հոգոց հանեց, ու Ակսինյայի ուսերի վրայից մտազբաղ ինչ-որ մի տեղ նայելով, հարցրեց.

— Մեր Գրիգորին մեռե՞լ է, ճիշտ են ասում։

— Չգիտեմ, ջանիկս։

Դունյաշկան կողքից զննողաբար նայեց Ակսինյային, էլ ավելի խորունկ հոգոց հանեց։

— Մայրիկը նրա կարոտից հալ ու մաշ է լինում, նրան միայն «փոքր տղես» է անվանում։ Իսկի էլ չի հավատում, թե նա սաղ չի։ Գիտե՞ս, Կսյուշա, եթե իմանա, որ նա իսկապես մեռել է, դարդից ինքն էլ կմեռնի։ Նրա կյանքն անցել է, միայն մի հույս է մնացել,— Գրիգորին։ Թոռնիկների համար էլ մի տեսակ խորթացել է ու աշխատանքի ժամանակ ձեռիցը ոչինչ չի գալի։ Հապա մտածի, է՛, մի տարվա մեջ մեր ընտանիքից չորս հոգի...

Կարեկցությունից դրդված Ակսինյան ձգվեց ցանկապատի վրայով, գրկեց Դունյաշկային, պինդ համբուրեց նրա թուշը։

— Մի բանով զբաղեցրու մորդ, անուշիկս, մի թող որ շատ դարդ անի։

— Ինչո՞վ զբաղեցնես նրան.— Դունյաշկան լաչակի ծայրով սրբեց աչքերը, խնդրեց.

— Արի մեզ մոտ, խոսի նրա հետ, կթեթևանա սիրտը։ Դու ինչո՞ւ պիտի խուսափես մեզանից։

— Կգամ մի կերպ, անպայման կգամ։

— Ես վաղը երևի դաշտ գնամ։ Անիկուշկայի կնկա հետ համկալներ ենք, ուզում ենք գոնե մի երկու դեսյատին ցորեն ցանել։ Դու ցանք անելու միտք չունե՞ս։

— Ես ի՞նչ ցանք անող եմ որ,— անուրախ ժպտաց Ակսինյան,— ինչո՞վ, և ինչի՞ համար ցանեմ։ Մենակ ինձ քիչ բան է հարկավոր, այնպես էլ կապրեմ։

— Քո Ստեպանից ի՞նչ լուր կա։

— Ոչ մի լուր,— անտարբեր պատասխանեց Ակսինյան և իրեն համար անսպասելի կերպով ասաց.— ես այնքան էլ նրա դարդը չեմ քաշում։— Անզգուշաբար բերանից թռցրած խոստովանությունը շփոթեցրեց նրան, և նա, քողարկելով շփոթմունքը, հապճեպ ասաց.— դեհ, բարով մնաս, աղջի ջան, գնամ հավաքեմ տունը։

Ցույց տալով, որպես թե չի նկատել Ակսինյայի շփոթությունը, նայելով մի կողմ, Դունյաշկան ասաց.

— Մի քիչ կաց, այ թե ինչ եմ ուզում ասել քեզ, դու չե՞ս օգնի մեր աշխատանքում։ Հողը չորանում է, վախենում եմ, որ մենք գործը գլուխ չբերենք, ամբողջ խուտորում երկու կազակ է մնացել, այն էլ հաշմանդամներ են։

Ակսինյան սիրով համաձայնվեց, և գոհ Դունյաշկան գնաց, որ պատրաստվի դաշտ դուրս գալու։

Նա ամբողջ օրը եռանդուն պատրաստություն էր տեսնում. Անիկուշկայի այրու օգնությամբ զտեց հացահատիկը, մի կերպ սարքեց տափանը, մազութեց սայլի անիվները, կարգի բերեց ցանիչը։ Երեկոյան էլ լաչակի մեջ մաքուր ցորեն լցրեց ու տարավ գերեզմանոց, շաղ տվեց Պետրոյի, Նատալյայի ու Դարյայի գերեզմանների վրա, որպեսզի թռչունները առավոտյան դրանց վրա իջնեն։ Իր մանկական պարզամտությամբ նա հավատում էր, թե մեռելները կլսեն թռչունների ուրախ ծլվլոցը և կուրախանան դրանով...

Դոնի շրջակայքում միայն լուսաբացից առաջ էր անդորրություն տիրում։ Ջուրը խուլ վշշում էր հեղեղված անտառում՝ ողողելով կաղամախիների դալկականաչ բները, համաչափ օրորելով կաղնու թփերի ու մատղաշ բարդու անտառի ջրասույզ կատարները. հեղեղված լճերում շրջում էին ալիքներից ճոճվող եղեգների գլխիկները. հեղեղված տեղերում, խուլ ջրափոսերում,— այնտեղ, ուր վարարած ջուրը անդրադարձնելով աստղաշող երկնքի մթնշաղային լույսը, կանգնել էր անշարժ, ասես կախարդված,— հազիվ լսելի ձայն ձայնի էին տալիս ծովասագերը, քնեած սվսվացնում էին վայրի, արու բադերը ու երբեմնակի հնչում էին լայն ու արձակ վայրերում գիշերած, չվող կարապների արծաթե, շեփորային ձայները։ Մթության մեջ երբեմն ճլմփում էր աղատ-արձակ խայտող ձուկը, ոսկեպսպուն ջրերի վրա երերուն ալիքները գլորվում էին հեռո՞ւ-հեռու, և լսվում էր անհանգստացած թռչունների նախազգուշացուցիչ ճռվողյունը։ Ու անդորրությունը վերստին պարուրում էր Դոնի շրջակայքը։ Բայց լուսաբացին, երբ հազիվ վարդագունում էին կավճոտ լեռնաճյուղերը, ցածր սուրող քամի էր բարձրանում։ Հոծ և ուժգին այդ քամին փչում էր հոսանքին հակառակ ուղղությամբ։ Դոնով մեկ լեռնանում էին սաժենանոց ալիքները, անտառում կատաղի վշշում էր ջուրը, օրորվում, հեծեծում էին ծառերը։ Քամին ոռնում էր ամբողջ օրը ու դագարում ուշ գիշերին։ Մի քանի օր այդպիսի եղանակ էր լինում։

Տափաստանի վրա յասամանագույն մշուշ իջավ։ Հողը չորանում էր, կանգ առնում խոտաբույսերի աճը, աշնանավարը ծիլեր էր տալիս։ Գետինը ժամառժամ օդահարվում էր, իսկ Տատարսկի խուտորի դաշտերում գրեթե չէին երևում մարդիկ։ Ամբողջ խուտորում մնացել էին մի քանի զառամած ծերունիներ, նահանջից վերադարձած կազակները անաշխատունակ էին, ցրտահարված ու հիվանդ, դաշտում միայն կանայք և անչափահասներն էին աշխատում։ Մարդազրկված խուտորով մեկ քամին քշում էր փոշին, շրխկացնում տների պատուհանների փեղկերը, քրքրում մարագների կտուրների ծղնոտը, «Այս տարի առանց հացի կմնանք,— ասում էին ծերունիները։— Դաշտերում միայն կնանիքն են,

այն էլ երեք տնից մեկն է ցանում։ Մեռած հողն էլ պտուղ չի տա...»

Դաշտ գնալուց հետո մյուս օրը, արևամուտից առաջ Ակսինյան եզները քշեց դեպի լճակը։ Ամբարտակի մոտ, թամբած ձիու սանձը ձեռքին, կանգնել էր տասը տարեկան մի տղա՝ Օբնիզովը։ Ձին որոճում էր շրթունքներով, նրա գորշ, թավշյա դնչից կաթիլներ էին ընկնում, իսկ ձիուց իջած ձիավորը զվարճանում էր,— չոր կավի կտորներ էր նետում ջրի մեջ, նայում, թե ջրի երեսին ինչպես են տարածվում բոլորակները։

— Այդ ո՞ւր ես գնում, Վանյատկա,— հարցրեց Ակսինյան։

— Մորս հաց-մաց էի բերել։

— Խուտորում ի՞նչ կա։

— Ոչինչ։ Գերասիմ պապին այս գիշեր ուղկանով մի մե՜ծ ձուկ է բռնել։ Կովից եկել է Ֆյոդոր Մելնիկովը։

Կանգնելով ոտների մատների վրա, տղան սանձեց ձին, մի ձեռքով բռնեց դրա բաշից և սատանայական ճարպկությամբ թռավ թամքի վրա։ Նա լճակից հեռացավ ինչպես խոհեմ տնտեսատեր,— քայլքով, բայց մի քիչ հետո շուռ տվեց դեմքը, նայեց Ակսինյային ու այնպես սլացավ, որ մեջքի վրա փուչիկի պես ուռավ խունացած, կապույտ վերնաշապիկը։

Մինչև եզները ջուր էին խմում, Ակսինյան մի փոքր պառկեց ամբարտակի վրա և իսկույն որոշեց գնալ խուտոր։ Մելնիկովը զինծառայող կազակ էր և պետք է որ մի որևէ բան գիտենար Գրիգորիի վիճակի մասին։ Եզները տանելով դաշտակայան, Ակսինյան ասաց Դունյաշկային.

— Երթամ խուտոր, իսկ էգուց շուտ կգամ։

— Գո՞րծ կա։

— Ըհը՛մ։

Առավոտը Ակսինյան վերադարձավ։ Նա մոտեցավ եզները լծող Դունյաշկային, նա անհոգ թափահարում էր ձեռքի ճիպոտը, բայց նրա հոնքերը կիտված էին, իսկ շրթունքների անկյուններում տխրություն արտահայտող ծալեր էին առաջացել։

— Մելնիկով Ֆյոդորը եկել է։ Գնացի մոտը, հարցրի Գրիգորիի մասին։ Ոչինչ չգիտե,— կարճ ասաց Ակսինյան ու կտրուկ շուռ գալով, մոտեցավ ցանիչին։

Ցանքից հետո Ակսինյան ձեռնամուխ եղավ տնտեսության. բոստանում ձմերուկ ցանեց, ծեփեց ու սպիտակացրեց տունը, ինչքան որ կարող էր, ծղնոտի մնացորդներով ծածկեց մարագի կտուրը։ Օրերն աշխատանքով էր անցկացնում, բայց չէր լինում թեկուզ մի ժամ, որ նա չանհանգստանար Գրիգորիի կյանքի համար։ Ակսինյան դժկամորեն էր վերհիշում Ստեպանին, ու չգիտես ինչու նրան թվում էր, որ Ստեպանը չի վերադառնա, բայց երբ կազակներից որևէ մեկը գալիս էր խուտոր, նա սկզբում հարցնում էր՝ «Իմ Ստեպանին չե՞ս տեսել», հետո էլ արդեն զգուշությամբ, կամաց-կամաց փորձում էր որևէ բան իմանալ Գրիգորիի մասին։ Նրանց սիրային կապի մասին խուտորում բոլորն էլ գիտեին։ Նույնիսկ կնանիքը, որ սիրում էին բամբասել, էլ չէին քըշփշում նրանց մասին, բայց Ակսինյան ամաչում էր արտահայտել իր զգացմունքը, և միայն երբեմն, երբ խոսքից ժլատ զինծառայողը ոչինչ չէր ասում Գրիգորիի մասին, Ակսինյան աչքերը կկոցելով ու մի փոքր շփոթվելով, հարցնում էր. «Իսկ մեր հարևանին, Գրիգորի Պանտելեիչին չե՞ս հանդիպել։ Մայրը անհանգստանում է նրա համար, հալումաշ է եղել...»

Նովորոսիյսկում Դոնի բանակի անձնատուր լինելուց հետո խուտորի կազակներից ոչ մեկը չէր տեսել ոչ Գրիգորիին, ոչ էլ Ստեպանին։ Եվ միայն հունիսի վերջին Ակսինյայի մոտ եկավ մի կազակ, որը ծառայել էր Ստեպանի հետ և Կոլունդաևսկի խուտորից էր։ Հենց սա էլ հաղորդեց Ակսինային.

— Ստեպանը գնաց Ղրիմ, դրուստ խոսք եմ ասում քեզ։ Ինքս տեսա, թե նա ոնց էր նավ նստում։ Հետը խոսել չկարացի։ Այնպիսի հրմշտոց էր, որ մեկը մյուսի գլխի վրայով էր շարժվում։— Գրիգորիի վերաբերյալ հարցին խուսափուկ պատասխանեց.— տեսա նավահանգստում, ուսադիրներով էր, հետո էլ չտեսա։ Շատ սպաների Մոսկվա տարան, դե, ո՞վ գիտի նա հիմի որտեղ է...

Մի շաբաթ հետո էլ Տատարսկում հայտնվեց վիրավորված Պրոխոր Զիկովը։ Նրան բերին Միլլերովո կայարանից,

բնակչական սայլով։ Լսելով այդ մասին, Ակսինյան թողեց կովը կթելը, հորթը բաց թողեց ծծելու և շալը գցելով վրան, շտապ-շտապ գնաց, գրեթե վազեց Զիկովի տունը։ «Պրոխորը հո դիտի, նա հո պետք է գիտենա։ Բա որ ասի, թե Գրիշան սաղ չի՞, ես ի՞նչ պիտի անեմ»,— մտածում էր նա ճանապարհին և ամեն րոպե դանդաղեցնում էր քայլերը՝ ձեռքը սեղմելով սրտին, վախենալով, որ սև լուր կլսի։

Պրոխորը նրան օթախում ընդունեց թունդ ժպտալով, ձախ թևի կարճ կտրածքը թաքցնելով մեջքի վրա։

— Բարև, դրացի, բարև։ Սաղ ես, էլի՛։ Իսկ մենք արդեն կարծում էինք, թե դու այն գյուղում քոչել էիր աշխարհքից։ Ամա թե ծանր էր վիճակդ հա՛-ա... Հը՛մ, այդ տիֆը ո՞նց է սիրունացնում քեզ նմաններին, հը՞։ Իսկ ինձ տես թե ինչ են արել լեհերը, ցավս տանի նրանց։— Պրոխորը ցույց տվեց պաշտպանական գույնի վերնաշապկի դատարկ, հանգույց կապած թևը։— Կնիկս տեսավ, լաց ու կոծ է անում, իսկ ես նրան ասում եմ «Մի՛ լար, դմբո, ուրիշների գլուխներն են կտրում, ամա նեղացող չի լինում, իսկ թևն ի՞նչ է որ։ Հիմի փայտե թև են շինում։ Այդ տեսակ թևը չի մրսի, կտրես էլ,— արյուն չի գա։ Ափսոս, աղջի, որ չեմ սովորել մի ձեռքով գործ անել։ Շալվարս էլ չեմ կարենում կոճկել։ Կիևից մինչև տուն չկոճկած շալվարով եմ եկել։ Ամոթանք է էլի՛։ Այնպես որ դու ների, եթե վրես անկարգություն տեսնես... Դեհ, արի, նստի, հյուր կլինես։ Խոսենք, քանի կնիկս չի եկել։ Նրան, անզգամին, արաղի եմ ղրկել։ Մարդը եկել է կտրված թևով, իսկ նա իսկի շնորհավորելու բան էլ չունի։ Դուք բոլորդ էլ առանց մարդու այդպես եք, ես լավ գիտեմ ձեզ, թաց պոչավորներ։

— Դու հլա ասեիր...

— Գիտեմ, կասեմ։ Հրամայեց ա՛յ թե ոնց գլուխ տալ։— Պրոխորը կատակով գլուխ տվեց, բարձրացրեց գլուխը և զարմացած շարժեց հոնքերը։— Ա՛յ քեզ բան, ո՞ւր ես լաց լինում, ա՛յ դմբո։ Դուք, կնանիքդ, բոլորդ էլ այդպես եք, տզզում եք հա՛ տզզում։ Սպանեցին — լաց եք լինում, սաղ մնաց — էլի լաց եք լինում։ Սրբի, է՛, ի՞նչ ես թնկթնգում։ Ասում եմ քեզ ողջ-առողջ է, էլի՛։ Մոռթը այնպե՞ս է հասատացել որ։ Նովորոսիյսկում ես ու նա մտանք ընկեր Բուդյոնն

նու հեծյալ բանակը, տասնչորսերորդ դիվիզիան։ Մեր Գրիգորի Պանտելեիչը ընդունեց մի հարյուրյակ թե հեծելավաշտ, ես էլ, հարկ է որ, նրա հետ էի, ու երթական կարգով գնացինք Կիևի կողմերը։ Ու գիտես, աղջի, թե ո՞նց շարդուփշուր արեցինք այն լեհերին։ Գնում էինք այնտեղ, Գրիգորի Պանտելեիչն ասում է՝ «Գերմանացիներին թրատում էի, թուրս փորձում ինչ-որ ավստրիացիների վրա, մի՞թե լեհերի գանգերը ավելի պինդ են։ Ինձ թվում է, որ նրանց ավելի հեշտ է թրատել, քան մերոնց — ռուսներին, դու ի՞նչ ես կարծում»,— ու աչքով է անում ինձ, ժպտում։ Հենց որ մտավ Կարմիր բանակ, փոխվեց, դարձավ ավելի ուրախ, կոկլիկ, ոնց որ կոտած-ձի։ Հա, մեր մեջ ընտանեկան սկանդալ էլ եղավ... Մի անգամ մոտենում եմ նրան ու հանաքով ասում. «Ժամանակն է կանգ առնել հանգստանալու, ձերդ բարեծննդություն, ընկեր Մելեխով»։ Նա աչքերը չռեց վրես, ասում է. «Դու այդ հանաքները թող, թե չէ բանը վատ կլինի»։ Իրիկունը ինչ-որ գործով կանչում է ինձ, ու սատանեն ինձ դրդեց էլի նրան «բարեծննդություն» անվանել... Ձեռքը տարավ մաուզերին, գունաթափ եղավ, բացեց ատամները ոնց որ գել, իսկ ատամներով լիք լցված է բերանը, դրանք հարյուրից պակաս չեն լինի։ Ես մտա ձիու փորի տակ, փախա նրանից։ Քիչ մնաց սպաներ, կատաղածի մեկն է, էլի՛։

— Հետո, ո՞նց է, կարելի է թե արձակո՞ւրդ գա... — ակնարկեց Ակսինյան։

— Իսկի մի է՛լ մտածի,— կտրուկ ասաց Պրոխորը։— Ասում է այնքան պիտի ծառայեմ, մինչև որ անցյալ մեղքերս քավեմ։ Նա այդ կանի,— հիմարի համար ամեն բան էլ հեշտ է... Մի ավանի մոտ նա մեզ գրոհի տարավ։ Աչքիս առաջ լեհերի չորս ուլան թրատեց։ Ախր նա, անպիտանը, փոքրուց ձախլիկ է, ու երկու կողմից էլ խփեց նրանց... Կռվից հետո Բուդյոննին ինքը շարքի առաջ նրան ձեռք տվեց, նրան էլ, հեծելավաշտին էլ շնորհակալություն հայտնեց։ Ա՛յ թե նա, քո Պանտելեիչը, ինչ հնարքներ է բանեցնում։

Ակսինյան լսում էր շշմածի նման... Նա ուշքի եկավ Մելեխովների բակի դռան մոտ միայն։ Դունյաշկան հաշտում կաթ էր քամում. առանց գլուխը բարձրացնելու հարցրեց.

— Եկել ես թթխմորի՞։ Ես խոստացել էի բերել ու մոռացա։— Բայց նայելով Ակսինյայի արտասվալից, երջանկությունից փայլող աչքերին, նա առանց խոսքերի ամեն ինչ հասկացավ։

Բորբոք դեմքը սեղմելով նրա ուսին, բերկրանքից շնչասպառ լինելով, Ակսինյան շշնջաց.

— Ողջ և առողջ է... Բարև է ղրկել... Գնա ասա մորդ, գնա՛։

II

Ամառվա սկզբներին Տատարսկի վերադարձան նահանջած կազակներից մի երեսուն հոգի։ Դրանք մեծ մասամբ ծերեր և ավագ հասակների զինծառայողներ էին, իսկ երիտասարդները և միջին տարիքի կազակները, չհաշված հիվանդներին ու վիրավորներին, գրեթե ամբողջովին բացակայում էին։ Նրանց մի մասը Կարմիր բանակում էր, մնացածները գտնվելով Վրանգելի գնդերի կազմում, նստել էին Ղրիմում, դեպի Դոն նոր արշավանքի էին պատրաստվում։

Նահանջածների ամբողջ կեսը առմիշտ մնաց օտար երկրներում. ոմանք մեռան տիֆից, ոմանք ընկան Կուբանում, հակառակորդի դեմ մղված վերջին կռիվներում, մի քանի մարդ գումակից կտրվելով, սառեցին Մանիչի մերձակա տափաստանում, երկուսը գերի բռնվեցին կարմիրների — կանաչների կողմից և անհայտ կորան... Տատարսկում շատ կազակներ էին պակասում։ Կանայք օրերն անց էին կացնում լարված ու տագնապալից սպասումով, ու ամեն անգամ, ընդունելով արոտավայրերից վերադարձող անասունները, երկար կանգնում էին, ձեռների տակից նայում, թե արդյոք իրիկնային կապտավուն մուժով շղարշված ճանապարհին չի՞ երևա ուշացած, ոտով եկող մի որևէ կազակ։

Տուն էր գալիս մի որևէ քրջոտ, ոջլոտած ու նիհար, բայց երկար սպասված տանտեր, ու խրճիթում ուրախալի, խառնաշփոթ իրարանցում էր սկսվում. ջուր էին տաքացնում կեղտից սևացած զինծառայողի համար, երեխաները իրար առաջ կտրելով աշխատում էին ծառայություն մատուցել հորը ու հսկում էին նրա յուրաքանչյուր շարժումը, երջանկությունից իրեն կորցրած տանտիրուհին մերթ սեղան էր գցում, մերթ վազում դեպի սնդուկը, որպեսզի մի զույգ մաքուր սպիտակեղեն հաներ ամուսնու համար։ Իսկ սպիտակեղենը թարսի պես կարկատած չէր լինում, ու տանտիրուհու դողդոջուն մատները ոչ մի կերպ չէին կարողանում թելն անցկացնել ասեղի ծակը... Այդ երջանիկ րոպեին նույնիսկ բակի շանն էլ,— որը հեռվից ճանաչում էր տանտիրոջը ու մինչև շեմքը վազում նրա ետևից, լիզելով նրա ձեռները,— թույլատրվում էր տուն մտնել. նույնիսկ ման ջարդելու կամ կաթ թափելու համար էլ չէին տուժում երեխաները, ու նրանց ամեն մի զանցանքն էլ անպատիժ էր մնում... Հենց որ տանտերը լողանալուց հետո փոխում էր շորերը, խրճիթը ծայրեծայր լցվում էր կանանցով։ Գալիս էին իմանալու իրենց հարազատների բախտի մասին, երկչոտ ու ագահորեն որսում էին զինծառայողի յուրաքանչյուր խոսքը։ Իսկ մի քիչ հետո որևէ մի կին, ձեռները արտասվաթոր դեմքին սեղմած, դուրս էր ելնում, գնում փողոցով ինչպես կույր, չճանաչելով ճանապարհը, և ահա արդեն տնակներից մեկում նոր այրի կինը ողբում էր մեռելի վրա, ու երեխաներն էլ լալիս էին բարակ ձայներով, ձայնակցում նրան։ Այն օրերին այդպես էր լինում Տատարսկում. բերկրանքը մի տուն մտնելով, մի ուրիշ տան մեջ անմոռ վիշտ էր մտցնում։

Ջահելացած, մաքուր սափրված տանտերը առավոտյան, լույսը բացվելուն պես վեր էր կենում, զննում տնտեսությունը, նշում, թե ինչին պետք է իսկույն ձեռնամուխ լինել։ Նախաճաշից հետո նա արդեն գործի էր անցնում։ Մարագի շարդախի տակ, զով տեղում ուրախ ֆշֆշում էր ռանդան կամ թխկթխկում կացինը, ասես ազդարարելով, որ այդ տանը հայտնվել են տղամարդու հմուտ, աշխատանքի կարոտ ձեռքերը։ Իսկ այնտեղ, ուր նախորդ օրը իմացել էին հոր և ամուսնու մահվան լուրը, խուլ լռություն էր տիրում տանը և բակում։ Լուռումունջ պառկած էր լինում վշտահար մայրը, ու նրա մոտ խռնվում, իրար գլխի էին հավաքվում մի գիշերվա մեջ մեծացած որբ երեխաները։

Լսելով խուտորցիներից որևէ մեկի վերադառնալու լուրը, Իլյինիչնան ասում էր.

— Բա մեր տղեն ե՞րբ կգա։ Ուրիշները գալիս են, իսկ մեր տղից լուր էլ չկա։

— Ջահել կազակներին բաց չեն թողնում, ինչպե՞ս դուք այդ չեք հասկանում, մայրիկ,— սրտնեղելով պատասխանում էր Դունյաշկան։

— Ո՞նց թե բաց չեն թողնում։ Բա Տիխոն Գերասիմո՞վը։ Նա Գրիշայից մի տարով է փոքր։

— Նա վիրավորված է, մայրիկ։

— Ի՞նչ վիրավորված, է՛,— առարկում էր Իլյինիչնան,— եղեկ նրան տեսա դարբնոցի մոտ,— դիք-դիք է ման գալիս։ Այդպիսի վիրավորվածներ չեն լինում։

— Վիրավորված է եղել, նոր հիմա հանգստանում է։

— Բա մեր տղեն քի՞չ է վիրավորվել, հա՞։ Ամբողջ մարմնի վրա նպիներ կան, քո ասելով ուրեմն նրան հանգիստ չի՞ հարկավոր։

Դունյաշկան ամեն կերպ աշխատում էր պատացուցել մորը, որ հիմա չի կարելի հույս դնել Գրիգորիի գալու վրա, բայց Իլյինիչնային որևէ բանում համոզելը հեշտ չէր։

— Լռիր, դմբո,— հրամայում էր նա Դունյաշկային։— Ես քեզանից պակաս գիտուն չեմ, և դու մորդ սովորեցնելու համար դեռ ջահել ես։ Ասում եմ՝ պետք է գա, ուրեմն կգա։ Գնա, գնա, քեզ հետ խոսելը զուր բան է։

Պառավը մեծագույն անհամբերությամբ սպասում էր որդուն և ամեն մի առիթով վերհիշում էր նրան։ Բավական էր, որ Միշատկան չհնազանդվեր նրան, և Իլյինիչնան իսկույն սպառնում էր. «Դու սպասիր, գիժ մանչուկ, հերդ կգաչ կասեմ նրան, կտեսնես, թե նա քեզ ոնց կթակի»։ Պատուհանների կողքից անցնող որևէ սայլի նոր շինած կողերը տեսնելով, Իլյինիչնան հոգոց էր հանում և անպայման ասում. «Սելից իսկույն երևում է, որ տանտերը տանն է, իսկ մեր տղեն ոնց որ թե մոռացել է տան ճամփեն...» Իլյինիչնան իր կյանքում երբեք չէր սիրել ծխախոտի ծուխը ու ծխողներին միշտ էլ դուրս էր անում խոհանոցից, բայց վերջին ժամանակներում նա այդ կողմից էլ փոխվեց. «Գնա-կանչիր Պրոխորին,— երբեմնակի նա ասում էր Դունյաշկային,— թող գա, թութուն քաշի, թե չէ այստեղ մեռելի հոտ է գալիս։ Գրիշան կգա ծառայությունից, այն ժամանակ մեր

տունը կլցվի կենդանի, կազակական հոտով...» Ամեն օր եփել-թափելիս նա մի որևէ ավելորդ բան էր պատրաստում և ճաշից հետո շշիով լցված շուգունը դնում էր վառարանի մեջ։ Դունյաշկայի այն հարցին, թե նա ինչո՞ւ է այդ անում, Իլյինիչնան զարմացած պատասխանում էր. «Բա ո՞նց. կարելի է այսօր կգա մեր զինվոր տղեն, իսկույն տաք կերակուր կուտի, թե չէ մինչև տաքացնես, մինչև դես-դեն անես, նա պետք է սոված նստի...» Մի անգամ բոստանից տուն գալով, Դունյաշկան տեսավ, որ խոհանոցում մեխից կախված է Գրիգորիի հին իշլիկը և խունացած բոլորքով գլխարկը։ Դունյաշկան հարցականորեն նայեց մորը, և սա մի տեսակ ողորմելիորեն ու մեղավորաբար ժպտալով, ասաց. «Դրանք ես եմ հանել սնդուկից, Դունյաշկա։ Ներս ես մրտնում, մտիկ անում, ու ոնց որ թե սիրտդ թեթևանում է... Ոնց որ թե նա արդեն մեզ հետ է...»

Գրիգորիի վերաբերյալ անվերջ խոսակցությունները ձանձրացրել էին Դունյաշկային։ Մի անգամ նա այլևս չհամբերեց, կշտամբեց մորը.

— Մայրիկ, բա չե՞ք ձանձրանում միշտ միևնույն բանի մասին խոսելուց։ Դուք բոլորի գլուխներն էլ տարել եք ձեր խոսակցություններով։ Գրիշա հա՛ Գրիշա, էլ ուրիշ բան չես լսի ձեզանից...

— Ո՞նց թե ես ձանձրանամ հարազատ որդուս մասին խոսելուց, հը՞։ Դու հլա երեխա բեր, այն ժամանակ կիմանաս... — կամացուկ պատասխանեց Իլյինիչնան։

Դրանից հետո նա Գրիգորիի իշլիկը և գլխարկը խոհանոցից տարավ օթախը և մի քանի օր չէր խոսում որդու մասին։ Բայց մարգագետնի հնձից քիչ առաջ նա Դունյաշկային ասաց.

— Դու բարկանում ես, երբ ես խոսում եմ Գրիշայի մասին, բա առանց նրան մենք ո՞նց պիտի ապրենք։ Դու դրա մասին մտածե՞լ ես, հիմար։ Մոտենում է խոտհունձը, իսկ մեր տանը փոցխ սարքող չկա... Այ թե մեզ մոտ ոնց բրիշակ եղավ ամեն բան, և ես ու դու ոչ մի գործ չենք կարող գլուխ բերել։ Առանց տանտիրոջ բան չի դուրս գա...

Դունյաշկան ոչինչ չասաց։ Նա շատ լավ էր հասկանում, որ տնտեսության հարցերը այնքան էլ չեն անհանգստաց-

նում մորը, որ այդ բոլորը միայն պատրվակ է Գրիգորիի մասին խոսելու և ինքնասփոփման համար։ Իլյինիչնան սկսեց է՛լ ավելի կարոտել որդուն և չկարողացավ այդ թաքցնել։ Երեկոյան նա հրաժարվեց ընթրիքից, ու երբ Դունյաշկան հարցրեց, թե արդյոք չի՞ հիվանդացել,— դժկամ պատասխանեց.

— Պառավել եմ... Սիրտս էլ ցավում է Գրիշայի համար... Այնպես է ցավում, որ ինձ ոչ մի բան դուր չի գալի ու աչքերս էլ ցավում են աշխարհքին նայելիս...

Բայց Գրիգորին չէր, որ Մելեխովների տանը տնտեսությամբ էր զբաղվելու... Մարգագետնի հնձից առաջ Միշկա Կոշևոյը ռազմաճակատից ժամանեց խուտոր։ Նա գիշերը հեռավոր ազգականների տանը ու առավոտյան եկավ Մելեխովների մոտ։ Իլյինիչնան կերակուր էր եփում, երբ հյուրը քաղաքավարի ծեծելով դուռը և պատասխան չստանալով, մտավ խոհանոց, հանեց զինվորի իր հին գլխարկը, ժպտաց Իլյինիչնային։

— Բարև, մորաքույր Իլյինիչնա. չէի՞ սպասում։

— Բարև։ Իսկ դու իմ ի՞նչն ես, որ ես սպասեի քեզ։ Մեր ծանոթի հարևանի ծանո՞թն ես,— կոպիտ պատասխանեց Իլյինիչնան՝ զայրագին նայելով իր համար ատելի Կոշևոյի դեմքին։

Նման ընդունելությունից բնավ չշփոթվելով, Միշկան ասաց.

— Բա ի՞նչ ասեմ... Ինչքան չլինի ծանոթներ ենք եղել։

— Հենց միայն այդքան։

— Ավելի շատ բան չի էլ հարկավոր այցելելու համար։ Ես չեմ եկել քեզ մոտ ապրելու։

— Ակաս-մակաս այդ էր պակաս,— ասաց Իլյինիչնան և առանց հյուրին նայելու զբաղվեց կերակուր եփելով։

Ուշադրություն չդարձնելով նրա խոսքերի վրա, Միշկան ուշադրությամբ դիտեց խոհանոցը, ասաց.

— Եկա այցելելու, տեսնելու թե դուք ոնց եք ապրում... Մի տարուց ավելի է, որ չենք տեսնվել։

— Իսկի էլ կարոտ չէինք քեզ,— մոթմոթաց Իլյինիչնան՝ վառարանի մեջ բարկությամբ շարժելով չուգունները։

Դունյաշկան հավաքում էր օթախը ու, լսելով Միշկայի ձայնը, գունատվեց, ձեռները լուռ իրար զարկեց։ Նստելով նստարանին, առանց շարժվելու նա լսում էր խոհանոցում տեղի ունեցող խոսակցությունը։ Դունյաշկայի դեմքի վրա մերթ թունդ կարմրություն էր բռնկվում, մերթ էլ թշերը այնպիսի գունատությամբ էին ծածկվում, որ քթի բարակ սապատիկի վրա երկայնակի, սպիտակ շերտիկներ էին առաջանում։ Նա լսեց, թե ինչպես Միշկան ամրաքայլ անցավ խոհանոցով, նստեց իր տակին ճռճռող աթոռի վրա, հետո չխկացրեց լուցկին։ Ծխախոտի ծուխը թափանցեց օթախը։

— Ասում են ծերունին մեռավ, հա՞։

— Մեռավ։

— Բա Գրիգորի՞ն։

Իլյինիչնան երկար լռեց, ապա նկատելի դժկամությամբ պատասխանեց.

— Կարմիրների մոտ է ծառայում։ Գդակին նույնպիսի աստղ է կպցրել, ինչպես և դու։

— Վաղուց պետք է դա կպցներ...

— Դա նրա գործն է։

Միշկայի ձայնը պարզորոշ անհանգստություն արտահայտեց, երբ նա հարցրեց.

— Բա Եվդոկիա Պանտելեևնա՞ն։

— Վեր է կենում։ Շատ շուտ ես եկել, լավ մարդիկ վաղ առավոտյան հյուր չեն գնում։

— Դե, մենք ո՞րտեղից լավ լինենք։ Կարոտել էի ու եկա։ Այստեղ ժամանակ ընտրե՞լս որն է։

— Օ՛ֆ, Միխայիլ, լավ կլիներ ինձ չբարկացնեիր...

— Ինչո՞վ եմ ես ձեզ բարկացնում, մորաքույր։

— Շատ բանով։

— Ախր ինչո՞վ, է՞։

— Քո այդ խոսակցություններով։

Դունյաշկան լսեց, թե ինչպես Միշկան ծանր հոգոց հանեց։ Նա այլևս չէր կարող համբերել. վեր թռավ, շտկեց շրջազգեստը, մտավ խոհանոց։ Դեղնադեմ, անճանաչելիության չափ նիհարած Միշկան նստել էր պատուհանի մոտ, ծխում էր ծխախոտի մնացորդը։ Երբ նա տեսավ Դունյաշկային, պղտոր աչքերը աշխուժացան, դեմքի վրա հազիվ

նկատելի կարմրություն երևաց։ Հաղթանդամորեն ոտքի ելնելով, նա խռպոտ ասաց.

— Օ-օ՜, բարև։

— Բարև... — հազիվ լսելի պատասխանեց Դունյաշկան։

— Գնա ջուր բեր,— իսկույն հրամայեց Իլյինիչնան՝ հարևանցիորեն նայելով աղջկան։

Միշկան համբերությամբ սպասում էր Դունյաշկայի վերադարձին։ Իլյինիչնան լուռ էր։ Լուռ էր և Միշկան, հետո էլ մատներով մարեց ծխախոտի մնացորդը, հարցրեց.

— Ինչո՞ւ, եք ինձ վրա չարանում, մորաքույր։ Ես ձեզ ի՞նչ վատություն եմ արել։

Իլյինիչնան դեմքը շուռ տվեց վառարանից, ասես խայթված լիներ.

— Ո՞նց է խիղճդ թույլ տալիս գալ մեզ մոտ, անամոթի մեկը,— ասաց նա։— Եվ դու հլա դեռ այդպիսի բա՞ն ես հարցնում ինձ, հա՞, հոգեառ...

— Ես ի՞նչ հոգեառ եմ որ։

— Իսկականն ես։ Ո՞վ է սպանել Պետրոյին։ Դու չե՞ս։

— Ես եմ սպանել։

— Պրծավ-գնաց։ Դրանից հետո էլ ո՞վ ես դու։ Եվ դու գալիս ես մեզ մոտ... Նստում ես, ոնց որ թե... — Իլյինիչնան շնչասպառ եղավ, լռեց, բայց ինքն իրեն հավաքելով, շարունակեց.— ես նրա մե՞րն եմ թե ոչ։ Բա քո աչքերը ո՞նց են մտիկ անում ինձ, հը՞։

Միշկան բավական գունատվեց։ Նա սպասում էր այդ խոսակցությանը։ Հուզմունքից մի փոքր կակազելով՝ նա ասաց.

— Ինչո՞ւ պետք է աչքերս փակվեն։ Բա որ Պետրոն ինձ բռներ, ի՞նչ կաներ։ Կարծում ես, թե ճակա՞տս պիտի համբուրեր, հա՞։ Նա նույնպես կսպաներ ինձ։ Մենք այն կոնտերի վրա հո նրա համար չէինք հանդիպել, որ իրար գլուխ շոյեինք։ Պատերազմ է, բա-ա՞ս։

— Բա խնամի Կորշունովին, խաղաղ ալևորին սպանելն է՞լ պատերազմ է։

— Բա ո՞նց,— զարմացավ Միշկան,— իհարկե պատերազմ է։ Ես գիտեմ այդ խաղաղ ծերուկներին։ Այդ տեսակ մարդը նստում է տանը, ձեռքերով է պահում փոխանը, ամ

ավելի շատ չարիք է գործում, քան մեկ ուրիշը դիրքերում... Հենց այդպիսիները, ինչպես Գրիշակա պապին էր, կազակներին գրգռում էին մեր դեմ։ Հենց նրանց պատճառով սկսվեց այս ամբողջ պատերազմը։ Ովքե՞ր էին ագիտացիա անում մեր դեմ։ Նրանք, այդ խաղաղ ալևորները։ Իսկ դու ասում ես՝ «հոգեառ»... Լա՜վ հոգեառ ես գտել, հա՜։ Ես առաջ գառ կամ գոճի էլ չէի կարենում մորթել ու հիմա էլ, գիտեմ, չեմ մորթի։ Ձեռս չի բարձրանում այդ կենդանիների վրա։ Երբ ուրիշներն են մորթում, էլի՜ ես ականջներս եմ ծածկում ու հեռանում, որ ոչ լսեմ, ոչ էլ տեսնեմ։

— Բա խնամուն...

— Թողեք այդ խնամուն, է՜,— բարկությամբ ընդհատեց Միշկան։— Նրանից այնքան օգուտ կար, ինչքան որձ այծի կաթից, իսկ վնաս շատ կար։ Ասում էի նրան՝ դուրս եկ տանից, դուրս չեկավ, ու տեղնուտեղը փռվեց։ Ես չարացած եմ դրանց, այդ քավթառ սատանաների վրա։ Կենդանուն սպանել չեմ կարող, եթե միայն կատաղություն չի գալի,— իսկ այդպիսի գարշելիներին,— դուք ինձ ներեցեք,— ձեր այդ խնամու նմաններին, այդ սատանաներին ինչքան ասես կկոտորեմ։ Իմ ձեռքը պինդ է դրանց, այդ թշնամիների դեմ, որոնք զուր են ապրում աշխարհքում։

— Ք՚ո այդ պնդության պատճառով էլ այդքան մաշվել ես,— խայթեց Իլյինիչնան,— երևի խիղճդ տանջում է քեզ...

— Էլ ո՞նց չէ,— բարեհոգությամբ ժպտաց Միշկան,— խիղճս պիտի տանջի այդ տեսակ փալասի համար, ինչպես այդ բիձան էր։ Ինձ տենդն էր տանջել, բոլորովին հյուծել, թե չէ ես նրանց, մայրիկ...

— Ես ի՞նչ մայրիկ եմ քեզ համար,— վրդովվեց Իլյինիչնան։— Գնա շանը մայրիկ ասա։

— Դե, մի՛ վիրավորի ինձ,— խուլ ձայնով ասաց Միշկան և չարագուշակ կկոցեց աչքերը։— Ես քեզանից այսքան վիրավորանք կուլ տալու փոդրաթ չեմ վերցրել։ Քեզ հասատատ եմ ասում, մորաքույր. Պետրոյի համար մի չարանա վրես։ Նա ինքը գտավ այն, ինչ որ փնտրում էր։

— Հոգեառ, հոգեառ, գնա՛ այստեղից, ես քեզ տեսնել չեմ կարող,— համառորեն պնդում էր Իլյինիչնան։

Միշկան դարձյալ ծխեց, հանգիստ հարցրեց.

— Բա Միտրի Կորշունովը, ձեր խնամին, մարդասպան չի՞։ Բա Գրիգորի՞ն ով է։ Տղիդ մասին լռում ես, իսկ նա հոխսկական հոգեառ է։

— Մի ստի՛։

— Երեկվանից չեմ ստում։ Բա քո կարծիքով ո՞վ է նա։ Մերոնցից քանիսի՞ն է կոտորել, գիտե՞ս։ Հը՛մ։ Թե որ դու, մորաքույր, այդ տեսակ անուն ես տալի բոլորին, ովքեր պատերազմում են եղել, ուրեմն մենք բոլորս հոգեառներ ենք։ Ամբողջ գործն այն է, թե ինչի համար և ում պետք է սպանել,— նշանակալից կերպով ասաց Միշկան։

Իլյինիշնան լռեց, բայց տեսնելով, որ հյուրը չի էլ մտածում գնալ, խստորեն ասաց.

— Հերի՛ք է։ Ես քեզ հետ խոսելու ժամանակ չունեմ, գնա տուն։

— Ես այնքան տներ ունեմ, ինչքան որ նապաստակը՝ պալատներ,— քմծիծաղ տվեց Միշկան ու վեր կացավ։

Բոլորովին էլ չէր կարելի հար և նման ամեն տեսակ խոսակցություններով խրտնեցնել նրան։ Միշկան այնքան զգայուն չէր, որ ուշադրություն դարձներ կատաղած պառավի վիրավորական արարքների վրա։ Նա գիտեր, որ Դունյաշկան սիրում է իրեն, իսկ մնացած բաների, նաև պառավի վրա թքել էլ չէր ուզում։

Հետևյալ օրվա առավոտյան նա կրկին եկավ, հանգիստ բարևեց, նստեց պատուհանի մոտ՝ դիտելով Դունյաշկայի յուրաքանչյուր շարժումը։

— Շուտ-շուտ ես գալի... — անցողակի փնթփնթաց Իլյինիշնան՝ չպատասխանելով Միշկայի բարևին։

Դունյաշկան շիկնեց, բորբոք աչքերով նայեց մորը ու առանց որևէ խոսք ասելու խոնարհեց հայացքը։ Միշկան քմծիծաղ տալով՝ պատասխանեց.

— Քեզ մոտ չեմ եկել, մորաքույր Իլյինիշնա, զուր ես նեղանում։

— Ավելի լավ կլիներ դու բոլորովին մոռանայիր մեր տան ճամփեն։

— Բա ո՞ւր գնամ,— լրջանալով հարցրեց Միշկան։— Ձեր խնամի Միտրիի ողորմածությամբ մնացել եմ մենակ, ոնց որ միաչքանի մարդու աչքը, իսկ դատարկ խրճիթում գիլի պես նստել չի լինի։ Ուզում ես թե չես ուզում, մորաքույր, ես պետք է գնամ-գամ ձեզ մոտ,— վերջացրեց նա ու ավելի հարմար նստեց, լայն տարածեց ոտները։

Իլյինիշնան ուշադրությամբ նայեց նրան։ Այո, անշուշտ, այդպիսի մեկին այնքան էլ հեշտ չի դուրս անել։ Եվան համառություն կար Միշկայի ամբողջ կորացած կերպարանքում, գլխի թեքվածքում, պինդ սեղմված շրթունքներում...

Նրա գնալուց հետո Իլյինիշնան երեխաներին ուղարկեց բակը, ասաց՝ դիմելով Դունյաշկային.

— Էլ նա այստեղ ոտ չպիտի դնի։ Հասկացա՞ր։

Դունյաշկան անթարթ նայեց մորը։ Կատաղաբար կկոցված նրա աչքերում բոլոր Մելեխովներին հատուկ ինչ-որ մի բան առկայծեց վայրկենապես, երբ նա, ասես ատամներով յուրաքանչյուր բառը կտրելով, ասաց.

— Ո՛չ, պիտի գա։ Չե՛ք կարող արգելել։ Պիտի գա։— Ու շփոթվելով, դեմքը ծածկեց գոգնոցով, վազեց հաշտը։

Իլյինիշնան, ծանր շունչ առնելով, նստեց պատուհանի մոտ, երկար մնաց այդպես նստած, լուռ ու մունջ օրորելով գլուխը, դիտելով տափաստանի հեռուները, ուր արևի տակ արծաթաշող, մատղաշ օշինդրի մի շերտ երկիրը բաժանում էր երկնքից։

Իրիկնադեմին Դունյաշկան ու մայրը, որոնք իրար հետ չէին հաշտվել ու չէին խոսում։ Դոնի ափին վերականգնում էին բանջարանոցի տապալված ցախե ցանկապատը։ Մոտեցավ Միշկան։ Նա Դունյաշկայի ձեռքից լուռ վերցրեց բահը, ասաց.

— Մանծաղ ես փորում։ Քամին կփչի ու էլի կընկնի ձեր ցանկապատը։— Ու սկսեց խորացնել ցցեր տնկելու փոսերը, հետո օգնեց ցանկապատը իր տեղը դնելու, դա ամրացրեց ցցերին ու գնաց։ Առավոտյան նա հենց նոր ոռնդած երկու փոցխ ու եղանի մի կոթ բերեց և դրեց Մելեխովների տան մուտքի սանդուղքի մոտ. բարևելով Իլյինիշնային, գործնական տոնով հարցրեց.

— Մարգագետնի խոտը հնձելու միտք ունե՞ք։ Մարդիկ արդեն գնացել են Դոնի մյուս կողմը։

Իլյինիշնան լուռ էր։ Մոր փոխարեն պատասխանեց Դունյաշկան.

— Մենք ինչո՞վ պիտի անցնենք Դոնը։ Նավակը աշնանից ընկած է չարդախի տակ, բոլորովին չորացել է ու ճաքճքել։

— Հարկավոր էր գարնանը դա իջեցնել ջրի մեջ,— կըշտամբանքով ասաց Միշկան։— Գուցե խծծե՞լ է պետք։ Առանց նավակի ձեր գործը դժվար կլինի։

Դունյաշկան հլու ու սպասողաբար նայեց մորը։ Իլյինիշնան լուռ ու մունջ խմոր էր հունցում և այնպես էր ցույց տալիս, թե այդ ամբողջ խոսակցությունը իրեն բնավ չի վերաբերում։

— Ձեզ մոտ խծուծ կա՞,— հազիվ նկատելի ժպտալով հարցրեց Միշկան։

Դունյաշկան գնաց մառան, մի խտիտ կանեփի խծուծ բերեց։

Միշկան մինչև ճաշ սարքեց նավակը, մտավ խոհանոց։

— Նավակը իջեցրի ջրի մեջ, թող նամանա։ Կապեցեք ջրափի քոթուկին, թե չէ մեկն ու մեկը կարող է տանել։— Ու նորից հարցրեց.— Հնձի մասին ի՞նչ կասեք, մորաքույր։ Գուցե օգնե՞մ ձեզ։ Մեկ է, ես հիմի պարապ եմ։

— Այ, դրան հարցրու,— Իլյինիշնան գլխով ցույց տվեց Դունյաշկայի կողմը։

— Ես տանտիրուհուն եմ հարցնում։

— Երևում է, որ ես այստեղ տանտիրուհի չեմ...

Դունյաշկան լացեց, գնաց օթախ։

— Ուրեմն պետք է օգնել,— տնքաց ու վճռականորեն ասաց Միշկան։ Ո՞րտեղ են ձեր ատաղձագործական գործիքները։ Ուզում եմ ձեզ համար փոցխ շինել, թե չէ հները երևի անպետք են։

Նա գնաց, մտավ չարդախի տակ ու, սուլելով, սկսեց փոցխի ատամներ տաշել։ Փոքրիկ Միշատկան պտտվում էր նրա մոտ, աղերսանքով նայում նրա աչքերին, խնդրում.

— Միխայիլ ապեր, ի՞նչ կըլի ինձ համար մի պստիկ փոցխ շինես, ուրիշը չկա, որ շինի։ Տատիկը չի կարող, հորքուրս էլ չի կարող... Մենակ դու գիտես, դու լավ գիտես։

— Կշինեմ, կուկու ջան, խաչը վկա կշինեմ, մենակ թե քիչ հեռու կաց, թե չէ տաշեղը կխփի աչքիդ,— համոզում էր կոշևոյը, քմծիծաղ էր տալիս ու զարմանքով մտածում.—

«Սատանի ճուտ, ինչքա՞ն նման է հորը. նույն աչքերը, նույն հոնքերը. վերևի պոռշն էլ նրա պես է բարձրացնում... Ա՜յ քեզ լավ արված գործ»։

Նա սկսեց մանկական մի փոքրիկ փոցխ շինել. բայց չկարողացավ վերջացնել. նրա շրթունքները կապուտակեցին, դեղին դեմքի վրա բարկության ու միևնույն ժամանակ խոնարհության արտահայտություն երևաց։ Նա դադարեցրեց սուլոցը, վար դրեց դանակը և, ասես մրսելով, շարժեց ուսերը։

— Միխա՛յլո Գրիգորիչ, անվանակից, գնա՞ ինձ համար մի որևէ կարպետ բեր պառկելու համար,— խնդրեց նա։

— Ինչի՞ համար,— հետաքրքրվեց Միշատկան։

— Ուզում եմ հիվանդանալ։

— Ո՞նց թե։

— Է՛-է, պոկ չես գալիս, էլի՛, ոնց որ տլզվ լինես... Ընկել է հիվանդանալու ժամանակը, պրծավ-գնաց։ Դե, շուտ բե՛ր։

— Բա փո՞ցխս։

— Հետո կվերջացնեմ։

Ուժեղ դողը ցնցում էր Միշկայի մարմինը։ Ատամները չխկչխկացնելով, նա պառկեց Միշատկայի բերած կարպետի վրա, հանեց գլխարկը և դրանով ծածկեց դեմքը։

— Դու արդեն հիվանդացա՞ր,— վշտացած հարցրեց Միշատկան։

— Ըհը՛մ, հիվանդացա։

— Բա ինչո՞ւ ես դողում։

— Տենդը ցնցում է ինձ։

— Բա ինչո՞ւ ես ատամներդ չխկացնում։

Միշկան գլխարկի տակից մի աչքով նայեց իր փոքրիկ, ձանձրացնող անվանակցին, թեթև ժպտաց ու էլ չպատասխանեց նրա հարցերին։ Միշատկան վախեցած նայեց նրան, վազեց տուն։

— Տատի ջան, Միխայիլ ապերը պառկել է չարդախի տակ ու այնպե՛ս է դողում, այնպե՛ս է դողում, ուղղակի ցատկոտում է։

Իլյինիշնան նայեց պատուհանից, մոտեցավ սեղանին ու երկար, երկար ժամանակ լուռ մնաց, մտածմունքի մեջ ընկավ...

— Ինչո՞ւ ես լռում, տատի,— անհամբերությամբ հարցրեց Միշատկան՝ քաշքշելով նրա կոֆտայի թևքից։

Իլյինիչնան շուռ եկավ նրա կողմը, կտրուկ ասաց.

— Վերցրու մի վերմակ, զավակս, ու տար նրան, նեռին, թող գցի վրեն։ Նրա դողը բռնել է, այդ տեսակ հիվանդություն կա։ Դու կարո՞ղ ես տանել վերմակը։— Նա դարձյալ մոտեցավ պատուհանին, նայեց բակը, հապճեպ ասաց. Կաց, կաց, մի՝ տանի, հարկավոր չէ։

Դունյաշկան ոչխարենու իր մուշտակով ծածկում էր Կաշևոյին ու կռանալով ինչ-որ բան էր ասում նրան...

Տենդից հետո Միշկան մինչև երեկո զբաղված էր խոտհնձի նախապատրաստությամբ։ Նա զգալիորեն թուլացել էր։ Նրա շարժումները թույլ ու անհաստատ էին, բայց Միշատկայի համար նա այնուամենայնիվ փոցխ շինեց։

Իլյինիչնան երեկոյան ընթրիքի սեղան գցեց, նստեցրեց երեխաներին, առանց Դունյաշկային նայելու ասաց.

— Գնա կանչիր դրան... ոնց է անունը... թող գա հաց ուտի։

Միշկան սեղան նստեց առանց խաչակնքելու, հոգնածորեն կորացած։ Հոգնածությունը անդրադառնում էր նրա դեղին դեմքի վրա, որ պատած էր չորացած քրտնքի կեղտոտ շերտերով, ձեռքը մի փոքր դողում էր՝ երբ նա գդալը տանում էր բերանը։ Նա քիչ և դժկամորեն էր ուտում, երբեմնակի անտարբեր նայում սեղանի շուրջը նստածներին։ Բայց Իլյինիչնան զարմանքով նկատեց, որ «հոգեառի» մարած աչքերը, կանգ առնելով փոքրիկ Միշատկայի վրա, ջերմանում ու աշխուժանում էին, նրանց մեջ մի ակնթարթ բռնկվում ու մարում էին հիացումի ու փաղաքշանքի կայծերը, իսկ բերանի անկյուններում դեռ երկար մնում էր հազիվ նկատելի ժպիտը։ Հետո Կոշևոյը ուրիշ կողմ էր դարձնում հայացքը, ու վերստին նրա դեմքը ստվերվում էր բութ անտարբերությամբ։

Իլյինիչնան սկսեց աչքի տակով նայել Կոշևոյին և միայն այդ ժամանակ տեսավ, թե որչափ սարսափելի նիհարել էր նա հիվանդության ընթացքում։ Փոշուց գորշացած վերնաշապկի տակին պարզ ու ցայտուն ուրվագծվում էին անրակների կիսաղեղները, կորացել էին լայն ուսերի նիհարությունից սուր, ցցուն անկյունները, ու մանկականորեն բարակ պարանոցի վրա տարօրինակ տեսք ուներ շիկակարմրավուն մազերով պատած ադամախնձորը... Որքան շատ էր դիտում Իլյինիչնան «հոգեառի» կորացած կերպարանքը, նրա մոմագույն դեմքը, այնքան նրա մեջ ուժեղանում էր ինչ-որ ներքին անհարմարության, երկվության զգացմունքը։ Եվ հանկարծ անկոչ խղճահարությունը իրեն ատելի այդ մարդու նկատմամբ,— մայրական այն սրտաճմլիկ խղճահարությունը, որը ուժեղ կանանց էլ է նվաճում,— արթնացավ Իլյինիչնայի սրտում։ Ուժ չունենալով նոր զգացումը հաղթահարելու, նա կաթով լիքը լցված ափսեն մոտեցրեց Միշկային, ասաց.

— Շա՛տ կեր, ի սեր աստծու։ Այնքան լղար ես, որ վրեդ նայողի սիրտը կխառնի... Փեսացուի՞ս մտիկ։

III

Խուտորում սկսեցին խոսել Կոշևոյի ու Դունյաշկայի մասին։ Մի անգամ նավամատույցում կանանցից մեկը հանդիպելով Դունյաշկային, բացահայտ հեգնանքով հարցրեց. «Միխայիլին մշա՞կ եք վարձել, հը՞։ Ոնց որ թե նա իսկի դուրս չի գալի ձեր տնից...»

Իլյինիչնան դստեր բոլոր հորդորանքներին համառորեն պատասխանում էր. «Մի՛ խնդրի, քեզ չեմ տա նրան, քեզ համար չկա իմ օրհնությունը»։ Եվ միայն այն ժամանակ, երբ Դունյաշկան հայտարարեց, թե կտեղափոխվի Կոշևոյի մոտ և իսկույն սկսեց հավաքել իր հագուստը,— Իլյինիչնան փոխեց իր որոշումը։

— Խելքի արի,— վախեցած բացականչեց նա,— բա ես մենակ ի՞նչ անեմ երեխեքի հետ։ Կորչե՞նք, հա՞։

— Ոնց կուզեք, մայրիկ, իսկ ես չեմ ուզում խուտորումը ծաղրատեղ լինել,— կամացուկ ասաց Դունյաշկան՝ շարունակելով սնդուկից հանել իր աղջկական հագուստեղենը։

Իլյինիչնան երկար ու անձայն շարժեց շրթունքները, հետո ծանրաքայլ անցավ առջևի անկյունը։

— Դե, ի՞նչ արած, աղջիկս... — շշնջաց նա՝ վերցնելով

սրբապատկերը,— քանի որ դու այդպես ես որոշել, աստված քեզ հետ, գնա...

Դունյաշկան արագությամբ ծունկ չոքեց։ Իլյինիշնան օրհնեց նրան։ կեբկերուն ձայնով ասաց.

— Ողորմած հոգի մերս ինձ այս սրբապատկերով է օրհնել... է-է-հե՛, բա որ հիմի հերը քեզ տեսնե՛ր... Մի՞տդ է, թե նա ինչ էր ասում քո նշանածի մասին։ Աստված տեսնում է, թե ինչքան ծանր է վիճակս...— և լուռ շուռ գալով՝ դուրս ելավ հաշտը։

Որքան էլ ջանք էր թափում Միշկան, որքան էլ համոզում էր հարսնացուին՝ հրաժարվել եկեղեցում պսակվելուց,— կամակոր աղջիկը պնդում էր իր ասածի վրա։ Միշկան սրտապնդվելով, ստիպված էր համաձայնվել։ Մտքում ամեն ինչ անիծելով, նա այնպես էր պսակվելու պատրաստվում, որ կարծես թե կախաղան էր գնալու։ Վիսսարիոն տերտերը գիշերով նրանց կամացուկ պսակեց դատարկ եկեղեցում։ Ծեսից հետո նա շնորհավորեց նորապսակներին, խրատական տոնով ասաց.

— Ա՛յ թե կյանքում ինչպես է լինում, երիտասարդ սովետական ընկեր. անցյալ տարի դուք ձեր սեփական ձեռքով վառեցիք տունս, այսպես ասած՝ հրո ճարակ դարձրիք, իսկ այսօր ինձ վիճակվեց ձեզ պսակել... Ասում են՝ մի թքիր ջրհորի մեջ, վասն զի այն կարող է պետք գալ։ Բայց և այնպես ես ուրախ եմ, հոգեպես ուրախ եմ, որ դուք ուշքի եկաք և գտաք Քրիստոսի եկեղեցու ճանապարհը։

Միշկան այդ արդեն չկարողացավ տանել։ Եկեղեցում նա շարունակ լուռ էր՝ ամաչելով իր կամքի թուլությունից ու զայրանալով իր վրա, բայց այստեղ ցասկոտ ու ծուռ նայեց հիշաչար տերտերին, ու որպեսզի Դունյաշկան չլսեր, շշնջալով ասաց.

— Ափսոս որ դու այն ժամանակ փախել էիր խուտորից, թե չէ ես քեզ, երկարաբաշ սատանա, կվառեի տանդ հետ միասին։ Հասկանալի՞ է, հը՞։

Անակնկալից շշմած տերտերը արագ-արագ թարթելով աչքերը, նայեց Միշկային, իսկ վերջինս քաշեց իր հարսնացուի թևքից, խստորեն ասաց՝ «Գնանք», և բարձր թփթփացնելով բանակային սապոգները, քայլեց դեպի դուռը։

Այդ անուրախ հարսանիքում օղի չխմեցին, չերգեցին։ Գրիգոր Զիկովը, որ հարսանիքի գլխավորիչ էր, մյուս օրը երկար թքում էր ու գանգատվում Ակսինյային.

— Աղջի՛, ամա թե հարսանիք է՝ հա՜-հա։ Միխայիլը եկեղեցում այնպես կոթեց տերտերին, որ ալեարբ բերանը կողքի ծռվեց։ Իսկ ընթրիքին տեսա՞ր ինչ բերին. տապակած հավի միս ու մածուն... Գոնե մի կաթիլ օղի տային, գրո՞ղը տանի նրանց։ Օ-օ՛, էթե Գրիգորի Պանտելևիչը տեսներ, թե իր քրոջը ոնց են մարդու տալի-ի՛... ձեռներով կսեղմեր գլուխը։ Չէ, աղջի, վերջ. ես հիմի էլ չեմ գնա այդ նոր հարսանիքները։ Շան հարսանիքն ավելի ուրախ է, այնտեղ գոնե պոչոտում են որձ շան բուրդը, դալմաղալը շատ է լինում, իսկ այստեղ ոչ խմիչք, ոչ տուրուդմբոց, անիծված լինեն նրանք։ Հավատո՞ւմ ես, այդ հարսանիքից հետո այնքան դիլխոր էի, որ ամբողջ գիշերը չքնեցի, պառկել էի անհանգիստ, ոնց որ թե շապկիս տակ մի բուռ լու էին լցրել...

Այն օրվանից, երբ Կոշկարը տեղավորվեց Մելեխովների տանը, տնտեսության մեջ ամեն ինչ այլ ձևով գնաց. կարճ ժամանակում նա կարգի բերեց ցանկապատը, տափաստանային խառը տեղափոխեց ու դարսեց կալում, ճարտարությամբ փոցխեց դեզը. պատրաստվելով հացի բերքահավաքին, նոր ձևով սարքեց հնձիչի դարակն ու թևերը, խնամքով մաքրեց կալը, նորոգեց հին քամիչը և ձիու լծասարքը, որովհետև գաղտուկ երազում էր մի լուծ եզը փոխել ձիով և մի քանի անգամ ասում էր Դունյաշկային՝ «Մենք պետք է մի ձի ճարենք։ Այս անճոռնի առաքյալներով ճամփա գնալը ուղղակի խաթա է»։ Մի անգամ մառանում պատահմամբ գտավ մի դույլ սպիտակ ներկ և ուլտրամարին ու իսկույն որոշեց ներկել հնությունից գորշացած փեղկերը։ Մելեխովների խրճիթը ասես ջահելացավ, պատուհանները վառ կապույտ ակնակապիճներով էր նայում աշխարհին...

Միշկան եռանդուն տնտեսատեր դուրս եկավ։ Չնայելով հիվանդության, նա աշխատում էր առանց ձեռները ծալելու։ Դունյաշկան նրան օգնում էր ամեն մի գործում։

Ամուսնական կյանքի կարճ ժամանակվա ընթացքում նա բավական գեղեցկացավ և կարծես թե ուսերն ու կոնքը ավելի լայնացան։ Ինչ-որ մի նոր բան երևան եկավ նրա աչքե-

րի արտահայտության մեջ, քայլվածքում, նույնիսկ մազերը շտկելու շարժուձևում։ Զքաշան առաջ նրան հատուկ՝ շարժումների անհարմար անտաշությունը, երեխայական աշխուժությունն ու ժրությունը։ Նա ժպտուն էր, հանգիստ, սիրազեղ աչքերով էր նայում ամուսնուն և իր շուրջը ոչինչ չէր տեսնում։ Դնռատի երջանկությունը միշտ էլ անտեսունակ է...

Իսկ Իլյինիչնան օրեցօր ավելի ու ավելի սուր և ցավագին էր զգում իր վերահաս մենակությունը։ Նա ավելորդ էր դարձել այն տանը, որտեղ ապրել էր համարյա ամբողջ կյանքում։ Դունյաշկան և իր ամուսինը այնպես էին աշխատում, որ կարծես թե սեփական բույնը դատարկ տեղում էին ստեղծում։ Իլյինիչնայի հետ ոչ մի բանի մասին չէին խորհրդակցում և չէին հարցնում նրա համաձայնությունը, երբ տնտեսության մեջ որևէ բան էին ձեռնարկում. պառավի նկատմամբ որևէ փաղաքշական խոսք էլ չէին գտնում։ Միայն սեղան նստելիս մի քանի աննշան խոսք էին փոխանակում նրա հետ, և Իլյինիչնան նորից մենակ էր մնում իր թախծալի մտքերով։ Նրան չէր ուրախացնում դստեր երջանկությունը, տան մեջ օտար մարդու ներկայությունը, իսկ փեսան նրա համար առաջվա պես խորթ էր, նրանից նեղվում էր պառավը։ Կյանքն էլ բեռ էր դարձել պառավի համար։ Մի տարում իր սրտին մոտիկ այնքան մարդ կորցնելով, նա ապրում էր վշտաբեկ, պառաված էր ու ողորմելի։ Շատ հոգս ու ցավ էր տարել նա, նույնիսկ չափազանց շատ։ Նա այլևս անզոր էր դիմադրելու վշտին և ապրում էր այն սնահավատ նախազգացումով համակված, թե իրենց ընտանիքին այնքան հաճախ այցելող մահը դեռ էլի մի քանի անգամ մտնելու է Մելեխովների հին տան շեմքից։ Հաշտվելով Դունյաշկայի ամուսնության հետ, Իլյինիչնան միայն մի բան էր ուզում. ապրել մինչև Գրիգորիի վերադարձը, երեխաներին հանձնել նրան, հետո էլ առմիշտ փակել աչքերը։ Իր երկար և դժվարին կյանքի ընթացքում նա տանջանքով էր ձեռք բերել հանգստի այդ իրավունքը։

Անվերջանալի ձգվում էին ամառային երկար օրերը։ Վառ շողում էր արևը։ Բայց արևի կիզիչ ճառագայթները արդեն չէին տաքացնում Իլյինիչնային։ Նա երկար նստում էր մուտքի սանդուղքի վրա, հենց թեժ արևի տակ, անշարժ ու անզգա դիտում ամբողջ շրջապատը։ Նա այլևս առաջվա հոգատար ու եռանդուն տանտիրուհին չէր։ Ոչինչ չէր ուզում անել։ Ամեն ինչ ավելորդ, օտարոտի և անարժեք էր թվում։ ուժ էլ չկար աշխատելու այնպես, ինչպես անցած օրերում։ Նա հաճախ դիտում էր բազմամյա աշխատանքից չորացած իր ձեռքերը, մտքի մեջ ասում՝ «Ձեռքերս արդեն պրծել են աշխատանքը... Ժամանակն է հանգստանալու... Հերիք է ինչքան ապրեցի... Մենակ թե սաղ մնայի, մինչև որ գար Գրիշենկան...»

Իլյինիչնայի նախկին կենսուրախությունը վերադարձավ միայն մի անգամ, այն էլ կարճ ժամանակով։ Ստանիցայից վերադառնալիս հայտնվեց Պրոխորը, դեռ հեռվից բղավեց.

— Մարտիրոսը բեր, Իլյինիչնա տատիկ։ Որդուցդ նամակ եմ բերել։

Պառավը սփրթնեց։ Նրա պատկերացմամբ նամակն անխուսափելիորեն կապված էր լինում մի նոր դժբախտության հետ։ Բայց երբ Պրոխորը կարդաց կարճ նամակը, որի կեսը բռնում էր հարազատներին ուղարկված բարևները, և որի միայն վերջում ասված էր, թե նա, Գրիգորին, կաշխատի աշնանը արձակուրդ գալ,— Իլյինիչնան ուրախությունից երկար ժամանակ չէր կարողանում որևէ բան ասել։ Նրա դարշնագույն դեմքի վրայով, այտերի խոր կնճիռներով գլորվում էին արցունքի մանր, ուլունքանման կաթիլները։ Գլուխը քաշ արած, նա դրանք սրբում էր կոֆտայի թևքով, խորդուբորդ ձեռքով, իսկ արցունքները էլի հոսում էին դեմքի վրա ու, ընկնելով գոգնոցին, թրջում էին այն, ինչպես խիտ և տաք անձրև։ Պրոխորը ոչ միայն չէր սիրում, այլև ուղղակի չէր կարողանում տանել կնոջ արցունքները, այս պատճառով էլ նա չթաքցրած սրտնեղումից դեմքը կնճռոտելով, ասաց.

— Ի՞նչ եղավ քեզ, ա՛յ տատիկ։ Փիա՜, ձեր մեջ, կնանոց մեջ ինչքա՜ն շատ է այդ թացությունը... Պետք է ուրախանալ և ոչ թե լաց լինել։ Դե, ես գնացի, մնաս բարով։ Քեզ մտիկ տալը ինձ այնքան էլ դուրեկան չի։

Իլյինիչնան ուշքի եկավ, կանգնեցրեց նրան։

— Այդպիսի լուր բերելու համար, մատաղ քեզ... Բա եռ ո՞նց գլխի չեմ ընկնում... Կաց, հյուրասիրեմ քեզ...— ան-

կապ փնթփնթաց նա՝ անդուկից հանելով վաղուց պահված մի շիշ օղի։

Պրոխորը նստաց, սղալեց բեղերը։

— Դու ուրախությունից կխմե՞ս ինձ հետ, հա՞,— հարցրեց նա։ Եվ խսկույն ահռելի հանգստությամբ մտածեց «Փիա, սատանեն էլի շարժեց լեզուս։ Տաներ զորամաս, էլի, իսկ այնտեղ այս տնական օղուց մի կում էլ չկա...»

Իլյինիչնան հրաժարվեց։ Նա ինքնամոլով ծալեց նամակը, դրեց պատկերասրահի վրա, բայց մինչև փոխելով, կրկին վերցրեց, մի քիչ պահեց ձեռքում ու դրեց ծոցը, պինդ սեղմեց սրտին։

Վերադառնալով դաշտից, Դունյաշկան երկար կարդաց նամակը, հետո ժպտաց, շունչ առավ.

— Օ՛ֆ, գոնե շուտ գաս, էլի՝ ճե՛ չէ դուք, մայրիկ, բոլորովին հալումաշ եք եղել։

Իլյինիչնան խանդոտությամբ նրանից վերցրեց նամակը, կրկին դրեց ծոցը ու ժպտալով, կկոցված, շողուն աչքերով աղջկան հայելով, ասաց.

— Ինձ վրա շներն էլ չեն հաչում, այս օրին եմ հասել, բայց ահա փոքր տղես մտաբերել է մորը։ Ո՞նց է գրում հա՞-ա, հարազանունս է տալիս, Իլյինիչնա է ասում... Շատ լավությամբ բարև թանկագին մայրիկիս,— գրում է,— ու թանկագին երեխեքիս, քեզ էլ չի մոռացել... Հը, ի՞նչ ես ծիծաղում։ Հիմար ես, Դունյաշկա, իսկական հիմար։

— Ես ժպտալ է՞լ չեմ կարող, ինչ է։ Ո՞ւր եք գնում, մայրիկ։

— Գնամ բոստան, կարտոֆիլ քանդեմ։

— Էգուց ես ինքս կգնամ, նստի տանը, էլի։ Մեկ գանգատվում ես, որ հիվանդ ես, մեկ էլ գործ ես գտնում։

— Չէ, կերթամ... Սիրտս ուրախ է, ուզում եմ մենակ լինել,— խոստովանեց Իլյինիչնան և շահելավարի, արագ կապեց լաչակը։

Բանջարանոց գնալիս նա մտավ Ակսինյայի մոտ, սկզբում պատշաճության համար խոսեց կողմնակի գործերի մասին, հետո էլ հանեց նամակը։

— Մեր տղեն նամակ է գրել, ուրախացրել մորը, խոստանում է արձակուրդ գալ։ Հրե՛ս, հարևանուհի, կարդա, ես մի անգամ էլ կլսեմ։

Այդ օրվանից Ակսինյան հաճախ կարդում էր նամակը։ Իլյինիչնան երեկոները գալիս էր նրա մոտ, հանում էր թաշկինակով փաթաթած դեղին ծրարը, հոգոց հանելով, խնդրում էր։

— Կարդա, Ակսինյուշկա, այսօր ոնց որ թե սիրտս մութ է, երազումս էլ նրան տեսա փոքր հասակում, երբ նա դրսից էր գնում...

Թանաքե մատիտով գրված տառերը ժամանակի ընթացքում ջնջոտվել էին և շատ բառեր բոլորովին անընթեռնելի էին, բայց Ակսինյայի համար դա դժվարություն չէր ներկայացնում. նա այնքան հաճախ էր կարդում նամակը, որ բերանացի էր արել։ Հետո էլ, երբ բարակ թուղթը ճխլտվել ու պատառոտվել էր, Ակսինյան առանց կանգ առնելու բերանացի ասում էր ամբողջ նամակը մինչև վերջին տողը։

Երկու շաբաթից հետո Իլյինիչնան իրեն վատ զգաց։ Դունյաշկան զբաղված էր կալսով, իսկ Իլյինիչնան չէր ուզում նրան կտրել աշխատանքից, ինքն էլ չէր կարող եփել-թափել։

— Այսօր ես վեր չեմ կենա։ Դու մի կերպ արա գործերը,— խնդրեց նա աղջկան։

— Ի՞նչդ է ցավում, մայրիկ։

Իլյինիչնան կոկեց իր հնամաշ կոֆտայի ծալերը, առանց աչքերը բարձրացնելու պատասխանեց.

— Ամեն ինչս ցավում է... Ոնց որ թե ներսս ամեն բան ջարդված է։ Ջահել ժամանակս ողորմածիկ հերդ մեկ էլ տեսար թունդ բարկացավ ու սկսեց ծեծել ինձ... Նրա բռունցքներն էլ ասես երկաթից էին... Մի շաբաթ պառկում էի կիսամեռ։ Հիմի էլ այդպես եմ, բոլորովին ջարդված եմ, ասես ծեծել, ջարդուփշուր են արել...

— Գուցե Միխայիլին ուղարկեմ բուժակին կանչելո՞ւ։

— Ինչի՞ս է պետք, մի կերպ վեր կկենամ։

Իլյինիչնան մյուս օրը իսկապես ոտքի ելավ, շրջեց բակում, բայց իրիկնադեմին նորից պառկեց։ Նրա դեմքը մի փոքր ուռել էր, աչքերի տակ ուռուցքներ էին առաջացել։ Գիշերվա ընթացքում նա մի քանի անգամ, ձեռքերի վրա հեն-

վելով, գլուխը բարձրացնում էր բարձր դրված բարձերից, արագ շնչում,— նրա շունչը կտրվում էր։ Հետո շնչահեղձությունը անցավ։ Նա կարող էր հանդիստ պառկել մեջքի վրա և նույնիսկ վեր կենալ անկողնից։ Մի քանի օր նա անցկացրեց շրջապատի նկատմամբ լրիվ անտարբերության ու անդորրության վիճակում։ Նա ուզում էր մենակ լինել, ու երբ Ակսինյան այցելության էր գալիս, նա դժկամորեն էր պատասխանում հարցերին և թեթևացած շունչ էր առնում, երբ Ակսինյան գնում էր։ Իլյինիչնան ուրախանում էր, որ երեխաները օրվա մեծ մասը բակում են անցկացնում, և Դունյաշկան ուշ-ուշ է ներս մտնում, չի անհանգստացնում այլևայլ հարցերով։ Նա այլևս ոչ ոքի ցավակցության ու սփոփանքի կարիքը չէր զգում։ Այնպիսի ժամանակ էր հասել, երբ խստորեն պահանջվում էր մենակ մնալ՝ իր կյանքից շատ բան վերհիշելու համար։ Եվ նա, կիսափակելով աչքերը, ժամերով պառկում էր առանց շարժվելու, միայն ուռած մատներն էին տնտղում վերմակի ծալերը, և այդ ժամերի ընթացքում ամբողջ կյանքն անցնում էր նրա առջևից։

Զարմանալի է,— որքա՜ն կարճ ու խղճուկ էր այդ կյանքը և որքան ծանրություն ու կսկիծ կար նրա մեջ, մի բան, որ նա չէր ուզում վերհիշել։ Չգիտես ինչու իր հուշերում ու մտքերում նա ամենից հաճախ դառնում էր դեպի Գրիգորին։ Գուցե այն պատճառով, որ Գրիգորիի բախտի համար նա շարունակ անհանգստանում էր բոլոր տարիներին, պատերազմի սկզբից, և այն ամենը, ինչ որ այժմ նրան կապում էր կյանքի հետ, միայն Գրիգորիով էր պայմանավորված։ Բերևս ավագ որդու և ամուսնու կարոտը աղոտել էր, չքացել ժամանակի ընթացքում, ու դրանց, մեռածներին, նա հազվադեպ էր վերհիշում, և դրանք կարծես գորշ մշուշի միջից էին պատկերանում։ Նա դժկամորեն էր մտաբերում իր ջահելությունը, ամուսնական կյանքը։ Այդ բոլորը ուղղակի հարկավոր չէր, շատ էր հեռացել և ոչ ամոքում, ոչ էլ ուրախություն էր բերում։ Ու վերջին հուշերում անդրադառնալով անցյալին, նա խստաբարո և մաքուր էր մնում։ Եվ ահա «փոքր տղեն» նրա հիշողության մեջ պատկերանում էր մեծագույն, գրեթե շոշափելի պայծառությամբ։ Սակայն բավական էր, որ Իլյինիչնան մտածեր նրա մասին, որպեսզի

իսկույն ևեթ զգար սրտի արագ բաբախումը։ Հետո վրա էր հասնում շնչահեղձությունը, նրա դեմքը մթնում էր և նա երկար պառկում էր ուշագնաց վիճակում, բայց շունչ առնելով, վերստին մտածում էր որդու մասին։ Նա հո չէր կարող մոռանալ իր վերջին որդուն...

Մի անգամ Իլյինիչնան պառկած էր օթախում։ Դրսում շողում էր միջօրեի արևը։ Երկնքի հարավային ծայրամասում, կուրացուցիչ լազուրում վեհորեն սահում էին սպիտակ, հողմավար ամպերը։ Խուլ անդորրությունը խախտվում էր միայն ծղրիդների միալար, քնաբեր ծղրտոցով։ Դրսում, հենց պատուհանի տակ պահպանվել էին արևից չչորացած, տան հիմքին փարված խոտաբույսերը,— կիսաթառամած թայլը և մեջեմեջ — խոպուկն ու սեզը։ Հենց դրանց մեջ էլ ապաստան էին գտել ու ծղրտում էին ծղրիդները։ Իլյինիչնան ունկընդրեց նրանց անլռելի ծղրտոցին, զգաց արևից տաքացած խոտաբույսերի բուրմունքը, որ թափանցել էր օթախը, ու նրա աչքերի առաջ, որպես տեսիլ, մի ակնթարթ պատկերացավ արևով խարկված օգոստոսյան տափաստանը, ցորենի արտերի ոսկեվուն խոզանը, գորշավուն մուժով շղարշված հուրհրան-կապույտ երկինքը...

Նա պարզ տեսնում էր եզները, որոնք արածում էին արտերի օշինդրոտ սահմանում, տեսնում էր պաստառով ծածկված սայլը, լսում ծղրիդների ճռճռան ծղրտոցը, ներշնչում օշինդրի տտիպ, դառը բույրը... Նա տեսավ և իրեն,— ջահել, բարձրահասակ, գեղեցիկ... Ահա գնում է նա, շտապում դեպի դաշտակայան։ Նրա ոտների տակ խշշում է խոզանը, ծակծկում մերկ սրունքները, տաք քամին նրա մեջքի վրա չորացնում է քրտինքով թրջված յուրկայի մեջ դրած շապիկը, այրում վիզը։ Նրա դեմքը վառվում է կարմրությունից, ականջները ճնկում են արյան հորդումից։ Ծալած ձեռքով նա պահում է ծանր, պիրկ, կաթով լեցուն ստինքները, ու լսելով մանկան աղեկտուր լացը, արագացնում է քայլերը, արձակում շապկի օձիքը։

Նրա հողմահար շուրթերը դողում են ու ժպտում, երբ նա սայլից կախած օրորոցից վերցնում է փոքրիկ, թուխլիկ Գրիշատկային։ Կրծքի խաչի քրտնքոտ դայթանը ատամներով պահած, նա հապճեպորեն ծիծ է տալիս երեխային,

սեղմած ատամների միջից շշնջում՝ «Ջանս, բալիկս, խորոտիկս, մերդ քեզ սովա՞ծ է թողել, հա՞...» Գրիշատկան դեռ էլի նեղացած հեծկլտալով, ծծում է ու ատամիկներով ցավագին բռնում պտուկը։ Իսկ նրանց կողքին կանգնել, գերանդին է սրում Գրիշատկայի երիտասարդ, սևաթեղ հայրը։ Իլյինիշնան խոնարհած արտևանունքների տակից տեսնում է նրա ժպիտը և ծիծաղկոտ աչքերի կապտավուն սպիտակուցները... Իլյինիշնան շոգից դժվարությամբ է շնչում, քրտինքը հոսում է ճակատից ու խտղտում այտերը, ու աչքերի առաջ մթագնում, մթագնում է լույսը...

Նա բացեց աչքերը, ձեռքը տարավ արցունքներով թրջված դեմքի վրայով ու հետո երկար մնաց պառկած, տանջվելով շնչահեղձության ամենադաժան մոլուցքից, երբեմնակի ընկնելով ուշագնացության մեջ։

Երեկոյան, երբ Դունյաշկան և իր ամուսինը քնեցին, նա հավաքեց ուժերի վերջին մնացորդները, վեր կացավ, դուրս ելավ բակը։ Ակսինյան, որ մինչև ուշ երեկո փնտրում էր նախրից կորած կովը, վերադարձավ տուն և տեսավ, թե ինչպես Իլյինիշնան դանդաղաքայլ, օրորվելով անցավ դեպի կալը։ «Ինչո՞ւ նա հիվանդ վիճակում գնաց այնտեղ»,— զարմացավ Ակսինյան, ու զգուշությամբ անցնելով Մելեխովների կալի ցանկապատից, նայեց այնտեղ։ Շողում էր լիալուսինը։ Տափաստանից սուրում էր զեփյուռը։ Սղոտի դեզից խիտ ստվեր էր ընկել քարե գլդոններից ճաքճքված, դատարկ կալի վրա։ Իլյինիշնան կանգնել էր ձեռքերը ցանկապատին հենած, նայում էր տափաստանին, այնտեղ, ուր ինչպես հեռավոր, անհաս մի աստղիկ, առկայծում էր հնձվորների վառած խարույկը։ Ակսինյան պարզ տեսնում էր Իլյինիշնայի ուռած, լուսնի կապտավուն շողքով լուսավորված դեմքը, ալեզարդ մազերը, որ թափվել էին պառավական սև շալի տակից։

Իլյինիշնան երկար նայեց մթնշաղված, կապուտաշող տափաստանին, հետո էլ կանչեց ցածր ձայնով, կարծես Գրիգորին հենց այդտեղ, իր կողքին էր կանգնած.

— Գրի՛շենկա, որդյակս։— Մի փոքր լռեց և արդեն ուրիշ, ավելի ցածր և խուլ ձայնով ասաց.— արյո՛ւնս, հարազատս...

Վշտի ու երկյուղի անբացատրելի մի զգացմունքով համակված Ակսինյան ցնցվեց ամբողջ մարմնով, ու, ցանկապատից արագ ետ քաշվելով, գնաց տուն։

Այդ գիշեր Իլյինիշնան հասկացավ, որ շուտով կմեռնի, որ մահը արդեն մոտեցել է իր սնարին։ Լուսաբացին նա սնդուկից հանեց Գրիգորիի շապիկը, ծալեց ու դրեց բարձի տակ. պատրաստեց նաև իր մահվան հագուստը, որ իրեն պիտի հագցնեին վերջին շունչը փչելուց հետո։

Առավոտյան, ինչպես միշտ, Դունյաշկան ներս մտավ մորը տեսնելու։ Իլյինիշնան բարձի տակից հանեց Գրիգորիի կանոնավոր ծալված շապիկը, լուռ ու մունջ մեկնեց Դունյաշկային։

— Այս ի՞նչ է,— զարմացած հարցրեց Դունյաշկան։

— Գրիշայի շապիկն է... Տուր մարդուդ, թող հագնի, նրա հին շապիկը երևի փտել է քրտնքից...— հազիվ լսելի ասաց Իլյինիշնան։

Դունյաշկան սնդուկի վրա տեսավ մոր սև յուբկան, շապիկը և գործվածքային քոշերը,— այն ամենը, ինչ որ հուղարկավորումից առաջ հագցնում են կին-ննջեցյալին,— տեսավ ու սփրթնեց։

— Այս ի՞նչ է, մայրիկ, մահվան շորե՞ր եք պատրաստել։ Վերցրեք, ի սեր Քրիստոսի։ Տե՛ր աստված, ախր ձեզ համար վաղ է մահվան մասին մտածելը։

— Չէ,— ժամանակն է... — շշնջաց Իլյինիշնան.— հերթը իմն է... Երեխեքին լավ մտիկ արա, պահի, մինչև որ Գրիգորին վերադառնա... Իսկ ես, ոնց որ երևում է, չեմ տեսնի նրան... Ա՛խ, չեմ տեսնի...

Իլյինիշնան շուռ եկավ պատի կողմը և շալով ծածկեց դեմքը, որպեսզի Դունյաշկան չտեսներ իր արցունքները։

Երեք օրից հետո նա մեռավ։ Իլյինիշնայի հասակակից կանայք լողացրին նրա դիակը, մահվան հագուստ հագցրին, պառկեցրին օթախում, սեղանի վրա։ Ակսինյան երեկոյան եկավ հանգուցյալին հրաժեշտ տալու։ Տեսնելով մեռած, փոքրիկ պառավի դալուկ խստաբարո դեմքը, նա դժվարությամբ ճանաչեց առաջվա հպարտ, արի Իլյինիշնայի կերպարանքը։ Շուրթերը հպելով հանգուցյալի դեղին, սառն ճակատին, Ակսինյան նկատեց իրեն ծանոթ, արձակ, սպի-

տակ լաչակի տակից դուրս թափված ալեզարդ մազափունջը և փոքրիկ, կլոր, ասես ջահել կնոջ ականջակոնքը։

Դունյաշկայի համաձայնությամբ Ակսինյան երեխաներին տարավ իր մոտ։ Նա կերակրեց լռակյաց և նոր մահից վախեցած երեխաներին, պառկեցրեց իր հետ քնելու։ Տարօրինակ զգացմունք էր ապրում նա՝ գրկելով հարազատ մարդու երեխաներին, որոնք երկու կողմից փարվում էին նրան և լուռ էին։ Ցածր ձայնով նա սկսեց նրանց պատմել մանկութ լսած հեքիաթները, որպեսզի մի կերպ զբաղեցներ նրանց, վաներ նրանց մտքերը մեռած տատի մասին, կամացուկ, ծոր տալով վերջացնում էր նա խեղճ որբուկ Վանյուշկայի վերաբերյալ հեքիաթը.

Սագեր-կարապներ,
Վերցրեք դուք ինձ
Սպիտակ թևերով,
Ու տարեք դուք ինձ
Իմ հայրենական,
Հարազատ հողը...

Ու դեռ չէր վերջացրել հեքիաթը, երբ լսեց երեխաների հանգիստ, համաչափ շնչառությունը։ Միշատկան պառկել էր մի կողմից, դեմքը պինդ սեղմել նրա ուսին։ Ակսինյան ուսի շարժումով զգուշությամբ շտկեց ետ ընկած նրա գլուխը և հանկարծ սրտում այնպիսի անողոք, խոցող թախիծ զգաց, որ կոկորդը բռնվեց ջղակծկումով։ Ծանր ու դառն լացեց նա՝ դողալով իրեն ցնցող հեկեկանքից, բայց նա նույնիսկ չէր կարող սրբել արցունքները,— նրա գրկում քնած էին Գրիգորիի երեխաները, իսկ նա չէր ուզում դրանց արթնացնել։

IV

Իլյինիչնայի մահից հետո Կոշևոյը, մնալով իբրև միակ և լիովին իշխող տանտեր, կարծես թե պետք է է՛լ ավելի մեծ ջանադրությամբ ձեռնամուխ լիներ տնտեսության վերակառուցմանը, դրա հետագա ընդարձակմանը, բայց իրականում այդպես չեղավ. Միշկան օրեցօր ավելի քիչ եռանդով էր աշխատում, ավելի հաճախ էր բացակայում տանից, իսկ երեկոները մինչև ուշ գիշեր նստում էր մուտքի սանդուղքին, ծխում, մտածում ինչ-որ բանի մասին։ Դունյաշկան չէր կարող չնկատել ամուսնու մեջ կատարված փոփոխությունը։ Նա երբեմնակի զարմանքով տեսնում էր, թե ինչպես Միշկան, որը առաջ աշխատում էր անձնվիրությամբ, հանկարծ չգիտես ինչու թողնում էր կացինը կամ ռանդան և որևէ տեղ նստում հանգստանալու։ Նույնն էր կատարվում նաև դաշտում, երբ ցանում էին աշնանացան տարեկանը. մեկ էլ տեսար Միշկան մի-երկու անգամ գնաց-եկավ ցանիչով, կանգնեցրեց եզները, թուփուն փաթաթեց, սկսեց ծխել. երկար նստեց արտում, կնճռոտեց ճակատը։

Հորից գործնական ուշիմություն ժառանգած Դունյաշկան անհանգստությամբ մտածում էր՝ «Երկար չդիմացավ... Կամ հիվանդ է, կամ ուղղակի ծուլանում է։ Այդպիսի մարդու հետ ես փորձանքի մեջ կընկնեմ։ Ոնց որ թե օտար մարդկանց մոտ է ապրում. օրվա կեսը ծխում է, կեսը դինջանում, իսկ աշխատելու ժամանակ չունի... Պետք է կամացուկ խոսել հետը, որ չհերսոտի, թե չէ եթե շարունակի այդպես գործ անել, կարիքը բահով էլ չես կարող դուրս հանել...»

Մի անգամ Դունյաշկան զգույշ հարցրեց.

— Դու մի տեսակ փոխվել ես, Միշա, հո հիվանդությունը չի՞ նեղում քեզ։

— Ի՞նչ հիվանդություն, է՞։ Այստեղ առանց հիվանդության էլ մարդու սիրտը խառնում է,— սրտնեղված պատասխանեց Միշկան ու քշեց եզները, քայլեց ցանիչի ետևից։

Դունյաշկան անհարմար համարեց շարունակել հարցուփորձը. վերջիվերջո ամուսնուն բան սովորեցնելը կնկա գործը չի։ Խոսակցությունը դրանով էլ վերջացավ։

Դունյաշկան սխալ ենթադրություններ էր արել։ Միակ պատճառը, որ Միշկային խանգարում էր առաջվա փութաջանությամբ աշխատել, դա նրա մեջ օրեցօր արմատավորվող այն համոզմունքն էր, որ հայրենի խուտորում ինքը վաղաժամ է անցել նստակեցության. «Ես մի քիչ շուտ ձեռք զարկեցի տնտեսության, շտապեցի...» — բարկությամբ մտածում էր Միշկան՝ օկրուգային թերթում կարդալով ռազմաճակատների ամփոփագրերը կամ երեկոներին լսելով զորացրված կարմիրբանակային կազակների պատմածները։

Բայց նրան առանձնապես անհանգստացնում էր խուտորցիների տրամադրությունը. նրանցից մի քանիսը բացահայտ ասում էին, թե մինչև ձմեռ սովետական իշխանությանը վերջ կլինի, թե Վրանգելը Ղրիմից դուրս է եկել և Մախնոյի հետ միասին արդեն մոտենում է Ռոստովին, թե դաշնակիցները Նովորոսիյսկում հսկայական դեսանտ են իջեցրել նավերից... Խուտորում մեկը մյուսից անհեթեթ լուրեր էին տարածվում։ Համակենտրոնացման ճամբարներից և հանքերից վերադարձած կազակները, որոնք ամառվա ընթացքում կուշտ ու կուռ կերել էին տնական ուտելիքը ու շաղացել, իրենց առանձնացած էին պահում, գիշերները օղի էին խմում, իրենց ինչ-որ ասուլիսն էին անում, իսկ Միշկային հանդիպելիս շինծու անտարբերությամբ հարցնում էին. «Դու թերթեր ես կարդում, Կոշևոյ, պատմի, ո՞նց է այնտեղ, Վրանգելին շո՞ւտ կաղկեն։ Դրո՞ւստ է, թե՞ սուտ է, որ դաշնակիցները էլի մեզ վրա են քշում»։

Մի անգամ, կիրակի երեկոյան եկավ Պրոխոր Զիկովը։ Միշկան հենց նոր էր վերադարձել դաշտից, մուտքի սանդուղքի մոտ կանգնած՝ լվացվում էր։ Դունյաշկան սափորից ջուր էր լցնում նրա ձեռքերին, ժպտալով նայում ամուսնու նիհար, արևից սևացած պարանոցին։ Բարևելով, Պրոխորը նստեց սանդուղքի ստորին աստիճանի վրա, հարցրեց.

— Գրիգորի Պանտելեիչի մասին իսկի լուր չկա՞։

— Ո՛չ,— պատասխանեց Դունյաշկան,— չի գրում։

— Իսկ դու կարոտե՞լ ես նրան, հա՞,— Միշկան սրբեց երեսն ու ձեռները, առանց ժպիտի նայեց Պրոխորի աչքերին։

Պրոխորը հոգոց հանեց, շտկեց շապկի դատարկ թևքը։

— Բա ո՞նց։ Ամբողջ ծառայությունը միասին ենք կատարել։

— Էլի՞ միտք ունեք կատարելու։

— Ի՞նչը։

— Ծառայությունը, էլի։

— Մենք այդ արդեն վերջացրել ենք։

— Իսկ ես կարծում էի, թե դու սպասում ես նրան, որ էլի ծառայեք,— նույնպես առանց ժպիտի շարունակեց Միշկան,— էլի կռվեք սովետական իշխանության դեմ...

— Այդ մեկը դու զուր ես ասում, Միխայիլ,— նեղացած պատասխանեց Պրոխորը։

— Ո՞նց թե զուր։ Ես լսում եմ,— խուտորում ամեն տեսակ խոսակցություններ են լինում։

— Ես այդ տեսակ բանե՞ր եմ ասել, հա՞, ո՞րտեղ ես լսել։

— Ոչ թե դու, այլ քեզ ու Գրիգորիի նման մարդիկ, որոնք շարունակ «յուրայիններին» են սպասում։

— Ես այդ «յուրայիններին» չեմ սպասում, ինձ համար բոլորն էլ մեկ են։

— Ա՛յ, հենց վատն էլ այդ է, որ քեզ համար բոլորն էլ մեկ են։ Գնանք տուն, շնեղանաս, ես հանաք արեցի։

Պրոխորը տհաճությամբ բարձրացավ սանդուղքով ու հաշտի շեմքից անցնելիս ասաց.

— Քո հանաքները, աղբերս, այնքան էլ ուրախալի չեն... Հինը պետք է մոռանալ։ Ես այդ հնի համար արդարացված եմ։

— Հնից ամեն բան չի մոռացվում,— չոր տոնով ասաց Միշկան՝ սեղան նստելով։— Նստիր մեզ հետ ընթրենք։

— Շնորհակալություն։ Իհարկե ամեն բան չի մոռացվում։ Ա՛յ, ես զրկվել եմ թևիցս, ուրախությամբ կմոռանայի այդ, ամա ո՞նց մոռանաս, ամեն մի վայրկյան միտդ է գալիս։

Դունյաշկան սեղան գցելով, առանց ամուսնուն նայելու հարցրեց.

— Քո ասելով ուրեմն ով ծառայել է սպիտակների մոտ, էլ ներում չկա՞ նրան, հա՞։

— Բա դու ի՞նչ էիր կարծում։

— Ես այն էի կարծում, որ ով հինը հիշի, ասում են, նրա աչքը պիտի հանել։

— Դե, գուցե դա ավետարանում է ասված,— սառը տոնով վրա բերեց Միշկան,— իսկ իմ կարծիքով մարդը միշտ պետք է պատասխան տա իր գործերի համար։

— Իշխանությունը դրա մասին ոչինչ չի ասում,— կամացուկ ասաց Դունյաշկան։

Նա չէր ուզում կողմնակի մարդու ներկայությամբ վեճի բռնվել ամուսնու հետ, բայց հոգու խորքում նա նեղացած էր

Միխայիլից՝ Պրոխորի նկատմամբ վերջինիս այն կատակի համար, որը, ինչպես թվում էր Դունյաշկային, անտեղի էր, և այն թշնամանքի համար, որ ամուսինը ցուցաբերել էր դեպի նրա եղբայրը։

— Նա, իշխանությունը, քեզ ոչինչ չի ասում, նա քեզ հետ խոսելիք չունի, իսկ սպիտակների մոտ ծառայելու համար պետք է պատասխանատու լինել սովետական օրենքի առաջ։

— Ուրեմն ես է՞լ պետք է պատասխան տամ,— հետաքրքրվեց Պրոխորը։

— Քո գործը հորթի գործ է,— կեր ու պառկի։ Այստեղ սպասյակներից բան չեն պահանջում, իսկ Գրիգորին պատասխան կտա, երբ տուն կգա։ Մենք նրանից հաշիվ կպահանջենք ապստամբության համար։

— Դո՞ւ պետք է հաշիվ պահանջես, հա՞։— Դունյաշկայի աչքերը կայծկլտեցին, նա կաթով լցված քրեղանը դրեց սեղանին։

— Ես է՛լ կպահանջեմ,— հանգիստ պատասխանեց Միշկան։

— Այդ քո գործը չի... Առանց քեզ էլ պահանջողներ կգտնվեն։ Նա Կարմիր բանակում ներման է արժանացել...

Դունյաշկայի ձայնը դողում էր։ Նա նստեց սեղանի մոտ, սկսեց մատներով տնտղել գոգնոցի բոլորքը։ Միշկան, որ կարծես չէր է՛լ նկատել կնոջը համակած հուզմունքը, նույն հանգստությամբ շարունակեց.

— Ինձ համար էլ հետաքրքիր է պահանջել։ Իսկ ներման համար պետք է սպասել... Հլա դեռ պետք է իմանալ, թե նա ինչպես է արժանացել ներման։ Նա մեղանից քիչ արյուն չի թափել։ Հլա դեռ պետք է չափել, թե ում թափած արյունն ավելի շատ է...

Դա առաջին զժտությունն էր Դունյաշկայի հետ ապրելու ամբողջ ժամանակվա ընթացքում։ Խոհանոցում անհարմար լռություն էր տիրում։ Միշկան անխոս ուտում էր կաթը, երբեմն սրբիչով սրբում շրթունքները։ Պրոխորը ծխում էր, նայում Դունյաշկային։ Հետո նա խոսեց տնտեսության մասին։ Նստեց էլի մոտ կես ժամ։ Գնալուց առաջ հարցրեց.

— Կիրիլ Գրոմովն է եկել։ Լսե՞լ ես։

— Ո՛չ։ Ո՞րտեղից է եկել։

— Կարմիրների մոտից։ Նույնպես եղել է Առաջին հեծյալ բանակում։

— Նա՞ էր Մամոնտովի մոտ ծառայում։

— Հենց նա։

— Քաջ կռվող էր,— քմծիծաղ տվեց Միշկան։

— Ո՞րտեղից։ Ալան-Թալանի մեջ առաջինն էր։ Նա թեթև ձեռք ունի, դրա համար։

— Նրա մասին պատմում էին, որ անգութ կերպով թրատում էր գերիներին։ Ջինվորի կոշիկների համար էր սպանում։ Հենց միայն կոշիկներով օգտվելու համար։

— Այդպիսի լուր կար,— հաստատեց Պրոխորը։

— Նրան է՞լ պետք է ներել,— հեգնանքով հարցրեց Միշկան,— միթամ թե աստված ներում է թշնամիներին և մեզ էլ նույնն է պատվիրում, հա՞։

— Դե, ո՛նց ասեմ... Նրանից ի՞նչ պահանջես։

— Գիտեմ թե ինչ... — Միշկան կկոցեց աչքերը։— Ես նրան այնպիսի մի բան կանեի, որ ուղղակի շունչը փչեր։ Նա դրանից չի պրծնի։ Վեշկիում կա Դոնչեկա, նա կգա դրա հախիցը։

Պրոխորը ժպտաց, ասաց.

— Դրուստ որ, կուզիկին գերեզմանը կշտկի։ Նա Կարմիր բանակից էլ ալան-թալանով է եկել։ Նրա կնիկը իմ կնկա մոտ պարծեցել է, թե մարդը նրա համար ինչ-որ վերարկու, մի քանի ձեռք շոր ու էլի ուրիշ շատ բան է բերել։ Այդ Գրոմովը եղել է Մասլակի բրիգադում ու այնտեղից տուն ծլկել։ Անպատճառ փախած կլինի, հետն էլ զենքեր է բերել։

— Ի՞նչ զենքեր,— հետաքրքրվեց Միշկան։

— Հասկանալի է թե ինչ զենքեր. մի կարճլիկ հրացան, նագան, գուցե թե էլի ուրիշ բաներ։

— Չգիտե՞ս, նա գնացե՞լ է Սովետում ցուցակագրվելու։

Պրոխորը ծիծաղեց, թափ տվեց ձեռքը։

— Նրա վիզը չվան գցես, էլի չես կարող տանել այնտեղ։ Ես կարծում եմ, որ նա փախած է։ Այսօր-էգուց կծլկի տանից։ Ա՛յ, երևում է, որ Կիրիլը դեռ կռվելու միտք ունի, իսկ դու իմ մասին ես մեղք բան ասում։ Չէ, աղրեր, ես իմ բաժինը կռվել-պրծել եմ, բոլորովին կշտացել եմ այդ բարիքից։

Պրոխորը շուտով գնաց։ Մի քիչ հետո Միշկան էլ դուրս ելավ։ Դունյաշկան կերակրեց երեխաներին և հենց պատրաստվում էր պառկելու, երբ ներս մտավ Միշկան։ Ձեռքին կար պարկի գործվածքով փաթաթած ինչ-որ առարկա։

— Սատանեն ո՞ւր էր տարել քեզ,— անսիրալիր հարցրեց Դունյաշկան։

— Օժիտս էի հանում,— բարեսրտությամբ ժպտաց Միշկան։

Նա բացեց խնամքով փաթաթած հրացանը, փամփուշտներից ուռճացած փամփշտանոցը, մի նագան ու երկու ձեռնանոցակ։ Այդ բոլորը դրեց նստարանի վրա և մի պնակի մեջ զգուշությամբ նավթ լցրեց։

— Ո՞րտեղից են դրանք,— Դունյաշկան հոնքերի շարժմամբ ցույց տվեց զենքերը։

— Իմն են, ռազմաճակատից են։

— Բա ո՞րտեղ էիր պահել։

— Որտեղ էլ որ պահած լինեմ, հիմի հո ձեռքումս են։

— Ա՛յ թե ինչ տեսակ գաղտնիք պահողն ես, հա՛-ա... Ոչինչ էլ չես ասել։ Կնոջիցդ է՞լ թաքուն գործեր ես անում։

Միշկան շինծու անհոգությամբ ժպտալով և պարզապես շողոքորթելով ասաց.

— Քո ինչի՞ն էր պետք իմանալ, Դունյաշկա։ Սա կնկա գործ չի։ Թող սա, այս գույքը մնա, աղջի, սա տան մեջ ավելորդ բան չի։

— Բա ինչո՞ւ տուն բերիր։ Դու հո օրենսգետ ես դարձել, ամեն ինչ գիտես... Բա դրա համար օրենքով դու պատասխան չե՞ս տալու։

Միշկան խիստ դեմք ընդունեց, ասաց.

— Դու դմբո ես։ Երբ Կիրյուշկա Գրոմովը զենք է բերում, դա վնաս է սովետական իշխանության, իսկ երբ ես եմ բերում, դա օգտակար է սովետական իշխանության համար, և ուրիշ ոչինչ։ Հասկանո՞ւմ ես։ Ես ո՞ւմ առաջ պետք է պատասխանատու լինեմ։ Աստված գիտի ինչ ես դուրս տալիս, պառկիր, քնի՛ր։

Միշկան հանգեց իր կարծիքով միակ ճիշտ հետևության. եթե դեռ չջախջախված սպիտակ թափթփուկները զենքերով են գալիս, ապա ինքը պետք է զգոն լինի։ Նա խնամքով

մաքրեց հրացանն ու նագանը, իսկ առավոտ ծեգին ատքով մեկնեց Վեշենսկայա։

Դունյաշկան նրա համար ֆամփշտանոցի մեջ ճամփապաշար դնելով, բարկությամբ ու ջանագին բաշականեց.

— Դու ինձ հետ միշտ էլ լուսնաղ ես խաղում։ Գոնե ասա, երկա՞ր ժամանակով, և ի՞նչ գործով ես գնում։ Սա ի՞նչ բան է, ի՞նչ կյանք է։ Վեր է կացել գնում է, ու քանանից մի խոսք էլ չես գալիս... Դու մա՞րդ ես, թե՞ տարի մեկը։

— Գնում եմ Վեշկի, հանձնաժողովի, էլ ի՞նչ պիտի ասեմ քեզ։ Կվերադառնամ, այն ժամանակ ամեն ինչ կիմանաս։

Ֆամփշտանոցը ձեռքով պահած, Միշկան իջավ Դոն, նավակ նստեց և արագ քշեց մյուս ափը։

Վեշենսկայա, բժշկական հանձնաժողովում զննությունից հետո բժիշկը Միշկային կարճ ասաց.

— Դուք, ընկերոջ ընկեր, պիտանի չեք հարմիր բանակի շարքերում ծառայելու։ Մալարիան շատ է մաշել ձեզ։ Պետք է բուժվել, թե չէ բանը վատ կլինի։ Այսպիսի մարդիկ Կարմիր բանակին հարկավոր չեն։

— Բա ինչպիսի՞ մարդիկ են հարկավոր։ Երկու տարի ծառայել եմ, իսկ հիմի հարկավոր չե՞մ։

— Հարկավոր են ամենից առաջ առողջ մարդիկ։ Կառողջանաք, դուք էլ պետք կգաք։ Վերցրեք դեղատոմս, շեղատոմսը խիստին ստացեք։

— Այդպե-ե-ես, ամեն ինչ հասկանալի է։— Կոշնոյը այնպես էր հագնում վեհանաշապիկը, ինչպես անուրը անց են կացնում խլրկոտող ձիու վրա։— Չէր կարողանում գլուխն անցկացնել օձիքից, շալվարը արդեն փոշոցում կոճկեց և ուղիղ ճանապարհով գնաց պարտիայի օկրուգային կոմիտե։

...Միշկան Տատարսկի վերադարձավ որպես ֆուտուրի ռևկոմի նախագահ։ Կարճ բարևելով կնոջը, ասաց.

— Է՛հ, հիմի կտեսնենք։

— Ինչի՞ մասին ես խոսում,— զարմացած հարցրեց Դունյաշկան։

— Էլի նույն բանի մասին։

— Ինչի՞ մասին։

— Ինձ նախագահ են նշանակել։ Հասկանալի՞ է։

Դունյաշկան դառնապես ձեռքերն իրար զարկեց։ Նա

ուզում էր մի բան ասել, բայց Միշկան չլսեց նրան, հայելու առաջ շտկեց խունացած, պաշտպանական գույնի վերնաշապկի վրա կապած գոտին ու գնաց Սովետ։

Զմեռվանից ռևկոմի նախագահ էր ծերունի Միխեևը։ Աչքերից թույլ և խուլ այդ ծերունին դժվարությամբ էր կատարում իր պարտականությունները և մեծագույն ուրախությամբ իմացավ Կոշևոյից, որ սա եկել է իրեն փոխարինելու։

— Ահա թղթերը, գառնիկս, ահա խուտորի կնիքը, վերցրու, ի սեր Քրիստոսի,— ասում էր նա անկեղծ ուրախությամբ, խաչակնքելով ու շփելով ձեռքերը։— Ես ութսուն տարեկան եմ, կյանքումս պաշտոն չեմ ունեցել, իսկ հիմի ծեր հասակումս վիճակվեց... Սա ձեր, ջահելների գործն է, ինձ ո՞րտեղից սազի։ Ոչ կարգին տեսնում եմ, ոչ էլ կարգին լսում... Աստծուն աղոթելու ժամանակն է, իսկ ինձ նախագահ էին նշանակել...

Միշկան թուղթիկ կերպով նայեց ստանիցայի ռևկոմից ուղարկված հրամանագրերը և հրամանները, հարցրեց.

— Քարտուղարը ո՞րտեղ է։

— Հը՞...

— Է՛, գրողի տարած, ասում եմ քարտուղարը ո՞րտեղ է։

— Քարտուղա՞րը։ Տարեկան է ցանում։ Կեծակը նրան զարկի, շաբաթը մի անգամ է այստեղ գալի։ Ստանիցայից մեկ էլ տեսար թուղթ է գալի, պետք է կարդալ, իսկ նրան շներով էլ ման գաս, չես գտնի։ Կարևոր թուղթը այդպես էլ մնում է մի քանի օր, կարդացո՞ւչի լինում։ Իսկ ես գրի սեն ու սպիտակը լավ չեմ ջոկում, ոֆ, չեմ ջոկում։ Դժվարությամբ եմ ստորագրում, իսկ կարդալ իսկի չեմ կարողանում, միայն կնիք խփել գիտեմ...

Կոշևոյը հոնքերը կիտած դիտում էր ռևկոմի դատարկ սենյակը, որ զարդարված էր միայն մի հին, ճանճերի կեղտոտած պլակատով։

Ծերունին այնքան ուրախացավ իրեն ազատելուց, որ նույնիսկ խիզախեց կատակ անել. լաթով փաթաթած կնիքը հանձնելով Կոշևոյին, ասաց.

— Ահա և խուտորի ամբողջ տնտեսությունը, փող-մող չկա, իսկ սովետական իշխանության օրով ատամանի գավազան չի կարելի ունենալ։ Եթե ուզում ես, կարող եմ տալ

իմ, ծերուկիս դագանակը։— Ու ժպտալով, բանալով անատամ բերանը, մեկնեց ձեռքի ափից հղկված հացենու ձեռնափայտը։

Բայց Կոշևոյը գլուխ չուներ կատակների հետ։ Նա մի անգամ էլ դիտեց ռևկոմի խղճուկ, քոսոտ սենյակը, մռայլվեց և հոգոց հանելով ասաց.

— Սեպենք թե ես քեզանից ընդունեցի գործերը, պապի։ Հիմի փասա-փուսեդ առ, քաշվի այստեղից։— Ու աչքերով ազդու կերպով ցույց տվեց դուռը։

Հետո էլ նստեց սեղանի մոտ, արմունկները լայն դրեց սեղանին ու երկար մնաց մենակ նստած, ատամներն իրար սեղմելով, ստորին ծնոտը դեպի առաջ պարզած։ Աստվա՛ծ իմ, ի՞նչ տեսակ շան որդի է եղել ինքը այդ ամբողջ ժամանակ, երբ հողն է փորփրել առանց գլուխը բարձրացնելու և պատշաճապես չի ունկնդրել այն ամենին, ինչ որ տեղի էր ունենում շուրջը... Իր և ամբողջ շրջապատի վրա սարսափելի չարացած, Միշկան վեր կացավ սեղանից, շտկեց վերնաշապիկը ու, նայելով մի կողմ, առանց ատամներն իրարից անջատելու ասաց.

— Ես ձեզ ցույց կտամ, աղավնյակներ, թե ինչ է սովետական իշխանությունը։

Նա դուռը պինդ ծածկեց, շղթան գցեց կեռից, հրապարակի միջով քայլեց դեպի տուն։ Եկեղեցու մոտ հանդիպեց պատանի Օբնիզովին, գլխով անփույթ բարևեց նրան, անցավ նրա կողքից ու, հանկարծ ինչ-որ միտք հղանալով, շուռ եկավ.

— Է՛յ, Անդրյուշկա, կաց, եկ այստեղ։

Շեկլիկ, ամաչկոտ տղան լուռ մոտեցավ նրան։ Միշկան որպես չափահասի, ձեռքը մեկնեց նրան, հարցրեց.

— Ո՞ւր ես գնում, խուտորի մյուս ծա՞յրը։ Հա, ուրեմն մա՞ն ես գալի։ Գործո՞վ ես գնում։ Այ թե ինչ եմ ուզում հարցնել քեզ. դու սովորել ես բարձր տարրականում, հը՞։ Սովորե՞լ ես։ Այդ լավ է։ Իսկ գրասենյակի գործ գիտե՞ս։

— Ի՞նչ գործ։

— Սովորական, էլի՛։ Ջանազան ելից-մտից բաներ։

— Դու ինչի՞ մասին ես ասում, ընկեր Կոշևոյ։

— Թղթերի մասին, էլի, թե ինչ տեսակ են լինում։ Դու

այդ գիտե՞ս։ Դե, լինում են ուղարկվող և ուրիշ ամեն տեսակ թղթեր։— Միշկան անորոշ կերպով շարժեց մատները ու դեռ պատասխան չստացած, կտրուկ ասավ.— Եթե չգիտես, հետո կսովորես։ Ես հիմի խուտորի ռևկոմի նախագահն եմ, իսկ քեզ, ինչպես գրագետ տղայի, քարտուղար եմ նշանակում։ Գնա ռևկոմի շենքը ու այնտեղ հսկիր գործերին, դրանք բոլորն էլ սեղանի վրա են, իսկ ես շուտով կգամ։ Հասկացա՞ր։

— Ընկե՛ր Կոշևոյ։

Միշկան ձեռքը թափ տվեց, անհամբերությամբ ասաց.

— Դրա մասին հետո կխոսենք, գնա, անցիր պաշտոնիդ։— Ու դանդաղ, համաչափ քայլքով գնաց փողոցով։

Տանը նա նոր շալվար հագավ, նագանը դրեց գրպանը, ու հայելու առաջ խնամքով շտկելով գլխարկը, ասաց կնոջը.

— Գործով գնում եմ մի տեղ։ Եթե հարցնող լինի, թե որտեղ է նախագահը, ասա, որ շուտով կվերադառնա։

Նախագահի պաշտոնը որոշ բաներ էր պարտավորեցնում... Միշկան դանդաղ, ծանր ու մեծ էր քայլում. նրա քայլվածքն այնքան արտասովոր էր, որ խուտորցիներից ոմանք հանդիպելիս կանգ էին առնում ու ժպտալով նայում նրա ետևից։ Պրոխոր Զիկովը նրան հանդիպելով մի փողոցում, կատակով ու պատկառանքով ետ-ետ գնաց դեպի ցանկապատը, հարցրեց.

— Հը՛, այդ ի՞նչ է, Միխայիլ։ Լի օրը լավ-լավ բաներ ես հագել ու ոնց որ թե տոնահանդեսի ես դուրս եկել... Հո նորից նշանվելու չե՞ս գնում։

— Դրա պես մի բան,— պատասխանեց Միշկան՝ լրջաբար սեղմելով շրթունքները։

Գրոմովի տան դարպասի մոտ նա առանց կանգ առնելու ձեռքը տարավ գրպանը, ծխախոտի պարկը հանելու, աչալրջությամբ դիտեց լայն բակը, դրա ցաք ու ցրիվ շենքերը, տան պատուհանները։

Կիրիլ Գրոմովի մայրը հենց այդ ժամանակ դուրս եկավ հաշտից։ Իրանը ետ գցած, նա մանր կտրատած կերի դդում էր տանում լագանով։ Միշկան քաղաքավարությամբ բարևեց նրան, քայլեց դեպի մուտքը։

— Կիրիլը տա՞նն է, մորաքույր։

— Տանն է, տանն է, անցիր ներս,— մի կողմ քաշվելով ասաց պառավը։

Միշկան մտավ մութ հաշտը, կիսախավարում գտավ դռան բռնակը։

Կիրիլն ինքը նրա առաջ բացեց օթախի դուռը, մի շայլ ետ գնաց։ Նա մաքուր սափրված էր, ժպտում էր ու մի քիչ խմած էր. կարճ, զննող հայացքով նայեց Միշկային, անփույթ ասաց.

— Էլի՛ մի զինվոր տղա։ Անցիր, Կոշևոյ, նստիր, հյուր կլինես։ Մենք այստեղ խմում ենք, այնպես, էլի, քիչ-քիչ...

— Կերած-խմածներդ անուշ։— Միշկան սեղմեց տանտիրոջ ձեռքը՝ նայելով սեղանի շուրջը նստած հյուրերին։

Նրա գալը պարզապես անժամանակ էր։ Միխայիլին անծանոթ, լայնալանջ մի կազակ, որ բազմել էր առջևի անկյունում, կարճ ու հարցականորեն նայեց Կիրիլին, դեն քշեց բաժակը։ Սեղանի մյուս կողմում նստած Ախվատկին Սեմյոնը,— Կորշունովների հեռավոր ազգականը,— տեսնելով Միխայիլին, հոնքերը կիտեց և հայացքը մի կողմ դարձրեց։

Տանտերը Միշկային հրավիրեց սեղան նստել։

— Շնորհակալություն հրավերիդ համար։

— Չէ, նստիր, պատիվ արա, խմիր մեզ հետ։

Միշկան նստեց սեղանի մոտ։ Տանտիրոջ ձեռքից ընդունելով օղու բաժակը, գլխով արավ.

— Շնորհավոր գալուստդ, Կիրիլ Իվանովիչ։

— Շնորհակալ եմ։ Իսկ դու վաղո՞ւց ես եկել բանակից։

— Վաղուց։ Ընտելացել եմ տուն ու տեղին։

— Ընտելացել ես և, ասում են, ամուսնացե՞լ ես։ Դե, էլ ի՞նչ ես կեղծում։ Կարգին խմիր, էլի՛։

— Չեմ ուզում։ Ես քեզ հետ գործ ունեմ։

— Չէ-է՛, աղբեր։ Հանաք չանես։ Այսօր ես գործերի մասին չեմ խոսում։ Այսօր քեֆ եմ անում ընկերներիս հետ։ Եթե դու գործ ունես, եկ վաղը։

Միշկան վեր կացավ սեղանից, հանգիստ ժպտալով ասաց.

— Գործը դատարկ բան է, ամա շտապ է։ Եկ մի ըոպե դուրս գնանք։

Կիրիլը շփելով խնամքով ոլորած, սև բեղերը, մի փոքր լռեց, հետո վեր կացավ։

— Կարելի է այստե՞ղ կասես։ Ինչո՞ւ խանգարենք քեֆը։

— Ոչ, եկ դուրս գնանք,— զուսպ, բայց կտրուկ խնդրեց Միշկան։

— Դե դուրս ել դրա հետ, էլ ի՞նչ եք բազար անում,— ասաց Միշկային անծանոթ, լայնալանջ կազակը։

Կիրիլը տհաճությամբ գնաց խոհանոց։ Վառարանի մոտ զբաղված կնոջը շշնջաց.

— Այստեղից դուրս էլ, Կատերինա։— Ու նստելով նրստարանի վրա, շոր տոնով հարցրեց.— ի՞նչ գործ է։

— Քանի՞ օր է, որ դու տանն ես։

— Ի՞նչ կա որ։

— Հարցնում եմ, քանի՞ օր ես ապրում տանը։

— Կարծեմ չորրորդ օրն է։

— Իսկ ռևկոմ գնացե՞լ ես։

— Առայժմ ոչ։

— Վեշկի, զինկոմիսարիատ գնալու միտք ունե՞ս։

— Դու այդ ի՞նչ կողմ ես ծռում։ Գործով ես եկել, գործի մասին էլ խոսիր։

— Ես հենց գործի մասին եմ խոսում։

— Այդ դեպքում գնա գրրո՛ղի ծոցը։ Ախր դու ո՞վ ես, ինչացո՞ւ ես, որ ես քեզ հաշիվ տամ։

— Ես ռևկոմի նախագահն եմ։ Ցույց տուր զորամասից ստացած վկայականդ։

— Ա-ա՛յ թե ի-ի՛նչ,— ձայնը երկարացրեց Կիրիլը և սուր, զգաստացած աչքերով նայեց Միխայիլի բիբերին։— Ա-ա՛յ թե որ կողմն ես ծռում։

— Հենց այդ կողմը։ Տո՛ւր վկայականդ։

— Այսօր կգամ Սովետ ու կբերեմ։

— Հիմա տուր։

— Չգիտեմ որտեղ է դրված։

— Գտիր։

— Ոչ, հիմի չեմ փնտրի։ Գնա տուն, Միխայիլ, սկանդալից վազն արի։

— Ես քեզ հետ երկար սկանդալ չեմ անի... — Միշկան ձեռքը դրեց սլ գրպանը։— Հագնվիր։

— Թող, Միխայիլ, ավելի լավ է ձեռք չտաս ինձ...

— Գնանք, ասում եմ քեզ։

— Ո՞ւր։

— Ռևկոմ։

— Չեմ ուզում։— Կիրիլը սփրթնել էր, բայց հեգնական ժպիտով էր խոսում։

Ծռվելով ձախ կողմը, Միշկան գրպանից հանեց նագանը, ոտքի դրեց հրահանը։

— Կգա՞ս թե չէ,— կամացուկ հարցրեց նա։

Կիրիլը լուռ քայլեց դեպի օթախը, բայց Միշկան փակեց նրա ճանապարհը, աչքերով ցույց տվեց հաշտի դուռը։

— Տղերք,— շինծու անփութությամբ բղավեց Կիրիլը,— այստեղ ինձ կարծես թե ձերբակալեցին, օդին խմեցեք առանց ինձ։

Օթախի դուռը լայն բացվեց։ Ախվատկինը փորձեց ոտը շեմքից դուրս դնել, բայց տեսնելով իր վրա պարզած նագանը, հապճեպ անցավ դրանդու ետևը։

— Գնա՛,— հրամայեց Միշկան Կիրիլին։

Վերջինս շորորվելով քայլեց դեպի դուրս, ծուլորեն բռնեց դռան բռնակը և հանկարծ, մի ցատկումով հաշտից անցնելով, կատաղի շրմփացրեց դրսի դուռը, թռավ մուտքի սանդուղքից։ Մինչդեռ նա բակի միջով կուզեկուզ վազում էր դեպի այգին, Միշկան երկու անգամ կրակեց նրա վրա ու վրիպեց։ Նագանի փողը ձախ, ծալված թևի արմունկին դնելով, ոտները իրարից հեռացրած, Միշկան մանրակրկիտ կերպով նշան էր բռնում։ Երրորդ կրակոցից հետո Կիրիլը կարծես սայթաքեց, բայց շտկվելով, թեթև ցատկեց ցանկապատի վրայից։ Միշկան սանդուղքից ներքև վազեց։ Նրա ետևից, տանից ճայթեց հրացանի շոր, խլացուցիչ կրակոցը։ Առջևում, մարագի սպիտակացրած պատի վրա գնդակը ճեղքեց կավը ու շրխկալով, քարի գորշ կտորներ թափեց գետնի վրա։

Կիրիլը թեթև ու արագ էր վազում։ Նրա կորացած կերպարանքը երևում ու չքանում էր խնձորենիների կանաչ վրանների արանքում։ Միշկան ցատկեց ցանկապատի վրայից, ընկավ, պառկած երկու անգամ ևս կրակեց փախչողի վրա ու դեմքը դարձրեց դեպի տունը։ Դրսի դուռը լայն բացված էր։ Մուտքի սանդուղքի վրա կանգնել էր Կիրիլի մայ-

ը, ու ձեռքը հովարի պես աչքերին դրած, նայում էր դեպի այգին։ «Հարկավոր էր առանց խոսելու տեղնուտեղը գընդակահարել նրան,— բութ մտածեց Միշկան։— Նա էլի մի քանի բոպե պառկեց ցանկապատի տակ՝ նայելով տանը, ու ինչ-որը համաչափ մեխանիկական շարժմամբ մաքրեց ծընկներին կպած կեղտը, հետո էլ վեր կացավ, ծանրաշարժ անցավ ցանկապատի վրայից ու իջեցնելով նագանի փողաբերանը, գնաց դեպի տուն։

V

Կիրիլ Գրոմովի հետ անհայտացան Ախվատկինը և այն անծանոթ կազակը, որին տեսել էր Կոշևոյը, երբ եկել էր Գրոմովների մոտ։ Գիշերը խուտորից էլի երկու կազակ անհայտացան։ Դոնշեկայի մի փոքրիկ ջոկատ Վեշենսկուց ժամանեց Տատարսկի։ Կազակներից ոմանց ձերբակալեցին, չորս հոգու էլ, որոնք զորամասերից եկել էին առանց փաստաղթթերի, ուղարկեցին Վեշենսկայա, պատժիչ վաշտ։

Կոշևոյը ամբողջ օրերով նստում էր ռևկոմում և մթընշաղին տուն էր գալիս, լցրած հրացանը դնում մահճակալի կողքին, նագանը խոթում բարձի տակ և պառկում առանց հանվելու։ Կիրիլի հետ եղած դեպքից հետո երրորդ օրը նա Դունյաշկային ասաց.

— Եկ հաշտում քնենք։

— Ինչի՞ համար,— զարմացավ Դունյաշկան։

— Կարող են կրակել պատուհանից։ Մահճակալը պատուհանի մոտ է։

Դունյաշկան մահճակալը լուռ տեղափոխեց հաշտ, իսկ երեկոյան հարցրեց.

— Հենց այսպես նապաստակի վիճակո՞ւմ պիտի ապրենք, հա՞։ Ջմեռն էլ որ գա, էլի հաշտո՞ւմ ենք լինելու։

— Ջմեռը դեռ հեռու է, իսկ առայժմ պետք է այսպես ապրել։

— Ինչքա՞ն կքաշի այդ «առայժմ»-ը։

— Մինչև որ խփեմ Կիրյուշկային։

— Հա՛, էլի, նա ճակատը դեմ է արել քեզ, որ խփես։

— Մի օր դեմ կանի,— վստահ պատասխանեց Միշկան։

Բայց նրա հույսերը չարդարացան. Կիրիլ Գրոմովը, որ իր բարեկամների հետ թաքնված էր Դոնի մյուս կողմում, լսելով Մախնոյի մոտենալու մասին, անցավ Դոնի աջ կողմը ու գնաց Կրասնոկուտսկայա ստանիցան, որտեղ, լուրերի համաձայն, գտնվում էին Մախնոյի բանդայի առաջավոր ջոկատները։ Նա գիշերով եղավ խուտորում, փողոցում պատահմամբ հանդիպեց Պրոխոր Զիկովին և հրամայեց հայտնել Կոշևոյին, թե Գրոմովը շատ կարոտով բարև է անում և խնդրում է սպասել իրեն իբրև հյուրի։ Պրոխորը առավոտյան Միշկային պատմեց Կիրիլին հանդիպելու և նրա հետ ունեցած խոսակցության մասին։

— Էհ, թող գա։ Մի անգամ փախավ, իսկ մյուս անգամ չի պրծնի։ Նա ինձ սովորեցրեց, թե ոնց պետք է վարվել իր նմանների հետ, և դրա համար շնորհակալ եմ,— ասաց Միշկան՝ լսելով Պրոխորի պատմածը։

Մախնոն իրոք որ երևաց Վերին Դոնի օկրուգի սահմաններում։ Կոյնկով խուտորի մոտ տեղի ունեցած կարճատև մարտում նա ջարդեց մի հետևակ գումարտակ, որ Վեշենսկուց ուղարկված էր նրա դեմ, բայց չհարձակվեց օկրուգային կենտրոնի վրա, այլ շարժվեց դեպի Միլլերովո կայարանը, դրա հյուսիսային կողմից անցավ երկաթուղին և գնաց Ստարոբելսկի ուղղությամբ։ Առավելապես ակտիվ սպիտակգվարդիական կազակները հարեցին նրան, բայց դրանց մեծամասնությունը մնաց տներում, սպասողական դիրք բռնեց։

Կոշևոյը էլի ապրում էր խիստ զգուշություն պահպանելով, ուշադրությամբ հետամուտ լինելով այն ամենին, ինչ որ տեղի էր ունենում խուտորում։ Իսկ Տատարսկում կյանքը դժվարացել էր։ Կազակները խիստ վատաբանում էին սովետական իշխանությանը այն բոլոր պակասությունների համար, որ իրենք զգում էին։ Նոր կազմակերպված սպառկոոպի փոքրիկ խանութում համարյա ոչինչ չկար։ Օճառ, շաքար, աղ, նավթ, լուցկի, մախորկա, անիվի քսուք,— առաջին անհրաժեշտության այդ բոլոր առարկաները բացակայում էին, ու դատարկ դարակների վրա դարսված էին միայն Ասմոլովի թանկ ծխախոտները ու ինչ-որ երկաթեղեն, որոնք ամիսներով գնորդ չէին գտնում։

Գիշերները նավթի փոխարեն պնակների մեջ կովի հալած յուղ և ճարպ էին վառում։ Մախորկային փոխարինում էր տնային մշակության թութունը։ Լուցկու բացակայության հետևանքով լայն գործածության մեջ էին կայծքարերը և դարբինների հապճեպ պատրաստած չախմախները։ Աբեթը խաշում էին արևածաղկի մոխրով եռացրած ջրի մեջ, որը շուտ բռնկեր, բայց և այնպես, այդ բոլորին սովոր չլինելով, դժվարությամբ էին կրակ ճարում։ Հաճախ Միշկան երեկոները ռևկոմից վերադառնալիս տեսնում էր, թե ինչպես ծխողները որևէ տեղ, նրբանցքում բոլորակաձև հավաքված և չախմախները չխկացնելով, կամացուկ մայր են հայհոյում ու ասում՝ «Սովետական իշխանություն, կրակ տուր»։ Վերջապես, որևէ մեկի հանած կայծը ընկնում էր չոր աբեթի վրա, վառում այն, բոլորն էլ մեկտեղ փչում էին մարմրող կրակը ու, վառելով ծխախոտը, լուռ ու մունջ պպզում էին, նորություններ հաղորդում միմյանց։ Սխելու թուղթ նույնպես չկար։ Եկեղեցու պահակասենյակից տարան բոլոր չափաբերական մատյանները, իսկ երբ դրանք ծխեցին, տներում թութուն փաթաթելու համար օգտագործեցին ինչ որ կար, նաև երեխաների հին դասագրքերը և նույնիսկ ծերերի մոտ պահվող սուրբ գրքերը։

Պրոխոր Զիկովը, որ բավական հաճախ էր գալիս Մելեխովների հին տունը, Միխայիլից թուղթ էր վերցնում ծխելու համար, տխրությամբ ասում էր.

— Կնկանս սնդուկի խուփի վրա հին լրագրեր էին կպցրած, պոկեցի ու ծխեցի, Նոր կտակարան կար, սուրբ գիրք,— նույնպես ծխեցի, Հին կտակարանն էլ ծխեցի։ Սրբերը քիչ են այդ տեսակ կտակարաններ գրել... Կնկանս մոտ հիշատակի գիրք կար, դրա մեջ գրված էին բոլոր կենդանի ու անկենդան ազգականները,— այդ էլ ծխեցի-պրծա։ Հիմի ի՞նչ, կաղամբի տերևներո՞վ ծխեմ թե՞, զորօրինակ, կռատուկ չորացնեմ ծխելու համար։ Չէ, Միխայիլ, ուզում ես թե ոչ, բայց լրագիր տուր։ Ես առանց ծխելու չեմ կարող ապրել։ Գերմանական ռազմաճակատում ես շատ անգամ իմ օրական հացը մի ութերորդ ֆունտ մախորկայով էի փոխանակում։

Տատարսկում այն աշնանը անուրախ էր կյանքը... ճորնչում էին սայլերի ու սայլակների չյուղած անիվները, առանց կպրի չորանում ու ճաքճքում էին փոկե լծասարքը և կոշկեղենը, բայց առավելապես տխուր էր առանց աղի ապրելը։ Տատարցիները Վեշենսկում հինգ ֆունտ աղը մի չաղ ղոչով էին առնում ու վերադառնում տուն՝ անիծելով սովետական իշխանությունը և քայքայումը։ Այդ անիծված աղը ուղղակի ցավ ու կրակ էր Միխայիլի համար... Մի անգամ ծերունիները եկան Սովետ։ Նրանք ծանր ու մեծ բարևեցին նախագահին, հանեցին փափախները նստոտեցին նստարանների վրա։

— Աղ չկա, պարոն նախագահ,— ասաց նրանցից մեկը։

— Հիմի պարոններ չկան,— ուղղեց Միշկան։

— Ներեղություն, աղբեր, դե հին սովորություն է, էլի... Առանց պարոնների ապրել կարելի է, ամա առանց աղի կարելի չէ։

— Դուք ի՞նչ էիք ուզում, ծերուկներ։

— Դու, նախագահ, հոգս քաշի, որ աղ բերեն։ Մանիչից եզան սայլով աղ բերելուց բան չի դուրս գա։

— Օկրուգում ես զեկուցել եմ դրա մասին։ Այնտեղ դա հայտնի է։ Շուտով պետք է բերեն։

— Մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա,— ասաց ծերունիներից մեկը՝ նայելով գետնին։

Միշկան ջղայնացավ, վեր կացավ սեղանից։ Բարկությունից կարմրելով, շուռ տվեց գրպանները։

— Ես աղ չունեմ, տեսնո՞ւմ եք, ինձ մոտ չեմ պահում ու չեմ կարող ստեղծել։ Հասկանալի՞ է, ծերուկներ։

— Ի՞նչ եղավ այդ աղը, է՞,— կարճ լռությունից հետո հարցրեց միաչքանի Զումակովը՝ զարմացած նայելով բոլորին։— Առաջ, հին իշխանության օրով դրա մասին ոչ ոք էլ չէր խոսում, ամեն տեղ լիքն էր աղը, իսկ հիմի մի պտղունց է՛լ չես ճարի...

— Մեր իշխանությունը այստեղ մեղք չունի,— արդեն ավելի հանգիստ ասաց Միշկան։— Այստեղ մեղավոր է միայն մի իշխանություն,— ձեր նախկին կադետական իշխանությունը։ Նա այնպիսի ավերմունք է առաջացրել, որ գուցե թե հնար է՛լ չկա աղ տեղափոխելու։ Բոլոր երկաթուղիները ջարդ ու փշուր են եղել, վագոնները՝ նույնպես...

Միշկան ծերունիներին երկար պատմեց, թե ինչպես սպիտակները նահանջելիս ոչնչացնում էին պետական գույքը, պայթեցնում գործարանները, վառում պահեստները։ Որոշ բան ինքն էր տեսել պատերազմի ժամանակ, որոշ բան լսել էր, մնացածն էլ ներշնչված հնարում էր լոկ մի նպատակով,— վանել դժգոհությունը հարազատ Սովետական իշխանության նկատմամբ։ Այդ իշխանությունը կշտամբանքից պաշտպանելու համար նա անշառ կերպով ստում էր, մոգոնում, իսկ ինքն իր մեջ մտածում էր, «Մեծ փորձանք չի լինի, եթե ես մի քիչ զրպարտեմ սրիկաներին։ Մեկ է, նրանք սրիկաներ են, դրանով ոչինչ չի պակասի նրանցից, իսկ մեզ օգուտ կլինի...»

— Դուք կարծում եք նրանք, այդ բուրժույները միամի՞տ են։ Նրանք հիմարներ չեն։ Նրանք ամբողջ Ռուսաստանից հավաքել են շաքարի ու աղի ամբողջ պաշարը, հազարավոր փթերով վաղօրոք տարել Ղրիմ, այնտեղ բեռնել են շոգենավերը ու տարել ուրիշ երկրներ, որ ծախեն,— ասում էր Միշկան՝ փայլեցնելով աչքերը։

— Լավ, նրանք ամբողջ մազութն է՞լ են տարել,— կասկածանքով հարցրեց միաչքանի Զումակովը։

— Իսկ դու կարծում էիր քե՞զ են թողել, պապի։ Նրանց ինչի՞ն ես պետք դու, ինչպես և ամբողջ աշխատավոր ժողովուրդը։ Նրանք մազութ առնող էլ կգտնեն։ Եթե կարենային, ամեն ինչ կտանեին իրենց հետ, որ այստեղ ժողովուրդը կոտորվեր սովից։

— Այդպես է, իհարկե,— համաձայնվեց ծերունիներից մեկը.— հարուստները բոլորն էլ անկուշտ են։ Հնուց հայտնի է,— ինչքան հարուստ է մարդը, այնքան ագահ է։ Երբ առաջին նահանջն էր կատարվում, Վեշկիում մի վաճառական ամեն ինչ բարձեց սայլերին, վերցրեց ամբողջ գույքը, և ահա արդեն մոտենում են կարմիրները, իսկ նա դեռ բակից դուրս չի գալի, մուշտակ հագած վազ է տալի տան մեջ, աքցանով պատերից մեխեր է հանում։ «Չեմ ուզում մի հատ մեխ էլ թողնել նրանց, անիծվածներին»,— ասում է նա։ Այնպես որ զարմանալի չէ, եթե նրանք մազութն էլ են տարել իրենց հետ։

— Լավ, բա առանց աղի ի՞նչ պիտի անենք,— խոսակ-

ցության վերջում բարեսրտությամբ հարցրեց ծերունի Մակսիմը։

— Մեր բանվորները շուտով նոր աղ կհանեն, իսկ առայժմ կարելի է սայլեր ուղարկել Մանիչ,— զգուշությամբ խորհուրդ տվեց Միշկան։

— Խալխը չի ուզում այնտեղ գնալ։ Այնտեղ կալմիկները կեղտոտություն են անում, լճերից աղ չեն տալի, խլումտանում են եզները։ Իմ մի ծանոթը այնտեղից միայն մբտրակով եկավ։ Վելիկոկնյաժեսկուց դենը երեք զինված կալմիկ գիշերով վրա էին տվել, եզները խլել. իսկ նրան կոկորդը ցույց տալով. ասել էին՝ «Սուս արա, բիձա, թե չէ շանսատակ կլինես...» Դե արի ու գնա այնտեղ։

— Մնում է սպասել,— հոգոց հանեց Զումակովը։

Միշկան մի կերպ վերջացրեց ծերունիների հետ ունեցած խոսակցությունը, բայց տանը դարձյալ աղի պատճառով թունդ վեճ ունեցավ Դունյաշկայի հետ։ Առհասարակ նրա և կնոջ միջև տարաձայնություններ էին լինում...

Դա սկսվել էր այն անմոռանալի օրվանից, երբ Միշկան Պրոխորի ներկայությամբ խոսք բացեց Գրիգորիի մասին, և այդ աննշան գժտությունը այնպես էլ չմոռացվեց։ Մի երեկո, ընթրիքի ժամանակ Միշկան ասաց.

— Քո շչիին աղ չի գցած, տանտիրուհի։ Ի՞նչ է, աղն է պակաս թե մաղը։

— Հիմի, այս իշխանության օրով կերածդ աղի չի լինի։ Գիտե՞ս տանը ինչքան աղ է մնացել։

— Ինչքա՞ն։

— Երկու բուռ։

— Այդ լավ չէ,— հոգոց հանեց Միշկան։

— Լավ մարդիկ դեռ ամառը գնացել էին Մանիչ, աղ բերելու, իսկ դու ժամանակ չունես դրա մասին մտածելու,— կշտամբանքով ասաց Դունյաշկան։

— Ինչո՞վ պիտի գնայի։ Ամուսնությանդ առաջին տարում քեզ լծել անհարմար է, իսկ աշառները հեշ բան են...

— Դու այդ հանաք-մանաքը թող մեկ ուրիշ օրվա։ Երբ որ աղ չգցած կերակուր կուտես, այն ժամանակ հանաք արա։

— Ի՞նչ ես չարացել վրես։ Ախր ես ո՞րտեղից աղ վերցնեմ քեզ համար։ Այ թե ինչ տեսակ մարդիկ եք դուք, կնա-

նիքդ։ Մեռի, բայց բեր ու տուր ձեզ։ Լավ, ի՞նչ անենք որ աղ չկա, զահրումար լինի այդ անտերը։

— Մարդիկ եզան սայլերով Մանիչ էին գնացել։ Հիմի նրանք աղ էլ կունենան, ամեն բան էլ, իսկ մենք անալի ու թթու բան պիտի ծամենք...

— Մի կերպ կապրենք, Դունյա։ Շուտով պետք է աղ բերեն։ Մեզ մոտ հո քիչ չի՞ այդ բարիքը։

— Ձեզ մոտ ամեն բան էլ շատ է։

— Ձե՛զ, այսինքն ո՞ւմ մոտ։

— Կարմիրների։

— Իսկ դու ի՞նչ ես։

— Հենց այս եմ, ինչ որ տեսնում ես։ Փչեցիք հա՛ փչեցիք՝ «Մեզ մոտ ամեն բան շատ կլինի, բոլորս էլ հավասար ու հարուստ կապրենք...» Ահա և ձեր հարստությունը. շչիի մեջ գցելու աղ չկա։

Միշկան վախեցած նայեց կնոջը, գունատվեց։

— Այդ ի՞նչ է, Դունյախա, ի՞նչպես ես խոսում, մի՞թե կարելի է։

Բայց Դունյաշկան անզուսպ էր. նա էլ գունատվեց զայրույթից ու բարկությունից, և արդեն անցնելով ճչոցի, շարունակեց.

— Իսկ այսպես կարելի՞ է, հը՞։ Ի՞նչ ես չռել աչքերդ։ Դու գիտե՞ս, նախագահ, որ մարդկանց լինդերը արդեն ուռչում են աղի պակասությունից։ Գիտե՞ս, թե մարդիկ ինչ են ուտում աղի փոխարեն. գնում են Նեչաև կուրգանից դենը, փորփրում աղուտները ու հողը բերում գցում են շչիի մեջ... Դու լսե՞լ ես դրա մասին։

— Կաց, մի ճղճղա, լսել եմ... Հետո ի՞նչ։

Դունյաշկան ձեռքերն իրար զարկեց։

— Հետո էլ ի՞նչ պիտի լինի։

— Այդ բանը մի կերպ պե՞տք է տանել։

— Դե, տար։

— Ես կտանեմ, ամա դու... Քո մեջ Մելեխովների ամբողջ ցեղն է խոսում...

— Ի՞նչ ցեղ։

— Կոնտր, այ թե ինչ,— խուլ ձայնով ասաց Միշկան ու վեր կացավ սեղանից։ Նա կախել էր գլուխը, չէր նայում

կնոջը. նրա շրթունքները դողացին, երբ նա ասաց.— Եթե մի անգամ էլ այդպես խոսես, մենք էլ միասին չենք ապրի, լավ իմացիր։ Քո խոսքերը թշնամու խոսքեր են...

Դունյաշկան ուզում էր ինչ-որ առարկել, բայց Միշկան շլեց աչքերը և բարձրացրեց սեղմած բռունցքը։

— Լռի՛ր... — կտրուկ ասաց նա։

Դունյաշկան առանց վախի, չթաքցրած հետաքրքրությամբ նայեց նրան, մի քիչ հետո հանգիստ և ուրախ ասաց.

— Դե լավ, էլի, սատանեն գիտե, թե ինչ բանի մասին ենք խոսում... Առանց աղի էլ կապրենք։— Նա մի փոքր լռեց ու մեղմ ժպիտով, որ այնքան սիրում էր Միշկան, ասաց.— մի՛ հերսոտի, Միշա։ Եթե ամեն բանի համար մեր, կնանոնց վրա բարկանաս, սիրտդ չի դիմանա։ Մարդ ինչե՞ր չի ասի անխելքությունից... ...Դու խոշա՞ք պիտի խմես, թե՞ մածուն բերեմ։

Չնայելով իր ջահելության, Դունյաշկան արդեն օժտված էր կենցաղային փորձով և գիտեր, թե երբ կարելի է վիճելիս համառել ու երբ խոնարհվել և նահանջել...

Դրանից երկու շաբաթ հետո Գրիգորիից նամակ եկավ։ Նա գրել էր, թե վիրավորվել է վրանգելյան ռազմաճակատում և առողջանալուց հետո ամենայն հավանականությամբ կզորացրվի։ Դունյաշկան ամուսնուն հաղորդեց նամակի բովանդակությունը, զգուշությամբ հարցրեց.

— Երբ որ նա տուն գա, Միշա, ի՞նչպես պիտի ապրենք։

— Կտեղափոխվենք իմ տունը։ Թող նա այստեղ մենակ ապրի։ Գույքը կբաժանենք։

— Միասին ապրել մենք չենք կարող։ Ոնց որ երևում է, նա Ակսինյային իր մոտ կվերցնի։

— Թեկուզև կարելի լիներ։ մեկ է, ես քո աղբոր հետ մի կտուրի տակ չէի ապրի,— խիստ տոնով հայտարարեց Միշկան։

Դունյաշկան զարմանքից բարձրացրեց հոնքերը։

— Ինչո՞ւ, Միշա։

— Դու հո գիտես։

— Որ նա սպիտակների մո՞տ է ծառայել։

— Ա՛յ, հենց դրա համար։

— Դու չես սիրում նրան... Չէ՞ որ երկուսդ ընկերներ եք եղել։

— Նա իմ ինչի՞ն է պետք, որ սիրեմ նրան։ Ընկերներ ենք եղել, բայց վերջացել է մեր ընկերությունը։

Դունյաշկան նստել էր ճախարակի մոտ։ Համաչափ բզզում էր անիվը։ Մանվածքի թելը կտրվեց։ Դունյաշկան ձեռքով պահեց անիվի շրջանակը ու, ոլորելով թելը, առանց ամուսնուն նայելու հարցրեց.

— Երբ նա գա, նրան ի՞նչ կանեն կազակների մոտ ծառայելու համար։

— Տրիբունալը կդատի։

— Իսկ ի՞նչ պատիժ կտա։

— Ես այդ չգիտեմ, դատավոր չեմ։

— Կարող են գնդակահարության է՞լ դատապարտել։

Միշկան նայեց մահճակալին, որտեղ քնած էին Միշատկան ու Պոլյուշկան, ունկնդրեց նրանց համաչափ շնչառությանը ու ձայնը ցածրացնելով՝ պատասխանեց.

— Կարող են։

Դունյաշկան այլևս ոչինչ չհարցրեց։ Առավոտյան կթելով կովը, գնաց Ակսինյայի մոտ.

— Գրիշան շուտով կգա, եկա քեզ ուրախացնելու։

Ակսինյան ջրով լի շուգունը լուռ ու մունջ դրեց վառարանի վրա։ Ձեռքերը սեղմեց կրծքին։ Նայելով նրա կարմրած դեմքին, Դունյաշկան ասաց.

— Իսկ դու շատ մի ուրախանա։ Մարդս ասում է, թե նա դատից չի պրծնի։ Աստված գիտի, թե նրան ինչ պատիժ կտան։

Ակսինյայի թրջված ու փայլող աչքերում մի վայրկյան վախ երևաց։

— Ինչի՞ համար,— շեշտակի հարցրեց նա՝ անզոր լինելով մարել շրթունքների ուշացած ժպիտը։

— Ապստամբության և ուրիշ բաների համար։

— Սուտ է։ Նրան չեն դատի։ Քո այդ Միխայիլը ոչինչ էլ չգիտի, միթամ նա էլ գիտուն մարդ է, էլի՛։

— Գուցեև չդատեն։— Դունյաշկան մի փոքր լռեց, հետո էլ զսպելով հառաչանքը, ասաց.— Նա չարացած է աղբորս վրա... Դրանից այնպես է ցավում սիրտս, որ ասել չեմ

կարող։ Շատ եմ մեղքանում աղբորս։ Նա էլի վիրավորվել է... Ա՛խ, ինչքա՛ն ձախորդ է նրա կյանքը...

— Միայն թե գա. կվերցնենք երեխաներին ու կփախչենք մի որևէ տեղ,— հուզված ասավ Ակսինյան։

Հայտնի չէ ինչու նա հանեց լաչակը, նորից կապեց գլխին, ու թարեքի վրա աննպատակ տեղափոխելով ամանները, ոչ մի կերպ չէր կարողանում մեղմել իրեն համակած ուժեղ հուզմունքը։

Դունյաշկան նկատեց, թե ինչպես դողացին նրա ձեռքերը, երբ նա նստեց նստարանին ու սկսեց ծնկների վրա կոկել հին, կիսամաշ գոգնոցի ծալերը։

Հուզմունքից բռնվեց Դունյաշկայի կոկորդը։ Նա ուզեց մենակ լաց լինել։

— Մայրիկը չտեսավ նրան... — կամացուկ ասաց Դունյաշկան։— Էհ, ես գնամ։ Պետք է վառել վառարանը։

Հաշտում Ակսինյան հապճեպ ու անհարմար համբուրեց նրա վիզը, վերցրեց և համբուրեց ձեռքը։

— Ուրա՞խ ես,— դողդոջ, ցածր ձայնով հարցրեց Դունյաշկան։

— Այնպես, էլի, մի քիչ... — պատասխանեց Ակսինյան՝ փորձելով կատակի, երերուն ժպիտի տակ թաքցնել արցունքները։

VI

Միլլերովո կայարանում Գրիգորիին, որպես զորացրված կարմիր հրամանատարի, բնակչական մի սայլակ տրամադրեցին։ Տուն վերադառնալիս յուրաքանչյուր ուկրաինական գյուղում նա փոխում էր ձիերը և մեկ օրում հասավ Վերին Դոնի օկրուգի սահմանը։ Առաջին իսկ կազակական խուտորում ռևկոմի նախագահը,— երիտասարդ, բանակից նոր վերադարձած մի կարմիրբանակային,— ասաց.

— Մնում է, որ դուք, ընկեր հրամանատար, եզան սայլով գնաք։ Մեր ամբողջ խուտորում մի ձի կա, այն էլ երեք ոտով է քայլում։ Նահանջի ժամանակ բոլոր ձիերը մնացել են Կուբանում։

— Գուցե այդ ձիով մի կերպ հասնե՞մ,— հարցրեց Գրի-

գորին՝ մատները տփտփացնելով սեղանին, զննողաբար նայելով աշխույժ նախագահի ուրախ աչքերին։

— Չեք հասնի։ Մի շաբաթ կգնաք ու էլի չեք հասնի։ Դուք մի՛ անհանգստանաք, մեզ մոտ կարգին, արագ քայլող եզներ կան, մեկ է, մենք պետք է մի սայլ ուղարկենք Վիշենսկայա, հեռախոսալար է տանելու, այս պատերազմից հետո դա մնացել է մեզ մոտ. դուք ճանապարհին սայլը չեք փոխելու, ձեզ հենց մինչև տուն կհասցնի։— Նախագահը կկոցեց ձախ աչքը և ժպտալով ու խորամանկությամբ աչքով անելով, ավելացրեց.— ձեզ կտանք ամենալավ եզները, սայլը քշողն էլ կլինի մի ջահել, այրի կին... Այստեղ մեզ մոտ կա ջանի ցեց մի կին, նրանից լավը երազում էլ չես տեսնի։ Նրա հետ իսկի չեք էլ իմանա, թե ոնց կհասնեք տուն։ Ինքս եմ ծառայել, գիտեմ այդ բոլորը, զինվորական կարիքը...

Գրիգորին լուռ, մտքի մեջ հաշիվ էր անում. սպասել նույն ճանապարհով գնացող որևէ սայլի, դա հիմարություն կլիներ, ոտով գնար,— երկար կքաշեր։ Հարկավոր էր համաձայնվել ու եզան սայլով գնալ։

Մի ժամից հետո սայլը եկավ։ Հին էր սայլը, անիվները վնգստում, ճռճռում էին, ետին հաստ կողը ջարդոտված էր, կողքերից կախ էին ընկել անփույթ կերպով փռած խոտի փնջերը։ «Ա՛յ թե կովելով ինչ օրի հասանք»,— մտածեց Գրիգորին՝ զզվանքով դիտելով խղճուկ սայլը։ Սայլապանուհին քայլում էր եզների կողքից՝ թափահարելով մտրակը։ Նա իրոք որ շատ սիրուն էր ու վայելչակազմ։ Հասակին անհամապատասխան փարթամ կուրծքը մի փոքր փչացնում էր նրա կերպարանքը, կլոր կզակի շեղ սպին է՛լ վատ անցյալի արտահայտություն էր տալիս դեմքին և ասես պառավեցնում էր թուխ, կարմրաթուշ, ջահել դեմքը, որ քթարմատի մոտ կորեկի պես մանր, ոսկեվուն պեպեններով էր պատած։

Շտկելով լաչակը, նա կկոցեց աչքերը, ուշադրությամբ նայեց Գրիգորիին, հարցրեց.

— Քե՞զ պիտի տանեմ։

Գրիգորին վեր կացավ մուտքի սանդուղքից, կոճկեց շինելը։

— Ինձ։ Լարը բարձե՞լ ես։

— Բարձելն իմ ի՞նչ գործն է,— զրնգուն բղավեց կազակուհին։— Ամեն օր դես-դեն են քշում, աշխատեցնում։ Ես ի՞նչ եմ դրանց համար։ Թող իրենք բարձեն այդ լարը, թե չէ դատարկ սայլով կգնամ։

Նա լարի փաթաթները քարշ էր տալիս ու դնում սայլին, բարձր ձայնով, սակայն բարեմտությամբ ճղճղում էր նախագահի վրա ու երբեմնակի ծուռ, զննող հայացքներ էր նետում դեպի Գրիգորին։ Նախագահը շարունակ ծիծաղում էր, անկեղծ հիացմունքով նայում ջահել այրի կնոջը։ Երբեմն աչքով անելով Գրիգորիին, նա կարծես ասում էր՝ «Ա՛յ թե ինչպիսի կանայք կան մեզ մոտ։ Իսկ դու չէիր հավատում»։

Խուտորից դենը հեռո՛ւ-հեռու փռված էր աշնանային թուխ, դալկացած տափաստանը։ Վարելահողից, ճանապարհի վերևից գորշ-կապտավուն ծուխ էր սահում։ Հերկ անողները խոտեղեն էին վառում,— չոր, թփակալած մարգարտածաղիկ, թառամած, թել-թել հավակորեկ։ Ծխի հոտը Գրիգորիի մեջ տխուր հուշեր արթնացրեց. մի ժամանակ նա, Գրիգորին էլ վար էր անում աշնանային խուլ տափաստանում, գիշերները նայում աստղերով առկայծող սև երկնքին, լսում էր բարձունքում թռչող սագերի երամների կանչերը... Նա անհանգիստ շուռ եկավ խոտի վրա, կողքից նայեց սայլապանուհուն։

— Քանի՞ տարեկան ես, քույրիկ։

— Մոտ վաթսուն,— սեթևեթ պատասխանեց կինը, ժպտաց միայն աչքերով։

— Չէ, հանաքը դենը։

— Քսանմեկ։

— Այրի՞ ես։

— Այրի եմ։

— Բա մարդուդ ի՞նչ ես արել։

— Սպանել են։

— Վաղո՞ւց։

— Երկրորդ տարին է։

— Ապստամբության ժամանա՞կ։

— Դրանից հետո, աշնան գլխին։

— Եվ ոնց ես ապրո՞ւմ։

— Մի կերպ, էլի՛։

— Ձանձրալի՞ է։

Կինը ուշադրությամբ նայեց Գրիգորիին, լաչակը քաշեց շրթունքներին՝ թաքցնելով ժպիտը։ Նրա ձայնը ավելի խուլ կերպով, ինչ-որ նոր առոգանությամբ հնչեց, երբ նա ասաց.

— Աշխատանքի մեջ ժամանակ չկա ձանձրանալու։

— Բա առանց մարդու ձանձրալի չի՞։

— Ես կեսուրիս հետ եմ ապրում, տնտեսության գործերը շատ են։

— Բա առանց մարդու ո՞նց ես դիմանում։

Կինը երեսը դարձրեց Գրիգորիի կողմը։ Նրա թուխ այտերը շիկնեցին, աչքերում շիկակարմրավուն կայծեր բռնկվեցին ու մարեցին։

— Դու այդ ինչի՞ մասին ես ասում։

— Հենց այդ բանի մասին։

Կինը շուրթերից դեն տարավ լաչակը, ծոր տվող ձայնով ասաց.

— Դե, այդ կողմից պակասություն չկա։ Աշխարհքում քիչ չեն բարի մարդիկ... — Ու մի փոքր լռելուց հետո շարունակեց.— ես մարդուս հետ էլ կնկա կարգին կյանք չունեցա։ Ապրեցինք մենակ մի ամիս, իսկ հետո նրան վերցրին ծառայության։ Առանց նրան մի կերպ ապրում եմ, էլի։ Հիմի լավ է, ջահել կազակները եկել են խուտոր, թե չէ առաջ բանը վատ էր։ Հո՛, չալդիկս, հո՛։ Այդպես բաներ, զինվոր աղբեր։ Այդպես է իմ ապրուստը։

Գրիգորին լռեց։ Թերևս կարիք չկար, որ նա այդպիսի թեթևամիտ տոնով խոսակցություն ունենար։ Նա արդեն ցավում էր դրա համար։

Խոշոր, գիրացած եզները գնում էին համաչափ, ծանր քայլքով։ Դրանցից մեկի աջ եղջյուրը մի ժամանակ կոտրվել էր ու նորից աճել՝ շեղակի թեքվելով ճակատի վրա։ Գրիգորին արմունկներին հենված, աչքերը կիսափակած, պառկել էր սայլի վրա։ Նա վերհիշեց այն եզները, որոնցով աշխատել էր մանկության օրերում ու հետագայում, երբ արդեն չափահաս էր դարձել։ Դրանք բոլորն էլ տարբեր էին իրենց գույնով, մարմնի կազմվածքով, բնավորությամբ, յուրաքանչյուրի եղջյուրներն անգամ ինչ-որ յուրահատուկ ձև ունեին։ Մի ժամանակ Մելեխովները հենց այդպիսի այլանդակված, կողքի ծռված եղջյուրով մի եզ ունեին։ Բարկացկոտ ու խոր-

ամանկ այդ եզը միշտ էլ ծուռն էր նայում՝ շուռ տալով աչքերի սպիտակուցը, որի վրա երևում էին արյունամած երակները, աշխատում էր քացի տալ, երբ ետևից մոտենում էին նրան և միշտ աշխատանքի ժամանակ, գիշերները, երբ անասունները բաց էին թողնում արածելու,— փորձում էր տուն գնալ և որ ավելի վատ էր,— կորչում էր անտառում, կամ հեռավոր հովիտներում։ Գրիգորին հաճախ ձի նստած, ամբողջ օրերով շրջագայում էր տափաստանում և արդեն չհավատալով, որ երբևէ կգտնի կորած եզը, հանկարծ նրան հայտաբերում էր որևէ ձորակի հատակում, փշենու խիտ, անանցանելի մացառուտում, կամ ստվերում, սաղարթախիտ և հին, վայրի խնձորենու տակ։ Մեկ պողանի այդ սատանան կարողանում էր հանել գլխին զցած պարանը, գիշերը եղջյուրով քանդում էր անասնանոցի դարպասի կապը, դուրս էր գնում, լողալով անցնում Դոնը, թափառում մարգագետնով մեկ։ Իր ժամանակին նա մեծ անախորժություն ու դառնություն էր պատճառում Գրիգորիին...

— Ո՞նց է ծուռ պոզով այդ եզը, խելո՞ք է,— հարցրեց Գրիգորին։

— Խելոք է։ Ի՞նչ կա որ։

— Ոչինչ, հենց այնպես։

— «Հենց այնպեսն» էլ լավ խոսք է, եթե ուրիշ բան չկա ասելու։— քմծիծաղ տալով ասաց սայլապանուհին։

Գրիգորին լռեց։ Նրան հաճելի էր մտածել անցյալի մասին, խաղաղ կյանքի, աշխատանքի, այն ամենի մասին, ինչ որ չէր վերաբերվում պատերազմին, որովհետև յոթ տարի ձգձգված այդ պատերազմը բոլորովին զզվեցրել էր նրան, ու հենց միայն դրա մասին, ծառայության հետ կապված որևէ միջադեպի մասին հիշելիս նա ներքին ճնշող նողկանք և խուլ ջղայնություն էր զգում։

Նա վերջացրել է պատերազմելը։ Բավական է։ Նա տուն էր գնում, որպեսզի ի վերջո ձեռնամուխ լիներ աշխատանքին, ապրեր երեխաներով, Ակսինյայի հետ։ Դեռ այնտեղ, ռազմաճակատում նա հաստատ որոշել էր Ակսինյային տուն բերել, որ նա դաստիարակեր իր երեխաներին և միշտ լիներ իր կողքին։ Այդ էլ պետք էր վերջացնել, և որքան շուտ, այնքան լավ։

Գրիգորին հաճույքով էր երազում, թե ինչպես տանը կհանի շինելը և սապոգները, լայն քոշեր կհագնի, կազակական սովորությամբ շալվարի ծայրերը կդնի բրդե սպիտակ գուլպաների մեջ, ու տաք կուրտկայի վրայից հագնելով տանը գործած կապան, կգնա դաշտ։ Ի՜նչ լավ կլիներ բռնել գութանի մաճը և խոնավ ակոսով գնալ դրա ետևից, ագահությամբ ներշնչել փխրացած հողի նման և անուշ հոտը, խոփի կտրատած խոտաբույսերի դառն բույրը։ Օտար երկրներում հողն է՛լ, խոտաբույսերն էլ ուրիշ տեսակ են բուրում։ Քանի՜-քանի անգամ Լեհաստանում, Ուկրաինայում ու Ղրիմում նա ձեռքի մեջ փշրում էր օշինդրի գորշակապույտ գլխիկը, հոտոտում էր և թախծոտ մտածում՝ «Ոչ, այն չէ, օտար է...»։

Իսկ սայլվորուհին ձանձրանում էր։ Նա ուզում էր խոսել։ Նա թողեց եզներին մտրակելը, ավելի հարմար նստեց ու, անտղելով մտրակի կաշվե ծոպը, երկար, աչքի տակով նայում էր Գրիգորիին, նրա լրջախոհ դեմքին, կիսով չափ խոնարհված աչքերին։ «Սա այնքան էլ ծեր չէ, թեև մազերը ճերմակել են։ Ու մի տեսակ տարօրինակ է։— Մտածում էր սայլվորուհին։— Շարունակ կկոցում է աչքերը, ինչո՞ւ է կկոցում։ Ասես շատ է բեզարած, ասես շալակով սայլ է տարել... Տեսքը լավն է, ոչինչ։ Մենակ թե ճերմակ մազերը շատ են, բեղերն էլ համարյա ճերմակ են։ Բայց առհասարակ լավ տեսքով է։ Ի՞նչ է մտածում։ Սկզբում ոնց որ թե սկսեց կատակել, հետո էլ սկսեց, չգիտես ինչու եզան մասին հարցրեց։ Խոսելու բան չունի՞, ինչ է։ Գուցե թե վախում է։ Դժվար թե։ Աչքերը հանգիստ են։ Չէ՛, լավ կազակ է։ մենակ թե տարօրինակ է երևում։ Դե լռում ես լռի կուզիկ սատանա։ Շա՛տ պետքս ես, ո՛նց չէ։ Ես ինքս է՛լ կարող եմ լռել։ Կնոջդ մոտ ես գնում, համբերությունդ չի հերիքում։ Լռի, անուշ լինի»։

Սայլվորուհին մեջքը դեմ արեց սայլի կողին, կամացուկ երգեց։

Գրիգորին բարձրացրեց գլուխը, նայեց արևին։ Դեռ բավական վաղ էր։ Նախորդ տարվա ուղտափշից, որ մռայլ տեսքով հսկում էր ճանապարհը, կես քայլ ստվեր էր ընկել.

ամենայն հավանականությամբ ցերեկվա ժամը երկուսից ավելի չէր լինի։

Ասես կախարդված, մեռյալ լռության մեջ փռվել էր տափաստանը։ Ժլատ էր արևի ջերմությունը։ Թեթև քամին անձայն օրորում էր շիկակարմրավուն, թառամած խոտաբույսերը։ Շուրջը չէր լսվում ոչ թռչունների ձայնը, ոչ էլ սկյուռների ճստճստոցը։ Պաղ, դալկակապույտ երկնքում չէին սավառնում ուրուրներն ու արծիվները։ Եվ միայն մի անգամ գորշ մի ստվեր սահեց ճանապարհի վրայով, ու, դեռ գլուխը չբարձրացրած, Գրիգորին լսեց մեծ թևերի ծանր շփշփոցը. մոխրագույն-գորշ-կապտավուն, արևի տակ սպիտակավուն թևերով փայլող մի մեծ արոս թռավ ու նստեց հեռավոր մի բլուրի մոտ, այնտեղ, ուր արևով չլուսավորված խորունկ ձորակը միախառնվել էր մթնակապտավուն հեռաստանին։ Գրիգորին տափաստանում միայն ուշ աշնանն էր նկատում այդպիսի տխուր և խոր լռություն, երբ նրան թվում էր, որ լսում էր չոր խոտաբույսերի վրա քամուց գլորվող. դեպի տափաստանային հեռուները չվող երնջնակի շրշյունը։

Ճանապարհը կարծես չէր վերջանալու։ Այն ոլորապտույտ ձգվում էր տափարակ բլրալանջերով, իջնում ձորակները, կրկին բարձրանում դեպի բլրագագաթները։ Ու շուրջը էլի փռվում էր անծայրածիր, խուլ տափաստանը։

Գրիգորին զմայլվեց մի ձորակի լանջում աճած սև թխկիի թփով։ Առաջին ցրտերից մշված նրա տերևները փայլում էին մուգ կարմիր գույնով, ասես մարող խարույկի մոխրոտած ածուխներ լինեին։

— Անունդ ի՞նչ է, հորեղբայր,— հարցրեց սայլվորուհին՝ մտրակի կոթը կամացուկ դիպցնելով Գրիգորիի ուսին։

Գրիգորին ցնցվեց, դեմքը դարձրեց նրա կողմը։ Սայլվորուհին մի կողմ էր նայում։

— Գրիգորի։ Իսկ քո՞նը։

— Իմ անունը անանուն է։

— Լռիր, էլի, անանո՛ւն։

— Ձանձրացա լռելուց։ Օրվա կեսը լռում եմ, բերանս չորացավ։ Դու ի՞նչու այդպես տխուր ես, հորեղբայր Գրիշա։

— Ինչո՞վ ուրախանամ։

— Տուն ես գնում, պետք է ուրախ լինես։

— Ուրախանալուս տարիներն անցել են։

— Ի-ի՜հ, ծերուկի՛ս մտիկ։ Բա ինչո՞ւ դու չահել ես, իսկ մազերդ ճերմակել են։

— Ամեն բան պիտի իմանաս, էլի՜... Երևի լավ կյանքից եմ ճերմակել։

— Դու ամուսնացա՞ծ ես, հորեղբայր Գրիշա։

— Ամուսնացած եմ։ Դու էլ, անանուն, պետք է շուտ ամուսնանաս։

— Ինչո՞ւ շուտ։

— Դու շատ խաղլիկ ես...

— Իսկ դա վա՞տ է։

— Վատ էլ է լինում։ Ես ճանաչում էի այդտեսակ խաղլիկ մի կնկա, նույնպես այրի էր, խաղաց-խաղաց, հետո էլ նրա քիթը սկսեց թափվել...

— Օֆ, տեր աստված, ինչքան սարսափելի է,— հեգնոտ վախով բացականչեց կինը և իսկույն լրջաբար ավելացրեց.— մեր այրիներիս գործն այսպես է. գիլից վախում ես՝ մի գնա անտառ։

Գրիգորին նայեց նրան։ Կինն անձայն ծիծաղում էր մանր, սպիտակ ատամներն իրար սեղմած։ Նրա վեր ցցված վերին շրթունքը դողում էր, խոնարհած թարթիչների տակից չարաճճիորեն փայլում էին աչքերը։ Գրիգորին ակամա ժըպտաց և ձեռքը դրեց նրա տաք, կլոր ծնկին։

— Խեղճ, անբախտ անանուն,— կարեկցաբար ասաց նա։— Քսան տարեկան ես, և ինչպե՛ս կյանքը մաշել է քեզ...

Մի ակնթարթում կնոջ ուրախության հետքն էլ չմնաց։ Նա ցասկոտությամբ դեն հրեց Գրիգորիի ձեռքը, նոթերը կիտեց և այնպես կարմրեց, որ չքացան քթարմատի մանրիկ պեպենները։

— Դու կնկանդ խղճա, երբ տուն հասնես, իսկ ես առանց քեզ էլ խղճացողներ շատ ունեմ։

— Կաց, է՛, մի՛ նեղանա։

— Դե գնա՛, է՛։

— Ես այդ բանը խղճալուց ասի քեզ։

— Գնա դու էլ քո խիղճն էլ... — Սայլվորուհին տղամարդու պես վարժ և սովոր կերպով հայհոյեց, փայլեցին նրա բարկացած աչքերը։

Գրիգորին բարձրացրեց հոնքերը, շփոթվելով մռմռաց.

— Այդ ի՞նչ խոսքեր ես ասում։ Ա՛մա թե անզուսպ ես, հա՜-ա։

— Բա դու ի՞նչ ես. ոչլոտ շինելով սուրբ, այ թե ով ես դու։ Գիտե՛մ ես ձեզ։ Ամուսնացիր, ֆլան, ֆստան, վաղո՞ւց ես այդպես կարգին մարդ դարձել։

— Ոչ, վաղուց չէ,— ծիծաղելով ասաց Գրիգորին։

— Ինչո՞ւ ես գլխիս խրատ կարդում։ Դրա համար ես կեսուր ունեմ։

— Դե լավ, էլի, ի՞նչ ես չարանում, դմբո կնիկ։ Ես հո ի միջի այլոց այդպես արտահայտվեցի,— հաշտվողաբար ասաց Գրիգորին։— Տես, հրեն, եզները մեր խոսակցության պատճառով ծուլեցին ճամփից։

Սայլի վրա ավելի հարմար դիրք տալով մարմնին, Գրիգորին հարևանցիորեն նայեց ուրախ այրիին և նրա աչքերում արցունքներ նկատեց։ «Ա՛յ քեզ խաթա. դրանք, այդ կնանիքը միշտ էլ այդպես են, էլի...» — մտածեց նա ու ինչ-որ ներքին անհարմարություն ու վրդովմունք զգաց։

Շուտով նա քնեց մեջքի վրա պառկած, դեմքը շինելի բոլորքով ծածկած, ու արթնացավ միայն մթնշաղին։ Երկընքում առկայծում էին իրիկնային դալուկ աստղերը։ Զգացվում էր խոտի բերկրալի ու թարմ բույրը։

— Եզներին կերակրել է պետք,— ասաց սայլվորուհին։

— Լա՛վ, եկ կանգ առնենք։

Գրիգորին ինքը արձակեց եզները, իրեղենի պարկից հանեց մսի մի տուփ պահածո, հաց, մի ամբողջ կույտ քոլ ու մոլ հավաքեց ու բերեց, սայլից քիչ հեռու կրակ վառեց։

— Էհ, նստիր հաց ուտենք, անանուն, հերիք է բարկանաս։

Կինը լուռումունջ նստեց կրակի մոտ, տոպրակից հաց և հնությունից ժանգակալած ճարպ հանեց։ Ընթրելիս քիչ և հաշտ էին խոսում։ Հետո սայլվորուհին պառկեց սայլի վրա, իսկ Գրիգորին խարույկի վրա եզան մի քանի կտոր չորացած թրիք գցեց, որ կրակը չմարի, երթևեկան սովորությամբ մեկնվեց կրակի մոտ։ Իրեղենի պարկը գլխի տակ դրած, երկար պառկեց, դիտեց աստղաշող երկինքը, անկապ մտածեց

երեխաների, Ակսինյայի մասին, հետո ննջեց ու արթնացավ կնոջական քծնի ձայնից.

— Քնա՞ծ ես, զինվոր աղբեր, քնա՞ծ ես, թե ինչ։

Գրիգորին բարձրացրեց գլուխը։ Նրա ուղեկցուհին արմունկին հենված, կախվել էր սայլից։ Նրա դեմքը մարող խարույկի երերուն լույսով լուսավորված, վարդագույն էր ու թարմ, կուրացուցիչ սպիտակին էին տալիս ատամները և լաչակի ժանյակավոր եզրերը։ Կարծես թե երկուսի մեջ գրժություն չէր էլ եղել,— նա հոնքերը շարժելով էլի ժպտաց, ասավ.

— Վախում եմ դու այդտեղ ցրտատար լինես։ Գետինը պաղ է։ Եթե շատ ես մրսել, եկ ինձ մոտ։ Մուշտակս շա՛տ, շատ տաք է։ Կգա՞ս թե ոնց։

Գրիգորին մտածեց և հոգոց հանելով պատասխանեց.

— Շնորհակալություն, քույրիկ, չեմ ուզում։ Թե որ միերկու տարի առաջ լիներ... Կրակի կողքին չեմ մրսի։

Կինը նույնպես հոգոց հանեց, ասաց.

— Դե, ինչպես կուզես,— ու մուշտակը քաշեց գլխին։

Մի քիչ հետո Գրիգորին վեր կացավ, հավաքեց իրերը։ Նա որոշեց ոտով գնալ, որպեսզի մինչև լուսաբաց հասներ Տատարսկի։ Նրա, ծառայությունից վերադարձող հրամանատարի համար, անհնարին էր օրը ցերեկով եզան սայլով ժամանել տուն։ Այդպիսի ժամանումը հազար ու մի ասեկոսեների ու ծաղրանքի պատճառ կդառնար...

Նա արթնացրեց սայլվորուհուն.

— Ես ոտով կգնամ։ Չե՞ս վախենում տափաստանում մենակ մնալուց։

— Չէ, ես վախլուկներից չեմ, խուտորն էլ այստեղից մոտիկ է։ Իսկ դու չե՞ս կարող համբերել, ինչ է։

— Հա՛, էլի։ Դեհ, մնաս բարով, անանուն, բարի հիշիր։

Գրիգորին դուրս եկավ ճանապարհը, բարձրացրեց շինելի օձիքը։ Ձյան առաջին փաթիլը ընկավ նրա թարթիչներին։ Քամին փչեց հյուսիսից, ու Գրիգորիին թվաց, թե նրա ցուրտ շունչը բերում է ձյան ծանոթ և իր սրտին հաճելի բույրը։

Կոշևոյը, որ մեկնել էր ստանիցա, վերադարձավ երեկոյան։ Դունյաշկան պատուհանից տեսավ, թե ինչպես նա

մոտեցավ դարպասին։ Դունյաշկան արագությամբ շալը գցեց ուսերին, դուրս ելավ բակը։

— Առավոտը Գրիշան եկավ,— բակի դռան մոտ ասաց նա՝ սպասումով և անհանգստությամբ նայելով ամուսնուն։

— Աչքդ լույս,— զուսպ և մի փոքր հեգնոտ պատասխանեց Միշկան։

Միշկան ատամները պինդ սեղմած, մտավ խոհանոց։ Նրա այտերի ուռուցքները ցնցվում էին։ Պոլյուշկան նստել էր Գրիգորիի ծնկներին, հորաքույրը նրան հոգատարությամբ մաքուր շոր էր հագցրել։ Գրիգորին երեխային խնամքով իջեցրեց հատակին, գնաց փեսային ընդառաջ, ժպտալով մեկնեց մեծ, թուխ ձեռքը։ Նա ուզում էր գրկել Միխայիլին, բայց վերջինիս անժպիտ աչքերում սառնություն ու չարակամություն տեսավ ու զսպեց իրեն։

— Էհ, բարև, Միշա։

— Բարև։

— Վաղուց չենք տեսել իրար։ Ասես հարյուր տարի է անցել։

— Այո, վաղուց է... Գալուստդ շնորհավոր։

— Շնորհակալ եմ։ Ուրեմն ազգականներ ենք դարձել, էլի։

— Այդպես եղավ... Այդ ի՞նչ արյուն է թշիդ վրա։

— Դատարկ բան է, ածելիով եմ կտրել, շտապում էի։

Նրանք նստեցին սեղանի շուրջ և լուռ նայում էին միմյանց, խորթացում և անհարմարություն էին զգում։ Նրանք դեռ լուրջ խոսակցություն էին ունենալու, բայց այժմ դա անկարելի էր։ Միխայիլը ինքնազսպություն ցուցաբերեց ու հանգիստ խոսեց տնտեսության մասին, խուտորում կատարված փոփոխությունների մասին։

Գրիգորին նայում էր պատուհանից դուրս, առաջին, կապտավուն ձյունով պատած գետնքին, խնձորենիների մերկ ճյուղերին։ Մի ժամանակ նրան այլ կերպ էր պատկերանում Միխայիլին հանդիպելը...

Շուտով Միխայիլը դուրս ելավ։ Հաշտում նա հեսանի վրա խնամքով սրեց դանակը, Դունյաշկային ասաց.

— Ուզում եմ մեկն ու մեկին կանչել հոիկը մորթելու։ Հարկավոր է կարգին հյուրասիրել տանտիրոջը։ Վազ տուր

արաղ բեր։ Կաց, այ թե ինչ. հասիր Պրոխորի մոտ և ասա նրան, որ թեկուզ գնտինը մտնի, բայց արաղ ճարի։ Նա այդ քեզանից լավ կանի։ Նրան կանչիր ընթրիքի։

Դունյաշկայի դեմքը փայլեց ուրախությունից, լռելյայն շնորհակալությամբ նա նայեց ամուսնուն... «Գուցե թե ամեն բան լավ գնա... Դե, կռվել-պրծել են, էլի, հիմա էլ ի՞նչ ունեն բաժանելու։ Գոնե աստված խելքի բերեր դրանց»,— հուսադրվելով մտածում էր նա՝ գնալով Պրոխորի մոտ։

Կես ժամ էլ չէր անցել, երբ վազեվազ եկավ շնչասպառ Պրոխորը։

— Գրիգորի Պանտելևիչ... Սիրելիս... Իսկի հույս էլ չունեի, որ կտեսնեմ քեզ... — բարձր, լացակումած ձայնով գոչեց նա ու շեմքի վրա սայթաքելով, քիչ մնաց ջարդեր օդիով լեցուն դույլանոց սափորը։

Գրկելով Գրիգորիին, նա փղձկաց, բռունցքով սրբեց աչքերը, հարթեց արցունքոտած բեղերը։ Գրիգորիի կոկորդին ինչ-որ բան դեմ առավ, բայց նա զսպեց իրեն, հուզված, մի փոքր կոպիտ թփթփացրեց հավատարիմ հանձնատարի կրունակին, խոսեց անկապ.

— Ահա և տեսնվեցինք... էհ, ուրախ եմ, Պրոխոր, շատ ուրախ եմ, որ տեսա քեզ։ Ի՞նչ ես արտասվում, ծերուկ։ Թուլացե՞լ ես դես-դեն քարշ գալուց։ Հայ-հայդ գնացել, վայ-վայդ է մնացե՞լ, հա՞։ Ո՞նց է թևդ։ Կնիկդ մյուս թևդ չի՞ թոցրել։

Պրոխորը զիլ խնչեց, հանեց կիսամուշտակը։

— Ես ու կնիկս հիմի աղունիկների պես ենք ապրում։ Երկրորդ թևս սաղ է։ տեսնում ես, իսկ այս թևս, որ լեհերը կտրեցին, սկսում է աճել, աստված վկա։ Մի տարուց հետո մատներ էլ դուրս կգան,— ասաց նա իրեն հատուկ ցնծությամբ՝ թափահարելով վերնաշապկի դատարկ թևքը։

Պատերազմը նրանց սովորցրել էր ժպիտներով քողարկել իսկական զգացմունքները, հացն էլ, խոսակցությունն էլ համովացնել լավորակ աղով. հենց դրա համար էլ Գրիգորին նույն զվարճալի տոնով շարունակեց հարցուփորձը.

— Ո՞նց ես ապրում, պառավ էծ, ո՞նց ես ցատկոտում։

— Ալևորի պես, էլի՛, առանց վռազելու։

— Առանց ինձ էլ ոչինչ չե՞ս ճարել։

— Այսինքս ի՞նչ։

— Դե, այն բլբուլը, էլի, որ անցած ձմեռ վրեդ էր...

— Պանտելևի՛չ, աստված չանի։ Հիմի այդ զարդարանքը ինչի՞ս է պետք։ Եվ ինչ էլ կարող եմ ճարել մի ձեռքով։ Դա քո գործն է, ջահելի, ազաբի գործ է... Իսկ ինձ համար ժամանակն է, որ իմ արք ու սարքը տամ կնկանս, դես-դեն չընկնեմ...

Նրանք, խրամատային հին ընկերները, հանդիպումից ուրախացած, ծիծաղկոտ նայում էին իրար։

— Բոլորովի՞ն ես եկել,— հարցրեց Պրոխորը։

— Բոլորովին։ Ընդմիշտ։

— Վերջը ի՞նչ աստիճանի հասար։

— Գնդի հրամանատարի օգնական էի։

— Բա ինչի՞ քեզ այդպես շուտ բաց թողին։

Գրիգորին մռայլվեց, կարճ պատասխանեց.

— Հարկավոր չէի։

— Ի՞նչ պատճառով։

— Չգիտեմ։ Երևի անցյալի համար։

— Բայց ախր դու անցել էիր այդ զտող հանձնաժողովը, որը հատուկ բաժնում զտում էր սպաներին, էլ անցյա՞լս որն է։

— Դե, ո՛վ գիտի։

— Բա Միխայի՞լը որտեղ է։

— Բակումն է։ Անասուններին է նայում։

Պրոխորը ավելի մոտեցավ, ցածրացրեց ձայնը.

— Մի ամիս առաջ գնդակահարեցին Պլատոն Ռյաբչիկովին։

— Ի՞նչ ես ասու-ո՛ւմ։

— Աստված վկա։

Հաշտից դռան ճռռոց լսվեց։

— Հետո կխոսենք,— շշնջաց Պրոխորը ու բարձրացրեց ձայնը։— էհ, ընկեր հրամանատար, խմենք այս մեծ ուրախությունից։ Գնամ կանչե՞մ Միխայիլին։

— Գնա, կանչի։

Դունյաշկան սեղան գցեց։ Նա չգիտեր ինչպես գոհացներ եղբորը. վերջինիս ծնկներին մաքուր սրբիչ դրեց, աղած ձմերուկով ափսեն մոտեցրեց նրան, մի հինգ անգամ սրբեց

բաժակը... Գրիգորին ժպտալով էր լսում, որ Դունյաշկան նրան «դուք» է ասում։

Միխայիլը ընթրիքի ժամանակ սկզբում համառորեն լռում էր, ուշադրությամբ լսում Գրիգորիի խոսքերը։ Նա դժկամորեն և քիչ էր խմում։ Իսկ Պրոխորը կոնծում էր լիքը բաժակները, կարմրում էր ու հաճախակի բռունցքով հարթում սպիտակավուն բեղերը։

Երեխաներին կերակրելով ու պառկեցնելով քնելու, Դունյաշկան մի մեծ ափսեով ոչխարի եփած միս դրեց սեղանի վրա, շշնջաց Գրիգորիի ականջին.

— Աղբերս, ես գնամ կանչեմ Ակսինյային, դուք դեմ չե՞ք լինի։

Գրիգորին լուռ գլխով արեց։ Նրան թվում էր, թե ոչ ոք չի նկատում, որ ինքը ամբողջ իրիկունը լարված սպասողական վիճակում է գտնվում, բայց Դունյաշկան տեսնում էր, թե նա ինչպես է լսողությունը լարում յուրաքանչյուր թխկոցից, ականջ է դնում ու շեղակի նայում դռան։ Այդ Դունյաշկայի շափազանց սուր աչքերից ուղղակի ոչ մի բան չէր կարող վրիպել...

— Կուբանցի Տերեշչենկոն էլի դասակի հրամանատա՞ր է,— հարցրեց Պրոխորը բաժակը ձեռքին պահած, կարծես վախենալով, որ մեկն ու մեկը կվերցնի այն։

— Սպանվել է Լվովի մոտ։

— Ողորմի նրա հոգուն։ Հեծյալ բանակում լավ կռվող էր։— Պրոխորը հապճեպ խաչակնքեց, խմեց օղին՝ չնկատելով Կոշևոյի խայթիչ ժպիտը։

— Իսկ այն մե՞կը, որ մազալու ազգանուն ունի։ Նա, որ աջ թևում էր լինում, թյո՛ւ, անիծվի նա, ո՞նց է նրա ազգանունը, կարծեմ Մայ-Բորոդա, հը՞. այն շաղ և ուրախ խախուը, որ Բրոդիի մոտ թրով խփեց երկու կես արեց լեհական սպային,— նա ողջ-առո՞ղջ է։

— Բուղայի պես առողջ է։ Նրան վերցրին գնդացրային հեծելավաշտ։

— Բա քո ձին ո՞ւմ հանձնեցիր։

— Ես արդեն ուրիշ ձի ունեի։

— Բա սպիտակ ճակատով ձին ի՞նչ արիր։

— Սպանվեց արկի կտորով։

— Կովի մե՞ջ։

— Մի ավանում էինք։ Գնդակոծում էին։ Ջիակապարանի մոտ էլ սպանեցին։

— Ախ, ափսոս։ Ինչքա՜ն լավ ձի էր։— Պրոխորը հոգոց հանեց ու կրկին վերցրեց բաժակը։

Հաշտից լսվեց դռան փականքի չխկոցը։ Գրիգորին ցընցվեց։ Ակսինյան շեմքից ներս անցավ, կամացուկ ասաց՝ «Բարև ձեզ» ու հանեց շալը՝ շնչասպառ լինելով և լայն բացված, ճառագայթող աչքերը չկտրելով Գրիգորիից։ Նա մոտեցավ սեղանին, նստեց Դունյաշկայի կողքին։ Նրա հոնքերի ու արտևանունքների, դալուկ դեմքի վրա հալչում էին ձյան փոքրիկ փաթիլները։ Կկոցելով աչքերը, նա ձեռքով սրբեց երեսը, խոր շունչ առավ և միայն այդ ժամանակ, հաղթահարելով շփոթմունքը, հուզմունքից մթնած, խորունկ աչքերով նայեց Գրիգորիին։

— Արշավանքի՛ ընկեր, Կսյո՛ւշա, միասին ենք նահանջել, միասին տանջվել ոջիլներից... Թեև մենք քեզ թողինք Կուբանում, բայց ի՞նչ կարող էինք անել։— Պրոխորը մեկնեց բաժակը՝ օղին թափթփելով սեղանի վրա։— Խմիր Գրիգորի Պանտելևիչի կենացը, շնորհավորիր նրա գալը... Ասում էի քեզ, որ ողջ-առողջ կվերադառնա, և ահա նա, վերցրու ոտով-գլխով։ Նստե՛լ է շվարած։

— Սա արդեն խմած է, հարևանուհի, դու մի լսի սրան։— Գրիգորին ծիծաղեց, աչքերով ցույց տվեց Պրոխորին։

Ակսինյան գլուխ տվեց Գրիգորիին ու Դունյաշկային և բաժակը միայն մի քիչ բարձրացրեց սեղանից։ Նա վախենում էր, որ բոլորը կտեսնեն, թե ինչպես է դողում իր ձեռքը։

— Շնորհավորում եմ քո գալուստը, Գրիգորի Պանտելևիչ, քեզ էլ, Դունյաշա, շնորհավորում եմ քո ուրախությունը։

— Իսկ քեզ ի՞նչը պետք է շնորհավորել՝ դա՞ղը,— Պրոխորը քրքջաց, բոթեց Միխայիլի կողքը։

Ակսինյան թունդ կարմրեց, նույնիսկ ականջների փոքրիկ բլթակներն էլ հստակ-վարդագույն դարձան, բայց պինդ ու չարացած նայելով Պրոխորին, նա պատասխանեց.

— Ինձ էլ պետք է շնորհավորել իմ ուրախությունը... Մեծ ուրախությունը։

Պրոխորը զինաթափվեց և հուզվեց այդ շիտակությունից։ Նա խնդրեց.

— Խմիր, ի սեր աստծու, խմիր մինչև վերջին կաթիլը։ Գիտես շիտակ խոսել, գիտցիր և շիտակ խմել։ Ով չի խմում ու թողնում է արաղը, սուր դանակով է զարկում սրտիս։

Ակսինյան հյուր եղավ կարճ ժամանակ, այնքան, որքան թույլ էր տալիս պատշաճությունը,— ինչպես կարծում էր նա։ Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում նա լոկ մի քանի անգամ նայեց իր սիրածին, այն էլ հարևանցիորեն։ Նա իրեն ստիպում էր նայել մյուսներին և խուսափում էր Գրիգորիի աչքերից, որովհետև չէր կարող անտարբեր ձևանալ և չէր ուզում իր զգացմունքները հայտնել մյուսներին։ Նա միայն շեմքից սիրով ու նվիրվածությամբ լեցուն, շիտակ մի հայացք նետեց Գրիգորիի վրա, և դրանով էապես ամեն ինչ ասված էր։ Գրիգորին դուրս ելավ Ակսինյային ճանապարհ դնելու։ Հարբած Պրոխորը նրանց ետևից բղավեց.

— Շո՞ւտ կգաս։ Ամբողջ արաղը կխմենք։

Հաշտում Գրիգորին լուռ համբուրեց Ակսինյայի ճակատն ու շուրթերը, հարցրեց.

— Էհ, ո՞նց ես, Կսյուշա։

— Օֆ, պատմելու շատ բան կա... Վաղը կգա՞ս։

— Կգամ։

Ակսինյան շտապում էր գնալ տուն, քայլում էր արագ, կարծես այնտեղ անհետաձգելի գործ ուներ, քայլերը դանդաղեցրեց միայն իր խրճիթի սանդուղքի մոտ, զգույշ բարձրացավ ճռճռան աստիճաններով։ Նա ուզում էր շուտ լինել մենակ, իր մտքերի հետ, իր երջանկության հետ, որ այնքա՜ն անակնկալ էր եկել։

Նա հանեց կոֆտան ու շալը, առանց լույս վառելու անցավ օթախը։ Գիշերվա մթին, կայտավուն լույսը փեղկերը չծածկած պատուհանից ընկել էր սենյակը։ Վառարանի բուխարիկի ետևում զի՛լ ծղրտում էր ծղրիդը։ Ակսինյան ըստ սովորության նայեց հայելուն ու թեև մթության մեջ չտեսավ իր կերպարանքը, այնուամենայնիվ շտկեց մազերը, կրծքի վրա կոկեց մուսլինե կոֆտայի փոթերը, հետո մոտեցավ պատուհանին և հոգնած նստեց նստարանի վրա։

Կյանքում շատ անգամ չէին արդարացել, չէին իրակա-

նացել նրա հույսերը և սպասելիքները, ու թերևս այդ պատճառով էլ քիչ առաջվա ուրախությանը փոխարինեց մշտական անհանգստությունը։ Հիմա ի՞նչպես է ընթանալու իր կյանքը, ապագայում ի՞նչ է սպասում իրեն։ Եվ արդյո՞ք չափազանց ուշ չէ, որ նրան ժպտում է կնկա դառն երջանկությունը։

Երեկոյի ընթացքում ապրած հուզմունքից ուժասպառ, երկար նստել էր նա, այտը հպել պաղ, եղյամակալած ապակուն, հանգիստ և մի փոքր տխուր հայացքը հառել մթության, որը մի քիչ լուսավորված էր ձյունով։

Գրիգորին նստեց սեղանի մոտ, սափորից լիքը լցրեց իր բաժակը, խմեց միանգամից։

— Լա՞վն է,— հետաքրքրվեց Պրոխորը։

— Զգիտեմ։ Վաղուց չեմ խմել։

— Ոնց որ Նիկոլի արաղ լինի, աստված վկա,— համոզված ասավ Պրոխորը ու ճոճվելով գրկեց Միխայիլին։— Դու, Միշա, այս գործերից ավելի վատ ես գլուխ հանում, քանց հորթը կեղտոտ ջրից, իսկ ես գիտեմ խմիչքների լավն ու վատը։ Ի՞նչ արաղ ու գինի ասես, որ ես չեմ խմել։ Այնպիսի գինի կա, որ խցանը հանեցիր թե չէ, շշից փրփուր է թափվում ոնց որ կատաղած շանից, խաչը վկա, չեմ փչում։ Լեհաստանում, երբ ճեղքեցինք ռազմաճակատը և Սեմյոն Միխայլիչի հետ գնացինք լեհերին ջարդելու, հարձակվեցինք ու կալվածատիրոջ մի տուն գրավեցինք։ Տունը երկու հարկից էլ ավելի է, բակը այնքան լիքն է անասուններով ու ամեն տեսակ թռչուններով, որ թքելու տեղ է՛լ չկա, մի խոսքով, այդ կալվածատերը թագավորի պես էր ապրում։ Երբ մեր դասակը ձիերով հասավ այդ տունը, այնտեղ հենց այդ ժամանակ սպաները քեֆ էին անում տանտիրոջ հետ, մեզ չէին սպասում։ Դրանց բոլորին էլ թրատեցինք այգում և սանդուղքի վրա, մեկին էլ գերի վերցրինք։ Մեծավոր սպա էր, ու երբ գերի բռնեցինք, բեղերն էլ կախ գցեց, թրջվեց վախից։ Գրիգորի Պանտելևիչին վռազ կանչեցին շտաբ, մնացինք մենք ու մենք, մտանք ցածի սենյակները, իսկ այնտեղ կար շատ մեծ մի սեղան, ու ի՞նչ ասես, որ չկար այդ սեղանի վրա։ Հիացանք, ամա վախենում էինք սկսել, թեև սարսափելի

քաղցած էինք։ «Լա՛վ,— մտածում ենք,— բա որ այդ բոլորը թունավորված լինի՞։ Մեր գերին սատանի պես է նայում։ Հրամայում ենք նրան՝ «կեր»։ Ուտում է։ Չի ուզում, ամա ուտում է։ «Խմի՛»։ Խմում է նա։ Ստիպեցինք ամեն մի ուտելիքից մի մեծ կտոր փորձել, ամեն մի շշից մի բաժակ խմել։ Անիծվածը մեր աչքի առաջ ուռչում է այդ ուտելի-խմելիքից, իսկ մեր բերանի ջուրը վազում է հա՛ վազում։ Հետո տեսանք, որ սպան չի մեռնում, մենք էլ սկսեցինք։ Տրաքվելու չափ կերանք-կշտացանք, խմեցինք փրփրուն գինին։ Մեկ էլ ի՞նչ ենք տեսնում,— սպան երկու տեղից էլ դուրս է թափում կերած-խմածը։ «Օ՛-հո-ո-ո,— մտածում ենք,— կորանք, էլի՛։ Շան որդին կերավ թունավորված ուտելիքը ու խաբեց մեզ։ Թրերս դեմ ենք անում նրան, իսկ նա խոսում է ձեռներով ու ոտներով։ «Պաներ, ախր ես ձեր ողորմածությամբ չափից դուրս եմ կերել, մի կասկածեք, լավ ուտելիք է»։ Այստեղ մենք էլի զոռ տվինք գինուն։ Բաց ենք անում շիշը, խցանը թռչում է գնդակի պես, ու փրփուրը այնպես է թափվում, որ մտիկ անողը կվախենա։ Գիշերը ես այդ գինուց երեք անգամ ընկա ձիուց։ Հենց նստում եմ թամքին, քամին էլի խփում, ցած է գցում։ Ես ամեն օր սոված փորով մի-երկու բաժակ այդ տեսակ դինի կխմեի ու հարյուր տարու չափ կապրեի, իսկ այսպես մի՞թե մինչև վերջ կապրես քեզ բաժին ընկած կյանքը։ Զորօրինակ, մի՞թե սա խմիչք է, հը՞։ Զոռ ու ցավ է և ոչ թե խմիչք։ Սրանից, այս անտերից շուտ կմեկնես ոտներդ... — Պրոխորը գլխի շարժումով ցույց տվեց օղու սափորը և... լիքը լցրեց իր բաժակը։

Դունյաշկան գնաց օթախը, երեխաների մոտ քնելու, մի քիչ հետո Պրոխորն էլ վեր կացավ։ Օրորվելով, նա կիսամուշտակը գցեց ուսերին, ասաց.

— Սափորը չեմ վերցնի։ Հոգիս չի թողնում, որ դատարկ ամանով ման գամ... Հիմի կհասնեմ տուն, ու կնիկս կսկսի պատժել ինձ։ Նա այդ լավ գիտի։ Ո՞րտեղից է վերցնում պետրը խոսքերը, ես է՛լ չգիտեմ։ Խմած գալիս եմ տուն, և նա, զորօրինակ, այսպիսի բան է ասում. «Հարբա՛ծ շուն, կոնատ, ֆլան, ֆստան»։ Կամաց-կամաց, հանգիստ խելոքացնում եմ նրան, ասում.—«Տո, գրողի տարած փուչ, տո շան ծիծ կերած, ախր ո՞րտեղ ես տեսել հարբած, այն էլ կոնատ շներ, հը։ Աշխարհքում այդ տեսակ շներ չեն լինում»։ Մի ստոր խոսքը ջրում եմ, նա մի ուրիշ խոսք է ասում, այդ էլ ջրում եմ, երրորդն է հրամցնում, այսպես մինչև լույս մեզ մոտ պատարագ է լինում... Մեկ էլ տեսար զզվեցի նրան լսելուց, գնացի շարդախի տակ քնելու, մեկ էլ տեսար խմած գալիս եմ, ու, եթե նա լռում է, չի հայհոյում, քնել չեմ կարողանում, խաչը վկա։ Ոնց որ թե ինձ մի բան է պակասում, ինչ-որ քոս է գալի վրես,— քունս չի տանում, էլի՛։ Եվ ահա բոթում եմ կողակցիս, ու էլի նա սկսում է ինձ պատժել, հոգիս բերանս բերել։ Նա սատանի կտոր է, ամա ի՞նչ անեմ, թող վովոա, դրանով ավելի թունդ կաշխատի, դրուստ չե՞մ ասում։ Էհ, գնամ, բարով մնացեք։ Գուցե թե այսօր մսուրում քնեմ, հը՞, չանհանգստացնեմ նրան։

— Մինչև տուն կհասնե՞ս,— ծիծաղելով հարցրեց Գրիգորին։

— Խեցգետնի պես ետ-ետ էլ որ գնամ, կհասնեմ։ Բա ես կազակ չե՞մ, Պանտելևիչ։ Մինչև իսկ դա լսելն էլ շատ վիրավորական է։

— Դեհ, բարի ճամփա։

Գրիգորին իր բարեկամին ուղեկցեց մինչև բակի դուռը։ Մտավ խոհանոց։

— Հը՛, խոսե՞նք Միխայիլ։

— Խոսենք։

Նրանք նստած էին իրար դիմաց, սեղանով բաժանված, լռում էին։ Հետո Գրիգորին ասաց.

— Մեր մեջ ինչ-որ սառնություն կա... Այդ երևում է քեզանից։ Իմ գալը քո սրտովը չի՞։ Թե՞ ես սխալվում եմ։

— Ոչ, դու իրավացի ես, սրտովս չի։

— Ինչո՞ւ։

— Ավելորդ հոգս է։

— Ես ինքս կպահեմ ինձ։

— Դրա մասին չեմ խոսում։

— Բա ինչի՞ մասին։

— Ես ու դու թշնամիներ ենք...

— Եղել ենք։

— Եվ երևի կլինենք։

— Չեմ հասկանում։ Ինչո՞ւ։

— Դու անհուսալի մարդ ես։

— Դու այդ զուր ես ասում։ Զուր։

— Ոչ, զուր չեմ ասում։ Ինչո՞ւ են քեզ զորացրել այս-պիսի ժամանակ։ Շիտակ ասա։

— Չգիտեմ։

— Ոչ, գիտես, բայց չես ուզում ասել։ Քեզ չեն վստահել, այդպե՞ս է։

— Եթե չհավատային, հեծելավաշտ չէին տա։

— Դա եղել է սկզբում, իսկ քանի որ քեզ բանակում չեն թողել, ուրեմն բանը պարզ է, աղբերացու։

— Իսկ դու ինձ հավատո՞ւմ ես,— սևեռուն նայելով հարցրեց Գրիգորին։

— Ոչ, ինչքան էլ գայլին կերակրես, աչքը անտառի կողմը կպահի։

— Դու այսօր շատ ես խմել, Միխայիլ։

— Ձեռ քաշի, է՛ Ես քեզանից ավելի հարբած չեմ։ Այնտեղ քեզ չէին հավատում և այստեղ էլ շատ չեն հավատա, լավ իմացիր։

Գրիգորին լռեց։ Ալարկոտ շարժումով նա ափսեից վերցրեց մի կտոր աղած վարունգ, ծամծմեց ու թափեց բերանից։

— Կինս քեզ պատմե՞լ է Կիրյուշկա Գրոմովի մասին,— հարցրեց Միխայիլը։

— Այո։

— Նրա գալը նույնպես սրտովս չէր։ Հենց որ լսեցի, նույն օրը...

Գրիգորին զունատվեց, նրա աչքերը կլորացան կատաղությունից։

— Ես քեզ համար Կիրյուշկա Գրոմո՞վ եմ, ինչ է։

— Մի բղավի։ Իսկ նրանից ինչո՞վ ես լավ։

— Գիտե՞ս ինչ...

— Այստեղ գիտենալու բան չկա։ Վաղուց ամեն ինչ պարզված է։ Հետո էլ Միտկա Կորշունովը կգա, ես դրանով է՞լ պիտի ուրախանամ։ Ոչ, ավելի լավ կլիներ դուք չերևայիք խուտորում։

— Քեզ համար դա լա՞վ է։

— Ինձ համար էլ, ժողովրդի համար էլ լավ է, հանգըստություն կլինի։

— Դու ինձ մի՛ հավատարեցնի նրանց հետ։

— Ես արդեն քեզ ասացի, Գրիգորի, այստեղ չպետք է վիրավորվել. դու նրանցից լավ չես, դու անպայման ավելի վատ, ավելի վտանգավոր ես։

— Ախր ինչո՞վ, է՞, ի՞նչ ես դուրս տալիս։

— Նրանք շարքային են, իսկ դու ղեկավարում էիր ամբողջ ապստամբությունը։

— Ես չէի ղեկավարում, ես դիվիզիայի հրամանատար էի։

— Իսկ դա քի՞չ բան է։

— Քիչ է թե շատ, բանն այդ չի... Եթե այն ժամանակ, քեֆի մեջ կարմիրբանակայինները ինձ սպանելու միտք չունենային, ես գուցե թե չմասնակցեի ապստամբության։

— Եթե սպա չլիներիր, քեզ ոչ ոք ձեռք չէր տա։

— Եթե ինձ ծառայության չվերցնեին, սպա էլ չէի լինի... Դե, այդ երկար երգ է։

— Թե երկար և թե մուռտառ երգ է։

— Հիմի դա չպիտի երգել, ուշ է։

Նրանք լուռ ծխեցին։ Եղունգով ծխախոտի մոխիրը թափելով, Կոշևոյը ասաց.

— Ես գիտեմ քո հերոսությունները, լսել եմ։ Մեզանից դու շատ մարտիկներ ես կոտորել, դրա համար էլ ես չեմ կարող թեթև նայել քեզ... Դա հիշողությունից չի ջնջվի։

Գրիգորին քմծիծաղ տվեց։

— Թունդ հիշողություն ունես, հա՛-ա։ Դու սպանեցիր աղբորս, Պետրոյին, իսկ ես այդ բանը չեմ է՛լ հիշեցնում քեզ... Եթե ամեն բան հիշենք, գայլերի պես պիտի ապրենք։

— Դե, ի՞նչ արած, սպանել եմ։ չեմ թաքցնում։ Եթե այն ժամանակ քեզ բռնեի, քեզ էլ կքնեցնեի ինչպես հարկն է։

— Իսկ ես, երբ Իվան Ալեքսեևիչին Ուստ-Խոպերում գերի վերցրին, շտապում էի այնտեղ, վախենում էի, որ դու էլ էիր այնտեղ, վախենում էի, որ կազակները կսպանեն քեզ... Դուրս է գալիս, որ այն ժամանակ իզուր էի շտապում։

— Լա՛վ բարեգործ է գտնվել։ Մի տեսնեի, թե դու ինձ հետ ոնց կխոսեիր, եթե հիմա կազետական իշխանություն լիներ, եթե դուք հաղթեիք։ Երևի կպլոկեիր մեջքիս կաշին։ Հիմի դու իհարկե բարի ես...

— Գուցե որևէ մեկը կպլոկեր կաշվից, իսկ ես քեզանով ձեռքերս չէի կեղտոտի։

— Ուրեմն ես ու դու տարբեր մարդիկ ենք... Ես կյանքումս չեմ քաշվել ձեռքերս թշնամիներով կեղտոտելուց և հիմի էլ չեմ վրիպի հարկավոր դեպքում։— Միխայիլը օղու մնացորդը լցրեց բաժակները, հարցրեց.— կխմե՞ս։

— Խմենք, թե չէ շատ ենք զգաստացել այս տեսակ խոսակցության համար...

Նրանք բաժակները լուռ զարկեցին իրար, խմեցին։ Գրիգորին կրծքով ընկել էր սեղանին, աչքերը կկոցելով նայում էր Միխայիլին, ոլորում էր բեղը։

— Լավ, դու ինչի՞ց ես վախենում, Միխայիլ, որ ես էլի բո՞ւնտ կանեմ սովետական իշխանության դեմ, հա՞։

— Ես ոչնչից էլ չեմ վախենում, բայց, ի միջի այլոց, մտածում եմ՝ եթե մի որևէ խառնակչություն լինի, դու կանցնես մյուս կողմը։

— Ես այնտեղ կարող էի անցնել լեհերի կողմը, եթե ուզենայի, դու ի՞նչ ես կարծում։ Մեզ մոտ մի ամբողջ զորամաս նրանց կողմն անցավ։

— Չկարողացա՞ր։

— Ոչ, չուզեցի։ Ես վերջացրել եմ իմ ծառայությունը։ Էլ ոչ ոքի չեմ ծառայի։ Շատ եմ կռվել կյանքումս, սարսափելի, բեզարել է հոգիս։ Ինձ ձանձրացրել է ամեն ինչ, թե ռևոլյուցիան և թե կոնտրռևոլյուցիան։ Թող այդ ամբողջ... Թող դա կորչի-գնա, է՛։ Ուզում եմ ապրել երեխաներիս մոտ, զբաղվել տնտեսությամբ և ուրիշ ոչինչ։ Դու հավատա, Միխայիլ, ես սա մաքուր սրտով եմ ասում։

Սակայն ոչ մի հավաստիացում այլևս չէր կարող համոզել Կոշևոյին։ Գրիգորին հասկացավ այդ ու լռեց։ Նա մի ակնթարթ դառնությամբ վրդովվեց ինքն իր դեմ։ Ինչո՞ւ էր արդարանում, փորձում ինչ-որ բան ապացուցել։ Ի՞նչ կարիք կար այդպիսի անհեթեթ խոսակցություն ունենալ և լսել Միխայիլի հիմար քարոզները։ Այդ ամենը — գրողի ծոցը։ Գրիգորին վեր կացավ։

— Վերջացնենք այս ավելորդ խոսակցությունը։ Հերիք է։ Ուզում եմ վերջին անգամ մի բան ասել քեզ. ես իշխանության դեմ չեմ գնա, եթե նա բկիս չչոքի։ Իսկ եթե նեղեց,

կպաշտպանվեմ։ Համենայն դեպս ապստամբության համար Պլատոն Ռյաբչիկովի օրը չեմ ընկնի։

— Այսինքն ի՞նչպես։

— Այդպես։ Թող հաշվի առնեն Կարմիր բանակում կատարածս ծառայությունը և այնտեղ ստացած վերքերս, համաձայն եմ բանտ նստել ապստամբության համար, բայց եթե դրա համար գնդակահարություն ստանամ,— ներեցեք, հեր բաժինը շատ կլինի։

Միխայիլը արհամարհանքով քմծիծաղ տվեց.

— Գլխիցդ մոդա հանեցիր, էլի՛։ Ռևտրիբունալը կամ Չեկան քեզ չի հարցնի, թե ինչ ես ուզում և ինչ չես ուզում, և քեզ հետ չի սակարկի։ Քանի որ հանցանք ես գործել, ուրեմն լիովին ստացիր քո բաժինը։ Հարկավոր է լրիվ վճարել հին պարտքերը։

— Լա՛վ, այդ դեպքում կտեսնենք։

— Կտեսնենք, պարզ բան է։

Գրիգորին հանեց գոտին ու վերնաշապիկը, սկսեց տընքալով հանել սապոգները։

— Բաժանվելո՞ւ ենք,— հարցրեց նա՝ չափից դուրս ուշադիր զննելով պոկված կոշկատակը։

— Մեր բաժանվելը կարճ է. կսարքեմ խրճիթս ու կտեղափոխվեմ այնտեղ։

— Այո, եկ մի կերպ հեռանանք իրարից։ Իմ ու քո մեջ համերաշխություն չի լինի։

— Չի լինի,— հաստատեց Միխայիլը։

— Չէի կարծում, թե դու իմ մասին այդպիսի կարծիք ունես... էհ։ ի՞նչ արած...

— Ես շիտակ ասացի։ Ինչ որ մտածում եմ, այն էլ ասացի։ Ե՞րբ կգնաս Վեշենսկայա։

— Մոտ օրերս կգնամ, էլի՛։

— Ոչ թե մոտ օրերս, այլ վաղը պետք է գնալ։

— Ես համարյա քառասուն վերստ ոտով եմ եկել, բեզարած եմ, վաղը կհանգստանամ, իսկ մյուս օրը կգնամ ցուցակագրվելու։

— Հրաման կա՝ անմիջապես ցուցակագրվել։ Վաղը գնա։

— Մի օր հո պե՞տք է հանգստանալ։ Հո չե՞մ փախչի։

— Սատանեն գիտե քեզ։ Ես չեմ ուզում քեզ համար պատասխանատու լինել։

— Ինչպիսի սրիկա ես դարձել, Միխայիլ,— ասաց Գրիգորին՝ զարմացած դիտելով նախկին ընկերոջ մոայլված դեմքը։

— Դու ինձ սրիկա մի՛ ասա, ես դրան սովոր չեմ... — Միխայիլը շունչ առավ և բարձրացրեց ձայնը։— Սպայական այդ սովորություններից պետք է ձեռք քաշել, հա՛-ա։ Հենց վաղը կմեկնես, իսկ եթե կամովին չգնաս, պահակներով կուղարկեմ, հասկանալի՞ է։

— Հիմա ամեն ինչ հասկանալի է... — Գրիգորին ատելությամբ նայեց դուրս գնացող Միխայիլի մեջքին, առանց հանվելու պառկեց մահճակալի վրա։

Ի՞նչ արած, ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես որ պետք է կատարվեր։ Եվ ինչո՞ւ իրեն, Գրիգորիին պետք է այլ կերպ դիմավորեին։ Իսկապես, ինչո՞ւ էր ինքը կարծում, որ Կարմիր բանակում իր կատարած կարճատև, ազնիվ ծառայությունը կծածկի իր բոլոր անցյալ մեղքերը։ Թերևս իրավացի՞ է Միխայիլը, երբ ասում է, որ ամեն բան չի ներվում և որ պետք է լրիվ վճարել հին պարտքերը։

...Գրիգորին երազում տեսավ լայն տափաստանը, ցրիվ շարքեր կազմած, զրոհի պատրաստված գունդը։ Հեռու-հեռվից արդեն լսվեց ծոր տվող հրամանը՝ «Հեծելավա-ա-ա՜շտ...», երբ նա հիշեց, որ ձիու փորքաշները թուլացրած են։ Ոտը թափով դրեց ձախ ասպանդակին. թամքը ցած ընկավ... Ամոթով ու սարսափով բռնված, նա թռավ ձիուց, որպեսզի ձգեր փորքաշները, և այդ ժամանակ լսեց ձիու սրմբակների վայրկենապես առաջացած և արդեն շեշտակի հեռացող դոփդոփյունը։ Գունդը առանց նրան զրոհի գնաց...

Գրիգորին շուռ եկավ և արթնանալով, լսեց իր խռպոտ հառաչանքը։

Դրսում մի քիչ լուսացել էր։ Պատուհանի փեղկը բացված էր,— հավանորեն քամուց, և մի փոքր եղյամակալած ապակու միջից երևում էր նվազած լուսնի կանաչ, առկայծող բոլորակը։ Գրիգորին խարխափելով գտավ ծխախոտի տոպրակը, ծխեց։ Դեռևս ուժգին տրոփում էր սիրտը։ Նա պառկեց մեջքի վրա, ժպտաց. «Ի՞նչ հիմար երազ էր, է՛. չվիճակվեց կռվել...» Վաղորդյան այդ ժամին նա չէր մտածում, որ թե երազում և թե հարթմնի դեռ մի քունի սնգամ զրոհի է գնալու։

VII

Դունյաշկան վաղ վեր կացավ, հարկավոր էր կթել կովը։ Խոհանոցում զգուշությամբ քայլում, հազում էր Գրիգորին։ Ծածկելով երեխաների վերմակը, Դունյաշկան արագ հագնվեց, մտավ խոհանոց։ Գրիգորին կոճկում էր շինելը։

— Այսքան վաղ ո՞ւր եք գնում, աղբերս։

— Գնամ մի քիչ ման գամ, նայեմ խուտորը։

— Նախաճաշեիք, հետո գնայիք...

— Չեմ ուզում, գլուխս ցավում է։

— Նախաճաշին կվերադառնա՞ք։ Ես հիմի կվառեմ վառարանը։

— Կարիք չկա ինձ սպասել, ես շուտ չեմ գա։

Գրիգորին դուրս ելավ փողոց։ Առավոտյան մի քիչ հալվել էր ձյունը։ Հարավից խոնավ ու տաք քամի էր փչում։ Հողի հետ խառնված ձյունը կպչում էր սապոգների կրունկներին։ Դանդաղ քայլելով դեպի խուտորի կենտրոնը, Գրիգորին ուշադրությամբ, ասես օտար վայրում, դիտում էր մանկուց ծանոթ տներն ու մարագները։ Հրապարակում սևին էին տալիս նախորդ տարում Կոշևոյի վառած վաճառականական տների ու խանութների ածխացած ավերակները, եկեղեցու կիսավեր պարսպի մեջ խոռոչներ էին բացվել։ «Աղյուսը հարկավոր է եղել վառարանների համար»,— անտարբեր մտածեց Գրիգորին։ Առաջվա պես կանգուն էր փոքրիկ, գետնին կոթնած եկեղեցին։ Վաղուց չներկած նրա կտուրը ոսկեվուն ժանգով էր պատել, պատերի վրա սևին էին տալիս կտուրից թափված ջրի հետքերը, իսկ այնտեղ, ուր ընկել էր սվաղը, մերկացած աղյուսը աչքի էր ընկնում վառ և թարմ կարմրությամբ։

Փողոցներում մարդ չկար։ Ջրհորից քիչ հեռու երկու թե երեք քնաթաթախ կանայք հանդիպեցին Գրիգորիին։ Նրանք լուռ ու մունջ բարևեցին Գրիգորիին, որպես օտարի, և միայն

այն ժամանակ, երբ վերջինս արդեն անցել էր նրանց կողքից, կանգ առան ու երկար նայեցին նրա ետևից։

«Հարկավոր է գնալ գերեզմանները, այցելել մորս և Նատալյային»,— մտածեց Գրիգորին և շուռ եկավ գերեզմանոց տանող մի նրբանցք, բայց մի քիչ անցնելով, կանգ առավ։ Առանց այդ էլ ծանր ու մութն էր նրա սիրտը։ «Մի ուրիշ անգամ,— որոշեց նա՝ գնալով Պրոխորի մոտ։— Կգնամ թե չեմ գնա, հիմի այդ միևնույն է նրանց համար։ Այնտեղ հիմի հանգիստ են նրանք։ Ամեն ինչ վերջացած է։ Գերեզմանների վրա ձյուն է իջել։ Իսկ գերեզմանների խորքում հողը իհարկե սառն է... Ապրեցին-պրծան, և ինչքա՜ն շուտ, ասես երազում։ Միասին, իրար կողքի պառկած են բոլորը։— կինս, մայրս, Պետրոն ու Դարյան... Ամբողջ ընտանիքով անցել են այնտեղ ու պառկել իրար կողքի։ Նրանց համար լավ է, իսկ հայրս մենակ է օտար կողմերում։ Տխուր է նա այնտեղ, օտարների մեջ...» Գրիգորին այլևս դես-դեն չէր նայում, քայլում էր գլուխը քարշ արած, դիտում սպիտակ, տաքությունից մի փոքր տամկացած և շատ փափուկ ձյունը, այնքան փափուկ, որ ոտքերի տակ գրեթե չէր զգացվում և համարյա չէր ղողռում։

Հետո Գրիգորին սկսեց մտածել երեխաների մասին։ Նրանք դարձել էին զուսպ, լռակյաց, այնպես չէին, ինչպես իրենց մոր կենդանության ժամանակ, և այդ ամենը չէր համապատասխանում նրանց հասակին։ Մահը չափազանց շատ բան էր հափշտակել նրանցից։ Նրանք վախեցած էին։ Ինչո՞ւ Պոլյուշկան երեկ լացեց, երբ տեսավ հորը։ Երեխաները հանդիպման ժամանակ չեն լալիս, այդ նրանց հատուկ չէ։ Ի՞նչ մտածեց Պոլյուշկան։ Եվ ինչո՞ւ նրա աչքերում վախ երևաց, երբ հայրը գրկեց նրան։ Գուցե նա շարունակ մտածել էր, թե հայրը կենդանի չէ ու այլևս երբեք չի վերադառնա, իսկ հետո, տեսնելով նրան, վախեցավ։ Համենայն դեպս նա, Գրիգորին, ոչնչով մեղավոր չէ երեխաների առաջ։ Միայն հարկավոր է ասել Ակսինյային, որ գթա նրանց և ամեն կերպ աշխատի փոխարինել մորը... Թերևս նրանք կապվեն խորթ մոր հետ։ Նա սիրալիր, բարի կին է։ Սիրելով հորը, կսիրի նաև երեխաներին։

Այդ մասին մտածելը նույնպես դառն էր և ծանր։ Այդ

ամենը այնքան էլ հասարակ բան չէր։ Ողջ կյանքը բնավ այնպես հասարակ բան չէր, ինչպես կարճ ժամանակ առաջ պատկերանում էր նրան։ Հիմար, երեխայական պարզամտությամբ նա ենթադրում էր, որ բավական է տուն վերադառնալ, շինելը փոխարինել կապայով, ու ամեն ինչ լավ կգնա. ոչ ոք իրեն հակառակ խոսք չի ասի, ոչ ոք չի կշտամբի, ամեն ինչ ինքնին կկարգավորվի, ու նա կապրի որպես խաղաղ հողագործ և ընտանիքի օրինակելի հայր։ Ոչ, իրականում դա բնավ էլ հասարակ բան չէ։

Գրիգորին զգուշությամբ բացեց Զիկովի բակի դուռը, որը միայն մի օղակից էր կախված։ Պրոխորը հնամաշ, կլորավուն թաղյակներով, փափախը մինչև հոնքերը քաշած, գնում էր դեպի տան մուտքը, անհոգ թափահարելով դատարկ կովկիթը։ Կաթի սպիտակ կաթիլները անտեսանելի թափթփվում էին ձյան վրա։

— Բարև, ընկեր հրամանատար, ո՞նց ես։

— Փառք աստծու։

— Պետք է մի քիչ կոնծել, թե չէ գլուխս դատարկ է ոնց որ այս դույլը։

— Խմելուց հետո հիմի կոնծելը լավ բան է, իսկ դույլդ ինչո՞ւ է դատարկ։ Դու ի՞նքդ ես կթել կովը։

Պրոխորը գլխի շարժումով փափախը քշեց ծոծրակին, ու միայն այդ ժամանակ Գրիգորին տեսավ իր բարեկամի արտասովոր մռայլ դեմքը։

— Բա հո սատանեն չի՞ կթելու։ Անիծված կնկաս համար եմ կթել։ Չլինի՞ թե փորը ցավի իմ կթելուց... — Պրոխորը չարացած դեն շպրտեց դույլը, կարճ ասաց,— գնանք տուն։

— Բա կի՞նդ,— տատանվելով հարցրեց Գրիգորին։

— Սատանեքը նրան կերել, վրեն էլ կվաս են խմել։ Լույսն ու մութին վեր կացավ, չքվեց-գնաց Կրուժիլինսկի, շլոր բերելու։ Երբ ձեր մոտից տուն եկա, բռնեց յախիցս։ Սկսեց գլխիս շարական կարդալ, հետո էլ վեր թռավ, ասավ՝ «Գնում եմ շլորի, այսօր Մակսաևի հարսները գնում են, ես էլ կերթամ»։— «Գնա թեկուզ տանձի։— մտածում եմ,— գնաս բարով, չգաս տարով»։ Վեր կացա, վառարանը վառեցի,

գնացի կովը կթելու։ Ա՛մա թե կթեցի, հա՛-ա։ Դու կարծում ես մի ձեռքով հե՞շտ է այդ տեսակ գործ անել։

— Մի որևէ կնիկ կանչեիր, դմբո։

— Դմբոն գառն է, նա մինչև Աստվածածնա տոնը մորն է ծծում, իսկ ես կյանքումս դմբո չեմ եղել։ Կարծում էի, թե ինքս կկարողանամ կթել։ Միթամ կթեցի։ Ձեռս տանում եմ ու տանում կովի պտուկին, իսկ նա, անիծված անտերը հանգիստ չի կանգնում, քացի է տալի։ Փափախս էլ հանեցի, որ չվախացնեմ նրան, էլի բան դուրս չեկավ։ Մինչև կթեցի, շապիկս ջուր դառավ, ու հենց որ ձեռքս տարա նրա տակից կովկիթը վերցնելու, ոտքով այնպես զարկեց, որ կովկիթը դեսը թռավ, ես էլ — դենը։ Ա՛յ թե ոնց կթեցի։ Դա ոչ թե կով է, այլ պոզավոր սատանա։ Թքեցի մռութին ու հեռացա։ Ես առանց կաթի էլ կապրեմ։ Հա՛, խմելո՞ւ ենք։

— Կա՞ որ։

— Մի շիշ։ Լավն է։

— Հերիք է, էլի։

— Եկ նստիր, հյուր կլինես։ Զվածեղ անե՞մ։ Ձեռաց կլինի։

Գրիգորին խոզաճարպ կտրատեց, օգնեց տանտիրոջը՝ վառարանը վառելու։ Նրանք լուռ նայում էին, թե ինչպես վարդագույն ճարպի կտորները թշշում, հալչում ու սահում են տապակարանի վրա։ Հետո Պրոխորը պատկերադարակի ետևից փոշոտված մի շիշ հանեց։

— Գաղտնի գործերը կնկանիցս թաքցնում եմ այնտեղ,— կարճ բացատրեց նա։

Նրանք ուտում էին փոքրիկ, տաք վառած օթախում, խմում էին ու ցածր ձայնով խոսում։

Գրիգորին բացի Պրոխորից, էլ ո՞ւմ կարող էր հայտնել իր ամենագաղտնի մտքերը։ Նստել էր նա սեղանի մոտ, լայն տարածել երկար, մկանոտ ոտները, նրա խռպոտ, թավ ձայնը խուլ կերպով էր հնչում.

— ...Բանակում էլ, ամբողջ ճանապարհին էլ մտածում էի, թե ինչպես կապրեմ հողի կողքին, ընտանիքում։ Հանգըստանամ սատանի այս բոլոր գործերից։ Հանա՞ք բան է,— ութ տարի ձիուց չեմ իջել։ Համարյա թե ամեն գիշեր երազումս տեսնում եմ այդ ամբողջ գեղեցկությունը. մերթ

դու ես սպանում, մերթ քեզ են սպանում... Միայն թե, Պրոխոր, երևում է, որ իմ ուզածը չի լինի... Երևում է, որ ոչ թե ես, այլ ուրիշներն են հողը վարելու, խնամելու...

— Երեկ խոսեցի՞ր Միխայիլի հետ։

— Ոնց որ թե մեղրախմիչք խմեցի։

— Բա ինչ էր ասում նա։

Գրիգորին մատներն իրար մեջ առավ։

— Ահա քեզ մեր ընկերությունը։ Կոթում է սպիտակներին ծառայելու համար, կարծում է, թե ոխ եմ պահում նոր իշխանության դեմ, թե ծոցումս դանակ եմ պահում։ Վախենում է, որ ապստամբություն կբարձրացնեմ, իսկ դա ինչի՞ս է պետք,— նա, հիմարը, ինքն էլ չգիտի։

— Նա այդ բանը ինձ էլ էր ասում։

Գրիգորին անուրախ քմծիծաղ տվեց։

— Երբ մենք գնում էինք Լեհաստանի վրա, Ուկրաինայում մի խախոլ մեզանից զենք խնդրեց գյուղը պաշտպանելու համար։ Բանդաները նրանց հալածում էին, թալանում, մորթում անասունները։ Գնդի հրամանատարը իմ ներկայությամբ ասում է՝ «Եթե ձեզ զենք տանք, դուք էլ բանդա կդառնաք»։ Խախոլն էլ ծիծաղում է, ասում՝ «Դուք, ընկեր միայն զինեցեք մեզ, այն ժամանակ մենք ոչ միայն բանդիտներին, այլև ձեզ էլ չենք թողնի մեր գյուղը»։ Ես էլ հիմի այդ խախոլի պես եմ մտածում. թե որ հնար լիներ, չթողնել, որ սպիտակներն էլ, կարմիրներն էլ մտնեն Տատարսկի, ավելի լավ կլիներ։ Իմ կարծիքով նրանք մի գին ունեն,— զորօրինակ, թե աներձագս, Միտկա Կորշունովը, թե Միխայիլ Կոշևոյը։ Միխայիլը կարծում է, թե ես այնքան կողմնակից եմ սպիտակներին, որ առանց նրանց ապրել էլ չեմ կարող։ Ախմա՛խ բան։ Միթամ ես նրանց կողմնակի՞ց եմ, ո՞նց չէ։ Վերջերս, երբ մոտեցանք Ղրիմին, կովում վիճակվեց զարկվել կոռնիլովյան մի սպայի հետ. ուշիմ գնդապետ էր, բեղիկները անգլիական ձևով կտրած, քթածակերի տակ երկու զոլ, ոնց որ փսլինք. ես նրան այնպիսի ջանքով ջնջեցի, որ ուղղակի սիրտս թրթռաց։ Խեղճ գնդապետի վրա մնաց գլխի կեսը՝ գլխարկի կեսի հետ... ու սպայական սպիտակ գլխարկանիշն էլ դեն թռավ... Ահա և իմ ամբողջ կողմնակցությունը։ Նրանք էլ շատ են դաղել ինձ։ Արյունով եմ վաստակել

այս անիծված սպայական աստիճանը, իսկ սպաների մեջ ոնց որ թե սպիտակ ագռավ եմ եղել։ Նրանք, սրիկաները, ինձ իսկի մարդ էլ չէին համարում, զզվում էին ինձ ձեռք տալ, որ ես դրանից հետո պետք է նրանց... թյու, նրանց մայրիկը... մարդ մինչև իսկ զզվում է դրա մասին խոսել։ Միթամ ես պետք է էլի նրանց իշխանությո՞ւնը հաստատեմ, հա՞, գեներալներին, ֆիցխելաուրովների՞ն հրավիրեմ։ Ես մի անգամ փորձեցի այդ բանը, հետո էլ մի տարի զկռտացի, հերիք է, դաս առա, ամեն բան փորձեցի կաշվիս վրա։

Հացը թաթախելով տաք ճարպի մեջ, Պրոխորն ասաց.

— Ոչ մի ապստամբություն էլ չի լինի։ Գլխավորն այն է, որ քիչ կազակներ են մնացել, իսկ ովքեր որ մնացել են, նրանք էլ են դաս առել։ Շատ են թափել եղբայրների արյունը, այնքան են խելոքացել ու սսկվել, որ հիմի վզերին չվան գցելով ու քարշ տալով էլ չես կարող տանել ապըստամբության։ Ժողովուրդն էլ խաղաղ կյանքի է կարոտ։ Դու մի տեսնեիր, թե այս ամառը բոլորն էլ ինչպես էին աշխատում. հա՛ խոտ էին դիզում ու դիզում, հացը հավաքում մինչև վերջին հատիկը, հալից ընկնում են, ամա վարում են ու ցանում, կարծես թե ամեն մեկն էլ հարյուր տարի է ապրելու։ Չէ, ապստամբության մասին խոսելն էլ ավելորդ է։ Հիմար խոսակցություն է դա։ Ասենք, դե ո՛վ գիտի, թե նրանք, կազակները, էլի ինչ կարող էին մոգոնել...

— Ի՞նչ կարող են մոգոնել, դու այդ ինչո՞ւ ես ասում։

— Մեր հարևանները հո մոգոնել են...

— Ի՞նչ։

— Ոնց թե ինչ։ Վորոնեժի նահանգում, Բոգուչարից դեմը ապստամբություն է բարձրացել։

— Դա սուտ բան է։

— Ի՞նչ սուտ, երեկ մի ծանոթ միլիցիոներ ասավ։ Կարծես թե նրանց այնտեղ են ուղարկելու։

— Ի՞նչ տեղերում է դա։

— Մոնաստիրշչինայում, Սուխոյ Դոնեցում, Պասեկում, Ստարի Կալիտվայում, Նովի Կալիտվայում ու էլի ուրիշ տեղերում։ Ասում են ապստամբությունը ահագին չափերի է հասնում։

— Բա ինչո՞ւ երեկ դրա մասին ոչինչ չասացիր, պլոկվա՛ծ սագ։

— Միխայիլի մոտ չուզեցի ասել, և հետո, այդ տեսակ գործերի մասին խոսելուց խեր չկա։ Երանի մարդ ոչինչ էլ չլսի դրա մասին,— տհաճությամբ պատասխանեց Պրոխորը։

Գրիգորին մռայլվեց։ Երկար մտածելուց հետո ասաց.

— Դա վատ նորություն է։

— Քեզ չի վերաբերում։ Թող խախոլները մոգոնեն։ Նչարդեն նրանց քիթ ու մռութը, այն ժամանակ նրանք կիանան, թե ոնց կարելի է ապստամբել։ Իսկ ինձ ու քեզ դա իսկի էլ պետք չի։ Ես նրանց համար հնչ էլ չեմ ցավում։

— Հիմա իմ բանը դժվար կլինի։

— Ինչո՞վ։

— Ոնց թե ինչով։ Եթե օկրուգային իշխանությունն էլ իմ մասին այդպիսի կարծիք ունի, ինչպես Կոշևոյը, ապա ինձ անպատճառ ծակը կկոխեն։ Հարևան վայրերում ապըստամբություն է, իսկ ես նախկին սպա եմ, այն էլ ապըստամբ... Հասկանալի՞ է քեզ։

Պրոխորը դադարեցրեց ուտելը, մտածմունքի մեջ ընկավ։ Այդ նրա մտքովն էլ չէր անցնում։ Խմած վիճակում նա դանդաղ ու դժվար էր մտածում։

— Դու այստեղ ի՞նչ մեղք ունես, Պանտելևիչ,— տարակուսանքով հարցրեց նա։

Գրիգորին բարկացկոտ կնճռոտեց ճակատը, չպատասխանեց։ Նորությունը պարզապես անհանգստացրել էր նրան։ Պրոխորը փորձեց բաժակը մեկնել նրան, բայց Գրիգորին ետ մղեց տանտիրոջ ձեռքը, վճռական ասաց.

— Էլ չեմ խմում։

— Գուցե մի-մի հատ էլ կոնծենք, հը՞։ Խմի, Գրիգորի Պանտելևիչ, մինչև որ աչքերդ մթնեն։ Այս հիանալի կյանքում մխիթարանքը հենց մենակ արաղն է։

— Դու մենակ խմի։ Առանց այդ էլ գլուխս շշմած է, իսկ արաղը բոլորովին կկործանի։ Ես այսօր պետք է Վեշկի գնամ, ցուցակագրվեմ։

Պրոխորը ակնապիշ նայեց նրան։ Գրիգորիի արևավառ, հողմահար դեմքը վառվում էր թունդ, մուգ կարմրությամբ, միայն դեպի ետ սանրված մազերի տակին մաշկը դալուկ

սպիտակություն ուներ։ Հանգիստ էր նա, շատ բան տեսած այդ զինվոր մարդը, որի հետ Պրոխորին մտերմացրել էին պատերազմը և ձախորդությունները։ Գրիգորիի մի փոքր ուռած աչքերը մռայլ խիստ հոգնածորեն էին նայում։

— Չե՞ս վախենում, որ ը-ը-ը, իքը... կնստացնեն քեզ,— հարցրեց Պրոխորը։

Գրիգորին աշխուժացավ։

— Հենց դրանից եմ վախենում, ա՛յ տղա։ Կյանքումս նստած չկամ և բանտից ավելի շատ եմ վախենում, քան մահից։ Բայց երևում է, որ այդ բարիքի համն էլ պիտի տեսնեմ։

— Դու իզուր եկար տուն,— ցավակցությամբ ասաց Պրոխորը։

— Բա ո՞ւր գնայի։

— Քաղաքում մի տեղ կմնայիր, կսպասեիր, մինչև որ հանդարտվեր այս աղմուկը, հետո էլ կգայիր։

Գրիգորին ձեռքը թափ տվեց, ծիծաղեց.

— Դա իմ բանը չի։ Սպասել և ուրիշների ետևից հասնել,— դա ամենազզվելի գործն է։ Բա չգա՞յի երեխաներիս մոտ։

— Բա՛ն ասացիր, էլի՛։ Առանց քեզ նրանք հո ապրո՞ւմ էին։ Հետո կվերցնեիր նրանց ու քո սիրածին։ Հա՛, մոռացա քեզ ասել։ Քո այն աղա-մաղաները, որոնց մոտ պատերազմից առաջ դու ապրում էիր Ակսինյայի հետ, երկուսն էլ քոչել են այն աշխարհը։

— Լիստնիցկինե՞րը։

— Հենց նրանք։ Խնամիս, Զախարը երիտասարդ Լիստնիցկու մոտ սպասյակ էր եղել, պատմում էր, որ ծերուկ պանը Մորոզովսկում մեռել էր տիֆից, իսկ երիտասարդ պանը հասել էր մինչև Եկատերինոդար, այնտեղ նրա կնիկը կապվել էր գեներալ Պոկրովսկու հետ, երիտասարդ պանը, չհաշտվելով այդ բանի հետ, ինքնասպան էր եղել։

— Էհ, չհաննամը լինեն նրանք,— անտարբեր ասաց Գրիգորին,— պետք է ափսոսալ լավ մարդկանց, որոնք կորանգնացին, իսկ դրանց համար դարդ անող չկա։— Նա վեր կացավ, հագավ շինելը, և արդեն դռան ունկը բռնած, մտազբաղ ասաց.— գրո՛ղը տանի, ես միշտ նախանձել եմ այնպի-

սիներին, ինչպիսին երիտասարդ Լիստնիցկին կամ ինչպիսին մեր Կոշևոյը... Նրանց համար հենց սկզբից ամեն բան պարզ է, իսկ ինձ համար մինչև հիմի էլ ոչինչ պարզ չի։ Նրանք երկուսն էլ ունեն իրենց շիտակ ճամփեն, իրենց նպատակները, իսկ ես տասնյոթ թվականից ոլոր-մոլոր ճամփով եմ գնում... օրորվում եմ հարբածի նման... Սպիտակներից կտրվեցի, կարմիրներին չմիացա, այդպես էլ լողում եմ ոնց որ աղբը սառցածակի ջրի երեսին... Գիտե՞ս, Պրոխոր, իհարկե, ես պետք է մինչև վերջ լինեի Կարմիր բանակում, այն ժամանակ գուցե թե ինձ համար ամեն բան լավ գնար։ Ու ես սկզբից,— դու այդ գիտես,— սրտով ծառայում էի սովետական իշխանությանը, հետո էլ այդ բոլորը խանգարվեց... Սպիտակների մոտ, նրանց հրամանատարության համար ես օտար էի, նրանց մոտ միշտ էլ կասկածանքի տակ էի։ Եվ ի՞նչպես կարող էր այլ կերպ լինել։ Հողագործի տղա էի, անդրագետ մի կազակ, էլ ինչո՞վ կարող էի նրանց հարազատ լինել։ Նրանք չէին հավատում ինձ։ Հետո կարմիրների մոտ էլ այդպես եղավ։ Ես հո քոռ չեմ, տեսնում էի, թե հեծելավաշտում կոմիսարը և կոմունիստները ոնց էին նայում ինձ... Կոկի մեջ աչք չէին կտրում ինձանից, հսկում էին ամեն մի քայլս ու երևի մտածում էին՝ «Հը՛մ, սրիկայի մեկը, սպիտակ է, հա՛-ա, կարող է խաբել մեզ»։ Ես հասկացա այդ բանը, ու միանգամից սիրտս սառեց։ Դրանից հետո ես էլ չէի կարող տանել այդ անվստահությունը։ Շոգից հո քարն էլ կճաքի։ Լավ է, որ ինձ արձակեցին ծառայությունից։ Գնալով մոտենում է վերջը։— Նա խուլ հազաց, մի փոքր լռեց և առանց Պրոխորին նայելու, արդեն ուրիշ ձայնով ասաց.— շնորհակալ եմ հյուրասիրության համար։ Ես գնացի։ Ողջություն։ Եթե վերադառնամ, իրիկունը կգամ։ Շիշը պահի, թե չէ կինդ կգա ու թավեն կխփի կռնակիդ, ջարդուփշուր կանի։

Պրոխորը նրան ուղեկցեց մինչև մուտքի սանդուղքը, շշնջաց.

— Պանտելևիչ, տես, հա՛-ա, չլինի՞ թե քեզ այնտեղ հուպ տան։

— Կտեսնեմ,— զուսպ պատասխանեց Գրիգորին։

Առանց տուն գնալու նա իջավ Դոնի ափը, նավամա-

տույցում արձակեց ինչ-որ մեկի կապած նավակը, դրա միջից բռով դուրս թափեց ջուրը, հետո ցանկապատից մի ցից հանեց, ջարդեց առափնյա սառույցը ու նավակով գնաց մյուս ափը։

Դոնի վրա դեպի արևմուտք էին գլորվում մուգ կանաչ, քամուց փրփրող ալիքները։ Ափերի մոտ, ուր հանդարտ էր հոսանքը, նրանք ջարդոտում էին փխրուն, թափանցիկ սառույցը, ճռճում ջրաբույսերի կանաչ ծամերը։ Գետափում հնչում էր կոտրվող սառույցների բյուրեղապակյա զրնգոցը, մեղմիվ խշշում էին ջրի ողողած գետաքարերը, իսկ գետի մեջտեղում, այնտեղ, ուր հոսանքը շեշտակի էր ու համաչափ, Գրիգորին լսում էր միայն նավակի ձախ կողքին խռնվող ալիքների խուլ վշշոցն ու կարկաչյունը և քամու ցածր, թավ ու անլռելի բվվոցը գետամերձ անտառում։

Նավակը կիսով չափ հանելով ափը, Գրիգորին նստեց, հանեց սապոգները, խնամքով փաթաթեց ոտների փաթաթանները, որպեսզի թեթև քայլեր։

Կեսօրին նա հասավ Վեշենսկայա։

Օկրուգային զինվորական կոմիսարիատը բազմամարդ էր և աղմկալից։ Զիլ զրնգում էին հեռախոսի զանգերը, շրխկում դռները, մտնում ու դուրս էին գալիս զինված մարդիկ, սենյակներից լսվում էր գրամեքենաների արագ շչխկոցը։ Միջանցքում մի երկու տասնյակ կարմիրբանակայիններ, ռոմանովյան ծալավոր մուշտակ հագած և կարճահասակ մի մարդու շուրջ խմբվելով, իրար առաջ կտրելով ինչ-որ բան էին ասում և փառ-փառ ծիծաղում։ Երբ Գրիգորին անցնում էր միջանցքով, հեռու մի սենյակից երկու կարմիրբանակային դուրս քաշեցին հաստոցավոր մի գնդացիր։ Դրա անվակները կամացուկ գրգռում էին քերբրված փայտե հատակի վրա։ Գնդացրորդներից մեկը, որ չաղ էր ու բարձրահասակ, կատակով բղավում էր՝ «Դե, ճանապարհ տուր, պատժական վաշտ։ Թե չէ տակով կանեմ»։

«Իսկապես, երևում է, որ պատրաստվում են դուրս գալ ապստամբության դեմ»,— մտածեց Գրիգորին։

Գրանցման ժամանակ նրան երկար չպահեցին։ Հապճեպորեն նշելով վկայականը, զինկոմիսարիատի քարտուղարը ասաց.

— Գնացեք Դոնչեկայի քաղբյուրոն[1]։ Դուք, իբրև նախկին սպա, նրանց մոտ պետք է հաշվի առնվեք։

— Լսում եմ,— Գրիգորին ձեռքը տարավ քունքին՝ բնավ ցույց չտալով իրեն համակած հուզմունքը։

Հրապարակում նա կանգ առավ մտածմունքի մեջ ընկած։ Հարկավոր էր գնալ քաղբյուրո, բայց նրա ամբողջ էությունը դիմադրում էր դրան։ «Կնստեցնեն»,— ասում էր նրան ներքին ձայնը, ու Գրիգորին ցնցվում էր վախից և զզվանքից։ Նա կանգնել էր դպրոցի ցանկապատի մոտ, չտեսնող աչքերով նայում էր աղբոտ գետնին և արդեն իրեն տեսնում էր ձեռքերը կապած, կեղտոտ սանդուղքով գետնահարկը իջնելիս, ետևից էլ նագանի անողորկ կոթը պինդ սեղմած մի մարդ։ Գրիգորին սեղմեց բռունցքները, նայեց ուռած, կապույտ երակներին։ Եվ այդ ձեռքերը պիտի կապեն, հա՞։ Արյունը խփեց դեմքին։ Ո՛չ, այսօր նա չի գնա այնտեղ. վաղը — խնդրե՛մ, իսկ այսօր կգնա խուտոր, այդ օրը կլինի երեխաների հետ, կտեսնի Ակսինյային և առավոտյան կվերադառնա Վեշենսկայա։ Ջհաննմանը թե ոտը ցավում է քայլելիս։ Նա միայն մի օրով կգնա տուն ու կվերադառնա այստեղ, անպայման կվերադառնա։ Վաղը ինչ ուզում է լինի, իսկ այսօր — ո՛չ։

— Օ-օ-օ՛, Մելեխով, լույսը քեզ տեսնողին։

Գրիգորին շուռ եկավ։ Մոտենում էր Յակով Ֆոմինը,— Պետրոյի հետ մի գնդում ծառայած մարդը, Դոնի բանակի նախկին 28-րդ խոռովարար գնդի նախկին հրամանատարը։

Դա արդեն այն Ֆոմինը չէր, անճոռնի ու անփույթ հագնված այն ատամանցին չէր, որին մի ժամանակ ճանաչում էր Գրիգորին։ Երկու տարում նա խիստ փոխվել էր. նրա վրա հիանալի նստել էր լավ քփցրած հեծելազորային շինելը, փափլիկ, շեկ բեղերը ճարպկորեն ոլորված էին, ու ամբողջ կերպարանքը, առանձնահատուկ կորովի քայլվածքը և ինքնագոհ ժպիտը ցույց էին տալիս սեփական գերազանցության և արժանիքի գիտակցությունը։

---

1 Քաղբյուրո — 20—21 թթ. այդպես էին կոչվում Չեկայի օկրուգային կոմ գավառական օրգանները։

— Ո՞ր քամին է քեզ բերել մեզ մոտ,— հարցրեց նա՝ սեղմելով Գրիգորիի ձեռքը, լայնաղիր ու կապույտ աչքերը հառելով նրա աչքերին։

— Զորացրված եմ։ Գնացել էի զինկոմիսարիատ...

— Վաղո՞ւց ես տուն եկել։

— Երեկ։

— Հաճախ հիշում եմ աղբորդ, Պետրո Պանտելեիչին։ Լավ կազակ էր և զուր տեղը սպանվեց... Ես ու նա սրտակից բարեկամներ էինք։ Դուք, Մելեխով, անցյալ տարի չպետք է ապստամբեիք։ Սխալ բան արիք։

Հարկավոր էր որևէ բան ասել, ու Գրիգորին ասավ.

— Այո։ Սխալվեցին կազակները...

— Դու ո՞ր զորամասում էիր։

— Առաջին հեծյալ բանակում։

— Ի՞նչ էիր։

— Հեծելավաշտի հրամանատար։

— Հա՛-ա՛։ Հիմի ես էլ եմ հեծելավաշտի հրամանատար։ Այստեղ, Վեշենսկում մենք ունենք մեր պահակային հեծելավաշտը։— Նա նայեց շուրջը և ձայնը ցածրացնելով առաջարկեց.— ա՛յ թե ինչ, գնանք անցնենք, մի քիչ ինձ ճամփու կդնես, թե չէ այստեղ մարդիկ են գնում ու գալի, կխանգարեն մեզ։

Նրանք գնացին փողոցով, Ֆոմինը, շեղակի նայելով Գրիգորիին, հարցրեց.

— Միտք ունե՞ս տանն ապրել։

— Տանը, բա էլ ո՞րտեղ պիտի ապրեմ։

— Տնտեսությա՞մբ զբաղվել։

— Այո։

Ֆոմինը ափսոսանքով օրորեց գլուխը և հոգոց հանեց.

— Է-Է՛, Մելեխով, վատ ժամանակ ես ընտրել, վա՛տ... Դու հլա դեռ մեկ, երկու տարի չպետք է տուն գայիր։

— Ինչո՞ւ։

Վերցնելով Գրիգորիի արմունկից, մի փոքր թեքվելով, Ֆոմինը շշնջաց.

— Օկրուգում անհանգստություն է։ Կազակները շատ դժգոհ են պարենային մասնատրումից։ Բուգուլարի գավառում ապստամբություն է։ Այսօր գնում ենք ճնշելու։ Ավելի

լավ է դու այստեղից ծլկես, այ տղա, և այն էլ շուտ։ Ես ու Պետրոն լավ ընկերներ էինք, դրա համար էլ ես քեզ այսպիսի խորհուրդ եմ տալիս. հեռացիր։

— Ես հեռանալու տեղ չունեմ։

— Տես, հա՛-ա։ Ես նրա համար եմ ասում, որ քաղբյուրոն սկսում է ձերբակալել սպաներին։ Այս շաբաթ Դուդարևկայից երեք փոխխորունժի բերին, մեկին էլ Ռեշետովկայից, իսկ Դոնի մյուս կողմից խմբերով են բերում, հասարակ, աստիճան չունեցող կազակներին էլ են սկսել հուպ տալ։ Հիմի դո՛ւ գիտես, Գրիգորի Պանտելեիչ։

— Խորհուրդիդ համար շնորհակալ եմ, միայն թե ոչ մի տեղ չեմ գնա,— կամակորությամբ ասաց Գրիգորին։

— Այդ արդեն քո գործն է։

Ֆոմինը խոսեց օկրուգի դրության մասին, օկրուգային իշխանության և օկրուգի զինկոմ Շախաևի հետ իր փոխհարաբերությունների մասին։ Իր մտքերով զբաղված Գրիգորին անուշադրությամբ էր լսում նրան։ Նրանք անցան երեք թաղ, ու Ֆոմինը կանգ առավ։

— Ես պետք է մի տեղ գնամ։ Առայժմ։— Ձեռքը տանելով կուբանյան փափախին, նա սառն հրաժեշտ տվեց Գրիգորիին, գնաց խաչ-փողոցով՝ ճռճռացնելով նոր ուսափոկերը, ուղիղ պահած մարմնով և ծիծաղելիության չափ ծանրումեծ տեսքով։ Գրիգորին հայացքով ուղեկցեց նրան ու ետ դարձավ։ Բարձրանալով քաղբյուրոյի երկհարկանի շենքի քարե սանդուղքով, նա մտածում էր՝ «Պետք է շուտ վերջացնել, ձգձգելու կարիք չկա։ Կարողանում էիր վնասել, Գրիգորի, ուրեմն կարողացիր և պատասխան տալ»։

VIII

Ակսինյան առավոտյան ժամը ութին կիտեց վառարանի կրակը, նստեց նստարանի վրա, գոգնոցով սրբեց կարմրած, քրտնքոտ դեմքը։ Նա վեր էր կացել դեռ լուսաբացից առաջ, որպեսզի շուտ ազատվեր եփել-թափելուց. եփել էր հավով էրիշտա, բլինչիկներ էր պատրաստել, վարենիկի վրա առատությամբ կաթի սեր լցրել, դրել վառարանը՝ լավ տա-

պակելու համար. նա գիտեր, որ Գրիգորին լավ տապակած վարենիկ է սիրում, և տոնական ճաշ էր պատրաստել այն հույսով, որ սիրածը իր մոտ կճաշի։

Նա շատ էր ուզում որևէ պատրվակով գնալ Մելեխովների մոտ, գեթ մի րոպե լինել այնտեղ, գեթ մի աչքով նայել Գրիգորիին։ Ուզղակի աներևակայելի էր մտածել, որ Գրիգորին այդքան մոտիկ է գտնվում, ու չտեսնել նրան։ Բայց Ակսինյան այնուամենայնիվ հաղթահարեց այդ ցանկությունը, չգնաց։ Հիրավի, հո նա փոքրիկ աղջիկ չէ՞։ Այդ հասակում նա չպետք է թեթևամիտ քայլ անի։

Նա սովորականից ավելի խնամքոտ լվաց ձեռները ու երեսը, հագավ մաքուր շապիկ և տակի նոր, զարդակար յուբկա։ Բաց սնդուկի առաջ երկար կանգնեց մտազբաղ. ի՞նչ հագներ վրայից։ Անհարմար էր լի օրը զուգվել, բայց և չէր ուզում մնալ հասարակ, ամեն օրվա շորով։ Չգիտենալով, թե հագնելու համար ինչ շոր ընտրի, Ակսինյան կիտում էր հոնքերը, անփույթ տնտղում արդուկած յուբկաները։ Վերջապես, նա վճռականորեն վերցրեց մուգկապույտ յուբկան և համարյա չհագած բացկապույտ կոֆտան, որ զարդարված էր սև ժանյակով։ Դա լավագույնն էր նրա ունեցածից։ Վերջ ի վերջո միևնույն չէ՞, թե հարևանները ինչ կմտածեն իր մասին։ Շատ էլ նրանց համար այսօր լի օր է, իսկ իրեն համար տոն է։ Նա հապճեպ զուգվեց, մոտեցավ հայելուն։ Զարմանքի թեթև ժպիտը սահեց նրա շրթունքներով. մեկի երիտասարդական, շողուն աչքերը զննողաբար և ուրախ նայում էին իրեն։ Ակսինյան ուշադրությամբ, խստորեն դիտեց իր դեմքը, հետո թեթևացած շունչ առավ։ Ո՜չ, դեռ չէր խամրել իր գեղեցկությունը։ Դեռ քանի՜-քանի կազակներ հանդիպելիս կանգ կառնեն և շշմած աչքերով կուղեկցեն նրան։

Հայելու առաջ շտկելով յուբկան, նա լսելի ձայնով ասաց .«էհ, Գրիգորի Պանտելևիչ, պինդ կաց, հա՜-ա...», ու զգալով, որ կարմրում է, ծիծաղեց մեղմակի, խուլ ծիծաղով։ Սակայն այդ ամենը նրան չխանգարեց քունքերի վրա մի քանի ճերմակած մազ գտնել և դրանք պոկել։ Գրիգորին չպետք է որևէ այնպիսի բան տեսներ, որը նրան կհիշեցներ Ակսինյայի հասակը։ Ակսինյան ուզում էր նրա համար այնպես շահել լինել, ինչպես յոթ տարի առաջ։

Մինչև ճաշ նա մի կերպ նստեց տանը, բայց հետո էլ չհամբերեց ու այծի բրդից արտադրված սպիտակ շալը գցելով ուսերին, գնաց Մելեխովների մոտ։ Դունյաշկան տանը մենակ էր։ Ակսինյան բարևեց, հարցրեց.

— Դուք չե՞ք ճաշել։

— Արի ու տնից փախչողների հետ ճաշիր ժամանակին։ Ամուսինս Սովետումն է, իսկ Գրիշան գնացել է ստանիցա։ Երեխաներին արդեն կերակրել եմ, սպասում եմ մեծերին։

Արտաքուստ հանգիստ, որևէ շարժմամբ կամ խոսքով ցույց չտալով իր հիասթափությունը, Ակսինյան ասաց.

— Ես կարծում էի բոլորդ էլ տանն եք։ Բա Գրիշան... Գրիգորի Պանտելևիչը ե՞րբ կվերադառնա, այսօ՞ր։

Դունյաշկան հարևանցիորեն նայեց զուգված հարևանուհուն, դժկամ ասաց.

— Նա գնացել է ցուցակագրվելու։

— Ե՞րբ է խոստացել վերադառնալ։

Դունյաշկայի աչքերում արցունքներ փայլեցին. կակազելով, նա կշտամբանքով ասաց.

— Միթամ ժամանակ ես գտել... զուգվելու... Չգիտես, որ նա գուցե թե իսկի չվերադառնա...

— Ո՞նց թե, չի՞ վերադառնա։

— Միխայիլը ասում է, թե նրան կձերբակալեն ստանիցայում... — Դունյաշկան լացեց ժլատ, չար արցունքներով, ու թևքով արցունքները սրբելով, ճղճղաց.— անիծվի այս տեսակ կյանքը։ Ե՞րբ պետք է վերջանա այս բոլորը։ Գնաց, ու երեխեքը ոնց որ թե դիվոտեցին,— հոգիս հանում են։ «Ո՞ւր գնաց հայրիկը, ու ե՞րբ կգա»։ Բա ես գիտե՞մ։ Հրեն, նրանց տարա բակը, ու սիրտս ճաքում է ցավից... Ախր սա ի՞նչ տեսակ կյանք է։ Մարդ իսկի հանգիստ չունի, թեկուզ ճաքես...

— Եթե նա մինչև իրիկուն չվերադառնա, էգուց կերթամ ստանիցա, կիմանամ,— Ակսինյան դա այնպիսի անտարբեր տոնով ասաց, որ կարծես թե խոսքը վերաբերում էր ամենասովորական մի բանի, որ չարժեր որևէ հուզման։

Զարմանալով նրա հանգստության վրա, Դունյաշկան հացոց հանեց.

— Երևում է, որ հիմի նրան չպիտի սպասել։ Երանի թե տուն չգար։

— Առայժմ ոչինչ չի երևում։ Դու լաց մի լինի, թե չէ երեխեքը ուրիշ բան կմտածեն... Դեհ բարով մնաս։

Գրիգորին վերադարձավ ուշ երեկոյան։ Տանը մի քիչ մնալով, նա գնաց Ակսինյայի մոտ։

Այն անհանգստությունը, որով Ակսինյան անց էր կացրել ամբողջ երկար ու ձիգ օրը, մի փոքր բթացրեց հանդիպումի բերկրանքը։ Ակսինյան իրիկնադեմին այնպիսի զգացմունք էր ապրում, որ կարծես թե մեջքը ծռած աշխատել էր ամբողջ օրը։ Ճնշված և սպասումից հոգնած, նա պառկեց մահճակալի վրա, ննջեց, սակայն պատուհանի տակից քայլեր լսելով, աղջկա աշխուժությամբ վեր թռավ։

— Ինչու չասացիր, որ Վեշկի ես գնում,— հարցրեց նա՝ գրկելով Գրիգորիին և արձակելով նրա շինելի կոճակները։

— Ժամանակ չունեցա ասելու, շտապում էի։

— Իսկ ես ու Դունյաշկան լաց եղանք, ամեն մեկս առանձին. կարծում էինք, թե չես վերադառնա։

Գրիգորին զուսպ ժպտաց.

— Ոչ, բանը այդտեղ չի հասել։— Մի փոքր լռեց և ավելացրեց.— Հլա չի հասել։

Նա կաղալով մոտեցավ սեղանին, նստեց։ Բաց դռնից երևում էր օթախը, անկյունում դրված փայտե լայն մահճակալը, սնդուկը՝ աղոտ կերպով պլպլող պղնձե կապերով։ Այստեղ ամեն ինչ մնացել էր այնպես, ինչպես այն ժամանակ, երբ Գրիգորին դեռ ջահել տղա էր և Ստեպանի բացակայության օրերին այստեղ էր գալիս. նա համարյա ոչ մի փոփոխություն չտեսավ. կարծես ժամանակը հեռվից-հեռու էր անցնում ու չէր մտնում այդ տունը. պահպանվել էր նույնիսկ առաջվա հոտը. զգացվում էր գայլուկի թարմ ճյուղերի գինեբույրը, մաքուր լվացված հատակների ու մի քիչ էլ — հազիվ զգալի չափով — թառամած ծոթորի բույրը։ Կարծես բոլորովին մոտ օրերում, վաղ առավոտյան Գրիգորին դուրս էր եկել այստեղից, բայց իրոք որքա՞ն վաղուց էր եղել այդ ամենը...

Գրիգորին խեղդեց հառաչանքը ու սկսեց դանդաղորեն ծխախոտ փաթաթել, բայց չգիտես ինչու ձեռքերը դողացին, և նա ծխախոտը թափեց ծնկներին։

Ակսինյան շտապ կերպով սեղան էր գցում։ Հարկավոր էր տաքացնել սառն երիշտան։ Մարագից վազեվազ տաշեղներ բերելով, շնչասպառ ու մի փոքր գունատված Ակսինյան սկսեց վառարանում կրակ վառել։ Նա փչում էր վառվող, կայծեր արձակող ածուխները և երբեմնակի նայում կորացած, լուռումունջ ծխող Գրիգորիին։

— Ո՞նց են գործերդ, ամեն ինչ վերջացրի՞ր։

— Ամեն ինչ լավ անցավ։

— Դունյաշկան ո՞րտեղից է վերցրել, թե քեզ անպատճառ պետք է ձերբակալեն։ Նա ինձ էլ վախեցրեց մեռցնելու չափ։

Գրիգորին կնճռոտեց ճակատը, բարկությամբ դեն գցեց պապիրոսը։

— Միխայիլն է փսփսացել նրա ականջին։ Նա է, որ մոգոնում է այդ բոլորը, ուզում է գլխիս փորձանք բերել։

Ակսինյան մոտեցավ սեղանին։ Գրիգորին վերցրեց նրա ձեռքերը։

— Գիտե՞ս,— ասաց նա՝ ներքևից վերև նայելով Ակսինյայի աչքերին,— իմ գործերը այնքան էլ մխիթարական չեն։ Երբ գնում էի այդ քաղբյուրոն, ես էլ էի կարծում, թե այնտեղից դուրս չեմ գա։ Ինչքան չլինի, ապստամբության ժամանակ ես հո դիվիզիայի հրամանատար եմ եղել, հարյուրապետի աստիճան եմ ունեցել։ Հիմի ճանկում են այդ պիսիներին։

— Նրանք ի՞նչ ասին քեզ։

— Անկետա տվին լրացնելու, այդ տեսակ թուղթ կա, դրա մեջ պետք է գրել ամբողջ ծառայությունը։ Ես էլ ախր գլուխ չունեմ գրելու հետ։ Կյանքումս այդքան շատ բան չէի գրել, երկու ժամ նստեցի, գրեցի իմ անցած ամբողջ ծառայության մասին։ Հետո էլ սենյակ մտան երկու հոգի, հա՛ հարցնում էին ապստամբության մասին։ Ոչինչ, լավ վարվող մարդիկ են։ Ավագը հարցնում է՝ «Չայ չե՞ք ուզում, միայն թե սախարինով է»։ Ի՞նչ չայ, է՛,— մտածում եմ ես,— այստեղից պրծնեմ ու դուրս գամ,— ա՛յ թե ինչ եմ ուզում.—

Գրիգորին մի փոքր լռեց և իր մասին, ասես կողմնակի մարդու մասին, արհամարհանքով ասաց.— Հաշիվ տալու մեջ տկար եղա... Վախեցա։

Նա ինքն իր վրա չարացած էր այն պատճառով, որ այնտեղ, Վեշենսկում վախեցել էր և ուժ չէր ունեցել հաղթահարելու իրեն համակած երկյուղը։ Նա կրկնակի չափով վրդովված էր, որ իր երկյուղը ապարդյուն էր եղել։ Հիմա ծիծաղելի ու ամոթալի էր այն ամենը, ինչ որ ապրել էր նա։ Ամբողջ ճանապարհին նա դրա մասին էր մտածում ու թերևս դրա համար էլ այժմ պատմում էր այդ բոլորի մասին՝ ծաղրելով ինքն իրեն և մի փոքր չափազանցնելով իր ունեցած ապրումները։

Ակսինյան ուշադրությամբ լսեց նրա պատմածը, հետո մեղմակի ազատեց ձեռները ու մոտեցավ վառարանին։ Խառնելով կրակը, նա հարցրեց.

— Բա հետո ո՞նց կլինի։

— Մի շաբաթից հետո էլի պետք է գնալ, նշվել։

— Կարծում ես վերջը կբռնե՞ն քեզ։

— Ինչպես երևում է՝ այո։ Վաղ թե ուշ կբռնեն։

— Բա ի՞նչ պիտի անենք, ո՞նց պիտի ապրենք, Գրիշա։

— Չգիտեմ։ Եկ դրա մասին հետո խոսենք։ Լվացվելու ջուր կա՞։

Նրանք նստեցին ընթրելու, և վերստին վերադարձավ Ակսինյայի այն լիակշիռ երջանկությունը, որ նա զգում էր առավոտյան։ Գրիգորին այստեղ էր, իր կողքին, կարելի էր անընդհատ նայել նրան, գիտենալով, որ կողմնակիները չեն հետապնդում իր հայացքներին. կարելի էր աչքերով ասել ամեն ինչ, առանց քողարկվելու և շփոթվելու։ Տե՛ր աստված, որքա՞ն կարոտել էր նրան, որքա՞ն իր մարմինը նվաղել, ծարավել էր այդ մեծ, կոշտ ձեռքերին։ Ակսինյան համարյա ձեռք չէր տալիս ուտելիքին. մի փոքր դեպի առաջ թեքված, նայում էր, թե ինչպիսի ագահությամբ է ուտում Գրիգորին, մշուշված հայացքով փայփայում էր նրա դեմքը, վերնաշապկի կանգուն օձիքով սեղմված, թուխ վիզը, լայն թիկունքը, սեղանի վրա ծանր դրվող ձեռքերը... Ակսինյան ագահությամբ ներշնչում էր տղամարդու տտիպ քրտնքի և ծխախոտի խառն հոտը, որ գալիս էր Գրիգորիից,— այնքա՜ն ծանոթ ու հարազատ հոտը, որ հատուկ էր միայն Գրիգորիին։ Եթե Ակսինյայի աչքերը կապված լինեին, նա կարող էր հազար տղամարդու մեջ հոտից ճանաչել իր Գրիգորիին... Նրա այտերը թունդ շիկնել էին, արագ ու թնդալից տրոփում էր սիրտը։ Այդ երեկո նա չէր կարող ուշադիր տանտիրուհի լինել, որովհետև շուրջը բացի Գրիգորիից, ուրիշ ոչինչ չէր տեսնում։ Վերջինս ուշադրություն չէր է՛լ պահանջում. ինքը հաց կտրեց, աչքերով փնտրեց և վառարանի բուխարիկի վրա գտավ աղամանը, ափսեի մեջ երկրորդ անգամ էրիշտա լցրեց իր համար։

— Շատ պես քաղցած եմ,— ասես արդարանալու համար ժպտալով ասաց նա.— առավոտից ոչինչ չեմ կերել։

Եվ միայն այդ ժամանակ Ակսինյան հիշեց իր պարտականությունները, շտապ վեր թռավ տեղից։

— Ա՛խ, ի՛նչ հիմարն եմ եղել. մոռացել եմ վարենիկն ու բլինչիկները։ Հավի միս կեր, խնդրում եմ, շատ կեր, հոգյակս... Հիմի բոլորը կբերեմ։

Բայց որքա՞ն երկար ու ագահաբար էր ուտում Գրիգորին։ Կարծես նրան մի ամբողջ շաբաթ չէին կերակրել։ Բոլորովին ավելորդ էր խնդրել, որ նա ուտեր։ Ակսինյան համբերությամբ սպասում էր, հետո այնուամենայնիվ չդիմացավ. նստեց նրա կողքին, ձախ ձեռքով գրկեց գլուխը, աջով վերցրեց մաքուր, ասեղնագործած սրբիչը, ինքը սրբեց սիրածի յուղոտված շրթունքները և կզակը, ու աչքերը կկոցելով այնպես, որ մթության մեջ դրանք շողացին նարնջագույն կայծերով, առանց շնչելու շուրթերը պինդ հպեց նրա շուրթերին։

Էապես ասած, մարդուս շատ քիչ բան է հարկավոր, որ նա երջանիկ լինի։ Ակսինյան, համենայն դեպս, այդ երեկո երջանիկ էր։

IX

Գրիգորիի համար ծանր էր հանդիպել Կոշևոյին։ Առաջին օրվանից որոշվել էին նրանց հարաբերությունները, ու նրանք այլևս խոսելիք չունեին և կարիք էլ չկար խոսելու։ Ամենայն հավանականությամբ Միխայիլի համար նույնպես

հաճելի չէր տեսնել Գրիգորիին։ Նա երկու ատաղձագործ վարձեց, և սրանք շտապ նորոգեցին նրա խրճիթը. փոխեցին կտուրի կիսափտած ծպեղները, քանդեցին ու նորից շարեցին ծռված պատերից մեկը, նոր դրանդիներ, շրջանակներ ու դռներ շինեցին։

Վեշենսկուց վերադառնալուց հետո Գրիգորին գնաց խուտորի ռևկոմը, զինկոմիսարիատի նշած իր զինվորական փաստաթղթերը ներկայացրեց Կոշևոյին ու հեռացավ առանց հրաժեշտ տալու։ Նա տեղափոխվեց Ակսինյայի մոտ, իր հետ վերցրեց երեխաներին ու իր գույքից մի որոշ բան։ Նրան նոր բնակարան ուղեկցելով, Դունյաշկան լաց եղավ։

— Աղբերս, ինձանից չնեղանաք, ես ձեր առաջ մեղավոր չեմ,— ասաց նա՝ աղերսանքով նայելով եղբորը։

— Դունյա, ինչո՞ւ պիտի նեղանամ, ի՞նչ ես ասում,— հանգստացրեց նրան Գրիգորին։— Մեզ մոտ արի... Քո հարազատներից միայն ես եմ մնացել, ես քեզ միշտ էլ խղճացել եմ ու հիմի էլ խղճում եմ... դե, իսկ քո ամուսինը,— այդ ուրիշ բան է։ Իմ ու քո բարեկամությունը չի խախտվի։

— Մենք շուտով կտեղափոխվենք տանից, մի բարկանա։

— Չէ՛, էլի՛,— սրտնեղումով ասաց Գրիգորին,— ապրեցեք տանը գոնե մինչև գարուն։ Դուք ինձ չեք խանգարի, իսկ ինձ ու երեխաների համար Ակսինյայի մոտ տեղ կլինի։

— Ամուսնանո՞ւմ ես նրա հետ, Գրիշա։

— Դրա ժամանակն էլ կգա,— անորոշ պատասխանեց Գրիգորին։

— Ա՛ռ նրան, աղբերս, նա լավն է,— վճռականորեն ասաց Դունյաշկան։— Լուսահոգի մերս ասում էր, որ դու հենց միայն նրան պետք է կին առնես։ Նա վերջին ժամանակներում լավ էր Ակսինյայի հետ, մեռնելուց առաջ հաճախ նրա մոտ էր գնում։

— Դու ոնց որ թե համոզում ես ինձ,— ժպտալով ասաց Գրիգորին,— նրանից բացի էլ ո՞ւմ հետ պիտի ամուսնանամ, Անդրոնիխա տատի հե՞տ, ինչ է։

Անդրոնիխան ամենազառամյալ պառավն էր Տատարսկում։ Վաղուց էր, որ նա հարյուր տարուց անց էր։ Դունյաշկան վերհիշելով նրա փոքրիկ, մինչև գետին կռացած մարմինը, ծիծաղեց.

— Ինչե՞ր ես ասում, աղբերս։ Ես հենց այնպես հարցրի։ Դու դրա մասին լռում ես, ես էլ հարցրի, էլի՛։

— Քեզ հո առաջինը կկանչեմ հարսանիքին,— Գրիգորին կատակով տփտփացրեց քրոջ ուսին ու թեթև սրտով գնաց հայրենական տնից։

Ճշմարիտն ասած՝ նրա համար միևնույն էր, թե որտեղ էր ապրելու միայն թե հանգիստ ապրեր։ Բայց ահա հենց այդ հանգստությունն էր, որ նա չէր գտնում... Մի քանի օր նա անցկացրեց ճնշող անգործությամբ։ Փորձեց ինչ-որ բան շինել Ակսինյայի տնտեսության մեջ, և իսկույն զգաց, որ ոչինչ չի կարող շինել։ Սիրտը ոչ մի բանի չէր կպչում։ Սաները անորոշությունը տանջում էր նրան, խանգարում կյանքը. ոչ մի բոպե նրանից չէր հեռանում այն միտքը, որ կարող են ձերբակալել իրեն, լավագույն դեպքում բանտ նետել, կամ հենց գնդակահարել։

Գիշերները արթնանալով, Ակսինյան տեսնում էր, որ նա քնած չէ։ Գրիգորին սովորաբար պառկում էր մեջքի վրա, ձեռները դնելով գլխի տակ, նայում էր աղջամուղջային մթության ու նրա աչքերը սառն ու բարկացկոտ էին լինում։ Ակսինյան գիտեր, թե նա ինչի մասին է մտածում։ Ոչնչով չէր կարող օգնել նրան։ Նա ինքն էլ էր տանջվում՝ տեսնելով նրա ծանր դրությունը ու գլխի ընկնելով, որ համատեղ կյանքի իր հույսերը նորից անիրագործելի են դառնում։ Նա ոչինչ չէր հարցնում Գրիգորիին։ Թող վերջինս ինքը որոշի ամեն ինչ։ Միայն մի գիշեր, երբ արթնացավ և կողքից տեսավ ծխախոտի կարմիր կրակը, ասաց.

— Գրիշա, դու իսկի չես քնում... Գուցե դու միառժամանակ հեռանայիր խուտորից, հը՞։ Կամ գուցե միասին մեկնենք որևէ տեղ, թաքնվենք։

Գրիգորին վերմակով հոգատարությամբ ծածկեց նրա ոտները ու դժկամ պատասխանեց.

— Ես կմտածեմ։ Դու քնիր։

— Հետո էլ կվերադառնանք, երբ այստեղ հանգստություն կլինի, հա՞։

Ու Գրիգորին դարձյալ պատասխանեց անորոշ, այնպես, որ կարծես ինքը ոչինչ չէր որոշել.

— Տեսնենք, էլի, թե հետո ինչ կլինի։ Քնիր, Կսյուշա։— Ու զգուշությամբ, փաղաքշանքով շրթունքները հպեց նրա մերկ, մետաքսանման զով ուսին։

Բայց իրոք նա արդեն որոշում էր ընդունել, այլևս չի գնա Վեշենսկայա։ Նրան իզուր կսպասի քաղբյուրոյի այն մարդը, որը անցյալ անգամ ընդունել էր նրան։ Նա այն ժամանակ նստել էր սեղանի առաջ, շինելը ուսերին գցած, ճքացնելով ձգում էր մարմինը և առերևույթ հորանջում՝ լսելով նրա, Գրիգորիի պատմածը ապստամբության մասին։ Նա այլևս ոչինչ չի լսի։ Ամեն ինչ ասված է։

Այն օրը, երբ հարկավոր է գնալ քաղբյուրո, Գրիգորին կհեռանա խուտորից, հարկավոր դեպքում— երկար ժամանակով։ Թե ուր կգնա, նա դեռ ինքն էլ չգիտեր, բայց հաստատ որոշել էր հեռանալ։ Նա չէր ուզում ոչ մեռնել, ոչ էլ բանտ նստել։ Նա որոշում էր ընդունել, բայց չէր ուզում վաղօրոք այդ ասել Ակսինյային։ Կարիք չկար թունավորել վերջին օրերը, դրանք առանց այդ էր շատ ուրախ չէին անցնում։ Դրա մասին պետք է ասել վերջին օրը,— այսպես էր որոշել Գրիգորին։ Իսկ այժմ նա թող հանգիստ քնի երեսը Գրիգորիի թեատակին դրած։ Նա այդ օրերին հաճախ ասում էր՝ «Ի՜նչ լավ է քնել քո թևի տակ»։ Եվ թող առայժմ քնի։ Խեղճ կնոջ համար քիչ ժամանակ է մնացել Գրիգորիին փարվելու...

Գրիգորին առավոտները խնամում էր երեխաներին, հետո աննպատակ թափառում էր խուտորում։ Մարդկանց մեջ նա իրեն ավելի ուրախ էր զգում։ Մի անգամ Պրոխորը առաջարկեց հավաքվել Նիկիտա Մելնիկովի մոտ, խմել ծառայակից երիտասարդ կազակների հետ։ Գրիգորին վճռականապես հրաժարվեց։ Խուտորցիների խոսակցություններից նա գիտեր, որ նրանք դժգոհ են պարենային մասնատրումից և որ քեֆի ժամանակ դրա մասին անխուսափելիորեն խոսք է լինելու։ Նա չէր ուզում կասկածանքի առիթ տալ և նույնիսկ ծանոթներին հանդիպելիս էլ խուսափում էր քաղաքականության վերաբերյալ խոսակցություններից։ Բավական է նա զբաղվի այդ քաղաքականությամբ, մեկ է, դրանից գլուխ չի հանում։

Զգուշությունը ավելորդ չէր մանավանդ այն պատճառով, որ պարենային մասնատրման կարգով քիչ հաց էր հանձնվում և այդ առնչությամբ իբրև պատանդներ երեք ծերունի էին բռնել, պարենային մասնատրման երկու ջոկատավորների հսկողությամբ ուղարկել Վեշենսկայա։

Հետևյալ օրը սպառկոոպի խանութի մոտ Գրիգորին տեսավ Կարմիր բանակից նոր վերադարձած նախկին հրետանավոր Զախար Կրամսկովին։ Վերջինս թունդ հարբած էր, ճոճվում էր քայլելիս, բայց մոտենալով Գրիգորիին, կոճկեց սպիտակ կավով կեղտոտված կուրտկայի բոլոր կոճակները, և խոպոտ ասաց.

— Բարև, Գրիգորի Պանտելևիչ։

— Բարև։— Գրիգորին սեղմեց վայելչակազմ և ծփի ծառի նման պինդ հրետանավորի լայն թաթը։

— Ճանաչո՞ւմ ես։

— Ինչպե՛ս չէ։

— Հիշո՞ւմ ես, թե անցյալ տարի Բոկովսկու մոտերքում մեր մարտկոցը ոնց փրկեց քեզ։ Առանց մեզ քո հեծելազորի բանը դժվար կլիներ։ Քանի՜-քանի կարմիրներ կոտորեցինք այն ժամանակ, զարզանդելի բան էր, հա՜-ա։ Մերթ արկով էինք խփում, մերթ շրապնելով... Ես առաջին թնդանոթի վրա իբրև նշանառու էի աշխատում, ե՞ս։— Զախարը բռունցքով պինդ գմբացրեց լայն կրծքին։

Գրիգորին աչք ածեց դես ու դեն. մոտիկում կանգնած կազակները նրանց էին նայում, լսում տեղի ունեցող խոսակցությունը։ Գրիգորիի շրթունքների անկյունները դողացին, կատաղությունից նա ցույց տվեց սպիտակ, պինդ ատամները։

— Դու հարբած ես,— ցածր ձայնով ասաց նա՝ շարունակելով իրար սեղմել ատամները,— գնա քնիր և ավելորդ բան մի դուրս տա։

— Չէ՛, ես հարբած չեմ,— բարձր բղավեց քեֆը չաղ հրետանավորը։— Կարելի է, թե ես դարդից եմ խմել։ Եկել եմ տուն, իսկ այստեղ ոչ թե կյանք է այլ բ... Կազակների համար էլ կյանք չկա ու կազակներ չկան։ Քառասուն փութ հաց եմ տվել, սա ի՞նչ է, հը՞։ Նրանք ցանե՞լ են այդ հացը, որ տանում են, հը՞։ Նրանք գիտե՞ն, թե դա, հացը ինչի վրա է բուսնում։

Նա նայում էր անիմաստ, արյունալից աչքերով և հանկարծ ճոճվելով, արջի անճոռնությամբ գրկեց Գրիգորիին, օղու թունդ հոտը փչեց վերջինիս երեսին։

— Դու ինչո՞ւ առանց լամպասի շալվար ես հագել, հը՞։ Մուժի՞կ ես դառնալու։ Ձենք թողնի։ Հոգի՛դ սիրեմ, Գրիգորի Պանտելևիչ։ Պետք է էլի՛ կռվել։ Ոնց որ անցյալ տարի էինք ասում, էլի կասենք՝ կորչի կոմունիան, կեցցե սովետական իշխանությունը։

Գրիգորին նրան ուժով դեն հրեց, շշնջաց.

— Գնա տուն, հարբած սրիկա, դու գիտակցո՞ւմ ես թե ինչ ես ասում։

Կրամսկովը լայն բացված, ծխախոտից դեղնած մատներով ձեռքը պարզեց դեպի առաջ, մռթմռթաց.

— Ներիր, եթե իմ կողմից սխալություն եղավ։ Ների, աղբեր, ամա ես քեզ դուզ եմ ասում, իբրև իմ հրամանատարին... Իբրև հարազատ հայր-հրամանատարին. պետք է էլի կռվել։

Գրիգորին լուռումունջ շուռ եկավ, հրապարակի միջով գնաց տուն։ Մինչև երեկո նա գտնվում էր այդ անհեթեթ հանդիպման տպավորության տակ, հիշում էր հարբած Կրամսկովի ճչոցները, կազակների համակրական լռությունը և ժպիտները, ու մտածում էր՝ «Ոչ, պետք է շուտ հեռանալ, լավ բան չի լինի...»

Շաբաթ օրը պետք է գնար Վեշենսկայա։ Երեք օրից հետո նա պետք է հեռանար հայրենի խուտորից, բայց այդպես չեղավ. հինգշաբթի գիշերը, երբ Գրիգորին արդեն պատրաստվում էր պառկելու, մեկը ուժգին ծեծեց դուռը։ Ակսինյան դուրս ելավ հաշտը։ Գրիգորին լսեց, թե ինչպես նա հարցրեց՝ «Ո՞վ է»։ Նա պատասխանը չլսեց, բայց անհանգստության տարտամ զգացումով բռնված, վեր կացավ մահճակալից ու մոտեցավ պատուհանին։ Հաշտից լսվեց դռան փակի չխկոցը։ Առաջինը ներս մտավ Դունյաշկան։ Գրիգորին տեսավ նրա գունատ դեմքը և դեռ ոչինչ չհարցնելով, նստարանից վերցրեց փափախն ու շինելը։

— Աղբե՛ր...

— Ի՞նչ է,— կամացուկ հարցրեց Գրիգորին՝ հագնելով շինելը։

Դունյաշկան հևալով, հապճեպ ասաց.

— Աղբերս, գնա հենց հիմի։ Ստանիցայից չորս ձիավոր են եկել մեզ մոտ։ Նստել են օթախում... Նրանք փըսփըսալով էին խոսում, բայց ես լսեցի... Կանգնեցի դռան մոտ և ամեն բան լսեցի... Միխայիլը ասում է՝ քեզ պետք է ձերբակալել... Քո մասին պատմում է նրանց... Փախիր։

Գրիգորին արագ մոտեցավ նրան, գրկեց, սինդ համբուրեց թուշը։

— Շնորհակալ եմ, քույրս։ Գնա, թե չէ կնկատեն քո դալը։ Մնաս բարով։— Ու դարձավ դեպի Ակսինյան։— Հա՛ց, շո՛ւտ։ Մի կտոր, ոչ թե ամբողջ հացը։

Ահա և վերջացավ նրա կարճատև խաղաղ կյանքը... Նա գործում էր ինչպես մարտում, հապճեպորեն, բայց վստահաբար, անցավ օթախը, զգույշ համբուրեց քնած երեխաներին, գրկեց Ակսինյային։

— Մնաս բարով։ Շուտով լուր կտամ։ Պրոխորը կասի։ Երեխաներին լավ պահիր։ Դուռը փակիր։ Եթե հարցնեն, ասա՝ գնացել է Վեշկի։ Դեհ, մնաս բարով, դարդ մի՛ անի, Կսյուշա։— Համբուրելով Ակսինյային, նա շուրթերի վրա զգաց արցունքների տաք, աղի թացությունը։

Նա ժամանակ չուներ սփոփելու և լսելու Ակսինյայի անզոր, կցկտուր թոթովանքը։ Նա մեղմակի անջատեց իրեն գրկած ձեռքերը, դուրս ելավ հաշտը, ականջ դրեց և արագ բացեց դրսի դուռը։ Դոնից փչող պաղ քամին խփեց նրա երեսին։ Նա մի վայրկյան փակեց աչքերը, որ ընտելանար մթությանը։

Ակսինյան սկզբում լսեց, թե ձյունը ինչպես է հռռում Գրիգորիի ոտների տակ։ Յուրաքանչյուր քայլը սուր ցավով խոցում էր նրա սիրտը։ Հետո քայլերի ձայնը լռեց և խշշաց ցախե ցանկապատը։ Հետո էլ ամեն ինչ լռեց, միայն քամին էր աղմկում Դոնի մյուս կողմի անտառում։ Ակսինյան փորձում էր որևէ բան լսել քամու աղմուկում, բայց ոչինչ չլսեց։ Նա մրսում էր։ Մտավ խոհանոց և հանգցրեց լամպը։

X

1920 թվականի ուշ աշնանը, երբ պարենային մասնատման կարգով հացի վատ ստացման կապակցությամբ պարենավորման ջոկատներ ստեղծվեցին, Դոնի կազակ բնակչության մեջ խուլ հուզմունք սկսվեց։ Դոնի մարզի վերին ստանիցաներում — Շումիլինսկում, Կազանսկում, Միգուլինսկում, Մեշկովսկում, Վեշենսկում, Ելանսկում, Սլաշչևսկում և այլ ստանիցաներում փոքրիկ, զինված բանդաներ կազմվեցին։ Դա կազակության ունևոր մասի պատասխանն էր պարենավորման ջոկատների ստեղծման, պարենային մասնատումը գործադրելու ուղղությամբ սովետական իշխանության ուժեղացող միջոցառումներին։

Բանդաները, որոնցից յուրաքանչյուրում կար հնգից մինչև քսան մարդ, մեծամասնությամբ կազմված էին տեղական կազակ բնակիչներից, անցյալում ակտիվ սպիտակգվարդիականներից։ Նրանց մեջ կային 18—19 թվականներին պատժիչ ջոկատներում ծառայածներ, կրտսեր հրամանատարական կազմի սեպտեմբերյան մոբիլիզացիայից խուսափած ուրյադնիկներ, վախմիստրներ և փոխխորունժիներ Դոնի նախկին բանակից, ապստամբներ, որոնք Վերին Դոնի օկրուգի նախորդ տարվա ապստամբության ժամանակ հռչակվել էին մարտական սխրագործություններով և գերի կարմիր բանակայիններին գնդակահարելով,— մի խոսքով, այնպիսի մարդիկ, որոնք սովետական իշխանության հետ միևնույն ճանապարհով չէին ընթանում։

Խուտորներում նրանք հարձակվում էին պարենավորման ջոկատների վրա, վերադարձնում էին մթերակայաններ գնացող, հացով բեռնված գումակները, սպանում էին կոմունիստներին և սովետական իշխանությանը նվիրված անպարտիական կազակներին։

Բանդաների լիկվիդացման խնդիրը հանձնարարված էր Վերին Դոնի օկրուգի պահակային գումարտակին, որը տեղավորված էր Վեշենսկում և Բազկի խուտորում։ Բայց օկրուգի ընդարձակ տերիտորիայում ցրված բանդաների ոչնչացման բոլոր փորձերը ապարդյուն եղան,— նախ՝ այն պատճառով, որ տեղական բնակչությունը համակրանքով էր

վերաբերվում բանդիտներին, նրանց պարեն էր մատակարարում և տեղեկություններ էր տալիս կարմիրբանակային զորամասերի շարժման մասին, ինչպես նաև թաքցնում էր հետապնդումից, և, երկրորդ, այն պատճառով, որ գումարտակի հրամանատար Կապարինը, ցարական բանակի նախկին շտաբս-կապիտան և էսեռ,— չէր ուզում, որ ոչնչացվեին Վերին Դոնում նոր առաջացած կոնտրռևոլյուցիոն ուժերը և ամեն կերպ խանգարում էր այդ գործը։ Լոկ միայն ժամանակ առ ժամանակ, այն էլ պարտիայի օկրուգային կոմիտեի նախագահի ճնշմամբ նա կարճատև հարձակումներ էր ձեռնարկում ու նորից վերադառնում Վեշենսկայա, պատճառաբանելով, թե չի կարող ջլատել ուժերը և անխոհեմ ռիսկի դիմել, Վեշենսկայան և այնտեղի օկրուգային հիմնարկությունները և պահեստները թողնել առանց պատշաճ պահպանության։ Գումարտակը, որ մոտ չորս հարյուր սվին և տասնչորս գնդացիր ուներ, կայազորային ծառայություն էր կատարում. կարմիրբանակայինները հսկում էին կալանավորներին, ջուր էին տանում, անտառում ծառեր կտրում, ինչպես նաև աշխատանքային պարհակի կարգով կաղնու տերևներից գիտոր էին հավաքում թանաք պատրաստելու համար։ Գումարտակը հաջողությամբ փայտ ու թանաք էր հայթայթում օկրուգային բազմաթիվ հիմնարկություններին ու գրասենյակներին, իսկ այդ ժամանակ օկրուգում սպառնալից կերպով աճում էր մանր բանդաների քանակը։ Եվ միայն դեկտեմբերին, երբ խոշոր ապստամբություն սկսվեց Վորոնեժի նահանգի Բուգուչարի գավառում, որը կից էր Վերին Դոնի օկրուգին, ակամա դադարեց թե անտառանյութերի մթերումը և թե գիտորների հավաքումը։ Դոնի մարզի զորահրամանատարի հրամանով գումարտակը, որ կազմված էր երեք վաշտից և գնդացրային մի դասակից, պահակային մի հեծելավաշտի, պարենավորման 12-րդ գնդի 1-ին գումարտակի ու երկու փոքրաթիվ փակոցային ջոկատների հետ ուղարկվեց այդ ապստամբությունը ճնշելու։

Սուխոյ Դոնեց գյուղի մատույցներում Վեշենսկու հեծելավաշտը Յակով Ֆոմինի հրամանատարությամբ թևից գրոհ տվեց ապստամբների շղթաների վրա, ճզմեց դրանք, փախուստի մատնեց և հետապնդելիս թրատեց մոտ հարյուր յո-

թանասուն մարդ՝ կորցնելով ընդամենը երեք մարտիկ։ Հեծելավաշտում, չնչին բացառությամբ, բոլորն էլ կազակներ էին,— Դոնի վերին ստանիցաների բնակիչներ։ Նրանք այստեղ էլ չդավաճանեցին կազակական դարավոր տրադիցիաներին. կռվից հետո, չնայած հեծելավաշտի երկու կոմունիստի բողոքներին, մարտիկների համարյա կեսը հին շինելներն ու տաք կուրտկաները փոխեց լավորակ, աղաղած կաշվե կիսամուշտակներով, որոնք հանվեցին թրատված ապըստամբներից։

Ապստամբությունը ճնշելուց մի քանի օր հետո հեծելավաշտը ուղարկվեց Կազանսկայա ստանիցան։ Հանգստանալով ռազմական կյանքի ծանրություններից, Ֆոմինը զվարճանում էր Կազանսկում, ինչպես որ կարող էր։ Լինելով թունդ կնամոլ, ուրախ ու զրուցասեր քեֆչի, նա կորչում էր ամբողջ գիշերներով և միայն լուսաբացից քիչ առաջ էր տուն գալիս։ Մարտիկները, որոնց նկատմամբ Ֆոմինը իրեն մոտիկ ընկերոջ պես էր պահում, երեկոները իրենց հրամանատարին տեսնելով լավ մաքրած, պլպլան սապոգներով, հասկացողաբար աչքով էին անում միմյանց, ասում էին.

— Ըհը՛, մեր բուղան էլի գնաց որբևայրի կնանոնց մոտ։ Հիմի միայն առավոտ ծեգին տուն կերթա։

Ֆոմինը հեծելավաշտի կոմիսարից ու քաղղեկից թաքուն գնում էր նաև հեծելավաշտի ծանոթ կազակների բնակարանները, երբ նրան հաղորդում էին, թե օղի կա և քեֆ է լինելու։ Դա հաճախ էր պատահում։ Բայց շուտով կտրիճ հրամանատարը սկսեց ձանձրանալ, մռայլվեց և համարյա բոլորովին մոռացավ մինչև այդ եղած զվարճությունները։ Երեկոներին նա արդեն առաջվա ջանադրությամբ չէր մաքրում իր բարձրաճիտք, շքեղ սապոգները, դադարեցրել էր ամեն օր սափրվելը, սակայն երբեմնակի գնում էր իր հեծելավաշտում ծառայած կազակների բնակարանները, որպեսզի ժամանակ անցկացներ ու խմեր, իսկ զրույցների ժամանակ քիչ էր խոսում։

Ֆոմինի բնավորության փոփոխությունը զուգադիպեց մի հաղորդագրության, որ ջոկատի հրամանատարը ստացավ Վեշենսկուց. Դոնշենկայի քաղբյուրոն կարճ հաղորդել էր, որ

հարևան Ուստ-Մեդվեդիցկու օկրուգում, Միխայլովկայում ապստամբել էր պահակային գումարտակը՝ իր հրամանատար Վակուլինի գլխավորությամբ։

Վակուլինը ծառայել էր Ֆոմինի հետ և նրա ընկերն էր։ Մի ժամանակ նրանք երկուսով գտնվում էին Միրոնովի կորպուսում, Սարանսկից միասին էին եկել դեպի Դոն ու միասին, մի տեղ խարույկաձև դարսել զենքերը, երբ Բուդյոննու հեծելազորը շրջապատել էր Միրոնովի խռովարար կորպուսը։ Ֆոմինի ու Վակուլինի բարեկամական հարաբերությունները գոյություն ունեին մինչև վերջին ժամանակները։ Բոլորովին մոտիկ օրերում, սեպտեմբերի սկզբին Վակուլինը եկել էր Վեշենսկայա, ու դեռ այն ժամանակ նա ատամ էր կրճտացնում և հին ընկերոջը գանգատվում «կոմիսարների բռնությունից, որոնք պարենային մասնատրումով քայքայում են հողագործներին ու երկիրը դեպի կործանում են տանում»։ Ֆոմինը ներքուստ համաձայն էր Վակուլինի ասածներին, բայց իրեն պահում էր զգույշ, խորամանկություն էր բանեցնում, որը հաճախ լրացնում էր բնական խելքի բացակայությունը։ Նա առհասարակ զգույշ մարդ էր, երբեք չէր շտապում և միանգամից այո կամ ոչ չէր ասում։ Բայց շուտով, երբ նա արդեն իմացել էր Վակուլինի գումարտակի ապստամբության մասին, մշտական զգուշությունը դավաճանեց նրան։ Մի երեկո, նախքան հեծելավաշտը կմեկներ Վեշենսկայա, դասակապետ Այլֆերովի բնակարանում հեծելակներ հավաքվեցին։ Ջիու մի ահագին դույլ լիքն էր օղիով։ Սեղանի շուրջը աշխույժ խոսակցություն էր տեղի ունենում։ Այդ կերուխումին ներկա Ֆոմինը լուռ լսում էր խոսակցությունները և նույնպես լուռ օղի էր վերցնում դույլից։ Բայց երբ մարտիկներից մեկը պատմեց, թե Սուխոյ Դոնեցի մոտ ինչպես էին գրոհի գնում, Ֆոմինը մտազբաղ ոլորելով բեղը, ընդհատեց պատմողին.

— Մենք լավ էինք թրատում խախոլներին, տղերք, բայց չլինի՞ թե շուտով մենք էլ վայ տանք գլխներիս... Մեկ էլ տեսար հասանք Վեշենսկայա ու իմացանք, որ պարենավորման ջոկատները մեր ընտանիքներից վերցրել են ամբողջ հացը։ Կազանցիները թունդ նեղանում են այդ ջոկատներից։ Դրանք ամբարներումը իսկի հաց չեն թողել...

Սենյակում լռություն տիրեց, Ֆոմինը նայեց իր հեծելավաշտի մարտիկներին և բռնազբոսիկ ժպտալով, ասաց.

— Ես հանաք արեցի... Տեսեք, հա՛-ա, լեզուներդ զուսպ պահեցեք, թե չէ ով գիտի ինչ դուրս կբերեն հանաքից։

Վեշենսկայա վերադառնալուց հետո Ֆոմինը կես դասակի չափ կարմիրբանակայինների ուղեկցությամբ մեկնեց տուն, Ռուբեժնի խուտորը։ Խուտորում, դեռ իր բակը չմտած, դարպասի մոտ իջավ ձիուց, սանձը գցեց կարմիրբանակայիններից մեկին, գնաց տուն։

Նա սառն բարևեց կնոջը, խորունկ գլուխ տվեց պառավ մորը և հարգանքով սեղմեց նրա ձեռքը, գրկեց երեխաներին։

— Բա ո՞րտեղ է հերս,— հարցրեց նա՝ նստելով տաբուրետին, թուրը դնելով ծնկների արանքը։

— Գնացել է աղաց,— պատասխանեց պառավը ու նայելով որդուն, խստորեն հրամայեց.— փափախդ հանի, կռապաշտ։ Ո՞վ է փափախով նստում սրբապատկերների առաջ։ Ա՜խ, Յակով, դու կկորցնես գլուխդ...

Ֆոմինը դժկամ ժպտաց, հանեց կուբանյան փափախը, բայց շինելը չհանեց։

— Ինչո՞ւ չես հանվում։

— Ես մի բոպե եկա ձեզ տեսնելու, ժամանակ չկա, պետք է ծառայության գնալ։

— Գիտենք քո ծառայությունը...— բարկությամբ ասաց պառավը՝ ակնարկելով որդու անառակ վարքը, Վեշենսկում նրա ունեցած կապերը կանանց հետ։

Դրա մասին վաղուց լուր էր տարածվել Ռուբեժնիում։

Ֆոմինի գունատ, անժամանակ պառաված, տեսքով ընկճված կինը վախեցած նայեց սկեսուրին, ետ քաշվեց դեպի վառարանը։ Ամուսնուն գեթ որևէ կերպ գոհացնելու, նրա մեջ բարեհաճ տրամադրություն առաջացնելու և թեկուզ մեկ սիրալիր հայացքին արժանանալու համար նա վառարանի տակից վերցրեց մի լաթ, ծունկ չոքեց ու, կռանալով, սկսեց մաքրել Ֆոմինի սապոգներին կպած պինդ ցեխը։

— Ի՜նչ լավ սապոգներ ունես, Յաշա... Շատ ես ցեխոտել.. Ես հիմի կսրբեմ, մաքուր կսրբեմ,— գրեթե անձայն շշնջում էր նա՝ առանց գլուխը բարձրացնելու, ծնկների վրա սողալով ամուսնու ոտների տակ։

Ֆոմինը վաղուց չէր ապրում նրա հետ և վաղուց, բացի թեթև արհամարհական կարեկցությունից, ուրիշ ոչինչ չէր տածում դեպի այդ կինը, որին սիրել էր մի ժամանակ, ջահել հասակում։ Բայց կինը միշտ էլ սիրում էր նրան և գաղտնապես հույս էր փայփայում, որ նա երբևէ նորից կապրի իր հետ, ու ներում էր ամեն ինչ։ Կինը երկար տարիներ զբաղվում էր տնտեսությամբ, դաստիարակում երեխաներին, աշխատում էր ամեն կերպ գոհացնել քմահաճ սկեսուրին։ Դաշտային աշխատանքների ամբողջ ծանրությունը ընկնում էր նրա լղարիկ ուսերին։ Ուժից վեր աշխատանքը ու երկրորդ ծննդաբերությունից հետո սկսված հիվանդությունը տարեցտարի քայքայում էին նրա առողջությունը։ Նա նիհարել էր։ Դեմքը խամրած էր։ Անժամանակ պառավությունը կնճիռների ոստայն էր փռել նրա այտերին։ Աչքերում երևում էր երկչոտ հնազանդության այն արտահայտությունը, որը լինում է հիվանդ, խելացի կենդանիների նայվածքում։ Նա ինքն էլ չէր նկատում, թե որչափ արագ է պառավում, թե ինչպես օրը-օրին հալչում է իր առողջությունը, ու դեռ էլի հույս էր դնում ինչ-որ բանի վրա, հազվադեպ հանդիպումների ժամանակ երկչոտ սիրով ու հիացումով էր նայում իր գեղեցիկ ամուսնուն...

Ֆոմինը վերևից ներքև նայում էր կնոջ ողորմելիորեն կորացած մեջքին, կոֆտայի տակ ցայտունորեն ուրվագծված լղար թիակներին, նրա մեծ, դողդոջ ձեռքերին, որոնք փութաջան մաքրում էին իր սապոգների կեղտը, ու մտածում էր՝ «Լա՜վն է, ի՞նչ ասել կուզի։ Եվ ես մի ժամանակ քնում էի այս քոսոտի հետ... Ու որքա՜ն պառավել է... Բայց ախր ինչո՞ւ է պառավել»։

— Հերիք եղավ, է՛։ Մեկ է, էլի ցեխոտելու եմ,— բարկությամբ ասաց նա՝ ոտներն ազատելով կնոջ ձեռքերից։

Կինը ճիգ անելով շտկեց մեջքը, վեր կացավ։ Նրա դեղին այտերի վրա թեթև կարմրություն դուրս տվեց։ Ամուսնուն նայող, թրջված նրա աչքերում այնքան սեր և շան նվիրվածություն կար, որ Ֆոմինը շուռ եկավ, հարցրեց մորը.

— Է՛, ո՞նց եք ապրում այստեղ։

— Էլի այնպես,— նոթոտ պատասխանեց պառավը։

— Պարենավորման ջոկատը եղե՞լ է խուտորում։

— Միայն երեկ գնացին Նիժնե-Կրիվսկոյ։

— Մեզանից հաց վերցրի՞ն։

— Վերցրին։ Ինչքա՞ն տարան, Դավիդուշկա։

Հորը նման, նույնպիսի լայնադիր, կապույտ աչքերով տասնչորս տարեկան պատանին պատասխանեց.

— Պապս նրանց հետ էր, նա գիտի։ Կարծեմ տասը ջվալ։

— Հը-ը՛մ...— Ֆոմինը վեր կացավ, կարճ նայեց որդուն, շտկեց թրակալը։ Նա մի փոքր գունատվեց, երբ հարցրեց.— դուք նրանց ասացի՞ք, թե ում հացն են վերցնում։

Պառավը թափ տվեց ձեռքը և ոչ առանց չարախնդության ժպտաց.

— Նրանք քո մասին այնքան էլ շատ բան չգիտեն։ Նրանց մեծը ասում է՝ «Բոլորը անխտիր պետք է հանձնեն հացի ավելցուկը։ Թեկուզ Ֆոմինը լինի, թեկուզ հենց օկրուգի նախագահը,— մեկ է, ավելորդ հացը կվերցնենք»։ Ու սկսեցին դատարկել ամբարը։

— Ես նրանց հետ հաշիվ կտեսնեմ, մայրիկ։ Ես հաշիվ կտեսնեմ նրանց հետ,— խուլ ձայնով ասաց Ֆոմինը ու հապճեպորեն հրաժեշտ տալով հարազատներին, դուրս ելավ։

Տանից վերադառնալուց հետո նա զգուշությամբ սկսեց հետախուզել իր հեծելավաշտի մարտիկների տրամադրությունը և առանց մի առանձին դժվարության համոզվեց, որ նրանց մեծամասնությունը դժգոհ է պարենային մասնատրումից։ Խուտորներից և ստանիցաներից գալիս էին նրանց կանայք և հեռավոր ու մոտիկ ազգականները. գալիս ու պատմում էին, թե ինչպես պարենավորման ջոկատավորները խուզարկություններ են կատարում, վերցնում ամբողջ հացը, թողնելով միայն սերմացու և ուտելիք։ Այդ բոլորը հասցրեց այնտեղ, որ հունվարի վերջին Բազկիում տեղի ունեցած կայազորային ժողովում, օկրուգային զինկոմ Շախաևի ճառի ժամանակ հեծելավաշտի մարտիկները բացահայտ ելույթներ ունեցան։ Նրանց շարքերից այսպիսի բացականչություններ լսվեցին.

— Վերացրեք պարենավորման ջոկատները։

— Ժամանակն է վերջացնել հացի գործը։

— Կորչեն պարենավորման կոմիսարները։

Պատասխանելով նրանց, պահակային վաշտի կարմիրբանակայինները գոռում էին.

— Կոնտրնե՛ր։

— Ցրե՛լ սրիկաներին։

Ժողովը երկարատև էր և աղմկալից։ Կայազորի սակավաթիվ կոմունիստներից մեկը հուզված ասաց Ֆոմինին.

— Դու պետք է խոսես, ընկեր Ֆոմին։ Տես, թե ինչ ցիններ են թույլ տալիս քո հեծելավաշտի մարտիկները։

Ֆոմինը աննկատելի ժպտաց բեղի տակին.

— Ես հո անպարտիական մարդ եմ, մի՞թե նրանք կլսեն ինձ։

Լռություն պահպանելով, նա դեռ ժողովը վերջանալուց առաջ հեռացավ գումարտակի հրամանատար Կապարինի հետ։ Վեշենսկու ճանապարհին նրանք սկսեցին խոսել ստեղծված դրության մասին և շատ շուտով ընդհանուր լեզու գտան։ Մի շաբաթից հետո Կապարինը Ֆոմինի բնակարանում դեմառդեմ ասաց նրան.

— Կամ մենք կապստամբենք այժմ, կամ երբեք չենք ապստամբի, լավ իմացիր, Յակով Եֆիմովիչ։ Պետք է օգտվել մոմենտից։ Հիմա մոմենտը շատ հարմար է։ Կազակները մեզ կպաշտպանեն։ Օկրուգում մեծ է քո հեղինակությունը։ Բնակչության տրամադրությունը հիանալի է մեզ համար։ Էլ ի՞նչ ես լռում, որոշիր։

— Այստեղ ի՞նչ կա որոշելու,— դանդաղ, ծոր տալով ու շեղակի նայելով ասաց Ֆոմինը,— այստեղ գործը որոշված է։ Միայն պետք է այնպիսի պլան մշակել, որ ամեն բան լավ գնա, որ խաթայի մեջ չընկնենք։ Եկ հենց դրա մասին խոսենք։

Ֆոմինի ու Կապարինի կասկածելի բարեկամությունը աննկատելի չմնաց։ Գումարտակի մի քանի կոմունիստ սկսեցին հետամուտ լինել նրանց, իրենց կասկածանքների մասին հաղորդեցին Դոնչեկայի քաղբյուրոյի պետ Արտեմևին և զինկոմ Շախաևին։

— Վախկոտ ագռավը թփից էլ կվախենա,— ծիծաղելով ասաց Արտեմևը։— Այդ Կապարինը վախկոտի մեկն է, մի՞թե նա կհամարձակվի որևէ բան անել։ Ֆոմինին կհետևենք, նա վաղուց նշված է մեզ մոտ, միայն հազիվ թե Ֆոմինն

էլ սիրտ անի ապստամբելու։ Այդ բոլորը դատարկ բան է,— վճռականապես եզրակացրեց նա։

Բայց հետևելը արդեն ուշ էր. դավադիրները համաձայնության էին եկել։ Ապստամբությունը պետք է սկսվեր մարտի 12-ին, առավոտյան ժամը 8-ին։ Պայմանավորվել էին, որ Ֆոմինն այդ օրը լիովին զինված հեծելավաշտը դուրս կբերի առավոտյան շրջագայության, հետո էլ հանկարծակի կգրոհի ստանիցայի ծայրամասում տեղավորված գնդացրային դասակի վրա, կգրավի գնդացիրները և դրանից հետո կօգնի պահակային վաշտին՝ օկրուգային հիմնարկությունների «զտում» կատարելու։

Կապարինը կասկածներ ուներ, որ գումարտակը իրեն կպաշտպանի ոչ լրիվ կազմով։ Մի անգամ նա իր այդ ենթադրությունը հայտնեց Ֆոմինին։ Վերջինս ուշադրությամբ լսեց, ասավ.

— Միայն թե գրավենք գնդացիրները, իսկ դրանից հետո մենք միանգամից կխաղաղացնենք քո գումարտակը...

Ֆոմինի ու Կապարինի վրա սահմանված մանրակրկիտ հսկողությունը ոչինչ չտվեց։ Նրանք հազվադեպ էին հանդիպում, այն էլ ծառայության գործերով, և միայն փետրվարի վերջին, մի գիշեր պարեկը փողոցում նրանց տեսավ միասին։ Ֆոմինը թամբած ձին տանում էր սանձից բռնած, Կապարինը քայլում էր նրա կողքից։ Կապարինը պարեկին պատասխանեց՝ «Մերոնցից ենք»։ Նրանք մտան Կապարինի բնակարանը։ Ֆոմինը ձին կապեց մուտքի սանդուղքի բազրիքին։ Սենյակում լույս չվառեցին։ Առավոտյան ժամը չորսին Ֆոմինը դուրս եկավ, նստեց ձին ու գնաց իր բնակարանը։ Ահա այն ամենը, ինչ որ հաջողվեց պարզել։

Օկրուգի զինկոմ Շախաևը Դոնի մարզի զորահրամանատարի անունով տված ծածկագիր հեռագրում հաղորդեց իր կասկածանքները Ֆոմինի ու Կապարինի վերաբերմամբ։ Մի քանի օրից հետո ստացվեց զորահրամանատարի պատասխանը, որով առաջադրվում էր պաշտոններից հանել և ձերբակալել Ֆոմինին ու Կապարինին։

Պարտիայի օկրուգային կոմիտեի բյուրոյի խորհրդակցությունում որոշվեց օկրուգի զինկոմի հրամանով հայտնել Ֆոմինին, որ նա կանչվում է Նովոչերկասկ, զորքերի

հրամանատարի տրամադրության տակ, առաջարկել նրան հեծելավաշտի հրամանատարությունը հանձնել իր օգնական Օվչիննիկովին, նույն օրը հեծելավաշտը ուղարկել Կազանսկայա, այն պատրվակով, թե այնտեղ բանդա է հայտնաբերվել, ու դրանից հետո գիշերով ձերբակալել դավադիրներին։ Որոշվել էր հեծելավաշտը ստանիցայից հեռացնել այն նկատառումով, որ նա, իմանալով Ֆոմինի ձերբակալման լուրը, կարող էր ապստամբել։ Պահակային գումարտակի երկրորդ վաշտի կոմունիստ հրամանատար Տկաչենկոյին առաջարկվեց նախազգուշացնել գումարտակի կոմունիստներին և դասակների հրամանատարներին ապստամբության հնարավորության մասին և մարտական պատրաստության բերել ստանիցայում գտնված վաշտը և գնդացրային դասակը։

Հետևյալ օրվա առավոտյան Ֆոմինը ստացավ հրաման։

— Էհ, ի՞նչ կա որ, ընդունիր հեծելավաշտը, Օվչիննիկով։ Կգնամ Նովոչերկասկ,— հանգիստ ասաց նա։— Հաշվետվությունը նայելո՞ւ ես։

Ոչ ոքի կողմից չնախազգուշացված, ոչինչ չկասկածող անպարտիական Օվչիննիկովը, դասակի հրամանատարը, խորասուզվեց թղթերի մեջ։

Ֆոմինը հարմար րոպե գտնելով, Կապարինին գրեց հետևյալ երկտողը. «Այսօր սկսում ենք։ Ինձ հանում են պաշտոնից։ Պատրաստվիր»։ Հաշտում նա երկտողը տվեց իր հանձնատարին, շշնջաց.

— Երկտողը դիր բերանիդ մեջ, թշիդ տակ։ Քայլով, հասկացա՞ր, քայլով ձին քշիր գնա Կապարինի մոտ։ Եթե ճանապարհին մեկն ու մեկը քեզ կանգնեցնի, երկտողը կուլ տուր։ Կտաս նրան և իսկույն ետ կգաս։

Ստանալով Կազանսկայա ստանիցան գնալու հրամանը, Օվչիննիկովը եկեղեցու հրապարակում հեծելավաշտը շարք կանգնեցրեց մեկնելու համար։ Ֆոմինը ձիով մոտեցավ Օվչիննիկովին.

— Թույլ տուր հրաժեշտ տալ հեծելավաշտին։

— Խնդրեմ, միայն թե կարճ, չուշացնեք մեզ։

Կանգ առնելով հեծելավաշտի առաջ, զսպելով ցատկոտող ձիուն, Ֆոմինը դիմեց մարտիկներին։

— Դուք ինձ ճանաչում եք, ընկերներ։ Գիտեք, թե ես միշտ էլ ինչի համար եմ պայքարել։ Ես միշտ էլ եղել եմ ձեզ հետ։ Բայց հիմի ես չեմ կարող հաշտվել, երբ թալանում են կազակությանը, թալանում են առհասարակ հողագործներին։ Հենց դրա համար էլ ինձ հանեցին պաշտոնից։ Իսկ թե ինչպես պիտի վարվեն ինձ հետ, ես այդ գիտեմ։ Դրա համար էլ ուզում եմ ձեզ մնաս բարով ասել...

Հեծելավաշտում բարձրացած աղմուկը և ճչոցները մի վայրկյան ընդհատեցին Ֆոմինի ճառը։ Նա կանգնեց ասպանդակների վրա, խիստ բարձրացրեց ձայնը.

— Եթե ուզում եք ազատվել թալանից, այստեղից վռնդեցեք պարենավորման ջոկատները, խփեցեք պարենավորման կոմիսարներ Մուրզովներին և կոմիսարներ Շախաներին։ Նրանք մեզ մոտ, Դոն են եկել...

Աղմուկը ծածկեց Ֆոմինի վերջին խոսքերը։ Հարմար պահ գտնելով, նա հնչեղ ձայնով հրաման տվեց.

— Աջից երեքական, դեպի աջ, քայլով մա՛րշ։

Հեծելավաշտը հնազանդությամբ կատարեց հրամանը։ Օվչիննիկովը այդ բոլորից 22մած, ձին քշեց — մոտեցավ Ֆոմինին,

— Ո՞ւր, ընկեր Ֆոմին։

Ֆոմինը առանց գլուխը շուռ տալու, հեգնանքով պատասխանեց.

— Պտույտ կանենք եկեղեցու շուրջը...

Եվ միայն այդ ժամանակ Օվչիննիկովի գիտակցությանը հասավ այն ամենը, ինչ որ կատարվել էր այդ մի քանի րոպեում։ Նա անջատվեց շարասյունից. քաղղեկը, կոմիսարի օգնականը և ընդամենը մի կարմիրբանակային հետևեցին նրան։ Ֆոմինը նկատեց նրանց բացակայությունը, երբ նրանք երկու հարյուր քայլ հեռացել էին։ Շուռ տալով ձին, նա բղավեց.

— Օվչիննիկով, կա՛նգ առ...

Չորս ձիավորները թեթև վարգից անցան քառատրոփի։ Կիսահալված ձյան կտորները նրանց ձիերի ոտների տակից թռան բոլոր կողմերը։ Ֆոմինը հրաման տվեց.

— Հրացանները մարտի՛, բռնե՛լ Օվչիննիկովին... Առաջին դասակ, ընկնե՞լ նրանց ետևից...

Անկանոն ճայթեցին կրակոցները։ Առաջին դասակից տասնվեց մարդ սլացան չորս ձիավորների ետևից։ Այդ ժամանակ Ֆոմինը մնացածներին բաժանեց երկու մասի, մեկը երրորդ դասակի հրամանատարի գլխավորությամբ ուղարկեց գնդացրային դասակը զինաթափելու, մյուսն էլ ինքը տարավ պահակային վաշտի վրա, որ տեղավորված էր ստանիցայի հյուսիսային ծայրամասում, ստանիցայի հովստակների նախկին ախոռներում։

Առաջին խումբը կրակելով օդի մեջ ու թափահարելով մերկացրած թրերը, սլացավ գլխավոր փողոցով։ Թրատելով ճանապարհին հանդիպած չորս կոմունիստ, խռովարարները ստանիցայի ծայրում հապճեպորեն շարվեցին և լուռ, առանց բղավելու գրոհեցին գնդացրային դասակի կարմիրբանակայինների վրա, որոնք տանից դուրս էին վազում։

Այն տունը, որտեղ տեղավորված էր գնդացրային դասակը, ստանիցայից դուրս էր գտնվում։ Այնտեղից մինչև ստանիցայի ծայրի տները հարյուր սաժենից ավելի չէր լինի։ Դեմառդեմ հանդիպելով գնդացրային կրակին, խռովարարները իսկույն ետ փախան։ Նրանցից երեքը դեռ ամենամոտ փողոցը չհասած, գնդակներով խոցվեցին և ընկան ձիերից։ Չհաջողվեց հանկարծակիի բերել գնդացրորդներին։ Խռովարարները չուզեցին երկրորդ անգամ հարձակվել։ Երրորդ դասակի հրամանատար Զումակովը իր խումբը տարավ թաքստոց. առանց ձիուց իջնելու, զգուշությամբ նայեց մի քարաշեն մարագի անկյունից, ասաց.

— Հը՛մ, էլի երկու մաքսիմ դուրս բերին։— Հետո փափախով սրբեց քրտնած ճակատը ու դարձավ դեպի մարտիկները.— ետ գնանք, տղերք... թող Ֆոմինը ինքը հաղթի գնդացրորդներին։ Մեզանից քանի՞ հոգի ընկան ձյան վրա. երե՞քը։ Դե, թող նա ինքը փորձի։

Հենց որ ստանիցայի արևելյան ծայրամասում սկսվեց հրաձգությունը, վաշտի հրամանատար Տկաչենկոն դուրս թռավ բնակարանից ու, քայլելիս հագնելով շինելը, վազեց զորանոց։ Մի երեսուն հոգի կարմիրբանակայիններ արդեն կանգնել էին զորանոցի մոտ, տողան կազմել։ Վաշտի հրամանատարին հանդիպեցին տարակուսանք արտահայտող հարցերով.

— Ովքե՞ր են կրակում։

— Ինչո՞ւմն է բանը։

Չպատասխանելով, նա զորանոցից դուրս վազող կարմիրբանակայիններին միացնում էր տողանին։ Մի քանի կոմունիստ,— օկրուգային հիմնարկությունների աշխատողներ, — նրա հետ համարյա միաժամանակ վազեցին զորանոց և շարք կանգնեցին։ Ստանիցայում ճայթում էին հրացանային անկանոն կրակոցները։ Արևմտյան ծայրամասում մի տեղ որոտալից պայթեց մի ձեռնանոնակ։ Տեսնելով հիսունի չափ ձիավորներ, որոնք մերկացրած թրերով սլանում էին զորանոցի ուղղությամբ, Տկաչենկոն առանց շտապելու պատյանից հանեց նագանը։ Նա դեռ հրաման չէր տվել, երբ տողանում միանգամից դադարեցին խոսակցությունները, և կարմիրբանակայինները պատրաստվեցին հրացաններից կրակելու։

— Մերոնք են փախչում, տեսե՛ք, հրե՛ն մեր գումարտակի հրամանատար ընկեր Կապարինը,— բղավեց մի կարմիրբանակային։

Ձիավորները փողոցից դուրս թռչելով, միահամուռ, ասես հրամանի համաձայն կոթնեցին ձիերի վզերին և սլացան դեպի զորանոցը։

— Մոտ չթողնե՛լ,— կտրուկ հրամայեց Տկաչենկոն։

Այդ իսկ վայրկյանին ճայթեց համազարկը։ Կարմիրբանակայինների խիտ տողանից հարյուր քայլ հեռավորությամբ չորս ձիավոր ընկան ձիերից, մնացածները խառնիճաղանջ, ցրիվ գալով, ետ փախան։ Նրանց ետևից տրաքվում, ճայթում էին կրակոցները։ Ձիավորներից մեկը, ըստ երևույթին թեթև վիրավորված, պոկվեց թամքից, բայց սանձը ձեռքից բաց չթողեց։ Նա մի տասը սաժեն քարշ եկավ սրարշավ վազող ձիու ետևից, հետո էլ ոտքի ելավ, բռնեց ասպանդակից, թամքի ետին դաշից, ու ինչ-որ աննկատելի մի ակնթարթում թռավ ձիու վրա։ Ձայրագին քաշելով սանձը, նա ամբողջ թափով սլանալիս կտրուկ շուռ եկավ, չքացավ ամենամոտ փողոցում։

Առաջին դասակի հեծելակները Օվչիննիկովի ապարդյուն հետապնդումից հետո վերադարձան ստանիցա։ Կոմիսար Շախաևին փնտրելը ոչ մի արդյունք չտվեց։ Նա չկար ոչ դատարկված զինկոմիսարիատում, ոչ էլ իր բնակարանում։

Լսելով հրաձգությունը, նա նետվել էր դեպի Դոն, սառույցի վրայով վազեվազ անցել անտառ, այնտեղից էլ՝ Բազկի խուտորը, ու մյուս օրը արդեն գտնվում էր Վեշենսկուց հիսուն վերստ հեռու, Ուստ-Խոպերսկայա ստանիցայում։

Ղեկավար աշխատողների մեծամասնությունը իր ժամանակին կարողացել էր թաքնվել։ Նրանց որոնելը անվտանգ չէր, որովհետև գնդացրային դասակի կարմիրբանակայիններ ձեռնագնդացիրներով մոտեցել էին ստանիցայի կենտրոնին և գնդակոծման տակ էին պահում գլխավոր հրապարակին կից բոլոր փողոցները։

Հեծելակները դադարեցին որոնումները, իջան Դոնի ափը և քառատրոփով հասան եկեղեցու հրապարակը, որտեղից սկսել էին Օվչիննիկովի հետապնդումը։ Բոլոր ֆոմինականները շուտով այնտեղ հավաքվեցին։ Նրանք նորից շարք մտան, Ֆոմինը հրամայեց պահպանական հսկողություն կարգել, մնացած մարտիկները պետք է տեղավորվեին բնակարաններում, բայց չհանեին ձիերի թամքերը։

Ֆոմինը և Կապարինը, ինչպես նաև դասակների հրամանատարները, առանձնացան ծայրամասի տնակներից մեկում։

— Ամեն ինչ տանում է տրված,— հուսահատությամբ բացականչեց Կապարինը ուժասպառ ընկնելով նստարանին։

— Այո, ստանիցան չվերցրինք, ուրեմն չենք կարող այստեղ մնալ,— ցածրաձայն ասաց Ֆոմինը։

— Հարկավոր է անցնել օկրուգ, Յակով Եֆիմովիչ։ Հիմի էլ ինչի՞ց պիտի վախենանք։ Մեկ է, մի օր մեռնելու ենք։ Ոտքի կհանենք կազակներին, այն ժամանակ ստանիցան էլ մերը կլինի,— առաջարկեց Ջումակովը։

Ֆոմինը լուռ նայեց նրան, դարձավ դեպի Կապարինը.

— Թթվե՞լ ես, ձերդ բարեձննդություն։ Սրբիր փսլինքդ։ Թե որ բեռ ես շալակել, ուրեմն պետք է տանես։ Միասին սկսեցինք, եկ միասին էլ քաշենք... Ինչ ես ասում, հեռանա՞նք ստանիցայից, թե՞ մի անգամ էլ փորձենք։

Ջումակովը կտրուկ ասաց.

— Թող ուրիշները փորձեն։ Ես ճակատ առ ճակատ չեմ հարձակվի գնդացիների վրա։ Դատարկ զբաղմունք է դա։

— Ես քեզ չեմ հարցնում, ձենդ կտրի՛,— Ֆոմինը նայեց Ջումակովին, և սա խոնարհեց աչքերը։

Կապարինը մի փոքր լռելուց հետո ասաց.

— Այո, իհարկե, հիմա արդեն անիմաստ է երկրորդ անգամ սկսել։ Նրանք ավելի լավ են զինված։ Նրանք ունեն տասնչորս գնդացիր, իսկ մենք ոչ մի հատ։ Մարդիկ էլ ավելի շատ են նրանց մոտ... Պետք է հեռանալ և կազակներին կազմակերպել ապստամբության համար։ Մինչև սրանց օժանդակ զորք ուղարկեն, ամբողջ օկրուգը ապստամբած կլինի։ Մեր հույսը միայն դրա վրա է։ Միայն դրա վրա է։

Երկար լռելուց հետո Ֆոմինն ասաց.

— Ի՞նչ արած, այդպես էլ պետք է որոշել։ Դասակապետնե՛ր, հենց հիմի ստուգեցեք հանդերձանքը, հաշվեցեք, թե ամեն մեկի մոտ քանի փամփուշտ կա։ Խստորեն հրամայում եմ՝ ոչ մի փամփուշտ իզուր չվատնել։ Հենց առաջին մարդուն, ով չհնազանդվի, տեղնուտեղը ինքս կթրատեմ։ Այդպես էլ ասացեք մարտիկներին։— Նա մի փոքր լռեց և ահագին բռունցքով շարացած խփեց սեղանին։— Թյո՛ւ, այդ գնդացիրները. դրանց տիրոջ..... Դո՛ւ ես մեղավոր, Զումակով։ Գոնե մի չորս հատ խլեինք։ Հիմի նրանք, իհարկե, մեզ կքշեն ստանիցայից։ Էհ, ցրվեցինք։ Կգիշերենք ստանիցայում, եթե դուրս չքշեն, իսկ առավոտ ծեգին ճամփա կընկնենք, կանցնենք օկրուգով...

Գիշերը հանգիստ անցավ։ Վեշենսկու մի ծայրում գտնվում էին ապստամբած հեծելավաշտի մարդիկ, մյուս ծայրում— պահակային վաշտը և դրան միացած կոմունիստներն ու կոմերիտականները։ Հակառակորդները ընդամենը միայն երկու թաղով էին միմյանցից հեռու, բայց ոչ մի կողմն էլ չէր խիզախում անցնել գիշերային հարձակման։

Խռովարար հեծելավաշտը առավոտյան հեռացավ ստանիցայից ու գնաց հարավ-արևելյան ուղղությամբ։

XI

Տնից հեռանալուց հետո առաջին երեք շաբաթում Գրիգորին ապրում էր Ելանսկայա ստանիցայի Վերխնե-Կրիվսկոյ խուտորում, իր հետ իր գնդում ծառայած ծանոթ կազակի մոտ։ Հետո գնաց Գորբատովսկի խուտորը, այնտեղ ավելի քան մի ամիս ապրեց Ակսինյայի մի հեռավոր ազգականի մոտ։

Նա ամբողջ օրերով պառկում էր օթախում, միայն գիշերներն էր դուրս գալիս։ Այդ ամենը բանտի էր նման։ Գրիգորին մաշվում էր ձանձրույթից, ճնշող անգործությունից։ Նա իր տան, երեխաների ու Ակսինյայի անզուսպ կարոտն էր քաշում։ Անքուն գիշերներին հաճախ հագնում էր շինելը, հաստատապես որոշում գնալ Տատարսկի, ու ամեն անգամ թողնելով այդ միտքը, հանվում էր, հառաչում ու երեսի վրա ընկնում մահճակալին։ Ի վերջո այդ կյանքը անտանելի դարձավ։ Տանտերը, որ Ակսինյայի հոր թե մոր քեռու տղան էր, համակրում էր Գրիգորիին, բայց նա էլ չէր կարող իր մոտ անվերջ պահել այդպիսի կենվորին։ Մի անգամ Գրիգորին, ընթրիքից հետո անցնելով իր սենյակը, խոսակցություն լսեց։ Տանտիրուհին բարակ, ատելությամբ հնչող ձայնով հարցրեց.

— Ե՞րբ պիտի վերջանա այդ բանը։

— Ի՞նչը, ինչի՞ մասին ես խոսում,—իր հերթին հարցրեց տանտերը։

— Ե՞րբ պետք է դու այդ պարապ հացակերին ոադ անես, հը՞։

— Լռի՛ր։

— Չեմ լռի։ Մեզ շատ քիչ հաց է մնացել, իսկ դու պահում ես դրան, այդ կուզիկ սատանին, կերակրում ես ամեն օր։ Մինչև ե՞րբ պետք է այդ լինի, հը՞, հարցնում եմ քեզ։ Բա որ Սովետը իմանա՞։ Ախր մեր գլխները կթոցնեն, կորբացնեն երեխեքիս։

— Լռի՛ր, Ավդոտյա։

— Չե՛մ լռի։ Ախր երեխաներ ունենք։ Քսան փթից ավելի հաց չի մնացել, իսկ դու պահում ես այդ ձրիակերին։ Նա քո ի՞նչն է, հը՞, հարազատ աղբե՞րդ է, խնամի՞դ է, քավոր՞դ է։ Մոտիկ ազգականդ էլ չի։ Նա քեզ համար թոռնակից ջրով եփած ազգակից կիսել է, իսկ դու նրան պահում ես, ուտեցնում, խմեցնում։ Ի-ի-ի՜հ, գրողի տարած քաչալ, լռիր, մի հաչա, թե չէ էգուց ինքս կերթամ Սովետ ու կհայտնեմ, թե քո տանը ինչ ծաղիկ է բուսել։

Մյուս օրը տանտերը մտավ Գրիգորիի սենյակը ու, նայելով հատակի տախտակներին, ասաց.

— Գրիգորի Պանտելևիչ, ոնց ուզում ես դատի, ամա էլ չպիտի ապրես մեզ մոտ... Ես քեզ հարգում եմ, քո լուսահոգի ծնողին էլ ճանաչում էի ու հարգում, բայց հիմի ինձ համար ծանր է քեզ պահել... Բացի դրանից, վախենում եմ, որ իշխանությունը իմանա քո մասին։ Գնա, ուր ուզում ես։ Ես ընտանիքով եմ։ Չեմ ուզում քո պատճառով խաթայի մեջ ընկնել։ Ներիր, ի սեր Քրիստոսի, բայց մեզ ազատիր...

— Լա՛վ,— կարճ ասաց Գրիգորին,— շնորհակալ եմ աղ ու հացիդ, ապաստան տալուդ համար։ Ամեն բանից շնորհակալ եմ։ Ես ինքս եմ տեսնում, որ նեղություն եմ տալի քեզ, բայց ո՞ւր գնամ. բոլոր ճանապարհները փակ են ինձ համար։

— Ուր կուզես գնա։

— Լավ։ Այսօր կերթամ։ Շնորհակալ եմ ամեն բանից, Արտամոն Վասիլևիչ։

— Չարժե, մի՛ ասա։

— Ես քո բարությունը չեմ մոռանա։ Կարելի է, թե ես էլ մի օր, մի բանի համար պետք գամ քեզ։

Հուզված տանտերը ձեռքը թփթփացրեց Գրիգորիի ուսին։

— Ի՞նչ ասել կուզի։ Ինձ համար մեկ է, թեկուզ դու երկու ամիս էլ ապրեիր իմ տանը, ամա կնիկս չի թողնում, անիծվածը ամեն օր հայհոյում է ինձ։ Ես էլ եմ կազակ, դու էլ, Գրիգորի Պանտելևիչ. մենք երկուսս էլ դեմ ենք սովետական իշխանության, ու ես քեզ կօգնեմ, այսօր գնա Յագոդնի խուտորը, այնտեղ խնամիս է ապրում, նա քեզ կընդունի։ Իմ կողմից նրան ասա՝ Արտամոնը պատվիրում է ընդունել քեզ ինչպես հարազատ որդուն, կերակրել ու պահել ինչքան որ ուժ ունենա։ Հետո մենք նրա հետ հաշիվ կտեսնենք։ Միայն թե հենց այսօր դու գնա իմ տանից։ Ես էլ չեմ կարող քեզ պահել, կնիկս է պահանջում, ես էլ վախենում եմ, որ Սովետը կիմանա... Ինչքան որ ապրեցիր, հերիք է, Գրիգորի Պանտելևիչ։ Գլուխս թանկ է ինձ համար...

Գրիգորին ուշ գիշերով դուրս եկավ խուտորից և դեռ չէր

հասել բլրակի վրա գտնվող հողմաղացին, երբ երեք ձիավոր, ասես գետնի տակից դուրս գալով, կանգնեցրին նրան.

— Կա՛ց, շան որդի, ո՞վ ես դու։

Գրիգորիի սիրտը դողաց։ Նա լուռ կանգ առավ։ Փախչելը անմտություն կլիներ։ Ճանապարհի մոտ ոչ ձորակ կար, ոչ թուփ. դատարկ, մերկ տափաստան էր։ Նա երկու քայլ էլ չէր կարող հեռանալ։

— Կոմունի՞ստ ես, ետ գնա, քո մերը. դե, շուտ։

Երկրորդը ձին քշելով Գրիգորիի վրա, հրամայեց.

— Ձեռքերդ հանիր գրպաններիցդ, թե չէ գլուխդ կկտրեմ։

Գրիգորին շինելի գրպաններից լուռ հանեց ձեռքերը ու, դեռ այնքան էլ չգիտակցելով, թե ինչ կատարվեց իր հետ և ինչ մարդիկ են իրեն կանգնեցրել, հարցրեց.

— Ո՞ւր գնամ։

— Խուտոր։ Ե՛տ դառ։

Մինչև խուտոր նրան մի ձիավոր էր ուղեկցում, մնացած երկուսը արոտավայրում անջատվեցին, սլացան դեպի ճանապարհը։ Գրիգորին քայլում էր անխոս։ Դուրս գալով ճանապարհը, նա դանդաղեցրեց քայլերը, հարցրեց.

— Լսի, ա՛յ մարդ, դուք ովքե՞ր եք։

— Գնա, գնա, մի՛ խոսի, ձեռքերդ դիր մեջքիդ, լսո՞ւմ ես։

Գրիգորին լուռումունջ հնազանդվեց։ Մի քիչ հետո կրկին հարցրեց.

— Բայց ախր ովքե՞ր եք դուք, է՞։

— Ուղղափառներ ենք։

— Ես է՛լ հնազավան չեմ։

— Էհ, ուրախացիր։

— Դու ինձ ո՞ւր ես տանում։

— Հրամանատարի մոտ։ Գնա՛, իժ, թե չէ ես քեզ...

Ուղեկցուրդը թրի սայրով թեթև բոթեց Գրիգորիին։ Թրի սառը, լավ սրված, պողպատե ծայրը դիպավ Գրիգորիի մերկ պարանոցին, հենց շինելի օձիքի և փափախի արանքին, ու նրա մեջ կայծի նման մի ակնթարթում բռնկվեց վախի զգացումը, որ փոխարինվեց անզոր բարկությամբ։ Բարձրացնելով օձիքը ու շեղակի նայելով ուղեկցուրդին, նա քրթմնջաց.

— Ախմախություն մի անի, է՛յ, թե չէ մեկ էլ տեսար ձեռիցդ խլեցի այդ զատը...

— Գնա, շան որդի, մի խոսի։ Ես քեզ խլել ցույց կտամ։ Ձեռքերդ ետ տար։

Գրիգորին մի երկու քայլ արեց առանց խոսելու, ասաց.

— Դե ես լռում եմ, էլի։ Սրա՛ն մտիկ, քոսոտի մեկը...

— Դես-դեն մի՛ նայի։

— Չեմ նայում։

— Սկի, արագ գնա։

— Գուցե վազեմ, հը՞,— հարցրեց Գրիգորին՝ սրբելով թարթիչներին կպչող ձյան փաթիլները։

Ուղեկցուրդը լուռ քշեց ձին։ Ձին քրտնքից և գիշերային խոնավությունից թրջված կրծքով հրեց Գրիգորիի մեջքը, ոտների մոտ ձիու սմբակը ճլմփոցով ճզմեց կիսահալված ձյունը։

— Կամա՛ց, է՛յ,— բացականչեց Գրիգորին՝ ձեռքը դեմ անելով ձիու բաշին։

Ուղեկցուրդը թուրը բարձրացրեց գլխի բարձրության չափ, ցածր ձայնով ասաց.

— Գնա, շան ծնունդ, ու մի խոսա թե չէ ես քեզ տեղ չեմ հասցնի։ Ձեռքս թեթև է դրա համար։ Սկի, էլ ոչ մի խոսք։

Մինչև խուտոր հասնելը նրանք լուռ էին։ Առաջին իսկ տան մոտ ձիավորը քաշեց ձիու սանձը, ասաց.

— Մտիր այս դարպասից։

Գրիգորին ներս մտավ լայն բացված դարպասից։ Բակի խորքում երևում էր ընդարձակ, երկաթե կտուրով տունը։ Մարագի չարդախի տակ ձիեր էին փնչում ու հնչեղ ծամում կերը։ Մուտքի սանդուղքի մոտ վեց զինված մարդիկ էին կանգնել։ Ուղեկցուրդը թուրը դրեց պատյանի մեջ ու, իջնելով ձիուց, ասաց.

— Գնա տունը, ներս մտիր ձախ կողմի առաջին դռնից։ Գնա, դես-դեն մի նայի, քանի՞ անգամ պիտի ասեմ քեզ, ես քո բերանը, կարկա՛ջը, փայծա՛ղը։

Գրիգորին դանդաղ բարձրանում էր մուտքի սանդուղքով։ Բազրիքի մոտ կանգնած մի մարդ, որ բուդյոննիական փափախով և հեծելազորային երկար շինելով էր, հարցրեց.

— Բռնե՞լ եք, հա՞։

— Բռնել ենք— դժկամ պատասխանեց Գրիգորիի ուղեկցուրդի խոպված ձայնը,— բռնել ենք քամու աղացի մոտ։

— Բշիջի քարտուղա՞րն է, թե՞ ով։

— Ես ի՞նչ գիտեմ։ Ինչ-որ մի սրիկա է, իսկ թե ով է, հիմի կիմանանք։

«Սա կամ բանդա է, կամ Վեշենսկու չեկիստներն են խորամանկություն անում, այդպես ձևացնում։ Բռնվեցի, բռնվեցի հիմարի պես»,— մտածում էր Գրիգորին՝ դիտմամբ հապաղելով հաշտում, փորձելով կենտրոնացնել միտքը։

Առաջին մարդը, որին նա տեսավ դուռը բաց անելուց հետո, դա Ֆոմինն էր։ Նա նստած էր սեղանի մոտ, զինվորական հագուստով և Գրիգորիին անծանոթ շատ մարդկանցով շրջապատված։ Մահճակալի վրա կուտակված էին շինելներն ու կիսամուշտակները, նստարանի մոտ իրար կողքի դրված էին հրացանները. նույն նստարանի վրա խառնիխուռն կուտակված էին թրերը, փամփշտակալները, փամփշտանոցները ու թամքերի տոպրակները։ Մարդկանցից, շինելներից ու հանդերձանքից ձիու քրտնքի հոտ էր գալիս։

Գրիգորին հանեց փափախը, ցածրաձայն ասաց.

— Բարև ձեզ։

— Օ-օ՛, Մելեխով։ Իսկապես որ տափաստանը լայն է, իսկ ճանապարհը նեղ։ Նորից հանդիպեցինք, էլի՛։ Այդ ո՞ր տեղից բուսար, հը՞։ Հանվիր, նստիր։— Ֆոմինը վեր կացավ սեղանից, մոտեցավ Գրիգորիին մեկնելով ձեռքը.— դու այստեղ ի՞նչ էիր անում։

— Գործով էի եկել։

— Ի՞նչ գործով։ Շատ հեռու տեղ ես եկել...— Ֆոմինը հետաքրքրությամբ նայում էր Գրիգորիին։— Ճիշտ ասա, փախել ու թաքնվե՞լ ես այստեղ, թե ինչ։

— Դա բոլորովին ճիշտ է,— դժկամ ժպտալով՝ պատասխանեց Գրիգորին։

— Իմ տղերքը ո՞րտեղ ճանկեցին քեզ։

— Խուտորի մոտ։

— Ո՞ւր էիր գնում։

— Ես էլ չգիտեի...

Ֆոմինը մի անգամ էլ ուշադրությամբ նայեց Գրիգորիի աչքերին և ժպտաց։

— Ոնց որ տեսնում եմ, դու կարծում ես, թե մենք քեզ բռնել ենք և Վեշկի ենք տանելու, հա՞։ Ոչ, աղբերս, այնտեղի ճանապարհը փակ է մեզ համար... Ձվախենա՛ս։

Մենք այլևս չենք ծառայում սովետական իշխանության։ Չհաշտվեցինք նրա հետ...

— Ապահարզան տվինք,— հաստ ձայնով ասաց տարեց մի կազակ, որ ծխում էր վառարանի մոտ։

Սեղանի շուրջը նստածներից մեկը փառ-փառ ծիծաղեց։

— Դու իմ մասին ոչինչ չէի՞ր լսել,— հարցրեց Ֆոմինը։

— Ոչ։

— Դեհ, նստիր սեղանի մոտ, խոսենք։ Շշի և միս բերել մեր հյուրին։

Գրիգորին Ֆոմինի ոչ մի խոսքին չէր հավատում։ Սփրթնած ու զուսպ նա հանեց շինելը, նստեց սեղանի մոտ։ Նա ուզում էր ծխել, բայց հիշեց, որ արդեն երկրորդ օրն էր՝ ծխախոտ չուներ։

— Ծխելու բան չկա՞,— դիմեց նա Ֆոմինին։

Վերջինս պատրաստակամությամբ իր կաշվե պորտսիգարը մեկնեց նրան։ Նրա ուշադրությունից չվրիպեց այն, որ Գրիգորիի մատները գլանակ վերցնելիս մի քիչ դողացին, ու Ֆոմինը նորից ժպտաց իր շիկակարմրավուն, թել-թել քեղերի տակին։

— Մենք ապստամբել ենք սովետական իշխանության դեմ։ Մենք ժողովրդի կողմն ենք ու դեմ ենք պարենային մատնատրման և կոմիսարներին։ Նրանք երկար ժամանակ նեղել են մեզ, հիմա էլ մենք ենք նրանց նեղելու։ Հասկանալի՞ է, Մելեխով։

Գրիգորին լուռ ա վառեց գլանակը. մի քանի անգամ իրար ետևից ներս քաշեց ծուխը։ Գլուխը մի փոքր պտտվեց և սրտախառնուքը դեմ առավ կոկորդին։ Վերջին ամսում նա վատ էր սնվում և միայն այժմ զգաց, թե որչափ թուլացել է այդ ժամանակվա ընթացքում։ Հանգցնելով գլանակը, սկսեց ագահությամբ ուտել։ Ֆոմինը կարճ պատմեց ապստամբության մասին, օկրուգում թափառելու առաջին օրերի մասին, նա ճոռոմաբար «արշավանք» էր անվանում իր թափառումները։ Գրիգորին լուռ լսում էր և գրեթե առանց ծամելու կուլ էր տալիս հացը ու ոչխարի յուղոտ, լավ չեփած միսը։

— Սակայն դու լղարել ես հյուր եղածդ ժամանակ,— բարեսրտությամբ քմծիծաղ տալով ասաց Ֆոմինը։

Կուշտ ուտելուց զկոտալով, Գրիգորին փնթփնթաց.

— Հո զոքանչիս մոտ չէի ապրում։

— Երևում է, էլի։ Շատ կեր, կշտացիր, ինքան որ կարող ես։ Մենք ժլատ տանտերեր չենք։

— Շնորհակալ եմ։ Ա՛յ, հիմի կծխեի, հա՛-ա...— Գրիգորին վերցրեց իրեն առաջարկած գլանակը, մոտեցավ նստարանի վրա դրված չուգունին ու բանալով փայտե, կլոր խուփը, ջուր վերցրեց։ Ջուրը սառն էր ու մի քիչ աղի համ ուներ։ Ուտելուց արբեցած Գրիգորին ագահությամբ երկու բաժակ ջուր խմեց, դրանից հետո սկսեց հաճույքով ծխել։

— Կազակները մեզ այնքան էլ սիրով չեն ընդունում,— շարունակեց պատմել Ֆոմինը՝ նստելով Գրիգորիի մոտ։— Ախր անցյալ տարի, ապստամբության ժամանակ թունդ խփեցին նրանց... Սակայն կամավորներ կան։ Մի քառասուն մարդ է մտել մեր խումբը։ Բայց այդ չէ, որ հարկավոր է մեզ։ Մեզ հարկավոր է ոտքի հանել ամբողջ օկրուգը, հարկավոր է, որ հարևան Խոպերի և Ուստ-Մեդվեդիցկու օկրուգներն էլ օգնության հասնեն։ Այն ժամանակ մենք սրտանց կխոսենք սովետական իշխանության հետ։

Սեղանի շուրջը բարձրաձայն խոսակցություն էր տեղի ունենում, Գրիգորին լսում էր Ֆոմինին՝ տակևանց նայելով նրա սխրակիցներին։ Ո՛չ մի ծանոթ դեմք։ Նա դեռևս չէր հավատում Ֆոմինին, կարծում էր, թե վերջինս խորամանկում է, և զգուշության համար լռում էր։ Բայց շարունակ լռել նույնպես չէր կարելի։

— Եթե դու, ընկեր Ֆոմին, այդ բանը լուրջ ես ասում, ապա դուք ի՞նչ եք ուզում, նոր պատերա՞զմ սկսել,— հարցրեց նա՝ ջանալով վանել իրեն պաշարող քնկոտությունը։

— Ես դրա մասին արդեն ասի քեզ։

— Փոխե՞լ իշխանությունը։

— Այո։

— Իսկ ի՞նչ իշխանություն հաստատել։

— Մեր կազակական իշխանությունը։

— Ատամանների՞ն։

— Դե, ատամանների մասին խոսելու համար մի քիչ կսպասենք։ Ժողովուրդը ինչ իշխանություն ընտրի, այն էլ կհաստատենք։ Բայց այդ գործը շուտ չի լինի, ես գլուխ էլ

չունեմ քաղաքականության հետ։ Ես զինվորական մարդ եմ, իմ գործն է ոչնչացնել կոմիսարներին ու կոմունիստներին, իսկ իշխանության մասին քեզ կպատմի Կապարինը, իմ շտաբի պետը։ Նա դրանից լավ է գլուխ հանում։ Թեև լոք մարդ է, գրագետ է։— Ֆոմինը թեքվեց դեպի Գրիգորին, շշնջաց.— ցարական բանակի նախկին շտաբս-կապիտան է։ Բանիմաց մարդ է։ Հիմի նա քնած է օթախում, մի քիչ հիվանդացել է, երևի սովոր չլինելուց,— երկար ճամփա ենք անցնում։

Հաշտից լսվեց աղմուկ, ոտների դոփյուն, տնքոց, զուսպ իրարանցում և խուլ բղավոց՝ «տո՛ւր դրա մռութին»։ Սեղանի շուրջը միանգամից դադարեցին խոսակցությունները։ Ֆոմինը լարված ուշադրությամբ նայեց դռան։ Մեկը ուժգին բաց արեց դուռը։ Սպիտակ քուլա-քուլա գոլորշին ցածից լցվեց սենյակը։ Բարձրահասակ մի մարդ, որ առանց գլխարկի էր, մգդակած, պաշտպանական դույնի տաք կուրտկայով ու սպիտակ թաղյակներով,— մեջքից ստացած զրխկուն հարվածից դեպի առաջ թեքվելով՝ մի քանի արագ, սայթաքող քայլ արեց և ուսը խփեց վառարանի սուր անկյունին։ Նախքան դուռը ծածկելը հաշտից մեկը ուրախ բղավեց.

— Վերցրեք էլի մեկին։

Ֆոմինը վեր կացավ, շտկեց վերնաշապկի վրայից կապած գոտին։

— Ո՞վ ես դու,— ազդու տոնով հարցրեց նա։

Տաք կուրտկայով մարդը, շնչասպառ լինելով, ձեռքը տարավ մազերին, փորձեց շարժել թիակները և ցավից կընճռոտեց դեմքը։ Ինչ-որ ծանր առարկայով, ըստ երևույթին հրացանի կոթով խփել էին նրա ողնաշարին։

— Ի՞նչ ես լռում, լեզուդ լալկվե՞լ է, հը՞։ Հարցնում եմ՝ ո՞վ ես։

— Կարմիրբանակային եմ։

— Ո՞ր զորամասից ես։

— Պարենավորման տասներկուերորդ գնդից։

— Հը՛մ, այդ մեզ համար գյուտ է,— ժպտալով ասաց սեղանի շուրջը նստածներից մեկը։

Ֆոմինը շարունակեց հարցաքննությունը։

— Այստեղ ի՞նչ էիր անում։

— Փակոցային ջոկատը... մեզ ուղարկել էին...

— Հասկանալի է։ Քանի՞ հոգի էիք այստեղ, խուտորում։

— Տասնչորս հոգի։

— Ո՞րտեղ են մյուսները։

Կարմիրբանակայինը մի փոքր լռեց և ճիգ անելով բացեց շրթունքները։ Նրա կոկորդում ինչ-որ բան խլթխլթաց, արյան բարակ մի շիթ բերանի ձախ անկյունից հոսեց կզակի վրա։ Նա ձեռքով սրբեց շրթունքները, նայեց ձեռքին և դա քսմսեց շալվարին։

— Այդ սրիկաները... ձերոնք...— արյունը կուլ տալով, կլկլող ձայնով ասաց նա,— պատռեցին թոքերս...

— Մի՛ վախենա, կբուժենք,— հեգնանքով ասաց ցածրահասակ մի կազակ ու, վեր կենալով սեղանից, աչքով արեց մյուսներին։

— Ո՞րտեղ են մյուսները,— նորից հարցրեց Ֆոմինը։

— Գումակի հետ գնացին Ելանսկայա։

— Դո՞ւ որտեղացի ես, ո՞ր երկրից։

Կարմիրբանակայինը տենդորեն փայլող, կապույտ աչքերով նայեց Ֆոմինին, բերանից արյան լերդ թափեց ոտների տակ և արդեն մաքուր ու թավ ձայնով պատասխանեց.

— Պսկովի նահանգից եմ։

— Պսկովի, Մոսկովի... լսել ենք այդպիսի մարդկանց մասին...— ծաղրանքով ասաց Ֆոմինը։— Շատ հեռու տեղից ես եկել ուրիշի հացը տանելու, ա՛յ տղա... էհ, խոսակցությունը վերջացած է։ Ո՞նց վարվենք քեզ հետ, հը՞։

— Պետք է ինձ բաց թողնել։

— Ի՜նչ պարզ տղա ես... Գուցեև իսկապե՞ս բաց թողնենք սրան, հե՞, տղերք։ Դուք ի՞նչ եք ասում։— Ֆոմինը շուռ եկավ սեղանի շուրջ նստածների կողմը, քմծիծաղ տվեց բեղերի տակին։

Գրիգորին, որ ուշադրությամբ դիտում էր այդ բոլորը, տեսավ թուխ և հողմահար դեմքերի զուսպ, նշանակալից ժպիտները։

— Թող մեզ մոտ ծառայի մի երկու ամիս, հետո կթողնենք, որ գնա տուն կնկա մոտ,— ասաց ֆոմինականներից մեկը։

— Գուցե իսկապե՞ս ծառայես մեզ մոտ, հը՞,— հարցրեց Ֆոմինը՝ ժպիտը թաքցնելու ապարդյուն ճիգ անելով։—

Քեզ կտանք ձի, թամք, թաղյակներիդ փոխարեն նոր սապոգներ՝ ուռուցիկ ճիտքերով... Ձեր հրամանատարները վատ են մատակարարում ձեզ։ Այդ ի՞նչ ոտնամաններ են որ։ Եղանակը տաք է, իսկ դու թաղյակներ ես հագել։ Մտիր մեզ մոտ ծառայելու, հը՞։

— Նա մուժիկ է, կյանքումը ձի չի նստել,— հիմար ձևանալով, նողկալիորեն բարակ, շվշվացող ձայնով ասաց կազակներից մեկը։

Կարմիրբանակայինը լռում էր։ Նա մեջքը դեմ էր արել վառարանին, պայծառացած, հստակ աչքերով նայում էր բոլորին։ Երբեմնակի նա ցավից կնճռոտում էր դեմքը ու մի քիչ բաց անում բերանը, երբ դժվարանում էր շնչել։

— Մնո՞ւմ ես մեզ մոտ, թե ոնց,— նորից հարցրեց Ֆոմինը։

— Իսկ դուք ովքե՞ր եք։

— Մե՞նք։— Ֆոմինը բարձրացրեց հոնքերը, ձեռքի ափով հարթեց բեղերը.— մենք աշխատավոր ժողովրդի համար պայքարողներ ենք։ Մենք դեմ ենք կոմիսարների ու կոմունիստների ճնշմանը, այ թե ովքեր ենք։

Եվ այդ պահին Գրիգորին հանկարծ ժպիտ տեսավ կարմիրբանակայինի դեմքի վրա։

— Հը՛մ, այ թե ովքեր եք դուք... Ես էլ մտածում եմ՝ այս ի՞նչ մարդիկ են։— Գերին ժպտում էր՝ ցույց տալով արյունաներկ ատամները ու այնպես էր խոսում, որ կարծես թե հաճելիորեն զարմացել էր լսած նորությունից, բայց նրա ձայնը ինչ-որ մի այնպիսի բան էր արտահայտում, որը բոլորին ստիպեց լարել իրենց ուշադրությունը։— Ձեր ասելով, ուրեմն, դուք ժողովրդի համար պայքարողնե՞ր եք։ Այդպե-ե-ե՞ս։ Իսկ մեր ասելով ուղղակի բանդիտներ եք։ Ես ձեզ ծառայե՞մ։ Ա՛մա թե հանաքչի մարդիկ եք, հա՛-ա։

— Ոնց որ տեսնում եմ, դու էլ ուրախ տղա ես...— Ֆոմինը կկոցեց աչքերը, կարճ հարցրեց.— կոմունի՞ստ ես։

— Չէ, ի՛նչ եք ասում. անպարտիական եմ։

— Չի երևում։

— Աղնիվ խոսք, անպարտիական եմ։

Ֆոմինը հազաց ու դարձավ դեպի սեղանը։

— Զումակով, գնդակահարել սրան։

— Ջարժե ինձ սպանել։ Պատճառ չկա,— կամացուկ ասաց կարմիրբանակայինը։

Նրան լռությամբ պատասխանեցին։ Զումակովը, որ վայելչակազմ, գեղեցիկ մի կազակ էր անգլիական կաշվե անթև բաճկոնով, տհաճությամբ վեր կացավ սեղանից, կոկեց առանց այն էլ կոկիկ, դեպի ետ սանրված, շեկ մազերը։

— Ջանձրացրել է ինձ այս պաշտոնը,— զվարթ ասաց նա նստարանի վրա կուտակված թրերի միջից հանելով իր թուրը և մեծ մատի վրա փորձելով դրա սայրը։

— Հո անպայման դու չպիտի այդ անես։ Ասա տղերանց, որոնք բակումն են,— խորհուրդ տվեց Ֆոմինը։

Զումակովը սառն հայացքով ոտից-գլուխ դիտեց կարմիրբանակայինին, ասաց.

— Անցիր առաջ, սիրելի։

Կարմիրբանակայինը պոկվեց վառարանից, կորացավ ու դանդաղ քայլեց դեպի դուռը՝ հատակի վրա թողնելով թրջված թաղյակների խոնավ հետքերը։

— Գալիս էիր այստեղ, գոնե ոտներդ սրբեիր։ Եկար, նշաններ թողիր, կեղտոտեցիր... Ի՞նչ փնթին ես եղել, աղբերացու,— շինծու դժգոհությամբ ասաց Զումակովը՝ քայլելով գերու ետևից։

— Ասա, որ տանեն փողոց կամ կալը։ Տան մոտ չխփեք, թե չէ տանեցիք կնեղանան,— նրանց ետևից բղավեց Ֆոմինը։

Նա մոտեցավ Գրիգորիին, նստեց կողքին, հարցրեց.

— Կա՞րճ է մեր դատը։

— Կարճ է,— խուսափելով նրա աչքերին նայելուց, պատասխանեց Գրիգորին։

Ֆոմինը հոգոց հանեց։

— Ի՞նչ արած։ Հիմի այդպես է հարկավոր։— Նա ուզում էր էլի մի բան ասել, բայց դրսից լսվեց ոտների բարձր թփթփոց, մեկը բղավեց, ու հնչող տրաքեց մի կրակոց։

— Գրողի տարածները ի՞նչ են անում այնտեղ, է՛,— սրտնեղումով բացականչեց Ֆոմինը։

Սեղանի մոտ նստածներից մեկը վեր թռավ, ոտքի հարվածով բացեց դուռը։

— Ինչո՞ւմն է բանը,— գոռաց նա դեպի մթությունը։

Ներս մտավ Զումակովը, աշխուժությամբ ասաց.

— Ի՜նչ ճարպիկն էր, հա՜-ա։ Ա՛յ քեզ սատանա։ Սանդղուղքի վերևի աստիճանից թռավ ու փախավ։ Ստիպված եղա մի փամփուշտ վատնել։ Տղերքը այնտեղ վերջ են տալի նրան...

— Հրամայիր, որ բակից քարշ տան փողոց։

— Ես արդեն ասել եմ, Յակով Եֆիմովիչ։

Սենյակում մի րոպե լռություն տիրեց։ Հետո մեկը, խեղդելով հորանջոցը հարցրեց.

— Եղանակը ո՞նց է, Զումակով, չի՞ պարզում։

— Ամպած է։

— Եթե անձրև գա, կմաքրի վերջին ձյունը։

— Իսկ դա քո ինչի՞ն է պետք։

— Ինձ պետք չի։ Ցեխի միջով գնալ չէի ուզենա։

Գրիգորին վերցրեց իր փափախը։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Ֆոմինը։

— Դուրս։

Գրիգորին դուրս ելավ։ Աղոտ փայլում էր ամպի տակից նայող լուսինը։ Լայն բակը, մարագների կտուրները, բրգաձև բարդիների վերամբարձ, մերկ կատարները, ձիակապարանի մոտ գտնվող, տապճակներով ծածկված ձիերը,— այդ ամենը լուսավորած էր կեսգիշերվա կապտավուն լույսով։ Մուտքի սանդուղքից մի քանի սաժեն հեռու ընկել էր սպանված կարմիրբանակայինը, գլուխը սուզվել էր հալված ձյան ջրի աղոտ փայլող լճակի մեջ։ Երեք կազակ թեքվել էին նրա վրա, խոսում էին ցածր ձայնով։ Նրանք ինչ-որ բան էին անում մեռելի կողքին։

— Նա դեռ շնչում է, աստված վկա,— վրդովված ասավ մեկը։— Տո, ծուռթևանի սատանա, ո՞նց ես խփել։ Քեզ ասում էի՞ թրով խփի գլխին, չէ՞։ Ի-ի՜հ, փալասի մեկը։

Խոպաձայն կազակը, հենց նա, որը ուղեկցում էր Գրիգորիին, պատասխանեց.

— Կմեռնի, կցնցվի ու կմեռնի... բարձրացրու գլուխը, է։ Չեմ կարողանում հանել։ Մազերից բռնի ու բարձրացրու, ա՛յ, այդպես։ Դեհ, հիմա բռնի։

Ջուրը ճլմփաց։ Մեռելի կողքին կանգնածներից մեկը

շտկվեց։ Խոպաձայն կազակը պպզած տնքում էր, հանում սպանվածի տաք կուրտկան։ Մի քիչ հետո նա ասաց.

— Ձեռքս թեթև է, դրա համար էլ սա դեռ շունչը չի փչել։ Պատահում էր, որ տանը խող էի մորթում... Բռնի, է՜, բաց մի թող, թյո՛ւ, սատանա... Հա, պատահում էր, որ խող էի մորթում, բռնում էի ամբողջ բկից, մինչև ճնաղը հասնում, իսկ նա, անիծվածը, վեր է կենում ու գնում բակով մեկ։ Երկար ման է գալի։ Արյունլվիկ է եղել, ամա ման է գալի, խոխոտացնում։ Շունչ քաշել չի կարող, ամա էլի ապրում է։ Ուրեմն դուրս է գալի, որ իմ ձեռքը թեթև է։ Դեհ, թող դրան... էլի դեռ սա՞ղ է։ Ա՛յ քեզ բա-ա՜ն։ Բայց ախր վիզը ճեղքել եմ հենց մինչև ոսկորը...

Երրորդը կարմիրբանակայինից հանած տաք կուրտկան փռեց պարզած ձեռքերի վրա, ասաց.

— Արյունոտեցինք ձախ կողքը... Կպչում է ձեռքերիս, թյո՛ւ, անտեր մնա սա։

— Կմաքրվի։ Հո ճրագու չի,— հանգիստ ասաց խոպոտը ու էլի պպզեց.— կմաքրվի կամ կլվացվի։ Փորձանք չէ։

— Ի՜նչ է, ուզում ես դրա շալվարն էլ հանել,— դժգոհ հարցրեց առաջինը։

Խոպոտը խիստ տոնով ասաց.

— Եթե շտապում ես, գնա ձիերի մոտ, առանց քեզ էլ կանենք գործը։ Բարիքը հո չի՞ կորչելու։

Գրիգորին կտրուկ շուռ եկավ, մտավ տուն։

Ֆոմինը նրան նայեց զննող հայացքով, վեր կացավ։

— Գնանք օթախը, խոսենք, թե չէ այստեղ շատ են աղմուկ անում։

Ընդարձակ, տաք վառած օթախում մկնների և կանեփի սերմի հոտ էր գալիս։ Մահճակալի վրա փռվել ու քնել էր պաշպանական գույնի ֆրենչ հագած, կարճահասակ մի մարդ։ Նրա նոսր մազերը գզգզված էին, բմբուլով ու մանրիկ փետուրներով ծածկված։ Նա թուշը պինդ դրել էր կեղտոտ, միայն մթելով ծածկված բարձին։ Կախովի լամպը լուսավորում էր նրա գունատ, վաղուց չսափրված դեմքը։

Ֆոմինը նրան արթնացրեց, ասաց.

— Վեր կաց, Կապարին։ Մեզ մոտ հյուր կա։ Սա մեր մարդն է, Մելեխով Գրիգորին, նախկին հարյուրապետը,— ի գիտություն քեզ։

Կապարինը ոտները կախեց մահճակալից, ձեռներով շփեց դեմքը, վեր կացավ։ Թեթևակի գլուխ տալով, նա սեղմեց Գրիգորիի ձեռքը.

— Շատ հաճելի է։ Շտաբս-կապիտան Կապարին։

Ֆոմինը սիրալիր կերպով աթոռը հրամցրեց Գրիգորիին, ինքը նստեց սնդուկի վրա։ Նա հավանորեն Գրիգորիի դեմքից հասկացավ, որ կարմիրբանակայինի սպանությունը ճնշող տպավորություն է թողել նրա վրա, դրա համար էլ ասաց.

— Դու չկարծես, թե մենք բոլորի հետ էլ այդպես խիստ ենք վարվում։ Այդ հիմարը պարենավորման ջոկատներից է։ Այդպիսիներին և զանազան կոմիսարներին չենք խնայում, իսկ մնացածներին գութ ենք անում։ Երեկ բռնեցինք երեք միլիցիոների, ձիերը, թամքերն ու զենքերը վերցրինք նրանցից, իսկ իրենց թողինք։ Նրանց սպանելը մեր ինչի՞ն էր։

Գրիգորին լուռ էր։ Ձեռները ծնկներին դրած, նա տարվել էր իր մտքերով և Ֆոմինի ձայնը կարծես երազում էր լսում։

— ...— Այսպես էլ կովում ենք առայժմ,— շարունակեց Ֆոմինը։— Մտածում ենք այնուամենայնիվ ոտքի հանել կազակներին։ Սովետական իշխանությունը չի ապրելու։ Լուրեր ենք լսում, որ ամեն տեղ պատերազմ է։ Ապստամբություններ են ամեն տեղ,— թե Սիբիրում, թե Ուկրաինայում և թե նույնիսկ Պետրոգրադում։ Ամբողջ նավատորմիղը ապստամբել է այն բերդում, ո՞նց է դա կոչվում...

— Կրոնշտադտ,— հուշեց Կապարինը։

Գրիգորին բարձրացրեց գլուխը, դատարկ, ասես չտեսնող աչքերով նայեց Ֆոմինին, հետո Կապարինին։

— Վերցրու, ծխիր։— Ֆոմինը մեկնեց պորտսիգարը։— Հա՛, Պետրոգրադը արդեն վերցրել են ու մոտենում են Մոսկվային։ Ամեն տեղ այդպիսի խառնափնթորություն է։ Մենք էլ չպիտի քնենք։ Ոտքի կհանենք կազակներին, մեզնից թափ կտանք սովետական իշխանությունը, հետո էլ եթե կադետները օգնեն, մեր գործերը բոլորովին լավ կգնան։ Թող նրանց ուսումնական մարդիկ իշխանություն սահմանեն, մենք նրանց կօգնենք։— Նա մի փոքր լռեց, հետո հարցրեց,— դու ի՞նչ ես կարծում, Մելեխով, եթե կադետները վրա տան Սև ծովի կողմից, ու մենք միանանք նրանց հետ, հաշվի կառնվի, որ մենք առաջինն ենք ապստամբել, չէ՞։ Կապարինն ասում է, որ անպայման հաշվի կառնվի։ Մի՞թե, զորօրինակ, ինձ կկորթեն այն պատճառով, որ տասնութ թվին ռազմաճակատից տարել էի 28-րդ գունդը և ինչ-որ մի երկու տարի ծառայել եմ սովետական իշխանության։

«Այ թե աչքդ ուր ես տնկել, հիմար ես, բայց խորամանկ ես...»— մտածեց Գրիգորին ակամա ժպտալով։ Ֆոմինը պատասխան էր սպասում։ Ակներև էր, որ այդ հարցը լրջորեն էր զբաղեցնում նրան։ Գրիգորին դժկամ ասաց.

— Դա երկար գործ է։

— Իհարկե, իհարկե,— սիրով համաձայնվեց Ֆոմինը։— Ես այդ ի միջի այլոց ասացի։ Հետո բանը կպարզվի, իսկ հիմա մենք պետք է գործենք, թիկունքում ջարդենք կոմունիստներին։ Մեկ է, մենք նրանց հանդիստ չենք տա։ Նրանք իրենց հետևակը նստեցրել են սայլերին ու մտածում են ընկնել մեր ետևից... Թող փորձեն։ Մինչև հեծյալ զորամաս գա նրանց օգնելու, ամբողջ օկրուգը գլխիվայր կկանգնեցնենք։

Գրիգորին էլի նայում էր իր ոտների տակ, մտածում էր։ Կապարինը ներողություն խնդրեց, պառկեց մահճակալի վրա։

— Շատ եմ հոգնում։ Երկար ճանապարհներ ենք անցնում, քիչ ենք քնում,— թույլ ժպտալով ասաց նա։

— Ժամանակն է, որ մենք էլ հանգստանանք։— Ֆոմինը վեր կացավ, ծանր ձեռքը դրեց Գրիգորիի ուսին.— կեցցես, Մելեխով, որ այն ժամանակ Վեշկիում լսեցիր իմ խորհուրդը։ Եթե չթաքնվեիր, այն ժամանակ քեզ ծակը կկոխեին։ Հիմա ընկած կլինեիր Վեշենսկու մոտ, առափնյա ավազուտում ու կփտեիր... Ես այդ պարզ տեսնում էի։ Էհ, ի՞նչ մտածեցիր, ասա, ու պառկենք քնելու։

— Ի՞նչ ասեմ։

— Մեղ հետ գնո՞ւմ ես թե ոնց։ Հո չես կարող ամբողջ կյանքումդ ուրիշների փարախներում թաքնվել։

Գրիգորին սպասում էր այդ հարցը։ Հարկավոր էր ընտրել այս կամ այն ուղին. կամ թափառել խուտորից խուտոր, սովալլուկ, անտուն-անօթևան կյանք վարել ու կործանվել խուլ ձանձրույթից, մինչև որ մի որևէ տանտեր իրեն մատներ իշխանություններին, կամ հանցանքի խոստովանությամբ ներկայանալ քաղբյուրո, կամ գնալ Ֆոմինի հետ։ Եվ նա ընտրեց։ Ամբողջ երեկոյի ընթացքում առաջին անգամ ուղիղ նա-

յեց Ֆոմինի աչքերին ու, ժպտալուց շրթունքները ծռմռելով, ասաց.

— Ինձ համար ճամփա ընտրելն այնպես է, ինչպես լինում է հսկաներին վերաբերող հեքիաթներում. ձախ գնաս, ձիդ կկորցնես, աջ գնաս կսպանվես... Եվ այսպես, երեք ճանապարհ կա, և ոչ մեկն էլ հարմար չի...

— Դու ընտրիր առանց հեքիաթների։ Հեքիաթները հետո կպատմենք։

— Ուրիշ ելք չկա, դրա համար էլ ընտրեցի։

— Ի՞նչ։

— Մտնում եմ քո բանդան։

Ֆոմինը դժգոհությամբ կնճռոտեց ճակատը, կծոտեց բեղի ծայրը։

— Դու այդ խոսքից ձեռ քաշիր։ Ո՞նց թե բանդա։ Այդ անունը մեզ կոմունիստներն են տվել, իսկ քեզ վայել չէ այդպես խոսել։ Ապստամբած մարդիկ ենք։ Պրծավ-գնաց։

Նրա դժգոհությունը բոպեական էր։ Նա պարզապես ուրախացավ Գրիգորիի վճռից և չէր կարող այդ թաքցնել. աշխուժությամբ ձեռքերը շփելով, ասաց.

— Մեր ուժը շատացավ։ Դու լսո՞ւմ ես, շտաբս-կապիտան։ Քեզ կտանք մի դասակ, Մելեխով, իսկ եթե չես ուզում դասակի հրամանատար լինել, կաշխատես շտաբում, Կապարինի հետ։ Իմ ձին տալիս եմ քեզ։ Ես ուրիշ ձի ունեմ։

XII

Առավոտ ծեգին մի քիչ ցրտեց։ Ջրափոսերը ծածկվեցին բարակ սառույցով։ Ձյունը պնդացավ, հնչեղ ճրթճրթում էր։ Ձիերի սմբակները անպարզ, սորուն, կլոր դրոշմներ էին թողնում հատիկավոր ձյան խոպան տարածության վրա, իսկ այնտեղ, ուր նախորդ օրվա հալչլոցը կերել էր ձյունը, մերկ գետինը, նախորդ տարվա անկյանք խոտաբույսերով պատած, մի քիչ ճմլվում էր սմբակների տակ ու, փոսանալով, խուլ ճլմփում։

Ֆոմինի ջոկատը խուտորից դուրս երթական շարասյուն էր կազմում։ Հեռվում, ճանապարհի վրա շարժվում էին դեպի առաջ ուղարկված գլխային պարեկի վեց ձիավորները։

— Ահա նա, իմ զորքը,— ձին քշելով Գրիգորիի կողմը, ժպտալով, ասաց Ֆոմինը։— Այս տեսակ կտրիճներով կարելի է սատանայի պոզերն էլ ջարդել։

Գրիգորին մի հայացք նետեց շարասյան վրա, տխրությամբ մտածեց. «Դու քո զորքով հլա մի հանդիպեիր իմ բուդյոննիական հեծելավաշտին, մենք կես ժամում ջարդուփշուր կանեինք ոսկորներդ»։

Ֆոմինը տնկեց մտրակը, հարցրեց.

— Ո՞նց են սրանք իրենց տեսքով, հը՞։

— Գերիներին վատ չեն թրատում և սպանվածներին նույնպես վատ չեն տկլորացնում, իսկ թե կռվի մեջ ինչպես են, չգիտեմ,— չոր տոնով պատասխանեց Գրիգորին։

Ձիու վրա մեջքը դարձնելով քամու դեմ, Ֆոմինը վառեց ձխախոտը, ասաց.

— Կռվումն էլ կտեսնես սրանց։ Իմ մարդիկ մեծ մասամբ զինծառայողներ են, սրանք ամոթով չեն անի։

Փամփուշտներով ու պարենով բեռնված վեց հատ երկձի սայլերը տեղավորվեցին շարասյան մեջտեղում։ Ֆոմինը առաջ սլացավ, ճանապարհվելու հրաման տվեց։ Բլուրի վրա նա էլի ձին քշեց-մոտեցավ Գրիգորիին հարցրեց.

— Ո՞նց է իմ ձին։ Սրտո՞վդ է։

— Լավ ձի է։

Նրանք երկար ու լուռ գնում էին իրար կողքի, ասպանդակ-ասպանդակի. հետո Գրիգորին հարցրեց.

— Տատարսկում լինելու միտք չունե՞ս։

— Կարոտե՞լ ես ձերոնց։

— Ուզում էի տեսնել։

— Գուցեն մտնենք։ Հիմի մտածում եմ շուտ գալ դեպի Ջիր, բզել կազակներին, մի քիչ սթափեցնել նրանց։

Բայց կազակները այնքան էլ գլուխ չունեին «սթափվելու» հետ... Գրիգորին դրանում համոզվեց հենց ամենամոտ օրերի ընթացքում։ Որևէ խուտոր կամ ստանիցա գրավելով, Ֆոմինը հրամայում էր քաղաքացիների ժողով հրավիրել։ Մեծ մասամբ նա ինքն էր ճառում, երբեմն նրան փոխարինում էր Կապարինը։ Նրանք կազակներին կոչ էին անում զենք վերցնել, խոսում էին այն «ծանրությունների մասին, որ «սովետական իշխանությունը գրել էր հողագործների վրա», «վերջ-

նական քայքայման» մասին, «որը անխուսափելիորեն կգա, եթե չտապալվի սովետական իշխանությունը»։ Ֆոմինը խոսում էր ո՛չ այնպես վարժ և գրագետ, ինչպես Կապարինը, բայց ավելի երկար և կազակներին հասկանալի լեզվով։ Նա ճառը վերջացնում էր սովորաբար միևնույն սերտած ֆրազներով. «Մենք այսօրվանից ձեզ ազատում ենք պարենային մասնատրումից։ Էլ հաց չտանեք ընդունման կայանները։ Հերիք է կերակրել ձրիակեր կոմունիստներին։ Նրանք չաղանում էին ձեր հացով, բայց այդ բանը վերջացել է։ Դուք ազատ մարդիկ եք։ Զինվեցեք ու պաշտպանեցեք մեր իշխանությունը։ Ուռա՜, կազակներ»։

Կազակները նայում էին գետնին ու մռայլ լռում, դրա փոխարեն կնանիքը ազատություն էին տալիս իրենց լեզուներին։ Նրանց սեղմ շարքերից թունավոր հարցեր ու ճչոցներ էին թափում։

— Քո իշխանությունը լավն է, իսկ դու սապոն բերե՞լ ես մեզ համար։

— Ո՞րտեղ է քո այդ իշխանությունը, թամքիդ տոպրակների մե՞ջ, հա՞։

— Իսկ դուք ինքներդ ո՞ւմ հացն եք ուտում։

— Երևի հիմա կերթաք տնետուն, հաց մուրալու, հա՞։

— Դրանք թրեր ունեն։ Կսկսեն առանց հարցնելու կըտրել հավերի գլուխները։

— Ո՞նց թե հաց չտանենք։ Այսօր դուք այստեղ եք, իսկ էգուց շներով էլ ման գաս, ձեր հետքը չի գտնվի, իսկ մենք պատասխա՞ն տանք։

— Մեր էրիկներին չենք տա ձեզ։ Ինքներդ կովեցեք։

Եվ մեծ զայրույթով էլի ուրիշ շատ բաներ էին ասում կնանիքը, որոնք պատերազմի տարիներին կորցրել էին իրենց հավատը ամեն ինչի նկատմամբ, վախենում էին նոր պատերազմից և մոլեգին համառությամբ կառչում էին իրենց ամուսիններից։

Ֆոմինը անտարբերությամբ էր լսում նրանց անմիտ ճչոցները։ Նա գիտեր դրանց արժեքը։ Սպասելով լռության, նա դիմում էր կազակներին։ Եվ այդ ժամանակ վերջիններս կարճ ու խոհեմաբար պատասխանում էին.

— Մի՛ նեղեք մեզ, ընկեր Ֆոմին, մենք լիովին կշտացել ենք կռվելուց։

— Փորձեցինք, էլի՛ ապստամբեցինք տասնինը թվին։

— Ինչո՞վ և ինչի՞ ապստամբենք։ Հլա կարիք չկա։

— Գալիս է գարունը, պետք է ցանք անել և ոչ թե կռվել։

Մի անգամ ետին շարքերից մեկը բղավեց.

— Հիմի քաղցր ես խոսում։ Բա որտե՞ղ էիր տասնինը թվին, երբ ապստամբում էինք։ Դու, Ֆոմին, ուշ ես զարթնել։

Գրիգորին տեսավ, թե ինչպես փոխվեց Ֆոմինի դեմքը, բայց վերջինս զսպվեց և ոչինչ չպատասխանեց։

Առաջին շաբաթում Ֆոմինը ժողովներում առհասարակ բավական հանգիստ էր լսում կազակների առարկությունները, նրանց կտրուկ մերժումները իրեն օժանդակելու նկատմամբ, նույնիսկ կանանց ճչոցներն ու նախատինքներն էլ չէին խախտում նրա հոգեկան հավասարակշռությունը։ «Ոչի՛նչ, մենք նրանց խելքի կբերենք»,— ինքնավստահությամբ ասում էր նա՝ ժպտալով բեղի տակին։ Բայց համոզվելով, որ կազակ բնակչության հիմնական մասսան բացասաբար է վերաբերվում, նա կտրուկ փոխեց իր վերաբերմունքը ժողովներում հանդես եկողների նկատմամբ։ Նա խոսում էր արդեն առանց ձիուց իջնելու և ոչ այնքան համոզում էր, որքան սպառնում։ Սակայն էլի առաջվա հետևանքն էր ստացվում։ Կազակները, որոնց վրա նա հենվել էր ուզում, լուռ լսում էին նրա ճառը ու նույնպես լուռ հեռանում։

Մի խուտորում նրա ճառից հետո իր պատասխանով հանդես եկավ մի կազակուհի։ Բարձրահասակ, չաղ և լայնակոնք այդ այրի կինը համարյա տղամարդու թավ ձայնով էր խոսում և տղամարդու պես ուժգին ու կտրուկ թափահարում ձեռները։ Նրա լայն, ծաղկատար դեմքը կատաղի վճռականություն էր արտահայտում, հաստ, դուրս ընկած շրթունքները շարունակ ծռմռվում էին արհամարհական քմծիծաղից։ Կարմիր, ուռուցիկ ձեռքը տնկելով ձիու վրա քարի պես անշարժ նստած Ֆոմինի կողմը, նա խայթող խոսքերը կարծես թքելով էր թափում բերանից.

— Դու ի՞նչի ես խառնակչություն գցում այստեղ, հը՞։ Դու մեր կազակներին ո՞ւր ես ուզում խոթել, ո՞ր անդունդը։ Բա այս անիծված պատերազմը մեզ մոտ քի՞չ կնանիք է այ-

ռիացրել։ Քի՞չ երեխաներ են որբացել, հը՞։ Ուզում ես նոր փորձա՞նք բերել մեր գլխին։ Այդ ի՞նչ ազատարար-թագավոր ես դու, որ բուսել ես Ռուբեժնի խուտորից։ Դու հլա տունդ կարգի գցեիր, տնաքանդությանդ վերջ տայիր, հետո մեզ սովորեցնեիր, թե ոնց պիտի ապրել և ինչ իշխանություն ընդունել կամ չընդունել։ Թե չէ քո տանը կնիկդ խամուտը շլնքից վար չի դնում, մենք դա լավ գիտենք։ Իսկ դու բեղերդ ես երկարացրել, ձիով ման ես գալի ու խառնակում ժողովուրդը։ Քո տուն ու տեղը վաղուց փուլ կգար, թե որ քամին չպահեր։ Ուսուցիչի՛ս մտիկ։ Ի՞նչ ես պապանձվել, շիկամաղ հրեշ, թե՞ ես դրուստը չեմ ասում։

Ամբոխի մեջ խշշաց կամացուկ ծիծաղը։ Խշշաց քամու պես ու լռեց։ Ֆոմինի ձախ ձեռքը, որ դրված էր թամքի ղաշին, դանդաղ, տնտղում էր սանձափոկը, դեմքը մթնում էր ղսպած ցասումից, բայց նա լռում էր ու մտրի մեջ պատշաճելք փնտրում ստեղծված դրությունից։

— Այդ ի՞նչ բան է քո իշխանությունը, որը մենք պիտի պաշտպանենք քո ասելով,— շարունակում էր վրա տալ մոլեգնության հասած կինը։

Նա ձեռները կանթեց կողքերին ու դանդաղ գնաց դեպի Ֆոմինը՝ ճոճելով լայն կոնքը։ Կազակները նրան ճանապարհ էին տալիս՝ թաքցնելով ժպիտները, խոնարհելով ծիծաղկոտ աչքերը։ Նրանք ազատում էին ամբոխի մեջտեղի բոլորակը՝ ասես պարերի համար, մի կողմ էին քաշվում, հրում միմյանց...

— Քո իշխանությունը քեզ հետ էլ կչքվի,— ցածր, հաստ ձայնով ասում էր այրի կինը։— Նա քո ետևից է քարշ գալի և մի տեղ մի ժամից ավելի չի ապրում։ «Այսօր ձիով ես, շախով, էգուց ցեխն ընկած Պախոմ»,— ա՛յ թե ով ես դու և քո իշխանությունն էլ այդպես է։

Ֆոմինը ոտները ուժգին սեղմեց ձիու կողերին, նրան քշեց ամբոխի մեջ։ Մարդիկ այս ու այն կողմ նետվեցին։ Լայն բոլորակում մնաց միայն այրի կինը։ Նա իր կյանքում շատ բան էր տեսել և դրա համար էլ հանգիստ էր նայում Ֆոմինի ձիու մռութին ու բացված ատամներին, ձիավորի դեմքին, որ սփրթնել էր կատաղությունից։

Ձին քշելով կնոջ վրա, Ֆոմինը բարձրացրեց մտրակը։

— Ձենդ կտրի չեչոտ անզգամ... Ի՞նչ ես այստեղ ագիտացիա անում։

Ձիու մռութը, դեպի վեր ցցված, բերանը բացված, կախվել էր աներկյուղ կազակուհու հենց գլխին։ Սանձի բերանոցից թռավ փրփուրի դալկականաչավուն մի փաթիլ, ընկավ կնոջ սև լաչակին, այստեղից էլ այտին։ Այրի կինը ձեռքով մաքրեց այն, մի քայլ ետ գնաց։

— Դու կարող ես խոսել, իսկ մենք չե՞նք կարող, հը՞,— բղավեց նա՝ զայրույթից առկայծող, կլոր աչքերը հառելով Ֆոմինի վրա։

Ֆոմինը չխփեց նրան։ Թափահարելով մտրակը նա գոռաց.

— Բոլշևիկյան խառնակիչ, ես քեզ կխելոքացնեմ, հա՛-ա։ Կհրամայեմ բարձրացնել փեշդ ու շամփուրով ռոզգի տալ, այն ժամանակ միանգամից խելքի կգաս։

Կինը երկու քայլ էլ ետ գնաց ու մեջքը անսպասելիորեն դարձնելով Ֆոմինի կողմը, կռացավ մինչև գետին, բարձրացրեց յուրկայի փեշերը։

— Իսկ սա տեսե՞լ ես դու, քաջ զինվոր,— բացականչեց նա ու զարմանալի ճարպկությամբ շտկվելով, նորից շուռ եկավ դեպի Ֆոմինը։— Ինձ ռոզգի տալ, հա՞-ա։ Դու բոլորովին ախմախացել ես...

Ֆոմինը չարացած թքեց, քաշեց սանձը, զսպելով ետ-ետ գնացող ձիուն։

— Ծածկվիր, է՛, անճոռնի կով։ Ուրախ ես, որ շատ միս կա վրեդ, հա՞,— բարձրաձայն ասաց նա ու շուռ տվեց ձին՝ իզուր փորձելով խիստ արտահայտություն տալ դեմքին։

Ամբոխի մեջ հնչեց խուլ, զուսպ քրքիջը։ Ֆոմինականներից մեկը իր հրամանատարի արատավորված պատիվը փրկելու համար վազվազ մոտեցավ այրի կնոջը, բարձրացրեց հրացանի կոթը, որ խփեր, բայց ածդահա մի կազակ, որ հասակով երկու գլխով բարձր էր նրանից, իր լայն թիկունքով ծածկեց կնոջը, կամացուկ, սակայն բազմախոստումնալից ասաց.

— Ձեռ չտաս, հա՛-ա։

Ու էլի երեք խուտորցի մոտեցան և այրի կնոջը ետ տարան։ Նրանցից մեկը, որ երիտասարդ էր, քյաքուլավոր, ցածր ձայնով ասաց Ֆոմինականին.

— Ո՞ւմ վրա ես քշում, հը՞։ Կնկան խփելը դժվար բան չի, դու քո սրտոտությունը հրե՛ն այնտեղ, բլուրի վրա ցույց տուր, իսկ տներում մենք բոլորս էլ քաջ ենք...

Ֆոմինը ձին քշեց-մոտեցավ ցանկապատին, կանգնեց ասպանդակների վրա։

— Կազակներ, լավ մտածեցեք,— գոռաց նա՝ դիմելով դանդաղ ցրվող ամբոխին.— հիմի խնդրում ենք, որ այդ բանը կամովին լինի, իսկ մի շաբաթից հետո կվերադառնանք, ուրիշ կերպ կխոսենք։

Հայտնի չէ ինչու նա ուրախ տրամադրության մեջ ընկավ ու ծիծաղելով, զսպելով միևնույն տեղում թռչկոտող ձիուն, բղավեց.

— Մենք վախկոտներ չենք, մեզ կնկա այդ... (հետևյին մի քանի անպարկեշտ արտահայտություններ) չեք վախենի։ Մենք թե չեչոտներ ենք տեսել և թե ուրիշ ամեն տեսակ բաներ։ Կգանք, և եթե ձեզանից ոչ ոք կամովին չգրվի մեր ջոկատը, զորով կմոբիլիզացնենք բոլոր ջահել կազակներին։ Այդպես էլ գիտցեք։ Մենք ձեզ հետ շատ գլուխ ցավացնելու և ձեր ցանկությունը սպասելու ժամանակ չունենք։

Ամբոխի միջից,— որը մի բոպե կանգ էր առել, ծիծաղ և ուրախ խոսակցություններ լսվեցին։ Ֆոմինը դեռ էլի ժպտալով հրաման տվեց.

— Ձի՛ նստել...

Ծիծաղը զսպելուց կարմրելով, Գրիգորին ձին քշեց դեպի իր դասակը։

Ցեխոտ ճանապարհով ձգված Ֆոմինյան ջոկատը արդեն անցավ բլուրը, ետևում չքացավ անհյուրընկալ խուտորը, իսկ Գրիգորին էլի դեռ երբեմնակի ժպտում էր, մտածում՝ «լավ է որ մենք, կազակներս, ուրախ մարդիկ ենք։ Մեզ մոտ շուլուխը ավելի շատ է, քան դարդը, աստված չանի այս բոլորը լուրջ բնույթ ունենար,— այս տեսակ կյանքում վաղուց կարելի էր կախվել»։ Նա երկար ժամանակ ուրախ տրամադրության մեջ էր, ու միայն այն պահին, երբ կանգառան հանգստանալու, նա անհանգստությամբ և դառնությամբ մտածում էր, որ հավանորեն չի հաջողվի ոտքի հանել կազակներին և որ Ֆոմինի ամբողջ հնճարքը անխուսափելի կործանման է դատապարտված։

XIII

Սկսվում էր գարունը։ Արևն ավելի ու ավելի ուժեղ էր տաքացնում երկիրը։ Բլուրների հարավային լանջերում հալվել էր ձյունը, ու նախորդ տարվա խոտաբույսերից շիկակարմրավուն գույն առած գետինքը կեսօրին արդեն գոլորշիների յասամանագույն շղարշ էր հագնում։ Արևկող տեղերում, կուրգանների վրա, կավախառն հողի մեջ ներաճած բնածին քարերի տակից երևացին ասպաստ խոտաբույսի առաջին, վառ կանաչ սուր ծիլերը։ Մերկացան աշնան հերկերը։ Սերմնաքաղները ձմեռային լքած ճանապարհներից քոչեցին կալերը, ձյան ջրով հեղեղված աշնանացան արտերը։ Հովիտներում ու ձորակներում ձյունը կապտավուն էր, մինչև երեսը խոնավությամբ հագեցած. այդ տեղերից դեռ էլի խիստ ցուրտ էր փչում, բայց ձորակների հատակներում, ձյան տակ արդեն հստակ ու հնչեղ կարկաչում էին աչքին անտեսանելի գարնանային առվակները, ու փոքրիկ անտառներում միանգամայն գարնանավարի, հազիվ նշմարելի ու քնքուշ բողբոջում էին կաղամախիների բները։

Մոտենում էր աշխատանքի ժամանակը, և օրը-օրին հալչում էր Ֆոմինի բանդան։ Գիշերելուց հետո առավոտները պակասում էր մեկ-երկու մարդ, իսկ մի անգամ համարյա կես դասակի չափ մարդիկ անհայտացան. ութ հոգի իրենց ձիերով և զենքերով գնացին Վեշենսկայա, անձնատուր լինելու։ Հարկավոր էր վարել ու ցանել։ Հողը կանչում էր, քաշում դեպի աշխատանքը, և շատ ֆոմինականներ, համոզվելով պայքարի անօգտակարությանը, գաղտնի հեռանում էին բանդայից, գնում իրենց տները։ Մնում էին կտրիճ մարդիկ, որոնք չէին կարող վերադառնալ, որոնց հանցանքը սովետական իշխանության հանդեպ չափազանց մեծ էր, և նրանք չէին կարող հույս դնել ներման վրա։

Ապրիլի սկզբներին Ֆոմինը ուներ ոչ ավել, քան 86 հեծելակ։ Գրիգորին նույնպես մնաց բանդայում։ Նա քաջություն չունեցավ տուն գնալու։ Նա հաստատ համոզված էր, որ Ֆոմինի գործը տանուլ է տրված և վաղ թե ուշ բանդան կջախջախվի։ Նա գիտեր, որ Կարմիր բանակի մի որևէ կանոնավոր հեծելազորային մասի հետ առաջին իսկ ընդհար-

ման դեպքում իրենք գլխովին կջախջախվեն։ Եվ այնուամենայնիվ մնաց Ֆոմինի տրամադրության տակ՝ գաղտնի հույս ունենալով մի կերպ օրերը անցկացնել մինչև ամառ, այն ժամանակ վերցնել բանդայում լավագույն երկու ձի, գիշերով սլանալ Տատարսկի և այնտեղից Ակսինյայի հետ— դեպի հարավ։ Դոնի տափաստանը լայնարձակ է, այնտեղ շատ են ազատ տարածությունները և ամայի ճանապարհները. ամառը բոլոր ուղիները բաց են և կարելի է ամենուրեք ապաստան գտնել... Նա մտածում էր ձիերը թողնել որևէ տեղ, Ակսինյայի հետ ոտով գնալ Կուբան, նախալեռները, հարազատ վայրերից հեռու, և այնտեղ անցկացնել խառնակ ժամանակը։ Նրան թվում էր. որ ուրիշ ելք չկար։

Կապարինի խորհրդով Ֆոմինը որոշեց նախքան սառցահոսանքը անցնել Դոնի ձախ կողմը։ Նա հույս ուներ անհրաժեշտության դեպքում հետապնդումից թաքնվել Խոպերի օկրուգի սահմանում որտեղ շատ էին անտառները։

Ռիբնի խուտորից վերև բանդան անցավ Դոնը։ Տեղ-տեղ, ուր գետն արագ է հոսում, ջուրն արդեն տարել էր սառույցը։ Ապրիլյան պայծառ արևի տակ արծաթե թեփուկի նման շողում էր ջուրը, բայց այնտեղ, ուր ձմեռային պինդ ճանապարհ էր ձգվում, որը մի արշինի չափ բարձր էր սառույցի մակերևույթից,— Դոնը կանգնած էր անխորտակ։ Ափերի մոտ բարձրացած ջրաշերտերի վրա ուռից գործած ցանկապատեր դրին, ձիերը մեկ-մեկ անցկացրին սանձերը քաշելով, Դոնի մյուս ափում շարք կանգնեցին և դեպի առաջ հետախուզախումբ ուղարկելով, գնացին Ելենսկայա ստանիցայի կողմը։

Մեկ օրից հետո Գրիգորիին հաջողվեց տեսնել իրենց խուտորից միաչքանի ծերուկ Զումակովին։ Վերջինս գնում էր Գրյազնովսկի խուտորը, ազգականների մոտ, և այդ խուտորից քիչ հեռու հանդիպեց բանդային։ Գրիգորին ծերունուն ճանապարհից մի կողմ տարավ, հարցրեց.

— Երեխաներս ողջ-առո՞ղջ են, պապի։

— Աստված է պահում, Գրիգորի Պանտելևիչ։

— Պապի, շատ եմ խնդրում քեզ, իմ կողմից շատ կարոտով բարև արա նրանց և քրոջս, Եվդոկիա Պանտելևնային, բարև արա Պրոխոր Զիկովին, իսկ Ակսինյա Աստախովային

ասա, թող ինձ սպասի մոտ օրերս։ Միայն թե նրանցից բացի, ուրիշ ոչ ոքի մի ասա, որ ինձ տեսել ես, լա՞վ։

— Կանեմ, որդի, կանեմ։ Մի կասկածի, բոլորը կհայտնեմ ինչ որ պետք է։

— Խուտորում ի՞նչ նոր բան կա։

— Ոչինչ չկա ամեն բան էլի այնպես է։

— Կոշևոյը էլի նախագա՞հ է։

— Հենց նա։

— Ընտանիքիս չե՞ն նեղում։

— Ոչինչ չեմ լսել, ուրեմն ձեռ չեն տալի։ Ինչի՞ պիտի նեղեն. ձերոնք հո պատասխանատու չեն քեզ համար...

— Խուտորում իմ մասի՞ն ի՞նչ են ասում։

Ծերունին խնչեց, վզի կարմիր աղլուխով երկար սրբեց բեղ ու մորուքը, հետո խուսափուկ պատասխանեց.

— Աստված գիտե նրանց... Զանազան բաներ են դուրս տալի, ով ինչ ուզենա, այն էլ ասում է։ Սովետական իշխանության հետ շո՞ւտ կհաշտվեք, հը՞։

Գրիգորին ի՞նչ կարող էր պատասխանել նրան։ Զսպելով ձիուն, որը ձգտում էր սլանալ առաջ անցած ջոկատի ետևից, նա ժպտաց, ասավ.

— Չգիտեմ պապի։ Առայժմ ոչինչ չի երևում։

— Ոնց թե չի երևում։ Չերքեզների հետ կռվում էինք, թուրքի հետ կռվում էինք, ամա էլի հաշտություն եղավ, իսկ դուք բոլորդ էլ ազգակից մարդիկ եք ու ոչ մի կերպ իրար մեջ համաձայնության չեք գալի... Լավ չէ, Գրիգորի Պանտելևիչ, դրուստ եմ ասում, լավ չէ։ Աստված ողորմած է, նա ամեն բան տեսնում է, նա ձեզ բոլորիդ էլ չի ների, միտդ պահի խոսքս։ Բա այդ լինելո՞ւ բան է. ռուս, ուղղափառ մարդիկ կռվում են իրար հետ ու ետ չեն կանգնում։ Դե, մի քիչ կռվեիք ու պրծավ-գնաց, թե չէ չորրորդ տարին է, որ տուրուդմբոցից ձեռք չեք քաշում։ Ես ալևորի խելքովս այսպես եմ դատում՝ ժամանակն է վերջ տալ։

Գրիգորին հրաժեշտ տվեց ծերունուն և արագ սլացավ իր դասակին հասնելու։ Զումակովը երկար կանգնեց գավազանին հենված, թևքով սրբելով արցունքվող, դատարկ ակնախոռոչը։ Միակ, բայց ջահելավարի սրատես աչքով նա նայում

էր Գրիգորիի ետևից, զմայլվում նրա հիանալի նստվածքով և կամացուկ շշնջում էր.

— Լա՛վ կազակ է։ Ամեն բանով լավ է, ղոչաղ, ամա փուչն է... Շեղվել է իրեն ճամփից։ Նրան շատ կսազեր չերքեզների դեմ կռիվ անել, իսկ նա տես թե ինչեր է մոգոնել։ Ախր դրա ինչի՞ն է պետք այդ իշխանությունը։ Ի՞նչ են մտածում այդ ջահել կազակները։ Դե, Գրիշկայից ի՞նչ պահանջես, նրանց ամբողջ ցեղը այդպես ծուռն է... Ողորմածիկ Պանտելեյն էլ այդպես թարս մարդ էր, Պրակոֆի պապին էլ միտս է... Նա էլ թթու պտուղ էր և ոչ թե մարդ... Իսկ թե ինչ են մտածում մյուս կազակները,— աստված պատժի թե բան եմ հասկանում։

Ֆոմինը որևէ խուտոր գրավելով, քաղաքացիների ժողով էլ չէր հրավիրում։ Նա համոզվել էր, որ ագիտացիան արդյունք չի տալիս։ Հարկավոր էր ձեռքի տակ պահել առկա մարտիկներին և ոչ թե նորերը հավաքել։ Նա խիստ մռայլված էր ու քիչ էր խոսում։ Սկսել էր սփոփանք փնտրել օղու մեջ։ Ամենուրեք, ուր գիշերում էր նա, մռայլ կերուխում էր տեղի ունենում։ Հետևելով իրենց ատամանին, խմում էին նաև ֆոմինականները։ Ընկավ կարգապահությունը։ Ալանթալանի դեպքերը հաճախակի դարձան։ Բանդայի մոտենալու պահին փախած սովետական ծառայողների տներից վերցնում էին այն ամենը, ինչ որ կարելի էր տանել հեծկան ձիով։ Շատ մարտիկների ձիաբեռները անհավատալի չափով ուռճացել էին։ Մի անգամ Գրիգորին իր դասակի մարտիկներից մեկի մոտ ձեռքի կարի մեքենա տեսավ։ Վերջինը սանձը թամքի դաշից կախած, մեքենան պահել էր ձախ թևի տակին։ Միայն մտրակի գործադրմամբ Գրիգորիին հաջողվեց ստիպել կազակին, որ դեն գցի կարի մեքենան։ Այդ երեկո Ֆոմինի ու Գրիգորի միջև սուր վեճ եղավ։ Սենյակում նրանք երկուսով էին։ Ֆոմինը հարբեցողությունից ուռած դեմքով նստել էր սեղանի մոտ, Գրիգորին քայլում էր սենյակում։

— Նստիր, մի՛ պտտվի աչքիս առաջ,— սրտնեղումով ասաց Ֆոմինը։

Ուշադրություն չդարձնելով նրա խոսքերին, Գրիգորին նյարկար քայլեց նեղլիկ օթախում, հետո ասաց.

— Դա ինձ ձանձրացրել է, Ֆոմին։ Վերջ տուր ալանթալանին ու հարբեցողությանը։

— Այսօր դու վատ երա՞զ ես տեսել։

— Հանաքը թող... Ժողովուրդը սկսում է վատ խոսել մեր մասին։

— Հո տեսնում ես, չեմ կարողանում զսպել տղերքին։

— Դու դրա համար ոչինչ էլ չես անում։

— Դե, խրատդ քեզ պահի։ Իսկ քո ժողովուրդը լավ խոսքի արժանի չէ։ Հենց նրանց, սրիկաների համար ենք տանջվում, իսկ նրանք... Ես իմ մասին եմ մտածում, ու պրծավ-գնաց։

— Քո մասին էլ լավ չես մտածում։ Հարբեցողությունը մտածելու ժամանակ չի տալիս։ Չորրորդ օրն է, որ դու չես զարթնում, ու մնացածները բոլորն էլ խմում են։ Մինչև իսկ ուղեկալներում էլ են գիշերով խմում։ Ի՞նչ ես ուզում։ Որ խուտորում մի տեղ հարձակվեն մեզ, հարբածներիս վրա ու սրի՞ քաշեն, հա՞։

— Դու կարծում ես մենք կպրծնե՞նք դրանից,— քմծիծաղ տվեց Ֆոմինը։— Մի օր մեռնելու ենք, էլի։ Կուժը ջրի ճամփին է կոտրվում... Գիտե՞ս,

— Այդ դեպքում եկ վաղը ինքներս գնանք Վեշենսկայա ու ձեռներս վեր բարձրացնենք, ասենք՝ վերցրեք մեզ, անձնատուր ենք լինում։

— Չէ, մենք հլա դեռ ման կգանք։

Գրիգորին կանգնեց սեղանի առաջ, ոտները լայն դրած։

— Եթե դու կարգ ու կանոն չհաստատես, եթե վերջ չտաս թալանին ու հարբեցողությանը, ես կհեռանամ քեզանից և ինձ հետ կտանեմ մարդկանց կեսը,— կամացուկ ասաց նա։

— Մի փորձի՛ր,— սպառնալից պատասխանեց Ֆոմինը։

— Առանց փորձի էլ կհաջողվի։

— Դու... Դու ինձ մի սպառնա.— Ֆոմինը ձեռքը տարավ նագանի պատյանին։

— Ձեռդ քաշի նագանից, թե չէ ես քեզ ավելի շուտ կխփեմ սեղանի վրայից,— արագ ասաց Գրիգորին, գունատվեց, կիսով չափ հանեց թուրը։

Ֆոմինը ձեռքը դրեց սեղանին, ժպտաց։

— Ի՞նչ ես կպել ինձ, է՞։ Առանց քեզ էլ գլուխս տրաքվում է, իսկ դու հիմար-հիմար բաներ ես ասում։ Թուրդ դիր տեղը։ Քեզ հետ հանաք անել է՞լ չի կարելի, ինչ է։ Ասացե՛ք խնդրեմ, ոնց է՞լ շուտ է խռովում, ասես տասնվեց տարեկան աղջիկ լինի...

— Ես արդեն քեզ ասի, թե ինչ եմ ուզում, և դու այդ չմոռանաս։ Մեզ մոտ բոլորը այնպես չեն, ինչպես դու։

— Գիտեմ։

— Գիտցիր և հիշիր։ Հենց վաղը հրամայի, որ ռադ անեն ձիաբեռները։ Մեզ մոտ հեծյալ զորամաս է և ոչ թե բեռնատար գումակ։ Արմատից պոկի, դեն գցի այդ բանը։ Ժողովրդի համար պայքարողների՛ս մտիկ։ Բեռնել են թալանած բարիքը, ծախում են խուտորներում ոնց որ առաջվա շրջիկ չարչիները... Ամոթ չէ՞։ Ախր ես ինչո՞ւ կապվեցի ձեզ հետ։— Գրիգորին թքեց և զայրույթից ու կատաղությունից սփրթնած, շուռ եկավ դեպի պատուհանը։

Ֆոմինը ծիծաղեց, ասաց.

— Հեծելազորը ոչ մի անգամ մեզ հուպ չի տվել... Երբ ձիավորները ընկնում են կուշտ գիլի ետևից, սա ինչ որ լափել է, փախչելիս բերանն է բերում ու թափում։ Այդպես էլ իմ լրբերը. նրանք ամեն բան դեն կգցեին, եթե մեզ կարգին հուպ տվող լիներ։ Ոչինչ, Մելեխով, մի հուզվի, ամեն ինչ կանեմ։ Այնպես, էլի, ես մի քիչ հուսահատվել էի ու երասանները ձեռքիցս բաց թողել, բայց էլի դրանք կվերցնեմ։ Իսկ ես ու դու չպետք է բաժանվենք, եկ դարդ ու ցավը միասին քաշենք։

Նրանց խոսակցությունն ընդհատվեց. ներս մտավ տանտիրուհին, գոլորշի արձակող շշի բերեց, հետո էլ խմբով ներս լցվեցին Ջումակովի կազակները։

Բայց այդ խոսակցությունը այնուամենայնիվ ազդեցություն ունեցավ։ Ֆոմինը առավոտյան հրաման տվեց դատարկել ձիաբեռները, ինքը ստուգեց այդ հրամանի կատարումը։ Ֆոմինը շարքի առաջ նագանով գնդակահարեց մոլի թալանչիներից մեկին, որը դիմադրություն էր ցույց տվել ձիաբեռները զննելու ժամանակ՝ չցանկանալով բաժանվել թալանած գույքից։

— Դեն գցեք այս լեշը,— հանգիստ ասաց նա՝ ոտը

խփելով մեռածին, ու դիտեց շարքը, բարձրացրեց ձայնը.— Հերի՛ք է ձեռներդ խոթեք սնդուկները, շան որդեներ։ Դրա համար չէ, որ ես ձեզ ոտքի եմ հանել սովետական իշխանության դեմ։ Սպանված հակառակորդից կարող եք հանել ամեն բան, մինչև իսկ կեղտոտված փոխանները, եթե չեք զզվում, իսկ ընտանիքներին ձեռ մի տաք։ Մենք կնանոց դեմ չենք կռվում։ Իսկ ով որ հակառակվի, հենց այս տեսակ հաշիվ կստանա։

Շարքով մեկ շրշաց ու լռեց կամացուկ աղմուկը...

Կարգը կարծես թե վերականգնված էր։ Մի երեք օր բանդան թափառում էր Դոնի ձախ ափերով, ընդհարումների ժամանակ ոչնչացնելով տեղական ինքնապաշտպանության փոքրիկ ջոկատները։

Շումիլինսկայա ստանիցայում Կապալինը առաջարկեց անցնել Վորոնեժի նահանգի տերիտորիան։ Նա այդ պատճառաբանեց նրանով, որ այնտեղ իրենք հավանորեն լայն օժանդակություն կստանան բնակչությունից, որ վերջին ժամանակներում ապստամբել էր սովետական իշխանության դեմ։ Բայց երբ Ֆոմինը այդ մասին հայտարարեց կազակներին, սրանք միաձայն ասացին.— «Մեր օկրուգից չենք գնա»։ Բանդայում միտինգ արեցին։ Հարկավոր եղավ փոխել որոշումը։ Չորս օրվա ընթացքում բանդան առանց կանգ առնելու գնում էր դեպի արևելք, խուսափելով կռվից, որ սկսում էր հեծյալ մի զորախումբ. այս զորախումբը Կազանսկայա ստանիցայից կրնկակոխ հետապնդում էր Ֆոմինին։

Իրենց հետքերը կորցնելը հեշտ չէր, որովհետև դաշտերում ամենուրեք գարնանային աշխատանք էր կատարվում և տափաստանի նույնիսկ ամենախուլ անկյունում էլ վրխտում էին մարդիկ։ Ջոկատը ճանապարհ էր ընկնում գարնանային մութ գիշերներին, բայց առավոտյան, հենց որ մի տեղ կանգ էին առնում ձիերին կեր տալու, մոտիկ տեղում երևում էր հակառակորդի հեծյալ հետախուզախումբը, կարճ հերթերով կրակում էր ձեռնագնդացիրը, ու ֆոմինականները գնդակոծման տակ սկսում էին հապճեպ սանձել ձիերը։ Վեշենսկայա ստանիցայի Մելնիկով խուտորի մերձակայքում Ֆոմինին հաջողվեց ճարտար մանևրով խաբել հակառակորդին և կտրվել նրանից։ Ֆոմինը իր հետախուզախմբի

զեկուցագրից գիտեր, որ ձիավոր զորախմբի հրամանատարը Եգոր Ժուրավլյովն է,— Բուկանովսկայա ստանիցայի ամրակամ և ռազմական գործը հասկացող մի կազակ. նա գիտեր, որ հեծյալ զորախումբը քանակով գրեթե երկու անգամ գերազանցում է իր բանդայից, ունի վեց ձեռնագնդացիր և երկար տարածություններ չանցած, չհոգնած ձիեր։ Այդ բոլորը Ֆոմինին ստիպում էր խուսափել մարտից, այն հաշվով, որ մարդկանց և ձիերին հանգստանալու հնարավորություն տար, հետո էլ, հնարավորության դեպքում, ոչ թե բացահայտ մարտում, այլ հանկարծակի գրոհով ջարդեր զորախումբը և այդպիսով ազատվեր համառ հետապնդումից։ Նա մտածում էր նաև հակառակորդի հաշվին գնդացիրներ և հրացանի փամփուշտներ ձեռք բերել։ Բայց նրա հույսերը չարդարացան։ Այն, ինչից երկյուղ էր կրում Գրիգորին, պատահեց ապրիլի 18-ին, Սլաշչևսկու անտառի ծայրում։ Նախորդ օրը Ֆոմինը և շարքային մարտիկների մեծամասնությունը հարբեցին Սևաստյանով խուտորում, լուսաբացին դուրս եկան խուտորից։ Գիշերը համարյա ոչ ոք չէր քնել, ու շատերը հիմա քնեցին ձիերի վրա։ Առավոտյան ժամը իններին Օժոգին խուտորի մերձակայքում կանգ առան կարճատև հանգստի համար։ Ֆոմինը պահպանական հսկողություն կարգեց և հրամայեց վարսակ տալ ձիերին։

Արևելքից ուժգնաթափ, սաստիկ քամի էր փչում։ Ավազափոշու թուխ ամպը ծածկել էր հորիզոնը։ Տափաստանի վրա խիտ մառախուղ էր իջել։ Հազիվ երևում էր արևը, որ վարագուրված էր բարձր փոված մեգով։ Քամին փոփոխացնում էր շինելների փեշերը, ձիերի պոչերն ու բաշերը։ Ձիերը իրենց մեջքերը դարձնում էին քամու կողմը, թաքստոց էին փնտրում անտառի ծայրում աճած մլենու նոսր, ցաք ու ցրիվ թփերի մեջ։ Ծակող ավազափոշուց արցունքվում էին աչքերը և դժվար էր որևէ բան տեսնել նույնիսկ մոտիկ տարածության վրա։

Գրիգորին հոգատարությամբ սրբեց իր ձիու դունչը և ականխոռոչների վերևը, տոպրակը կախեց դնչից և մոտեցավ Կապարինին, որ շինելի փեշով կեր էր տալիս ձիուն։

— Ա՛մա թե հանգիստ տեղ եք ընտրել, հա՛-ա,— ասաց նա՝ մտրակով ցույց տալով անտառը։

Կապարինը թոթվեց ուսերը։

— Ես ասել եմ այդ հիմարին, բայց մի՞թե կարելի է նրան որևէ բան համոզել։

— Պետք էր կանգ առնել տափաստանում կամ խուտորի ծայրում։

— Դուք կարծում եք, որ կարելի է անտառից հարձակո՞ւմ սպասել։

— Այո։

— Հակառակորդը հեռու է։

— Հակառակորդը կարող է մոտիկ լինել, հո հետևակ չէ։

— Անտառը մերկ է, եթե մի բան լինի, թերևս տեսնենք։

— Նայող չկա, համարյա բոլորն էլ քնած են։ Վախենում եմ որ պահակներն էլ քնած լինեն։

— Նրանք երեկվա քեֆից հետո հալից ընկել են, հիմա նրանց չես արթնացնի։— Կապարինը դեմքը կնճռոտեց ասես ցավից, ցածրաձայն ասաց.— այդպիսի ղեկավարով մենք կկորչենք։ Նա թեթև է ինչպես խցան և հիմար է, ուղղակի անհուսալի հիմար։ Ինչո՞ւ դուք չեք ուզում ձեր վրա վերցնել հրամանատարությունը։ Կազակները ձեզ հարգում են։ Նրանք սիրով կգնային ձեր ետևից։

— Դա ինձ հարկավոր չէ, ես ձեզ մոտ ժամանակավոր հյուր եմ,— չոր պատասխանեց Գրիգորին ու հեռացավ դեպի իր ձին, ցավելով, որ բերանից անզգույշ խոստովանություն էր թոցրել։

Կապարինը կերի մնացորդը փեշից թափեց գետնին, հետևեց Գրիգորիին։

— Գիտե՞ք, Մելեխով,— ասաց նա՝ քայլելիս կոտրելով ու վերցնելով մլենու մի ոստ, պոկելով ուռճացած, պիրկ բողբոջները,— ես կարծում եմ, որ մենք երկար չենք դիմանա, եթե չմիանանք մի որևէ խոշոր հակասովետական զորամասի, օրինակ, Մասլակի բրիգադին, որ թափառում է մարզի ինչ-որ հարավային վայրերում։ Հարկավոր է անցնել այնտեղ, այլապես մի գեղեցիկ օր մեզ կոչնչացնեն։

— Հիմի Դոնը վարարել է։ Անցնել չի լինի։

— Ոչ թե այժմ, այլ երբ ջուրը իջնի, պետք է հեռանալ։ Դուք այլ կե՞րպ եք մտածում։

Մի քիչ մտածելուց հետո Գրիգորին պատասխանեց.

— Ճիշտ է, Պետք է հեռանալ այստեղից։ Այստեղ անելիք չկա։

Կապարինը աշխուժացավ։ Նա սկսեց երկար խոսել այն մասին, որ կազակների օժանդակության վրա դրված հույսերը չարդարացան և որ հիմա պետք է ամեն կերպ համոզել Ֆոմինին, որպեսզի նա աննպատակ չթափառի օկրուգում, այլ որոշի միանալ ավելի զորեղ մի խմբավորման։

Գրիգորին ձանձրացավ նրա դատարկախոսությունը լսելուց։ Նա հետևում էր ձիուն, ու հենց որ ձին դատարկեց տոպրակը, նա հանեց այն, սանձեց ձին և ձգեց փորքաշը։

— Դեռ շուտ չենք ճանապարհվի, դուք իզուր եք շտապում,— ասաց Կապարինը։

— Դուք ավելի լավ է գնացեք պատրաստեք ձեր ձին, թե չէ հետո ժամանակ չի լինի,— պատասխանեց Գրիգորին։

Կապարինը ուշադրությամբ նայեց նրան, քայեց դեպի իր ձին, որ կանգնած էր գումակի կառքի մոտ։

Ձին սանձից բռնած տանելով, Գրիգորին մոտեցավ Ֆոմինին։ Վերջինս ոտները լայն տարածած պառկել էր փռած յափնջու վրա, ծուլորեն կրծոտում էր եփած հավի թևը։ Նա մի կողմ շարժվեց, ժեստով հրավիրեց տեղ բռնել իր կողքին։

— Նստիր, նախաճաշիր ինձ հետ։

— Հարկավոր է հեռանալ այստեղից և ոչ թե նախաճաշել,— ասաց Գրիգորին։

— Ձիերին կեր տանք ու շարժվենք։

— Հետո կարելի է կեր տալ։

— Ի՞նչ ես վռազում, է՞,— Ֆոմինը դեն շպրտեց կրծած ոսկորը, ձեռները սրբեց յափնջուն քսմսելով։

— Կհարձակվեն մեր վրա։ Նրանց տեղը հարմար է։

— Ի՞նչ սատանա է հարձակվելու։ Հիմի հետախուզախումբը վերադարձավ, ասում են, որ բլուրի վրա ոչ ոք չկա։ Ուրեմն ժուրավլյովը կորցրել է մեզ, թե չէ հիմա կկախվեր մեր պոչից։ Բուկանովսկուց ոչ ոքի չպետք է սպասել։ Այնտեղի զինկոմը Միխեյ Պավլովն է, կտրիճ տղա է, բայց նրա ուժերը քիչ են, հազիվ թե դուրս գա մեր դեմ։ Կարգին հանգստանանք, սպասենք, որ այս քամին մի քիչ հանդարտվի, հետո էլ ճանապարհվենք դեպի Սլաշչևսկայա։ Նստիր, հավի միս կեր, ի՞նչ ես գլխիս կանգնել։ Դու ոնց որ թե վախկոտացել ես Մելեխով, շուտով կշրջագայես բոլոր թփերը, ա՜յ թե ինչքան երկար, ծուռումուռ ճամփա կանցնես,— Ֆոմինը ձեռքի լայն շարժում արավ ու քրքջաց։

Բարկությամբ հայհոյանք թափելով, Գրիգորին հեռացավ, ձին կապեց մի թփի, պառկեց, քամուց պաշտպանվելու համար դեմքը ծածկեց շինելի փեշով։ Նա ննջեց քամու սուլոցի տակ, իր վրա թեքվող բարձր, չոր խոտաբույսերի նրբին, գեղգեղուն շշշյունի տակ։

Գնդացրային երկար տկտկոցը նրան ստիպեց վեր թռչել տեղից։ Տկտկոցը դեռ չէր վերջացել, երբ Գրիգորին արձակեց ձին։ Ֆոմինը բոլոր ձայներից էլ բարձր գոռաց՝ «Չի՛ նստել»։ Աջ կողմից անտառից էլի երկու թե երեք գընդացիրներ ճարճատեցին։ Չի նստելով Գրիգորին վայրկենապես որոշեց դրությունը։ Աջ կողմից, անտառի եզրից, հազիվ երևալով փոշու մեջ, նոսր շղթա կազմած, կտրելով դեպի բլուրը նահանջելու ճանապարհը, մի հիսուն հոգի կարմիրբանակայիններ գրոհ էին տալիս։ Նրանց գլուխների վերևում պաղ և այնքա՜ն ծանոթ փայլով շողշողում էին մերկ, արևի աղոտ լույսից կապտավուն սրերը։ Հենց անտառի միջից, թփակալած բլրակից, տենդային հապճեպությամբ դատարկելով սկավառակները, խփում էին գնդացիրները։ Ձախ կողմից նույնպես կես հեծելավաշտի չափ կարմիրբանակայիններ սլանում էին առանց աղմուկի, թափահարելով թրերը, ընդլայնելով շարքը, շրջապատելով հակառակորդին։ Մնում էր միայն մի ելք,— ճեղքել ձախից գրոհողների նոսր շարքերը և անցնել Դոնի կողմը։ Գրիգորին բղավեց Ֆոմինին՝ «Նկ իմ ետևից», ու թողեց ձիու գլուխը՝ մերկացնելով թուրը։

Անցնելով մի քանի սաժեն, նա ետ նայեց։ Ֆոմինը, Կապարինը, Զումակովը ու էլի մի քանի մարդիկ կատաղի քառատրոփով գալիս էին ետևից, ընդամենը մի տասը սաժեն իրենից հեռու։ Անտառում լռեցին գնդացիրները, միայն աջ կողմից ծայրի գնդացիրը կարճատև, կատաղի ճարճատյուններով գնդակոծում էր գումակի սայլերի մոտ իրար անցած ֆոմինականներին։ Բայց վերջին գնդացիրն էլ միանգամից լռեց, ու Գրիգորին հասկացավ որ կարմիրբանակայինները արդեն դադաթքի տեղումն են և որ ետևում սկսվել է թրատումը։ Նա այդ կռահում է խուլ, հուսահատական ճիչերից,

պաշտպանվողների թույլ, ընդմիջվող հրաձգությունից։ Նա ետ նայելու ժամանակ չուներ։ Շեշտակի թափով մոտենալով դեմուդեմ եկող նոսր շղթային, նա նպատակ էր ընտրում։ Դեմուդեմ սլանում էր կարճ, աղաղած կաշվե կիսամուշտակով մի կարմիրբանակային։ Նրա տակի ձին մոխրագույն էր և ոչ այնքան կայտառ։ Ինչպես կայծքարի բռնկոցի պահին, ինչ-որ անորսալի մի ակնթարթում Գրիգորին տեսավ թե ձին՝ փրփուրի փաթիլներով ծածկված կրծապանակի սպիտակ աստղով, թե ձիավորին իր կարմիր, բորբոք, երիտասարդական դեմքով և թե նրա ետևում դեպի Դոն շարժվող տափաստանի լայն, գորշ մի շերտ... Հետևյալ ակնթարթում հարկավոր էր խուսափել հարվածից և թրատել։ Ձիավորից հինգ սաժեն հեռավորությամբ Գրիգորին շեշտակի թեքվեց ձախ կողմը, գլխավերևից լսեց թրի հատու սուլոցը և արագությամբ շտկվելով թամքի վրա, իր թրի միայն ծայրով խփեց արդեն իր կողքից անցած կարմիրբանակայինի գլխին։ Գրիգորիի ձեռքը համարյա չզգաց հարվածի ուժը, բայց ետ նայելով, նա տեսավ գլուխը կախած, ձիուց դանդաղ ընկնող կարմիրբանակայինին և արյան թանձր շերտը նրա դեղին կիսամուշտակի մեջքի վրա։ Մոխրագույն ձին դադարեցրեց քառատրոփը և արդեն արագ վարգով էր գնում՝ խլշկոտելուց բարձրացնելով գլուխը, կողքի ծովելով այնպես, որ կարծես վախեցել էր ի՛ր իսկ ստվերից...

Գրիգորին ընկավ ձիու վզին, սովոր շարժումով իջեցրեց թուրը։ Գլխավերևում բարակ ու հատու սվսվում էին գնդակները։ Ձիու պինդ սեղմված ականջները ցնցվում էին, դրանց ծայրերին դուրս էին տալիս քրտնքի ուլունքանման կաթիլները։ Գրիգորին լսում էր միայն իր ետևից թռչող գնդակների սուր սվսվոցը և ձիու արագ, հատու շնչառությունը։ Նա մի անգամ էլ ետ նայեց, տեսավ Ֆոմինին ու Զումակովին, նրանց ետևից մի հիսուն սաժեն հեռավորությամբ սլանում— գալիս էր ետ մնացած Կապարինը և ավելի հեռվից՝ միայն երկրորդ դասակի մի մարտիկ, կաղ Ստերլյադնիկովը փախչելով պաշտպանվում էր իրեն վրա տվող երկու կարմիրբանակայիններից։ Մնացած բոլոր ութ թե ինը կազակները, որոնք գալիս էին Ֆոմինի ետևից, թրատվել էին։ Պոչերը քամուն տալով, անձիավոր ձիերը այս ու այն կողմ էին նետվում, կարմիրբանակայինները որսում, բռնում էին նրանց։ Միայն մի շիկակարմրավուն, բարձրամարմին ձի, որ պատկանում էր ֆոմինական Պրիբիտիկովին, սլանում էր Կապարինի ձիու կողքից, փնչում՝ իր ետևից քարշ տալով մեռած տիրոջը, որ ընկնելիս ոտը չէր հանել ասպանդակից։

Ավազոտ մի բլրակի ետևում Գրիգորին կանգնեցրեց ձին, թռավ թամքից, թուրը դրեց պատյանը։ Ձին պառկեցնելու համար մի քանի վայրկյան էր հարկավոր։ Այդ հասարակ բանը Գրիգորին նրան սովորեցրել էր մի շաբաթվա ընթացքում։ Թաքստոցի ետևից նա մի պահունակ փամփուշտ արձակեց, բայց որովհետև նշան բռնելիս նա շտապում էր և հուզվում, ուստի միայն վերջին կրակոցով վար գցեց կարմիրբանակայինի տակի ձին։ Դա հինգերորդ ֆոմինականին հնարավորություն տվեց ազատվել հետապնդումից։

— Նստի՛ր, կկորչես,— հասնելով Գրիգորիին, բղավեց Ֆոմինը։

Ջախջախումը լիակատար էր։ Ամբողջ բանդայից միայն հինգ հոգի ողջ մնաց։ Նրանց հետապնդեցին մինչև Անտոնովսկի խուտորը, ու հետապնդումը դադարեց միայն այն ժամանակ, երբ հինգ փախստականները անհայտացան խուտորը շրջապատող անտառում։

Փախուստի ամբողջ ժամանակվա ընթացքում հինգ հոգուց ոչ մեկը ոչ մի խոսք չասաց։

Գետակի մոտ Կապարինի ձին ընկավ ու էլ չկարողացան նրան ոտքի հանել։ Մնացածների հոգնատանջ ձիերը ճոճվում էին, հագիվ փոխում ոտները՝ փրփուրի թանձր, սպիտակ փաթիլներ թափելով գետնին։

— Դու ոչ թե ջոկատի հրամանատար պիտի լինես, այլ ոչխարներ արածացնես,— առանց Ֆոմինին նայելու, ասաց Գրիգորին՝ իջնելով ձիուց։

Ֆոմինը լուռումունջ իջավ ձիուց, սկսեց արձակել թամքը, հետո էլ մի կողմ քաշվեց՝ այնպես էլ չհանելով թամքը, ու նստեց ձարխոտով պատած մի գուղձի վրա։

— Ի՞նչ արած, մնում է թողնել ձիերը,— ասաց նա՝ վախեցած նայելով շուրջը։

— Բա հետո՞,— հարցրեց Զումակովը։

— Պետք է ոտով անցնել Դոնի մյուս կողմը։

— Ո՞ւր գնալ։

— Անտառում կմնանք մինչև գիշեր, հետո կանցնենք Դոնը ու առայժմ կթաքնվենք Ռուբեժնիում, այնտեղ ես շատ ազգականներ ունեմ։

— Հերթական հիմարությո՛ւն,— գայրացած բացականչեց Կապարինը,— դու կարծում ես այնտեղ քեզ չե՞ն փնտրի։ Իսկի խելք կա՞ գլխիդ։

— Լա՛վ, բա ո՞ւր գնանք,— շփոթված հարցրեց Ֆոմինը։

Գրիգորին թամքի տոպրակներից փամփուշտներ ու մի կտոր հաց հանեց, ասաց.

— Դուք երկա՞ր պիտի խոսեք։ Գնացի՛նք։ Ձիերը կապեցեք ծառից, հանեցեք թամքերը ու հա՛յդա, թե չէ կկարողանան այստեղ էլ մեզ բռնել։

Զումակովը մտրակը շպրտեց գետնին, ոտներով տրորեց ցեխի մեջ, կերկերող ձայնով ասաց.

— Ահա և հետևակ դարձանք... Իսկ մեր տղերքը բոլորն էլ ընկան... Մա՛յր աստվածածին, ո՞նց գզեցին մեզ։ Չէի կարծում, թե այսօր սաղ կմնամ... Մահը աչքիս առաջ էր...

Նրանք լուռումունջ հանեցին թամքերը, բոլոր չորս ձիերն էլ կապեցին մի լաստենու և գայլերի պես մեկ-մեկ իրար ետևից, մի հետք թողնելով քայլեցին դեպի Դոն՝ իրենց հետ տանելով թամքերը, աշխատելով գնալ խիտ մացառուտների միջով։

XIV

Գարնանը, երբ վարարում է Դոնը և վարարած ջուրը ծածկում է ամբողջ ողողվող մարգագետինը, Ռուբեժնի խուտորի դիմաց ջրից դուրս է մնում ձախափնյա բարձրադիր, փոքրիկ մի տարածություն։

Դոնի մերձակա սարից գարնանը հեռու-հեռվում, վարարած ջրերում երևում է այդ կղզին, որտեղ խիտ աճել են առենիները, կաղնուտը ու սև ուռի փարթամ թփերը։

Ամռանը այնտեղ վայրի գայլուկը ցանցում է ծառերը մինչև դրանց գագաթները, ներքևում, գետնի վրա փռված են մոշի անանցանելի, փշոտ թփերը, դրանց վրա աճում են փրչոտ, դալկակապույտ պտղաբուսիները, ու բարձր, խիտ խոտաբույսերը պարարտ հողից առատորեն սնվելով սակավաթիվ բացատներում մարդու հասակից էլ բարձր են լինում։

Ամռանը նույնիսկ կեսօրին էլ անտառը անդորր է, մթին, զով։ Միայն պիրոլներն են խախտում լռությունը ու ե՛կեկ էլ կկուն է հաշվում ո՛վ գիտի ում չապրած տարիները։ Իսկ ձմռանն անտառը լինում է արդեն բոլորովին դատարկ, մերկ, մեռելային լռությամբ շղթայված։ Ձմեռային սպիտակավուն երկնքի ֆոնի վրա մռայլ կերպով սևին են տալիս ծառերի կատարները։ Միայն գայլերի ընտանիքներն են տարեցտարի թավուտում հուսալի ապաստարան գտնում՝ ցերեկները պառկելով ձյունապատ քոլերի արանքներում։

Ֆոմինը, Գրիգորի Մելեխովը և մնացածները, որոնք ողջ էին մնացել Ֆոմինի բանդայի ջախջախումից, ապաստանեցին այդ կղզում։ Ապրում էին մի կերպ. սնվում էին աղքատիկ ուտելիքով, որ գիշերները նավակով նրանց համար բերում էր Ֆոմինի հորեղբոր տղան, կես կուշտ, կես քաղցած էին լինում, դրա փոխարեն քնում էին ուզածների չափ, թամքերի բարձերը գլուխների տակ դրած։ Գիշերները հերթով պահակ էին կանգնում։ Կրակ չէին վառում, վախենալով, որ մեկն ու մեկը կհայտնաբերի իրենց տեղը։

Ողողելով կղզու ափերը, վարարած ջուրը շեշտակի հոսում էր դեպի հարավ։ Ջուրը վշշում էր ահեղորեն՝ անցնելով իր ճանապարհին ծառացած հին կաղամախների շարքերի արանքով, կամ թորթվում էր կամացուկ, մեղմակարկաչ ու հանգիստ, օրորելով ջրասույզ թփերի կատարները։

Գրիգորին շուտով ընտելացավ ջրի մոտիկ և անլռելի աղմուկին։ Նա երկար պառկում էր դիք կտրած ափի մոտ, նայում ջրային լայնարձակ տարածության, առափնյա լեռների կավճոտ ճյուղավորություններին, որոնք նիրհում էին յասամանագույն արևային մուժում։ Այնտեղ, այդ մուժից դենը, հայրենի խուտորն էր, Ակսինյան, երեխաները... դեպի այնտեղ էին թռչում նրա անուրախ խոկումները։ Երբ նա վերհիշում էր հարազատներին, կարոտ-թախիծը մի ակնթարթ բռնկվում էր նրա մեջ, այրում սիրտը, եռում էր խուլ ատե-

լությունը Միխայիլի նկատմամբ, բայց նա խեղդում էր այդ զգացումները և աշխատում էր չնայել Դոնի շրջակա լեռներին, որպեսզի հուշերը մի ավելորդ անգամ չպաշարեին նրան։ Կարիք չկար ազատություն տալ շար հիշողության։ Առանց այդ էլ բավականաչափ ծանր էր իր վիճակը։ Առանց այդ էլ այնքան ցավոտ էր կուրծքը, որ երբեմն նրան թվում էր, թե սիրտը քերքրված է և ոչ թե բաբախում է, այլ արյունով է ողողվում։ Երևում էր, որ ստացած վերքերը, պատերազմի ձախորդությունները և տիֆը իրենց գործն էին արել։ Գրիգորին ամեն րոպե լսում էր սրտի տաղտուկ զարկերը։ Երբեմն կրծքում, ձախ պտուկի տակ այնպիսի ծակող, սուր ցավ էր զգում, որ շրթունքները վայրկենապես չորանում էին, և նա դժվարությամբ էր զսպում տենքոցը։ Բայց նա ցավից ազատվելու ճիշտ միջոց էր գտել. նա կրծքի ձախ կողմով պառկում էր թաց գետնին կամ պաղ ջրով թրջում էր շապիկը, ու ցավը դանդաղ, ասես տհաճությամբ չքանում էր։

Եղանակը լավ էր, քամիներ գրեթե չէին լինում։ Միայն երբեմն պարզ երկնքում սահում էին բարձունքներում փչող քամու զզզած, սպիտակ ամպիկները, ու վարարած ջրերի վրայով կարապների երամի նման անցնում էին նրանց արտացոլումները ու չքանում՝ շոշափելով հեռավոր ափը։

Հաճելի էր դիտել ափերի մոտ ցրիվ եկող, կատաղի վշշացող ջրի արագ հոսանքը, լսել նրա անլռելի աղմուկը և չմտածել ոչ մի բանի մասին, աշխատել մտքից վանել այն ամենը, ինչ որ տանջանք է պատճառում։ Գրիգորին ժամերով դիտում էր հոսանքի հեղհեղուկ և անսահմանորեն բազմապիսի խոպոպիկները։ Դրանք ամեն րոպե փոխում էին իրենց ձևը. այնտեղ, ուր մի քիչ առաջ մեղմակի սահում էին կոհակները, տանելով եղեգնի ջարդված ցողուններ, ճիլտված տերևներ և խոտաբույսերի արմատներ,— մի րոպեից հետո առաջանում էր տարօրինակ ձևի ձագար, որ ագահությամբ ներծծում էր այն ամենը, ինչ որ լողում էր իր կողքին, մի քիչ հետո էլ ձագարի տեղում փրփրում ու պղտոր կոհակներ էր գալարում ջուրը ու դուրս էին գալիս մերթ բոշխի սևացած մի արմատ, մերթ կաղնու կտրատված մի տերև, մերթ էլ ով գիտե որտեղից բերված ծղնոտի մի փնջիկ։

Երեկոներին արևմուտքում հրավառվում էին բալի պես

կարմիր վերջալույսները։ Բարձրաբերձ բարդենու ետևից ելնում էր լուսինը։ Նրա լույսը սպիտակ, սառը բոցի նման սփռվում էր Դոնի վրա՝ ցոլքեր և դունախաղ առաջացնելով այնտեղ, ուր քամին թեթևակի ալեկոծում էր ջուրը։ Գիշերները միախառնվելով ջրի աղմուկին, կղզու վրա նույնպես անլռելի հնչում էին դեպի հյուսիս թռչող սագերի անթիվ երամների ձայները։ Թռչունները, որոնց ոչ ոք չէր անհանգստացնում, հաճախ նստում էին կղզու մերձակայքում, դրա արևելյան կողմում։ Անդորր ջրերում, հեղեղված անտառում ղիլ կռնչում էին վայրի բադալորները, կչկչում էին բադերը, ձայն ձայնի տալով կամացուկ կոկոթում էին ծովասագերն ու վայրի սագերը։ Մի անգամ էլ, հուշիկ մոտենալով ափին, Գրիգորին կղզուց քիչ հեռու տեսավ կարապների մի մեծ երամ։ Արևը դեռ չէր ծագել։ Հեռավոր անտառաշերտի ետևում պայծառ շողշողում էր արշալույսը։ Անդրադարձնելով նրա լույսը, ջուրը վարդագույն էր թվում, և անշարժ ջրի վրա նույնպես վարդագույն էին թվում մեծ, վեհաշուք թռչունները, որոնք իրենց հպարտ գլուխները դեպի արևելք էին դարձնում։ Ափից շրշյուն լսելով, նրանք հնչեղ, շեփորային կանչով վերև թռան, ու երբ անտառից վեր բարձրացան, նրանց փետուրների դյութական, շողշողուն ձնափայլը խփեց Գրիգորիի աչքերին։

Ֆոմինը և նրա զինակիցներից ամեն մեկը իրենց ուզածի պես էին ժամանակ վատնում. տնտեսարար Ստեփանիկովը կաղ ոտին հարմար գիրք տալով, առավոտից մինչև երեկո նորոգում էր հագուստը և ոտնամանները, խնամքով մաքրում զենքերը, Կապարինը, որի համար անօգտակար էր խոնավ գետնի վրա գիշերելը, ամբողջ օրերով պառկում էր արևի տակ, կիսամուշտակը գլխին քաշած, ու խուլ հազում էր, Ֆոմինը և Զումակովը անդադար թուղթ էին խաղում թղթից հենց իրենց պատրաստած խաղաթղթերով, Գրիգորին թափառում էր կղզում, երկար նստում ջրափին։ Նրանք միմյանց հետ քիչ էին խոսում,— ամեն ինչի մասին էլ վաղուց խոսել էին,— ու հավաքվում էին միայն ուտելու ժամանակ և երեկոներին, սպասելով Ֆոմինի հորեղբոր որդու գալուն։ Ձանձրույթը մաշում էր նրանց, ու կղզում գտնվելու ժամանակվա ընթացքում լոկ մի անգամ Գրիգորին տեսավ, թե

ինչպես Զումակովը և Ստերլյադնիկովը, չգիտես ինչու հանկարծակի ուրախացած, ըմբշամարտի բռնվեցին։ Նրանք երկար ըմբշամարտում էին միևնույն տեղում, տնքում և կարճ, զվարճալի ֆրազներ էին փոխանակում։ Նրանց ոտները մինչև կոճիկները թաղվում էին սպիտակ, հատիկավոր ավազի մեջ։ Կաղ Ստերլյադնիկովը պարզապես ավելի ուժեղ էր, բայց Զումակովը իր ճարպկությամբ գերազանցում էր նրանից։ Նրանք ըմբշամարտում էին կալմիկական ձևով, գոտիներից բռնած, ուսերը դեպի առաջ տալով և աչալուրջ հետևելով միմյանց ոտներին։ Նրանց դեմքերը խոժոռվում ու գունատվում էին լարվածությունից, նրանք մշմշալով ու բուռն թափով էին շնչում։ Դրիգորին հետաքրքրությամբ դիտում էր ըմբշամարտը։ Նա տեսավ, թե ինչպես Զումակովը, հարմար պահ ընտրելով, հանկարծ շեշտակի ընկավ մեջքի վրա, քաշելով հակառակորդին, ու ծալված ոտների շարժմամբ նրան գցեց իր վրայից։ Մի վայրկյան անց ժանտաքիսի պես ճկուն ու ճարպիկ Զումակովը արդեն պառկած էր Ստերլյադնիկովի վրա՝ վերջինս թիակները սեղմելով ավազին, իսկ շնչասպառ ու ծիծաղող Ստերլյադնիկովը մռնչում էր՝ «Տո, անիրավ, բա մենք խոսե՞լ էինք... թե կարելի գըլխի վրայով գցել...»

— Կպել եք իրար, ոնց որ ջահել աքլորներ, դե հերիք եղավ, թե չէ մեկ էլ տեսար կռվեցիք,— ասաց Ֆոմինը։

Ոչ, նրանք ամենևին էլ միտք չունեին կռվելու։ Նրանք հաշտ, իրար գրկած նստեցին ավազի վրա, ու Զումակովը խուլ, բայց հաճելի ձայնով, արագ տեմպով սկսեց պարերգը.

Օ՛յ, սառնամանիք, օ՛յ սառնամանիք,
Դու ջրօրհնեքի ժանտ սառնամանիք,
Ցրտատար արիր մոխրագույն գիլին,
Ու վերնատան մեջ — սիրուն աղջկան...

Ստերլյադնիկովը ձայնակցեց իր բարալիկ տենորով, ու նրանք ներդաշնակորեն, անսպասելի լավ էին երգում.

Աղջիկը ցրտին դուրս ելավ տանից,
Դուրս ելավ տանից սև քուրքը ձեռքին,
Տվեց ձի նստած մի ուրյադնիկի...

Ստերլյադնիկովը չհամբերեց. վեր թռավ ու սկսեց պարել՝ շրխկացնելով մատները, կաղ ոտը թաղելով ավազի մեջ։

Զումակովը առանց երգը ընդհատելու վերցրեց թուրը, ավազի մեջ մի փոքրիկ փոս փորեց ու ասաց.

— Կա՛ց, է՛, կաղ սատանա։ Քո մի ոտը կարճ է, հարթ տեղում չես կարող պարել... Դու պետք է կամ սարալանջի վրա պարես, կամ այնպես, որ երկար ոտդ լինի փոսի մեջ, իսկ մյուս ոտդ փոսից դուրս։ Երկար ոտդ դիր այս փոսի մեջ ու կորկողա, կտեսնես, թե պարը ինչքան լավ դուրս կգա... Դեհ, սկսեցինք...

Ստերլյադնիկովը սրբեց ճակատի քրտինքը, առողջ ոտը հնազանդությամբ դրեց Զումակովի փորած փոսի մեջ։

— Դրուստ որ, այսպես ավելի հարմար է,— ասաց նա։

Ծիծաղից շնչասպառ լինելով, Զումակովը ծափ տվեց, շուտասելուկով երգեց.

Այստեղից անցնես, մոտս եկ, ջանիկ,
Քեզ կհամբուրեմ, կլնես երջանիկ...

Ու Ստերլյադնիկովը պահպանելով դեմքի լուրջ արտահայտությունը, որ հատուկ է բոլոր պարողներին, սկսեց ճարպկությամբ պարել և փորձեց նույնիսկ պպզապարի անցնել...

Օրերն անցնում էին մեկը մյուսի նման։ Մութն ընկնելուց հետո անհամբեր սպասում էին, թե երբ է գալու Ֆոմինի հորեղբոր որդին։ Բոլորն էլ, հինգ հոգով հավաքվում էին ափին, խոսում էին ցածր ձայնով, ծխում՝ շինելների փեշերով ծածկելով ծխախոտների կրակը։ Որոշվել էր կղզում ապրել էլի մի շաբաթ, հետո էլ գիշերով անցնել Դոնի աջ կողմը, ձիեր ճարել ու ճանապարհվել դեպի հարավ։ Լուրերի համաձայն, օկրուգի ինչ-որ հարավային վայրերում շրջում էր Մասլակի բանդան։

Ֆոմինը իր ազգականներին հանձնարարեց իմանալ, թե ամենամոտ խուտորներից ո՞ր մեկում կան հեծնելու համար պիտանի ձիեր, ինչպես նաև պատվիրեց ամեն օր իրեն հաղորդել այն ամենը, ինչ որ կատարվում էր օկրուգում։ Նրանց իմացած նորությունները մթիթարական էին։ Ֆոմինին փնտրում էին Դոնի ձախ կողմում, կարմիրբանակայինները թեև եղել էին Ռուբեժնիում, սակայն Ֆոմինի տանը խուզարկություն կատարելուց հետո անմիջապես մեկնել էին։

— Հարկավոր է շուտ հեռանալ այստեղից։ Ո՞ր սատանի համար պիտի նստենք այստեղ։ Եկեք վաղը գնանք,— մի անգամ նախաճաշի ժամանակ առաջարկեց Զումակովը։

— Նախ՝ պետք է լուր իմանալ ձիերի մասին,— ասաց Ֆոմինը։— Ինչո՞ւ պիտի շտապենք։ Թե որ մեզ ավելի լավ կերակրեին, մինչև ձմեռ չէի հրաժարվի այս կյանքից։ Նայեցեք, թե ինչպիսի գեղեցկություն կա մեր շուրջը։ Կհանգըստանանք ու էլի գործի կդիմենք։ Թող նրանք մեզ փնտրեն, մենք նրանց ձեռքը չենք ընկնի։ Խոստովանում եմ, նրանք մեզ ջարդեցին իմ հիմարության պատճառով, դե, անշուշտ, ցավալի է, միայն թե դրանով բանը չի վերջացել։ Մենք դեռ մարդիկ կհավաքենք։ Հենց որ ձի նստենք ու անցնենք մոտակա խուտորները, մի շաբաթից հետո մի հիսուն մարդ կհավաքվի մեր շուրջը, գուցեև հարյուր մարդ։ Կհարստանանք մարդկանցով, աստված վկա։

— Դատարկ բան է, հիմար ինքնավստահություն,— ջղայնացած ասավ Կապարինը։— Կազակները դավաճանեցին մեզ, չեկան ու չեն գա մեր ետևից։ Հարկավոր է քաջություն ունենալ և խոստովանել ճշմարտությունը և ոչ թե հրապուրվել հիմար հույսերով։

— Ո՞նց թե չեն գա։

— Հենց այնպես, սկզբում չեկան, հիմա էլ չեն գա։

— Այդ դեռ կտեսնե՛նք,— ցասկոտ վրա բերեց Ֆոմինը, ես զենքս վար չեմ դնի։

— Դրանք բոլորը դատարկ խոսքեր են,— հոգնածորեն ասաց Կապարինը։

— Տո, անգլուխ սամի,— բարձր բացականչեց զայրացած Ֆոմինը,— ի՞նչ ես այստեղ խուճապ առաջացնում, հ՞ը։ Դու ինձ զզվեցրիր դառն բողկից էլ դառն քո արտասուքներով։ Էլ ինչո՞ւ էիր մեջտեղ գալիս, ինչո՞ւ էիր ապստամբում։ Ինչո՞ւ էիր կովի ելնում, եթե պլոճիկ չուներիր։ Դու առաջինը գլուխս թլոզեցիր ապստամբելու համար, իսկ հիմի ծա՞կն ես մտնում, հա՞-ա։ Ի՞նչ ես պապանձվել։

— Ես քեզ հետ խոսելիք չունեմ, կորի գնա, հիմար,— հիստերիկաբար ճղճղաց Կապարինը ու հեռացավ, մրսելուց փաթաթվեց կիսամուշտակով, բարձրացրեց օձիքը։

— Դրանց, այդ բոլոր ազնվական մարդկանց կաշին

բարակ է։ Մի բան պատահեց թե չէ, դրանք էլ չեն դիմանում...— հոգոց հանելով ասաց Ֆոմինը։

Որոշ ժամանակ նրանք լուռ նստած ունկնդրում էին ջրի համաչափ ու հզոր աղմուկին։ Նրանց գլխավերևից, ծանր կոնչալով, թռավ մարի մի բադ, փախչելով իրեն հետապնդող երկու որձ բադերից։ Աշխույժ դայլայլող սարյակների մի երամ իջավ դեպի բացուտը, բայց տեսնելով մարդկանց, թռավ վերև ու, սև կեմի նման ոլորվելով, հեռացավ։

Մի քիչ հետո Կապարինը նորից մոտեցավ։

— Ես ուզում եմ այսօր գնալ խուտոր,— ասաց նա՝ նայելով Ֆոմինին և արագ թարթելով աչքերը։

— Ինչի՞ համար։

— Տարօրինակ հարց։ Մի՞թե դու չես տեսնում, որ ես բոլորովին մրսել եմ և համարյա չեմ կարողանում ոտքի վրա կանգնել։

— Հետո՞ ինչ, խուտորում քո մրսածությունը կանցնի՞, թե ինչ,— անխռով հանգստությամբ հարցրեց Ֆոմինը։

— Անհրաժեշտ է գոնե մի քանի գիշեր տաք տեղում լինել։

— Դու ոչ մի տեղ չես գնա,— կտրուկ ասաց Ֆոմինը։

— Ուրեմն ի՞նչ, մեռնե՞մ այստեղ։

— Ինչպես կուզես։

— Բայց ինչո՞ւ չեմ կարող գնալ։ Չէ՞ որ այս ցրտում գիշերելը կկործանի ինձ։

— Բա որ խուտորում քեզ բռնե՞ն։ Դու մտածե՞լ ես դրա մասին։ Այն ժամանակ մեզ բոլորիս էլ կկործանեն։ Թե՞ ես քեզ չեմ ճանաչում, հը՞։ Հենց առաջին հարցաքննության ժամանակ դու մեզ կմատնես։ Դեռ մինչև հարցաքննությունն էլ կմատնես, երբ քեզ Վեշկի տանեն։

Զումակովը ծիծաղեց և գլխով հավանության նշան արեց։ Նա լիովին համաձայն էր Ֆոմինի խոսքերին։ Բայց Կապարինը կամակորությամբ ասաց.

— Ես պետք է գնամ։ Քո սրամիտ ենթադրությունները չհամոզեցին ինձ։

— Իսկ ես ասի՝ նստիր տեղդ և ձեռ քաշիր դրանից։

— Բայց ախր հասկացիր, Յակով Եֆիմովիչ, որ ես էլ չեմ կարող ապրել այս գազանային կյանքով։ Ես հիվանդ եմ պլևրիտով և գուցե նույնիսկ թոքերի բորբոքումով։

— Կառողջանաս։ Կպատկես արևի տակ և կառողջանաս։ Կապարինը կտրուկ հայտարարեց.

— Միևնույն է, ես այսօր կգնամ։ Դու իրավունք չունես ինձ պահելու։ Կգնամ ինչ պայմաններում էլ որ լինի։

Ֆոմինը նայեց նրան, կասկածանքով կկոցեց աչքերը ու, Զումակովին աչքով անելով, վեր կացավ գետնից։

— Ոնց որ երևում է, Կապարին, դու իսկապես հիվանդացել ես... Երևի մեծ տաքություն ունես... հապա թող մի տեսնեմ, տա՞ք է գլուխդ։— Նա մի քանի քայլ արեց դեպի Կապարինը՝ մեկնելով ձեռքը։

Ըստ երևույթին Կապարինը ինչ-որ չարագուշակ բան տեսավ Ֆոմինի դեմքին. ետ-ետ գնալով՝ կտրուկ բղավեց.

— Դե՛ն գնա։

— Մի բղավի, ինչո՞ւ ես բղավում։ Ես միայն փորձելու եմ։ Ի՞նչ ես դողում։— Ֆոմինը մոտեցավ ու բռնեց Կապարինի կոկորդից։— Անձնատո՞ւր ես լինում, սրիկա,— խուլ մոթմոթաց նա ու ամբողջովին լարվեց՝ աշխատելով Կապարինին շպրտել գետին։

Գրիգորին դժվարությամբ բաժանեց նրանց՝ գործի դնելով իր ամբողջ ուժը։

...Ճաշից հետո, երբ Գրիգորին իր լվացած սպիտակեղենը կախ էր տալիս թփից, Կապարինը ասաց.

— Ուզում եմ ձեզ հետ առանձին խոսել... Եկեք նստենք։

Նրանք նստեցին փոթորկից տապալված, փտած մի բարդու բնի վրա։

Կապարինը խուլ հազալով հարցրեց.

— Դուք ի՞նչպես եք նայում այդ ապուշի վարմունքին։ Ես անկեղծորեն շնորհակալ եմ ձեզանից, ձեր միջամտության համար։ Դուք աղնվորեն վարվեցիք, ինչպես և վայել է սպային։ Բայց սարսափելի՛ է։ Ես էլ չեմ կարող տանել այս բոլորը։ Մենք կարծես գազաններ լինենք... Քանի՞ օր է, որ մենք տաք կերակուր չենք կերել, և հետո, այս թաց գետնի վրա քնե՛լը... Ես մրսել եմ, կողքս սարսափելի ցավում է։ Հավանորեն թոքերի բորբոքում ունեմ։ Շատ եմ ուզում նստել կրակի մոտ, քնել տաք սենյակում, փոխել սպիտակեղենս... Ես երազում եմ մաքուր, թարմ շապկի, սավանի մասին... Ոչ, չեմ կարող տանել այս բոլորը։

Գրիգորին ժպտաց.

— Ուզում էիք հարմարություններո՞վ պատերազմել։

— Լսեցեք, ախր սա ի՞նչ պատերազմ է,— աշխուժությամբ արձագանքեց Կապարինը։— Սա ոչ թե պատերազմ է, այլ անվերջ թափառում, սովետական առանձին աշխատողների սպանություններ, ապա և փախուստ։ Պատերազմ կլինի այն ժամանակ, երբ մեզ աջակցեր ժողովուրդը, երբ ապրստամբություն սկսվեր, իսկ սա պատերազմ չէ, ոչ, պատերազմ չէ։

— Մենք ելք չունենք։ Հո անձնատուր չե՞նք լինելու։

— Այո, բայց ի՞նչ պետք է անել։

Գրիգորին թոթվեց ուսերը։ Նա ասաց այն, ինչ որ հաճախ մտածում էր, երբ պառկում էր այստեղ, կղզում։

— Բայց և այնպես վատ աղատությունը ավելի լավ է, քանց լավ բանտը։ Գիտե՞ք ոնց են ասում ժողովրդի մեջ,— բանտը ամուր է,— սատանի աչքը լույս։

Կապարինը ավազի վրա ձողիկներով ինչ-որ ֆիգուրներ էր գծում, երկար լռությունից հետո ասաց.

— Պարտադիր չէ անձնատուր լինել, բայց պետք է բոլշևիկների դեմ պայքարելու նոր ձևեր փնտրել։ Պետք է ձեռք քաշել այդ զզվելի ժողովրդից։ Դուք ինտելիգենտ մարդ եք...

— Դե, ես ի՞նչ ինտելիգենտ եմ որ,— քմծիծաղ տվեց Գրիգորին։— Ես այդ բառն էլ դժվարությամբ եմ ասում։

— Դուք սպա եք։

— Դա պատահական բան է եղել։

— Ոչ, առանց կատակի։ Դուք հո սպա եք, շփվել եք սպայական հասարակության հետ, տեսել եք իսկական մարդկանց, դուք հո սովետակ .ն նբելուկ իշխող չեք, ինչպես Ֆոմինն է, և դուք պետք է հասկանաք, որ այստեղ մնալը մեզ համար անիմաստ է։ Սա համազոր է ինքնասպանության։ Նա մեզ այս անտառում հարվածի տակ է դրել, ու եթե մենք հետագայում էլ մեր բախտը կապենք նրա հետ, նա էլի շատ անգամ մեզ փորձանքի կմատնի։ Նա ուղղակի գռեհիկ մարդ է և բացի այդ, կատաղի ապուշ է։ Նրա հետ մենք կկորչենք։

— Ուրեմն անձնատուր չլինենք, այլ հեռանա՞նք Ֆոմինից, ո՞ւր գնանք, Մասլակի մո՞տ,— հարցրեց Գրիգորին։

— Ոչ։ Դա նույնպես ավանտյուրա է, միայն ավելի խոշոր մասշտաբով։ Այժմ ես այլ կերպ եմ նայում դրա վրա։ Պետք է հեռանալ, բայց չգնալ Մասլակի մոտ...

— Բա ո՞ւր։

— Վեշենսկայա։

Գրիգորին վրդովված թոթվեց ուսերը։

— Դա նշանակում է էլի խաթայի մեջ ընկնել։ Չէի ուզենա։

Կապարինը սուր, փայլող աչքերով նայեց նրան։

— Ինձ չհասկացաք, Մելեխով։ Կարո՞ղ եմ վստահել ձեզ։

— Լիովին։

— Սպայի ազնիվ խո՞սք։

— Կազակի ազնիվ խոսք։

Կապարինը նայեց օթևանում ինչ-որ բանով զբաղված Ֆոմինի ու Զումակովի կողմը, ու թեև նրանք բավական հեռու էին և ոչ մի կերպ չէին կարող լսել տեղի ունեցող խոսակցությունը,— ձայնը ցածրացնելով ասաց.

— Ես գիտեմ ձեր հարաբերությունները Ֆոմինի և մյուսների հետ։ Դուք նրանց նույնքան օտար եք, որքան և ես։ Ինձ չեն հետաքրքրում այն պատճառները, որոնք ձեզ ստիպել էին գնալ սովետական իշխանության դեմ։ Եթե ես ճիշտ եմ հասկանում, այդ ձեր անցյալն է և ձերբակալությունից վախենալը, այնպես չէ՞։

— Ասացիք, որ պատճառները ձեզ չեն հետաքրքրում։

— Այո, այո, ես այդ ի միջի այլոց ասացի, հիմա մի քանի խոսք իմ մասին։ Ես անցյալում եղել եմ սպա և սոցիալիստ-ռևոլյուցիոներների պարտիայի անդամ, հետագայում ես վճռականապես վերանայեցի իմ քաղաքական համոզմունքները... Միայն միապետությունը կարող է փրկել Ռուսաստանը։ Միա՛յն միապետությունը։ Նախախնամությունն ինքն է այդ ուղին ցույց տալիս մեր հայրենիքին։ Սովետական իշխանության էմբլեման մուրճն ու մանգաղն է, չէ՞։— Կապարինը ավազի վրա փայտիկով գծեց «մոլոտ, սերպ» (մուրճ, մանգաղ) բառերը, հետո տենդորեն փայլող աչքերը հառեց Գրիգորիին։— Տառերը կարդացեք աջից

ձախ (պրեստոլոմ— գահով)։ Կարդացի՞ք։ Դուք հասկացա՞ք։ Միայն գահով կվերջանա ռևոլյուցիան և բոլշևիկների իշխանությունը։ Գիտեք արդյոք, որ ես միստիկ սարսափով բռնվեցի, երբ իմացա այդ մասին։ Ես դողում էի, որովհետև դա, եթե ուզում եք, աստծու մատն է, որը ցույց է տալիս մեր դեգերումների վերջը...

Կապարինը հուզմունքից շնչասպառ եղավ ու լռեց։ Նրա սուր, մի քիչ խելագարություն արտահայտող աչքերը մեխված էին Գրիգորիի վրա։ Բայց վերջինս ամենևին չէր դողում և միստիկ սարսափ չէր զգում՝ լսելով այդ հայտնագործությունը։ Նա միշտ էլ զգաստ ու սովորական հայացքով էր նայում իրերին, դրա համար էր պատասխանեց.

— Դա ոչ մի մատ էլ չի։ Գերմանական պատերազմի ժամանակ դուք եղե՞լ եք ռազմաճակատում։

Հարցից շփոթված Կապարինը մի քիչ ուշացրեց պատասխանը։

— Իսկ դուք ինչո՞ւ եք հարցնում դրա մասին։ Ոչ, անմիջականորեն ռազմաճակատում չեմ եղել։

— Բա ո՞րտեղ էիք ապրում պատերազմի ժամանակ։ Թիկունքո՞ւմ։

— Այո։

— Շարունա՞կ։

— Այո, այսինքն համարյա թե շարունակ, իսկ դուք ինչո՞ւ եք այդ հարցնում։

— Իսկ ես տասնչորս թվից մինչև այսօր ռազմաճակատում եմ, եղել են միայն կարճ ընդմիջումներ։ Հա՛, այդ մատի մասին... էլ մատս ո՞րն է, երբ աստված չկա։ Ես վաղուց չեմ հավատում այդ հիմարություններին։ Տասնհինգ թվից, երբ լավ տեսա պատերազմը, մտածեցի, որ աստված չկա։ Ո՛չ մի աստված։ Եթե լիներ, իրավունք չէր ունենա թույլ տալ, որ մարդիկ այդ տեսակ անկարգություն անեին։ Մենք, ճակատայիններս, ձեռ քաշեցինք աստծուց, նրան թողինք միայն ծերուկների ու կնանոց համար։ Թող նրանք մխիթարվեն։ Ոչ մի մատ էլ չկա, միապետություն էլ չի կարող լինել։ Ժողովուրդը նրան ընդմիշտ վերջ է տվել։ Իսկ դա, որ դուք ցույց եք տալիս, որ թարս եք կարդում տառերը, դա, ներեցեք ինձ, մանկական զվարճալիք է, ոչ ավելի։ Ես

մի քիչ լավ չեմ հասկանում, ինչի՞ համար եք ասում այդ բոլորը։ Դուք ինձ ավելի պարզ և կարճ ասացեք։ Ես յունկերների ուսումնարանում չեմ սովորել և շատ գրագետ չեմ, թեև սպա եմ եղել։ Եթե ես մի քիչ ավելի գրագետ լինեի, դուցեև ձեզ հետ այստեղ չնստեի կղզում, ոնց որ գել, որ դրսից կտրվել է վարարած ջրով,— վերջացրեց նա պարզապես ափսոսանք արտահայտող ձայնով։

— Այդ կարևոր չէ,— հապճեպ ասաց Կապարինը։— Հավատում եք աստծուն, թե չեք հավատում, այդ կարևոր չէ։ Դա ձեր համոզմունքների, ձեր խղճի գործն է։ Ճիշտ նույնպես նշանակություն չունի այն, թե դուք միապետական եք կամ սահմանադիր ժողովի կողմնակից և կամ սոսկ անկախության պլատֆորմին կանգնած կազակ։ Կարևորն այն է, որ մեզ միավորում է միատեսակ վերաբերմունքը դեպի սովետական իշխանությունը։ Դուք համաձա՞յն եք դրա հետ։

— Հետո՞։

— Մենք հույս էինք դնում կազակների ընդհանուր ապստամբության վրա, այնպես չէ՞։ Մեր հույսը չիրականացավ։ Հիմի պետք է մի կերպ դուրս գալ այս դրությունից։ Բոլշևիկների դեմ հետո էլ կարելի է պայքարել առանց ինչ-որ մի Ֆոմինի ղեկավարության։ Այժմ կարևոր է, որ մենք պահպանենք մեր կյանքը, դրա համար էլ ես ձեզ դաշինք եմ առաջարկում։

— Ի՞նչ դաշինք։ Ո՞ւմ դեմ։

— Ֆոմինի դեմ։

— Չեմ հասկանում։

— Ամեն ինչ էլ շատ պարզ է։ Ես ձեզ հրավիրում եմ լինել իմ գործակիցը...— Կապարինը զգալիորեն հուզվում էր և արդեն անհանգիստ շնչելով էր խոսում։— Ես ու դու սպանում ենք այդ երեքին և գնում ենք Վեշենսկայա, հասկանալի՞ է։ Դա մեզ կփրկի։ Սովետական իշխանության առաջ մեր այդ ծառայությունը մեզ փրկում է պատժից։ Մենք ապրում ենք։ Դուք հասկանո՞ւմ եք, ապրում ենք... փրկում ենք մեր կյանքը։ Ինքնին հասկանալի է, որ ապագայում հարմար դեպքում մենք դուրս ենք գալիս բոլշևիկների դեմ։ Բայց դա այն ժամանակ, երբ կլինի լուրջ գործ և ոչ թե այնպիսի ավանտյուրա, ինչպիսին ձեռնարկել է

այդ քոսոտ Ֆոմինը։ Համաձա՞յն եք։ Հաշվի առեք, որ սա միակ ելքն է մեր անհուսալի դրությունից, այն էլ փայլուն ելք։

— Բայց այդ ի՞նչպես անել,— հարցրեց Գրիգորին՝ ներքուստ ցնցվելով վրդովմունքից, բայց ամեն կերպ աշխատելով թաքցնել իրեն համակած զգացումը։

— Ես ամեն ինչ մտածել եմ. մենք այդ կանենք գիշերով, սառն զենքով, հետևյալ գիշերը գալիս է այն կազակը, որը մեզ մթերքներ է հայթայթում, մենք անցնում ենք Դոնը, պրծավ-գնաց։ Ուղղակի հանճարեղ միտք, և ոչ մի խորամանկություն։

Շինծու բարեսրտությամբ ժպտալով, Գրիգորին ասաց.

— Դա հիանալի է։ Բայց ասացեք, Կապարին, առավոտյան, երբ դուք պատրաստվում էիք գնալ խուտորում տաքանալու... Դուք Վեշկի գնալու միտք ունե՞իք։ Ֆոմինը ճի՞շտ հասկացավ ձեզ։

Կապարինը ուշադրությամբ նայեց բարեսրտությամբ ժպտացող Գրիգորիին և ինքն էլ մի քիչ շփոթվելով և անուրախ ժպտաց։

— Անկեղծորեն ասած՝ այո։ Գիտե՞ք, երբ հարցը սեփական կաշվին է վերաբերվում, միջոցներ ընտրելիս առանձնապես չես ճնշվում։

— Կմատնե՞իք մեզ։

— Այո,— աղնվաբար խոստովանեց Կապարինը,— բայց ես կաշխատեի անձնապես ձեզ ազատել անախորժություններից, եթե ձեզ բռնեին այստեղ, կղզում։

— Իսկ ինչո՞ւ դուք մենակ չկոտորեցիք մեզ։ Այդ բանը գիշերով հեշտ կլիներ անել։

— Ռիսկ կլիներ։ Առաջին կրակոցից հետո մյուսները...

— Վար դիր զենքերդ,— զուսպ ասաց Գրիգորին՝ հանելով նագանը...— վար դիր, թե չէ տեղնուտեղը կսպանեմ։ Ես հիմի վեր կկենամ, մեջքով կծածկեմ քեզ, որ Ֆոմինը չտեսնի, և դու նագանը կգցես ոտներիս տակ։ Դեհ, չհամարձակվես կրակել։ Կքնեցնեմ, եթե փորձես։

Կապարինը նստած էր մեռելի պես գունատ։

— Մի՛ սպանեք ինձ,— շշնջաց նա՝ հազիվ շարժելով շրթունքները։

— Չեմ սպանի։ Իսկ զենքերդ կվերցնեմ։

— Դուք ինձ կմատնեք...

Կապարինի մազակալած այտերի վրայով արցունքներ գլորվեցին։ Գրիգորին ճակատը կնճռոտեց նողկանքից ու ցավակցությունից, բարձրացրեց ձայնը.

— Գցի նագանը, չեմ մատնի, թեև պետք է մատնել։ Ա՛մա թե սրիկա դուրս եկար, հա՛-ա։

Կապարինը ատրճանակը գցեց Գրիգորիի ոտների տակ։

— Բա բրաո՞ունինգդ։ Բրաունինգդ էլ տուր։ Ֆրենչիդ կրծքի գրպանումն է։

Կապարինը հանեց ու գցեց նիկելով փայլող բրաունինգը, ձեռներով ծածկեց դեմքը։ Նա դողում էր հեկեկանքից։

— Հերիք է, սրիկա,— խիստ ասաց Գրիգորին՝ դժվարությամբ զսպելով այդ մարդուն խփելու ցանկությունը։

— Դուք ինձ կմատնեք... Կորա՛ ես։

— Ես քեզ ասացի, որ չեմ մատնի։ Բայց հենց որ գնանք կղզուց, ծլկիր ուր որ ուզենաս։ Դու մեզ էլ պետք չես։ Ինքդ քեզ համար թաքստոց փնտրիր։

Կապարինը ձեռները իջեցրեց դեմքից։ Սարսափելի էր նրա թաց, սփրթնած դեմքը, աչքերը ուռած էին, ստորին ծնոտը դողում էր։

— Այդ դեպքում ինչո՞ւ... Ինչո՞ւ դուք ինձ զինաթափեցիք,— կակազելով հարցրեց նա։

Գրիգորին դժկամ ասաց.

— Որ դու թիկունքիս չկրակես։ Չեզանից, ուսումնական մարդկանցից, ամեն ինչ կարելի է սպասել... էլի դեռ ինչ-որ մատի, ցարի, աստծու մասին ես դուրս տալի... Ինչքա՛ն կեղտոտ մարդ ես դու...

Առանց Կապարինին նայելու, երբեմնակի թքելով բերանում արագորեն հավաքվող թուքը, Գրիգորին դանդաղ քայլեց դեպի կայանը։

Ստերլյադնիկովը մոմաթելով ձիու փորքաշն էր կարում, կամացուկ սուլում։ Ֆոմինը և Զումակովը տապճակի վրա պառկած, ըստ իրենց սովորության թուղթ էին խաղում։

Ֆոմինը կարճ նայեց Գրիգորիին, հարցրեց.

— Նա ի՞նչ էր ասում քեզ, ինչի՞ մասին էր խոսքը։

— Կյանքիցն էր գանգատվում... Դուրս էր տալիս, էլի՛...

Գրիգորին կատարեց խոստումը, չմատնեց Կապարինին։

Բայց երեկոյան աննկատելի կերպով հանեց ու թաքցրեց Կապարինի հրացանի փակաղակը։ «Սատանան գիտի, թե գիշերը նա ինչ կանի...»— մտածում էր նա՝ պառկելով քնելու։

Առավոտյան Ֆոմինը արթնացրեց նրան։ Կռանալով, հուշիկ հարցրեց.

— Դու վերցրե՞լ ես Կապարինի զենքերը։

— Ի՞նչ, ո՞ր զենքերը,— Գրիգորին վեր կացավ նստեց, դժվարությամբ ճմլկոտեց ուսերը։

Նա քուն էր մտել միայն լուսաբացից քիչ առաջ և սաստիկ մրսել էր։ Նրա շինելը, փափախը, սապոգները,— ամեն ինչ նամացել էր արևածագի պահին չոքած մշուշից։

— Նրա զենքերը չենք գտնում։ Դո՞ւ ես վերցրել։ Դե զարթնի՛ր է՛, Մելեխով։

— Հա՛, ես։ Ինչո՞ւմն է բանը։

Ֆոմինը լուռ հեռացավ։ Գրիգորին վեր կացավ, թափ տվեց շինելը։ Զումակովը մոտիկ տեղում նախաճաշ էր պատրաստում. նա ողողեց ճամբարում եղած միակ ապուրամանը, ու ամբողջ բոքոն հացը սեղմելով կրծքին, չորս հավասար պատառ կտրեց, սափորից կաթ լցրեց ապուրամանի մեջ, կորեկաձավարից պատրաստած պինդ կաշայի մի գունդ փշրելիս նայեց Գրիգորիին։

— Երկար քնեցիր Մելեխով։ Տես, որտեղ է արևը։

— Ում խիղճը մաքուր է, նա միշտ էլ լավ է քնում,— ասաց Ստերլյադնիկովը՝ շինելի փեշով սրբելով մաքուր լվացված փայտե գդալները։— Իսկ Կապարինը ամբողջ գիշերը չէր քնում, շարունակ դես ու դեն էր շուռ գալիս...

Ֆոմինը, լուռ ժպտալով նայում էր Գրիգորիին։

— Նստեցեք նախաճաշելու, ավագակներ,— առաջարկեց Զումակովը։

Նա առաջինը գդալով կաթ վերցրեց, հացի պատառի ամբողջ կեսը տարավ բերանը։ Գրիգորին վերցրեց իր գդալը և, ուշադրությամբ նայելով բոլորին, հարցրեց.

— Ո՞ւր է Կապարինը։

Ֆոմինը և Ստերլյադնիկովը լուռ ուտում էին, Զումակովը ակնապիշ նայում էր Գրիգորիին ու նույնպես լռում էր։

— Կապարինին ի՞նչ եք արել,— հարցրեց Գրիգորին՝ մի քիչ կռահելով, թե ինչ էր պատահել գիշերը։

— Կապարինը հիմա հեռու է,— հանգիստ ժպտալով պատասխանեց Զումակովը։— Նա լողալով գնաց Ռոստով։ Հիմա երևի Ուստ-Խոպերի մոտերքում կլինի... Հրե՛ն, կախված է նրա կիսամուշտակը, տե՛ս։

— Իսկապե՞ս սպանել եք,—հարցրեց Գրիգորին հարևանցի նայելով Կապարինի կիսամուշտակին։

Այդ մասին կարելի էր և չհարցնել։ Առանց դրան էլ ամեն ինչ պարզ էր, բայց նա չգիտես ինչու հարցրեց։ Նրան միանգամից չպատասխանեցին, և նա կրկնեց հարցը։

— Դե, պարզ բան է, սպանեցինք,— ասաց Զումակովը և թարթիչներով ծածկեց գորշ, կանացիորեն դեղեցիկ աչքերը։— Ես եմ սպանել։ Այդպես է պաշտոնս,— սպանել...

Գրիգորին ուշադրությամբ նայեց նրան։ Զումակովի թուխ, կարմրաթուշ և մաքուր դեմքը հանգիստ էր և նույնիսկ ուրախ։ Շեկ, ոսկեերանգ բեղերը խիստ աչքի էին ընկնում արևավառ դեմքի վրա՝ ստվերագծելով հոնքերի ու դեպի ետ սանրված մազերի մուգ գույնը։ Իրոք որ գեղեցիկ ու տեսքով համեստ էր նա, Ֆոմինի բանդայի այդ վաստակավոր դահիճը... Նա գդալը դրեց բրեզենտի վրա, ձեռքի երեսով սրբեց բեղերը, ասաց.

— Շնորհակալ եղիր Յակով Եֆիմիչից, Մելեխով։ Նա փրկեց քո կյանքը, թե չէ հիմի դու էլ Կապարինի հետ կլողայիր Դոնում...

— Ինչի՞ համար։

Զումակովը դանդաղորեն, բառերը շեշտելով, ասաց.

— Ոնց որ երևում է, Կապարինը ուզում էր անձնատուր լինել, երեկ ինչ որ երկար խոսում էր քեզ հետ... Դե, ես ու Յակով Եֆիմիչն էլ որոշեցինք մեջտեղից վերացնել նրան։ Կարելի՞ է սրան ամեն բան պատմել,— Զումակովը հարցական հայացքով նայեց Ֆոմինին։

Վերջինս գլխով դրական նշան արեց, ու Զումակովը ղրճղրճալի ծամելով կիսաեփ կորեկաձավարը, շարունակեց.

— Իրիկվանից ես կաղնու մի մարդակ պատրաստեցի ու ասում եմ Յակով Եֆիմիչին՝ «Ես դրանց երկուսին էլ, թե Կապարինին և թե Մելեխովին գիշերը կջնջեմ»։ Նա էլ ասում է՝ «Կապարինին խփի, իսկ Մելեխովին չի հարկավոր»։ Այդպես էլ համաձայնվեցինք։ Ես սպասեցի, մինչև որ Կապարինը քնեց, լսեցի, որ դու էլ քնած ես, խոմփացնում ես։ Հա՛, սողեսող մոտեցա ու մարդակով հասցրի գլխին։ Մեր շտաբս-կապիտանը իսկի ոտներն էր չշարժեց։ Քաղցր ձգվեց ու փչեց շունչը... Կամացուկ խուզարկեցինք նրան, հետո վերցրինք ոտներից ու ձեռներից, տարանք գետի ափը, հանեցինք սապոգները, ֆրենչը, կիսամուշտակը, ու նրան գցեցինք ջուրը։ Իսկ դու քնած էիր, քնած տեղդ ոչինչ չգիտեիր... Այս գիշեր, Մելեխով, քո մահն էլ էր մոտիկ։ Կանգնել էր հենց գլխիդ վրա։ Թեև Յակով Եֆիմիչն ասել էր, որ հարկավոր չէ քեզ ձեռք տալ, ես մտածում էի. «Դրանք ցերեկը ինչի՞ մասին կարող էին խոսել։ Մուռտառ գործ է, երբ հինգ հոգուց երկուսը սկսում են իրենց հեռու-հեռու պահել, գաղտնիքներ ունենալ...» Կամաց-կամաց մոտեցա քեզ և արդեն ուզում էի թափ առնել ու խփել թրով, մտածում էի՝ թե որ մարդակով զարկեմ, սա, գրողի տարածը, ուժով է, վեր կթռչի ու կսկսի կրակել, եթե միանգամից չքնեցնեմ... Հա՛, Ֆոմինը էլի խանգարեց գործը։ Մոտեցավ ու փսփսաց՝ «Չեռ չտաս, նա մեր մարդն է, նրան կարելի է հավատալ»։ Չէինք հասկանում, թե որտեղ կարող էին լինել Կապարինի զենքերը։ Այնպես էլ ես հեռացա քեզանից։ Ա՛մա թե պինդ էիր քնել, հա՛-ա։ Չէիր զգում փորձանքը։

Գրիգորին հանգիստ ասաց.

— Զուր տեղը պիտի սպաներիր, հիմար։ Ես Կապարինի հետ որևէ համաձայնություն չէի կնքել։

— Բա ինչո՞ւ նրա զենքերը քեզ մոտ էին։

Գրիգորին ժպտաց.

— Ես նրա ատրճանակները դեռ ցերեկն էի վերցրել, իսկ փակաղակը երեկոյան հանեցի,, թաքցրի թամքի քըրտնաքաշի տակ։

Նա պատմեց Կապարինի հետ ունեցած երեկվա խոսակցության և նրա առաջարկի մասին։

Ֆոմինը դժգոհությամբ հարցրեց.

— Ինչո՞ւ դու երեկ դրա մասին ոչինչ չասացիր։

— Խղճացի նրան, փսլնքոտ սատանային,— անկեղծորեն խոստովանեց Գրիգորին։

— Ա՛խ, Մելեխով, Մելեխով,— բացականչեց թունդ զարմացած Զումակովը,— դու քո խղճահարությունը պահիր

այնտեղ, որտեղ դրել էիր Կապարինի հրացանի փակաղակը՝ քրտնաքաշի տակ, թե չէ գլխիդ փորձանք կբերի։

— Դու ինձ մի սովորեցնի։ Քո գիտեցածի չափ ես էլ գիտեմ,— սառն ասաց Գրիգորին։

— Ես քեզ ինչո՞ւ պիտի սովորեցնեմ։ Բա որ գիշերը քո այդ խղճահարության պատճառով քեզ այն աշխարհը ուղարկի, լա՞վ կլիներ, հա՞։

— Այդպես էլ պետք էր,— մտածելով՝ հուշիկ պատասխանեց Գրիգորին։ Եվ ոչ այնքան մյուսների, որքան իր համար ավելացրեց.— արթուն ժամանակ մահ ընդունելը սարսափելի է, իսկ քնած ժամանակ նա երևի թեթև կլինի...

XV

Ապրիլի վերջին նրանք գիշերը նավակով անցան Դոնը։ Ռուբեժնիում, գետափին նրանց սպասում էր Նիժնի-Կրիվսկոյ խուտորի երիտասարդ կազակ Կոշելյով Ալեքսանդրը։

— Ես ձեզ հետ եմ։ Յակով Եֆիմիչ։ Զանձրացել եմ տանը ապրելուց,— ասաց նա՝ բարևելով Ֆոմինին։

Ֆոմինը արմունկով բոթեց Գրիգորիին, շշնջաց.

— Տեսնո՞ւմ ես։ Ես հո ասում էի... Կղզուց հենց նոր եկանք, իսկ ժողովուրդը արդեն պատրաստ է,— ահա նա։ Սա իմ ծանոթն է, սրտոտ կազակ։ Լա՛վ նշան է։ Մի բան կլինի։

Դատելով Ֆոմինի ձայնից, նա գոհությամբ ժպտում էր։ Նա խիստ ուրախացել էր, որ նոր գործակից է հայտնվել։ Գետը հաջողությամբ անցնելը և այն հանգամանքը, որ իսկույն ևթ մի մարդ էլ միացավ իրենց,— այս ամենը քաջալերում էր նրան ու թևավորում նոր հույսերով։

— Հը՛, բացի հրացանից ու նագանից, դու թուր և բինոկլ է՞լ ունես,— գոհությամբ ասաց նա՝ մթության մեջ զննելով շոշափելով Կոշելյովի զենքերը։— Ա՛յ, սա կազակ է, իսկույն երևում է, որ իսկական, զուտ կազակ է։

Ֆոմինի հորեղբոր որդին մի փոքրիկ ձի լծած սայլով մոտեցավ գետափին։

— Թամքերը դրեք սայլին,— ցածր ձայնով ասաց նա.— շուտ արեք, ի սեր Քրիստոսի, թե չէ ժամանակը ուշ է և ճամփեն էլ երկար է...

Նա հուզվում էր շտապեցնում Ֆոմինին, իսկ վերջինս կղզուց տեղափոխված լինելով և ոտների տակ զգալով հայրենի խուտորի պինդ հողը, արդեն ուզում էր թե տուն գնալ մի ժամով և թե այցելել ծանոթ խուտորցիներին...

Լուսաբացից քիչ առաջ Յագոդնի խուտորի մոտ ձիերի ջոկից լավագույն ձիեր ընտրեցին, թամքեցին դրանց։ Ջոկը հսկող ծերունուն Զումակովն ասաց.

— Պապի, ձիերի համար շատ դարդ մի անի։ Սրանք մի լավ խոսք էլ շարժեն և մենք սրանցով շատ հեռու չենք գնա, հենց որ ավելի լավերը գտնենք, սրանք կվերադարձնենք տերերին։ Եթե հարցնեն, թե ով տարավ ձիերը, ասա՝ Կրասնոկուտսկայա ստանիցայի միլիցիան վերցրեց։ Թող տերերը գնան այնտեղ... Մենք մի բանդա ենք հետապնդում, այդպես էլ ասա։

Դուրս գալով ճանապարհը, հրաժեշտ տվին Ֆոմինի հորեղբոր որդուն, հետո շուռ եկան դեպի ձախ, ու բոլոր հինգ հոգին էլ աշխույժ վարգով սլացան դեպի հարավ-արևմուտք։ Լուրերի համաձայն, մոտ օրերում Մեշկովսկայա ստանիցայի մերձակայքում երևացել էր Մասլակի բանդան։ Հենց այնտեղ էր գնում Ֆոմինը, որը որոշել էր միանալ բանդային։

Որոնելով Մասլակի բանդան, նրանք երեք օր ու գիշեր շրջում էին աջափնյա տափաստանային ճանապարհներով, խուսափելով մեծ խուտորներից և ստանիցաներից։ Տավրիկյան այն գյուղերում, որոնք սահմանակից էին Կարգինսկայա ստանիցայի հողերին, իրենց լավ ձիերը փոխեցին տավրիկյան պարարտ ու թեթև վազող ձիերով։

Չորրորդ օրվա առավոտյան, Վեժի խուտորի մերձակայքում, հեռավոր մի լեռնանցքի վրա Գրիգորին առաջինը նկատեց հեծելազորի մի երթական շարասյուն։ Ճանապարհով առնվազն երկու հեծելավաշտ էր գալիս, իսկ առջևից ու կողքերից շարժվում էին փոքրիկ պարեկները։

— Կամ Մասլակն է, կամ...— Ֆոմինը հեռադիտակը դրեց աչքերին։

— Կամ անձրև է, կամ թե ձյուն է, կամ կլինի կամ չի լինի,— ծաղրանքով ասաց Զումակովը։— Լավ մտիկ արա, Յա-

կով Եֆիմիչ, եթե դրանք կարմիրներ են, մենք պետք է խուսկույն ետ դառնանք։

— Այստեղից սատանան էլ չի տեսնի նրանց,— սրտնեղությամբ ասաց Ֆոմինը։

— Նայեցեք, նրանք մեզ տեսան, պարեկը այստեղ է գալիս,— բացականչեց Ստերլյադնիկովը։

Իսկապես, նրանց տեսան։ Աջ կողմից շարժվող պարեկը ուղղակի շուռ եկավ, վարգով սլացավ նրանց կողմը։ Ֆոմինը հեռադիտակը արագ խոթեց պատյանի մեջ, բայց Գրիգորին ժպտալով կռացավ ձիուց, բռնեց Ֆոմինի ձիու սանձից։

— Մի վռազի, թող մոտենան։ Նրանք ընդամենը տասներկու հոգի են։ Մի լավ կտեսնենք նրանց, իսկ հարկավոր դեպքում կարելի է և փախչել։ Մեր ձիերը թարմ են, ինչո՞ւ վախեցար, նայիր բինոկլով։

Տասներկու ձիավորները մոտենում էին, բոպե առ բոպե ավելի խոշորանում։ Մատղաշ խոտաբույսերով պատած բլուրի կանաչ ֆոնի վրա արդեն պարզ երևում էին նրանց կերպարանքները։

Գրիգորին և մնացածները անհամբերությամբ նայում էին Ֆոմինին։ Վերջինիս ձեռքերը, հեռադիտակը բռնած, մի փոքր դողում էին։ Նա այնքան լարված էր դիտում, որ արևի կողմը դարձած այտի վրայով արցունքի մի կաթիլ սողաց։

— Կարմիրնե՛ր են, գլխարկների վրա աստղեր կան...— վերջապես խուլ ձայնով բղավեց Ֆոմինը և շուռ տվեց ձին։

Սկսվեց փախուստը։ Նրանց ետևից հատ ու կենտ կրակոցներ էին ճայում։ Գրիգորին չորս վերստ սլանում էր Ֆոմինի կողքից, երբեմնակի ետ նայում։

— Ահա և միացանք...— ծաղրանքով ասաց նա։

Ֆոմինը թթվել, պապանձվել էր։ Զումակովը մի փոքր դանդաղեցնելով ձիու վազքը, բղավեց.

— Պետք է խուտորներից հեռու գնալ։ Անցնենք Վեշենսկու արոտավայրերը, այնտեղ խուլ տեղեր կան։

Էլի մի քանի վերստ կատաղի վազք, և ձիերը ուժասպառ կլինեն։ Նրանց ձիգ պարանոցների վրա պճպճան քրտինք դուրս տվեց, խոր փոս ընկան երկայնակի կնճիռները։

— Կամա՛ց, քաշե՛լ սանձերը,— հրաման տվեց Գրիգորին։

Ետևում տասներկու ձիավորներից մնացին միայն ինը, մնացածները ետ ընկան։ Գրիգորին աչքերով չափեց նրանց բաժանող տարածությունը, բղավեց.

— Կանգնե՛լ, եկեք կրակենք նրանց վրա...

Բոլոր հինգ հոգին էլ անցան վարգի, ընթանալիս իջան ձիերից ու հանեցին հրացանները։

— Բռնե՛լ սանձերը։ Զախ կողմից ծայրի ձիավորի վրա մշտական նշանոցից... Կրա՛կ։

Նրանք մի-մի պահունակ փամփուշտ կրակեցին, սպանեցին կարմիրբանակայիններից մեկի ձին ու էլի սկսեցին փախչել հետապնդումից։ Նրանց դժկամորեն էին հետապնդում։ Ժամանակ առ ժամանակ գնդակոծում էին հեռավոր տարածություններից, հետո էլ բոլորովին ետ մնացին։

— Ձիերը պետք է ջրել, հրե՛ն լճակը,— ասաց Ստերլյադնիկովը, մտրակով ցույց տվեց հեռվում կապույտին տվող տափաստանային մի լճակ։

Հիմա նրանք արդեն քայլքով էին գնում, ուշադրությամբ դիտում հանդիպական ձորակները և հեղեղատները՝ աշխատելով այնպես ընթանալ, որ ծածկված լինեին տեղանքի խորդուբորդ ծալքերով։

Ձիերը ջրեցին լճակից ու կրկին ճանապարհ ընկան, սկզբում քայլքով էին գնում, հետո էլ վարգով։ Կեսօրին կանգ առան ձիերին կերակրելու տափաստանը շեղակի կտրող մի հովտի լանջում։ Ֆոմինը Կոշելյովին հրամայեց ոտով բարձրանալ մոտակա կուրգանի վրա, պառկել այնտեղ և դիտողություն կատարել։ Տափաստանում որևէ ձիավորներ երևալու դեպքում Կոշելյովը պետք է ազդանշան տար ու անմիջապես վազեր դեպի ձիերը։

Գրիգորին կապեց իր ձիու երեք ոտը, թողեց արածելու, իսկ ինքը լանջում չոր տեղ ընտրեց ու պառկեց։

Այստեղ, հովտի արևակող տեղում մատղաշ խոտաբույսերը ավելի բարձր ու խիտ էին։ Արևի տաքացրած սևահողի անալի հոտը չէր կարող խեղդել տափաստանային ծաղկած մանուշակների ամենանրբին բուրմունքը։ Դրանք աճել էին լքած հարոստում, իշառվույտի չոր ցողունների արանքում, գունագեղ նախշուն տեսքով փռվել էին արտերի հին թմբի եզրերին, և նույնիսկ կայծաքարի պես պինդ խոպանում նրանց

կապույտ, մանկականորեն հստակ աչքերը նախորդ տարվա թառամած խոտաբույսերի միջից նայում էին աշխարհին։ Մանուշակները իրենց կյանքի վերջին ժամկետն էին ապրում այդ խուլ ու լայնարձակ տափաստանում, ու նրանց փոխարեն հովտի լանջով մեկ, աղուտներում արդեն բարձրանում էին հեքիաթայնորեն վառվռուն կակաչները՝ իրենց ալ-կարմիր, գեղին ու սպիտակ բաժակները դեմ անելով արևին ու քամին, ճիախառնելով ծաղիկների այլևայլ բույրերը, տափաստանով մեկ դրանք տանում էր հեռո՜ւ-հեռու։

Հյուսիսային լանջի դիք կրծքին, ստվերոտ տեղում դեռ պառկած էին ձյան պինդ, հետզհետե եզրերից հալչող շերտերը։ Դրանցից ցուրտ էր փչում, բայց այդ ցուրտը է՛լ ավելի զմայլական էր դարձնում լիովին փթթած մանուշակների բուրմունքը, որ անպարզ ու տխուր էր որպես մի հուշ վաղուց անցած ու սիրելի մի բանի մասին...

Գրիգորին պառկել էր ոտները լայն տարածած, արմունկներին հենված, և ագահ աչքերով դիտում էր արևային մուժով շղարշված տափաստանը, հեռավոր բլրաշարքերի վրա կապույտին տվող պահպանական կուրգանները, շողուն, հոսանուտ մուժը լանջի գլխին։ Նա մի բոպե փակում էր աչքերը ու լսում արտույտների մոտիկ ու հեռավոր երգը, արածող ձիերի թեթև քայլվածքն ու փնչոցը, սանձերի բերանոցների շաչյունը և քամու շրշյունը մատաղ խոտաբույսերում... Ամեն ինչից հրաժարվելու և անդորրության տարօրինակ զգացում էր ապրում նա՝ ամբողջ մարմնով սեղմվելով կոշտ գետնին։ Այդ նրան վաղուց ծանոթ զգացումն էր։ Այն միշտ գալիս էր ապրած տագնապից հետո, և Գրիգորին այնուհետև կարծես նոր ձևով էր տեսնում ամբողջ շրջապատը։ Նրա տեսողությունը և լսողությունը ասես սրվում էին, և այն ամենը, ինչ որ առաջ աննկատելի էր անցնում, ապրած հուզմունքից հետո գրավում էր նրա ուշադրությունը։ Այժմ նա միևնույն հետաքրքրությամբ էր հետևում, թե մի ինչ-որ փոքրիկ թռչունի հետապնդող բազեի շառաչուն, շեղակի թռիչքին, թե դանդաղ շարժվող, սև բզեզին, որը դժվարությամբ էր անցնում նրա, Գրիգորիի արմունկների միջև եղած տարածությունը, թե քամուց մի քիչ օրորվող, աղջկական վառ գեղեցկությամբ փայլող, մուգ կարմիր ու սև կակաչի մեղմակի ճոճումին։ Կակաչը բոլորովին մոտիկ էր, արջամկան փլված բույնի եզրին։ Բավական էր, որ Գրիգորին մեկներ ձեռքը, որպեսզի պոկեր այն, բայց նա պառկել էր անշարժ, լռին հիացմունքով զմայլվում էր ծաղկով և նրա ցողունի պինդ տերևներով, որոնք իրենց ծալերում խանդոտությամբ պահպանում էին առավոտյան ցողի ծիածանափայլ կաթիլները։ Հետո էլ մի կողմ դարձրեց հայացքը ու երկար, անխոհ հետևեց արծվին, որ ճախրում էր երկնակամարում, արջամկան լքած բույների մեռելային ավերակների վերևում...

Երկու ժամից հետո նրանք կրկին ձի նստեցին, նրանք ձգտում էին մինչև երեկո հասնել Ելանսկայա ստանիցայի ծանոթ խուտորները։

Կարմիրբանակային պարեկը հավանորեն հեռախոսով հաղորդել էր նրանց առաջշարժման մասին։ Կամենկա գյուղը մտնելիս գետափի մյուս կողմից կրակեցին նրանց վրա։ Գնդակների սուր սվսվոցը Ֆոմինին ստիպեց շուռ գալ մի կողմ։ Գնդակոծության տակ անցան գյուղի ծայրով և շուտով հասան Վեշենսկայա ստանիցայի արոտավայրերը։ Տոպկայա Բալկա գյուղի մերձակայքում միլիցիայի մի փոքրիկ ջոկատ փորձեց բռնել նրանց։

— Շրջանցեք ձախ կողմից,— առաջարկեց Ֆոմինը։

— Գնանք գրոհենք,— վճռական ասաց Գրիգորին։— Նրանք ինը հոգի են, մենք՝ հինգ։ Կռվով առաջ կանցնենք։

Զումակովը և Ստերլյադնիկովը պաշտպանեցին նրա առաջարկը։ Մերկացնելով թրերը, նրանք ձիերը քշեցին թեթև քառատրոփով։ Միլիցիոներները, առանց ձիերից իջնելու, արագ հրաձգություն սկսեցին, հետո էլ առանց կռվի բռնվելու մի կողմ սլացան։

— Դա տկարների խումբն է։ Նրանք արձանագրություններ կազմելու մեջ ուստա են, իսկ լուրջ կռվելու հետ գլուխ չունեն,— հեգնանքով բղավեց Կոշելյովը։

Երբ նրանց հետապնդող միլիցիոներները սկսում էին վրա տալ, Ֆոմինը և մյուսները կրակելով հեռանում էին դեպի արևելք, հեռանում էին ինչպես շների հետապնդած գայլեր,— երբեմնակի գոմռալով և համարյա առանց կանգ առնելու։ Մի անգամ փոխհրաձգության ժամանակ Ստերլյադնիկովը վիրավորվեց։ Գնդակը ծակեց նրա ձախ ոտի սրնքամիսը՝ դիպ-

չելով ոսկորին։ Ստերլյադնիկովը հառաչեց ոտի ցավից, գունատվելով ասաց.

— Խփեցին ոտիս... այն էլ կաղ ոտիս... Ա՛յ քեզ շան որդենիք, հը՞։

Զումակովը իրանը ետ տալով, ամբողջ կոկորդով մեկ քրքջաց։ Նա այնպես ծիծաղեց, որ աչքերում արցունքներ երևացին։ Իր ձեռքին հենված Ստերլյադնիկովին նստեցնելով ձիուն, նա դեռ ցնցվում էր ծիծաղից, ասում.

— Ոնց է՞լ ընտրել են նպատակը, է՛։ Դիտմամբ են նշան բռնել այդ ոտիդ... Տեսնում են, որ թոփալ մարդ է սլանում, եկեք,— ասել են,— բոլորովին ջարդենք այդ ոտը... Ա՜խ, Ստերլյադնիկով, ախ, գլուխդ չմեռնի, հա՛... Ոտդ էլի՛ պիտի կարճանա... Բա հիմի ո՞նց ես պարելու, հը՞։ Հիմի հարկավոր կլինի ոտիդ համար մի արշին խորությամբ փոս փորել...

— Սուս կաց, է՛, մի դուրս տա։ Քեզ հետ գլուխ չունեմ։ Սուս կաց, ի սեր Քրիստոսի,— ցավից դեմքը կնճռոտելով՝ խնդրում էր Ստերլյադնիկովը։

Կես ժամից հետո, երբ բարձրանում էին անթիվ ու անհամար ձորակներից մեկի լանջով, նա խնդրեց.

— Եկեք կանգ առնենք, մի քիչ սպասենք... Պետք է ծածկել վերքս, թե չէ սապոգս լիքը լցվել է արյունով...

Կանգ առան։ Գրիգորին բռնել էր ձիերը, Ֆոմինը և Կոշելյովը դանդաղ կրակում էին հեռվում երևացող միլիցիոներների վրա։ Զումակովը Ստերլյադնիկովին օգնեց հանել սապոգը։

— Դրուստ որ, շատ արյուն է հոսել...— նոթերը կիտելով ասաց Զումակովը ու կարմիր հեղուկը սապոգից թափեց։

Նա ուզում էր թրով կտրել թաց, արյունոտված շալվարի փոխքը, բայց Ստերլյադնիկովը չհամաձայնվեց։

— Շալվարս լավն է, կարիք չկա պատռել,— ասաց նա ու ձեռներով հենվեց գետնին, բարձրացրեց վիրավորված ոտը։— Հանիր շալվարս, միայն կամաց։

— Բինտ ունե՞ս,— հարցրեց Զումակովը, շոշափելով նրա գրպանները։

— Ինչի՞ն է պետք։ Առանց դրան էլ գործը կգնա։

Ստերլյադնիկովը ուշադրությամբ զննեց գնդակի դուրս եկած տեղը, հետո փամփուշտի միջից ատամներով հանեց գնդակը, ձեռքի մեջ վառոդ լցրեց ու դա երկար խառնեց մի կտոր հողի հետ, մինչ այդ հողը թրջեց թքով։ Ցեխը առատությամբ քսեց միջանցիկ վերքի երկու անցքին և գոհ ասաց.

— Սա փորձված բան է։ Վերքը կչորանա ու երկու օրից հետո կլավանա ոնց որ շան վերքը։

Մինչ Զիր նրանք կանգ չէին առնում։ Միլիցիոներները բավական հեռու էին, և միայն երբեմնակի հատ-հատ կրակոցներ էին լսվում նրանց կողմից։ Ֆոմինը հաճախ ետ էր նայում, ասում էր.

— Ուղեկցում են ու աչքից չեն փախցնում մեզ... Թե՞ մի տեղից օգնություն են սպասում։ Մի բան կա, որ այդպես հեռու են մնում...

Վիսլոգուզովսկի խուտորում ոտով անցան Զիր գետը, քայլքով բարձրացան մի տափարակ բլուրի վրա։ Ձիերը բոլորովին հոգնել էին։ Զառիվայր տեղերում ձիավորները նրանց մի կերպ քշում էին վարդով, իսկ զառիվեր տեղերում նրանց տանում էին սանձերից բռնած, իրենց ետևից, ձեռներով սրբում ձիերի կողքերի ու գավակների քրտնքի երերուն փաթիլները։

Ֆոմինի ենթադրությունները կատարվեցին. Վիսլոգուզովսկից մի հինգ վերստ հեռավորությամբ յոթ հոգի, թարմ և կայտառ վազող ձիեր նստած, ընկան նրանց ետևից։

— Եթե դրանք այդպես շարունակեն մեզ ձեռքից ձեռք տալ, մեր բանը բուրդ կլինի,— մռայլ ասաց Կոշելյովը։

Նրանք գնում էին տափաստանի ճանապարհազուրկ տեղերով, հերթով կրակում էին պաշտպանվելու համար. մինչդեռ երկուսը, խոտաբույսերի մեջ պառկած, կրակում էին, մնացածները հեռանում էին մի երկու հարյուր սաժեն, իջնում էին ձիերից ու հակառակորդին պահում գնդակոծության տակ՝ առաջին երկուսին հնարավորություն տալով մի չորս հարյուր սաժեն առաջ անցնել, պառկել ու պատրաստվել հրաձգության։ Նրանք սպանեցին կամ ծանր վիրավորեցին մի միլիցիոների, սպանեցին մի ուրիշ միլիցիոների ձին։ Շուտով սպանվեց նաև Զումակովի ձին։ Նա վազում էր Կոշելյովի ձիու կողքից, ասպանդակից բռնած։

Երկարում էին ստվերները։ Արևը իջնում էր դեպի մայրամուտը։ Գրիգորին առաջարկեց չանջատվել իրարից, և

Նրանք ընթացան քայլքով, բոլորը միասին։ Նրանց կողքից քայլում էր Զումակովը։ Հետո նրանք բլրադագաթին տեսան երկձի մի սայլ, դարձան դեպի ճանապարհը։ Տարեց, երկարամորուք կազակ սայլվորը ամբողջ թափով վազեցրեց ձիերը, բայց կրակոցները նրան ստիպեցին կանգ առնել։

— Կթրատեմ սրիկային, տեսնենք ոնց կփախչի...— մրթմրթաց Կոշելյովը՝ անցնելով առաջ, ամբողջ ուժով մեկ մտրակելով իր ձին։

— Չեռ չտաս դրան, Սաշկա, թույլ չեմ տալիս,— նախազգուշացրեց Ֆոմինը և դեռ հեռվից գոռաց.— ձիերդ արձակիր, պապի, լսո՞ւմ ես, արձակիր, քանի սաղ ես։

Լսելով ծերունու լացակումած խնդրանքը, իրենք արձակեցին քաշանները, հանեցին ձիերի ուսափոկերն ու անուրները, արագ-արագ թամբեցին ձիերը։

— Ձեր ձիերից զոնե մեկը թողեք ինձ,— լալով խնդրեց ծերունին։

— Ուզում ես որ քիթ ու մռութդ ջարդենք, հա՞, քավթառ սատանա,— հարցրեց Կոշելյովը։— Ձիերը հենց մեզ են հարկավոր։ Շնորհակալ եղիր աստծուց, որ սաղ մնացիր...

Ֆոմինը և Զումակովը նստեցին նոր ձիերին։ Շուտով էլի երեք հոգի միացան այն վեց ձիավորներին, որոնք կրնկակոխ հետապնդում էին նրանց։

— Պետք է արագ քշել, դեհ, ձե՛զ տեսնեմ, տղերք,— ասաց Ֆոմինը.— եթե մինչև իրիկուն հասնենք Կրիվսկոյի ձորակները, փրկված կլինենք...

Նա մտրակեց իր ձին, առաջ անցավ։ Նրա ձախ կողքից կարճ սանձով գնում էր երկրորդ ձին։ Ձիերի սմբակներով կտրատված կակաչների մուգ-կարմիր գլխիկները, որ կարծես արյան խոշոր կաթիլներ լինեին, դես-դեն էին թռչում։ Գրիգորին, որ սլանում էր Ֆոմինի ետևից, նայեց այդ կարմիր կաթիլներին ու փակեց աչքերը։ Հայտնի չէ ինչու պտտվեց նրա գլուխը և ծանոթ, սուր ցավը խոցեց սիրտը...

Ձիերը ընթանում էին վերջին ուժերը հավաքած։ Անընդհատ ձիարշավից և քաղցից մարդիկ էլ էին հոգնել։ Ստերլյադնիկովը արդեն ճոճվում էր թամքի վրա և կտավի պես գունատված էր։ Նա շատ արյուն էր կորցրել։ Ծարավը և սրտախառնուքը տանջում էին նրան։ Մի քիչ չորացած հաց կերավ, բայց իսկույն սիրտը թափեց։

Մթնշաղին Կրիվսկով խուտորի մերձակայքում նրանք խառնվեցին տափաստանից վերադարձող երամակին, վերջին անգամ մի քանի գնդակ արձակեցին հետապնդողների վրա և բերկրանքով տեսան, որ նրանք ետ են մնում։ Հեռվում ինը ձիավորը հավաքվեցին մի տեղ, ըստ երևույթին ինչ-որ խորհրդակցեցին հետո էլ ետ դարձան։

Նրանք երկու օր մնացին Կրիվսկոյ խուտորում, Ֆոմինին ծանոթ մի կազակի մոտ։ Տանտերը ուներ էր և նրանց լավ ընդունեց։ Մթին մարագում տեղավորված ձիերը ուղածների չափ վարսակ էին ուտում ու երկրորդ օրվա վերջում լիովին հանգստացել էին ապշեցուցիչ վազքից։ Ձիավորները հերթով հսկում էին ձիերին, իրար գլխի թափված քնում էին սարդոստայնով լեցուն զով հարդանոցում և կուշտ ուտում էին՝ վերականգնելով ուժերը, որ կորցրել էին կղզում կիսաքաղց օրեր անցկացնելիս։

Կարելի էր հենց մյուս օրը հեռանալ խուտորից, բայց Ստերլյադնիկովը ուշացնում էր նրանց. նրա վերքը վատացավ, առավոտյան դեմ կարմրեց կողքերից, իսկ իրիկնադեմին ոտը ուռավ, ու հիվանդը ուշագնաց եղավ։ Ծարավը տանջում էր նրան։ Ամբողջ գիշերը, հենց որ վերադառնում էր գիտակցությունը, նա ջուր էր խնդրում, ագահությամբ ու շատ էր խմում։ Գիշերվա ընթացքում նա համարյա մի դույլ ջուր խմեց, բայց արդեն նույնիսկ ուրիշի օգնությամբ էլ չէր կարող վեր կենալ, յուրաքանչյուր շարժումը նրան դաժան ցավ էր պատճառում։ Նա միզում էր առանց գետնից բարձրանալու և անդադար տնքում էր։ Նրան տեղափոխեցին հարդանոցի հեռու անկյունը, որպեսզի տնքոցները դրսից լավ չլսվեն, բայց դա չօգնեց։ Նա երբեմն շատ բարձր էր տնքում, իսկ երբ ուշագնաց էր լինում, բարձր ու անկապ ճչում էր զառանցանքի մեջ։

Հարկավոր եղավ նրա մոտ էլ հերթապահություն սահմանել։ Նրան ջուր էին տալիս, թրջում էին վառվող ճակատը և ձեռներով կամ փափախով ծածկում բերանը, երբ նա սկսում էր շատ բարձր տնքալ կամ զառանցել։

Երկրորդ օրվա վերջում նա ուշքի եկավ և ասաց, որ իրեն լավ է զգում։

— Ե՞րբ եք գնում այստեղից,— մատով իր մոտ կանչելով Զումակովին, հարցրեց նա։

— Այս գիշեր։

— Ես էլ կգամ։ Ինձ չթողնեք, ի սեր Քրիստոսի։

— Ինչի՞ ես պետք,— ցածր ձայնով ասաց Ֆոմինը,— դու իսկի շարժվել էլ չես կարող։

— Ո՞նց թե չեմ կարող, տե՛ս.— Ստերլյադնիկովը ճիգ թափելով վեր կացավ ու իսկույն պառկեց նորից։

Նրա դեմքը վառվում էր, ճակատի վրա քրտնքի մանր կաթիլներ դուրս տվին։

— Կտանենք,— վճռականապես ասաց Զումակովը.— կտանենք, մի վախենա։ Սրբիր արտասուքներդ, հո կնիկ չես։

— Սա քրտինք է,— կամացուկ շշնջաց Ստերլյադնիկովը և փափախը քաշեց աչքերին...

— Քեզ ուրախությամբ կթողնեինք այստեղ, բայց տանտերը չի համաձայնվում։ Մի՛ վախենա, Վասիլի, ոտդ կլավանա և ես ու դու դեռ կ'ըմբշամարտենք ու կաղաչոկ կպարենք։ Ի՞նչ ես հուսահատվել, հը՞։ Վերքդ հո ծանր չի, դատարկ բան է։

Ուրիշների հետ խոսելիս միշտ խոժոռ ու գռեհիկ Զումակովը դա ասաց այնպիսի փաղաքշանքով և ձայնի այնպիսի գերող, մեղմ ու սրտագին հնչյունով, որ Գրիգորին զարմացած նայեց նրան։

Լուսաբացից քիչ առաջ նրանք մեկնեցին խուտորից։ Ստերլյադնիկովին դժվարությամբ ձի նստեցրին, բայց նա առանց ուրիշի օգնության չէր կարող նստել, այս ու այն կողմն էր ընկնում։ Զումակովը աջ ձեռքով նրան գրկած, գնում էր կողքից։

— Ա՛յ քեզ բեռ... Մնում է թողնել,— հասնելով Գրիգորիին ու տխրությամբ օրորելով գլուխը, շշնջաց Ֆոմինը։

— Սպանե՞նք։

— Բա ի՞նչ, հո երեսին չենք նայելու։ Դրա հետ ինչ կարող ենք անել։

Նրանք երկար գնում էին քայլքով, լուռ էին։ Զումակովին փոխարինեց Գրիգորին, հետո էլ Կոշելյովը։

Ծագեց արևը։ Ներքևում, Դոնի վրա դեռ քուլա-քուլա փռվել էր մշուշը, իսկ բլուրների վրայից արդեն պարզ ու հստակ երևում էին տափաստանային հեռաստանները, ու որպես առ որպես ավելի կապույտ էր դառնում երկնակամարը՝ զենիթում անշարժ կանգնած փետրավոր ամպերով։ Խոտաբույսերի վրա արծաթե փարշայի պես նստած էր խիտ ցողը և այնտեղ, որտեղից անցնում էին ձիերը, մթին, առվականման հետք էր մնում։ Միայն արտույտներն էին խախտում տափաստանի վրա փռված վեհ ու հմայուն լռությունը։

Ստերլյադնիկովը, որ ձիերի քայլի տակտով անկամ ճոճում էր գլուխը, մեղմակի ասաց.

— Օ՛ֆ, մեռա ես։

— Լռի՛ր,— կոպիտ ընդհատեց նրան Ֆոմինը։— Մեզ համար էլ հեշտ չէ քեզ հետ գլուխ ցավացնել։

Հետմանական ճանապարհի մերձակայքում ձիերի ոտների տակից շեշտակի վերև թռավ մի արոս։ Նրա թևերի շառաչուն, սուր շփշփոցը Ստերլյադնիկովին ստիպեց սթափվել ուշագնացությունից։

— Եղբայրներ, ինձ իջեցրեք ձիուց...— խնդրեց նա։

Կոշելյովը և Զումակովը նրան զգուշությամբ իջեցրին թամքից, դրեցին թաց խոտի վրա։

— Հապա տեսնենք ոնց է ոտդ։ Դեհ, արձակի շալվարդ.— պզզելով ասաց Զումակովը։

Ստերլյադնիկովի ոտը հրեշավոր չափով ուռել էր, այնպես, որ լայն շալվարի թևը քիպ, առանց որևէ ծալի նստել էր ուռուցքին։ Մաշկը, որ մուգ-մանուշակագույն երանգ էր ընդունել, մինչև ազդրը պլպլում էր ու ծածկված էր մուգ, թավշի պես փափուկ բծերով։ Թուխ, ներս ընկած փորի վրա ևս երևում էին նույնպիսի բծեր, միայն թե դրանք ավելի բաց գույն ունեին։ Վերքից, շալվարի վրա չորացած մուգ արյունից արդեն նեխածության վատ հոտ էր գալիս, և Զումակովը իր բարեկամի ոտը դիտում էր քիթը մատներով բռնած, դեմքը կնճռոտելով և հազիվ զսպելով կոկորդին դեմ առած սրտախառնուքը։ Հետո նա ուշադրությամբ նայեց Ստերլյադնիկովի խոնարհված, կապույտ կոպերին, մի հայացք փոխանակեց Ֆոմինի հետ, ասաց.

— Երևում է, որ փտում է ոտը... Հը՛մ, քո բանը բուրդ

է, Վասիլի Ստերլյադնիկով... Ուղղակի կորած բան է... է-է՛, Վասյա, Վասյա, ի՛նչ օրի հասար...

Ստերլյադնիկովը շնչում էր կարճ ու արագ և ոչ մի բառ չէր ասում։ Ֆոմինը և Գրիգորին միաժամանակ իջան ձիերից, քամու կողմից մոտեցան վիրավորին։ Վերջինս մի փոքր պառկեց ու հենվելով ձեռքերին, նստեց, պղտոր և ամեն ինչից հրաժարիմք արտահայտող աչքերով նայեց բոլորին։

— Եղբայրնե՛ր, սպանեցեք ինձ... Ես արդեն չեմ ապրելու... էլ ուժ չկա, էլ հալ չկա...

Նա կրկին պառկեց մեջքի վրա և փակեց աչքերը։ Ֆոմինը և մյուսները գիտեին, որ Ստերլյադնիկովի կողմից պետք է լիներ այդ խնդրանքը, ու սպասում էին այն։ Հարևանցիորեն աչքով անելով Կոշելյովին, Ֆոմինը շուռ եկավ, իսկ Կոշելյովը առանց առարկելու ուսից իջեցրեց հրացանը։ «Խփի՛ր»,— ավելի շուտ կռահեց քան լսեց նա՝ նայելով մի կողմ քաշված Զումակովի շրթունքներին։ Բայց Ստերլյադնիկովը նորից բացեց աչքերը, կտրուկ ասաց.

— Կրակիր այստեղ,— նա բարձրացրեց ձեռքը և մատով ցույց տվեց քթարմատը։— Որ մի անգամից լույսը մարի... Երբ որ լինեք մեր խուտորում, ասեք կնկանս, որ բանը այսպես եղավ... Թող չսպասի։

Կոշելյովը կասկածելիորեն երկար էր տնտղում փակադակը, հապաղում էր, ու Ստերլյադնիկովը խոնարհելով կոպերը, կարողացավ վերջացնել խոսքը.

— Ես միայն կնիկ ունեմ... Երեխաներ չունեմ... Մի երեխա բերեց, այն էլ մեռավ... էլ երեխա չեղավ...

Կոշելյովը երկու անգամ բարձրացրեց հրացանը և իջեցրեց՝ հետզհետե ավելի գունատվելով... Զումակովը ուսով զայրագին բոթեց նրան, հրացանը պոկեց նրա ձեռքից։

— Որ չես կարող, ուրեմն հանձն մի առնի, շան որդենի...— խոպոտ բղավեց նա ու գլխից վերցրեց փափախը, շփեց մազերը։

— Շուտ արեք,— պահանջեց Ֆոմինը՝ ոտը դնելով ասպանդակին։

Զումակովը պատշաճ բառեր ընտրելով՝ դանդաղ ու կամացուկ ասաց.

— Վասիլի, գնաս բարով և ներիր ինձ ու մեզ բոլորիս,

ի սեր Քրիստոսի։ Այն աշխարհում կհանդիպենք և այնտեղ կդատեն մեզ... Կնկանդ կասենք ինչ որ խնդրեցիր։— Նա պատասխանի սպասեց, բայց Ստերլյադնիկովը լռում էր ու գունատվում՝ սպասելով մահվան։ Միայն արևից խանձված արտևանունքներն էին դողում, ասես քամուց, ու կամաց շարժվում էին ձախ ձեռքի մատները, որոնք հայտնի չէ ինչի համար փորձում էին կոճկել վերնաշապկի կոտրված կոճակը։

Գրիգորին իր կյանքում շատ անգամ էր մահ տեսել, իսկ այդ մահը տեսնել չուզեց։ Նա հապճեպորեն առաջ անցավ՝ պինդ քաշելով սանձը, իր ետևից տանելով ձին։ Նա այնպիսի զգացումով էր սպասում կրակոցին, որ կարծես թե զընդակը հենց իր թիակների արանքին էր խփելու... Սպասում էր կրակոցին, ու սիրտը հաշվում էր յուրաքանչյուր վայրկյանը, բայց երբ ետևից լսվեց հատու, որոտընդոստ ճայթյունը նրա ոտները թուլացան, և նա հազիվ զսպեց ծառս եղած ձիուն։

Նրանք մի երկու ժամ լուռ էին գնում։ Միայն այն ժամանակ, երբ կանգ առան հանգստանալու, Զումակովն առաջինը խախտեց լռությունը։ Ձեռները տանելով աչքերին, նա խուլ ձայնով ասաց.

— Ախր ինչո՞ւ ես նրան խփեցի։ Թողնեի տափաստանում, էլի՛, հոգուս մի ավելորդ մեղք չանեի։ Կանգնած է հենց աչքերիս առաջ...

— Ոչ մի կերպ չե՞ս ընտելանում այդ բանին, ինչ է,— հարցրեց Ֆոմինը։— Այնքան շա՛տ մարդ ես սպանել որ, ու չե՞ս կարողանում ընտելանալ։ Դու հո սիրտ չունես, դրա փոխարեն երկաթի մի ժանգոտ կտոր կա քո մեջ...

Զումակովը սփրթնեց, աչքերը կատաղաբար չռեց Ֆոմինի վրա։

— Դու հիմի ինձ մի կպչի, Յակով Եֆիմիչ,— ցածր ձայնով ասաց նա։— Հոգիս տակն ու վրա մի անի, թե չէ ես կարող եմ քեզ էլ խփել... Մինչև իսկ շատ հասարակ բան է դա ինձ համար։

— Ինչի՞ս ես պետք, որ կպչեմ քեզ։ Առանց քեզ էլ շատ է իմ հոգս ու ցավը,— հաշտվողաբար ասաց Ֆոմինը ու պառկեց մեջքի վրա, աչքերը կկոցեց արևից, հաճույքով ձգեց մարմինը։

XVI

Գրիգորիի սպասածին հակառակ՝ մեկ ու կես շաբաթվա ընթացքում նրանց միացան մի քառասուն հոգի կազակ։ Դրանք մարտերում ջախջախված զանազան մասեր բանգանների մնացորդներն էին։ Կորցնելով իրենց ատամաններին, նրանք թափառում էին օկրուգում և հաճույքով էին միանում Ֆոմինին։ Նրանց համար բոլորովին միևնույն էր, թե ում պիտի ծառայեին և ում սպանեին, միայն թե հնարավոր լիներ ազատ, թափառական կյանք վարել և թալանել բոլորին, ովքեր ընկնում էին նրանց ձեռքը։ Դրանք կորած-մոլորված մարդիկ էին, որ Ֆոմինը նայելով դրանց, արհամարհանքով ասում էր Գրիգորիին. «Է-է՛, Մելեխով, մեզ միացածները ոչ թե մարդիկ են, այլ աղբ... Ջոկովի սրիկաներ են»։ Ֆոմինը իր հոգու խորքում դեռ իրեն համարում էր «աշխատավոր ժողովրդի համար պայքարող»։ «Մենք կազակության ազատարարներ ենք»,— ասում էր նա, թեև ոչ այնպես հաճախ, ինչպես առաջ։ Նա համառորեն կառչում էր հիմար հույսերից... Նա կրկին սկսեց մատների արանքով նայել իր սխրակիցների կատարած թալանին, գտնելով, որ այդ բոլորը անխուսափելի չարիք է, որի հետ անհրաժեշտ է հաշտվել, որ կգա ժամանակ, երբ ինքը կազատվի թալանչիներից և որ վաղ թե ուշ ինքը կլինի ապստամբ զորամասերի իսկական զորավար և ոչ թե մի խղճուկ բանդայի ատաման...

Բայց Ջումակովը առանց քաշվելու «ավազակներ» էր անվանում բոլոր ֆոմինականներին ու համառորեն վիճում էր Ֆոմինի հետ, համոզելով, որ նա, Ֆոմինը, ոչ այլ ոք է, բայց եթե մեծ ճանապարհի ավազակ։ Երբ կոզմնակի մարդիկ բացակայում էին, նրանք հաճախ տաք վեճեր էին ունենում։

— Ես գաղափարական մարտիկ եմ սովետական իշխանության դեմ,— բարկությունից կարմրելով գոռում էր Ֆոմինը,— իսկ դու ի՞նչ անուն ես տալիս ինձ։ Հիմար, հասկանո՞ւմ ես, որ ես գաղափարի համար եմ կռվում։

— Աչքիս թող մի՛ փչի,— առարկում էր Ջումակովը։— Դու գլուխս մի թլոզի։ Ես քեզ համար երեխա չեմ։ Գաղափարականի՛ս մտիկ։ Դու իսկական ավազակ ես և ոչինչ։ Եվ ինչո՞ւ ես վախենում այս խոսքից, իսկի չեմ հասկանում։

— Ինչո՞ւ ես դու ինձ խայտառակում է՞, ինչո՞ւ, այ հիմարի գլուխ։ Ես ապստամբել եմ իշխանության դեմ ու զենքով կռվում եմ նրա հետ, էլ ի՞նչ ավազակ եմ...

— Հենց նրա համար ես ավազակ, որ իշխանության դեմ ես գնում։ Ավազակները միշտ էլ իշխանության դեմ են, հնուց այդպես է եղել։ Ինչպիսին էլ որ լինի նա, սովետական իշխանությունը, նա իշխանություն է, տասնյոթ թվից սկսած դիմանում է, ու ով դուրս է գալի նրա դեմ, հենց նա է՛լ ավազակ մարդ է։

— Ա՛յ դատարկագլուխ, իսկ գեներալ Կրասնովը կամ Դենիկինը նո՞ւյնպես ավազակներ էին, հա՞։

— Բա ովքե՞ր էին։ Միայն թե էպոլետներով էին... Իսկ էպոլետները ի՞նչ մեծ բան են որ։ Ես ու դու էլ կարող ենք կպցնել...

Ֆոմինը թափ էր տալիս բռունցքը, թքում, ու համոզիչ փաստարկներ չգտնելով, դադարեցնում էր անօգուտ վեճը։ Անկարելի էր որևէ բան համոզել Ջումակովին...

Բանդայում նոր ընդունվածները մեծ մասամբ շատ լավ էին զինված ու հագնված։ Գրեթե բոլորն էլ լավ ձիեր ունեին, որոնք մասնակցում էին անվերջ երթերին և առանց դժվարության ամեն օր հարյուրավոր վերստ տարածություն էին անցնում։ Ոմանք երկու ձի ունեին. մեկը թամբած էր լինում, իսկ երկրորդը, որ պահեստի ձի էր կոչվում, գնում էր ձիավորի կողքից։ Հարկավոր դեպքում մի ձիուց մյուսին նստելով, նրանց հերթով հանգստանալու հնարավորություն տալով, երկու ձի ունեցող ձիավորը կարող էր օրական երկու հարյուր վերստ տարածություն անցնել։

Ֆոմինը մի անգամ Գրիգորիին ասաց.

— Եթե մենք սկզբից երկուական ձի ունենայինք, մեր ետևից ոչ ոք էլ չէր հասնի։ Միլիցիան ու կարմիրբանակային զորամասերը չեն կարող բնակչությունից ձիեր վերցնել, նրանք քաշվում են այդ բանից, իսկ մեզ ամեն բան թույլատրելի է։ Պետք է ամեն մեկս մի ավելորդ ձի ունենանք, այդ դեպքում երբեք էլ մեր ետևից չեն հասնի։ Ալևոր մարդիկ պատմում էին, թե հին ժամանակներում, երբ թաթարները

արշավանքի էին գնում, ամեն մեկը երկու, մինչև իսկ երեք ձի էր վերցնում։ Էլ ո՞վ կհասներ նրանց ետևից։ Մենք էլ պետք է այդպես անենք։ Թաթարական այդ իմաստությունը ինձ շատ է դուր գալիս։

Շուտով նրանք ձիեր ճարեցին և դա սկզբում նրանց իրոք որ անորսալի դարձրեց։ Միլիցիայի հեծյալ մի խումբ, որ նոր էր կազմակերպվել Վեշենսկում, իզուր էր փորձում բռնել նրանց։ Պահեստի ձիերը Ֆոմինի սակավաթիվ բանդային հնարավորություն էին տալիս հեշտությամբ թողնել հակառակորդին ու նրանից հեռանալ մի քանի օրաշվերթի չափ՝ խուսափելով վտանգավոր ընդհարումից։

Սակայն մայիսի կեսին այդ խումբը, որ թվով համարյա չորս անգամ գերազանցում էր բանդայից, Ուստ-Խոպերսկայա ստանիցայի Բոբրովսկի խուտորի մերձակայքում կարողացավ Ֆոմինին սեղմել Դոնին։ Բայց կարճատև մարտից հետո բանդան այնուամենայնիվ դուրս եկավ օղակից ու հեռացավ Դոնի ափով, կորցնելով ութ մարդ,— սպանված ու վիրավոր։ Դրանից հետո շուտով Ֆոմինը Գրիգորիին առաջարկեց վերցնել շտաբի պետի պաշտոնը։

— Մեզ հարկավոր է գրագետ մի մարդ, որ պլանով, քարտեզով շրջենք, թե չէ երբևիցե հուպ կտան մեզ և էլի ջարդուփշուր կանեն։ Վերցրու, Գրիգորի Պանտելևիչ։

— Միլիցիոներներին որսալու և նրանց գլուխները կտրելու համար շտաբ հարկավոր չի,— մռայլ պատասխանեց Գրիգորին։

— Ամեն մի ջոկատ պետք է ունենա իր շտաբը, դատարկ բաներ մի դուրս տա։

— Այդ պաշտոնի համար վերցրու Զումակովին, եթե չես կարող առանց շտաբի ապրել։

— Իսկ դու ինչո՞ւ չես ուզում։

— Այդ գործի մասին հասկացողություն չունեմ։

— Իսկ Զումակովն ունի՞։

— Զումակովն էլ չունի։

— Բա էլ ինչո՞ւ ես նրան մեջտեղ խցկում։ Դու սպա ես և պետք է հասկացողություն ունենաս, տակտիկա, և ուրիշ շատ բաներ գիտենաս։

— Ես ճիշտ այնպիսի սպա եմ եղել, ինչպես դու հիմի

ջոկատի հրամանատար ես։ Իսկ տակտիկան մեզ մոտ այս է՝ թրև եկ տափաստանում և շուտ-շուտ ետ նայիր...— ծաղրանքով ասաց Գրիգորին։

Ֆոմինը աչքով արեց Գրիգորիին և սպառնաց մատով։

— Քեզ տեսնում եմ ամբողջովին։ Ութ տեղում ես թաքնվում, հա՞-ա։ Ուզում ես ստվերի մեջ մնալ։ Դա քեզ չի փրկի, հոգիս։ Դասակապետ լինել թե շտաբի պետ,— մեկ է։ Կարծում ես եթե քեզ բռնեն, կզիջե՞ն։ Սպասիր, ո՞նց չէ։

— Ես իսկի էլ դրա մասին չեմ մտածում, դու զուր ես ենթադրություններ անում,— ուշադրությամբ զննելով թրափունջը, ասաց Գրիգորին։— Իսկ ինչ որ չգիտեմ, չեմ ուզում վերցնել ինձ վրա...

— Էհ, որ չես ուզում, պետք չի, առանց քեզ էլ մի կերպ գործը կտանենք,— համաձայնվեց նեղացած Ֆոմինը։

Օկրուգում խիստ փոխվեց իրադրությունը. ունևոր կազակների տներում, ամեն տեղ, ուր առաջ մեծ հյուրասիրությամբ էին ընդունում Ֆոմինին, հիմա դարբասները փակում էին սողնակով, ու երբ բանդան երևում էր խուտորում, տանտերերը միահամուռ կերպով փախչում, թաքնվում էին այգիներում ու պուրակներում։ Ռևտրիբունալի շրջիկ սեսիան, որ ժամանել էր Վեշենսկայա, խստորեն դատապարտեց մի քանի կազակների, որոնք առաջ սրտաբաց էին ընդունում Ֆոմինին։ Այս լուրը լայն չափով տարածվեց ստանիցաներում և համապատասխան ազդեցություն թողեց այն մարդկանց մտքերի վրա, ովքեր բացահայտ կերպով իրենց բարեհաճությունն էին արտահայտում բանդիտների նկատմամբ։

Երկու շաբաթվա ընթացքում Ֆոմինը լայն չափով շրջեց Վերին Դոնի բոլոր ստանիցաները։ Բանդայում արդեն կար մոտ հարյուր երեսուն հեծելակ և արդեն ոչ հապճեպորեն կազմած հեծյալ մի խումբ, իսկ հարավից փոխադրված 13-րդ հեծելազորային գնդի մի քանի հեծելավաշտեր կրնկակոխ հետապնդում էին նրանց։

Վերջին օրերում Ֆոմինին հարած բանդիտներից շատերը հեռավոր վայրերի բնակիչներ էին։ Նրանք բոլորն էլ այլևայլ ճանապարհներով էին հասել Դոնի շրջանը. ոմանք միայնակ փախել էին էտապներից, բանտերից ու ճամբարներից, բայց նրանց հիմնական մասսան բաղկացած էր Մասլակի

բանդայից անջատված մի քանի տասնյակ հեծելակներից, ինչպես նաև Կուրոչկինի ջախջախված բանդայի մնացորդներից։ Մասլակովականները առանց առարկության բաժանվեցին իրարից և գտնվում էին բոլոր դասակներում, բայց կուրոչկինականները չուզեցին բաժանվել։ Նրանք բոլորն էլ կազմեցին մի առանձին դասակ, որը սերտ կերպով միավորված էր և իրեն մի քիչ հեռու էր պահում մյուսներից։ Թե մարտերում և թե հանգստի ժամանակ նրանք գործում էին միահամուռ կերպով, սարի պես կանգնած էին միմյանց թիկունքում, իսկ երբ որևէ տեղ թալանում էին սպառկոոպի խանութը կամ պահեստը, մթերքները միասին էին սպառում, ավարը հավասար էին բաժանում՝ խստորեն կիրառելով հավասարության սկզբունքը։

Թերեքի ու Կուբանի մի քանի կազակ հնամաշ չերքեզկաներով, Վելիկոկնյաժեսկայա ստանիցայի երկու կալմիկ, մի լատիշ՝ որսորդական երկար, մինչև ազդրերը հասնող սապոգներով և հինգ հոգի անարխիստ նավաստիներ զոլավոր բաճկոններով ու արևից խունացած կուրտկաներով,— սրանք բոլորը է՛լ ավելի բազմազան էին դարձնում Ֆոմինի բանդայի առանց այն էլ խայտառակ հագնված, տարատեսակ կազմը։

— Հիմա է՞լ պիտի վիճես, որ քո մարդիկ ավազակներ չեն, բա դրանք, ոնց ես ասո՞ւմ... գաղափարական մարտիկնե՞ր են, հա՞,— մի անգամ Զումակովը հարցրեց Ֆոմինին՝ աչքերով ցույց տալով ճանապարհին ձգված երթական շարասյունը։— Պակասում է միայն կարգալույծ արված մի տերտեր ու շալվար հագած մի խող, թե չէ աստծու այդ խուժանի կազմը լրիվ կլիներ...

Ֆոմինը ձայն չհանեց։ Նրա միակ ցանկությունն էր որքան կարելի է շատ մարդ հավաքել իր շուրջը։ Ընդունելով կամավորներին, նա ոչ մի բան հաշվի չէր առնում։ Յուրաքանչյուրին, ով ցանկություն էր հայտնում ծառայել նրա հրամանատարության տակ, ինքն էր հարցաքննում, կարճ ասում էր.

— Ծառայության համար պիտանի ես։ Ընդունում եմ։ Գնա իմ շտաբի պետ Զումակովի մոտ, նա կասի, թե դու որ դասակում պիտի լինես, քեզ ղենք կտա։

Միգուլինսկայա ստանիցայի խուտորներից մեկում լավ հագնված, գանգրահեր ու թխադեմ մի երիտասարդի բերին Ֆոմինի մոտ։ Երիտասարդը հայտնեց, որ ցանկանում է մտնել բանդայի մեջ։ Ֆոմինը հարց ու փորձից իմացավ, որ այդ տղան Ռոստովի բնակիչ է, վերջին ժամանակներում դատապարտվել էր զինված կողոպուտի համար, բայց փախել է Ռոստովի բանտից, ու լսելով Ֆոմինի մասին, անցել է Վերին Դոն։

— Դու ի՞նչ ազգ ու տակից ես, հա՞յ ես, թե՞ բուլղարացի,— հարցրեց Ֆոմինը։

— Ո՛չ, ես հրեա եմ,— կմկմալով պատասխանեց երիտասարդը։

Ֆոմինը շփոթվեց անակնկալից ու երկար լռեց։ Նա չգիտեր, թե ինչպես պետք է վարվեր բնավ չնախատեսված տրվյալ դեպքում։ Մի քիչ մտածելով, նա ծանր հոգոց հնեց.

— Է՛հ, ի՞նչ արած, որ հրեա ես։ Մենք այդպիսիներից էլ չենք հրաժարվում... Թո՛ղ մի մարդով էլ շատանանք։ Չի նստել գիտե՞ս։ Չէ՞։ Կսովորե՛ս։ Սկզբում քեզ մի խելոք ձիուկ կտանք, հետո էլ կսովորես։ Գնա Զումակովի մոտ, նա կնշանակի քո տեղը։

Մի քանի րոպեից հետո կատաղած Զումակովը ձիով մոտեցավ Ֆոմինին։

— Գժվե՞լ ես, ինչ է, թե՞ հանաք ես անում,— ձին ետ տալով բղավեց նա։— Ո՞ր սատանի համար ես ջհուդին ղրկել ինձ մոտ, հը՞։ Չեմ ընդունում, ուր ուզում է թող գնա։

— Վերցրու, վերցրու նրան, մեր թիվը կշատանա,— հանգիստ ասաց Ֆոմինը։

Բայց Զումակովը փրփուրը բերանին գոռաց.

— Չեմ վերցնի, կսպանեմ, բայց չեմ վերցնի։ Կազակները տրտնջում են, գնա ինքդ նրանց հետ բազար արա։

Մինչդեռ նրանք վիճում էին ու հակաճառում միմյանց, գումակի մի սայլի մոտ կազակները հանեցին երիտասարդ հրեայի ասեղնագործած վերնաշապիկը և մահուդե լայն շալվարը։ Կազակներից մեկը վերնաշապիկը փորձելով, ասաց.

— Հրե՛ն, տեսնում ես այն քոլերը, որ խուտորից դեն են։ Վազ տուր այնտեղ ու պառկիր։ Այնքան կպառկես, մինչև որ մենք գնանք այստեղից, ու երբ գնանք, վեր կաց ու

ծլկիր ուր կուզես։ Էլ չմոտենաս մեզ, կսպանենք, ավելի լավ է գնա Ռոստով, մայրիկիդ մոտ։ Կռիվ անելը ձեր, հրեաների գործը չի։ Աստված ձեզ սովորեցրել է առևտուր անել և ոչ թե կռվել։ Առանց ձեզ էլ մենք յոլա կգնանք, ինչ որ բրդենք, այն կխրթենք։

Հրեային չընդունեցին, բայց հենց նույն օրը Վեշենսկայա ստանիցայի բոլոր խուտորներում հայտնի շաշ Պաշային ծիծաղելով ու կատակելով ընդունեցին երկրորդ դասակը։ Նրան բռնեցին տափաստանում, բերին խուտոր և հանդիսավոր կերպով զուգեցին սպանված մի կարմիրբանակայինի հագուստով, ցույց տվին, թե ինչպես պետք է բանեցնել հրացանը, երկար սովորեցրին թրատելու ունակությունը։

Գրիգորին մոտենում էր իր ձիերին, որոնք կանգնած էին ձիակապարանում, բայց տեսնելով քիչ հեռու խմբված հոծ ամբոխը, գնաց այնտեղ։ Փառ-փառ քրքիջը նրան ստիպեց արագացնել քայլերը, հետո էլ վրա հասած լռության մեջ նա լսեց մեկի խրատական, զգաստ ձայնը.

— Այդպես չէ, Պա՛շա։ Ո՞վ է այդպես թուր բանեցնում։ Հո փայտ չե՞ս ջարդելու, մարդ ես թրատելու։ Ա՛յ պետք է այսպես անել, հասկացա՞ր։ Հենց որ բռնեցիր՝ իսկույն հրամայիր ծունկ չոքել, թե չէ դու չես կարող թրատել կանգնած մարդուն... Նա ծունկ կչոքի, իսկ դու ա՛յ այսպես, ետևից կտրի վիզը։ Աշխատիր ոչ թե ուղիղ, այլ շեղակի խփել և թուրը դեպի քեզ քաշել, որ լավ կտրի...

Բանդիտներով շրջապատված խենթը կանգնել էր ձիդ, պինդ սեղմել մերկացրած թրի կոթը։ Նա լսում էր կազակներից մեկի խրատները, ժպտում ու երջանկաբար կկոցում չռած, գորշ աչքերը։ Նրա բերանի անկյունները փրփրակալել էին ինչպես ձիու բերանը, լորձունքը պղնձակարմիր մորուքի վրայով առատորեն թափվում էր կրծքին... Նա լիզում էր անմաքուր շրթունքները ու շվշվացնելով, թլվատ ասում.

— Բոլորը հասկացա, աղբերս, բոլորը... Այդպես էլ կանեմ... Ծունկ կչոքեցնեմ աստծու ծառային ու կկտրեմ վիզը... այնպե՛ս կկտրեմ որ։ Դուք ինձ շալվար է՛լ տվիք, շապիկ է՛լ, սապոգներ է՛լ... Միայն թե վերարկու չունեմ... Վերարկու է՛լ տայիք, էլի՛, ես ձեզ կգոհացնեմ։ Ինչքան որ ուժ ունեմ, կաշխատեմ գոհացնել։

— Նայեցեք մի որիշ կոմիսարի,— ահա քեզ և վերարկու։ Իսկ հիմա պատմիր, թե անցյալ տարի քեզ ոնց ամուսնացրին,— առաջարկեց կազակներից մեկը։

Խենթի լայնացած և պղտոր փառով քողված աչքերը անասնական երկյուղ արտահայտեցին։ Նա երկար հայհոյանք թափեց ու ընդհանուր քրքջի տակ սկսեց ինչ-որ բան ասել։ Այդ բոլորն այնքան նողկալի էր, որ Գրիգորին ցնցվեց, իսկույն հեռացավ։ «Ա՛յ, թե ինչ տեսակ մարդկանց հետ եմ կապել բախտս...» Մտածեց նա թախիծով ու դառնությամբ լեցուն, չարանալով իր վրա, ամբողջ գարշ կյանքի վրա...

Նա պառկեց ձիակապարանի մոտ՝ աշխատելով չլսել խենթի ճչոցները և կազակների թնդալից քրքիջը։ «Հենց վաղը կգնամ, ժամանակն է»,— որոշեց նա՝ նայելով կուշտ, կազդուրված ձիերին։ Նա խոհեմաբար, մանրակրկիտորեն պատրաստվում էր հեռանալ բանդայից։ Վերցրել էր մի սպանված միլիցիոների փաստաթղթերը՝ Ուշակովի անունով, կարել շինելի աստառի տակ։ Դեռ երկու շաբաթ առաջ սկսել էր ձիերը պատրաստել կարճատև, բայց շեշտակի վազքի համար. ժամանակին ջրում էր նրանց, այնպիսի ջանադրությամբ էր մաքրում, ինչպես իսկական ծառայության ժամանակ է՛լ չէր մաքրել, գիշերելու վայրերում արդարացի թե անարդար բոլոր միջոցներով կեր էր ճարում, ու նրա ձիերը ավելի լավ տեսք ունեին, քան մյուսների ձիերը,— մանավանդ նրա տավրիկյան մոխրագույն և կարմրախայտ ձին։ Սա ամբողջովին պլպլում էր, արևի տակ բուրդը փայլում էր ինչպես կովկասյան սևանախշած արծաթ։

Այդպիսի ձիերով կարելի էր համարձակորեն հեռանալ ու ազատվել ամեն մի հետապնդումից։ Գրիգորին վեր կացավ, գնաց մոտակա բակը։ Ամբարի շեմքին նստած պառավին քաղաքավարությամբ հարցրեց։

— Ձեզ մոտ գերանդի կա՞, տատի։

— Մի տեղ դրած էր։ Ամա ո՞վ գիտի որտեղ է։ Ինչի՞դ է պետք։

— Կուզեի ձեր ծառուտում մի քիչ խոտ քաղել ձիերիս համար։ Կարելի՞ է։

Պառավը մտածեց, հետո ասաց.

— Ախր դուք ե՞րբ պիտի իջնեք մեր վզից, է՞։ Տուր հա

տո՛ւր... Ոմանք գալիս են, հաց են պահանջում, ոմանք էլ գալիս ու քաշում-տանում աչքով տեսածը։ Գերանդին չեմ տա քեզ։ Ինչ ուզում ես արա, չեմ տա։

— Ափսոսո՞ւմ ես խոտը, աստծու պառավ։

— Բա խոտը հո դատարկ չոլում չի՞ բուսնում։ Կովս ինչո՞վ պիտի կերակրեմ։

— Տափաստանում քի՞չ խոտ կա։

— Գնա այնտեղ, որդիս։ Տափաստանում շատ խոտ կա։

Գրիգորին բարկությամբ ասաց.

— Ավելի լավ է տուր գերանդին, ա՛յ տատիկ։ Ես մի քիչ կքաղեմ, մնացածը կմնա քեզ, թե չէ եթե ձիերը թողնենք այնտեղ ամբողջ խոտը կփչացնեն։

Պառավը մոայլ նայեց Գրիգորիին և շուռ տվեց դեմքը։

— Գնա ինքդ վերցրու, գերանդին կարծեմ կախված է չարդախի տակ։

Գրիգորին չարդախի տակ գտավ սայրը կոտրատված մի հին գերանդի, ու երբ անցավ պառավի կողքից, պարզ լսեց նրա խոսքերը։— «Անիծվածներ, ձեր վերջը չի գալիս, էլի՛»։

Գրիգորին չէր կարողանում ընտելանալ նման վերաբերմունքին։ Նա վաղուց էր տեսնում, թե խուտորների բնակիչներն ինչպիսի տրամադրությամբ են ընդունում բանդիտներին։ «Նրանք ճիշտ են դատում,— մտածում էր նա զգուշությամբ բանեցնելով գերանդին և աշխատելով մաքուր հնձել, չհնձած տեղեր չթողնել։— Մենք նրանց ինչի՞ն ենք պետք։ Մենք ոչ ոքի էլ հարկավոր չենք, խանգարում ենք բոլորի խաղաղ կյանքն ու աշխատանքը։ Պետք է վերջ տալ, հերիք է»։

Իր մտքերով զբաղված, նա կանգնել էր ձիերի մոտ, նայում էր, թե դրանք իրենց սև, թավշանման շրթունքներով ինչպես են վերցնում քնքուշ, մատաղ խոտի փնջերը։ Պատանեկան թավ մի ձայն նրան դուրս բերեց մտաղբաղ վիճակից.

Ինչքա՞ն լավ ձի է, ոնց որ թե կարապ լինի։

Գրիգորին նայեց խոսողի կողմը։ Ալեքսեևսկայա ստանիցիայի երիտասարդ մի կազակ, որ նոր էր մտել բանդան, նայում էր մոխրագույն ձիուն՝ հիացած օրորելով գլուխը։ Հմայված աչքերը չկտրելով ձիուց, նա մի քանի անգամ պտտվեց դրա շուրջը, ծնտացրեց լեզուն։

— Քո՞նն է, հա՞։

— Քո ի՞նչ գործն է,— մոայլ պատասխանեց Գրիգորին։

— Եկ փոխենք։ Իմը շիկակարմիր է, Դոնի զտարյուն ձի, անցնում է ամեն արգելքից ու արագ վազում, այնքա՞ն արագ։ Կայծակ է, հա՛-ա։

— Ռադ եղի գնա,— սառն ասաց Գրիգորին։

Տղան մի փոքր լռեց, վշտացած շունչ առավ ու նստեց։ Նա երկար դիտեց մոխրագույն ձին, հետո ասաց.

— Քո այդ ձին սրտի ցավ ունի։ Շնչառությունն էլ լավ չի։

Գրիգորին ծղնոտով լուռ քշփորում էր ատամները։ Պարզամիտ տղան սկսել էր նրան դուր գալ։

— Չե՞ս փոխի, մեծ աղբեր,— ցածրաձայն հարցրեց տղան՝ աղերսալի աչքերը հառելով Գրիգորիին։

— Չէ։ Ձիու վրա քեզ էլ որ տան, էլի չեմ փոխի։

— Ո՞րտեղից ես ճարել այդ ձին։

— Ինքս եմ հնարել սրան։

— Չէ, դրուստ։

— Սա էլ նույնպիսի տեղից է դուրս եկել, ոնց որ մյուս ձիերը, զամբիկից է ծնվել։

— Արի ու խոսի այս տեսակ հիմարի հետ,— նեղացած ասավ տղան ու հեռացավ։

Գրիգորիի առջև փռվել էր դատարկ, ասես մեռած խուտորը։ Բացի ֆոմինականներից, շուրջը ոչ ոք չէր երևում։ Նրբանցքում լքած սայլը, բակում գտնվող, փայտ ջարդելու կոճղը, որի մեջ հապճեպորեն խրել ու թողել էին կացինը և որի կողքին կիսատաշ մի տախտակ էր ընկած, պոզերից պարաններ կապած եզները, որոնք ծուլորեն արածում էին փողոցի մեջտեղում ցածր բուսած խոտը, ջրհորի փայտվածքի մոտ բերանի վրա ընկած դույլը,— այս բոլորը ցույց էր տալիս, որ խուտորում անսպասելիորեն խախտվել էր կյանքի խաղաղ ընթացքը և որ տանտերերը անավարտ էին թողել իրենց գործերը ու թաքնվել։

Գրիգորին մարդկանց նույնպիսի բացակայություն և բնակիչների հապճեպ փախուստի նույնպիսի հետքեր էր տեսնում, երբ կազակական գնդերը անցնում էին Արևելյան Պրուսիայով։ Այժմ նրան վիճակվել էր այդ նույն բանը տեսնել հայրենի երկրում... Այն ժամանակ գերմանացիները, այժմ էլ Վերին Դոնի կազակները միևնույն մոայլ և ատելու-

թյամբ լեցուն հայացքներով էին դիմավորում նրան։ Գրիգորին հիշեց պառավի հետ ունեցած խոսակցությունը և թախծոտ նայեց իր շուրջը՝ արձակելով վերնաշապկի օձիքը։ Անիծված ցավը դարձյալ խոցում էր նրա սիրտը...

Արևը խիստ կիզում էր գետինքը։ Նրբանցքում տարածվել էին փոշու անալի հոտը, թայլի ու ձիու քրտնքի հոտը։ Ծառուտներում, բարձրաբերձ ուռենիների վրա, ուր թռչունները փրչոտ բներ էին շինել, կռավում էին ագռավները։ Տափաստանային գետակը, որ սկիզբ էր առնում հովիտի հեռավոր, վերին ծայրի աղբյուրներից, դանդաղորեն հոսում էր խուտորի միջով, այն բաժանելով երկու մասի։ Գետակի երկու կողմում էլ կանգնած էին կաղակական տներն իրենց ընդարձակ բակերով, խիտ այգիներով, պատուհանները ծածկող բալենիներով, լայնատերև խնձորենիներով, որոնք դեպի արևն էին պարզել իրենց դալար սաղարթը և պտուղների մատաղ բողբոջները։

Գրիգորին մշուշված աչքերով դիտում էր փրչոտ ջղախոտով բուսակալած բակը, ծղնոտածածկ, պատուհանների դեղին փեղկերով խրճիթը, ջրհորի բարձր կռունկը... Կալի կողքին, հին ցանկապատի ցցերից մեկի վրա կախված էր ձիու մի գանգ, որը սպիտակել էր անձրևներից, դրա դատարկ ակնախոռոչները սևին էին տալիս։ Նույն ցցի վրա պարուրաձև հյուսվել ու դեպի լույսն էր ձգվել դդումի կանաչ մի ցողուն։ Հասել էր ցցի կատարին, փրչոտ բեղիկներով կառչել գանգի ցցված մասերից, ձիու չորացած ատամներից, և դրա կախ ընկած ծայրը, հենարան փնտրելով, արդեն հասել էր մոտիկ տեղում աճած փոնչենու թփի մի ճյուղին։

Արդյոք երազո՞ւմ, թե՞ հեռավոր մանկության օրերում էր Գրիգորին տեսել այդ բոլորը։ Այրող տխրության հանկարծակի մոլուցքով բռնված, նա ցանկապատի տակ պառկեց երեսի վրա, դեմքը ծածկեց ձեռներով, ու վեր կացավ միայն այն ժամանակ, երբ հեռվից լսվեց ծորուն հրամանը՝ «Թամբե՞-ել ձիե-երը»։

Գիշերը, երթի ժամանակ նա իր ձիերով դուրս եկավ շարքերից, կանգ առավ որպես թե ձիերը վերաթամբելու, հետո էլ ականջ դրեց ձիերի սմբակների հետզհետե հեռացող, հանդարտվող դոփյունին, ու թռչելով ձիու վրա, շեղվեց ճանապարհից ու սլացավ քառատրոփով։

Հինգ վերստի չափ նա քշում էր ձիերը առանց կանգ առնելու, հետո էլ անցավ քայլքի, ականջ դրեց, թե արդյոք ետևից հետապնդողներ չե՞ն գալիս։ Տափաստանը լուռ էր։ Միայն կտցարներն էին ավազաթմբերի վրա տխուր ձայն տալիս իրար ու հեռո՛ւ-հեռվից հաղիվ լսվում էր շների հաչոցը։

Սև երկնքում — առկայծող աստղերի ոսկե ցրոնք։ Տափաստանում — լռություն ու քամի՝ օշինդրի հարազատ և դաորն բույրով հագեցած... Գրիգորին կիսով չափ կանգնեց ասպանդակների վրա, թեթևացած, ամբողջ կրծքով շունչ առավ...

XVII

Լուսաբացից դեռ շատ առաջ նա հասավ Տատարսկու դիմաց գտնվող մարգագետինը։ Խուտորից ներքև, ուր Դոնը ծանծաղ էր, բոլորովին մերկացավ, հագուստը, սապոգները, զենքերը կապեց ձիերի գլուխներին, ու փամփուշտներով լեցուն փամփշտանոցը ատամներով բռնած, սկսեց ձիերի հետ լող տալով անցնել գետը։ Ջուրը նրան ցնցում էր անտանելի սառնությամբ։ Աշխատելով տաքանալ, նա աջ ձեռքով արագ ճողփում էր ջուրը, ձախով պահում իրար կապված սանձափոկերը, ցածր ձայնով քաջալերում տնքող ու փնչող ձիերին։

Գետափին հապճեպորեն հագնվեց, ձգեց թամբերի փորքաշները և ձիերին տաքացնելու համար արագ սլացավ դեպի խուտոր։ Թրջված շինելը, թամբի թաց կողերը, խոնավ շապիկը պաղեցնում էին նրա մարմինը։ Գրիգորիի ատամները չխկչխկում էին, նրա մեջքը սարսռում էր և նա դողում էր ամբողջ մարմնով, բայց արագ վազքը շուտով տաքացրեց նրան և խուտորից քիչ հեռու նա անցավ քայլքի, նայում էր շուրջը և ուշադրությամբ ականջ դնում։ Որոշեց ձիերը թողնել ձորակում։ Քարքարոտ լանջով իջավ ձորակի հատակը։ Ձիերի սմբակների տակ չոր շրխկում էին քարերը, պայտերը դրանց զարկվելուց կայծեր էին թռչում։

Գրիգորին ձիերը կապեց մանկութ ծանոթ չոր կնձնի ծառին, գնաց խուտոր։

Ահա և Մելեխովների հին խրճիթը, խնձորենիների մթին խմբերը, ջրհորի կռունկը՝ Մեծ Արջի տակին... Հուզմունքից շնչասպառ լինելով, Գրիգորին թռավ դեպի Դոն, զգուշությամբ անցավ Աստախովների բակի ցանկապատից, մոտեցավ փեղկերի բաց պատուհանին։ Նա լսում էր միայն սրտի արագ զարկերը և արյան խուլ աղմուկը գլխի մեջ։ Կամացուկ ծեծեց շրջանակի ապակեկալը, այնքան կամացուկ, որ համարյա ինքն էլ չլսեց թխկոցը։ Ակսինյան լուռ մոտեցավ պատուհանին, նայեց։ Գրիգորին տեսավ, թե ինչպես նա ձեռքերը սեղմեց կրծքին, ու լսեց Ակսինյայի շուրթերից թռած մեղմ հառաչանքը։ Գրիգորին նշան արավ, որ նա բաց անի պատուհանը, հանեց հրացանը։ Ակսինյան բացեց փեղկերը։

— Կամա՛ց։ Բարև։ Դուռը մի՛ բանա, ես պատուհանից կմտնեմ,— շշնջալով ասաց Գրիգորին։

Նա կանգնեց պատի տակի հողաթմբի վրա։ Ակսինյայի մերկ թևերը խոտեցին նրա պարանոցը։ Դրանք, այդ հարազատ թևերը այնպես էին դողում, թպրտում նրա ուսերի վրա, որ դողը անցնում էր և Գրիգորիին։

— Կսյուշա... կա՛ց... վերցրու հրացանը,— կակազելով, հազիվ լսելի շշնջաց Գրիգորին։

Թուրը ձեռքով պահած, Գրիգորին ներս մտավ, ծածկեց պատուհանը։

Նա ուզում էր գրկել Ակսինյային, բայց վերջինս ծանր ծունկ չոքեց նրա առաջ, գրկեց նրա ոտները, ու դեմքը սեղմելով թաց շինելին ամբողջ մարմնով ցնցվեց զուսպ հեկեկանքից։ Գրիգորին ոտքի հանեց նրան, նստեցրեց նստարանին։ Թեքվելով նրա վրա, դեմքը հպելով նրա կրծքին, Ակսինյան լռում էր, հաճախակի ցնցվում ու ատամներով սեղմում շինելի կրծքի ծալը, որպեսզի խեղդեր հեծկլտանքը և չզարթեցներ երեխաներին։

Երևում էր, որ տանջանքները նրան է՛լ, այնքա՛ն ուժեղ Ակսինյային է՛լ էին ընկճել։ Երևում էր, որ դառն էր ապրել նա այդ ամիսներին... Գրիգորին շոյում էր մեջքին թափված նրա մազերը, տաք և քրտնքից թրջված ճակատը։ Նա սպասեց, որ Ակսինյան լալով թափի վիշտը, հետո հարցրեց.

— Երեխաները ողջ-առո՞ղջ են։

— Այո։

— Դունյաշկա՞ն։

— Դունյաշկան է՛լ... ողջ... և առողջ է...

— Միխայիլը տա՞նն է։ Դե լավ, էլի՛, հերի՛ք եղավ։ Շապիկս թրջվեց քո արտասուքներից... Կսյո՛ւշա, սիրելիս, հերիք է։ Լաց լինելու ժամանակ չկա... Միխայիլը տա՞նն է։

Ակսինյան սրբեց դեմքը, թաց ձեռքերով սեղմեց Գրիգորի այտերը։ Արտասվելով ու ժպտալով, անթարթ նայելով սիրածին, մեղմակի ասաց.

— Էլ չեմ լաց լինի... Արդեն չեմ լալիս... Միխայիլը չկա, երկրորդ ամիսն է, որ Վեշկիումն է, ծառայում է ինչոր զորամասում։ Գնա նայիր երեխաներին։ Օ՛յ, չէինք սպասում քեզ, հույս չունեինք։

Միշատկան ու Պոլյուշկան հերարձակ պառկել, քնել էին մահճակալի վրա։ Գրիգորին կռացավ նրանց գլխավերևում, մի փոքր կանգնեց ու հեռացավ անձայն քայլերով, լուռ նայեց Ակսինյայի կողքին։

— Ո՞նց եղավ,— տաք շշուկով հարցրեց Ակսինյան։— Ո՞նց եկար։ Բա ո՞րտեղ էիր։ Բա որ քեզ բռնե՞ն։

— Եկա քեզ տանելու։ Գուցե թե չբռնեն։ Կգա՞ս։

— Ո՞ւր։

— Ինձ հետ։ Հեռացել եմ բանդայից։ Ֆոմինի մոտ էի, լսե՞լ ես։

— Այո։ Բա քեզ հետ ո՞ւր պիտի գնամ։

— Դեպի հարավ։ Կուբան կամ ավելի հեռու։ Մի կերպ կապրենք, հը՞։ Ոչ մի աշխատանքից չեմ հրաժարվի։ Ձեռքերս պետք է աշխատեն և ոչ թե կռվեն։ Հոգիս ինչքա՞ն է ցավել այս ամիսներին... բայց դրա մասին— հետո։

— Բա երեխանե՞րը։

— Կթողնենք Դունյաշկայի մոտ։ Հետո տեսնենք ինչ կլինի։ Հետո նրանց էլ կտանենք։

— Գրի՛շա... Գրիշենկա...

— Պետք չէ։ Առա՛նց արտասուքների։ Հերիք է, էլի՛։ Հետո միասին լաց կլինենք, երբ ժամանակ կլինի... Պատրաստվիր, ձիերը թողել եմ ձորակում։ Դե, գալի՞ս ես։

— Բա ի՞նչ էիր կարծում,— հանկարծ բարձրաձայն ասաց Ակսինյան ու վախենալով ձեռքը տարավ շուրթերին, նայեց երեխաներին։— Ի՞նչ էիր կարծում,— արդեն շշնջալով հարց-

րեց նա։— Մի՞թե մենակ մնալը քաղցր է ինձ համար։ Կգամ, Գրիշենկա, հարազատս։ Ոտով կգամ, սող կտամ քո ետևից, բայց էլ մենակ չեմ մնա։ Առանց քեզ կյանք չկա ինձ համար... Ավելի լավ է սպանես ինձ, քան թե էլի մենակ թողնես...

Նա Գրիգորիին ուժով սեղմեց իրեն։ Գրիգորին համբուրում էր նրան ու շեղակի նայում պատուհանին։ Կա՛րմ են Ամառային գիշերները։ Պետք է շտապել։

— Գուցե կպառկե՞ս,— հարցրեց Ակսինյան։

— Ի՞նչ ես ասո՛ւմ,— վախեցած բացականչեց Գրիգորին։ — Շուտով կլուսանա, պետք է գնալ։ Հագնվիր ու գնա կանչիր Դունյաշկային։ Կպայմանավորվենք նրա հետ։ Պետք է մթնով հասնենք մինչև Ջոր ձորը։ Ցերեկը կմնանք այնտեղ, անտառում, իսկ գիշերը կշարունակենք մեր ճամփան։ Կարո՞ղ ես ձիով գնալ։

— Տե՛ր աստված, մի կերպ հեռանանք, էլի՛, իսկ եթե ձիով ենք գնում,— ավելի լավ։ Ես միտք եմ անում, թե սա հո երազ չի՞։ Ես քեզ շուտ-շուտ տեսնում եմ երազումս... ու ամեն անգամ մի նոր վիճակում...— Ակսինյան հերակալները ատամներով բռնած, հապճեպորեն սանրում էր մազերը, կցկտուր, կամաց էր խոսում։ Նա արագ հագնվեց, քայլեց դեպի դուռը։

— Զարթնեցնե՞մ երեխաներին, գոնե մտիկ կտաս նրանց։

— Ո՛չ, հարկավոր չէ,— վճռականորեն ասաց Գրիգորին։

Նա գդակի միջից հանեց ծխախոտի տոպրակը ու սկսեց պապիրոս փաթաթել, բայց հենց որ Ակսինյան դուրս ելավ, նա արագ մոտեցավ մահճակալին ու երկար համբուրեց երեխաներին, հետո էլ հիշեց Նատալյային ու էլի շատ բան հիշեց իր դարդոտ կյանքից և լաց եղավ։

Շեմքից ներս մտնելով, Դունյաշկան ասաց.

— Բարև, աղբերս։ Տան կարոտը քաշեց-բերեց քեզ, հա՞։ Հերիք չէ՞ղավ մեր դաս տափաստանում...— ու անցավ խրրատներին։— Խեղճ երեխեքը հեր չեն տեսնում, էլի՛... Հերը սաղ է, իսկ նրանք որբ են...

Գրիգորին գրկեց նրան, խստորեն ասաց.

— Կամաց, չզարթնեցնես երեխաներին։ Թո՛ղ այդ բանը, քո՛ւրս։ Լսե՛լ եմ այդ երգը։ Իմ դարդ ու արցունքն էլ հերիք է

ինձ... Դրա համար չէ, որ կանչեցի քեզ։ Երեխաներին կվերցնե՞ս դաստիարակելու։

— Իսկ դու ի՞նչ պիտի անես։

— Գնում եմ և Ակսինյային տանում եմ ինձ հետ։ Երեխաներին կվերցնե՞ս քեզ մոտ։ Երբ որ աշխատանքի մտնեմ, կտանեմ նրանց։

— Դե, բա ո՞նց։ Որ երկուսդ էլ գնում եք, կվերցնեմ։ Հո փողոցում չեն մնալու կամ հո չպիտի՞ օտար մարդկանց ձեռքը ընկնեն...

Գրիգորին լուռ համբուրեց Դունյաշկային, ասաց.

— Մեծ շնորհակալություն քեզ, քուրս։ Ես գիտեի, որ չես մերժի։

Դունյաշկան լուռ նստեց սնդուկի վրա, հարցրեց.

— Ե՞րբ եք գնում։ Հիմա՞։

— Այո։

— Բա տո՞ւնը, տնտեսությո՞ւնը։

Ակսինյան տատանվելով պատասխանեց։

— Ինքդ մտիկ արա։ Ապրողներ բեր, կամ վարվիր ոնց որ գիտես։ Հագուստից և իրերից ինչ որ մնա, տար քեզ մոտ...

— Բա ի՞նչ ասեմ մարդկանց։ Որ հարցնեն, թե ուր ես գնացել, ի՞նչ պիտի ասեմ,— հարցրեց Դունյաշկան։

— Ասա, որ ոչինչ չգիտես։ պրծավ-գնաց։— Գրիգորին դարձավ դեպի Ակսինյան.— Կսյուշա, շուտ արա, պատրաստվիր։ Շատ բան չվերցնես։ Վերցրու տաք կոֆտան, երկուերեք յուբկա, սպիտակեղեղդ, ինչ որ կա, մի քիչ ուտելիք, ուրիշ ոչինչ։

Հազիվ էր նշմարվում լուսաբացը, երբ Դունյաշկային հրաժեշտ տալով և համբուրելով այնպես է՛լ չարթնացած երեխաներին, Գրիգորին ու Ակսինյան դուրս ելան տանից։ Նրանք իջան Դոն, գետափով գնացին մինչև ձորակը։

— Մի ժամանակ ես ու դու հենց այսպես էինք գնում Ցագուդնոյե,— ասաց Գրիգորին։— Միայն թե այն ժամանակ քո բոխչան ավելի մեծ էր ու մենք էլ ջահել էինք...

Բերկրալի հուզմունքով համակված, Ակսինյան կողքից նայեց Գրիգորիին։

— Ես էլի վախենում եմ, թե սա հո երազ չէ՞։ Տուր ձեռ-

քլոդ, շոշափեմ, թե չէ հավատալս չի գալիս։— Նա կամացուկ ծիծաղեց, քայլելով սեղմվեց Գրիգորիի ուսին։

Գրիգորին տեսնում էր արցունքներից ուռած, երջանկությունից փայլող նրա աչքերը, վաղորդյան աղջամուղջում գունատ այտերը։ Փաղաքուշ ժպտալով, մտածեց.— «Վեր կացավ ու եկավ, կարծես թե հյուր է գնում... Ոչ մի բանից չի վախենում, կեցցես դու, ա՛յ կին»։

Կարծես պատասխանելով նրա մտքերին, Ակսինյան ասաց.

— Տեսնո՞ւմ ես, թե ինչպիսի կնիկ եմ ես... Կանչեցիր ոնց որ շնիկին, ու ես ետևիցդ վազ տվի։ Սերն ու կարոտն են ինձ այսպես կապել քեզ, Գրիշա... Միայն թե երեխեքին եմ խղճում, իսկ իմ մասին «ախ» էլ չեմ քաշի։ Քեզ հետ կգնամ ամեն տեղ, թեկուզ մեռնելու։

Լսելով նրանց քայլերը, ձիերը կամաց վրնջացին։ Շեշտակիորեն մոտենում էր լուսաբացը։ Արևելքում հաղիվ նկատելի վարդագունել էր երկնքի ծայրամասը։ Դոնի վրա ջրից մշուշ էր բարձրացել։

Գրիգորին արձակեց ձիերը, օգնեց Ակսինյային՝ թամքի վրա բարձրանալու։ Ասպանդակները Ակսինյայի ոտների համեմատությամբ երկար էին։ Զղայնանալով, որ այդ բանը չէր նախատեսել, Գրիգորին ձգեց փոկերը, նստեց երկրորդ ձիուն։

— Քշիր իմ ետևից, Կսյուշա։ Երբ ձորակից դուրս գանք, յորդա կտանք։ Դու շատ լես ցնցվի։ Սանձը թույլ չթողնես։ Քո տակի ձին այդ չի սիրում։ Մնկներդ զգույշ պահիր։ Դա մեկմեկ շարություն է անում, փորձում է կծել ձիավորի ծունկը։ Դեհ, հա՛յդա։

Մինչև Զոր ձորը ութ վերստ էր։ Կարճ ժամանակամիջոցում նրանք անցան այդ տարածությունը և արևածագին արդեն անտառի մոտ էին։ Անտառի եզրում Գրիգորին իջավ ձիուց, նրա օգնությամբ Ակսինյան էլ իջավ։

— Հը՛, ո՞նց է։ Սովոր լես, դրա համար էլ ծանր է ձիով գնալ, հա՞,— ժպտալով հարցրեց Գրիգորին։

Ձիով սրարշավելուց կարմրատակած Ակսինյայի սևորակ աչքերը շողացին։

— Լա՛վ է, ոտով գնալուց լավ է։ Միայն թե ոտներս...— Ակսինյան շփոթվելով ժպտաց։— Շուտ եկ, Գրիշա, նայեմ ոտներս։ Մաշկը կսկծում է... Երևի քերծվել է։

— Դատարկ բան է, կանցնի,— նրան հանգստացրեց Գրիգորին։— Մի քիչ ճմլկոտվիր, թե չէ ոտներդ դողում են...

— Ու սիրալեղ հեգնանքով կկոցեց աչքերը։— Ա՛յ քեզ կազակուհի՜։

Զորակի տակին ընտրեց մի փոքրիկ բացուտ, ասաց.

— Այստեղ էլ կանգ կառնենք, տեղավորվիր, Կսյուշա։

Գրիգորին հանեց ձիերի թամքերը, կապեց նրանց երեք ոտները, թամքերն ու զենքերը դրեց մի թփի տակ։ Խոտաբույսերը պատած էին առատ, խիտ ցողով և դրանից էլ գորշ-կապտավուն էին թվում, իսկ լանջի վրա, ուր դեռ չոքել էր առավոտյան աղջամուղջը, դրանք դալկակապույտ երանգ ունեին։ Ծաղիկների կիսաբաց բաժակներում ննջում էին նարնջագույն իշամեղուները։ Տափաստանի վերևում գեղգեղում էին արտույտները, արտերում, տափաստանային բուրավետ, բազմապիսի խոտաբույսերում ճավողում էին լորերը՝ «Գնա՛ քնի, գնա՛ քնի, գնա՛ քնի»։ Գրիգորին կաղնու թփի տակ տափտափեց բույսերը, պառկեց՝ գլուխը դնելով թամքի վրա։ Թե լորերի հնչուն, անլռելի ճավողյունը, թե արտույտների քնաբեր երգը և թե տաք քամին, որ փչում էր Դոնի մյուս կողմից, գիշերվա ընթացքում չպաղած ավազուտներից,— այս ամենը քնելու տրամադրություն էր առաջացնում։ Ոչ այլ ոք, քան Գրիգորին, որը բազմաթիվ անքուն գիշերներ էր անցկացրել, այժմ պետք է որ քուն մտներ։ Լորերը օրոր երգեցին, և նա քնից հաղթահարված, փակեց աչքերը։ Ակսինյան նստել էր նրա կողքին, լռում էր, շուրթերով մտազբաղ պոկոտում հոտավետ մեղրածծուկի մանուշակագույն թերթիկները։

— Գրիշա, այստեղ մեզ ոչ ոք չի՞ բռնի,— կամացուկ հարցրեց նա՝ ծաղկի ցողունով շոշափելով Գրիգորիի մազոտ այտերը։

Գրիգորին դժվարությամբ սթափվեց քնկոտ վիճակից, խռպոտ ասաց.

— Տափաստանում ոչ ոք չկա։ Հիմի հանդարտ ժամանակ է։ Ես կքնեմ, Կսյուշա, իսկ դու մտիկ արա ձիերին։ Հետո էլ դու կքնես։ Քունը թուլացրել է ինձ... քնում եմ... Զորրորդ օրն է... Հետո կխոսենք...

— Քնիր, ազիզ, պինդ քնիր։

Ակսինյան թեքվեց Գրիգորիի վրա, նրա ճակատից ետ տարավ կախ ընկած մազափունջը, շրթունքները մեղմիվ հպեց նրա այտին։

— Սիրելիս, Գրիշենկա, ինչքա՞ն ճերմակ մազ կա գլխիդ...— շշնջալով ասաց նա։— Ուրեմն ծերանո՞ւմ ես, հա՞։ Ախր երեկ-մեկել օրը երիտասարդ էիր...— Ու տխուր կիսաժպիտով նայեց Գրիգորիի դեմքին։

Գրիգորին քնել էր շրթունքները մի քիչ բաց, համաչափ շնչելով։ Նրա սև արտևանունքները, որոնց ծայրերը խանձվել էին արևից, մի փոքր ցնցվում էին, շարժվում էր վերին շրթունքը՝ բանալով քիպ նստած սպիտակ ատամները։ Ակսինյան ուշադրությամբ զննեց նրան և միայն այժմ նկատեց, թե որչափ փոխվել էր Գրիգորին անջատման այդ մի քանի ամիսներում։ Ինչ-որ մռայլ, գրեթե դաժան բան կար նրա սիրելիի հոնքերի արանքում, խոր, լայնակի կնճիռներում, բերանի ծալերում, դուրս ընկած այտոսկրներում... Եվ նա առաջին անգամ մտածեց, որ Գրիգորին երևի շատ սարսափելի է լինում կռվի մեջ, ձիու վրա, մերկացրած սրով։ Խոնարհելով աչքերը, Ակսինյան անցողակի նայեց նրա մեծ, հանգուցաշատ ձեռներին և չգիտես ինչու հոգոց հանեց։

Մի քիչ հետո Ակսինյան հուշիկ վեր կացավ, անցավ բացուտը՝ բարձրացնելով յուրկան, աշխատելով, որ այն չթրջվի խոտաբույսերին նստած ցողից։ Մոտիկ տեղում կարկաչում էր առվակը՝ զարնվելով քարերին։ Ակսինյան իջավ ձորի հատակը, որ ծածկված էր կանաչ մամուռով պատած, քարե սալերով, խմեց աղբյուրներից հոսող պաղ ջուրը, լվացվեց ու աղլուխով մի լավ սրբեց կարմրած դեմքը։ Նրա շրթունքներից չէր չքանում մեղմափայլ ժպիտը, բերկրալի շողում էին աչքերը։ Գրիգորին նորից նրա հե՞տ էր, անհայտությունը նրան վերստին հմայում էր ցնորական երջանկությամբ... Շատ արցունք էր թափել Ակսինյան անքուն գիշերներին, շատ դարդ էր քաշել վերջին ամիսներում։ Դեռ երեկ, ցերեկով, երբ մոտիկ տեղում կարտոֆիլ քաղհանող կնանիքը կանացի մի տխուր երգ երգեցին, Ակսինյայի սիրտը ցավագին ճմլվեց, և նա ակամա ունկնդրեց երգին.

Ջո՛ւ-ջո՛ւ, սագեր, թևերդ խաս,
Հերի՛ք լող տաք, դեպի տո՛ւն։

Հերի՛ք ես էլ, ջահել մի հարս,
Արցունք թափեմ անխնդում...—

երգում էր, սև բախտից գանգատվում կանացի բարձր մի ձայն, ու Ակսինյան չկարողացավ զսպել իրեն. բուռ-բուռ արցունք թափվեց նրա աչքերից։ Նա ուզում էր աշխատանքի միջոցով մոռանալ ամեն ինչ, խեղդել սիրտը հոշոտող կարոտ-թախիծը, բայց արցունքները մշուշում էին աչքերը, չթթալով ընկնում կարտոֆիլի կանաչ փրերին, նրա ուժասպառ ձեռներին, և նա արդեն ոչինչ չէր տեսնում ու չէր կարողանում աշխատել։ Դնելով քլունգը, պառկեց գետնին, ձեռներով ծածկեց դեմքը, ազատություն տվեց արցունքներին...

Դեռ երեկ նա անիծում էր իր կյանքը, ու նրա համար գորշ ու անուրախ էր ամբողջ շրջապատը որպես սև ու սուգ հագած, թխպոտ օր, իսկ այսօր ամբողջ աշխարհը նրան թվում էր ցնծուն ու պայծառ, ասես հենց նոր էր անցել ամառային հորդառատ, բարեբեր անձրևը։ «Մենք էլ կգտնենք մեր բախտը»,— մտածում էր նա՝ մտացրիվ դիտելով կաղնու դալարագեղ տերևները, որոնք փայլում էին ծագող արեգակի թեք ճառագայթների տակ։

Թփերի մոտ ու արևկող տեղերում անուշաբույր, խայտաբղետ ծաղիկներ էին բուսել։ Ակսինյան մի մեծ խտիտ ծաղիկներ քաղեց, զգուշությամբ նստեց Գրիգորիից քիչ հեռու, և վերհիշելով ջահելությունը, սկսեց պսակ հյուսել։ Ստացվեց շքեղ ու գեղեցիկ մի պսակ։ Ակսինյան երկար զմայլվում էր դրանով, հետո էլ պսակի մեջ մասրենու մի քանի կարմիր ծաղիկ տեղավորեց, պսակը դրեց Գրիգորիի գլխի մոտ։

Ժամը իններին Գրիգորին արթնացավ ձիու խրխնջոցից, վախեցած նստեց՝ շոշափելով կողքերը, փնտրելով զենքերը։

— Ոչ ոք չկա,— ասավ Ակսինյան,— ինչի՞ վախեցար։

Գրիգորին տրորեց աչքերը, քնաթաթախ ժպտաց։

Սովորել եմ նապաստակի պես ապրել։ Քնում ես ու քնիդ մեջ նայում մի աչքով, ցնցվում ամեն մի թխկոցից... Այս սովորությունը շուտ թողնել հնարավոր չէ։ Երկա՞ր քնեցի։

— Չէ։ Գուցե էլի՞ քնես։

— Ես պետք է մի օր ու գիշեր քնեմ, որ կարգին կշտանամ քնից։ Ավելի լավ է եկ նախաճաշենք։ Հացն ու դանակը

թամքի տոպրակներումն են, հանիր, իսկ ես գնամ ջրեմ ձիերը։

Նա վեր կացավ, հանեց շինելը, թափահարեց ուսերը։ Արևը խիստ կիզում էր։ Քամին օրորում էր ծառերի տերևները, և դրանց շշշյունից չէր լսվում առվակի մեղմ կարկաչյունը։

Գրիգորին իջավ առվակի ափը, քարերից ու ոստերից մի տեղ բանդ շինեց, թրով հող փորեց, դրանով ծածկեց քարերի արանքները։ Երբ ջուրը հավաքվեց նրա այդ ամբարտակի կողքին, նա բերեց ու ջրեց ձիերը, հետո էլ հանեց դրանց սանձերը ու էլի թողեց արածելու։

Նախաճաշելիս Ակսինյան հարցրեց.

— Այստեղից ո՞ւր պիտի գնանք։

— Մորոզովսկու կողմը։ Կհասնենք Պլատով, այնտեղից էլ ոտով կգնանք։

— Բա ձիե՞րը։

— Կբրախենք։

— Ափսոս են, Գրիշա, լավ ձիեր են, մոխրագույնին նայելուց չես կշտանա, ու թողնե՞նք։ Դրան ո՞րտեղ ես ճարել։

— Ճարել եմ, էլի՛...— Գրիգորին անուրախ քմծիծաղ տվեց։— Խլել եմ մի ուկրաինացու ձեռից։

Կարճատև լռությունից հետո նա ասաց.

— Ափսոս են թե ոչ, մեկ է, պետք է բրախել... Մենք ձի ծախողներ չենք։

— Բա դու ինչո՞ւ ես զենքերով գնում։ Դրանք մեր ինչի՞ն են պետք։ Աստված չանի մեկն ու մեկը տեսնի. գլխներիս փորձանք կգա։

— Գիշերով մեզ ո՞վ պիտի տեսնի։ Ես սրանք պահել եմ ապահով լինելու համար։ Առանց զենքի մի քիչ սարսափելի է... Երբ որ ձիերը թողնենք, զենքերն էլ դեն կգցեմ։ Այն ժամանակ դրանք արդեն ավելորդ կլինեն։

Նախաճաշից հետո նրանք պառկեցին փռած շինելի վրա։ Գրիգորին ապարդյուն ջանք էր թափում քնի դեմ մաքառելու, Ակսինյան արմունկին հենված, պատմում էր, թե առանց նրան ինչպես էր ապրել, որքան տանջվել անջատման ժամանակամիջոցում։ Գրիգորին անհաղթահարելի թմրությյան մեջ լսում էր նրա համաչափ ձայնը և անզոր էր բարձրացնելու ծանրացած կոպերը։ Երբեմն նա բոլորովին չէր լսում Ակսինյային։ Վերջինիս ձայնը հեռանում էր, ցածրանում ու բոլորովին լռում։ Գրիգորին ցնցվում էր ու արթնանում, իսկ մի քանի րոպեից հետո նորից փակում էր աչքերը։ Հոգնածությունը ավելի ուժեղ էր, քան նրա կամքը։

— ...Զանձրանում էին, հարցնում՝ ո՞րտեղ է հայրիկը։ Ես նրանց ամեն կերպ հանգստացնում էի, գուրգուրում։ Ընտելացան, կապվեցին ինձ հետ և արդեն ուշ-ուշ էին գնում Դոնյաշկայի մոտ։ Պոլյուշկան խելոք է, սուսիկ-փուսիկ։ Կտորտանքներից տիկնիկներ էի կարում նրա համար, նստում էր սեղանի տակ, զբաղվում դրանցով։ Միշատկան մի անգամ ներս է վազում փողոցից, դողում է։ «Ի՞նչ է պատահել»,— հարցնում եմ։ Լալիս է, դառն լալիս»։ «Երեխեքը ինձ հետ չեն խաղում, ասում են՝ քո հայրը բանդիտ է։ Մայրիկ, ճի՞շտ է, որ նա բանդիտ է։ Բանդիտները ի՞նչ տեսակ են լինում»։ Ես ասում եմ՝ «Իսկի էլ բանդիտ չի քո հայրը։ Այնպես, էլի, անբախտ մարդ է»։ Ու էլ պոկ չի գալի, հարցնում է՝ ինչո՞ւ է անբախտ, ի՞նչ բան է անբախտը։ Ու չեմ կարենում նրան հասկացնել... Նրանք իրենք սկսեցին ինձ մայր անվանել, Գրիշա, չկարծես, թե ես էի սովորեցրել։ Միխայիլն էլ լավ էր վարվում նրանց հետ։ Ինձ չէր բարևում, երեսը շուռ էր տալի ու անցնում կողքիցս, իսկ նրանց համար ստանիցայից մի երկու անգամ շաքար բերեց։ Պրոխորը միշտ էլ քո դարդն էր քաշում։ Կորա՜վ մարդը,— ասում էր։ Անցած շաբաթ եկավ քո մասին խոսելու և ուղղակի հոնգուր-հոնգուր լաց եղավ... Ինձ մոտ խուզարկություն արեցին, զենք էին փնտրում կտուրի տակին, մառանում, ամեն տեղ...

Գրիգորին քնեց, այնպես էլ մինչև վերջ չլսեց պատմածը։ Նրա գլխավերևում քամուց շրշում էին մատաղ ծփի ծառի տերևները։ Դիմքի վրայով սահում էին լույսի դեղին ճաճանչները։ Ակսինյան երկար համբուրեց նրա փակ աչքերը, հետո ինքն էլ քնեց՝ թուշը Գրիգորիի թևին սեղմած, շարունակելով ժպտալ նաև քնի մեջ։

Ուշ գիշերին, երբ լուսինը մայր մտավ, նրանք հեռացան Չոր ձորից։ Երկու ժամ գնալուց հետո բլուրից իջան Ցիրի ափը։ Մարգագետնում ճովողում էին ջրահավերը, քարքարոտ գետախորշերում անընդմեջ կոկռում էին գորտերը, ու հեռուհեռվում խուլ հեծեծում էր ջրցուլը։

Գետափով մեկ ձգվել էին անընդմեջ այգիները, մոայլորեն սևին էին տալիս մառախուղում։

Կամրջակից քիչ հեռու Գրիգորին կանգ առավ։ Խուտորում կես գիշերային անդորրություն էր տիրում։ Գրիգորին կրունկներով քշեց ձին, շուռ եկավ մի կողմ։ Նա չուզեց կամրջի վրայով գնալ։ Նա չէր հավատում այդ անդորրության ու վախենում էր դրանից։ Խուտորի ծայրում նրանք անցան գետի միջով ու հենց որ շուռ եկան դեպի նեղլիկ մի փողոց, խանդակի միջից վեր կացավ մի մարդ, հետո էլ երեքը։

— Կա՛նգ առ։ Ո՞վ է գալիս։

Գրիգորին ցնցվեց այդ ձայնից, ասես հարվածից, քաշեց ձիու սանձը։ Վայրկենապես ինքն իրեն հավաքելով, նա բարձրաձայն պատասխանեց՝ «Մերոնցից ենք,— ու կտրուկ շուռ տալով ձին, կարողացավ շշուկով ասել Ակսինյային՝ ետ դարձ, իմ ետից»։

Գիշերելու համար հենց նոր տեղավորված պարենավորման ջոկատի ուղեկալից չորս հոգի լուռ ու անշտապ գնացին նրանց կողմը։ Մեկը կանգ առավ ծխելու, վառեց լուցկին։ Գրիգորին ուժգին մտրակեց Ակսինյայի ձին։ Վերջինս խլշկոտեց և տեղն ու տեղը քառատրոփի անցավ։ Թեքվելով ձիու պարանոցին, Գրիգորին սլացավ նրա ետևից։ Լռությունը տաղտկալի վայրկյաններ տևեց, իսկ հետո որոտի նման ճայթեց անհամաչափ, որոտընդոստ համազարկը, կրակի կայծերը ճեղքեցին մթությունը։ Գրիգորին լսեց գնդակների այրող սվսվոցը և ծոր տվող աղաղակը.

— Ի զե՛ն...

Գետակից հարյուր սաժեն հեռավորությամբ Գրիգորին հասավ ուժգնաթափ սլացող մոխրագույն ձիուն, ու հավասարվելով նրան, բղավեց.

— Կռացիր, Կսյուշա, շատ կռացիր։

Ակսինյան ձգեց սանձը և իրանը ետ տալով, ընկավ կողքի։ Գրիգորին կարողացավ բռնել, թե չէ նա կընկներ ձիուց։

— Քեզ խփեցի՞ն, վիրավորեցի՞ն, ո՞ր տեղիդ դիպավ, ասա-ա...— խռպոտ հարցրեց Գրիգորին։

Ակսինյան լռում էր ու հետզհետե իր ամբողջ ծանրությամբ ընկնում նրա թևին։ Սլանալիս նրան սեղմելով իրեն, Գրիգորին շնչասպառ էր լինում, շշնջում.

— Ի սեր աստծո, գոնե մի խոսք, ախր ի՞նչ եղավ քեզ, է՞։

Բայց նա ոչ որևէ բառ, ոչ էլ հառաչանք լսեց Ակսինյայից։

Խուտորից երկու վերստ հեռավորությամբ Գրիգորին կտրուկ շուռ եկավ ճանապարհից, իջավ մի ձորակ, թռավ ձիուց ու գրկելով իջեցրեց Ակսինյային, խնամքով պառկեցրեց գետնին։

Նա հանեց Ակսինյայի տաք կոֆտան, կրծքի վրա պատռեց շթե բլուզը և շապիկը, շոշափելով գտավ վերքը։ Գնդակը մտել էր Ակսինյայի ձախ թիակի մեջ, ջարդել ոսկորը և շեղակի դուրս եկել աջ անրակի տակից։ Գրիգորին արյունոտված, դողդոջուն ձեռքերով խուրջինից հանեց իր մաքուր շապիկը և անհատական վիրակապման ծրարը։ Նա գետնից բարձրացրեց Ակսինյային, ծունկը դրեց նրա մեջքի տակ, սկսեց կապել վերքը՝ փորձելով դադարեցնել անրակի տակից հոսող արյունը։ Շապկի ծվենները և բինտը արագությամբ սևանում էին, ամբողջովին թրջվում։ Արյուն էր հոսում Ակսինյայի նաև կիսաբաց բերանից, խլթխլթում ու կըլկլում էր կոկորդում։ Ու Գրիգորին սարսափից քարանալով, հասկացավ, որ ամեն ինչ վերջացել է, որ ամենաղարհուրելին, որը կարող էր պատահել՝ արդեն պատահեց...

Ձորակի դիք լանջով, խոտաբույսերի մեջ բացված ու ոչխարի կտտորով ծածկված կածանով նա զգուշությամբ, Ակսինյային գրկած, իջավ ձորակի հատակը։ Ակսինյայի գլուխը թույլ ընկած էր նրա ուսին։ Նա լսում էր Ակսինյայի սվսվող, խեղդվող շնչառությունը և զգում էր, թե ինչպես տաք արյունը լքում է նրա մարմինը և բերանից թափվում իր կրծքի վրա։ Նրանց ետևից ձիերն էլ մտան ձորակը։ Փընչալով ու զրնգացնելով սանձերի բերանոցները, նրանք սկսեցին արածել հյութալի խոտը։

Լուսաբացից քիչ առաջ Ակսինյան մեռավ Գրիգորիի ձեռքերի վրա։ Նրա գիտակցությունը այնպես էլ չվերադարձավ։ Գրիգորին լուռ համբուրեց սառը և արյունից աղի նրա շուրթերը, խնամքով պառկեցրեց խոտաբույսերի վրա, վեր կացավ։ Անհայտ մի ուժ հրեց կուրծքը, և նա ետ-ետ գնաց, ընկավ մեջքի վրա, բայց իսկույն ևթ սարսափահար վեր թռավ։ Ու մի անգամ էլ ընկավ՝ բաց գլուխը խփելով քարին ու ցավ զգալով։ Հետո առանց վեր կենալու, ծնկաչոք եղած,

պատյանից հանեց թուրը, սկսեց գերեզման փորել։ Հողը խոնավ էր ու հեշտությամբ էր փորվում։ Գրիգորին խիստ շտապում էր, բայց շնչահեղձությունը ճնշում էր նրա կոկորդը, ու թեթև շնչելու համար նա պատռեց իր շապիկը։ Վաղորդյան զովը պաղեցրեց նրա քրտնակալած կուրծքը և դրանով հեշտացավ աշխատանքը։ Հողը նա դուրս էր թափում ձեռքերով ու գդակով, մի բոպե անգամ չէր հանգստանում, բայց մինչև գոտկատեղը հասնող խորությամբ գերեզման փորելը շատ երկար տևեց։

Նա իր Ակսինյային թաղեց առավոտյան պայծառ լույսի տակ։ Գերեզմանի մեջ նա Ակսինյայի թուխ, մահվան գունատությամբ պատած ձեռները խաչաձև ծալեց կրծքի վրա, լաչակով ծածկեց դեմքը, որպեսզի հողը չլցվեր նրա կիսաբաց, անշարժ դեպի երկինք դարձած և արդեն դալկացող աչքերը։ Գրիգորին հրաժեշտ տվեց նրան, հաստատ հավատալով, որ այդ անջատումը երկար չի տևի...

Ձեռներով ջանադրությամբ տափեց գերեզմանաթմբի խոնավ, դեղին կավահողը ու ծունկ չոքած, գլուխը կախած, կամացուկ օրորվելով երկար մնաց գերեզմանի մոտ։

Այլևս հարկավոր չէր շտապել։ Ամեն ինչ վերջացել էր։

Չոր, տաք հողմի տարտամ մուժում, ձորակի վերևում բարձրանում էր արևը։ Նրա ճառագայթները արծաթի փայլ էին տալիս Գրիգորիի բաց գլխի մազերի հոծ սպիտակությանը, սահում նրա դալուկ և իր անշարժությամբ զարհուրելի դեմքի վրա։ Ասես ծանր երազից արթնանալով, նա բարձրացրեց գլուխը ու իր վերևում տեսավ սև երկինքը և արեգակի սև, կուրացուցիչ կերպով փայլող սկավառակը։

XVIII

Վաղ գարնանը, երբ հալչում է ձյունը և չորանում են ձմռանը պառկոտած խոտաբույսերը, տափաստանում գարնանային հրդեհներ են սկսվում։ Հեղեղի նման հոսում է հողմավար կրակը, ագահությամբ կլանում չոր ջղախոտը, վեր է թռչում ուղտափշի բարձր ցողունների վրայով, սահում գնդածաղկի թուխ կատարներով, փռվում է ցածրադիր տեղերում... Ու հետո տափաստանում երկար ժամանակ տարածված է լինում խանձված և ճաքճքած գետնքի դառն մշահոտը։ Շուրջը ուրախ դալարում են մատաղ խոտաբույսերը, դրանց վերևում, կապուտակ երկնքում գեղգեղում են անթիվ ու անհամար արտույտները, հյութալի կանաչուտներում քջուջ են անում չվող սագերը ու բույն են հյուսում ամառանը տափաստանում նստող արոսները։ Իսկ այնտեղ, ուր հրդեհներ են եղել, չարագուշակ կերպով սևին է տալիս մեռած, ածխացած հողը։ Թռչունը բույն չի դնում դրա վրա, գազանը ոտ չի դնում այդտեղ, միայն թևավոր ու արագասլաց քամին է թռչում դրա վերևից ու գորշ-կապտավուն մոխիրը և բարկ, սև փոշին քշում հեռո՜ւ-հեռո՜ւ։

Որպես հրդեհների վառած տափաստանը, սևացավ Գրիգորիի կյանքը։ Նա զրկվեց այն ամենից, ինչ որ թանկ էր իր սրտի համար։ Անագորույն մահը ամեն ինչ հափշտակեց նրանից, ամեն ինչ խորտակեց։ Մնացին միայն երեխաները։ Բայց նա ինքը դեռ ջղաձգաբար կառչում էր հողից, կարծես թե իր կործանված կյանքը իրոք մի ինչ-որ արժեք էր ներկայացնում իր համար և ուրիշների համար...

Թաղելով Ակսինյային, նա երեք օր աննպատակ թափառեց տափաստանում, բայց մեղայականով ոչ Վեշենսկայա գնաց, ոչ էլ տուն։ Չորրորդ օրը ձիերը թողնելով Ուստ-Խոպերսկայա ստանիցայի խուտորներից մեկում, նա անցավ Դոնը, ոտով գնաց Սլաշչևսկու անտառը, որի եզրում ապրիլին առաջին անգամ ջախջախվել էր Ֆոմինի բանդան։ Դեռ այն ժամանակ, ապրիլին, նա լսել էր, որ անտառում դասալիքներ են ապրում, նստակյաց կյանք վարում։ Ջցանկանալով վերադառնալ Ֆոմինի բանդան, Գրիգորին հենց նրանց մոտ էր գնում։

Նա մի քանի օր թափառում էր հսկայական անտառում։ Քաղցը տանջում էր նրան, բայց նա սիրտ չէր անում գնալ որևէ բնակավայր։ Ակսինյայի մահից հետո նա կորցրել էր և՛ բանականությունը, և՛ երբեմնի համարձակությունը։ Կոտրտվող ոստի ճքոցը, խիտ անտառում լսվող շրշյունը, գիշերային թռչունի ձայնը,— այս ամենը վախեցնում ու շփոթեցնում էր նրան։ Գրիգորին սնվում էր ելակի չհասունացած պտուղներով, ինչ-որ մանրիկ սնկերով, ընկուզենու տերև-

ներով,— ու սաստիկ նիհարեց։ Հինգերորդ օրը դասալիքները նրան հանդիպեցին անտառում, տարան իրենց գետնատունը։

Նրանք յոթ հոգի էին։ Բոլորն էլ շրջակա խուտորների բնակիչներ էին, անտառում տեղավորվել էին նախորդ տարվա աշնանից, երբ սկսվել էր մոբիլիզացիան։ Ապրում էին ընդարձակ գետնատանը, տնային հարմարություններով, ու համարյա ոչ մի բանի կարիք չէին զգում։ Գիշերները հաճախ գնում էին ընտանիքներին այցելելու. վերադառնալով, բերում էին հաց, պաքսիմաթ, կորկնաձավար, ալյուր, կարտոֆիլ, իսկ միս առանց դժվարության ճարում էին ուրիշ խուտորներում,— երբեմն անասուններ էին գողանում։

Դասալիքներից մեկը, որ մի ժամանակ ծառայել էր 12-րդ կազակական գնդում, ճանաչեց Գրիգորիին, ու առանձնապես հակաճառություններ չեղան։

Գրիգորին կորցրեց տաղտկալիորեն միմյանց հաջորդող օրերի հաշիվը։ Մինչև հոկտեմբեր նա մի կերպ ապրեց անտառում, բայց երբ սկսվեցին աշնանային անձրևները և ապա ցրտերը, նրա մեջ մի նոր և անսպասելի ուժով արթնացավ երեխաների, հայրենական խուտորի կարոտը...

Մի կերպ ժամանակ անցկացնելու համար նա ամբողջ օրերով նստում էր թախտի վրա, փայտից գդալներ, քրեղաններ էր շինում, փափուկ ապառներից ճարտարությամբ կերտում էր մարդկանց ու կենդանիների խաղալիքային ֆիգուրներ։ Նա աշխատում էր ոչ մի բանի մասին չմտածել ու թունավոր վշտին ճանապարհ չտալ դեպի իր սիրտը։ Ցերեկները այդ նրան հաջողվում էր, բայց ձմռան երկար գիշերները հուշերի թախիծը հաղթահարում էր նրան։ Նա թախտի վրա երկար ժամանակ դես-դեն էր շուռ գալիս և չէր կարողանում քնել։ Ցերեկները գետնատան բնակիչներից ոչ ոք նրանից զանգատի խոսք չէր լսում, բայց գիշերները նա հաճախ ցնցվելով արթնանում էր, ձեռքը տանում դեմքին. նրա այտերը և կես տարվա ընթացքում երկարած խիտ մորուքը արցունքներով թրջված էին լինում։

Նա հաճախ երազում տեսնում էր երեխաներին, Ակսինյային, մորը և մյուս բոլոր մոտիկներին, որոնք արդեն մեռած էին։ Գրիգորիի ամբողջ կյանքը անցյալումն էր, իսկ

անցյալը մի կարճատև ու ծանր երազ էր թվում։ «Մի անգամ էլ ման գայի հարազատ վայրերում, մի լավ տեսնեի երեխաներիս, դրանից հետո կարելի էր և մեռնել»,— հաճախ մտածում էր նա։

Վաղ գարնան մի օր որտեղից-որտեղ անսպասելի կերպով հայտնվեց Զումակովը։ Նա մինչև գոտկատեղը թրջված էր, բայց առաջվա պես կայտառ ու աշխույժ։ Փոքրիկ վառարանի վրա չորացնելով հագուստը, տաքանալով, նստեց Գրիգորիի մոտ, թախտի վրա։

— Երբ դու մեզանից հեռացար, Մելեխով, մենք շատ ու շատ թրև եկանք։ Աստրախանի մոտերքումն է՛լ եղանք, կալմիկական տափաստաններում է՛լ... Արար-աշխարհ ման եկանք։ Իսկ թե քանի մարդկանց արյուն թափեցինք, հաշիվ չկա։ Յակով Եֆիմիչի կնկանը իբրև պատանդ վերցրին, գույքը գրավեցին, դե, նա էլ կատաղեց, հրամայեց թրատել բոլոր նրանց, ովքեր ծառայում են սովետական իշխանության։ Ու սկսեցին թրատել բոլորին,— թե ուսուցիչներին, թե զանազան բուժակ-մուժակներին, թե գյուղատնտեսներին... էլ ո՞ւմ ասես, որ չկոտորեցինք։ Իսկ հիմի մեզ էլ են ջարդել, բոլորովին վերջ տվել,— ասաց նա հոգոց հանելով ու դեռևս մրսելուց կծկվելով։— Առաջին անգամ մեզ ջարդեցին Տիշանսկու մոտերքում, իսկ մի շաբաթ առաջ— Սոլոնիի մոտերքում։ Գիշերով շրջապատեցին երեք կողմից, թողին միայն մի ճամփա,— դեպի բլուրը, իսկ այնտեղ ձյունը ձիու փորին էր հասնում... Լուսաբացին կրակ թափեցին գնդացիրներից ու սկսվեց... Բոլորին էլ կոտորեցին գնդացիրներով։ Փրկվեց միայն երկու հոգի,— ես ու Ֆոմինի տղան։ Նա՝ Ֆոմինը, դեռ աշնանից իր մոտ էր պահում տղին,— Դավիդկային։ Յակով Եֆիմիչն ինքն էլ սպանվեց... Աչքերիս առաջ սպանվեց։ Առաջին գնդակը կպավ ոտին, ջարդեց ծնկի ոսկորը, երկրորդը խփեց գլխին, քերեց ու անցավ։ Նա երեք անգամ ընկավ ձիուց։ Կանգ ենք առնում, բարձրացնում, նստեցնում թամքին, իսկ նա մի քիչ գնում է ու էլի ընկնում։ Երրորդ անգամ գնդակը գտավ նրան, խփեց կողքին... Այստեղ արդեն մենք թողեցինք նրան։ Ես մի հարյուր սաժեն հեռացա, ետ նայեցի,— նա, ընկել էր գետնին ու երկու ձիավոր թրերով խոցում էին նրան...

— Դե՛, այդպես էլ պետք է լիներ,— անտարբեր ասաց Գրիգորին։

Զումակովը գիշերեց դասալիքների մոտ, գետնատանը, առավոտյան նրանց հրաժեշտ տվեց։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Գրիգորին։

Զումակովը ժպտալով պատասխանեց.

— Հեշտ կյանք վարելու։ Կարելի է դու է՞լ կգաս ինձ հետ։

— Ոչ, գնա՛ մենակ։

— Այո, ես ձեզ հետ չեմ կարող ապրել... Քո այդ արհեստը, Մելեխով,— գդալ-մդալ շինելը իմ բանը չի,— հեգնանքով ասաց Զումակովը և գլուխ տալով՝ հանեց գլխարկը։— Շնորհակալ եմ, խաղաղ ավազակներ, ձեր աղ ու հացի համար, օթևանի համար։ Թող աստված ձեզ ուրախ կյանք տա, թե չէ այստեղ, ձեզ մոտ շատ է ձանձրալի։ Կպել եք անտառին ոնց որ հավն իր թառին, բա սա կյա՞նք է։

Նրա գնալուց հետո Գրիգորին էլի մի շաբաթ ապրեց անտառում, հետո պատրաստվեց ճանապարհվելու։

— Տո՞ւն ես գնում,—հարցրեց նրան դասալիքներից մեկը։

Ու Գրիգորին անտառում գտնվելու ամբողջ ժամանակվա ընթացքում առաջին անգամ հազիվ նկատելի ժպտաց.

— Տուն։

— Սպասեիր մինչև գարուն։ Մայիսի մեկին մեզ ներում կլինի, այն ժամանակ էլ կերթանք։

— Ոչ, չեմ կարող սպասել,— ասաց Գրիգորին ու բոլորին հրաժեշտ տվեց։

Հետևյալ օրվա առավոտյան նա Տատարսկի խուտորի գիմաց մոտեցավ Դոնին։ Բերկրալի հուզմունքից գունատվելով, երկար դիտեց հայրենական տուն ու տեղը։ Հետո հանեց հրացանը և փամփշտանոցը, դրա միջից էլ հանեց փամփուշտները, կանեփի խծուծը, հրացանի քսուքի սրվակը, հայտնի չէ ինչի համար հաշվեց փամփուշտները։ Կար տասներկու պահունակ փամփուշտ և քսանվեց հատ էլ առանց պահունակների։

Դիք յառի տակ սառույցը հեռացել էր ափից։ Հստակ-կանաչավուն ջուրը ծփում էր ու կոտրատում առափնյա ասեղանման սառույցները։ Գրիգորին հրացանը, նագանը գցեց ջուրը, հետո էլ գցեց փամփուշտները և շինելի փեշով մանրակրկիտորեն սրբեց ձեռքերը։

Խուտորից ներքև նա մարտ ամսի կապույտ, տաքությունից հետզհետե հալչող սառույցի վրայով անցավ Դոնը, լայն քայլերով գնաց դեպի տուն։ Դեռ հեռվից նա տեսավ Միշատկային նավամատույցի վայրէջքում և հազիվ զսպեց վազելով նրան մոտենալու ցանկությունը։

Միշատկան կոտրում էր քարից կախված սառցալեզվակները, շպրտում դրանք և ուշադրությամբ նայում, թե կապույտ սառցաբեկորները ինչպես են գլորվում ներքև։

Գրիգորին մոտեցավ վայրէջքին, ու շնչասպառ լինելով, խոպոտ ձայն տվեց որդուն։

— Միշե՛նկա... որդյա՛կս...

Միշատկան վախեցած նայեց նրան ու կախեց գլուխը։ Հանձին այդ մորուքավոր և սարսափելի տեսք ունեցող մարդու նա ճանաչեց հորը...

Այն բոլոր սիրագին ու քնքուշ խոսքերը, որ Գրիգորին շշնջում էր գիշերները, այնտեղ, անտառում հիշելով իր զավակներին,— այժմ նրա հիշողությունից դուրս թռան։ Ծունկ չոքելով, համբուրելով որդու կարմրատակած, պաղ ձեռքերը, նա խուլ ձայնով լոկ մի բառ էր արտասանում.

— Որդյա՛կս... որդյա՛կս...

Հետո Գրիգորին գրկեց որդուն։ Զոր, մոլեգնաբար փայլող աչքերով ագահորեն նայելով նրան, հարցրեց.

— Ո՞նց եք... Հորաքույրդ, Պոլյուշկան ողջ-առո՞ղջ են։

Միշատկան դարձյալ առանց հորը նայելու կամացուկ պատասխանեց.

— Դունյա հորաքույրս առողջ է, իսկ Պոլյուշկան մեռավ աշնանը... բկացավից։ Իսկ քեռի Միխայիլը ծառայության մեջ է...

Եվ ի՞նչ, ահա և իրականացավ այն նվազագույնը, որի մասին Գրիգորին երազում էր անքուն գիշերներին։ Նա կանգնել էր հայրենական տան դարբասի առաջ, գրկել որդուն...

Դա այն ամենն էր, ինչ որ մնացել էր նրա կյանքում, ինչ որ նրան դեռ կապում էր հողին ու սառն արևի տակ փայլող այս ամբողջ վիթխարի աշխարհին։

ՉՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ ՎԵՐՋԸ

Միխայիլ Շոլոխով ԽԱՂԱՂ ԴՈՆԸ Գիրք չորրորդ

Шолохов Михаил Александрович ТИХИЙ ДОН Книга четвертая
(На армянском языке)
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91,
Ереван — 1978

Խմբագիր՝ Է. Բ. Թոռունյան, սուպերշապիկը՝ Ռ. Ս. Ջուլճակյանի, նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան, գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան, տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան, վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան:

ИБ № 131

Հանձնված է շարվածքի 17/XI 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 18/V 1978 թ.։
Թուղթ՝ № 1, 84×108¹/₃₂, տպագր. 17,5 մամ.=29,4 պայմ. մամ., հրատ. 25,9 մամ.։
Պատվեր 2462։ Տպաքանակ 50000։ Գինը՝ 2 ռ. 50 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли Ереван-9, ул. Теряна, 91,